

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁԸ

Պողոսի չորրորդ միսիոներական ճանապարհորդությունը.

1 Տիմոթեոս, Տիտոս և 2 Տիմոթեոս

ԲՈՒ ԱԹԼԻ
ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՄԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՅ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 9

ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ,

ՏԵԽԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս մեկնաբանության գրքում կիրառվող հապավումները.....	5
Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը ձեզ օգնել	7
Աստվածաշունչը ճիշտ կարդալու ուղեցույց: Ստուգված ճշմարտության ինքնուրույն ուսումնասիրություն.....	10
Մեկնաբանություն	
1 Տիմոթեոս, Տիտոս և 2 Տիմոթեոս Հովվական Նամակների ներածությունը.....	19
1 Տիմոթեոս 1.....	27
1 Տիմոթեոս 2.....	61
1 Տիմոթեոս 3.....	88
1 Տիմոթեոս 4.....	111
1 Տիմոթեոս 5.....	134
1 Տիմոթեոս 6.....	151
Տիտոս ներածությունը.....	172
Տիտոս 1.....	175
Տիտոս 2.....	197
Տիտոս 3.....	222
1 Տիմոթեոս 1.....	242
1 Տիմոթեոս 2	266
1 Տիմոթեոս 3	290
1 Տիմոթեոս 4.....	302
Հավելված 1: Հունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները.....	319
Հավելված 2: Տեքստային քննադատություն.....	330
Հավելված 3: Բացատրական բառարան.....	334
Հավելված 4: Վարդապետական սկզբունքներ.....	345

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐ

Մեսիա, 1 Տիմ. 1:1.....	30
Տիմոթեոս, 1 Տիմ. 1:2.....	31
Հայր, 1 Տիմ. 1:2.....	33
Խրատել, շինություն լինել, հորդորել, գորացնել, 1 Տիմ. 1:4.....	36
Սիրտ, 1 Տիմ. 1:5.....	37
Պողոսի կարծիքը Մովսեսական Օրենքի մասին, 1 Տիմ. 1:8.....	39
Չար արարքներն ու առաքինությունները Նոր Կտակարանում, 1 Տիմ. 1:9.....	40
Միասեռականություն, 1 Տիմ. 1:10.....	41
Գոհություն, 1 Տիմ. 1:12.....	44
Պողոսն օգտագործում է « <i>HUPER</i> » նախդիրը բարդ բառեր կազմելու համար, 1 Տիմ. 1:14.....	48
Պողոսն օգտագործում է « <i>KOSMOS</i> » տերմինը, 1 Տիմ. 1:15.....	50
Հավատք (<i>PISTEUŌ</i>), 1 Տիմ. 1:16.....	51
Հավիտյան, 1 Տիմ. 1:17.....	54
Նոր Կտակարանյան Մարգարեություն, 1 Տիմ. 1:18.....	55
Բարեխոսական աղոթք, 1 Տիմ. 2:1.....	63
Մարդկային իշխանություններ, 1 Տիմ. 2:2.....	66
«Ճշմարտությունը» Պողոսի գրվածքներում, 1 Տիմ. 2:4.....	70
Մոնոթեիզմ, 1 Տիմ. 2:5.....	72
Փրկագին/փրկանք/ազատագրում, 1 Տիմ. 2:6.....	74
Աղոթք անսահմանափակ և սահմանափակ, 1 Տիմ. 2:8.....	79
Կանայք Աստվածաշնչում, 1 Տիմ. 2:12.....	83
Աստվածաշնչի մոտեցումը ալկոհոլի և հարբեցողության հանդեպ, 1 Տիմ. 3:3.....	93
Եկեղեցի (<i>ekklesia</i>), 1 Տիմ. 3:5.....	96
Սատանա, 1 Տիմ. 3:6.....	97
Դատաստանը Նոր Կտակարանում, 1 Տիմ. 3:7.....	99
Աստծո փրկության ծրագիրը «Խորհուրդ», 1 Տիմ. 3:9.....	101
Եկեղեցու կին ծառայողների որակավորումները, 1 Տիմ. 3:12.....	104
Մարմին (<i>SARX</i>), 1 Տիմ. 3:16.....	107
Համբարձում, 1 Տիմ. 3:16.....	109
Հետաձգված Երկրորդ Գալուստ, 1 Տիմ. 4:1.....	112
Հավատուրացություն (<i>APHISTĒMI</i>), 1 Տիմ. 4:1.....	112
Դիվական (անմագուր ոգիներ), 1 Տիմ. 4:2.....	116
Մահացու մեղք, 1 Տիմ. 4:2.....	119
Աստվածպաշտություն, 1 Տիմ. 4:7.....	123
ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը, 1 Տիմ. 4:10.....	125
Կերպար, օրինակ, ձև (<i>TUPOS</i>), 1 Տիմ. 4:12.....	127
Ձեռք դնելը Աստվածաշնչում, 1 Տիմ. 4:14.....	129
Համբերել, 1 Տիմ. 4:16.....	131
Երեց, 1 Տիմ. 5:1.....	136
Մարդու հասակ, տարիք, 1 Տիմ. 5:1.....	137
Սուրբեր, 1 Տիմ. 5:10.....	143
Պողոսի հորդորը ստրկության դեմ, 1 Տիմ. 6:1.....	153
Հարստություն, 1 Տիմ. 6:8.....	156
Հունարեն «փորձություն, փորձ» տերմինները և դրանց նշանակության երանգները, 1 Տիմ. 6:9.....	159

Հավիտենական, 1 Տիմ. 6:9.....	160
Ընտրություն/նախասահմանություն և աստվածաբան. հավասարակշռ.կարիքը, 1 Տիմ. 6:12.....	163
Խոստովանություն/դավանել, 1 Տիմ. 6:12.....	164
Ամեն, 1 Տիմ. 6:16.....	167
Այս դարը և եկող դարը, 1 Տիմ. 6:17.....	168
Գնաստիցիզմ, Տիտոս 1:1.....	177
Հույս, Տիտոս 1:2.....	179
Երկրի տարիքն ու կազմավորումը, Տիտոս 1:2.....	180
Հնազանդություն (<i>hypotassō</i>), Տիտոս 2:5.....	201
Նախասահմանություն(կալվինիզմ) և մարդու ազատ կամքը (արմինիանիզմ), Տիտոս 2:11.....	206
Արդարություն, Տիտոս 2:12.....	211
Նոր Կտակարանյան տերմիններ Քրիստոսի վերադարձի մասին, Տիտոս 2:13.....	215
Փառք (<i>doxa</i>), Տիտոս 2:13.....	217
Իշխանություն (<i>exousia</i>), Տիտոս 2:15.....	218
ARCHE՝ սկիզբ/ծագում, Տիտոս 3:1.....	224
Մկրտություն, Տիտոս 3:5.....	229
Երրորդություն, Տիտոս 3:6.....	231
Հավատք, վստահություն, հավատարմություն Հին Կտակարանում(ԴՁ), Տիտոս 3:15.....	237
Աստծո Անունները, 2 Տիմ.1:1.....	244
Ինչու՞ են քրիստոնյաները տառապում, 2 Տիմ.1:8.....	252
Հունարեն բայերի ժամանակաձևերը փրկության մասին, 2 Տիմ.1:9.....	253
Կանչված, 2 Տիմ.1:9.....	254
Օրինական ուժը վատնել(<i>katargeō</i>), 2 Տիմ.1:10.....	255
Փրկության վստահություն, 2 Տիմ.1:12.....	258
Այն օրը, 2 Տիմ.1:12.....	260
Սուրբ Հոգին որպես Անձ, 2 Տիմ.1:14.....	262
Հովվական նամակների ուղղափառ դավանանքը, 2 Տիմ.1:14.....	263
Ուխտ, 2 Տիմ. 2:1.....	267
Համբերություն, 2 Տիմ. 2:11.....	272
Թագավորելը Աստծո թագավորության մեջ, 2 Տիմ. 2:12.....	274
Իսրայելի Աստծո առանձնահատկությունները, 2 Տիմ. 2:19.....	280
Անկյունաքարը, 2 Տիմ. 2:19.....	281
Կնիք, 2 Տիմ. 2:19.....	283
Տիրոջ անունը, 2 Տիմ. 2:19.....	283
Նոր Կտակարանի սրբությունը/սրբացումը, 2 Տիմ.2:21.....	285
Ապաշխարությունը Հին Կտակարանում, 2 Տիմ.2:25.....	287
Վաղ Եկեղեցու քարոզը (<i>KERYGMA</i>), 2 Տիմ.3:15.....	298
Որտե՞ղ են գտնվում մահացածները, 2 Տիմ.4:1.....	304
Աստծո թագավորությունը, 2 Տիմ.4:1.....	307
Հոգին (<i>PNEUMA</i>) Նոր Կտակարանում, 2 Տիմ.4:22.....	316

ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

- AB Խարիսի Աստվածաշնչյան մեկնաբանությունները, իսր. Ուիլյամ Ֆոքսուել և Դեյվիդ Նոել Ֆրիդմեն/ Anchor Bible Commentaries, ed. William Foxwell Albright and David Noel Freedman
- ABD Խարիսի Աստվածաշնչի Բառարան (6 հատոր), իսր. Դեյվիդ Նոել Ֆրիդմեն/ Anchor Bible Dictionary 6 vols., ed. David Noel Freedman
- AKOT Հին Կտակարանի Վերլուծական Բանալի, Ջոն Ջոզեֆ Օուենս/ Analytical Key to the Old Testament by John Joseph Owens
- ANET Մերձավոր Արևելքի Հնագույն Տեքստեր, Ջեյմս Բ.Պրիտչարդ /Ancient Near Eastern Texts, James B. Pritchard
- BDB Հին Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան, Ֆ.Բրաուն, Ս.Ռ.Դրայվերի և Ս.Ա. Բրիգգ/ A Hebrew and English Lexicon of the Old Testament by F. Brown, S. R. Driver and C. A. Briggs
- IDB Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), իսր. Ջորջ Ա.Բաթրիք/ The Interpreter's Dictionary of the Bible (4 vols.), ed. George A. Buttrick
- ISBE Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, (5 հատոր), իսր. Ջեյմս Օր/ International Standard Bible Encyclopedia 5 vols., ed. James Orr
- JB Երուսաղեմի Աստվածաշունչ /Jerusalem Bible
- JPSOA Սուրբ Գիրքը ըստ Մազորեթիկ Տեքստի` Նոր Թարգմանություն/ The Holy Scriptures According to the Masoretic Text: A New Translation
Ամերիկայի հրեական հրատարակչությունը / (The Jewish Publication Society of America)
- KB Հին Կտակարանի եբրայերեն և արամերեն բառարան, Լյուդվիգ Կոհլեր և Վոլտեր Բաումգարտներ/ The Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament by Ludwig Koehler and Walter Baumgartner
- LAM Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Ջորջ Մ.Լամսա/ The Holy Bible From Ancient Eastern Manuscripts (the Peshitta) by George M. Lamsa
- LXX Մեպտուագինդ (հունարեն-անգլերեն) Չոնդերվան, 1970/ Septuagint (Greek-English) by Zondervan, 1970
- MOF Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Ջեյմս Մոֆֆատ/ A New Translation of the Bible by James Moffatt
- MT Մազորեթիկ եբրայերեն տեքստ/ Masoretic Hebrew Text
- NAB Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ/ New American Bible Text
- NASB Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ /New American Standard Bible
- NEB Նոր Անգլերեն Աստվածաշունչ /New English Bible
- NET Նոր Անգլերեն Թարգմանություն, երկրորդ Բետա հրատարակչություն / New English Translation, Second Beta Edition
- NIDOTTE Հին Կտակարանի աստվածաբանության և էկզեգետիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, իսր. Ուիլիամ Ա.Վան Գեմերեն/ New International Dictionary of Old

Testament Theology and Exegesis (5 vols.), ed. Willem VanGemeren

- NIV Նոր Միջազգային Տարբերակ /New International Version
- NJB Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ/ New Jerusalem Bible
- NRSV Նոր Վերանայված Ստանդարտ Աստվածաշունչ/ New Revised Standard Bible
- OTPG Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոդ Ս.Բիլլի, Ուիլյամ Ա.Բենկս և Քոլին Սմիթ/ Old Testament Passing Guide by Todd S. Beall, William A. Banks and Colin Smith
- REB Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ /Revised English Bible
- RSV Վերանայված Ստանդարտ Տարբերակ /Revised Standard Version
- SEPT Մեպտուագինո, հունարեն-անգլերեն, Չոնդերվան, 1970 /The Septuagint (Greek-English) by Zondervan, 1970
- TEV Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից / Today's English Version from United Bible Societies
- YLT Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգ/ Young's Literal Translation of the Holy Bible by Robert Young
- ZPEB Չոնդերվանի Պատկերազարդ Աստվածաշնչի Հանրագիտարան, (5 հատոր)խմբ. Մերրիլ Ս. Տեննի /Zondervan Pictorial Encyclopedia of the Bible (5 vols.), ed. Merrill C. Tenney

Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը մտային և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հեղինակի ներշնչվածության չափը բուն հեղինակի մոտ, այնպես որ Աստծո պատգամը հասկանալի և կիրառելի լինի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը որոշիչ է, բայց նաև դժվար է այն սահմանել: Դա իր մեջ ներառում է բաց լինել Աստծո առաջ և հեշտությամբ ընդունել Աստծո ասածները: Մարդու մեջ պետք է լինի ծարավ (1)Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, և (3) Նրան ծառայելու հանդեպ: Այս գործընթացը ներգրավում է աղոթք, խոստովանություն և կյանքի փոփոխություն պատրաստակամությունը: Սուրբ Հոգին մեկնաբանության գործընթացում որոշիչ դեր է խաղում, բայց ինչո՞ւ անկեղծ, աստվածապաշտ քրիստոնյաները Աստվածաշունչը տարբեր կերպ են հասկանում: Դա մեր համար մնում է գաղտնիք:

Գործընթացի մտային կողմը նկարագրել հեշտ է: Մենք պետք է լինենք հետևողական և նախապատվությունը տանք տեքստին, այլ ոչ թե անձնական կամ եկեղեցական համոզմունքներին: Մենք բոլորս էլ գտնվում ենք որոշակի պատմական պայմանների շրջանակներում: Մեզինք ոչ ոք չի կարող լինել օբյեկտիվ և չեզոք մեկնաբան: Այս մեկնաբանությունը առաջարկում է ուշադիր և տրամաբանական մոտեցում, որը հիմնված է մեկնաբանության երեք սկզբունքների վրա, որոնք կօգնեն մեզ խուսափել մոլորություններից:

Առաջին սկզբունք

Առաջին սկզբունքը ամփոփվում է նրանում, որ պետք է հաշվի առնել պատմական իրավիճակը, երբ գրվել է համապատասխան գիրքը, որը առիթ է հանդիսացել հեղինակի համար գրելու տվյալ գիրքը: Բուն հեղինակն ուներ նպատակ և պատգամ՝ փոխանցելու մարդկանց: Տեքստը չի կարող մեզ համար նշանակել մի բան, որը երբեք չի նշանակել բուն, ներշնչված հեղինակին: Դա հասկանալու բանալին ոչ թե մեր պատմական, զգացմունքային, մշակութային, անձնական կամ եկեղեցական կարիքն է, այլ հեղինակի մտադրությունը: Կիրառությունը սերտ կապված է մեկնաբանության հետ, բայց ճիշտ մեկնաբանությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Հարկ է հստակ ընդգծել, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր տեքստ ունի մեկ և միայն մեկ իմաստ: Դա այն իմաստն է, որը հենց բուն աստվածաշնչյան հեղինակը, գտնվելով Սուրբ Հոգու գործության ներքո, մտադրվել է փոխանցել իր ժամանակակիցներին: Իսկ հենց այդ իմաստն էլ կարող է ունենալ լայն կիրառություն տարբեր մշակութայինում և իրավիճակներում: Բայց բոլոր կիրառությունները պետք է կապակցված լինեն գլխավոր ճշմարտության հետ, որը փոխանցում է մեզ հեղինակը: Այդ իսկ պատճառով, այս ուսուցողական սերտողության մեկնաբանությունը կազմված է այնպես, որ կտա անհրաժեշտ պատկերացում աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրքի մասին:

Երկրորդ սկզբունք

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները ճիշտ որոշելու համար է: Յուրաքանչյուր աստվածաշնչյան գիրք իրենից ներկայացնում է մեկ ամբողջական փաստաթուղթ: Մեկնաբաններն իրավունք չունեն առանձնացնել ճշմարտության մեկ ասպեկտ՝ մերժելով մյուսները: Ուստի, մենք պետք է հակված լինենք հասկանալու աստվածաշնչյան ամբողջ գրքի նպատակը, նախքան գրական բաժինների առանձին մեկնաբանելը: Գրքի առանձին մասերը—գլուխներ, պարբերություններ, կամ համարներ—չեն կարող նշանակել այն ինչ չի նշանակում ամբողջ բաժինը: Մեկնաբանությունը պետք է ամբողջի դեղուկտիվ մոտեցումից գնա դեպի մասերի ինդուկտիվ մոտեցմանը: Ուստի այս սերտողության մեկնաբանությունը կօգնի վերլուծել յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը ըստ պարբերությունների: Գրքի գլուխների և համարների բաժանումները ներշնչված չեն, բայց օգնում են մեզ որոշել տեքստի կառուցվածքային սահմանները:

Մեկնաբանությունը պարբերության մակարդակի վրա—ոչ թե նախադասության, արտահայտության կամ բառի կարող է հանդիսանալ իբրև բանալի, բացահայտելու աստվածաշնչյան հեղինակի

մտադրության իմաստը: Պարբերությունները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, հաճախ կոչվում է թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարբերության մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, բառակապակցություն և նախադասություն ինչ որ կերպ կապված է այս ընդհանուր թեմային: Դրանք սահմանափակում, ընդարձակում, բացատրում են և/կամ հարցադրում: Ծիշտ մեկնաբանելու միակ ճշմարիտ կերպը՝ հետևել հեղինակի մտքին պարբերությունից պարբերություն, աստվածաշնչյան գրքի մի բաժնից մյուսին: Այս մեկնաբանության սերտողությունը նախատեսված է օգնել մարդկանց՝ ժամանակակից անգլերեն թարգմանությունները համեմատելու համար: Այս թարգմանություններն ընտրվել են, որովհետև նրանք հետևեցին թարգմանության տարբեր մոտեցումներին:

1. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴): Այս թարգմանությունը պարբերությունների է բաժանվել ժամանակակից գիտնականների կողմից:
2. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV) -սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ): Այս թարգմանության պարբերությունների բաժանումները ավելի երկար են քան մյուս թարգմանություններինը: Այս երկար բաժինները օգնում են ավելի հեշտ տեսնել ընդհանուր թեմաները:
3. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)- կատարելագործված բառացի թարգմանություն է: Սա կազմում է միջանկյալ կետ հետևյալ երկու ժամանակակից թարգմանությունների միջև: Այս թարգմանության պարբերությունների բաժանումները բավականին օգտակար են թեմաները ճիշտ որոշելու համար:
4. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)- դինամիկ հավասարազոր թարգմանություն է հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից: Սա փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս ընթերցողը կամ քարոզիչը կարողանա հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարբերությունների բաժանումը ավելի շատ կապված է խոսացողի հետ քան թեմայի, այնպես ինչպես NIV (Նոր Միջազգային Թարգմանություն) է: Մեկնաբանության այսպիսի մոտեցումը օգտակար չէ: Հետաքրքիր է նշել, որ թե UBS⁴ և թե TEV հրատարակված են նույն կազմակերպության կողմից, բայց նրանց պարբերությունների բաժանումները տարբեր են:
5. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)- դինամիկ հավասարազոր թարգմանություն է, հիմնված ֆրանսերեն կաթոլիկ թարգմանության վրա: Սա շատ օգտակար է համեմատած եվրոպական մոտեցման հետ պարբերությունների բաժանումների առումով:
6. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգված թարգմանությունը (NASB), որը բառացի թարգմանություն է: Այս մեկնաբանության մեջ ես օգտվել եմ այս թարգմանությունից:

Երրորդ սկզբունք

Երրորդ սկզբունքը կայանում է Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ կարդալու մեջ, որպեսզի կարողանալ ընկալել լայնամասշտաբ հնարավոր իմաստը (իմաստային դաշտ/semantic) որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերն ու արտահայտությունները: Հաճախ հունարեն արտահայտությունը կամ բառը կարելի է հասկանալ մի քանի ձև: Այս տարբեր թարգմանությունները օգնում են նկատել այդ առանձնահատկությունները և օգնում հասկանալ ու բացատրել հունարեն ձեռագրերի տարբերությունները: Սրանք չեն ազդում վարդապետական հարցերի վրա, բայց օգնում են մեզ ավելի մոտ լինել բնագրին:

Այս մեկնաբանությունը ուսումնասիրողին առաջարկում է մեթոդ, բավականին արագ ստուգելու իր սեփական հասկացողությունը տեքստի վերաբերյալ: Այն չի նշանակում ինչ որ միանշանակ մեկնաբանություն, այլ ավելի հակված է տալ լրացուցիչ տեղեկություն և մտաքելու կարողություն: Հաճախ, այլ աստվածաշնչյան հնարավոր մեկնաբանություններ օգնում են մեզ ձերբազատվել սեփական տեսակետներից և չլինել այդքան սահմանափակ, դոգմատիկ և աղանդավորական: Մեկնաբանները պետք է պատկերացում ունենան հնարավորինս շատ մեկնաբանությունների մասին, որպեսզի գիտակցեն, թե որքան երկիմաստ կարող են լինել հին տեքստերը: Ապշեցուցիչ է, թե ինչքան քիչ համաձայնություն կա քրիստոնյաների միջև, որոնք իրենց համար Աստվածաշունչը հռչակում են որպես ճշմարտության աղբյուր:

Ժամանակին այս սկզբունքները օգնել են ինձ հաղթահարել շատ համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ ծայրաստիճան ուշադիր վերաբերվելու հին բնագրերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ դրանք օրհնություն կլինեն նաև ձեզ համար:

Բոբ Աթլի

Արևելյան Տեխասի Սկրտական Համալսարան

Հունիս 27, 1996

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԱՏՈՒԳՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարող ենք մենք ճանաչել ճշմարտությունը: Որտե՞ղ է այն գտնվում: Կարող ենք այն ստուգել տրամաբանությամբ: Կա՞ր արդյոք գերագույն հեղինակություն: Կա՞ր արդյոք իրականում ինչ որ անկասկած և կատարյալ մի բան, որը կարող է շարժել մեր կյանքը և ամբողջ աշխարհը: Ո՞րն է կյանքի իմաստը: Ինչու՞ ենք մենք այստեղ: Ու՞ր ենք գնում: Այս հարցերն այն հարցերն են, որոնց շուրջ լրջորեն խորհել են մտավորականները և որոնք հանգիստ չեն տվել մարդկային բանականությանը ժամանակի սկզբից սկսած (Ժող. 1:13-18; 3:9-11): Ես հիշում եմ իմ անձնական որոնումները իմ սեփական կյանքի կենտրոնի համար, ինչի շուրջ ամեն ինչ պետք է պտտվի: Ես Հիսուսին, որպես իմ կյանքի Տեր ու Փրկիչ ընդունել եմ փոքր հասակում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիք վկայությունների վրա: Երբ ես չափահաս դարձա, իմ և իմ աշխարհի մասին հարցերը նույնպես մեծացան: Պարզ մշակույթային և կրոնական կյանքները իմաստ չմտցրեցին այն գործնական կյանքի փորձառության մեջ, որի մասին ես կարդացել կամ առնչվել եմ: Դա շփոթության, փնտրությունների, կրքոտ ցանկությունների ժամանակն էր, և հաճախ անհույս լինելու զգացողությունը, որը գոյություն ուներ դաժան, իրական աշխարհում, որտեղ ես ապրում էի:

Շատերը պնդում էին, որ իրենք ունեն այս հիմնական հարցերի պատասխանները, բայց ուշադիր և երկար մտածելուց հետո, ես հայտնաբերեցի, որ այդ պատասխանները հիմնված էին (1) անձնական փիլիսոփայությունների, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառությունների, կամ (4) հոգեբանական պատկերացումների վրա: Իսկ ինձ հարկավոր էր որոշ պնդումներ, որոշակի ապացույցներ, խելացի փաստարկներ, որի վրա կարող էի կառուցել իմ աշխարհայացքը, իմ ամբողջականության կենտրոնը, իմ կյանքի իմաստը: Ես այդ ամենը ձեռք բերեցի Աստվածաշնչի ինքնուրույն սերտողության ժամանակ: Ես սկսեցի փնտրել ապացույցներ վստահելի լինելու մասին, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական վստահելիությունը, ինչը հաստատվում էր հնէաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրիտ իրականացումը, (3) 1600 տարիների ընթացքում գրված աստվածաշնչյան պատգամի համաձայնեցվածությունն ու միասնականությունը, և (4) մարդկանց անձնական վկայությունները, որոնց կյանքերը ամբողջությամբ փոխվել էին Աստվածաշնչի հետ շփվելուց հետո: Քրիստոնեությունը, որպես հավատքի միացյալ համակարգ, ունի կարողություն լուծելու մարդկային կյանքի բարդ հարցերն ու խնդիրները: Այդ ամենը միասին ոչ միայն ինձ տվեց հստակ աշխարհայացքի համակարգ, այլ աստվածաշնչյան հավատքի փորձառություն, որն իմ կյանքում բերեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել էի իմ կյանքի այդ ամբողջականության կենտրոնը՝ Քրիստոսը, որին ես ճանաչեցի Սուրբ Գրքի միջոցով: Դա հիասքանչ փորձառություն էր, զգացմունքային թեթևացում: Սակայն ես մինչև հիմա հիշում եմ այն ցնցումն ու ցավը, երբ իմ առջև բացվեցին այն փաստերը, թե ինչքան շատ հիմնավորված, բայց տարբեր մեկնաբանություններ կան, երբեմն նույնիսկ նույն եկեղեցիների և աստվածաբանական դպրոցների միջև: Աստվածաշնչի ներշնչվածությունը կամ վստահելիությունը հաստատելը ընթացքի վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս կարող եմ վստահել կամ մերժել տարբեր և իարարամերժ մեկնաբանությունները հասկանալու համար շատ բարդ աստվածաշնչյան տեքստերը, եթե նրանցից ամեն մեկը առանձին ներկայացնում է դրա հեղինակությունը և վստահության արժանի լինելը: Այս առաջադրանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտագնացությունը: Ես գիտեի, որ իմ հավատքն առ Քրիստոս բերել էր ինձ մեծ խաղաղություն և ուրախություն: Իմ միտքը փափագում էր գտնել ինչ որ բացարձակ ճշմարտություններ (1) իմ մշակույթի արժեքների հետ կապված (փոստ-մոդեռնիստական); (2) իրար բախվող կրոնական համակարգերի դոգմատիզմը (աշխարհի կրոններ); և (3) հարանվանական գոռոզամտություն: Իմ որոնումների ընթացքում իրական վստահելի մոտեցումների հին գրականության մեկնաբանության ժամանակ, ես զարմանալի կերպով հայտնաբերեցի իմ սեփական շփոթությունները՝ պատմական, մշակույթային, հարանվանական և գործնական փորձառության հետ կապված: Ես հաճախ կարդացել եմ Աստվածաշունչը, որպեսզի գտնեմ պնդումներ իմ կարծիքների և տեսանկյունների համար: Ես օգտագործեցի այն որպես դոգմայի աղբյուր, որպեսզի գրոհեմ ուրիշների վրա, վերահաստատելով իմ սեփական անհուսալի և անկայուն կարծիքները: Այնքան ցավալի էր ինձ համար ընդունել այդ փաստը:

Չնայած, ես երբեք չեմ կարող ամբողջությամբ օբյեկտիվ լինել, ես կարող եմ Աստվածաշունչի ավելի լավ ընթերցող լինել: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները ճանաչելով և ընդունելով դրանց առկայությունը: Ես դեռևս ազատագրված չեմ դրանցից, բայց դիմադրել եմ իմ տկարությունները: Սեկնաբանը հաճախ Աստվածաշունչը ճիշտ ընթերցելու ամենավատ թշնամին է: Թույլ տվեք ինձ, սիրելի ընթերցող, թվարկել կանխակարծիքներից մի քանիսը, որոնց վրա է հիմնված Աստվածաշունչի իմ ուսումնասիրությունը, որպեսզի դուք կարողանաք ինձ հետ միասին ստուգել դրանք:

I. Կանխակարծիքներ

Ա. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն միակ ճշմարիտ Աստծո միակ ներշնչված հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բուն աստվածային հեղինակի (Սուրբ Հոգու) մտադրության լույսի ներքո, մարդ-գրողների միջոցով, որոնք ապրել են որոշակի պատմական իրավիճակներում:

Բ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է սովորական մարդու համար և բոլոր մարդկանց համար: Աստված գտավ այնպիսի միջոց, որպեսզի հատակ մեզ ասի այն ամենը, ինչ եղել է տվյալ պատմական և մշակութային կոնտեքստի մեջ: Աստված չի թակցնում ճշմարտությունը - Նա ուզում է, որ մենք հասկանանք: Ուստի, այն պետք է մեկնաբանվի այն օրերի լույսի ներքո և ոչ թե մեր օրերի: Աստվածաշունչը չպետք է մեզ համար նշանակի մի բան, որը չի նշանակել առաջին ընթերցողի կամ լսողի համար: Այն հասկանալի է ամենահասարակ մարդու համար, և իր մեջ պարունակում է սովորական մարդկային հաղորդակցության ձևեր և մեթոդներ:

Գ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն ունի ամբողջական, միավորված պատգամ և նպատակ: Այն չի հակասում ինքն իրեն, չնայած որ իր մեջ պարունակում է դժվար և պարադոքսալիկ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշունչի լավագույն մեկնաբանը հենց ինքն՝ Աստվածաշունչն է:

Դ. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (բացի մարգարեություններից) ունի մեկ և միայն մեկ իմաստ՝ հիմնված բուն, ներշնչված հեղինակի մտադրության վրա: Չնայած մենք երբեք չենք կարող բացարձակ վստահ իմանալ հեղինակի մտադրությունը, շատ ցուցիչներ կօգնեն մեզ որոշել դրանք.

1. գրական ժանրը՝ ընտրված պատգամի փոխանցման համար
2. պատմական կոնտեքստը և/կամ որևէ իրավիճակ, որը առիթ է հանդիսացել տեքստը գրելու համար
3. ամբողջ գրքի գրական կոնտեքստը, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժին
4. գրական բաժինների կառուցվածքի ուրվագիծը կամ պլանը, կապված ամբողջ պատգամի հետ
5. յուրահատուկ քերականական առանձնահատկություններ պատգամը փոխանցելու համար
6. ընտրված բառեր՝ պատգամը ներկայացնելու համար
7. գուգահեռ հատվածներ


Այս պահերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրության համար: Բայց նախքան Աստվածաշունչի ճիշտ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը, թույլ տվեք նկարագրել մի քանի ոչ պիտանի մեթոդներ, որոնք օգտագործվում են մեր օրերում, ստեղծելով մեկնաբանության բազմազանություն, որոնցից պետք է համառորեն խուսափել:

II. Անհամապատասխան կամ ոչ պիտանի մեթոդներ


1. Անտեսելով աստվածաշնչյան գրքերի գրական կոնտեքստը, և օգտագործելով յուրաքանչյուր նախադասություն, արտահայտություն կամ նույնիսկ առանձին բառեր, իբրև հաստատված ճշմարտություն, որը ոչ մի կապ չունի հեղինակի մտադրության կամ ավելի լայն կոնտեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «անհրաժեշտ ապացույցներ տեքստի մեջ»:

2. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փոխարինելով ենթադրյալ պատմական կոնտեքստով, որն ունի շատ քիչ կամ ընդհանրապես չունի հիմք բուն տեքստից:
3. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, այն կարդալ որպես առավոտյան լրագիր, որը հիմնականում գրված է ժամանակակից անհատ քրիստոնյաների համար:
4. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փորձել այլաբանորեն մեկնաբանել այն, փոխելով տեքստի իմաստը փիլիսոփայական/աստվածաբանական քննարկման, որը ոչ մի կապ չունի առաջին ունկնդիրների և բուն հեղինակի մտադրությանը:
5. Անտեսելով ուղերձի իմաստը, փոխարինելով ինչ որ մեկի սեփական աստվածաբանական համակարգի հետ, սիրած վարկածի կամ կենսական նպատակահարմարությամբ, որը ոչ մի կապ չունի բուն հեղինակի նպատակի և պատգամի իրական իմաստի հետ: Այսպիսի բան հաճախ պատահում է Աստվածաշնչի սկսնակ ընթերցողների հետ, օգտագործելով այս օրինակը սեփական հեղինակությունը պնդելու համար: Սա հաճախ վերաբերվում է որպես «ընթերցողի արձագանքը» (ինչ է այն նշանակում ինձ համար) մեկնաբանությանը:

Բոլոր գրավոր ինֆորմացիայի մարդկային հաղորդակցության մեջ գոյություն ունի ամենաքիչը երեք կապակցված բաղադրիչներ:



Անցյալում Աստվածաշնչի ընթերցանության տարբեր մեթոդներ կենտրոնացել են երեք բաղադրիչներից մեկի վրա: Բայց որպեսզի իրապես հաստատվի Աստվածաշնչի եզակի ներշնչվածությունը, այս սխեման ավելի հարմար է:



Իրականում, բոլոր երեք բաղադրիչները պետք է ներգրավված լինեն մեկնաբանության գործընթացի մեջ: Երբ իմ առջև դրված է առաջադրանք, գտնել ինչ որ մի բանի պնդում, իմ ամբողջ մեկնաբանությունը կենտրոնացվում է առաջին երկու բաղադրիչների վրա՝ բուն հեղինակը և տեքստը: Հնարավոր է այս ամենի մեջ կիսով չափ առկա է իմ ոչ ճիշտ գործածումը, որի հետ ես ստիպված եմ եղել բախվել (1) տեքստերին չհիմնավորված այլաբանական կամ հոգևոր իմաստ տալ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանություն (ինչ է այն նշանակում ինձ համար): Չարաշահում կարող է ծագել յուրաքանչյուր փուլում: Մենք միշտ պետք է ստուգենք մեր շարժառիթները, համոզմունքները, ուսումնասիրության մեթոդները և գործնական կիրառությունները: Բայց ինչպե՞ս այս ամենը հսկել, եթե

չդրվի մեկնաբանության հստակ սահմաններ, հստակ չափանիշներ: Եվ հենց այս իրավիճակում է հեղինակի մտադրությունը և տեքստի կառուցվածքը ներկայացնում են մի շարք չափանիշներ, որոնք թույլ են տալիս ինձ որոշել հնարավոր մեկնաբանության թույլատրելի սահմանները:

Այսպիսով Աստվածաշնչի ընթերցանության այս ոչ պիտանի մեթոդների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության և մեկնաբանության այն մի քանի հնարավոր մոտեցումները, որոնք տալիս են որոշակի վստահության աստիճան և տրամաբանորեն չեն հակասում իրար:

III. Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության հնարավոր մեթոդները

Այստեղ ես չեմ քննարկում մեկնաբանության հատուկ ժանրերի յուրահատուկ մեթոդներ, այլ ներկայացնում եմ ընդհանուր հերմենևտիկական սկզբունքներ, որ ընդունելի են ամեն տեսակ աստվածաշնչյան տեքստերի համար: Լավ գիրք է տարբեր ժանրերի մեկնաբանության առանձնահատկությունների մասին «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր բոլոր արժեքներով» Գորդոն Ֆի և Գուդաս Ստուարտ, տպագրված Չոնդերվան» (*How To Read The Bible For All Its Worth*, by Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդի մեջ, նախևառաջ, կենտրոնանում եմ այն ընթերցողի վրա, ով ինքնուրույն չորս անգամ կարդում է աստվածաշնչյան տեքստը, և ամեն անգամ թույլ տալիս, որ Սուրբ հոգին մեկնաբանի դրա նշանակությունը: Այդ կերպ, Սուրբ Հոգին տեքստը և ընթերցողը հայտնվում են առաջին տեղում և ոչ թե երկրորդական: Այս մոտեցումը նաև պաշտպանում է ընթերցողին մեկնաբանների կողմից հասցվելիք մեծ ներգործությունից: Մի անգամ այսպիսի արտահայտություն եմ լսել «Աստվածաշունչը շատ լույս է սփռում մեկնաբանությունների վրա»: Եվ սա չի նշանակում, որ տեքստի ուսումնասիրության համար բավարար չեն մեկնաբանությունները, բայց դրանք կարելի է օգտագործել զգույշ և համապատասխան ժամանակին:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնաբանությունների համար պնդումներ գտնել հենց տեքստից: Հինգ բնագավառներ, որոնք տալիս են մեզ, համեմայնդեպս, որոշակի վստահություն:

1. պատմական կոնտեքստը
2. գրական կոնտեքստ
3. քերականական կառուցվածքներ (շարահյուսություն)
4. այն ժամանակվա բառային կիրառությունը
5. համապատասխան գուգահեռ հատվածներ
6. ժանր

Մեր մեկնաբանությունը պետք է լինի բանական և տրամաբանական: Աստվածաշունչը մեր միակ հավատքի և ճիշտ գործնական ապրելակերպի աղբյուրն է: Ցավալի է, որ քրիստոնյաները հաճախ չեն համաձայնվում այն բանի հետ, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը, կամ ինչ որ այն պնդում է: Ընթերցանության չորս շրջանները անհրաժեշտ են այն բանի համար, որ կարողանանք տեսնել բոլոր անհրաժեշտ առանձնահատկությունները ճիշտ մեկնաբանելու համար.

1. Ընթերցանության առաջին շրջան
 - ա. Մեկ շնչով կարդացեք գիրքն ամբողջությամբ: Կարդացեք այն ևս մեկ անգամ ուրիշ թարգմանությունով, ցանկալի է ուրիշ թարգմանության տեսության տեսանկյունից
 - (1) բառացի (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ հավասարագոր (TEV, JB)
 - (3) վերապատմում (Living Bible, Amplified Bible)
 - բ. Գտեք ամբողջ գրվածքի կենտրոնական նպատակը: Որոշեք նրա թեման:
 - գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական բաժինը, գլուխը, պարբերությունը կամ նախադասությունը, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման:
 - դ. Որոշեք ստեղծագործության գրական ժանրը
 - (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմություն

- բ) Եբրայերեն պոեզիա (իմաստուն գրականություն, սաղմոս)
- գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, բանաստեղծական)
- դ) Օրենսգիրք
- (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմություններ (Ավետարաններ, Գործք)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Վախճանաբանական գրականություն

2. Ընթերցանության երկրորդ շրջան

- ա. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ քննարկվող հարցերը:
- բ. Ընդգծեք գլխավոր թեմաները, մեկ նախադասությամբ շարադրեք դրանց բովանդակությունները:
- գ. Համեմատեք ձեր եզրակացությունը այս ամենի մասին սերտողության գրականության հետ:

3. Ընթերցանության երրորդ շրջան

- ա. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել պատմական իրավիճակը և հատուկ իրավիճակը, որն առիթ է հանդիսացել այդ գիրքը գրվելու համար:
- բ. Թվարկեք պատմական առանձնահատկությունները, որոնք նշված են տվյալ Աստվածաշնչի տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) գրվելու տարեթիվը
 - (3) ում համար է գրվել
 - (4) ինչի համար է գրվել
 - (5) մշակության ին կոնտեքստի առանձնահատկությունները, որոնք կապված են գրվելու նպատակի հետ
 - (6) ակնարկ պատմական մարդկանց և իրադարձությունների մասին
- գ. Ընդարձակեք ձեր ուսումնասիրությունը պարբերության մակարդակի վրա և հատկապես գրքի այն հատվածը, որն ուզում եք մեկնաբանել: Միշտ գտեք և ընդգծեք գրական բաժինը: Սա կարող է լինել մի քանի գլուխներ կամ պարբերություններ: Դա կօգնի ձեզ հասկանալ հեղինակի տրամաբանությունն ու տեքստի կառուցվածքը:
- դ. Ստուգեք պատմական իրավիճակի մասին ձեր եզրակացությունները՝ օգտագործելով տեղեկատու ձեռնարկներ:

4. Ընթերցանության չորրորդ շրջան

- ա. Կարդացեք ուսումնասիրվող հատվածը կրկին մի քանի թարգմանություններով
 - (1) բառացի (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ հավասարագոր (TEV, JB)
 - (3) վերապատմում (Living Bible, Amplified Bible)
- բ. Փնտրեք գրական կամ քերականական կառուցվածքներ
 - (1) կրկնվող արտահայտություններ, Եփ. 1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքներ, Հռ. 8:31
 - (3) հակասող գաղափարներ
- գ. Պարզեք հետևյալ պահերը
 - (1) կարևոր, բանալի տերմիններ
 - (2) անսովոր տերմիններ
 - (3) կարևոր քերականական կառուցվածքներ

- դ. (4) բարդ բառեր, արտահայտություններ և նախադասություններ
 Փնտրեք համապատասխան զուգահեռ հատվածները
 - (1) փնտրեք ամենահատակ ուսուցանող հատվածը ձեր թեմային համապատասխան, օգտվելով, (1) «սխտեմատիկ աստվածաբանություն» գրքերից, (2) ուսուցողական Աստվածաշնչեր մեկնաբանություններով և տեղեկատվական նյութերով, (3) համաբարբառներից
 - (2) Փնտրեք հնարավոր պարաֆրասային զույգեր նույն թեմային պատկանող: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ կան «դիալեկտիկական զույգերի» մեջ; հարանվանական շատ բախումներ առաջանում են տեքստը կիսով չափ ընդունելու համար: Ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և մենք պետք է փնտրենք ամբողջ պատգամը որպեսզի պահենք մեր մեկնաբանության մեջ սուրբգրային հավասարակշռությունը:
 - (3) Փնտրեք զուգահեռներ նույն գրքի մեջ, նույն հեղինակի մոտ և նույն ժանրի տեքստերի մեջ; Աստվածաշունչը իր իսկ սեփական լավագույն մեկնաբանն է, որովհետև այն ունի մեկ հեղինակ՝ Սուրբ Հոգին:
- ե. Օգտվեք լրացուցիչ ուսուցողական նյութերից, ստուգելու համար ձեր դիտարկումները պատմական կոնտեքստի և կոնկրետ դեպքի շուրջ, կապված գիրքը գրելու հետ
 - (1) ուսուցողական Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանություններ (այս փուլում թույլ տվեք հավատացյալներին անցյալի և ներկայի օգնել ձեզ և ուղղել ձեր անձնական սերտողությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Հիմա մենք կնայենք կիրառության հարցերին: Դուք բավականին ժամանակ ծախսեցիք, որպեսզի հասկանաք տեքստի սկզբնական նշանակությունը; հիմա ձեր առջև դրված է առաջադրանք դա ճիշտ կիրառել ձեր կյանքում, ձեր մշակույթում: Ես որոշում եմ աստվածաշնչյան տեքստ հեղինակությունը որպես «այն բանի հասկացողություն, թե ինչ է ասել հեղինակն իր ժամանակին, և դրա կիրառությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բուն հեղինակի մտադրության մեկնաբանությանը, թե ժամանակի մեջ և թե տրամաբանությամբ: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի հատվածը մեր օրերում մինչև որ չհասկանանք թե ինչ նշանակություն ունեն դա այն ժամանակվա մարդկանց համար, ում համար որ գրվել է դա: Չի կարելի աստվածաշնչյան տեքստին իմաստ տալ, որը երբեք չի բովանդակել:

Այստեղ ձեր ուղեցույցը կլինի մանրամասն ուսումնասիրությունը պարբերությունների մակարդակով (ընթերցանության ցիկլ #3): Կիրառությունը պետք է կատարվի պարբերության մակարդակով և ոչ թե բառի: Բառերն ունեն նշանակություն միայն կոնտեքստում, արտահայտություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում, նախադասություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում: Միակ ներշնչված անձը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում դա բուն հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լուսավորությամբ: Բայց լուսավորումը ներշնչանք չէ: «Այսպես է ասում Տերը» ասելու համար մենք պետք է ամբողջությամբ ենթարկվենք բուն հեղինակի մտադրությանը: Կիրառությունը պետք է կապված լինի հիմնականում ամբողջ գրվածքի, հատուկ գրական բաժնի և պարբերության մակարդակի մտքի զարգացումը ընդհանուր մտադրության հետ:

Թույլ մի տվեք մեր օրերի խնդիրներն ու պահանջները մեկնաբանեն Աստվածաշունչը, թող Աստվածաշունչը խոսի: Իհարկե, դա մեզանից շատ ջանք է պահանջում, որ կարողանանք տեքստից սկզբունքներ քաղել: Եվ դրանք կգործեն միայն այն ժամանակ, երբ տեքստը հաստատի դա: Դժբախտաբար, շատ անգամ մեր սկզբունքներից շատերը հենց «մերն են», և ոչ թե այն ինչ տեքստն իրականում պարունակում է:

Աստվածաշունչը կիրառելու ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ (բացի մարգարեությունից) ամեն մի աստվածաշնչյան տեքստ ունի միայն մեկ իմաստ: Այդ իմաստը կապված է բուն հեղինակի

մտադրությանը, որը ներկայացնում է իր օրերի ճգնաժամերն ու կարիքները: Շատ հնարավոր կիրառություններ կարող են դուրս բերվել այս մեկ իմաստից: Տեքստի կիրառությունը հիմնված կլինի կոնկրետ մարդկանց կարիքներից, բայց պետք է կապված լինի բուն հեղինակի տված իմաստին:

V. Մեկնաբանության հոգևոր ասպեկտը

Մինչև այս պահը ես քննարկել եմ տրամաբանական և տեքստային գործընթացը, որպես կարևոր հիմք՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու և կիրառելու համար: Հիմա թույլ տվեք համառոտ շարադրել մեկնաբանության գործընթացի հոգևոր կողմը: Այստեղ ինձ շատ են օգնում հետևյալ քայլերը

1. Աղոթք Սուրբ Հոգու օգնության համար (հմմտ. I Կոր. 1:26-2:16).
2. Աղոթք անձնական ներման և գիտակցական մեղքից մաքրվելու համար (հմմտ. I Հովհ. 1:9).
3. Աղոթք Աստծուն ճանաչելու մեծ ցանկություն ունենալու համար (հմմտ. Սաղ. 19:7-14; 42:1; 119:1).
4. Բացահայտված ճշմարտության անհապաղ կիրառում քո սեփական կյանքում
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Շատ դժվար է պահել հավասարակշռությունը տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև: Հետևյալ մեջբերումներն օգնել են հավասարակշռության մեջ պահել այդ երկուսը

1. Ջեյմս Ու. Սայր «Սուրբ Գրքի Աղավաղում», էջ 17-18 (James W. Sire, *Scripture Twisting*, pp. 17-18):
«Լուսավորումը պայծառացնում է բոլոր Աստծո ժողովրդի միտքը, և ոչ թե միայն ինչ որ հոգևոր բարձր խավի: Աստվածաշնչյան քրիստոնեության մեջ չկա գուրու դասակարգ, ոչ հատուկ լուսավորվածներ, ոչ հատուկ մարդիկ, որոնց միջոցով է միայն ճիշտ մեկնաբանությունը տրվում: Եվ քանի որ Սուրբ Հոգին է տալիս հատուկ պարզևներ իմաստության, գիտության և հոգևոր խորաթափանցության, Նա չի նշանակում այդ պարզևներով օժտված քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանողները: Բայց Իր ժողովրդից ամեն մեկը պատասխանատու է սովորելու, խորհելու և մտածելու ամեն ինչ Աստվածաշնչի միջոցով, որը հեղինակություն է բոլորի համար և նաև նրանց համար, ում Աստված տվեց բացառիկ կարողություններ: Ամփոփելով ասեմ, որ ամբողջ այս գրքի ընթացքում ես պնդում եմ, որ Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն հանդիսանում է անձեռնմխելի հեղինակություն ամեն ինչում, ինչի մասին որ խոսում է, որ այն չբացահայտված գաղտնիք չէ, բայց կարող է բավականին լավ հասկանալի լինել սովորական մարդու համար՝ ցանկացած մշակույթ ներկայացնող»:
2. Կյորկեգորա, Բերնարդ Ռ-ամ «Բողոքական Աստվածաշնչյան մեկնաբանություն», էջ 75 (Kierkegaard, found in Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*, p. 75):
Համաձայն Կյորկեգորայի Աստվածաշնչի քերականական, լեքսիկոնային և պատմական սերտողությունը անհրաժեշտ էր, բայց նախևառաջ կարևոր է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Որպեսզի Աստվածաշունչը կարդացվի որպես Աստծո Խոսք, պետք է կարդալ այն սաստիկ վախենալով, ծածուկ, լարված սպասումով, Աստծո հետ հարաբերություն ունենալով: Աստվածաշունչ կարդալ չմտածելով կամ անփութորեն, կամ ակադեմիական և մասնագիտական մոտեցմամբ, նշանակում է Աստվածաշունչը չկարդալ որպես Աստծո Խոսք: Բայց երբ մարդը կարդում է այն, որպես սիրային նամակ, այդժամ նա իրականում կարդում է այն որպես Աստծո Խոսք»:
3. Հ.Հ. Ռոլուեյ «Աստվածաշնչի պատշաճությունը», էջ 19 (H. H. Rowley in *The Relevance of the Bible*, p. 19):
«Աստվածաշնչի ոչ մի մտային հասկացություն, որքան էլ որ այն ամբողջական լինի» չի կարող բացահայտել նրա բոլոր գանձերը: Այսպիսի հասկացողությամբ չի կարելի

չարաշահել, քանի որ այն հանդիսանում է անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, որը ապահովում է ամբողջական հասկացողությունը: Բայց, որպեսզի ամբողջական լինի, այն պետք է հոգևոր գանձերը առաջնորդի հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության համար անհրաժեշտ է ավելին քան միայն մտային զգոնությունը: Հոգևոր բաները կարելի է տեսնել միայն հոգևոր տեսողությամբ, դրա համար Աստվածաշունչ ուսումնասիրող մարդը պետք է գտնվի հոգևոր զգայունության իրավիճակում, ունենա խիստ փափագ Աստծուն փնտրելու, որպեսզի իրեն հանձնի Աստծուն, եթե նա ուզում է անցնել իր գիտական հետազոտությունը այս ամենահարուստ ժառանգության բացահայտմանը հասնելով»:

VI. Այս մեկնաբանության մեթոդը

«Մեկնաբանության ուղեցույց»-ը նախատեսված է Աստվածաշնչի ձեռնարկի մեկնաբանության գործընթացի մեջ օգնել ձեզ հետևյալ կերպ

1. Հակիրճ պատմական ակնարկ, որը ներկայացնում է աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք: «Ընթերցանության #3 շրջանը» անելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացվում է կոնտեքստի տեսությունը: Սա կօգնի ձեզ տեսնելու, թե ինչ կառուցվածք ունի գրական բաժինը:
3. Յուրաքանչյուր գլխի կամ գրական բաժնի սկզբում պարբերության բաժանումները և պատկերավոր վերադրումները ներկայացված են մի քանի ժամանակակից թարգմանություններով
 - ա. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴)
 - բ. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB),
 - գ. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV)
 - դ. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)
 - ե. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)
 - զ. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն: Նրանք պետք է հաստատվեն կոնտեքստի հիման վրա: Համեմատելով մի քանի ժամանակակից թարգմանություններ, որոնք կատարված են տարբեր թարգմանչական տեսությունների և աստվածաբանական տեսանկյուններից, մենք կարող ենք վերլուծել բուն հեղինակի մտքի ենթադրյալ կառուցվածքը: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ գլխավոր ճշմարտություն: Սա կոչվել է «գլխավոր թեմա» կամ «տեքստի կենտրոնական միտք»: Այս միացնող միտքը բանալին է ճիշտ պատմական և քերականական մեկնաբանության: Երբեք չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել հիմնվելով մեկ պարբերությունից փոքր հատվածի վրա: Նաև հիշեք, որ յուրաքանչյուր պարբերություն կապված է իրեն շրջապատող պարբերությունների հետ: Ահա թե ինչու պարբերության համար կարևոր է ունենալ ամբողջ գրքի պլանը: Մենք պետք է կարողանանք հետևել թեմայի տրամաբանական զարգացմանը ըստ ներշնչված հեղինակի:

4. Բոք Ատլեի մոտեցումն այսպիսին է, որ ճիշտ մեկնաբանություն ստանալու համար պետք է կատարել համար առ համար սերտողություն: Սա ստիպում է մեզ հետևել բուն հեղինակի մտքերին: Նշումները մեզ օգտակար տեղեկություն են տալիս մի քանի բաժիններում, դրանք են՝
 - ա. գրական կոնտեքստ
 - բ. պատմական, մշակութային առանձնահատկություններ
 - գ. քերականական ինֆորմացիա
 - դ. բառային սերտողություն
 - ե. կարևոր զուգահեռ հատվածներ

Որոշակի դեպքերում մեկնաբանության մեջ, 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB), լրացված է մի քանի այլ ժամանակակից թարգմանությունների հղումներով:

- ա. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV), -սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ):
- բ. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV), որը բառացի տարբերակն է Եկեղեցիների Ազգային Խորհրդի կողմից, որը Վերստուգված Ստանդարտ Թարգմանությունն է:
- գ. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV), դիմամիկ հավասարազոր թարգմանություն է հրատարակված ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից:
- դ. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB), որը անգլերեն թարգմանություն է հիմնված ֆրանսերեն կաթոլիկ դիմամիկ հավասարազոր թարգմանության վրա

Նրանք, ովքեր հունարեն կարդալ չեն կարող, համեմատելով անգլերեն թարգմանությունները կկարողանան լուծել շատ խնդիրներ, որոնց հետ առընչվում են տեքստն ուսումնասիրելու ժամանակ

- ա. ձեռագրային տարբերակներ
- բ. բազմիմաստ բառեր
- գ. քերականորեն բարդ տեքստեր և կառուցվածք
- դ. երկիմաստ, անորոշ տեքստեր

Չնայած անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, նրանք նշում են տեքստի այն հատվածները, որոնք պահանջում են ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրություն:

Յուրաքանչյուր գլխի վերջում կան կարևոր հարցեր քննարկման համար, որոնք կօգնեն կենտրոնացնել ձեր ուշադրությունը այդ գլխի ընդհանուր թեմաների մեկնաբանության արդյունքների վրա:

ՀՈՎՎԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1 ԵՎ 2 ՏԻՄՈԹԵՈՍ ԵՎ ՏԻՏՈՍ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

- Ա. 1 Տիմոթեոսում, Տիտոսում և 2 Տիմոթեոսում նշված աշխարհագրական վայրերը չեն համապատասխանում Գործք Առաքելոցի կամ Պողոսի այլ նամակների ժամանակագրությանը:
- ա. այցելություն Եփեսոս (1 Տիմ. 1: 3)
 - բ. այցելություն Տրովադա (2 Տիմ. 4:13)
 - գ. այցելություն Մելիտոս (2 Տիմ. 4:20)
 - դ. առաքելություն դեպի Կրետե (Տիտոս 1: 5)
 - ե. առաքելություն դեպի Իսպանիա (Կլեմենտը Հռոմից 95թ. և Մորատորիան Կանոնի ներածությունը 180-200թթ.)
- Հետևաբար, կարծում եմ, որ Պողոսը ազատ է արձակվել քանոնից (վաղ 60-ականների կեսին, որը փաստագրված է I Կլեմենտ 5-ում, գրված մոտ 95թ.) և կատարել չորրորդ միսիոներական ճանապարհորդությունը, այնուհետև նորից ձեռքակալվում և սպանվում մինչև 68թ. (Ներոնի ինքնասպանությունը):
- Բ. Այս նամակների նպատակը, ընդհանուր առմամբ, համարվել է վարչական՝ ադմինիստրատիվ (եկեղեցու կազմակերպում): Այնուամենայնիվ, Gordon Fee-ի *New International Biblical Commentary*, հատ. 13, 1 և 2 Տիմոթեոս և Տիտոս, նա համոզում է ինձ, որ նամակներ գրելու առիթը Եփեսոսի տնային եկեղեցիներում (1 Տիմոթեոս) և Կրետե կղզում (Տիտոս) ծագած կեղծ ուսմունք էր:
- Գ. Որոշ առումներով Հովվական նամակները սահմանում են վարչական օրինակ, որը նման է Essenes-ի *Manual of Discipline*: Այս ուղեցույցները առավել անհրաժեշտ էին առաքելական ուսմունքներից և ձևից վաղ և ընդհանրական շեղումի լույսի ներքո:
- Դ. Հովվական նամակների և Ղուկասի (Գործք և Ավետարան) բառապաշարի նմանությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Պողոսը նրան որպես դպիր է օգտագործել (հմմտ. C. F. C. Moule, *The Problem of the Pastoral Epistles: A Reappraisal*): Ս. Գ. Վիլսոնը *Ղուկասը և Հովվական Նամակները* գրքում հավաստել է, որ այս երեք գիրքը, թերևս, Ղուկասի փորձն էր գրելու երրորդ հատորը, որը տարածում էր ավետարանի շարժումը Հռոմից դուրս:
- Ե. Ինչու՞ են այս երեք գրքերը միահյուսված միասին: Հնարավո՞ր է, որ դրանք առնչվեն առանձին ժամանակների / վայրերի / խնդիրների: Սակայն 1 Տիմոթեոսն ու Տիտոսը եկեղեցու կազմակերպման հետ կապ չունեն: Դա իրականում (1) նրանց բառապաշարն է, 2) կեղծ ուսուցիչները փորձել են միավորել այս գրքերը և (3) այն փաստը, որ դրանք հեշտությամբ չեն համապատասխանում Գործքի ժամանակագրությանը (եթե դրանք վերցվեն միասին):

ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Նամակներն իրենք են պնդում, որ Պողոս Առաքյալն է հեղինակը (տես 1 Տիմ. 1: 1; 2 Տիմ. 1: 1 և Տիտոս 1: 1) իր երկու առաքելական ներկայացուցիչներին՝ Տիմոթեոսին և Տիտոսին:
- Բ. Հովվական նամակների հեղինակության հարցը սկսել է քննարկվել 19-րդ և 20-րդ դարերում: Պողոսի հեղինակության մերժումը սովորաբար հիմնված է
1. զարգացած եկեղեցական կազմակերպվածություն (առաջնորդների որակավորում)
 2. զարգացած գնոստիցզմ (փաստագրված է երկրորդ դարում)
 3. զարգացած աստվածաբանություն (համոզմունքների դրույթներ)
 4. բառապաշարի և ոճի փոփոխություն (բառերի մեկ երրորդը չի օգտագործվում Պողոսի այլ գրվածքներում)
- Գ. Այս տարբերությունները կարելի է բացատրել
1. սրանք Պողոսի վերջին գրքերն են, հնարավոր է՝ օգտագործելով Ղուկասին որպես դպիր
 2. բառապաշարն ու ոճը կախված են առիթից
 3. գնոստիկ գաղափարները առաջին դարի հրեական մտքի զարգացումն էր (տես Մեռյալ ծովի մագաղաթները)
 4. Պողոսը փայլուն աստվածաբան և ստեղծագործ գրող էր մեծ բառապաշարով
- Դ. Պատմական նախադեպի աճող հասկացողություն կա
1. Պողոսն օգտագործում է պրոֆեսիոնալ քրիստոնյա դպիրի (այս դեպքում, հնարավոր է, Ղուկասին)
 2. Պողոսը օգտագործում է համահեղինակների (այսինքն, իր միսիոներական թիմի մի մասին, տես 2 Տիմ 4:11)
 3. Պողոսն օգտագործում է մեջբերումներ պատարագից կամ հիմներից (լավ ամփոփում կա *Dictionary of Paul and His Letters*, խմբագրված Hawthorne և Martin կողմից, հրատարակված IVP, էջ 664):
- Առաջարկությունները, որ Հովվական նամակների բաժինները այլ աղբյուրներից են մեջբերված, օգնում են բացատրել *hapax legomena*- ի թվերը (Նոր Կտակարանում միայն մեկ անգամ օգտագործված բառերը), ոչ Պողոս-յան իղիումաներ և տերմինների յուրօրինակ օգտագործում, որը հատուկ է միայն Պողոսին:
- ա. փառաբանություններ (տես 1 Տիմ. 1:17; 6:15-17)
 - բ. անօրենությունների ցանկը (տես 1 Տիմ. 1: 9-10)
 - գ. համապատասխան վարք կանանց համար (տես 1 Տիմ. 2: 9-3: 1ա)
 - դ. որակավորումներ ծառայողների համար (տես 1 Տիմ. 3: 1 բ -13)
 - ե. խոստովանություններ (տես 1 Տիմ. 2: 5-6; 3:16; 2 Տիմ. 1:9-10; Տիտոս 3: 3-7)
 - զ. օրհներգեր (տես 1 Տիմ. 6: 11-12,15-16; 2 Տիմ. 2: 11-13; Տիտոս 2:11-14)
 - է. Հին Կտակարանի *midrash* (տես 1 Տիմ. 1:9-10; 2:9-3:1ա; 2 Տիմ. 2:19-21; Տիտոս 3: 3-7)
 - ը. բանաձև

- 1) «Ճշմարիտ է խոսքը» (տես 1 Տիմ. 1:15; 2:9-3:1ա; 2 Տիմ. 2: 11-13; Տիտոս 3: 3-8)
 - 2) « սա իմանալով, որ» (տես 1 Տիմ. 1:9-10; 2 Տիմ. 3:1-5)
 - 3) «այս բաները» (տես 1Տիմ. 4: 6,11; 2 Տիմ 2:14; Titus 1: 15-16; 2: 1)
- թ. մեջբերում հունական բանաստեղծից (տես Տիտոս 1:12) [Եփիմենիդես և / կամ Եուրիփիդես])

Ե. Զարմանալի է, որ երկրորդ դարի «Պողոսականությունը» նշում է այնպիսի կոնկրետ մանրամասներ, ինչպիսիք են մարդկանց անունները (օրինակ, Հիմենոսը 1 Տիմ. 1:20; 2 Տիմ. 2:17; Աղեքսանդրոսը 1 Տիմ. 1:20; Զենասը Տիտոս 3:13) և իրադարձությունները (Տրոփիմոսի հիվանդությունը Մելիտոսում 2 Տիմ. 4:20 կամ որբնայրիի դերը 1 Տիմ. 5:9), որոնք Պողոսի գրվածքներում ուրիշ ոչ մի տեղ նշված չեն:

Այս բաները չեն համապատասխանում կեղծ գրության/ պսևդոգրաֆիկության ենթադրությանը:

Նոր Կտակարանի նամակների հետ կապված կեղծ անվանումների մասին լավ հոդված է *An Introduction to the New Testament*, Carson, Moo, և Morris, էջ 367-371:

ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եթե ընդունում ենք, որ Պողոսն ազատ արձակվեց բանտից (Գործք Առաքելոց գրքի վերջում, հնարավոր է 59-61թթ.), ապա կա արդյո՞ք որևէ վաղ ավանդույթ նրա հետքանտային գործունեության մասին (այսինքն, Իսպանիայում քարոզելը, տես Հռ. 15: 24, 28):

1. Հովվական նամակները (տես 2 Տիմ. 4:10)
2. I Կլեմենտ 5
 - ա. Պողոսը քարոզում էր արևելքում և արևմուտքում (այսինքն, Իսպանիա)
 - բ. Պողոսը սպանվեց «պրետորականների» ձեռքով (այսինքն, Տիգելինուսն ու Սաբինուսը, ովքեր գործում էին Ներոնի թագավորության վերջին տարիների ընթացքում 68թ.)
3. Մուրատոբյան հատվածի ներածությունը (Հռոմից Կանոնի գրքերի ցանկը մոտ 180-200թթ.)
4. Եուսեբիոսի *Historical Ecclesiastical History* 2: 22:1-8, նշում է, որ Պողոսը ազատվել է հռոմեական բանտարկությունից

Բ. Թվում է, թե 1 Տիմոթեոսը և Տիտոսը գրեթե միասին են գրվել մինչև Պողոսի կրկին բանտարկվելը: 2 Տիմոթեոսը Պողոսի վերջին և հրաժեշտի գրվածքն է բանտում:

Գ. Պողոսի գրվածքների հնարավոր ժամանակագրությունը, աննշան հարմարեցումներով, F. F. Bruce և Murry Harris-ի կողմից

	<u>Նամակը</u>	<u>Տարեթիվը</u>	<u>Գրելու վայրը</u>	<u>Գործք</u>
1.	Գաղատացիս	48	Սիրիա Անտիոք	14:28; 15:2
2.	1 Թեսաղոնիկեցիս	50	Կորնթոս	18:5
3.	2 Թեսաղոնիկեցիս	50	Կորնթոս	
4.	1 Կորնթացիս	55	Եփեսոս	19:20
5.	2 Կորնթացիս	56	Մակեդոնիա	20:2

6.	Հռոմեացիս	57	Կորնթոս	20:3
7-10.	Բանտային նամակներ			
	Կողոսացիս	60 սկզբին	Հռոմ	
	Եփեսացիս	60 սկզբին	Հռոմ	
	Փիլեմոն	60 սկզբին	Հռոմ	
	Փիլիպեցիս	ուշ 62-63	Հռոմ	28:30-31
11-13.	4 միսիոներական ճանապարհորդություն			
	1 Տիմոթեոս	63 (կամ ավելի ուշ	Մակեդոնիա	
	Տիտոս	63 բայց մինչև	Եփեսոս ?	
	2 Տիմոթեոս	64 68թ.)	Հռոմ	

ՄՏԱՑՈՂՆԵՐԸ

- Ա. Հովվական նամակներ անունը գալիս է 1703թ.Դ.Ն. Բերդոտի մեկնաբանությունից: Այն խոսում է նրանց եզակի բնույթի և բովանդակության մասին: Տիմոթեոսը և Տիտոսը, սակայն, հովիվներ չեն, այլ առաքելական պատվիրակներ:
- Բ. Այս նամակները գրվել են եկեղեցիների համար, բայց Պողոսի գործընկերների՝ Տիմոթեոսի և Տիտոսի գրած նամակների գրական ձևով: Պողոսը դիմում է եկեղեցական համայնքներին, երբ խոսքն ուղղում է իր առաջնորդության թիմին: Պողոսի ավելի լայն լսարանի վերաբերյալ ակնարկներն են
1. ներածությունների բանաձևը, որտեղ նշված է իր առաքյալ լինելը
 2. բոլոր երեք նամակների վերջին փակման խոսքում հոգնակի «դուք»-ը
 3. Պողոսը պաշտպանում է իր կոչումը (տես 1 Տիմ. 2:7)
 4. Պողոսը գրում է Տիմոթեոսին այն մասին, ինչ նա արդեն գիտեր Պողոսի հետ լինելու ժամանակից (տես 1 Տիմ. 3:15)

ԱՌԻԹԸ / ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Հիմնական նպատակն էր պայքարել առաջացող հերետիկոսությունների դեմ (տես 1 Տիմ. 1: 3-7): Հատուկ հերետիկոսություն կարող էր լինել հրեական և գնոստիկ միտումների համադրությունը (շատ նման Եփեսացիս և Կողոսացիս նամակների կեղծ ուսուցիչներին): Հնարավոր է կային երկու տարբեր խմբեր:
- Բ. Հին Կտակարանը տալիս է կոնկրետ ուղեցույցներ հավատքի համայնքի կազմակերպման համար: Նոր Կտակարանը չի պարունակում կոնկրետ պատվերներ եկեղեցու կազմակերպման կամ քաղաքականության վերաբերյալ: Հովվական նամակները (1 Տիմոթեոս, 2 Տիմոթեոս և Տիտոս) այնքան մոտ են, ինչ վերաբերում է Նոր Կտակարանի ուղեցույցներին:
- Գ. 1 Տիմոթեոսը գրվել է
1. խնդրելու Տիմոթեոսին մնալ Եփեսոսում (տես 1 Տիմ. 1:3)
 2. լուծելու կեղծ ուսուցիչների հարցը (տես 1 Տիմ. 1: 19-20; 4: 1-5; 6: 4-5,20-21)

3. օգնելու կարգել առաջնորդներ (տես 1 Տիմ. 3)
- Դ. Տիտոսը ուներ նման առաջադրանք Կրետեում հերետիկոսության դեմ գործելու և կազմակերպչական գործերով զբաղվելու համար (Տիտոս 1: 5)
- Ե. 2 Տիմոթեոսում Պողոսը բանտում էր՝ ազատ արձակվելու քիչ հույսով (տես 2 Տիմ. 4:6-8, 16-18)
- Զ. Կա «առողջ ուսմունքի» հզոր իմաստ (այսինքն, առողջ վարդապետություն), որը օղակում է այս նամակները (տես 1 Տիմ. 1:10; 4: 6; 6: 3; 2 Տիմ. 1:13; 4:3; Տիտոս 1: 9; 2: 1) կամ «հավատքի մեջ առողջ լինել» (Տիտոս 1:13; 2:2): Աստված այս «առողջ ուսմունքը» վստահել էր Պողոսին (տես 1Տիմ.1:11); Պողոսը վստահեց այն Տիմոթեոսին (տես 1 Տիմ. 6:20) իսկ Տիմոթեոսն էլ այն հավատարիմ մարդկանց հանձնեց (տես 2 Տիմ. 2: 2):

ԿԵՂԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

- Ա. Դժվար է քննարկել կեղծ ուսուցիչների մասին՝ առաջին դարի կոնկրետ տեղեկատվության բացակայության պատճառով: Պողոսը գրում է նրանց, ովքեր ճանաչում են այդ կեղծ ուսուցիչներին: Ուստի, նա լիովին չի քննարկում նրանց աստվածաբանությունը, այլ սովորաբար դատապարտում է նրանց ապրելակերպը և դրդապատճառները (ինչպես և Հուդան):
- Բ. Հիմնական մեկնաբանող հարցը վերաբերում է, թե արդյոք նրանք
 1. հրեա էին
 2. հույն
 3. համադրություն
 Կեղծ ուսուցիչները կարծես հրեա և գնոստիկ տարրերի խառնուրդ էին: Բայց ինչպե՞ս են միաձուլվում բոլորովին տարբեր այդ կրոնական շարժումները:
 - ա. Հուդաիզմը միշտ ներառել է որոշ դուալիստական տարրեր (մ.թ. Dead Sea Scrolls)
 - բ. Երկրորդ դարի գնոստիցիզմը զարգացրեց այս ընդհանուր արևելյան փիլիսոփայական / աստվածաբանական թեմաները
 - գ. Սփյուռքի հուդայականությունը շատ ավելի ընտրողական էր, քան նախկինում պատկերված ժամանակակից կրթությունը
 - դ. Կողոսացիս նամակում առաջին դարի նախադեպ կա հրեա-գոստիկ հերետիկոսության համար
- Գ. Կեղծ ուսուցիչների որոշ տարրերը
 1. Հրեական ասպեկտները
 - ա. կեղծ ուսուցիչները
 - 1) Օրենքի ուսուցիչները (տես 1 Տիմ. 1:7)
 - 2) թլպատության ձեսը (Տիտոս 1:10)
 - բ. կեղծ ուսուցիչների նախազգուշացումը հրեա առասպելների մասին (տես 1 Տիմ. 3: 9; Տիտոս 1:14)
 - գ. կեղծ ուսուցիչները, որոնք մտահոգված էին սննդակարգով (տես 1 Տիմ. 4:1-5)

- դ. կեղծ ուսուցիչները, որոնք մտահոգված էին ծագումնաբանության մասին (տես 1 Տիմ. 1: 4; 4:7; 2 Տիմ. 4:4; Տիտոս 1:14-15; 3: 9)
- 2. Գնոստիցիզմի ասպեկտները (Տես Հատուկ Թեմա Տիտոս 1)
 - ա. արգելում և ազատում ասկետիզմից
 - 1) արգելում էին ամուսնությունը (տես 1 Տիմ. 2:15; 4: 3)
 - 2) ազատում էին որոշակի կերակուրներից (տես 1 Տիմ. 4:4)
 - բ. սեռական շահագործում (տես 1 Տիմ. 4: 3; 2 Տիմ. 3:6-7; Տիտոս 1:11-15)
 - գ. շեշտը դնելով գիտելիքի վրա (տես 1Տիմ. 4: 1-3; 6:20)

ԿԱՆՈՆԸ

- Ա. Պողոսի նամակները հավաքվել էր մեկ հատորի մեջ, որը կոչվում էր «Առաքյալը», այնուհետև տարածվել բոլոր եկեղեցիների մեջ: Պողոսի նամակների միակ հունարեն ձեռագիրը, որտեղ չկա 1 և 2 Տիմոթեոս և Տիտոս նամակները (նաև 2 Թեսաղոնիկեցիսը և Փիլիմոնը) 200թ. պապիրուսի ձեռագիր է, որը կոչվում է P⁴⁶ (Chester Beatty papyri): Նույնիսկ սա ենթադրություն է, քանի որ ձեռագրում բացակայում է մի քանի եզրափակիչ պապիրուսի էջեր: Սյուս բոլոր հունարեն ձեռագրերը պարունակում էր այն, ինչ կոչվում էր «Հովվական նամակներ»:

- Բ. Հնագույն աղբյուրները, որոնք մեջբերում են, նշում են Հովվական նամակները
 - 1. վաղ եկեղեցու առաջնորդները
 - ա. Պսեղո-Բարնաբաս (70-130թթ.) մեջբերում է 2 Տիմ. և Տիտոս
 - բ. Հռոմի Կլեմենտը (95-97թթ.) մեջբերում է 1 Տիմ. և 2 Տիմ. և մեջբերում է Տիտոս 3: 1
 - գ. Պոլիկարպը (110-150թթ.) մեջբերում է 1 Տիմ., 2 Տիմ. և Տիտոս
 - դ. Հերմասը (115-140թթ.) մեջբերում է 1 Տիմ. և 2 Տիմ.
 - ե. Իրենեոս (130-202թթ.) մեջբերում է 1 Տիմ., 2 Տիմ. և Տիտոս
 - զ. Դիոգնիստոս (150թ.) մեջբերում է Տիտոս
 - է. Տերտուլիան (150-220թթ.) մեջբերում է 1 Տիմ., 2 Տիմ. և Տիտոս
 - ը. Օրիգեն (185-254թթ.) մեջբերում է 1 Տիմ., 2 Տիմ. և Տիտոս
 - 2. կանոնի գրքերի ցանկը, որը ներառում է Հովվական նամակները
 - ա. Մուրատորիան հատվածը (Հռոմից մոտ 200թ.)
 - բ. Բարոկոկկիո (206թ.)
 - գ. Առաքելական ցանկը (300թ.)
 - դ. Չելենհեմի ցանկը (360թ.)
 - ե. Աթանասիի նամակը (367թ.)
 - 3. վաղ տարբերակները, որոնք պարունակում են Հովվական նամակները
 - ա. հին լատիներեն (150-170թթ.)
 - բ. հին սիրիական (200թ.)
 - 4. վաղ եկեղեցական ժողովները, որոնք հաստատեցին Հովվական նամակների ներշնչված լինելը
 - ա. Նիկիա (325-340թթ.)
 - բ. Հիպպո (393թ.)
 - գ. Կարթագեն (397 և 419թթ.)

- Գ. Հռոմեական կայսրության վաղ քրիստոնեական համայնքների միջև փոխհամաձայնեցման գործընթացը զարգացրեց կանոնը: Այս համաձայնությունը, անշուշտ, տուժեց ներքին և արտաքին սոցիալական ճնշումներից: Կանոնի մեջ ընդգրկվելու հիմնական պահանջները կարծես թե եղել են
1. հարաբերություն Առաքյալի հետ
 2. պատգամ, որը համապատասխանում է այլ առաքյալների գրվածքներին
 3. այդ գրվածքների հետ հանդիպողների փոխված կյանքը
 4. այս վաղ եկեղեցիների մեջ ընդունված գրվածքների ցանկերում աճող համաձայնությունը
- Դ. Կանոն պետք է զարգանար, քանի որ
1. հետաձգվում էր Երկրորդ Գալուստը
 2. եկեղեցիների և Առաքյալների միջև աշխարհագրական հեռավորությունը
 3. Առաքյալների մահը
 4. կեղծ ուսուցիչների վաղ առաջացումը
 - ա. Հուդաիզմը
 - բ. Հունական փիլիսոփայությունը
 - գ. հրեական և գնոստիկ տարրերի խառնուրդ (Կողոսացիս)
 - դ. այլ հունա-հռոմեական առեղծվածային կրոնները (օրինակ, Միթրա)
- Դա տեղի ունեցավ, քանի որ ավետարանը տարածվեց տարբեր մշակույթների մեջ:
- Ե. Կանոնականության հարցը պատմականորեն կապված է հեղինակության հետ: Վաղ եկեղեցին ընդունում էր Հովվական նամակները որպես Պողոսի գրվածքներ: Կանոնականության մասին իմ սեփական ենթադրությունները ներառում են Հոգու ներգրավումը ոչ միայն Սուրբ Գրքում, այլ նաև նրանց հավաքման և պահպանման մեջ: Պողոսի հեղինակության հարցը (որը ենթադրում եմ) չի ազդում ներշնչման և կանոնականության վրա:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ կարդացեք Աստվածաշնչան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

1 ՏԻՄՈԹԵՈՍ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույն	Բարև	Ողջույն	Ներածություն	Դիմում
1:1-2	1:1 1:2ա 1:2բ	1:1 1:2ա 1:2բ	1:1 1:2ա 1:2բ	1:1-2
Զգուշացում կեղծ վարդապետության դեմ	Ոչ մի պաշտպանություն	Ճշմարտության պաշտպանությունը	Զգուշացում կեղծ ուսմունքի դեմ	Ճնշել կեղծ ուսուցիչներին
1:3-7	1:3-11	1:3-7	1:3-7	1:3-7
1:8-11		1:8-11	1:8-11	1:8-11
Շնորհակալություն ողորմության համար	Փառք Աստծուն Իր Շնորհքի համար		Շնորհակալություն Աստծո ողորմության համար	Պողոսը իր իսկ կոչումի մասին
1:12-17	1:12-17 Բարի պատերազմը պատերազմել	1:12-17	1:12-17	1:12-17 Տիմոթեոսի պատասխանատվությունը
1:18-20	1:18-20	1:18-20	1:18-20	1:18-20

*Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է պարբերությունները: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Այս թեման յուրաքանչյուր թարգմանված տարբերակում ձևավորվում է իր իսկ ձևով: Կարդալով տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխի ժամանակ դուք նախ պետք է կարդաք Աստվածաշունչը և փորձեք որոշել թեմաները (պարբերությունները): Հետո ձեր հասկացողությունը համեմատեք ժամանակակից թարգմանությունների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանն ու շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված – ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ խեղաթյուրել նրա պատգամը/ ուղերձը: Աստվածաշնչի ընթերցողներն պարտավոր են կիրառել ներշնչված ճշմարտությունը ժամանակակից իրավիճակի և իրենց կյանքերի մեջ:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հասկանումները ամբողջությամբ ներկայացված են հետևյալ փաստաթղթերում. [Հունարեն Քերականական Կառուցվածքի Համառոտ Սահմանումները](#), [Տեքստային Քննադատություն](#) և [Բառարան](#):

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 1:1
¹Պողոս Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր Փրկիչ Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի՝ մեր յոյսին հրամանովր.

1: 1 «Պողոս» Պողոսի օրերում շատ հրեաներ երկու անուն ունեին՝ մեկը հրեական, մյուսը հռոմեական (տես Գործք 13: 9): Պողոսի հրեական անունը Սավուղ էր: Նա, ինչպես Իսրայելի հնագույն թագավորը, Բենիամինի ցեղից էր (կարդա Հռ. 11:1; Փիլ. 3: 5): Նրա հռոմեական անունը հունարեն ձևով, Պողոս (Պատուլոս), նշանակում է «փոքր»: Սա վերաբերում է

1. նրա ֆիզիկական չափը, որը հիշատակվել է երկրորդ դարի անկանոն գրքում, *Պողոսի Գործեր*, Թեսաղոնիկեի մասին գլխում կոչվում է «Պողոսը և Թեկլա»
2. նրա անձնական զգացողությունը՝ սուրբերից ամենափոքրը, քանի որ նա սկզբում հալածում էր Եկեղեցին (տես 1 Կոր. 15: 9; Եփ. 3: 8; 1 Տիմ. 1:15)
3. պարզապես ծնողների կողմից ծննդյան պահին տրված անունը

Տարբերակ # 3 թվում է լավագույնը:

- **«առաքեալ»** Այս արմատը «ուղարկել» երկու հունարեն հասարակ ԲԱՅԵՐԻՑ մեկն է: Այս տերմինն ունի մի քանի աստվածաբանական օգտագործում:
 1. Ռաբբիններն այն օգտագործել են որպես մեկ ուրիշի փոխարեն կանչված և ուղարկված պաշտոնական ներկայացուցիչ, մեր լեզվով ասած՝ «դեսպան» (տես 2 Կոր. 5:20):
 2. Ավետարանները հաճախ օգտագործում են այս տերմինի ԲԱՅԱՁԵՎԸ՝ Հայրն ուղարկեց Հիսուսին: Հովհաննեսի Ավետարանում տերմինն ունի Մեսիական երանգ (տես Հովհ. 4:34; 5: 24,30,36,37,38; 6: 29,38,39,40,57; 7:29; 8:42; 10: 36; 11:42; 17: 3,8,18,21,23,25; 20:21):
 3. Այն օգտագործվում է, երբ Հիսուսն ուղարկում է հավատացյալներին (տես Հովհ. 17:18; 20:21):
 4. Այն Նոր Կտակարանում հատուկ առաջնորդության պարզ էր:
 - ա. տասներկու աշակերտների ներքին շրջանակը (տես Գործք 1: 21-22)

բ. Առաքյալների օգնականների և գործընկերների հատուկ խումբ

- (1) Բառնաբաս (տես Գործք 14: 4, 14)
- (2) Անդրոնիկոս և Յունիա (KJV, Junia, տես Հռ. 16: 7)
- (3) Ապոդոս (տես 1 Կոր. 4: 6-9)
- (4) Տիրոջ եղբայր Հակոբոսը (տես Գաղ. 1:19)
- (5) Սիդուանոս և Տիմոթեոս (տես 1 Թեա. 1: 1)
- (6) հավանաբար Տիտոս (տես 2 Կոր. 8: 23)
- (7) հնարավոր է Եպափրոդիտոս (տես Փիլ. 2:25)

գ. Եկեղեցում շարունակական պարզև (տես Եփես 4:11)

5. Պողոսը նամակների մեծ մասում այս տիտղոսն օգտագործում է իր համար, որպես Աստծո կողմից տրված իշխանություն որպես Քրիստոսի ներկայացուցիչ (տես 1 Կոր. 1: 1; 2 Կոր. 1: 1; Եփ. 1: 1; 2 Տիմ. 1: 1): Նույնիսկ 1 Տիմոթեոսի նման անձնական նամակում այս իշխանությունը կարևոր է.

ա. նրա իշխանությունը տվեց իշխանություն Տիմոթեոսին

բ. նա պայքարում է կեղծ ուսուցիչների դեմ

գ. նրա նամակը ակնհայտորեն կարդացվում էր ամբողջ եկեղեցում

▪ **«Յիսուս Քրիստոսի»** Այս տերմինները «Տեր Հիսուս Քրիստոս» լիարժեք տիտղոսի մասն են կազմում: Այս երեք տիտղոսներն ունեն անձնական նշանակություն:

1. «Քրիստոս» եբրայերեն *Մեսիայի* (Օծյալը) հունարեն թարգմանությունն է: Այն հաստատում է Հիսուսի հինկտակարանյան կարգավիճակը, երբ Աստծո խոստացավ ուղարկել մեկին, ով կհաստատեր արդարության նոր դարաշրջանը:

2. «Հիսուս» անունը տրվեց երեխային Բեթլեհեմում հրեշտակի կողմից (տես Մատթ. 1:21): Այն բաղկացած է երկու եբրայերեն գոյականներից «ՅԱՀՎԵ», աստվածության ուխտի անունը և «փրկություն» (տես Ելից 3:14): Այն նույն եբրայերեն անունն է, ինչ Հեսուն: Երբ մենակ է օգտագործվում, հաճախ նույնացվում է մարդու հետ Մարիամի որդին՝ Հիսուս Նազովրեցին (օրինակ, Մատթ. 1:16, 25; 2: 1; 3: 13,15,16; Գործք 13: 23,33; Հռ. 8: 11; 1 Կոր. 11: 23; 12:3; Եփ. 4:21; Փիլ. 2:10; 1 Թեա. 1:10; 4:14):

3. «Տեր» (օգտագործվում է 1 Տիմ. 1: 1, KJV կամ 1 Տիմ. 1:12) եբրայերեն *adon* տերմինի թարգմանությունն է, որը նշանակում էր «սեփականատեր, ամուսին, վարպետ կամ տեր»: Հրեաները վախենում էին արտասանել ՅԱՀՎԵ սուրբ անունը, որ չլինի թե զուր տեղը ասեն և զանց անեն Տասը պատվիրաններից մեկը: Երբ նրանք կարդում էին Սուրբ Գրքերը, նրանք ՅԱՀՎԵ փոխարինում էին *Adon*-ի հետ: Սա է պատճառը, որ անգլերեն թարգմանությունները Հին Կտակարանի ՅԱՀՎԵ - ի համար օգտագործում են ՏԵՐ բառը բոլորը մեծատառերով: Այս տիտղոսը փոխելով (հունարեն *kurios*) Հիսուսի, Նոր Կտակարանի հեղինակները պնդում են Նրա աստվածությունն ու հավասարությունը Հոր հետ (այս նույն բանը քերականորեն կատարվում է 1 Տիմ. 1:2՝ մեկ ՆԱԽԴԻՐ, որը վերաբերում է Հայր Աստծուն և Հիսուս Որդուն, տես 1 Թեա. 1: 1; 2 Թեա. 1: 1,2):

▪ **«Աստուծոյ հրամանովը»** Սա Պողոսի Առաքյալ լինելու իշխանությունը հաստատելու մեկ այլ գրական միջոց է: Պողոսի ծառայությունը «Աստծո կամքն էր» (տես 2 Տիմ. 1:1) և «Աստծո հրամանը» (տես Տիտոս 1: 3): Սա, հավանաբար, վերաբերում է Պողոսի կանչին Դամասկոսի ճանապարհին և Անանիայի միջոցով հայտնված տեղեկատվությանը (տես Գործք 9: 1-22; 22: 3-16; 26: 9-18): Պողոսը կամավոր չէր:

▪ **«մեր Փրկիչ Աստուծոյ»** Սա հինկտակարանյան տիտղոս է ՅԱՀՎԵ-ի համար, որպէս Իսրայելի համար հոգ տանող և փրկող (կարդա Ես. 19:20; 43: 3,11; 45: 15,21; 49:26; 60:16; 63:8), հատկապէս եկող չարչարվող ծառայի միջոցով (տես 52: 13- 53: 12): Այս տիտղոսն օգտագործվում է Տիտոս 1: 3; 2:10 և 3:4-ում Հայր Աստծու համար, իսկ Տիտոս 1: 4; 2:13 և 3: 6-ում Աստծո Որդու՝ Հիսուսի համար: Սա ևս մեկ աստվածաբանական հղում է Հորը և Որդուն:

Սա ՅԱՀՎԵ-ի Նոր Կտակարանի անվանումներից մեկն էր, որն օգտագործվում էր Կայսրի համար: Պողոսի օրերի Կայսրերը համարվում էին «Տեր», «Փրկիչ», նույնիսկ «աստվածային»: Քրիստոնյաներն այս տիտղոսները առանձնահատուկ պահպանում էին Հիսուսի համար և դրա պատճառով նրանք հռոմեական իշխանության և հասարակության կողմից դավաճան էին համարվում և հալածվում և մահանում հազարավորներով առաջին և երկրորդ դարերում: Տեսէք ամբողջական ծանուցումը 2 Տիմ. 1:10.

▪ **«Քրիստոսը»** տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԵՄԻԱ](#)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԵՄԻԱ (Դան.9:26-ից)

Այս տերմինը թարգմանելու դժվարությունը «Մեսիա» կամ «օծյալ» (BDB 603, KB 645) տերմինի հետ կապված տարբեր օգտագործումների պատճառն է: Տերմինը օգտագործվել է անձի վրա հատուկ յուղ լցնելու համար, որը ցույց է տալիս Աստծո կանչը և սպառազինումը հանձնարարված առաջնորդության առաջադրանքի համար:

1. օգտագործվում էր հրեա թագավորների համար (օր. I Թագ. 2:10; 12: 3; 24: 6,10; 2 Թագ. 19:21; 23:1; Սաղ. 89:51; 132: 10,17; Ողբ 4:20; Ամբ. 3:13; Դան. 9:25 «Օծյալ Իշխան»)
2. օգտագործվում էր հրեա քահանաների համար (օր. «օծյալ քահանաներ», Ելից 29:7; օր. Ղև. 4: 3,5,16; 6:15; 7:36; 8:12; հնարավոր է Սաղ. 84: 9-10; և 133: 2)
3. օգտագործվում էր Նախահայրերի և մարգարեների համար (տես Ծննդ. 26: 7; 1 Մնաց. 16:22; Սաղ. 105:15, որը վերաբերվում է ուխտի մարդկանց հավաքականորեն, հավանաբար Ամբ. 3:13)
4. օգտագործվում էր մարգարեների համար (տես 3 Թագ. 19:16; հավանաբար 1 Մնաց. 29:22)
5. օգտագործվում էր Կյուրոսի համար (տես Ես. 45: 1)
6. # 1 և # 2 համակցված են Սաղմոս 110 և Զաքարիայի 4
7. օգտագործվում էր Աստծո հատուկ գալստյան համար, Դավիթական թագավորը բերելու է արդարութեան նոր դարաշրջան
 - ա. Հուդայի ցեղից (տես Ծննդ. 49:10)
 - բ. Հեսեի տնից (հմմտ. 2 Թագ. 7)
 - գ. համընդհանուր թագավորում (տես Սաղ. 2; Ես. 9: 6; 11: 1-5; Միք. 5: 1-4)
 - դ. ծառայություն կարիքավորներին (տես Ես. 61: 1-3)

Ես անձամբ հակված եմ «օծյալը» նույնականացնել Հիսուս Նազովրեցու հետ(տես Հովհ. 1:41, 4:25), քանի որ

1. հավիտենական Թագավորության ներկայացնելը Դանիել 2-րդ գլխում չորրորդ կայսրության ընթացքում
2. «մարդու որդու» ներկայացնելը Դանիել 7:13-ում, որին տրվում է հավիտենական թագավորություն
3. փրկության մասին մտքերը Դանիել 9:24-ում, որը մատնանշում է ընկած, մեղավոր աշխարհի պատմության գագաթնակետը

4. Հիսուսը մեջբերում է Դանիելի գրքից Նոր Կտակարանում (տես Մատթ. 24:15; Մարկ. 13:14)

Պետք է ընդունել, որ սա հազվագյուտ տիտղոս է Հին Կտակարանում, հնարավոր է, միայն Դան. 9:25): Պետք է նաև համաձայնել, որ Հիսուսը չի համապատասխանում Մեսիայի ընդհանուր նկարագրությանը

1. ոչ մի առաջնորդ Իսրայելում
2. ոչ պաշտոնապես օծված քահանայի կողմից
3. ոչ միայն Իսրայելի փրկիչը
4. ոչ միայն «մարդու որդին», այլև ցնցող «Աստծո Որդին»

- «մեր յոյսին» [տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՅՍ](#) Տիտոս 1: 2

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 1:2

²Տիմոթեոս՝ սիրելի որդուս՝ հաւատքով, շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն լինի Աստուած մեր Հօրիցը եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը:

1: 2 «Տիմոթեոս» Հովվական նամակները հետևում են տիպիկ հունական նամակագրության ձևին (1) ումից; (2) ում, և (3) աղոթք / ցանկություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՄՈԹԵՈՍ

- Ա. Նրա անունը նշանակում է «մեկը, ով պատվում է Աստծուն»:
- Բ. Նա հրեա մոր և հույն հոր զավակ էր և ապրում էր Լյուստրիայում (տես Գործք 16: 1): Օրիգենի Հռ. 16:21 մեկնաբանության լատիներեն թարգմանությունը ասում է, որ Տիմոթեոսը Դերբեի քաղաքացի էր: Սա հնարավոր է Գործք 20:4-ից:
- Գ. Հրեական հավատքի (կամ քրիստոնեական հավատքի) մասին սովորեցրել են մայրը և տատիկը (տես 2 Տիմ. 1: 5; 3: 14-15):
- Դ. Նա, ըստ երևույթին, Քրիստոսին էր հավատացել և ընդունել Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես Գործք 14: 6-7):
- Ե. Նրան խնդրեցին միանալ Պողոսի և Շիղայի միսիոներական թիմին երկրորդ ճանապարհորդության ժամանակ (տես Գործք 16: 1-5), ըստ երևույթին, Հովհաննես Մարկոսի պարտականությունները վերցնելու համար: Նա հաստատվել է մարգարեությամբ (տես 1 Տիմ. 1:18; 4:14):
- Զ. Նա թլպատվեց Պողոսի կողմից, որպեսզի աշխատի թե՛ հրեաների և թե՛ հույների համար (տես Գործք 16:3):
- Է. Պողոսի նվիրյալ ուղեկիցն էր և դարձավ իր Առաքելական պատվիրակը: Նա անունով ավելի շատ է հիշատակվում, քան Պողոսի օգնականներից որևէ մեկը (17 անգամ 10 նամակներում, այսինքն, Հռ.16:21; 1 Կոր. 4:17; 16:10; Փիլ.1: 1; 2: 19,22; Կող.1: 5; 1 Տիմ. 1: 2; 2 Տիմ. 1: 2; Տիտոս 1: 4):
- Ը. Պողոսը սիրով նրան անվանում է «իմ իսկական զավակը հավատքի մեջ» (տես 1 Տիմ. «իմ սիրելի որդին» (տես 2 Տիմ. «իմ իսկական զավակը ընդհանուր հավատքի մեջ» (տես Տիտոս 1: 4): Նաև «իմ սիրելի և հավատարիմ զավակը Տիրոջմով» 1 Կոր. 4:17.
- Թ. Նա, ըստ երևույթին, Հռոմում էր, երբ Պողոսը բանտից ազատ էր արձակվել և ուղեկցեց

	նրան չորրորդ միախոնեբական ճամփորդության ժամանակ (տես Կող.1:1; Փիլիմոն 1:1):
Ժ.	Նա կոչվում է «առաքյալ» 1 Թես. 2: 6, եկեղեցիներում շարունակական հոգևոր պարզկի իմաստով (տես Եփ. 4:11):
Ի.	Երեք Հովվական նամակներից երկուսը հասցեագրված են իրեն:
Լ.	Վերջին անգամ հիշատակվում է Եբր. 13:23 (բայց ժամանակագրականորեն 2 Տիմ. 1: 2):

- **«սիրելի որդու»** «Իմ»-ը հունարեն տեքստում չկա: «Երեխա/որդի» *teknon*, որը նշանակում է օրինական երեխա: Պողոսն իրեն համարում էր Տիմոթեոսի հոգևոր հայր (տես 2 Տիմ. 1: 2; 2: 1): Նա նման արտահայտություններով նաև դիմում է Տիտոսին (կարդա Տիտոս 1: 4) և Ոնեսիմոսին (տես Փիլ. 1:10):

- **«շնորհք, ողորմություն և խաղաղություն»** Դիտեք Պողոսի բացման ողջույնի ընդհանրությունը և տարբերությունները.

1. «Շնորհք լինի ձեզ և խաղաղություն Աստուածանից՝ մեր Հօրիցը և Տեր Յիսուս Քրիստոսիցը» (տես Հռ. 1:7; 1 Կոր. 1: 3; 2 Կոր. 1: 2; Գաղ. 1:3; Եփ.1: 2; Փիլ. 1:2; 1 Թես. 1: 2; Փիլիմոն 1:3)
2. «Շնորհք լինի ձեզ հետ՝ և խաղաղություն Աստուած մեր Հօրիցը՝ և Տեր Յիսուս Քրիստոսիցը» (տես Կող. 1: 2)
3. «Շնորհք լինի ձեզ հետ և խաղաղություն մեր Հայր Աստուածանից և Տեր Յիսուս Քրիստոսիցը » (տես 1 Թես. 1: 1)
4. «շնորհք, ողորմություն և խաղաղություն լինի Աստուած մեր Հօրիցը և մեր Տեր Յիսուս Քրիստոսիցը» (տես 1 Տիմ. 1: 2; 2 Տիմ. 1: 2)
5. «շնորհք, ողորմություն և խաղաղություն լինի Աստուած Հօրիցը և Տեր Յիսուս Քրիստոսիցը՝ մեր Փրկչիցը» (տես Տիտոս 1: 4)

Ուշադրություն դարձրեք, որ կա բազմազանություն, բայց որոշ տարբեր չափանիշ են:

1. «Շնորհք»-ով է սկսում բոլոր բարեմաղթանքները: Այն քրիստոնեացված ողջույնի ձև է, որը կենտրոնանում է Աստծո բնույթի վրա:
2. «Խաղաղությունը» Աստծո հուսալիությանը վստահող մարդկանց վստահության արդյունքն է:
3. «Ողորմություն» Աստծո բնավորությունը նկարագրող մեկ այլ միջոց է և հատուկ է Պողոսի գրվածքներին, որն օգտագործվում է միայն 1 և 2 Տիմոթեոսում: Այս տերմինը օգտագործվել է Սեպտուագինդում՝ *hesed* եբրայերեն տերմինը թարգմանելու համար (այսինքն, ուխտի հավատարմություն): Աստված ողորմած է և վստահելի:
4. Յուրաքանչյուր ողջույնի մեջ նշվում են Հայրը և Որդին (1 Թես-ում դրանք նշված են նախորդ արտահայտության մեջ): Նրանք միշտ էլ քերականորեն կապված են: Սա մի միջոց էր, որով Նոր Կտակարանի հեղինակները պնդել են Հիսուս Նազովրեցու լիակատար աստվածությունը: Սա նաև վերաբերում է Հին Կտակարանի ՅԱՀՎԵԻՆ, որով դիմել են Հիսուսին (այսինքն, Տեր և Փրկիչ):

- **«Հայր»** Աստվածաշունչն օգտագործում է մարդկային դասակարգեր (մարդաբանություններ), աստվածությունը բնութագրելու համար, որպես ժամանակավոր օգնություն մեղավոր մարդկությանը: Ամենատարածված աստվածաշնչյան փոխաբերությունները վերաբերվում են ընտանիքին.

1. Աստված որպես Հայր, ինչպես ծնող (մայր և հայր), ինչպես ազգական (*go'el*)
2. Հիսուսը որպես Որդի, որպես եղբայր, որպես ամուսին
3. հավատացյալները որպես երեխա, որպես որդեգրած երեխա, որպես հարսնացու

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ: ՀԱՅՐ

Հին Կտակարանը ներկայացնում է Աստված որպես Հայր մտերմիկ ընտանեկան փոխաբերությունը (տես Հատուկ Թեմա: Հայր Աստված)

1. Իսրայել ազգը հաճախ նկարագրվում է որպես ՅԱՀՎԵԻ «որդի» (տես Ովս. 11: 1, Մադ. 3: 17)
2. նույնիսկ ավելի վաղ 2 Օրինաց Գրքում օգտագործվում է Աստծո նմանությունը որպես հայր (1:31)
3. 2 Օրինաց 32-ում Իսրայելը կոչվում է «իր զավակները», իսկ Աստված կոչվում է «ձեր հայրը»
4. այս նմանությունը արտահայտվում է Մադ. 103: 13 և զարգացվում Մադ. 68: 5 (որբերի հայրը)
5. այն ընդունված էր մարգարեություններում (կարդա Ես. 1: 2; 63: 8; Իսրայելը որպես որդի, Աստված որպես Հայր, 63:16; 64: 8; Երեմ. 3: 4,19; 31: 9):

Հիսուսը խոսում էր արամերեն, ինչը նշանակում է, որ շատ տեղերում, որտեղ հայտնվում է «Հայր» բառը, հունարենով *Pater*, այն կարող է արտացոլել արամերեն *Abba* (տես Մարկ. 14:36): Այս ընտանեկան տերմինը «Daddy» կամ «Papa» անդրադարձնում է Հոր մտերմությունը Հիսուսի հետ: Սա հայտնելով Իր հետևորդներին, նա նաև քաջալերում է Հոր հետ մեր անձնական մտերմությունը: «Հայր» տերմինը օգտագործվել է միայն Հին Կտակարանում ՅԱՀՎԵԻ համար, սակայն Հիսուսը հաճախ է օգտագործում և խորությամբ: Դա Քրիստոսի միջոցով Աստծո հետ հավատացյալների նոր փոխհարաբերությունների հիմնական վկայությունն է (տես Մատթ. 6: 9):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 1:3-7

³Ինչպես որ աղաչեցի քեզ, որ Եփեսոսումը մնաս Մակեդոնիա գնալիս, է որ պատուիրես ոմանց որ օտար ուսմունք չ'սովորեցնեն. ⁴Եւ մտիկ չ'տան առասպելների եւ ազգահամարների, որ վերջ չ'ունին, որ աւելի վիճարանութիւններ են գրգռում, քան թէ Աստուծոյ շինութիւնը հաւատքով: ⁵Իսկ պատուիրանքի վախճանը սերն է սուրբ սրտից, եւ բարի խղճմտանքով, եւ անկեղծ հաւատքից. ⁶Որոնցից ոմանք խոտորելով ունայն խօսքերի ետեւից գնացին, ⁷Կամենում են օրէնքի վարդապետ լինել, եւ իրանք չեն իմանում ոչ այն որ խօսում են, եւ ոչ էլ այն բաները որ պնդում են:

1: 3 «Եփեսոս»

1. Դա Փոքր Ասիայի հռոմեական գավառի ամենամեծ քաղաքն էր: Այն մայրաքաղաքը չէր, թեև հռոմեական մարզպետն ապրում էր այստեղ: Դա առևտրային կենտրոն էր, քանի որ հիանալի բնական նավահանգիստ էր:
2. Դա ազատ քաղաք էր, որը թույլ էր տալիս ունենալ իր սեփական տեղական կառավարությունը և բազմաթիվ քաղաքական ազատություններ, այդ թվում, հռոմեական զինվորների կայազոր չկար:
3. Դա միակ քաղաքն էր, որտեղ թույլատրվեց անցկացնել տարեկան երկամյա ասիական օլիմպիական խաղերը:

4. Դա Արտեմիսի տաճարի տարածքն էր (Դիանա լատիներենով), որն իր օրերի աշխարհի յոթ հրաշքերից մեկն էր: Դա 425 -220-127 սյուներով, որոնցից 60-ը բարձր էին, որոնցից 86-ը ոսկով էին պատված (տես Pliny's *Hist. Nat.* 36: 95): Արտեմիսի պատկերը, կարծես, մետեոր էր, որը նման էր բազմաթիվ կրծքերով կնոջ: Սա նշանակում էր, որ քաղաքում կային բազմաթիվ տաճարի պոռնիկներ (տես Գործք 19): Դա շատ անբարո, բազմամշակութային քաղաք էր:
5. Պողոսն այս քաղաքում ավելի քան երեք տարի էր անցկացրել (տես Գործք 18: 1; 20:13): Նա այնտեղ մնաց ավելի երկար, քան ցանկացած այլ վայրում:
6. Ավանդույթը պնդում է, որ այն դարձավ Հովհաննես առաքյալի տունը Պաղեստինում Մարիամի մահից հետո:
7. Պողոսը Հռոմում հռոմեական ազատագրկման վայրից ազատվելուց հետո Տիմոթեոսի հետ պետք է, որ այստեղ մեկնած լիներ: Դա առաջին աշխարհագրական տեղեկությունն է Պողոսի չորրորդ միսիոներական ճանապարհորդության մասին: Ուշադրություն դարձրեք, որ նա տեղափոխվեց Մակեդոնիա:
8. Եուսեբիոսը (երրորդ դարի եկեղեցու պատմիչ) պատմում է, որ Տիմոթեոսը, ավելի ուշ, Եփեսոսում քարկոծվել է Դիանայի հետևորդների վիճաբանությունների պատճառով:

▪ **«Ինչպես որ»** Սա *hina* է (նպատակի պարագա), որը նշանակում է «որպեսզի» (1 Տիմ. 1:10,18,20; 2: 2; 3:15; 4:15; 5: 7,16, 20,21; 6: 1,19):

▪ **«որ պատուիրես»** Սա ռազմական տերմին է «խիստ պատվերներ տալ» (տես 1 Տիմ. 1: 5, 18; 4:11; 5: 7; 6: 13,17): Պողոսն առաջնորդում է Տիմոթեոսին, որպես առաքյալի լիազոր անձ:

▪ **«ումանց որ օտար ուսմունք չ'սովորեցնեն»** Սովորաբար Պողոսը, ինչպես բոլոր առաջին դարի գրողները, ընդգրկել են գոհության աղոթք, որը հունարեն նամակներում ակնկալվող ներածական կետ էր: Այնուամենայնիվ, Գաղատացիս և 1 Տիմոթեոսում իրավիճակը (այսինքն, հակառակվելով սուտ ուսուցիչներին) պահանջում էր շեղում նորմալ օրինակից: Այս կեղծ ուսուցիչների մասին շատ ժամանակակից գիտական շահարկումներ կան: Նրանք կարծես թե համատեղում են հրեական և հունական մտածելակերպը (Կողոսացիների կեղծ ուսուցիչների նման): Այս կոնտեքստում (1: 3-4) դրանք բնութագրվում են որպես

1. տարօրինակ վարդապետություններ
2. ուշադրություն առասպելներին
3. ուշադրություն անվերջ տոհմաբանությանը
4. ընդամենը շահարկումներ

Որոշ մեկնաբաններ դրանք կապում են գնոստիցիզմի օջախների կամ հրեշտակային ուղորտների հետ (*plērōma*), բարձր լավ բարի աստծո և փոքր աստվածների / հրեշտակների միջև, որոնցից ամենափոքրը ձևավորել է չար նյութը: Տես Հատուկ Թեմա: Գնոստիկները Տիտոս 1: 1:

Հրեական տարրն ակնհայտ է.

1. «Օրենքի ուսուցիչները» (1 Տիմ. 1:7-10)
2. «Հրեական առասպելները» (Տիտոս 1:14; 2 Տիմ. 4:4)
3. «Օրենքի վերաբերյալ վեճերը» (Տիտոս 3:9)
4. «Թլպատվածները» (Տիտոս 1:10)
5. Հնարավոր է Մեսիայի ծագումը Տիտոս 3: 9ա

Արևելահայերեն «օտար ուսմունք չ'սովորեցնեն»

Արևմտահայերեն «օտար ուսմունք չտրվեցնել»

NASB «այլ վարդապետություն չսովորեցնել»
NKJV «ուսուցանել ուրիշ վարդապետություն»
NRSV «կեղծ ուսմունք ուսուցանելը»
TEV «կեղծ վարդապետություն է սովորեցնում»
NJB «սխալ ուսմունք տարածել»

Սա *heteros* (մեկ այլ տեսակի) գումարած *didakalin* (ուսուցանված բան) բարդ տերմինի ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՆ է: *heteros* ԱԾԱԿԱՆԸ նաև օգտագործվում է նկարագրելու՝ անթույլատրելի ուսմունքը Գործք 17:21; 2 Կոր. 11:4; Գաղ. 1: 6-7: 1 Տիմոթեոս 6: 3-ը լավ զուգահեռ է:

Gordon Fee *The New International Biblical Commentary*, էջ xiv, իմ սիրած մեկնաբաններից մեկը, Գորդոն Ֆեյը պնդում է, որ այս համարը կարևոր է 1 Տիմոթեոսի նպատակը մեկնաբանելու համար: Նրա կարծիքով դա հիմնականում «եկեղեցական կարգապահության ձեռնարկ» չէ, այլ կեղծ ուսուցիչների / ուսմունքների հերքում (և ես համաձայն եմ):

1: 4 «մտիկ չ'տան առասպելների եւ ազգահամարների» Հրեական օրենքի (1 Տիմ. 1: 7-10 և Տիտոս 3: 9), թլպատության (Տիտոս 1:10) և հրեական առասպելների (Տիտոս 1:14 և 2 Տիմ. 4:4) հղումների շնորհիվ ակնհայտ է, որ այս ուսմունքներն իրենց բնույթով հրեական էին: Հնարավոր է, որ այն վերաբերում է Մեսիայի մտահայեցողական ծագմանը (Տիտոս 3:9 ա):

Իրենեոսն ու Տերտուլիանոսը կարծում էին, որ Պողոսը մարգարեաբար խոսում էր ավելի ուշ գնոստիկ օջախների կամ հրեշտակային մակարդակների մասին՝ սուրբ աստծո և ավելի քիչ աստծո միջև (կամ Էլոհիմ / հրեշտակ): Գնոստիցիզմը մտածողության մի համակարգ է, որը հայտնի է երկրորդ դարի կեսի գրվածքներից: Տես Հատուկ Թեմա: Գնոստիկներ Տիտոս 1:1: Այս գրվածքներից մենք իմանում ենք հրեշտակային մակարդակների նրանց լայնածավալ ցանկերը՝ բարձր բարի աստծո և ավելի փոքր հոգևոր էակների միջև: Այնուամենայնիվ, այս գնոստիկ ցանկը երբեք չի բնութագրվում ժամանակակից քրիստոնեական, հրեական կամ գոստական գրականության մեջ «առասպելներ» կամ «ձագումնաբանություն» տերմիններով:

Գնոստիցիզմի թեման մեծապես առաջ է քաշվել գնոստիկ տեքստերի հնագիտական հայտնագործությունների կողմից, ինչպիսիք են Nag Hammadi: Այս գրքերն այժմ հասանելի են անգլերեն լեզվով, *The Nag Hammadi Library*, James M. Robinson և Richard Smith:

Արևելահայերեն «որ ավելի վիճաբանություններ են գրգռում»
Արևմտահայերեն «որոնք ավելի վեճեր ալ կը պատճառեն»

NASB «առաջացնում է միայն շահարկումներ»
NKJV «որը վեճեր է առաջացնում»
NRSV «որը խթանում է շահարկումները»
TEV «որը միայն բերում է փաստարկներ »
NJB «միայն խթանում է կասկածները»

Հնարավոր է այնքան զբաղված լինել քրիստոնեության ակադեմիական ուսումնասիրության մեջ, որ մոռանում ենք, թե ինչու ենք ուսումնասիրում Աստծո խոսքը (Տիտոս 3: 8; Մատթ. 28: 19-20): Միայն այն պատճառով, որ տեքստը կարող է նշանակել այս կամ այն չի նշանակում, որ դա է նշանակում: Մտուզեք պատմական կարգավիճակը և ավելի մեծ կոնտեքստը:

Հենց սա է պատճառ, որ պիետիզմը զարգացավ Ռեֆորմացիայի ավանդույթից: Հոգին և սիրտը պետք է զորանան Աստծո Հոգով:

Արևելահայերեն «քան թե Աստուծոյ շինութիւնը»
Արևմտահայերեն «քան թե Աստուծոյ հաճելի շինութիւն»

NASB «ոչ թե Աստծո վարչակարգի առաջ»
NKJV «այլ ոչ թե աստվածայնորեն»
NRSV «այլ ոչ թե աստվածային ուսուցումը»
TEV «նրանք չեն ծառայում Աստծո ծրագրին»
NJB «Աստծո ծրագիրը խթանելու փոխարեն»

Սա «տնային տնտեսության տնտես, կառավարիչ» տերմինն է (*oikonomian*, որը գտնվում է MSS α , A, D², F, G), որն օգտագործվում է ավետարանի պատգամի հավատացյալների տնտեսության համար: Այն վերաբերվում է Աստծո շնորհքի ծրագրին՝ ողջ մարդկության փրկության համար Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով (տես Ծննդ. 3: 15; 2 Կոր. 5: 21; Եփ. 2:8-10; 2: 11-3: 13): Տես Հասուն կ թեմա: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ 1 Տիմ. 4:10.

NKJV «հորդոր, խրատ» (*oikodomēn*) հետևում է MS D * և հունարեն տեքստերում, որոնք օգտագործվում են Իրենեոսի կողմից իսկ լատիներեն տեքստը օգտագործվում է Theodore- ի կողմից: UBS⁴- ը «տնային տնտես, կառավարիչ» տալիս է «Ա» վարկանիշ (որոշակի):

NET Աստվածաշունչը տալիս է 1 Տիմ. 2: 3-6; 2 Տիմ. 1: 9-10 և Տիտոս 3: 4-7, որպես Աստծո հավիտենական փրկության ծրագրի աստվածաբանական տարրերը (Էջ 2176):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՐԱՏԵԼ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼ, ԶՈՐԱՑՆԵԼ

Այս *oikodomeō* տերմինը և դրա այլ ձևերը հաճախ օգտագործվում են Պողոսի կողմից: Բառացիորեն դա նշանակում է «տուն կառուցել» (տես Մաթ. 7:24), սակայն այն օգտագործվել է փոխաբերական իմաստով

1. Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին, 1 Կոր. 3: 9; Եփ. 2:21; 4:16
2. զորացնել
 - ա. տկար եղբայրներին, Հռ. 15: 1
 - բ. ընկերներին, Հռ. 15: 2
 - գ. միմյանց, Եփ. 4:29; 1 Թես. 5:11
 - դ. Սրբերին՝ ծառայության համար, Եփ. 4:11
3. մենք զորացնում ենք կամ խրատում
 - ա. սիրով, 1 Կոր. 8: 1; Եփ. 4:16
 - բ. սահմանափակելով անձնական ազատությունները, 1 Կոր. 10: 23-24
 - գ. խուսափելով շահարկումներից, ենթադրություններից 1 Տիմ. 1: 4
 - դ. սահմանափակելով պաշտամունքին մասնակցողների ելույթները (երգիչներ, ուսուցիչներ, մարգարեներ, լեզուներով խոսացողներ և թարգմանիչներ), 1 Կոր. 14: 3-4,12
4. ամեն բան պետք է շինության համար լինի
 - ա. Պողոսի իշխանությունը, 2 Կոր. 10:8; 12:19; 13:10
 - բ. ամփոփիչ մտքեր Հռ. 14:19 և 1 Կոր. 14:26

▪ **«հաւատքով»** Կա իրական տարբերություն «առասպելների», «ճագումնաբանությունների», «ենթադրությունների» և հավատքի միջև: Հավատքը հիմնված է ավետարանի պատմական ճշմարտության վրա, այլ ոչ թե տեսությունների: Հավատքը գալիս է Աստծո խոստումներից (Գաղ. 3:14,16,17,18,21,22,29), այլ ոչ թե մարդկանց փիլիսոփայական գերակայությունից (տես 1 Կոր. 1: 18-

31): Մեկը հիմնված է հայտնության վրա, մյուսը՝ մարդկային ենթադրությունների: Մեկը մեծարում է Աստծուն իսկ մյուսը մեծացնում է մարդ մտածողին:

Սա ոչ թե աստվածային կրթաթոշակների արժեզրկումն է, այլ Աստծո հայտնությունը տարբերակում է մարդկային պատճառներից, շահարկումներից եւ հայտնագործություններից: Հավատացյալները կանչված են սիրելու Աստծուն իրենց «մտքով» (տես 2 Օրին. 6:5-ի Հիսուսի մեջբերումը Մատթ. 22:36-37; Մարկ. 12: 28-30, Ղուկ. 10:27-ում) և այդ ճշմարտությունները փոխանցելու իրենց զավակներին (տես 2 Օրին. 6: 7,20-25):

1: 5 «սերը մաքուր սրտից» 1 Տիմ. 1: 5-ում հավատացյալներին մեղադրելու Պողոսի նպատակն ուներ երեք բաղադրիչներ:

1. սեր սուրբ սրտից
2. սեր բարի խղճմտանքով
3. սեր անկեղծ հավատքից

Եբրայերեն «սիրտը» օգտագործվել է ինտելեկտի, զգացմունքների և կամքի համար (տես 2 Օրին. 6: 5-6): Այսինքն ամբողջ անձը/մարդը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԻՐՏ (ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ)

Հունարեն *kardia* տերմինն օգտագործվում է Սեպտուագինդում և Նոր Կտակարանում, որը անդրադարձնում է եբրայերեն *leb* տերմինը (BDB 523, KB 513): Այն օգտագործվում է մի քանի ձևերով (տես Bauer, Arndt, Gingrich and Danker, *A Greek-English Lexicon*, 2nd ed. էջ 403-404)

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը, փոխաբերություն մարդու համար (տես Գործք 14:17; 2 Կոր. 3:2-3; Հակ. 5:5)
2. Հոգևոր (բարոյական) կյանքի կենտրոնը
 - ա. Աստված գիտի սիրտը (տես Ղուկ. 16:15; Հո. 8:27; 1 Կոր. 14:25; 1 Թեա. 2:4; Հայտ. 2:23)
 - բ. Օգտագործվում է մարդու հոգևոր կյանքի համար (տես Մաթ.15:18-19; 18:35; Հո. 6:17; 1 Տիմ. 1:5; 2 Տիմ. 2:22; 1 Պետ. 1:22)
3. Մտային կյանքի կենտրոնը (ինտելեկտ, բանականություն, տես Մաթ. 13:15; 24:48; Գործք 7:23; 16:14; 28:27; Հո. 1:21; 10:6; 16:18; 2 Կոր. 4:6; Եփ. 1:18; 4:18; Հակ. 1:26; 2 Պետ. 1:19; Հայտ. 18:7; սիրտը մտքի հոմանիշն է 2 Կոր. 3:14-15 և Փիլ. 4:7)
4. կամքի, ցանկության կենտրոնը (տես Գործք 5:4; 11:23; 1 Կոր. 4:5; 7:37; 2 Կոր. 9:7)
5. զգացմունքների, էմոցիաների կենտրոնը (տես Մաթ. 5:28; Գործք 2:26, 37; 7:54; 21:13; Հո. 1:24; 2 Կոր. 2:4; 7:3; Եփ. 6:22; Փիլ. 1:7)
6. Հոգու գործունեության միակ վայրը (տես Հո. 5:5; 2 Կոր. 1:22; Գաղ. 4:6, (Քրիստոսը մեր սրտերում, Եփ. 3:17)
7. Սիրտը փոխաբերական ձև է, որը վերաբերվում է ամբողջ անձին (տես Մաթ. 22:37, մեջբերված 2 Օր. 6:5): Մտքերը, շարժառիթներն ու գործողությունները վերագրվում են սրտին, որոնք ամբողջությամբ հայտնում են, թե ինչ տեսակի անհատ է նա: Հին Կտակարանը ունի տերմինների զարմանալի օգտագործում
 - ա. Ծննդ. 6:6; 8:21 «Աստված տրտմեց Իր սրտում», նաև տես Ովս. 11: 8-9
 - բ. 2 Օր. 4:29; 6:5, 10:12, «քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով»
 - գ. 2 Օր. 10:16; Եր. 9:26 «անթլպատ սիրտ» և Հո. 2:29
 - դ. Եզ. 18:31-32, «նոր սիրտ»
 - ե. Եզ. 36:26, «նոր սիրտ» հակառակը «քարե սիրտ» (տես Եզ. 11:19; Զաք. 7:12)

▪ **«բարի խղճատանք»** Հունարեն «խիղճ» տերմինի հինկտակարանյան կրկնորդը չկա, իսկ եբրայերեն «կուրծք» բառը նշանակում է ինքզինքը և նրա շարժառիթները ճանաչել: Սկզբում հունարեն տերմինը խիղճը կապում էր հինգ զգայարանների հետ: Այն օգտագործվել է ներքին զգայարանների համար (տես Հռ. 2: 15): Այս տերմինը Պողոսը երկու անգամ օգտագործում է Գործքում իր դատավարությունների ժամանակ (Գործք 23:1 և 24:16): Այն վերաբերվում է նրա զգացումին, որ ինքը իմանալով չի խախտել Աստծո հանդեպ սպասված պարտականությունները (տես 1 Կոր. 4: 4):

Խիղճը հավատացյալների դրդապատճառների և գործողությունների զարգացող հասկացությունն է՝ հիմնված 1) աստվածաշնչյան աշխարհայացքի, 2) բնակվող Սուրբ Հոգու, և 3) Աստծո խոսքի իմացության վրա: Դա հնարավոր է դառնում ավետարանի անձնական ընդունելության միջոցով:

Պողոսը այս տերմինը օգտագործում է երկու անգամ առաջին գլխում, մեկ անգամ Աստծո կամքի սեփական զարգացրած իմաստով (1 Տիմ. 1: 5) և մեկ անգամ կեղծ ուսուցիչների կամավոր մերժման հետ կապված (Տիտոս 1: 15), այդ թվում Հիմենոսը և Աղեքսանդրոսը (տես 1 Տիմ. 1:19): Այս կեղծ ուսուցիչներն ունեին դադված խղճատանք (տես 1 Տիմ. 4: 2):

▪ **«անկեղծ հավատք»** Պողոսն օգտագործում է այս ԱՕՄԿԱՆԸ երեք անգամ իր գրվածքներում, նկարագրելու համար (1) հավատքը (տես 1 Տիմ. 1: 5; 2 Տիմ. 1: 5) և (2) սերը (տես 2 Կոր. 6:6 և նաև 1 Պետ. 1:22): Այն ունի իսկական, իրական կամ անկեղծ արտահայտություն, որը հակասում է «կեղծվածին», որը նկարագրում է կեղծ ուսուցիչներին (տես 1 Տիմ. 1:19-20):

1: 6-7 Այս համարները բնորոշում են կեղծ ուսուցիչներին հրեական կատեգորիաներում

1. նրանք հեռացան բարոյական ուսմունքների նպատակից (տես 1 Տիմ. 1: 5)
2. նրանք մի կողմ քաշվեցին
 - ա. «անհեթեթ քննարկում» (NASB)
 - բ. «պարապ խոսակցություն» (NKJV)
 - գ. «անիմաստ գրույց» (NRSV)
 - դ. «դատարկ ենթադրություններ» (NJB)
3. նրանք ուզում էին Օրենքի ուսուցիչ լինել
4. նրանք չեն հասկանում Օրենքը
5. նրանք վստահորեն հաստատում են այն բաները, որոնք չեն հասկանում
6. 9-10-րդ համարները, կարծես, արտացոլում են Տասը պատվիրանները

Կեղծ ուսուցիչների ողբերգությունը կամ

1. նրանց հոգևոր կուրությունն է, որը հաճախ արտահայտվում է կեղծավորությամբ
2. նրանց հոժարակամ մերժումը, ոչ թե անտեղյակությունը
3. նրանք ուրիշներին առաջնորդում են սխալի մեջ և կործանում են

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 1:8-11

⁸Եւ գիտենք որ օրէնքը բարի է, եթէ մէկն օրինաւորապէս գործածէ նորան, ⁹Սա իմանալով, որ արդարին օրէնք չ'կայ, այլ անօրէններին եւ անհնազանդներին, ամբարիշտներին, եւ մեղաւորներին, անաւորքներին, եւ պիղծերին, հայրասպաններին, եւ մայրասպաններին, մարդասպաններին, ¹⁰Պռոնիկներին, արուագէտներին, մարդագողներին, սուտ ասողներին, սուտ երդում անողներին. եւ եթէ ուրիշ ինչ հակառակ է ողջամիտ վարդապետութեանը, ¹¹Երանելի Աստուծոյ փառաւոր ատետարանի համեմատ, որն ինձ հաւատացուեցաւ:

1: 8-11 Հունարենում սա մեկ երկար նախադասություն է: Այն հստակորեն բացահայտում է Մովսիսական օրենքի մեկ շարունակական նպատակը, հատկապես այն, ինչը վերաբերում է բարոյական կյանքին:

1: 8 «Եւ գիտենք որ օրենքը բարի է» ստորև Տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ ՄՈՎՍԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Այն բարի է և Աստուծոյ է (տես Հո. 7:12-16)

Ա. Դա Աստծո կողմից արդարանալու և ընդունվելու ճանապարհ չէ (դա կարող է նույնիսկ անեծք լինել, Գաղ. 3): Տես Հատուկ Թեմա: Մովսեսական Օրենքը և քրիստոնյան:

Բ. Այն նաև Աստծո կամքն է հավատացյալների համար, քանի որ դա Աստծո ինքնահայտնությունն է (Պողոսը հաճախ մեջբերում է Հին Կտակարանից՝ հանդիմանելու և / կամ խրախուսելու հավատացյալներին):

Գ. Հավատացյալները տեղեկացվում են Հին Կտակարանից (տես Հո. 4: 23-24; 15: 4; 1 Կոր 10:6, 11), բայց չեն փրկվում Հին Կտակարանով (տես Գործք 15; Հո. 4; Գաղ.3; Եբրայեցիս): Այն սրբացնում է, բայց ոչ արդարացնում:

Դ. Այն գործում է նոր ուխտի մեջ

1. ցույց տալ մարդու մեղավոր վիճակը (տես Գաղ. 3: 15-29)

2. ուղեցույց է փրկվածների համար հասարակության մեջ ապրելու համար

3. տեղեկացնել քրիստոնեական բարոյական որոշումների մասին

Օրենքի հետ կապված աստվածաբանական սպեկտորն է, անեծքից (տես Գաղ. 3: 10-13) անցնելով օրհնություն և հարատևության, որն առաջացնում է խնդիր՝ փորձելով հասկանալ Պողոսի Մովսեսական տեսակետը Օրենքի վերաբերյալ: A Man in Christ, James Stewart ցույց է տալիս Պողոսի պարադոքսալ մտածողությունը և գրելը.

«Դուք սովորաբար ակնկալում եք որ մարդը, ով ինքն է կառուցում մտածելակերպի և վարդապետության համակարգ, հնարավորինս խստորեն ամրագրել իր օգտագործած տերմինների իմաստը: Դուք ակնկալում եք, որ նա ճշգրտորեն արտահայտի իր մտքերը գաղափարախոսությունների մեջ: Դուք պահանջում եք, որ ձեր հեղինակի կողմից առանձին իմաստով օգտագործած բառը լինի ողջ իմաստով: Բայց եթե նայենք Պողոսի գործին՝ կհիասթափվենք: Նրա արտահայտություններից շատերը հոսուն են, ոչ թե կոշտ, գրում է. «Ես հավանում եմ Աստծո օրենքը, ներքին մարդով» (տես Հո.7:12,22), բայց հստակ է *nomos-ի* մեկ այլ ասպեկտ, որը ստիպում է նրան ասել, «Քրիստոսը փրկեց մեզ օրենքի անեծքից (տես Գաղ. 3:13)» (էջ 26):

▪ **«եթե»** Մա ԵՐԲՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ, բայց պատահական գործողություն: Մովսեսական օրենքը պետք է օգտագործվի պատշաճ ձևով և ոչ թե որպես օրինական օրակարգ (տես Հո. 2: 27-29; 7: 6; 2 Կոր. 3: 6):

1: 9 «այլ անօրեններին և անհնազանդներին» Պողոսը իր գրվածքներում ներառում է մեղքերի մի քանի ցուցակ (տես Հո. 1: 29-31; 13:13; 1 Կոր. 5:11; 6: 9-10; Եփ. 5:5; Կող. 3:5; 1 Տիմ. 6: 4-5; 2 Տիմ. 3: 2-4; Տիտոս 3: 3): Նրանք նման են հունական բարոյական մարդկանց (Ստոիկյաններ) ցանկերին: Այս ցանկում նկարագրված են այն անձինք, որոնց համար Օրենքը դեռ ունի համապատասխանություն (այսինքն մեղավորները): Օրենքը, որպես մեղքը դատապարտելու Աստծո գործակալ, լիովին քննարկվում է Գաղ. 3:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՉԱՐ ԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Նոր Կտակարանում չար արարքների և առաքինությունների ցանկերը միասին են թվարկված: Հաճախ նրանք արտացոլում են թե ռաբբիական և թե մշակութային (հելլենիստական) ցանկերը: Նոր Կտակարանի հակապատկեր հատկանիշները կարելի է տեսնել հետևյալում.

	Չար արարքներ	Առաքինություններ
1. Պողոս	Հռ. 1:28-32 Հռ. 13:13 1 Կոր. 5:9-11 1 Կոր. 6:10 2 Կոր. 12:20 Գաղ. 5:19-21 Եփ. 4:25-32 Եփ. 5:3-5 --- Կող. 3:5,8 1 Տիմ. 1:9-10 1 Տիմ. 6:4-5 2 Տիմ. 2:22ա, 23 Տիտոս 1:7, 3:3	--- Հռ. 12:9-21 --- 1 Կոր. 6:6-9 2 Կոր. 6:4-10 Գաղ. 5:22-23 --- --- Փիլ. 4:8-9 Կող. 3:12-14 --- --- 2 Տիմ. 2:22բ,24 Տիտոս 1:8-9; 3:1-2
2. Հակոբոս	Հակոբոս 3:15-16	Հակոբոս 3:17-18
3. Պետրոս	1 Պետ. 4:3 2 Պետ. 1:9	1 Պետ. 4:7-11 2 Պետ. 1:5-8
4. Հովհաննես	Հայտ. 21:8; 22:15	---

- **«անօրէններին»** Սա նշանակում է «չճանաչված հեղինակություն»: Այս կեղծ ուսուցիչները մերժել էին Մովսեսական օրենքի բարոյական ասպեկտները: Նրանք իրենց համար «օրենք» են դարձել (առանց խղճի, տես 1 Տիմ. 2:4):
- **«ապստամբ»** Սա նշանակում է «ոչ մի իշխանության տակ»: Նրանք ուզում էին իշխանություն լինել:
- **«անաստված»** Սա նշանակում է «գիտակցաբար անկրոն»: Նրանք անտեղյակ չէին, բայց ինքնակուրացած:
- **«անսուրբ»** Սա նշանակում է աստվածայինին հակառակ: Նրանք հակադրվում են այն ամենին, ինչ Աստված ասում և գործում է:
- **«պիղծ»** Սա նշանակում է «ոտնահարել սրբությունը»: Նրանք պնդում էին, որ հոգևոր են, բայց իրենց ապրելակերպով ցույց են տալիս իրենց աշխարհային լինելը:
- **«հայրասպաններին, եւ մայրասպաններին»** Եթե այս ցանկը արտացոլում է Decalog- ը (Տասը Պատվիրանները), ապա դա կարող է արտացոլել հարգանքի / պատվի պակասը, որը պատկանում է ծնողներին (տես Ելից 20:12; 2 Օր. 5:16):

▪ «սպանություն» Decalog- ում սա վերաբերվում է անօրինական, կանխամտածված սպանությանը (տես Ելից 20:13; 2 Օր. 5:17):

1:10 «Պոռնիկներին» Սա նշանակում է «սեռական անբարոյականություն» և կարող է վերաբերվել Ելից 20:14 և 2 Օր. 5:18: Անբարոյականությունն առանց սահմանների միշտ բնորոշել է կեղծ ուսուցիչներին:

Արևելահայերեն «արուագէտներին»
Արևմտահայերեն «արուագէտներուն»

NASB, NJB «միասեռականներ»
NKJV, NRSV «սողոմացիներ»
TEV «սեռական դավաճաններ»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կա ժամանակակից մշակութային ճնշում, որը համասեռամոլությունն ընդունվի որպես համապատասխան այլընտրանքային կենսակերպ: Աստվածաշունչը դատապարտում է այն որպես կյանքի համար կործանարար ապրելակերպ, որը չի համապատասխանում Աստծո կամքին և Իր ստեղծագործությանը:

1. այն խախտում է Ծննդոց 1-ի Աստծո պատվերը՝ աճել և բազմանալ
2. այն դատապարտվում է Ծննդոց 19-ում (տես 2 Պետ. 2:6-8; Հուդա 7) և Դատ. 19
3. այն բնութագրում է հեթանոսական պաշտամունքը և մշակույթը (տես Ղև. 18:22; 20:13; Հռ. 1:18-28 և Հուդա 1:7)
4. այն բացահայտում է եսակենտրոն անկախություն Աստծուց (տես 1 Կոր. 6: 9-10; 1 Տիմ. 1:10)

Այնուամենայնիվ, թույլ տվեք հաստատել Աստծո սերը և ներողամտությունը բոլոր մեղավոր մարդկանց հանդեպ: Միասեռականությունը «աններելի մեղք» չէ: Քրիստոնյաներն իրավունք չունեն խիստ ատելությամբ և ամբարտավանությամբ վարվել այս մեղքի նկատմամբ, հատկապես, երբ ակնհայտ է, որ բոլորս մեղավոր ենք և Հիսուսի խոսքերը Լեռան քարոզում (Մատթ. 5.27-28) ասում են, որ մեղքը նաև մտքով է լինում, ինչպես նաև գործով, սեռական մեղքերը բազմապատկվում են: Աղոթքը, մտահոգությունը, վկայությունը և կարեկցանքը այս դեպքում ավելի շատ են օգնում, քան վճռական դատապարտումը: Աստծո Խոսքն ու Հոգին կկատարեն համապատասխան աշխատանքը, եթե թույլ տանք նրանց: Բոլոր սեռական մեղքերը, ոչ միայն այս մեկը, պղծություն են Աստծո առաջ և մարդուն տանում են դատաստանի: Մեքսը Աստծո կողմից տրված պարգև է մարդկությանը բարօրության, ուրախության և կայուն հասարակություն ունենալու համար: Սակայն այս ամենը, Աստծո կողմից տրված հորդորը հաճախ վերածվում է ապստամբ, ինքնակենտրոն, հաճույք ստանալու, «առավելագույնս, ամեն գնով» կյանքի/ապրելակերպի(տես Հռ. 8:1-8; Գաղ. 6: 7-8):

Հաճախ մարդիկ ասում են ինձ «Աստված ինձ այսպես է ստեղծել»: Ճիշտ է, մենք դեռևս չգիտենք համասեռամոլության (այսինքն, գենետիկա կամ սոցիալական) աղբյուրը, ինչ էլ որ լինի, Աստվածաշունչը պետք է ուղղորդի մեր ընտրությունը; ընտրություններն ունեն հետևանքներ: Տեքստերը գերադասվում են զգացմունքներից կամ անձնական նախասիրություններից: Մենք հավատքի համայնք ենք՝ առաջնորդվող Աստվածային հայտնությամբ, այլ ոչ թե անհատական իրավունքներով կամ ազատություններով:

Որպես եզրափակիչ խոսք, որպես եկեղեցու առաջնորդ, ես գիտեմ, որ քրիստոնյաների

որոշակի տոկոս պայքարում է այդ հարցի շուրջ: Խնդիրը ոչ թե հակումն է, այլ գործողությունը: Որոշ ծառայող ուսանողներ իմ համալսարանում պայքարում են այլ սեռական խնդիրների հետ (դրանք այնքան հզոր են կյանքի այս տարիքային փուլում): Նրանք, ովքեր ցանկանում են սահմանափակել իրենց ցանկությունները (այսինքն, ձեռնպահ մնալ) այս ոլորտում (այսինքն, սեռական ցանկությունները), անշուշտ ծառայության պաշտոնների համար են: Մա նաև ճիշտ է նրանց համար, ովքեր պայքարում են միասեռականության դեմ: Գործը, այլ ոչ թե միտքն է իրական խնդիրը: Ինչու է ոմանց ձգում նույն սեռը, դա առեղծված է: Այս ոլորտում կա ընտրություն (ինչպես բոլոր ոլորտներում): Մենք պատասխանատու ենք մեր ընտրությունների համար:

Աստված սիրում է մարդկանց և ցանկանում է երկարատև առողջություն, երջանկություն և կենսունակություն բոլոր նրանց, ովքեր ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ (Ծննդ. 1: 26-27; Տես Հատուկ Թեմա: Մարդու սեռը): Այդ բաները / գործողությունները, որոնք խանգարում են անհատի առողջությանը, երջանկությանը, ինչպես նաև համայնքի՝ դատապարտված են: Աստված մեր լավն է ուզում: Մենք ուզում ենք մեր անմիջական հաճույքը: Աստված ողորմա մեզ բոլորիս:

- **«մարդագողներին»** Մա կարող է լինել լրացուցիչ ապացույց, որ ամբողջ ցանկը զուգահեռ է Տասը Պատվիրաններին: Մա ռաբիական մեկնաբանություն է «մի գողացիր»-ի (տես Ելից 20:15; 2 Օր. 5:19): Ռաբբիները պնդում են, որ դա վերաբերվում է ստրուկների առևանգմանը (տես Ելից 21:16; 2 Օր. 24: 7), սակայն անմիջական կոնտեքստը կարծես կապված է սեռական բնույթի այլասերվածությանը (այսինքն, ստրկուհու սեռական բնույթի օգտագործումը, հմմտ. Ամովս 2: 7, կամ տղաների օգտագործումը համասեռամոլության համար):

- **«սուտ աստղներին, սուտ երդում անողներին»** Մա հնարավոր է վերաբերվում է «հարևանիդ դեմ սուտ վկայություն մի տուր» պատվիրանին (տես Ելից 20:16; 2 Օր.5:20):

- **«եւ եթէ ուրիշ ինչ հակառակ է ողջամիտ վարդապետութեանը»** Եթե մենք շարունակենք համեմատել այն Decalog- ի հետ, ապա սա պետք է վերաբերվի «ցանկանալուն» (տես Ելից 20:17; 2 Օր. 5:21): Սակայն Պողոսը, կարծես, ավարտում է մեղքերի իր ցանկը Հռ. 13: 9 և Գաղ. 5:21-ում նույն ընդհանուր իմաստով (այսինքն, առանց կոնկրետ ցանկանալու մասին հղման):

- **«ողջամիտ վարդապետութեանը»** Մենք անգլերեն «հիգիենա» բառը ստանում ենք հունարեն՝ այս բառից: Այս տերմինը օգտագործվում է Նոր Կտակարանում տասնմեկ անգամ, որից ինը՝ Հովվական Նամակներում: Այն խոսում է այն ուսմունքների մասին, որոնք հավատացյալներին հոգևորապես առողջ են դարձնում:

Այս գաղափարը (թեև տարբեր ձևակերպումներով) կրկնվող թեմա է Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 1:10; 4: 6; 6: 3; 2 Տիմ. 1:13; 4: 3; Տիտոս 1: 9,13; 2: 1,2,7): Այս կոնտեքստում սա զուգահեռ է «փառքի ավետարան»-ին 1 Տիմ. 1:11:

Այս տեքստի բարդ ժամանակակից կիրառումը վերաբերում է ժամանակակից հավատացյալներին, որոնք կարողանում են սահմանել «կեղծ ուսուցիչներ»-ը: Ինչպե՞ս կարելի է տարբերել անձնական առարկայական նախասիրությունը և մշակույթը՝ կարևոր վարդապետական հարցերից: Պատասխանը պետք է ամփոփվի Ավետարանի Առաքելական քարոզներում, հասկապես Քրիստոսի անձի և կատարած գործի մասին, և թե մարդիկ ինչ օգուտ են ունենում Քրիստոսի կատարած գործի շնորհիվ և ապրում Քրիստոսանման՝ Ավետարանի լույսի ներքո:

«Ողջամիտ վարդապետություն»-ը մի քանի բառերից և արտահայտություններից մեկն է, որը բարձրացնում և նկարագրում է Աստծո ճշմարտությունը:

1. «Աստծո խոսքը» (տեւ 1 Տիմ. 4: 5; 2 Տիմ. 2: 5)
2. «մեր Տիրոջ խոսքը» (տեւ 1 Տիմ. 6:3; 2 Տիմ. 1:13)
3. «Ճշմարտության խոսքեր» (տեւ 2 Տիմ. 2:15)
4. «հավատքի խոսքեր» (տեւ 1 Տիմ. 4:6)
5. «ուսուցում» (տեւ 1 Տիմ. 1:10; 1 Տիմ. 4: 3; Տիտոս 1: 9, 2: 1)
6. «ավանդ» (տեւ 1 Տիմ. 6:20)
7. «Ճշմարտություն» (տեւ 2 Տիմ. 1:14; 2:18, 25; 3: 7,8; 4: 4)
8. «Ավետարանը» (տեւ 1 Տիմ. 1:11; 2 Տիմ. 2: 8, 10, 11)
9. «հավատքը» (տեւ 1 Տիմ. 6:21; 2 Տիմ. 4: 7)
10. «Սուրբ Գրքերը» (տեւ 2 Տիմ. 3:15-16)

1:11 «Վառավոր ավետարանը» Սա բառացիորեն այսպես է «օրհնյալ Աստծո փառքի ավետարանը»: Սա զուգահեռ է 1 Տիմ.1:10 «ողջամիտ ուսմունք»-ին: Աստված հայտնել է, թե ինչպես արձագանքել Իրեն եւ այլ մարդկանց համապատասխան (ավետարանով) և ոչ համապատասխան (հրեական օրինապաշտությամբ) ձևերով: Նոր ուխտը Քրիստոսում հանդիսանում է հավատացյալի համար անհրաժեշտ և հարմար լինելու վերջնական միջնորդ դատավորը (տեւ Գործք 15):

Փառք (*doxa*) տերմինը շատ դժվար է սահմանել: Հին Կտակարանում եբրայերեն *kabod* տերմինը առևտրային տերմին է, որը նշանակում է «ձանր լինել» և այդպիսով արժեքավոր և պատվավոր: Այն ունեցել է հատուկ ծագման իմաստ, երբ օգտագործվում էր ՅԱՀՎԵԻ համար (տեւ Ելից 16:7), կապված *shekinah* ամպի հետ, որը ներկայացնում էր Նրա ներկայությունը: Այս ամպը կրակի սյուն էր: Հետևաբար, *kabod* ստացավ պայծառ, փայլուն լրացուցիչ իմաստ (տեւ Ելից 24:17): Հին Կտակարանում այն դառնում է Աստծուն վերաբերվող միջոց (կարդա Ես. 59:19): Սա է պատճառը, որ Հովհ. 1:14 դառնում է այդքան կարևոր: Հիսուսը և / կամ Նրա ավետարանը լիովին նույնանում են Հին Կտակարանի օրհնյալ Աստծո՝ ՅԱՀՎԵԻ հետ:

▪ **«Երանելի Աստուծոյ»** Այս «երանելի, օրհնյալ» բառը օգտագործվում է Աստծո համար, միայն այստեղ և 1 Տիմ. 6:15: Այն նույն տերմինն է, որն օգտագործվում է Մաթ. 5-ի Երանելիներում (այսինքն, «երջանիկ», «գոհունակ»): Իդիոմայի կամ բարբառի նշանակությունն այն է, որ ՅԱՀՎԵԼ արժանի է գովասանքի, փառաբանության:

▪ **«որն ինձ հաւատացուեցաւ»** Սա *pisteuō* ԱՕՐԻՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է, հավատքի, վստահության ընդհանուր տերմինն է Նոր Կտակարանում: Այստեղ այն օգտագործվում է «ինչ-որ բան հանձնել կամ վստահել ուրիշին» (տեւ Դուկ.16:11; Հռ. 3: 2; 1 Կոր. 9:17; Գաղ. 2:7; 1 Թես.2:4; 1 Տիմ. 1:11; Տիտոս 1: 3; 1 Պետ. 4:10):

Պողոսը հավատում էր, որ Աստված իրեն ավետարանի տնտես էր դրել, որի համար հաշիվ պիտի տար (տեւ 1 Կոր. 9:17; Գաղ. 2:7; 1 Թես. 2: 4; Տիտոս 1: 3):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 1:12-17
¹²Եւ շնորհակալ եմ ինձ մեր Տէր Յիսուս Քրիստոսունը զօրացնողիցը, որ ինձ հաւատարիմ համարեց եւ սպասաւորութեան մեջ դրաւ, ¹³Որ առաջուց հայիոյիչ եւ հալածող եւ թշնամանող էի, բայց ողորմութիւն գտայ, որովհետեւ չ'զիտենալով էի գործում անհաւատութիւնով: ¹⁴Բայց էլ աւելի շատ եղաւ մեր Տիրոջ շնորհքը հաւատքով եւ սիրով որ Քրիստոս Յիսուսունն է: ¹⁵Ճշմարիտ է այս խօսքը եւ

ամեն ընդունելության արժանի, որ Քրիստոս Յիսուսն աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու, որոնց առաջինը եւ եւ: ¹⁶Սակայն նորա համար ողորմութիւն գտայ, որ Յիսուս Քրիստոսը առաջ ինձանում ցոյց տայ բոլոր երկայնատութիւնը՝ օրինակ լինելու նորանց, որ պիտի հաւատան նորան յաւիտենական կեանքի համար: ¹⁷Բայց յաւիտենից Թագաւորին, այն անեղծին եւ աներեւոյթին, այն մէկ Աստուծուն լինի պատիւ եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

1:12 «Եւ շնորհակալ եմ ինձ մեր Տէր Յիսուս Քրիստոսումը» Սա հազվադէպ դեպքերից է, երբ Պողոսը իր աղոթքը Հորը փոխարեն ուղղում է Քրիստոսին: Հնարավոր է դա անում է այն պատճառով, որ Դամասկոսի ճանապարհիին նա լսեց Հիսուսի ձայնը (տես Գործք 9: 4-5, 22: 7-8, 26:15): Պողոսը հավատում էր, որ Հիսուսն է

1. գորացրել / օժտել / ուժովացրել իրեն (տես Փիլ. 4:13; 2 Տիմ. 4:17)
2. իրեն համարել հավատարիմ / վստահելի
3. դրել ծառայության (Գործք 9:15):

Այս պարբերության մյուս մասը նվիրված է Պողոսի զարմանքին, որ Աստված կարող է սիրել, ներել և օգտագործել իր նման մեղավորին: Եթէ Աստված կարող էր դա անել Պողոսի համար, Նա կարող էր դա անել ցանկացած մեկի համար, նույնիսկ կեղծ ուսուցիչների և նրանց կողմից շեղվածների համար:

Այս տեսակի փառաբանությունն ու գոհունակությունը, որը, կարծես, համընկնում է կոնտեքստում, բնորոշ է Պողոսի գրվածքներին: Արտահայտելով իր աստվածաբանությունը հաճախ նրան առիթ էր տալիս փառաբանության և գոհության: Պողոսը հաճախ օգտագործում էր հունարեն *eucharisteō* կամ *eucharistia* տերմինը՝ շնորհակալություն, գոհություն հայտնելու համար, բայց այստեղ *charin* տերմինն է, որը կազմված է «շնորհք» (*charis*) տերմինի հիմքից: Այս տերմինը հազվադէպ է հանդիպում Պողոսի գրվածքում (տես 1 Տիմ. 1:12; 2 Տիմ. 1:3): Սակայն երկուսն էլ ակնհայտ փոխադարձաբար օգտագործվում են 1 և 2 Կորնթացիս նամակներում, հետևաբար դրանք, հավանաբար, հոմանիշ են Պողոսի համար, աննշան կամ ոչ մի առանձնահատկությամբ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

I. Ներածություն

Ա. Սա հավատացյալների համապատասխան վերաբերմունքն է Աստծո հանդէպ.

1. Սա մեր փառաբանության աղբյուրն է՝ Քրիստոսի միջոցով Աստծուն
 - ա. 2 Կոր. 2:14
 - բ. 2 Կոր. 9:15
 - գ. Կող. 3:17
2. Սա պատշաճ շարժադիր է ծառայության համար, 1 Կոր. 1: 4
3. Սա երկնքի շարունակական թեման է.
 - ա. Հայտ. 4: 9
 - բ. Հայտ. 7:12
 - գ. Հայտ. 11:17
4. Սա հավատացյալների շարունակական թեման է
 - ա. Կող. 2:7
 - բ. Կող. 3:17
 - գ. Կող. 4: 2

II. Աստվածաշնչյան նյութը

Ա. Հին Կտակարան

1. Երկու հիմնական բառեր
 - ա. *yadah* (BDB 392, KB 398), որը նշանակում է փառաբանություն
 - բ. *todah* (BDB 392, KB 1695), որը նշանակում է շնորհակալություն, գոհություն: Այն սովորաբար օգտագործվում է մատուցվող զոհաբերությունների համար (տես 2 Մնաց. 29:31; 33:16)
2. Դավիթը հատուկ Ղևտացիներին նշանակեց, գովաբանության և Աստծուն շնորհակալություն հայտնելու համար: Սա շարունակվեց Սողոմոնի, Եզեկիայի և Նեեմիայի կողմից.
 - ա. 1 Մնաց. 16: 4,7,41
 - բ. 1 Մնաց. 23:30
 - գ. 1 Մնաց. 25: 3
 - դ. 2 Մնաց. 5:13
 - ե. 2 Մնաց. 7:6
 - զ. 2 Մնաց. 31:2
 - է. Նեեմիա 11:12
 - ը. Նեեմիա 12: 24,27,31,38,46
3. Սաղմոսաց Գիրքը Իսրայելի փառաբանության և գոհության հավաքածուն է:
 - ա. Գոհություն ՅԱՀՎԵԻՆ Իր Ուխտի հավատարմության համար
 - (1) Սաղ. 107:8
 - (2) Սաղ. 103: 1
 - (3) Սաղ. 138: 2
 - բ. Գոհությունը հանդիսանում էր տաճարի ընթացակարգի մի մասը
 - (1) Սաղ. 95:2
 - (2) Սաղ. 100: 4
 - գ. Գոհությունը ուղեկցում է զոհաբերություններին
 - (1) Սաղ. 26:7
 - (2) Սաղ.122:4
 - դ. Գոհություն տրվում ՅԱՀՎԵԻ գործողությունների համար
 - (1) Թշնամիներից ազատում
 - (ա) Սաղ. 7:17
 - (բ) Սաղ. 18:49
 - (գ) Սաղ. 28:7
 - (դ) Սաղ. 35:18
 - (ե) Սաղ. 44:8
 - (զ) Սաղ. 54:6
 - (է) Սաղ. 79:13
 - (զ) Սաղ. 118: 1,21,29
 - (ը) Սաղ. 138:1
 - (2) ազատագրում բանտից (փոխաբերություն), Սաղ. 142: 7
 - (3) մահից ազատել
 - (ա) Սաղ. 30: 4,12
 - (բ) Սաղ. 86:12-13
 - (գ) Ես. 38: 18-19
 - (4) Նա ամբարիշտին խոնարհեցնում է, իսկ արդարին բարձրացնում

(ա) Սաղ. 52:9

(բ) Սաղ. 75:1

(գ) Սաղ. 92:1

(դ) Սաղ. 140:13

(5) Նա ներում է

(ա) Սաղ. 30:4

(բ) Ես. 12:1

(6) Նա հոգում է Իր ժողովրդի համար

(ա) Սաղ. 106: 1

(բ) Սաղ. 111:1

(գ) Սաղ. 136: 1,26

(դ) Սաղ. 145:10

(ե) Երեմ. 33:11

Բ. Նոր Կտակարան

1. Շնորհակալության և գոհության համար օգտագործված հիմնական բառը (որոշ հղումներ)

ա. *eucharisteō* (հմմտ. 1: 4,14; 10:30; 11:24; 14: 17,18; Կող. 1: 3,12; 3:17)

բ. *eucharistos* (հմմտ. Կող. 3:15)

գ. *eucharistia* (տես 1 Կոր. 14:16; 2 Կոր. 4:15; 9: 11,12, Կող. 2: 7; 4: 2)

դ. *charis* (տես 1 Կոր. 15: 57; 2 Կոր. 2:14; 8:16; 9:15; 1 Պետ. 2:19)

2. Հիսուսի օրինակը

ա. Նա գոհանում էր սննդի համար.

(1) Ղուկ. 22:17,19 (1 Կոր. 11:24)

(2) Հովհ. 6: 11,23

բ. Նա գոհանում էր պատասխանված աղոթքի համար, Հովհ. 11:41

3. Գոհության այլ օրինակներ

ա. Աստծո պարգևի՝ Քրիստոսի համար, 2 Կոր. 9:15

բ. Սննդի համար

(1) Գործք 27:35

(2) Հռ. 14:6

(3) 1 Կոր. 10:30; 11:24

(4) 1 Տիմ. 4: 3-4

գ. Բժշկության համար, Ղուկ. 17:16

դ. Խաղաղության համար, Գործք 24: 2-3

ե. Վտանգից ազատվելու համար

(1) Գործք 27:35

(2) Գործք 28:15

գ. Բոլոր հանգամանքների համար, Փիլ. 4:6

ե. Բոլոր մարդկանց համար, հատկապես առաջնորդների, 1 Տիմ. 2: 1-2

4. Շնորհակալության այլ ասպեկտներ

ա. Դա Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար, 1 Թես. 5:18

բ. Դա վկայում է Հոգով լցված կյանքի մասին, Եփ. 5:20

գ. Դա անտեսելը մեղք է

(1) Ղուկ. 17: 16-17

(2) Հո. 1:21

5. դ. Դա հակաթույն է մեղքի համար, Եփ. 5: 4
- Պողոսի գոհունակությունը
- ա. Նրա օրհնությունները եկեղեցու վրա
- (1) ավետարանի հռչակման համար
- ա) Հո. 1:8
- բ) Կող. 1: 3-4
- գ) Եփ. 1:15-16
- դ) 1 Թեա. 1: 2
- (2) շնորհքի շնորհիվ
- (ա) 1 Կոր. 1: 4
- (բ) 2 Կոր. 1:11; 4:15
- (3) ավետարանի ընդունման համար, 1 Թեա. 2:13
- (4) ավետարանի տարածման հարցում հաղորդակցվելու համար, Փիլ. 1: 3-5
- (5) շնորհքի մեջ աճելու համար, 2 Թեա. 1: 3
- (6) ընտրության գիտության համար, 2 Թեա. 2:13
- (7) հոգևոր օրհնությունների համար, Կող. 1:12; 3:15
- (8) առատաձեռնությամբ տալու համար, 2 Կոր. 9:11-12
- (9) նորադարձների հավատքի համար, 1 Թեա. 3: 9
- բ. Նրա անձնական գոհությունը
- (1) հավատացյալ լինելու համար, Կող. 1:12
- (2) մեղքի ստրկությունից ազատվելու համար, Հո. 7:25; 2 Կոր. 2:14
- (3) այլ հավատացյալների զոհաբերվող գործի համար, Հո. 16: 4; 2 Կոր. 8:16
- (4) որոշ գործողություններ, որոնք տեղի չեն ունեցել, 1 Կոր. 1:14
- (5) անձնական հոգևոր պարզևի համար, 1 Կոր. 14:18
- (6) ընկերների հոգևոր աճի համար, Փիլիմոն 4-5
- (7) ծառայության համար ֆիզիկական ուժի համար, 1 Տիմ.1:12

III. Եզրակացություն

- Ա. Գոհությունը մեր հիմնական պատասխանն է Աստծուն, երբ մենք փրկվում ենք: Այն ոչ միայն բանավոր համաձայնության հարց է, այլև ապրելակերպի երախտագիտություն:
- Բ. Շնորհակալությունը բոլոր բաներում հասուն կյանքի նպատակն է Աստծո հոգածության մեջ (տես 1 Թեա. 5: 13-18):
- Գ. Գոհությունը Հին և Նոր Կտակարանի կրկնվող թեման է: Արդյո՞ք դա նաև ձեր թեման է:

1:13 «հայեցիչ» Սա վերաբերվում է Սողոսի հավատամքներին և Հիսուսի մասին ասված արտահայտություններին՝ մինչև իր դարձի գալը:

- **«հալածող եւ թշնամանող էի»** (տես Գործք 8: 1-3; 9: 1, 13, 21; 22: 4,19; 26: 10-11; 1 Կոր.15: 8-9; Գաղ.1:13; Փիլ. 3:6)

▪ **«բայց ողորմութիւն գտայ»** Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է: Աստված / Քրիստոսը ողորմեց Սողոսին՝ դաժանաբար հալածողին: Եթե նա կարող է ողորմություն ստանալ, ուրեմն ցանկացած մարդ կարող է ողորմություն ստանալ: Սա բացահայտորեն հայտնում է Աստծո բնույթը, և թե որքան մեծ է Նրա սերը և ողորմությունը մեղավորների հանդէպ:

▪ **«որովհետև չ'գիտենալով էի գործում անհաւատութիւնով»** Հին Կտակարանում տգիտության մեղքերը կարող էին ներվել զոհաբերությամբ (տես Ղև. 16), մինչդեռ կանխամտածված մեղքի համար ոչ մի տեսակ զոհաբերություն հնարավոր չէր, նույնիսկ Քավության Օրը: Հռոմեացիս թղթում Պողոսը հստակորեն պնդում է, որ Աստված հաշիվ է պահանջում մարդկանցից՝ իրենց ունեցած լույսի համար: Այս ճշմարտության օրինակն այն է, որ նախքան Մովսեսական Օրենքը, Աստված մարդկանցից հաշիվ չէր պահանջում՝ իր պատվիրանները խախտելու համար (տես Գործք 17:30; Հռ. 3:20, 25; 4: 15; 5: 13,20; 7: 5,7-8; 1 Կոր. 15:56): Այս նույն ճշմարտությունը նաև երևում է նրանց մեջ, ովքեր երբեք չեն լսել ավետարանը (տես Հռ. 1: 18-2:29): Նրանք պատասխանատվություն են կրում իրենց ունեցած լույսի համար (ստեղծագործությունը, Հռ. 1:18-23 և ներքին բարոյական վկայությունը, Հռ. 2: 14-15): Սա կոչվում է «բնական հայտնություն», ի տարբերություն «հատուկ հայտնության» (այսինքն, Աստվածաշունչը):

1:14 «մեր Տիրոջ շնորհքը» Փրկության մասին Պողոսի աստվածաբանության բանալին Աստծո բնույթն էր, այլ ոչ թե մարդկության կատարումը: Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո ողորմած և գթառատ բնույթն է՝ արտահայտված Քրիստոսում (տես Եփ. 1: 3-14; 2: 4, 8-9):

▪ **«Բայց էլ աւելի շատ»** Սա բառացիորեն «գեր կամ չափից շատ առատ» (*hyperpleonazō*): Սա Պողոսի կողմից ստեղծված *hapax*- ի համադրությունն է *hyper*-ի հետ: «Այնտեղ, որտեղ մեղքը ավելացավ, շնորհքն ավելի շատացավ» (Հռ. 5:20):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է HUPER ՆԱԽԴԻՐԸ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Պողոսը հատուկ սեր ուներ նոր բառեր ստեղծելու համար, օգտագործելով հունարեն *hyper* ՆԱԽԴԻՐԸ, որը հիմնականում նշանակում է «վեր, գերազանց» կամ «բարձրագույն»: Երբ օգտագործվում է ՍԵՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (ԲԱՅՏԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ), դա նշանակում է «հանուն, ի սեր»: Այն կարող է նաև նշանակել «մասին» կամ «վերաբերյալ, կապված», ինչպես *peri* (տես 2 Կոր. 8:23; 2 Թես. 2:18): Երբ այն օգտագործվում է ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ, այն նշանակում է «վեր», «վրա» կամ «դրանից դուրս, այն կողմ» (տես A. T. Robertson, *A Grammar of the Greek New Testament in the Light of Historical Research*, էջ 625-633): Երբ Պողոսը ցանկանում էր ընդգծել մի գաղափար, բարդ բառի մեջ նա օգտագործում էր այս ՆԱԽԴԻՐԸ: Սրանք են այս ՆԱԽԴԻՐԸՆՎ սկսվող Պողոսի կողմից օգտագործած բարդ բառերի ցանկը:

- Ա. *Hapax legomenon* (օգտագործվում է միայն մեկ անգամ Նոր Կտակարանում)
 1. *Hyperakmos*, մեկը, որ ծաղիկ հասակից/չափահասությունից անցել է, 1 Կոր. 7:36
 2. *Hyperauxanō*, չափազանց ավելանալ/խիստ մեծանալ, 2 Թես. 1: 3
 3. *Huperbainō*, սահմանն անցնել, մեղանչել/չափն անցնել, 1 Թես. 4: 6
 4. *Huperkeina*, այն կողմը, 2 Կոր. 10:16
 5. *Huperekteina*, չափից շատ երկարացնել, տարածել, 2 Կոր. 10:14
 6. *Huperentugchanō*, բարեխոսել, Հռ. 8:26
 7. *Hupernikaō*, ալ ավելի հաղթական լինել, Հռ. 8:37
 8. *Hyperpleonazō*, չափազանց, էլ ավելի շատ, 1 Տիմ. 1:14

9. *Huperupsoḗ*, գերազանցապես բարձրացնել, Փիլ. 2: 9
10. *Huperphroneō*, բարձր մտքեր ունենալ/բան չմտածել նրանից ավելի, Հո. 12: 3
- Բ. Բառեր, որոնք օգտագործված են միայն Պողոսի գրվածքներում:
1. *Huperairomai*, բարձրացնել իրեն/գոռոզանալ, 2 Կոր. 12:7; 2 Թե. 2: 4
 2. *Huperballontōs*, չափից վեր, չափազանց, 2 Կոր. 11:23; (ՄԱԿԲԱՅ միայն այստեղ, բայց ԲԱՅ 2 Կոր. 3:10; 9:14; Եփ. 1:19; 2: 7; 3:19)
 3. *Huperbolē*, առավել ևս, չափից շատ, Հո. 7:13; 1 Կոր. 12:31; 2 Կոր. 1: 8; 4: 7,17; 12:7; Գաղ. 1:13
 4. *Hupereperissou*, ամեն ինչից առավել, չափից վեր, Եփ. 3:20; 1 Թե. 3:10; 5:13
 5. *Huperlian*, ամենաբարձր աստիճանի կամ աչքի ընկնող, 2 Կոր. 11:5; 12:11
 6. *Huperochē*, աչքի ընկնող դիրք, գերազանցություն, 1 Կոր. 2: 1; 1 Տիմ. 2: 2
 7. *Huperperisseuō*, գերազանցել, չափից շատ, Հո. 5:20 (ՉԵԶՈՔ ՄԵՌ, առատորեն լցված, վարարել, հեղեղված լինել, 2 Կոր. 7:4)
- Գ. Բառեր, որոնք օգտագործել է Պողոսը և Նոր Կտակարանի այլ գրողներ
1. *Huperanō*, շատ բարձր, Եփ. 1:21; 4:10; և Եբբ. 9: 5
 2. *Huperechō*, գերազանցություն, գերակայություն, Հո. 13:1; Փիլ. 2: 3; 3: 8; 4: 7; 1 Պետ. 2:13
 3. *Huperēphanos*, ենթադրելով կամ հպարտ, Հո. 1:30; 2 Տիմ. 3: 2 և Ղուկ.1:51; Հակ. 4: 6; 1 Պետ. 5: 5:

Պողոսը մեծ փափագ ունեցող մարդ էր. երբ բաները կամ մարդիկ լավ էին, նրանք շատ լավ էին, և երբ նրանք վատ էին, շատ վատ էին: Այս ՆԱԽԴԻՐԸ թույլ տվեց նրան արտահայտել իր գերազանց գգացմունքները մեղքի, ես-ի,Քրիստոսի և Ավետարանի մասին:

▪ **«հավատքով եւ սիրով որ Քրիստոս Յիսուսումն է»** Այս համարում կան մի քանի մեկնաբանական հարցեր:

1. Արդյո՞ք «Տերը» (1 Տիմ. 1:14) վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ (1 Տիմ. 1:17), թե՞ Հիսուսին: կոնտեքստում ՅԱՀՎԵՆ լավագույնն է համապատասխանում:
2. Արդյո՞ք Աստծո շնորհքի պարզևր կապված է հավատքի և սիրո հետ, որոնք նաև պարզևներ են Քրիստոսում (տես TEV, NJB):

Անշուշտ Պողոսի դարձի գալը (տես Գործք 9) շնորհքի քայլ էր: Պողոսը ընտրվեց և գործեց համապատասխան: Նրա պատասխանը անբնական ազատ կամքի գործողություն չէր: Նրա կարիքները բավարարվեցին Աստծո շնորհքով և Հիսուսի գործերով: Պողոսը ստացավ երկնային պարզևները և այնուհետև դրանք գործածեց ուրիշների համար:

Ուշադրություն դարձրեք, որ Աստծու փրկության համար նախատեսված դրույթները գալիս են միայն Քրիստոսի միջոցով: Նա մեղավոր մարդու կարիքների Աստծո պատասխանն է բոլոր ուղորտներում (տես 1 Տիմ. 1: 15-17):

1:15 «Ճշմարիտ է այս խօսքը եւ ամեն ընդունելութեան արժանի» Այս արտահայտությունը հինգ անգամ օգտագործվում է Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 1:15; 3: 1; 4: 9; 2 Տիմ. 3:8): Այն շատ նման է Հիսուսի «ամեն, ամեն»-ին (թարգմանված «ճշմարիտ, ճշմարիտ»)՝ կարևոր մտքերը ներկայացնելու համար:

Շատ գիտնականներ հավատում են, որ այս արտահայտությունը Պողոսի համար գրական ցուցիչ էր՝ օրհներգ, պատարագ կամ վարդապետություն մեջբերելու համար: Այլ հնարավոր տեղերում նա մեջբերում է վաղ դրույթների պնդումներ 1:17; 3:16; 6: 15-16; 2 Տիմ. 2: 11-13:

- **«Քրիստոս Ցիսուն աշխարհք եկաւ»** Սա խոսում է Հիսուսի նախագոյության մասին (տես Հովհ. 1: 1,15; 8: 57-58; 16:28; 17: 5; 1 Կոր. 8:9; Փիլ. 2: 6-7; Կող. 1:17; Եբ 1: 3; 10: 5-8), որը մեծ վարդապետական ինդիք էր՝ կապված Նրա աստվածության հետ (Նա մարմնավորված էր, ոչ թե ստեղծված, Առ. 8:22): Սա կարող է անդրադառնալ այս կեղծ ուսուցիչների գնոստիկ ասպեկտին: Տես Հատուկ Թեմա: Գնոստիցիզմ Ցիսոս 1: 1

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է *KOSMOS* (ԱՇԽԱՐՀ)

Պողոսն օգտագործում *Kosmos* տերմինը մի քանի ձևերով.

1. բոլոր ստեղծված համակարգը (տես Հռ. 1:20; Եփ. 1: 4, 1 Կոր. 3:22, 8: 4,5)
2. այս մոլորակը (տես 2 Կոր. 1:12; Եփ. 1:10; Կող. 1:20; 1 Տիմ. 1:15; 3:16; 6: 7)
3. մարդիկ (տես Հռոմ 3: 6,19; 11:15; 1 Կոր. 1: 27-28; 4: 9;13; 2 Կոր. 5:19; Կող 1: 6)
4. մարդիկ կազմակերպում և գործում են Աստուծոց անջատ (հմմտ.1 Կոր. 1: 20-21; 2:12; 3:19; 11:32; Գաղ. 4: 3; Եփ. 2: 2,12; Փիլ. 2:15; Կող. 2: 8,20-23): Այն շատ նման է Հովհաննեսի կիրառությանը (այսինքն, 1 Հովհ. 2: 15-17)
5. ներկայիս աշխարհի կառույցները (տես 1 Կոր. 7: 29-31; Գաղ. 6:14; նման է Փիլ. 3: 4-9, որտեղ Պողոսը նկարագրում է հրեական կառույցները)

Որոշ առումներով դրանք համընկնում են և դժվար է դասակարգել յուրաքանչյուր կիրառություն: Այս տերմինը, ինչպես շատերը Պողոսի մտքում, պետք է սահմանվի անմիջական կոնտեքստով և ոչ թե նախապես որոշված սահմանումով: Պողոսի տերմինաբանությունը հոսուն էր (տես James Stewart *A Man in Christ*): Նա չի փորձում ստեղծել սիստեմատիկ աստվածաբանություն, այլ հոչակում է Քրիստոսին:

- **«մեղադրները փրկելու»** Սա է Քրիստոսի գալստյան նպատակը (տես Մարկ. 10:45; Ղուկ. 19:10; 1 Հովհ. 2: 2): Նաև մատնանշում է ավետարանի հիմնական հավատքը, մեղավոր մարդկության շնորհքի կարիքի վերաբերյալ (կարդա Հռ. 3: 9-18,23; 6:23):

- **«որոնց առաջինը ես եմ»** Որքան մեծ է լույսը, այնքան մեծ է մեղքի գիտակցությունը (տես 1 Տիմ. 1:16; 1 Կոր. 15:9; Եփ. 3:8): Պողոսը մեղավոր էր զգում՝ եկեղեցուն հալածելու համար (տես Գործք 7:58; 8: 1; 9: 1-2; 22: 4,19-20; 26: 10-11), բայց զորացավ Աստծո շնորհքով, սիրով և մեղավորների համար Քրիստոսի կատարած գործի միջոցով (տես 1 Տիմ. 1:16):

1:16

Արևելահայերեն «բոլոր երկայնատուփները»

Արևմտահայերեն «երկայնատուփներ»

NASB «կատարյալ համբերություն»

NKJV «բոլոր համբերատարությունը»

NRSV «ամենավերջին համբերությունը»

TEV «լիարժեք համբերություն»

NJB «անսպառ համբերություն»

Սա բարդ հունարեն տերմին է (*makros* և *thumos*) «զսպված բարկության» համար: Այս տերմինը հաճախ օգտագործվում է Աստծո համար հունարեն Հին Կտակարանում, որը կոչվում է

«Սեպտուագինդ» (տես Թվոց 14:18; Մաղ. 86:15; 103: 8; Հովել 2:13; Նեեմ. 1: 3): Այն նաև բնութագրում է Աստծուն Նոր Կտակարանում (կարդա Հո. 2: 4; 9:22; 1 Պետ. 3:20; 2 Պետ. 3:15): Այն կոչված է բնութագրելու նաև Իր զավակներին (տես 2 Կոր. 6:6; Գաղ. 5:22; Եփ. 4: 2; Կող. 1:11; 3:12; 2 Տիմ. 3:10; 4:2):

- **«օրինակ լինելու»** Պողոսի փրկության վկայությունը քրիստոնեության ոլորտին թշնամուց հեթանոսների վստահելի Առաքյալ դառնալը հայտնում է Աստծո շնորհքի խորությունը և լայնությունը և բարձրությունը: Որոշ իմաստով Պողոսը անկեղծ սուտ ուսուցիչ էր, որին Աստված ողորմաց:

- **«նորանց, որ պիտի հաւատան նորան»** Հիսուսը աղոթում է նրանց համար, ովքեր կհավատան Իրեն Հովհ. 17:20-26: Թեև Հովհաննեսի Ավետարանը հաճախ օգտագործում է *eis* ՆԱԽԴԻԲԸ արտահայտելու մարդու հավատքի օբյեկտը, Պողոսը սովորաբար օգտագործում է *epi* (հմմտ. Հո. 4: 5,24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; նաև տես Գործք 9:42; 11:17; 16:31) կամ պարզապես ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ (տես Գաղ. 3: 6; Գործք 18: 8; 27:25): Թվում է, թե աստվածաբանական տարբերություն չկա (1) հավատալ -ին (*eis*); հավատալ -ին (*en*); հավատալ (*epi*); կամ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ օգտագործումը ՆԱԽԴԻԲԻ (տես 1 Հովհ. 5:10):

Պողոսը, ինչպես Հովհաննեսը, երբեմն օգտագործում է *hoti* (այսինքն, հավատալ, որ), որը շեշտում է հավատքի բովանդակությունը (տես Հո. 6: 8; 1 Թես.4:14): Ավետարանը դա (1) ընդունելու անձին, 2) հավատալ ճշմարտություններին և (3) ապրել կյանքը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ (PISTIS գոյական], PISTEUŌ, [բայ], PISTOS ածական])

Ա. Սա շատ կարևոր տերմին է Աստվածաշնչում (տես Եբր. 11: 1,6): Դա Հիսուսի վաղ քարոզների թեման է (տես Մարկ. 1:15): Առկա են առնվազն երկու նոր ուխտի պահանջներ՝ ապաշխարություն և հավատք (Մարկ. 1:15, Գործք 3:16,19; 20:21):

Բ. Տերմինի ստուգաբանությունը

1. Հին Կտակարանում «հավատք» տերմինը նշանակում էր հավատարմություն, նվիրվածություն կամ վստահելիություն և Աստծո բնության նկարագիրն էր, այլ ոչ թե մեր:
2. Այն առաջացել է եբրայերեն տերմինից (*emun, emunah, BDB 53, տես Ամբ. 2: 4*), որը սկզբնապես նշանակում էր «վստահ, կայուն լինել, հաստատ մնալ»: Փրկարար հավատքը դա
 - ա. Անձ է, որին պետք է ընդունել (այսինքն, անձնական վստահություն, հավատք, տես Ե. 1 ստորև):
 - բ. հավատալ այդ անձի մասին ճշմարտություններին (այսինքն, Սուրբ Գիրք, ստորև Ե. 5)
 - գ. Այդ անձի նման կյանք ապրել (Քրիստոսանման)

Գ. Տերմինի կիրառությունը Հին կտակարանում

Պետք է ընդգծել, որ Աբրահամի հավատքը ապագա Մեսիայի մեջ չէր, այլ Աստծո խոստման վրա, որ նա կունենա երեխա և ժառանգներ (տես Ծննդ. 12:2; 15:2-5; 17:4-8; 18:14; Հո. 4: 1-5): Աբրահամը պատասխանեց այս խոստումին՝ վստահելով Աստծուն (տես Հատուկ Թեմա: Հավատալ, հավատք, վստահություն և հավատարմություն Հին Կտակարանում) և Նրա խոսքին: Նա դեռևս կասկածներ ուներ այս խոստման վերաբերյալ, որը տասներեք տարի պահանջվեց՝ իրականանալու համար: Նրա անկատար հավատքը, սակայն, ընդունվեց Աստծո կողմից: Աստված պատրաստ է աշխատել անբարո մարդկանց հետ, ովքեր

արձագանքում են Նրան և Նրա խոստումներին հավատքով, նույնիսկ եթե դա մանանեխի սերմերի չափ է (տես Մաթ. 17:20) կամ խառը հավատք (տես Մարկ. 9: 22-24):

Դ. Դրա օգտագործումը Նոր Կտակարանում
«Հավատալ» տերմինը առաջացել է հունարեն *pisteuō* ԲԱՅԻՑ կամ *pistis* ԳՈՅԱԿԱՆԻՑ, որը անգլերեն թարգմանվում է, որպես «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ չի հանդիպում Հովհաննեսի Ավետարանում, սակայն հաճախ օգտագործվում է ԲԱՅԸ: Հովհ. 2: 23-25-ում անորոշություն կա, Հիսուս Նազովրեցու հանդեպ ամբոխի նվիրվածության ճշմարտացիության առումով: Այլ օրինակներ, երբ այս տերմինն օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8: 31-59 և Գործք 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես Մատթ. 13:20-23, 31-32; 28:19-20):

- Ե. Օգտագործվում է ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ
1. *eis* նշանակում է «մեջ»: Այս յուրահատուկ կառուցվածքը շեշտում է հավատացյալների վստահությունը / հավատքը Հիսուսի հանդեպ
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; 1 Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11; 3: 15,18; 4:39; 6:40; 7: 5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11: 45,48; 12: 37,42; Մատթ.18: 6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ. 1: 8)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11: 25,26; 12: 44,46; 14: 1,12; 16: 9; 17:20)
 - դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; 1 Հովհ. 5:10)
 - ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք 19:4; Գաղ. 2:16)
 - զ. Լույսին (Հովհ. 12:36)
 - է. Աստծուն (Հովհ.14:1)
 2. *ev* նշանակում է «մեջ», ինչպես Հովհ. 3:15; Մարկ.1:15; Գործք 5:14
 3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա», ինչպես Մաթ. 27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4: 5,24; 9:33; 10:11; 1 Տիմ. 1:16; 1 Պետ. 2: 6
 4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ առանց ՆԱԽԴԻՐԻ, ինչպես Հովհ. 4:50; Գաղ. 3: 6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ. 3:23; 5:10
 5. *hoti*, որը նշանակում է «հավատալ որ», բովանդակություն է տալիս, թե ինչին հավատալ
 - ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ. 6:69)
 - բ. Հիսուսը - Ես Եմ (Հովհ. 8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը Նրա մեջ (Հովհ.10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
 - ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
 - զ. Հիսուսը Հոր կողմից ուղարկվեց (Հովհ. 11:42; 17: 8,21)
 - է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ. 14:10-11)
 - ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
 - թ. Հիսուսն իրեն հայտնեց Հոր ուխտի անունով, «Ես եմ» (Հովհ. 8:24; 13:19)
 - ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
 - ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թես. 4:14)

▪ **«յալիտենական կեանքի»** Հավիտենական կյանքը (*zōen aiōnion*) Հովհաննեսի աստվածաբանության հիմնական կրկնվող թեման է: Դա ընթացիկ իրականություն է (օրինակ, Հովհ.

3: 16,36; 5:24; 6: 47,54), ինչպես նաև ապագա հույս, որը տրվում է Հորը ճանաչողներին, Որդուն վստահելու միջոցով (օրինակ, Հովհ. 17: 2-3):

Պողոսը այս տերմինն օգտագործում է կյանքի համար, որպես (1) նոր ժամանակաշրջան, 2) Աստծո թագավորությունը կամ (3) հարության կյանքը (կարդա Հռ. 2: 7; 5:21; 6:22,23; Գաղ.6: 8; 1 Տիմ.1:16; Տիտոս 1: 2; 3: 7): Միայն Աստված է անմահ, միայն Աստված կարող է կյանք տալ: Նա հավիտենական կյանք է տալիս նրանց, ովքեր հավատում են Իր Որդուն:

1:17 «Թագավորին» Այս օրհներգությունը նման է 6: 15-16: Այն արտացոլում է ուշ ժողովարանի լեզուն («Տիեզերքի թագավորը») և սփյուռքի հրեաներին («հավիտենական» տերմինը Աստծո համար օգտագործվել է Փիլոն Ալեքսանդրիացու կողմից):

Միանգամայն հնարավոր է, որ Պողոսը մեջբերում է վաղ եկեղեցու հավատամքը կամ օրհներգը, ինչպես նա անում է 1 Տիմ. 3:16; 6: 15-16 և 2 Տիմ. 2: 11-13:

▪ **«հավիտենից»** Սա չորս հզոր ԱՇՄԿԱՆՆԵՐԻՑ առաջինն է, որը նույն ԱՇՄԿԱՆՆ է օգտագործվում 1 Տիմ. 1:16 «հավիտենական կյանք» արտահայտության մեջ, բայց այստեղ Աստծուն նկարագրելու համար: Սա բառացիորեն «ժամանակների» (*aiōnion*), որը կարող է հավերժության փոխաբերությունը լինել կամ հրեական երկու ժամանակների գաղափարի հղումը:

1. ներկայիս չար շրջանը, որը բնութագրվում է անկախությամբ և ապստամբությամբ (հրեշտակ և մարդ)
2. Հոգու կողմից բերված եւ Մեսիայի կողմից իրականացվող արդարության գալիք խոստացյալ շրջանը:

Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 6:17

Հավիտենական կյանքի «արդեն, բայց ոչ դեռ» լարվածությունը բնութագրում է այն ժամանակաշրջանը, երբ այս երկու հրեական շրջանները համընկնում են Մեսիայի երկու գալուստների հետ, նախ, որպես Փրկիչ, իսկ հետո, որպես Թագավոր, Տեր և Դատավոր:

▪ **«անեղծին»** Այս բառացիորեն նշանակում է «անապական»: Այն փոխաբերականորեն վերաբերում է երբևէ ապրող, միակ-կենդանի Տիրոջը (ՅԱՀՎԵՆ եբրայերեն «լինել» ԲԱՅ-ից, տես Ելից 3:14, տես Հատուկ Թեմա. Աստծո Անունները 2 Տիմ. 1:2): Միայն Աստված ունի կյանք Ինքն Իրենում (տես Հռ. 1:23; 1 Տիմ. 1:17; 6:16): Բոլոր մյուս կյանքը բերված պարզ է և սնտեսություն: Դա գալիս է միայն Հոր շնորհքի, Քրիստոսի գործի (տես 2 Տիմ. 1:10) և Հոգու ծառայության միջոցով:

▪ **«աներեւոյթին»** Սա օգտագործվում է հոգևոր ոլորտի իմաստով (տես Կող. 1:15) կամ, հնարավոր է, ՅԱՀՎԵՆ, որպես անտեսանելի Աստված (չկան պատկերներ, օրինակ Ելից 33:20, 2 Օր.4:15; 1 Տիմ. 6:16): Աստված է միակ հավիտենական Հոգին, որը ներկա է բոլոր ստեղծագործություններում:

▪ **«մեկ Աստուծուն»** Սա վերաբերում է հրեական միաստվածությանը (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 2: 5; 2 Օր. 6: 4-6; Հուդա 25): Այս կոնտեքստն արտացոլում է եզակի աստվածաշնչյան աշխարհայացքը: Աստվածաշունչը մարդկությանը ներկայացնում է հավատքի տեսանկյունից հինգ իմաստներով:

1. Կա մեկ և միայն մեկ Աստված (տես Ծննդ.1: 1; Ելից 8:10; 9:14; 2Օր.4:35-39; 1Թագ.2:2; 2 Թագ.7:22; 22:32; 3Թագ. 8:23; Սաղ. 86:8,10; Ես. 43:11; 44:6,8; 45:6-7,14,18,21-22; 46: 5,9; Եր. 2:11; 5: 7; 10: 6; 16:20):
2. Նա անձնական, ստեղծող, փրկարար Աստված է (տես Ծննդ. 1-2; 3:15; Սաղ. 103-104):

3. Նա հույսի և վերականգնման խոստումներ է տալիս Մեսիայի միջոցով (տես Ես. 53):
4. Հավատքն առ Մեսիա նորոգում է ապստամբության խախտումը (ավետարանը):
5. Ով որ հավատա Մեսիային, կարող է ունենալ հավիտենական կյանք (ավետարանը):

Textus Receptus-ը, հետևելով հունարեն երկաթագիր ձեռագրերին ճ, D^c, K, L և P ավելացնում է «իմաստուն» (NKJV, «Աստծուն, ով միակ իմաստունն է»): Այս հավելումը բացակայում է հունարեն ճ*, A, D*, F, G և H* ձեռագրերում: Դա կարող է գրագրի հավելված լինել Հո. 16:27-ից: UBS⁴-ը տալիս է ավելի կարճ տեքստը «Ա» վարկանիշի (որոշակի):

▪ **«լինի պատիւ եւ փառք»** Սա հիմնականում հինկտակարանյան *kabod* տերմինի իմաստն է (տես 1 Տիմ. 1:11): Այն օգտագործվում է մի քանի անգամ Հայտնության գրքում մեկ ուրիշ գովասանքների հետ միասին (տես 1 Տիմ. 4: 9,11; 5: 12,13; 7:12):

Հին Կտակարանում ամենատարածված եբրայերեն բառը «փառք» (*kabod*) էր, նախկինում առևտրային տերմին էր, որը վերաբերում էր կշեռքի նժարներին, որոնք նշանակում էին «ծանր» լինել: Այն, որը ծանր էր՝ արժեքավոր էր կամ ուներ հատուկ գին: Հաճախ պայծառության հասկացությունը ավելացվել է՝ Աստծո մեծությունն արտահայտելու համար (տես Ելից 15:16; 24:17; Ես. 60: 1-2): Միայն Նա է արժանի և պատվավոր: Նա շատ գերազանց է մեղավոր մարդկության համար, որ կարող լինի հասկանալ (տես Ելից 33:17-23; Ես.6:5): Աստված կարող է միայն ճշմարտապես ճանաչվել Քրիստոսի միջոցով (կարդա Եր.1:14; Մատթ. 17:2; Եբր. 1: 3; Հակ. 2: 1):

«Փառք» տերմինը միանգամայն երկիմաստ է:

1. դա կարող է զուգահեռ լինել «Աստծո արդարությանը»
2. դա կարող է վերաբերել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը»
3. այն կարող է վերաբերել Աստծո պատկերին, որով մարդկությունը ստեղծվել է (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1; 9: 6), որը, սակայն, հետագայում աղավաղվեց ապստամբության միջոցով (տես Ծննդ. 3: 1-22)

Այն առաջին անգամ օգտագործվում է ՅԱՀՎԵԻ ներկայությունը Իր ժողովրդի հետ (տես Ելից 16:7,10; Ղևտ. 9: 23; Թվոց 14:10):

▪ **«յաւիտեանս յաւիտենից»** Այս բառը բառացիորեն նշանակում է «դարեց դար», որը իդիոմա է հավիտենականության համար (կարդա Գաղ. 1: 5; Ֆիլ. 4:20; 2 Տիմ. 4:18): Այս նույն տերմինը օգտագործվում է 1 Տիմ. 1:16 «հավիտենական կյանքի» համար և 1 Տիմ. 1:17 «Հավիտենական թագավորի» համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԻՂԻՈՍԱ)

Մեկ հունարեն իդիոմատիկ արտահայտություն է «դարեց դար» է (տես Ղուկ. 1:33; Հո. 1:25; 11:36; 16:27; Գաղ. 1: 5; 1 Տիմ. 1:17), որը կարող է արտացոլել եբրայերեն *'olam*: Տես Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, էջ 319-321, և Հատուկ Թեմա: Հավիտյան (*'Olam*).

Դրա հետ կապ ունեցող այլ արտահայտություններ «մինչև վերջ, հավիտյան» (տես Մատթ. 21:19; Մարկ. 11:14; Ղուկ. 1:55; Հովհ. 6:58, 8:35, 12:34; 13: 8; 14:16; 2 Կոր.9: 9) և «դարեց դար» (տես Եփ. 3:21): Թվում է այս հունարեն իդիոմաների «ընդմիջտ, հավիտյան» միջև տարբերություն չկա: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ ռաբիական քերականական կառուցվածքի պատկերավոր իմաստով, որը կոչվում է «ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ», կամ այն կարող է վերաբերել մի քանի «դարաշրջանների» գաղափարին, հրեական իմաստով «ամբարշտության դարաշրջան», «գալիք ժամանակը» կամ «արդարության դարաշրջանը» (տես Հատուկ Թեմա: Այս դարաշրջանը և Գալիք դարաշրջանը):

- «Ամեն» Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 6:16

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 1:18-20

¹⁸Այս պատուիրանքն աւանդում էմ քեզ, Տիմոթեոս որդեակ, առաջուց քեզ վերայ եղած մարգարէութիւնների պէս, որ նորանցով պատերազմիս բարի պատերազմը. ¹⁹Ունենալով հաւատք եւ բարի խղճմտանք, որ մի քանիսը դէն զցելով հաւատքումը և նաւակոծութիւն քաշեցին. ²⁰Որոնցից են Հիմենոսը եւ Աղէքսանդրոսը, որոնց մատնեցի սատանային որ խրատուին չ'հայեղել:

1:18 «պատուիրանքն» Պողոսն այս գլխում կիրառում է երկու ռազմական տերմիններ, 1) «հրաման» (1 Տիմ.1.3,5,18) և 2) «բարի պատերազմը պատերազմել» (1 Տիմ.1:18; հմմտ. 2 Կոր. 10: 3-6; Եփ. 6:10-17): Այս պարբերությունը (այսինքն, 1 Տիմ. 1:18-20) վերադառնում է 1 Տիմ. 1: 3-7 կեղծ ուսուցիչների աստվածաբանական խնդրին:

Արևելահայերեն «աւանդում էմ»

Արևմտահայերեն «կաւանդեմ»

NASB, TEV «վստահել»

NKJV «հանձնարարել»

NRSV, NJB «տալով»

Սա *paratithēmi*- ի ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՄԱՀՄԱՆԱԿԱՆՆ Է: Պողոսը ավետարանի գործը վստահեց Տիմոթեոսին (տես 1 Տիմ. 6:20; 2 Տիմ. 1:14, ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը վստահել էր իրեն տես 2 Տիմ. 1:12), որ նա էլ հանձնի այլ հավատարիմ մարդկանց (տես 2 Տիմ. 2: 2):

Այս տերմինն օգտագործվում է

1. Հիսուսն իրեն ավանդեց Աստծուն, Ղուկ. 23:46
2. հավատացյալներն իրենց հանձնեցին Աստծուն, Գործք 14: 23
3. Պողոսը հավատացյալներին հանձնեց Աստծուն, Գործք 20:32
4. հավատացյալները պետք է հանձնեն նոր սերնդին, 2 Տիմ. 2: 2

- «առաջուց քեզ վերայ եղած մարգարէութիւնների պէս» Տիմոթեոսը ստացավ հոգևոր պարգևներ և մարգարեական հաստատում Լյուստրիայի եկեղեցու կողմից՝ ձեռք դնելով (տես 1 Տիմ. 4:14): Այս արտահայտությունը կարող է նշանակել (1) «պատրաստված է ձեզ համար» (NRSV) կամ (2) «հանգեցրեց ինձ ձեզ» (RSV):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

I. Սա նույնը չէ, ինչ Հին Կտակարանի մարգարեությունը (BDB 611, KB 661; տես Հատուկ Թեմա: Մարգարեություն [Հին Կտակարան]), որն ունի ռաբբիական նշանակություն՝ ստանալու և արձանագրելու ՅԱՀՎԵԻ ներշնչված հայտնությունները (տես Գործք 3: 18,21; Հռ. 16:26): Միայն մարգարեները կարող էին Սուրբ Գիրք գրել:

- A. Մովսեսը կոչվում էր մարգարե (տես 2 Օր. 18: 15-21):
- B. Պատմական գրքեր (Հեսու - Թագավորներ (բացի Հռութից)) կոչվեցին «վաղ մարգարեներ» (տես Գործք 3:24):
- C. Մարգարեները փոխարինեցի քահանայապետին, որպես Աստծուց տեղեկության աղբյուր (տես Եսայիա - Մաղաքիա)
- D. Եբրայերեն Կանոնի երկրորդ բաժինը «Մարգարեները» (տես Մատթ. 5:17; 22:40; Ղուկ. 16:16; 24:25, 27, Հռ. 3:21):

- II. Նոր Կտակարանում մարգարեության գաղափարը կիրառվում է մի քանի տարբեր ձևերով:
- Ա. Հին Կտակարանի մարգարեները և նրանց ներշնչված պատգամը (տես Մատթ. 2:23; 5:12; 11:13; 13:14; Հռ. 1:2)
 - Բ. վերաբերում է անհատին, այլ ոչ թե մարդկանց խմբին (այսինքն, Հին Կտակարանի մարգարեները հիմնականում Իսրայելին են խոսել)
 - Գ. Հովհաննես Մկրտիչը (տես Մատթ. 11:9; 14:5; 21:26; Ղուկ. 1:76) և Հիսուսը, որպես Աստծո Թագավորության քարոզիչներ (տես Մատթ. 13:57; 21: 11, 46; Ղուկ. 4:24; 7:16; 13:33; 24:19): Հիսուսը նաև պնդեց Իր մասին, որ ավելի մեծ է, քան մարգարեները (տես Մատթ. 11:9; 12:41; Ղուկ. 7:26):
 - Դ. Նոր Կտակարանի մյուս մարգարեները
 1. Հիսուսի երկրավոր կյանքը, ինչպես արձանագրված է Ղուկասի Ավետարանում (այսինքն՝ Մարիամի հիշողությունները)
 - ա. Եղիսաբեթը (տես Ղուկ. 1: 41-42)
 - բ. Զաքարիա (տես Ղուկ. 1: 67-79)
 - գ. Սիմեոն (տես Ղուկ. 2: 25-35)
 - դ. Աննա (տես Ղուկ. 2:36)
 2. հեզնական կանխատեսումներ (տես Կայիափա, Հովհ. 11:51)
 - Ե. Ավետարանը հռչակող (ներառված է պարզևների ցանկում, 1 Կոր. 12:28-29; Եփ. 4:11)
 - Զ. Դեռևս շարունակվող պարզև եկեղեցում (տես Մատթ. 23:34; Գործք 13:1; 15:32, Հռ. 12:6; 1 Կոր. 12: 10, 28-29; 13:2; Եփ. 4:11): Երբեմն դա կարող է վերաբերել կանանց (տես Ղուկ. 2:36; Գործք 2:17; 21: 9; 1 Կոր. 11: 4-5):
 - Է. վերաբերվում է «Հայտնություն» վախճանաբանական գրքի մասերին (տես Հայտ. 1: 3; 22: 7,10,18,19)
- III. Նոր Կտակարանի մարգարեները
- Ա. Նրանք չեն տալիս ներշնչված հայտնություն միևնույն իմաստով, ինչպես դա անում էին Հին Կտակարանի մարգարեները (այսինքն, Աստվածաշունչը): Այս պնդումը հնարավոր է «հավատք» տերմինի շնորհիվ (այսինքն, ավարտված ավետարան) և օգտագործվում է Գործք 6:7; 13: 8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Ֆիլ. 1:27; Հուդա 3,20.
- Այս գաղափարը պարզ է դառնում Հուդա 3 ամբողջ արտահայտությունից «որ մրցեք սրբերին միանգամ ավանդված հավատքով»: «Միանգամ ավանդված» հավատքը վերաբերվում է քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, հասկացություններին, աշխարհայացքների ուսմունքներին:
- Ընդգծված «միանգամ ավանդված» արտահայտությունը հանդիսանում է աստվածաշնչյան հիմք՝ աստվածաբանորեն սահմանափակելով Նոր Կտակարանի գրվածքների ներշնչվածությունը և թույլ չտալով, որ հետագայում այլ գրվածքները հայտնություն համարվեն (տես Հատուկ Թեմա: Ներշնչանք):
- Նոր Կտակարանում կան շատ «մոխրագույն գոնա»-ներ, որոնք անորոշ են, անհաստատ (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն (աստվածաշնչյան պարադոքս)), սակայն հավատացյալները հավատքով պնդում են, որ այն ամենը ինչ «անհրաժեշտ է» հավատքի և կյանքի ապրելակերպի համար կա Նոր Կտակարանում բավարար հստակությամբ: Այս գաղափարը բնութագրվել է այսպես կոչված «հայտնության եռանկյունի» անունով.
1. Աստված Իրեն հայտնել է ժամանակ-տարածություն պատմության մեջ (ՀՄՅՆՈՒԹՅՈՒՆ):

2. Նա ընտրել է որոշ մարդկանց, որպեսզի նկարագրեն և բացատրեն Իր գործողությունները (ՆԵՐՇՆՉԱՆՔ):

3. Նա Իր Հոգին տվեց՝ մարդկանց մտքերն ու սրտերը բացելու համար, որպեսզի հասկանան այդ գրվածքները, ոչ թե բացարձակ և վերջնական տեսքով, այլ արժանահավատ փրկության և արդյունավետ քրիստոնեական կյանքի համար (ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ, տես Հատուկ Թեմա: Լուսավորում): Բանն այն է, որ ներշնչումը սահմանափակվում է Սուրբ Գրքի գրողներով: Չկան հեղինակային գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք բոլոր ճշմարտությունները՝ Աստծուն ճիշտ արձագանքելու համար: Այս ճշմարտությունը լավագույնս երևում է, երբ համեմատում ենք աստվածաշնչյան գրողներին և տեսնում, թե որքան համահունչ են, սակայն անկեղծ և աստվածավախ հավատացյալները անհամաձայնության մեջ են լինում երբեմն: Ոչ մի ժամանակակից գրող կամ քարոզիչ չունի այն աստվածային առաջնորդության մակարդակը, որն ունեին Սուրբ Գրքի հեղինակները:

Բ. Նոր Կտակարանի մարգարեները ինչ-որ ձևով նման են Հին Կտակարանի մարգարեներին:

1. գալիք իրադարձությունների կանխատեսում (տես Պողոս, Գործք 27:22; Ագաբոս, Գործք 11:27-28; 21:10-11; այլ անանուն մարգարեներ, Գործք 20:23)

2. դատավճիռ կայացնել (տես, Պողոս, Գործք 13:11; 28:25-28)

3. խորհրդանշական գործողություններ, որոնք վառ կերպով ներկայացնում են իրադարձությունը (տես Ագաբոս, Գործք 21:11)

Գ. Նրանք քարոզում են Ավետարանի ճշմարտությունները, երբեմն կանխատեսելի եղանակներով (տես Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), բայց սա առաջնային ֆոկուսը չէ: 1 Կորնթացիսում մարգարեանալը հիմնականում կապված է ավետարանի հռչակումով (տես 1 Կոր. 14: 24,39):

Դ. Դրանք Սուրբ Հոգու ժամանակակից միջոցներն են, բացահայտելու Աստծո ճշմարտության ժամանակակից և գործնական կիրառությունները յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի համար (տես 1 Կոր. 14:3):

Ե. Նրանք բավականին ակտիվ գործում էին «Պողոս»-յան եկեղեցիների վաղ ժամանակաշրջանում (տես 1 Կոր. 11:4-5; 12:28,29, 13:2,8,9; 14:1,3,4,5,6,22, 24,29,31,32,37,39; Եփ. 2:20; 3: 5; 4:11; 1 Թեա. 5:20) և հիշատակված են *Didache* (գրված առաջին կամ երկրորդ դարի վերջին, տարեթիվը անորոշ է) և Հյուսիսային Աֆրիկայի երկրորդ և երրորդ դարերի Մոնտանիզմում:

IV. Արդյո՞ք Նոր Կտակարանի պարզները դադարել են:

Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Ճիշտ եզրահանգման գալու համար, նախ և առաջ պետք է հասկանալ հոգևոր պարզների նպատակը: Արդյո՞ք դրանք մտադրված են եղել Ավետարանի ճշմարտության վաղ քարոզչությունն իրականացնելու համար, հաստատել ավետարանի նախնական քարոզչությունը, թե՞ այսօր էլ շարունակում են միջոց հանդիսանալ ծառայության մեջ, թե եկեղեցում և թե կորսված աշխարհին հասնելու համար: արդյոք նրանք շարունակելու են եկեղեցի ծառայել իրեն եւ կորցրած աշխարհին:

Բ. Որտե՞ղ պետք է փնտրել այս հարցի պատասխանը: Եկեղեցու պատմության մեջ թե՞ միանշանակ Նոր Կտակարանում: Նոր Կտակարանում որևէ նշում չկա, որ հոգևոր պարզները ժամանակավոր էին: Նրանք, ովքեր փորձում են օգտագործել 1 Կոր. 13: 8-

13-ը այս հարցը հիմնավորելու համար, չարաշահում են հեղինակի մտադրությունը տվյալ հատվածի վերաբերյալ, որը հաստատում է, որ բացի սիրուց ամեն բան պետք է անցնի և վերջանա:

Գ. Ես հակված եմ ասելու, որ քանի որ Նոր Կտակարանը, ոչ թե եկեղեցու պատմությունն է գերագույն իշխանությունը, ապա հավատացյալները պետք է հաստատեն, որ պարզները շարունակվում են: Սակայն, կարծում եմ, մշակույթը ազդում է մեկնաբանության վրա: Որոշ հստակ տեքստեր այլևս կիրառելի չեն (այսինքն՝ սուրբ համբույրը, կանայք գլուխները ծածկելը, տնային եկեղեցիները և այլն): Եթե մշակույթը ազդում է տեքստերի վրա, ապա ինչու՞ ոչ եկեղեցու պատմությունը:

Դ. Պարզապես սա այն հարցն է, որին չի կարելի որոշակիորեն, հստակ պատասխանել: Որոշ հավատացյալներ կողմնակից են այն բանի, որ պարզները «դադարել են» իսկ ոմանք՝ ոչ: Այս ոլորտում, ինչպես շատ թարգմանչական հարցերում, հավատացյալի սիրտն է բանալին: Նոր կտակարանը երկիմաստ է և մշակույթային: Դժվարն այն է, թե ինչպես որոշել, որ տեքստերն են ազդում մշակույթի / պատմության վրա, իսկ որոնք են բոլոր ժամանակների և բոլոր մշակույթների համար (տես Fee and Stuart's *How to Read the Bible for All Its Worth*, էջ 14-19 և 69-77): Ահա ազատության և պատասխանատվության քննարկումները, որոնք գտնվում են Հռ. 14: 1-15: 13 և 1 Կոր. 8-10 շատ կարևոր են: Թե ինչպես ենք մենք պատասխանում այս հարցին ունի կարևոր նշանակություն երկու պատճառներով,

1. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է հավատքով քայլի իր ունեցած լույսի ներքո: Աստված նայում է մեր սրտին և դրդապատճառներին:

2. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա այլ հավատացյալներին քայլել իրենց հավատքի հասկացողության մեջ: Աստվածաշնչյան սահմաններում պետք է հանդուրժողականություն լինի: Աստված ուզում է, որ մենք սիրենք միմյանց, ինչպես որ Նա է սիրում:

Ե. Ամփոփելով ասենք, որ քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է, ոչ թե կատարյալ աստվածաբանություն: Աստծո հետ հարաբերությունը, որը ազդում է մեր փոխհարաբերությունների վրա ուրիշների հետ, ավելի կարևոր են, քան հստակ տեղեկատվությունը կամ հավատքի կատարելությունը:

▪ **«պատերազմիս բարի պատերազմը»** Հաճախ քրիստոնեական կյանքը նկարագրվում է որպես մարզական իրադարձություն կամ պատերազմ, ինչպես այստեղ: Տիմոթեոսին վերաբերող մարզաբեությունները նրան հնարավորություն տվեցին շարունակաբար և քաջաբար պատերազմել Պողոսի նման բարի պատերազմը (ՆԵՐԿԱ ԶԵԶՈՔ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, տես 1 Տիմ. 6:12; 2 Տիմ. 2:3-4; 4: 7; 2 Կոր. 10:3-6; Եփ. 6:10-17):

1:19 «Ունենալով հաւատք եւ բարի խղճմտանք» Լավ պայքարը կամ բարի պատերազմը ներառում է ունենալ և շարունակելով ունենալ (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ)

1. հավատք
2. բարի խղճմտանք

Դրանցից երկուսը հիշատակվում են 1 Տիմ. 1: 5: Կրկին հիշատակվում են, քանի որ եկեղեցու որոշ անդամների հավատքը նավարելության էր ենթարկվել: Հավատքը կարող էր վերաբերել կամ (1) քրիստոնեական վարդապետությանը կամ (2) քրիստոնեական ապրելակերպին: Երկուսն էլ վճռական են:

2 Տիմ. 2:17-ից մենք սովորում ենք, որ Հիմնուն ուներ վարդապետական շեղում (հաստատելով, որ հարությունը արդեն տեղի էր ունեցել) և անաստվածության (տես 2 Տիմ. 2:16): Մյուս մարդու անունը Ադեքսանդրոս էր, չի կարող լինել 2 Տիմ. 4:14 և Գործք 19- ի դարբինը, քանի որ նա ավետարանի թշնամին էր: Իրենց ճշմարտության և աստվածապաշտության մերժումը ոչ թե խաբեության պատճառով էր, այլ հոժարակամ մերժում էր (*apōtheō* –ի ԱՕՐԻՄՍ ՉԵԶՈՔ [deponent] ԴԵՐԲԱՅ, Գործք 7:39; 13:46; Հռ. 11:1): Տես ծանուցումներ խղճի մասին 1 Տիմ.1:5:

▪ **«որ մի քանիսը դեն գցելով հաւատքումը և նաւակոծութիւն քաշեցին»** Սա դժվար և հակասական թեմա է: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ \(APHISTEMI\)](#) 1 Տիմ. 4: 1: 1 Տիմոթեոսում կան հավատորացության բազմաթիվ օրինակներ (տես 1 Տիմ. 1:19; 4: 1-2; 5: 14-15; 6: 9-10,21; նաև 2 Տիմ. 2: 16-18; 3: 1-8,13; 2 Պետ. 2: 1, 20-21, Հուդա 4):

Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ \(APHISTEMI\)](#) 1 Տիմ. 4:1.

1:20 «մատնեցի սատանային» Սա շատ բարդ արտահայտություն է: Աստվածաշնչյան նախադեպեր են

1. Աստված օգտագործում է սատանային՝ Հորին փորձելու համար (Հոբ 2:6)
2. Հոգին Հիսուսին տանում է՝ սատանայի կողմից փորձվելու (Մարկ. 1:12)
3. Պողոսը հավատացյալին մատնում է սատանային, նրան մաքրելու համար, որպեսզի ի վերջո վերականգնվի (1 Կոր. 5:5)

Ուշադրություն դարձրեք 1 Տիմ. 1:20-ում նշված նպատակին, որը նրանց ուսուցանում է, որ չհայհոյեն: Այն կարող է վերաբերել եկեղեցու հաղորդակցությունից հավատացյալի հեռացմանը: Աստծո ժամանակավոր խրատը միշտ էլ փրկագնող է: Աստված օգտագործում է սատանային՝ մարդկանց փորձելու համար (տես Ծննդոց 3; Հոբ 1-2; Զաք. 3): Ինչ որ առումով, սատանան Աստծո գործիքն է: Դա Սատանայի ապստամբությունն է Աստծո դեմ, նրա անկախանալու ցանկությունը, որը նրան չար է դարձնում, ոչ թե նրա գայթակղիչ պարտականությունները: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԱՏԱՆԱ](#) 1 Տիմ. 3: 6:

Այս արտահայտության օգտագործումը ենթադրում է, որ հույս կա այս կեղծ ուսուցիչների և նրանց հետևորդների համար: Այնուամենայնիվ, 1 Տիմ. 4: 2 նմանատիպ փոխաբերություն է օգտագործվում կեղծ ուսուցիչների համար՝ ենթադրելով, որ նրանց համար հույս չկա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչու՞ է Պողոսը պնդում իր առաքյալությունը Տիմոթեոսին ուղված հովվական նամակում:
2. Ի՞նչն էր Եփեսոսի հերետիկոսությունը:

3. Ինչպե՞ս են քրիստոնյաները վերաբերվում Մովսեսական Օրենքին:
4. Ինչպե՞ս էր Պողոսը վերաբերվում իր ծառայությանը: (հ.12)
5. Ինչու՞ է նա այդքան հաճախ կրկնում իր վկայությունը: (1 Տիմ. 1:16)
6. Որո՞նք էին Տիմոթեոսի պատվերները: (1 Տիմ. 1:18)
7. Արդյոք Հիմենոսը և Ադեքսանդրոսը շնորհքից ընկան: (1 Տիմ. 1:19)
8. Ի՞նչ է «բարի խղճմտանքը»: (1 Տիմ. 1:19)
9. Ի՞նչ է նշանակում որևէ մեկին հանձնել Սատանային: (1 Տիմ. 1:19)

1 ՏԻՄՈԹԵՈՍ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հրահանգներ աղոթքի մասին (2:1-3:1ա)	Աղոթեք բոլոր մարդկանց համար	Պաշտամունքի արարողակարգը	Եկեղեցու պաշտամունքը	Պատարագային աղոթք
2:1-7	2:1-7 Տղամարդիկ և կանայք Եկեղեցում	2:1-7	2:1-7	2:1-7
2:8-3:1	2:8-15	2:8-15	2:8-15	2:8 Կանայք պաշտամունքին 2:9-15

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել ըստ հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության [ուղեցույց է](#), որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի թո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակամերը/թեմաները: Համեմատեք ձեր ենթակամերը վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ

Ա. Այս ամբողջ հատվածը, 1 Տիմ. 2:1- 3:13, խոսում է հասարակական պաշտամունքի և կազմակերպչական գործերի մասին

1. հանրային պաշտամունքը (1 Տիմ. 2: 1-15)
 - ա. տղամարդկանց դերը (1 Տիմ. 2: 1-8)
 - բ. կանանց դերը (1 Տիմ. 2: 9-15)
2. եկեղեցական կառույց (1 Տիմ. 3:1-13)
 - ա. հովիվ (1 Տիմ. 3:1-7)

- բ. սարկավագ (1 Տիմ. 3: 8-10,12-13)
- գ. կին օգնականները (1 Տիմ. 3:11)

- Բ. Հավատացյալների աղոթքների ուշադրության կենտրոնացումը «բոլորի» փրկությունն (տես 1 Տիմ. 2: 1): Աստծո ցանկությունը «բոլորի» փրկությունն է (տես Հովհ. 3:16; 1 Տիմ. 2: 4; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9): Հիսուսը «բոլորի համար» վճարեց մեղքի պատիժը (տես Հռ. 5: 18-19): Ինչ հրաշալի ընդգրկում:
- Գ. Այս բաժինը կարող է լինել վաղ եկեղեցական ձեռնարկ, որը նախատեսված է օգնելու եկեղեցիների կազմակերպման և ղեկավարման ուղղությամբ (տես 1 Տիմ. 3: 14-15):
- Դ. Մեկնաբանության այս հատվածի ամենադժվար մասը 1 Տիմ. 2: 8-15: Դժվար չէ հասկանալ, բայց դժվար է իմանալ, թե ինչպես կիրառել այն մեր մշակութային իրավիճակում: Դա այդքան հեշտ է Նոր Կտակարանի մասերը չհամաձայնեցնել «մշակույթի» հետ և, հետևաբար, ասել, որ մեզ համար հարմար չէ այն: Ես շատ եմ դժվարանում հստակ ներշնչված տեքստը պիտակավորել որպես մշակութային, մի քանի պատճառներով
 1. Ո՞վ էմ ես, որ ժխտեմ Աստվածաշունչը:
 2. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ես չափազանց տարված չեմ իմ սեփական մշակույթով (անձնական պայմանավորվածություն, կապված պատմական պայմանների հետ):
 3. Արդյոք կա տեքստային նշան, իդիոմա, ցուցիչ, որը նշում է այն, ինչը կարող է դեմ լինել մշակույթին, և որը Աստծո կամքն է բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիների համար:

Նախ, տեքստային նշաններ չկան: Երկրորդ, ես պետք է թույլ տամ, որ ամբողջ Սուրբ Գիրքը անդրադառնա կոնկրետ հարցին: Եթե Սուրբ Գիրքը միասնական է թեմայի շուրջ, այն պետք է լինի համընդհանուր ճշմարտություն: Եթե Աստվածաշունչը կարծես մի քանի տարբերակ կամ իրավիճակ է տալիս, ուրեմն մեկնաբանելիս ես պետք է որոշ ազատություն թույլ տամ (տես, *How to Read the Bible For All Its Worth* by Fee and Stuart, էջ 70-76):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 2:1-7
¹Արդ աղաչում եմ, ամենից առաջ աղօթք անել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամեն մարդկանց համար, ²Թագաւորների եւ ամեն իշխանաւորների համար. Որ խաղաղ եւ հանդարտ կեանք վարենք, բոլոր աստուածապաշտութիւնով եւ սրբութիւնով: ³Որովհետեւ սա բարի եւ ընդունելի է մեր Փրկիչ Աստուծոյ առաջին, ⁴Որ կամենում է որ ամեն մարդիկ փրկուին, եւ ճշմարտութեան գիտութեանը գան: ⁵Որովհետեւ մէկ Աստուած կայ, եւ մէկ միջնորդ Աստուծոյ եւ մարդկանց մէջ Քրիստոս Յիսուս մարդը, ⁶Որ իր անձը ամենի համար փրկանք տուաւ, որ վկայութիւն լինի իր ժամանակներումը: ⁷Որին ես քարոզիչ եւ առաքեալ կարգուեցայ (ճշմարիտն եմ ասում, սուտ չեմ խօսում). հեթանոսների վարդապետ՝ հաւատքի եւ ճշմարտութեան մէջ:

2: 1 «ամենից առաջ» Այս հունարեն իդիոման նշանակում է «առաջին կարևորության»: Կոնտեքստը պնդում է, որ սա նշանակում է վերահսկել և սահմանափակել կեղծ ուսուցիչների ազդեցությունը:

- **«աղոթք անել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն»** Մա աղոթքի համար չորս բառերի շարք է (Փիլ. 4: 6-ը ունի երեքը, Եփ. 6:18-ը՝ երկուսը): Պողոսն ընդգծում է, որ աղոթք պետք է բարձրացվի բոլոր մարդկանց համար, հատկապես իշխանության մեջ եղողների: Եփ. 6:18 բոլորի համար աղոթելու նույն շեշտը սահմանափակվում է հավատացյալներով, բայց այստեղ այն ունիվերսալ է: «Խնդրանքներ» (*enteuxis*) տերմինը հանդիպում է միայն այստեղ և 1 Տիմ. 4: 5:
- **«ամեն մարդկանց համար»** 1-7 համարներում «բոլոր, ամեն» տերմինը հանդիպում է հինգ անգամ, ինչը ցույց է տալիս թե մեր աղոթքների չափը և թե Աստծո սերը: Ոմանք շեշտը դնում են բոլոր մարդկանց վրա, որպես արձագանք կեղծ ուսուցիչների բացառիկության:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲԱՐԵՆՈՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

- I. Ներածություն
 - Ա. Աղոթքը կարևոր է Հիսուսի օրինակով
 1. անձնական աղոթք, Մարկ. 1:35; Ղուկ. 3:21; 6:12; 9:29; 22: 31-46
 2. տաճարի մաքրումը, Մատթ. 21:13; Մարկ. 11:17; Ղուկ. 19:46
 3. աղոթքի օրինակ, Մատթ. 6: 5-13; Ղուկ. 11: 2-4
 - Բ. Աղոթքը դրսևորում է մեր հավատքը՝ անձնական, հոգատար Աստծո հանդեպ, որը ներկա է, պատրաստակամ և կարող է գործել մեր և ուրիշների օգտին մեր աղոթքների միջոցով:
 - Գ. Աստված անձամբ Ինքն իրեն սահմանափակել է գործելու Իր զավակների աղոթքների միջոցով շատ բնագավառներում (տես Հակ. 4: 2)
 - Դ. Աղոթքի հիմնական նպատակը մեր հաղորդակցությունն ու ժամանակն է Սուրբ Երրորդության հետ:
 - Ե. Աղոթքի նյութը ինչ որ բան կամ ինչ որ մեկն է, որը մտահոգում է հավատացյալներին: Մենք կարող ենք մեկ անգամ աղոթել և հավատալ կամ էլ կրկին ու կրկին աղոթել, երբ մի միտք կամ մտահոգություն է վերադառնում:
 - Զ. Աղոթքը կարող է ներգրավել մի քանի տարրեր
 1. գովասանք և երկրպագության Սուրբ Երրորդությանը
 2. շնորհակալություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և մեր կարիքները հոգալու համար
 3. մեր մեղքերի խոստովանությունը, ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի
 4. խնդրանք մեր կարիքների կամ ցանկությունների համար
 5. բարեխոսություն ուրիշների կարիքների համար
 - Է. Բարեխոսական աղոթքը խորհուրդ է: Աստված ավելի շատ է սիրում նրանց, ում համար մենք աղոթում ենք քան մենք, բայց և այնպես մեր աղոթքները հաճախ փոխում են փոփոխությունը, պատասխանը կամ կարիքը, ոչ միայն մեր մեջ, այլև նրանց մեջ:
- II. Աստվածաշնչյան նյութը
 - Ա. Հին Կտակարան
 1. Բարեխոսական աղոթքի որոշ օրինակներ.
 - ա. Աբրահամը խնդրում է Սողոմի համար, Ծննդ. 18: 22
 - բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար
 - (1) Ելից 5: 22-23
 - (2) Ելից 32: 9-14,31-35
 - (3) Ելից 33: 12-16

- (4) Ելից 34:9
- (5) 2 Օր. 9: 18,25-29
- գ. Սամուելը աղոթում է Իսրայելի համար
 - (1) 1 Թագ. 7: 5-6, 8-9
 - (2) 1 Թագ. 12: 16-23
 - (3) 1 Թագ. 15:11
- դ. Դավիթը իր երեխայի համար, 2 Թագ.12: 16-18
- 2. Աստված փնտրում է բարեխոսների, Եսայիա 59:16
- 3. Հայտնի, չխոստովանված մեղքը կամ չապաշխարած կեցվածքն ազդում է մեր աղոթքների վրա
 - ա. Սաղմոս 66:18
 - բ. Առակաց 28:9
 - գ. Եսայիա 59: 1-2; 64:7
- Բ. Նոր Կտակարան
 - 1. Որդու և Հոգու բարեխոսական ծառայությունը
 - ա. Հիսուսը
 - (1) Հռոմեացիս 8:34
 - (2) Եբրայեցիս 7:25
 - (3) 1 Հովհ. 2: 1
 - բ. Սուրբ Հոգին, Հռոմեացիս 8:26-27
 - 2. Պողոսի բարեխոսական ծառայությունը
 - ա. Աղոթում է հրեաների համար
 - (1) Հռոմեացիս 9: 1
 - (2) Հռոմեացիս 10: 1
 - բ. Աղոթում է եկեղեցիների համար
 - (1) Հռոմեացիս 1:9
 - (2) Եփեսացիս 1:16
 - (3) Փիլիպեցիս 1: 3-4,9
 - (4) Կորոսացիս 1:3,9
 - (5) 1 Թեսաղոնիկեցիս 1: 2-3
 - (6) 2 Թեսաղոնիկեցիս 1:11
 - (7) 2 Տիմոթեոս 1: 3
 - (8) Փիլիմոն 4
 - գ. Պողոսը ինդրեց եկեղեցիներին աղոթել իր համար
 - (1) Հռոմեացիս 15:30
 - (2) 2 Կորնթացիս 1:11
 - (3) Եփեսացիս 6:19
 - (4) Կորոսացիս 4: 3
 - (5) 1 Թեսաղոնիկեցիս 5:25
 - (6) 2 Թեսաղոնիկեցիս 3: 1
 - 3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը
 - ա. Աղոթք միմյանց համար
 - (1) Եփեսացիս 6:18
 - (2) 1 Տիմոթեոս 2: 1

- (3) Հակոբոս 5:16
- բ. Աղոթքի խնդրանք հատուկ խմբերի համար
 - (1) մեր թշնամիների, Մատթ. 5:44
 - (2) քրիստոնյա գործընկերների, Եբրայեցիս 13:18
 - (3) ղեկավարների, 1 Տիմոթեոս 2: 2
 - (4) հիվանդների, Հակոբոս 5:13-16
 - (5) գայթակղվածների, հետ կանգնողների, 1 Հովհ. 5:16

III. Պատասխանված աղոթքի պայմանները

Ա. Մեր հարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ

1. Կենալ Նրանում, Հովհ. 15:7
2. Նրա անունով, Հովհ. 14:13,14; 15:16; 16: 23-24
3. Հոգու մեջ, Եփ. 6:18; Հուդա 20
4. Աստծո կամքի համաձայն, Մատթ. 6:10; 1 Հովհ. 3:22; 5: 14-15

Բ. Շարժառիթները

1. Չերկմտելով, Մատթ. 21:22; Հակ. 1:6-7
2. Խոնարհություն և ապաշխարություն, Ղուկաս 18: 9-14
3. չար կերպով չխնդրել, Հակ. 4:3
4. Եսասիրություն, Հակ. 4: 2-3

Գ. Այլ ասպեկտներ

1. Հաստատակամություն, համբերություն
 - ա. Ղուկաս 18:1-8
 - բ. Կողոսացիս 4: 2
2. Շարունակ խնդրել
 - ա. Մատթեոս 7: 7-8
 - բ. Ղուկաս 11: 5-13
 - գ. Հակոբոս 1:5
3. Ընտանիքում անհամերաշխություն, 1 Պետրոս 3:7
4. Ազատ հայտնի մեղքից
 - ա. Սաղմոս 66:18
 - բ. Առակաց 28:9
 - գ. Եսայիա 59: 1-2
 - դ. Եսայիա 64:7

IV. Աստվածաբանական եզրակացությունը

Ա. Ինչպիսի արտոնություն: Ինչպիսի հնարավորություն: Ինչ պարտականություն և պատասխանատվություն

Բ. Հիսուսը մեր օրինակն է: Հոգին մեր ուղեցույցն է: Հայրը անհամբեր սպասում է:

Գ. Դա կարող է փոխել ձեզ, ձեր ընտանիքը, ձեր ընկերներին և աշխարհը:

2: 2 «Թագաւորների եւ ամեն իշխանաւորների համար» Աստվածաշունչը չի սովորեցնում թագավորների աստվածային իրավունքը, բայց այն սովորեցնում է աստվածային կամքը ղեկավարող իշխանության համար (տես Հռ. 13: 1,2): Աստվածաբանական խնդիրն այն չէ, թե մենք համաձայն ենք մեր կառավարության հետ, կամ թե արդյոք մեր կառավարությունը արդար է: Հավատացյալները պետք է աղոթեն իշխանավորների համար, որովհետեւ նրանք Աստծո կամքի մեջ են այս մեղավոր աշխարհում: Հավատացյալները Հռ.13:1,2-ից գիտեն, որ բոլոր իշխանությունները տրվում են Աստծո

կողմից, հետևաբար, որպես Քրիստոսի հետևորդներ, մենք հարգում ենք այն: Այս հայտարարությունը ամենաուժեղն է, երբ հասկանում եք, որ Պողոսը խնդրում է հավատացյալներին աղոթել Ներոնի պես իշխանավոր առաջնորդի համար:

▪ «**իշխանավոր**» Այս բառը *hyperochē* է: Տես Հատուկ Թեմա: Պողոսն Օգտագործում է *Huper* Բարդ Բառերը 1 Տիմ. 1:14.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Սահմանումը - Կառավարությունը դա մարդկային հասարակության մեջ ձևավորված ներքին համակարգ է, որի նպատակն է հայթայթել և պաշտպանել նրա ֆիզիկական կարիքները (տես Ծննդ. 4 և 11): Մարդիկ սոցիալական արարածներ են, նույնիսկ մինչև անկումը (տես Ծննդ. 2:18): Ընտանիքները, ցեղերը, ազգերը կազմում են հասարակություն, համայնք:

Բ. Նպատակը – Աստծո կամքն էր, որ լինել կարգ ու կանոն, և ոչ թե անարխիա:

1. Մովսեսական օրենսդրությունը, մասնավորապես Դեկալոգը, Աստծո կամքն է մարդկության համար հասարակության մեջ: Այն հավասարակշռության մեջ է պահում երկրպագությունը և կյանքը:

2. Մուրբ Գիրքը չի առաջարկում կամ պաշտպանում որևէ իշխանության ձև, չնայած հին Իսրայելի թեոկրատիան երկնքում ակնկալվող ձևն է: Ոչ ժողովրդավարությունը, ոչ էլ կապիտալիզմը աստվածաշնչյան ճշմարտությունն չէ: Քրիստոնյաները պետք է համապատասխան կերպով գործեն իշխանության ցանկացած համակարգում: Քրիստոնյայի նպատակը ավետարանչությունն ու ծառայությունն է, ոչ թե հեղափոխությունը: Բոլոր իշխանությունները անցողիկ են:

Գ. Մարդկային իշխանության ծագումը

1. Հռոմեական կաթոլիկությունը պնդել է, որ մարդկային իշխանությունը ծագում ունի, նույնիսկ մինչև անկումը: Արիստոտելը, կարծես թե, առաջին անգամ է առաջադրել այս նախադրյալը: Նա ասում է, որ «մարդը քաղաքական կենդանի է», և դա նշանակում է, որ իշխանությունը «գոյություն ունի լավ կյանքի խթանման համար»:

2. Բողոքականությունը, հատկապես Մարտին Լյութերը, պնդել է, որ մարդկային իշխանությունը հիմք է դրվել անկման ժամանակ: Նա այն անվանում է «Աստծո ձախ ձեռքի թագավորությունը»: Նա ասում էր, որ «Վատ մարդկանց վերահսկելու Աստծու ճանապարհը՝ վատ մարդկանց վերահսկելն է»:

3. Կարլ Մարքսը պնդել է, որ իշխանությունն այն միջոցն է, որով մի քանի էլիտա վերահսկում է մարդկային զանգվածները: Նրա համար իշխանությունն ու կրոնը նույն դերը են խաղում:

II. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՆ ՆՅՈՒԹ

Ա. Հին Կտակարան

1. Իսրայելը այն օրինակն է, որը կօգտագործվի երկնքում: Հին Իսրայելում ՅԱՀՎԵՆ էր թագավորը: Թեոկրատիա տերմինը օգտագործվում է նկարագրելու Աստծո ուղղակի իշխանությունը, ղեկավարումը (տես 1 Թագ. 8: 4-9):

2. Աստծո գերիշխանությունը մարդկային իշխանությունների մեջ կարելի է

- հստակ տեսնել Նրա նշանակման մեջ
- ա. բոլոր թագավորները, Դան. 2:21; 4: 17,24-25
 - բ. Մեսիական թագավորությունը, Դան. 2: 44-45
 - գ. Նաբուգոդոնոսոր (նեո-բաբելոնյան), Եր. 27:6; Դան. 5:28
 - դ. Կյուրոս II (Պարսից), 2 Մնաց. 36:22; Եզրաս 1:1; Ես. 44:28; 45: 1
3. Աստծո ժողովուրդը պետք է հնազանդ և հարգալից լինի նույնիսկ գրաված և զավթիչ իշխանություններին;
- ա. Դանիել 1-4, Նաբուգոդոնոսոր (նեո- բաբելոնյան)
 - բ. Դանիել 5, Բաղդասար (նեո- բաբելոնյան)
 - գ. Դանիել 6, Դարեհ (Պարսից)
 - դ. Եզրաս և Նեեմիա (Պարսից)
4. Վերականգնված Հուդան պետք է աղոթեր Կյուրոսի և նրա սերունդների թագավորության համար
- ա. Եզրաս 6:10; 7:23
 - բ. Հրեաները պետք է աղոթեին քաղաքացիական իշխանության, Mishnah, Avot 3: 2

Բ. Նոր Կտակարան

1. Հիսուսը հարգում էր մարդկային իշխանություններին
- ա. Մատթ.17: 24-27, նա վճարեց տաճարի հարկը (կրոնական և քաղաքացիական իշխանությունները համարվում էին մեկ, տես 1 Պետ. 2:17)
 - բ. Մատթ.22: 15-22; Մարկ. 12:13-17; Դուկ.20: 20-26, Նա պաշտպանեց կայսրին հարկ տալը և այդպիսով հարգանք ցուցաբերեց հռոմեական քաղաքացիական իշխանության հանդեպ
 - գ. Հովհ.19:11, Աստված թույլ է տալիս, որ քաղաքացիական իշխանությունը գործի
2. Պողոսի խոսքերը մարդկային իշխանությունների համար
- ա. Հռ.13:1-5, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին, քանի որ դրանք հաստատվում են Աստծո կողմից
 - բ. Հռ.13:6-7, հավատացյալները պետք է հարկ վճարեն և պատվեն քաղաքացիական իշխանություններին
 - գ. 1 Տիմ. 2: 1-3, հավատացյալները պետք է աղոթեն քաղաքացիական իշխանությունների համար
 - դ. Տիտոս 3: 1, հավատացյալները պետք է ենթարկվեն քաղաքացիական իշխանություններին
3. Պետրոսի խոսքերը մարդկային իշխանությունների համար
- ա. Գործք 4: 1-31; 5:29, Պետրոսն ու Հովհաննեսը Սինեդրիոնի առաջ (սա ցույց է տալիս քաղաքացիական անհնազանդության աստվածաշնչյան նախադեպը)
 - բ. 1 Պետ. 2: 13-17, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին՝ հասարակության բարօրության և ավետարանչության համար
4. Հովհաննեսի խոսքերը մարդկային իշխանությունների համար
- ա. Հայտ.17, Բաբելոնի պռոնիկը աջակցում է մարդկային իշխանության,

որը կազմակերպված է և գործում է Աստուծոց հեռու

բ. Հայտ.18, Բաբելոնի պոռնիկը կործանվում է

III. ԱՄՓՈՓԻՉ ՄՏՔԵՐ

- Ա. Մարդկային իշխանությունը (ընկած աշխարհում) դրվում է Աստծո կողմից: Սա «թագավորների աստվածային իրավունքը» չէ, այլ իշխանության աստվածային խնդիրը (այսինքն՝ կարգ ու կանոն և ոչ թե քաոս): Ոչ մի կառավարման ձև մյուսից առավել չէ:
- Բ. Դա հավատացյալների կրոնական պարտականությունն է՝ հնազանդվել և աղոթել քաղաքացիական իշխանությունների համար:
- Գ. Հավատացյալները պատշաճ կերպով պետք է պաշտպանեն մարդկային իշխանություններին՝ հարկեր վճարելով:
- Դ. Մարդկային իշխանությունները կարգ ու կանոն հաստատելու և պահպանելու համար են: Նրանք Աստծո ծառաներն են այս գործի կատարման համար:
- Ե. Մարդկային իշխանությունը վերջնական և գերագույն համակարգը չէ: Այն սահմանափակված է իր հեղինակությամբ: Հավատացյալները պետք է գործեն իրենց խղճի համեմատ և չկատարեն իշխանությունների պահանջները, եթե դրանք անցնում են Աստծո դրած սահմանները: Ինչպես Օգոստինոսն է պնդել *The City of God* գրքում, ասելով, որ մենք երկու պետության քաղաքացիներ ենք, մեկը ժամանակավոր, իսկ մյուսը՝ հավիտենական (տես Փիլ.3:20): Մենք պատասխանատվություն ունենք երկուսում էլ, բայց Աստծո թագավորությունն է գերագույնը: Աստծո հանդեպ մեր պատասխանատվությունը թե անհատական է, և թե ընդհանուր:
- Զ. Մենք պետք է խրախուսենք հավատացյալներին ժողովրդավարական համակարգում, ակտիվորեն մասնակցելու կառավարության գործընթացին և հնարավորության դեպքում իրականացնել Սուրբ Գրքի ուսմունքները:
- Է. Սոցիալական փոփոխությունը պետք է նախորդի անհատի դարձի գալուն: Իշխանության մեջ գոյություն չունի տևական վախճանաբանական հույս: Բոլոր մարդկային իշխանությունները, թեև Աստծո կամքով է և օգտագործում է Աստծո կողմից, հանդիսանում են մեղավոր համակարգ առանց Աստծո: Այս գաղափարը արտահայտվում է Հովհաննեսի «աշխարհ» տերմինի օգտագործման մեջ (տես 1 Հովհ. 2:15-17):

▪ **«Որ խաղաղ եւ հանդարտ կեանք վարենք»** Սա կարծես նշանակում է «խաղաղ»՝ «արտաքին փորձություններից ազատ» իմաստով և «հանգիստ»՝ «ներքին անկարգություններից ազատ» իմաստով: Հավատացյալները պետք է իրենց հավատքը դրսևորեն հանգիստ ապրելակերպով, ինչը դժվար է դժբախտությունների և շփոթության ժամանակներում: Այս կեղծ ուսուցիչները խափանել էին Եփեսոսի տնային եկեղեցիների խաղաղությունն ու ուրախությունը: Պողոսը միևնույն խորհուրդը տվեց Թեսաղոնիկեի եկեղեցուն, որը խափանվել էր նախանձախնդիր, վախճանաբանական տարաձայնության շնորհիվ (տես 1 Թես. 4:11; 2 Թես. 3:12): Ի դեմս եկեղեցու անկարգությունների՝ աղոթեք և ապրեք հանդարտությամբ, աստվածային կյանքով:

▪ **«բոլոր աստուածապաշտութիւնով եւ սրբութիւնով»** Քրիստոնյաները հալածվել և սխալ են ընկալվել հեթանոս հասարակության կողմից: Այս խնդրի դեմ պայքարի միջոցներից մեկը հավատացյալների կենսակերպն էր:

«Հավիտենական» տերմինը տաս անգամ օգտագործվում է Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 2: 2; 3:16; 4: 7,8; 6: 3,5,6,11; 2 Տիմ. 3: 5; Տիտոս 1: 1): Այն ունի Աստծո հանդեպ ակնածանք, որն արտահայտվում է համապատասխան բարոյական կենսակերպով: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7:

«Արժանապատվություն, սրբություն» տերմինը նույնպես օգտագործվում է մի քանի անգամ Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 2: 2; 3: 4,8,11; Տիտոս 2: 2,7): Այն սահմանվում է Bauer, Arndt, Gingrich և Danker-ի բառապաշարում որպես «ակնածանք, արժանապատվություն, լրջություն, հարգանք, սրբություն, հավասարակշռություն» (էջ 47):

Քրիստոնյաները պետք է իրենց վրա դրական ուշադրություն հրավիրեն (այսինքն, «արժանի հարգանքի»), բայց ոչ բացասական (տես 1 Տիմ 2: 3, 1 Պետ. 4:12-16):

2: 3 «սա բարի եւ ընդունելի է» Աստվածապաշտությունը Աստծո կամքն է բոլոր մարդկանց համար: Սա, հղում է Ծննդ. 1: 26-27-ից՝ մարդու մեջ աղավաղված «Աստծո պատկերը» վերականգնելու համար: Աստված միշտ ցանկացել է այնպիսի ժողովուրդ, որը կարտացոլի Իր կերպարը: Հարցը միշտ եղել է «ինչպես»: Հին Կտակարանը ցույց տվեց, որ մեղավոր մարդկությունը չի կարող իր ջանքով հնազանդություն կամ արդարություն առաջացնել: Հետևաբար, Նոր Կտակարանը հիմնված է Աստծո գործողությունների և հավատարմության վրա, այլ ոչ թե մարդկության վրա (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38): Աստված վերականգնում և մղում է հետևորդներին Իր Գրքի, Որդու և Իր Հոգու միջոցով: Մենք Աստծո հետ ճիշտ չենք, ելնելով մեր կատարած արարքներից, բայց երբ մենք ճանաչում ենք Նրան փրկության մեջ, մեր կյանքի նպատակը դառնում է սրբությունը (տես Մատթ. 5:20, 48; Հռ. 8:29; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 2: 10): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ՍՐԲԱՅՈՒՄ](#) 2 Տիմ. 2: 2:

▪ **«մեր Փրկիչ Աստուծոյ»** Տես ամբողջական ծանուցումը 2 Տիմ. 1:10.

2: 4 «Որ կամենում է որ ամեն մարդիկ փրկուին» Հավատացյալները պետք է աղոթեն բոլորի համար, որովհետև Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն: Սա ցնցող հայտարարություն էր բացառիկ կեղծ ուսուցիչների համար, Գնոստիկ կամ հրեա, կամ ավելի հավանական է Հովվական նամակներում, համադրությամբ: Սա մեծ ճշմարտություն է բոլոր մարդկանց համար ունեցած Աստծո սիրո մասին (տես 1 Տիմ. 4:10; Եզ. 18:23,32; Հովհ. 3:16; 4:42; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2: 1; 4:14): Այս համարը ցույց է տալիս դոգմատիկ, սուպեր-անթերի, կրկնակի եզրային նախասահմանության անհավասարակշռությունը, որն ընդգծում է Աստծո գերիշխանությունը՝ ցանկացած մարդկային արձագանքի բացառման համար: «Հինգ կետ»-անոց Կալվինիզմի հաստատված ճշմարտությունները, հատկապես «անդիմադրելի շնորհքը» և «սահմանափակ քավությունը» խախտում են աստվածաշնչյան հավատքի ուխտի ասպեկտը: Պատշաճ չէ Աստծուն նմանեցնել մարդկային ազատ կամքին, ինչպես նաև սխալ է մարդկությանը նմանեցնել աստվածային կամքին: Աստված իր գերիշխանության մեջ ընտրեց լուծել մարդկու խնդիրը՝ ուխտի միջոցով: Նա միշտ նախաձեռնում և կազմում է ուխտը (կարդա Հովհ. 6:44; 65), սակայն նա պարտավորեցրել է, որ մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել ապաշխարությամբ և հավատքով (տես Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20: 21):

Հաճախ Աստծո գերիշխանության (նախասահմանություն) և մարդու ազատ կամքի աստվածաբանական քննարկումը վատացնում է ապացույց - տեքստի մրցակցությունը: Աստվածաշունչը հստակ բացահայտում է ՅԱՀՎԵԻ ինքնիշխանությունը: Այնուամենայնիվ, այն նաև բացահայտում է, որ Նրա բարձրագույն ստեղծագործությանը՝ Իր պատկերով ստեղծված մարդկությանը, տրվել է բարոյական որոշումների կայացնելու հետաքրքիր անձնական հատկանիշ: Մարդիկ պետք է համագործակցեն Աստծո հետ կյանքի բոլոր ոլորտներում:

«Շատ» տերմինը օգտագործվել է այն բանի համար, որ Աստված ընտրել է որոշների (ընտրված), բայց ոչ բոլորին; որ Հիսուսը մահացավ ոմանց համար, ոչ թե բոլորի: Հետևյալ տեքստերի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ դրանք օգտագործվում են զուգահեռ իմաստով:

Եսայիա 53

Հռոմեացիս 5

1. «բոլորը» (1 Տիմ. 2:6)
2. «շատերը» (1 Տիմ. 2:11-12)

1. «բոլորը» (1 Տիմ. 2:18)
2. «շատերը» (1 Տիմ. 2:19)

▪ **«որ փրկուին»** Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲՍԷ է (տես Հատուկ Թեմա 2 Տիմ. 1: 9): Սա ենթադրում է, որ մեղավոր մարդիկ չեն կարող փրկել իրենց (ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ), բայց Աստված պատրաստ է, կամենում է և կարող է դա անել Քրիստոսի միջոցով:

▪ **«եւ ճշմարտութեան գիտութեանը գան»** Այս արտահայտությունը մի քանի անգամ օգտագործվում է Հովվական Նամակներում (տես 2 Տիմ. 2:25; 3: 7; Տիտոս 1: 1): Դա նշանակում է հասկանալ և արձագանքել ավետարանի պատգամին (տես Եփ 4:13):

Սա *epi + gnōsis*-ի ուժեղացված հունական ձևն է, որը ենթադրում է «լիարժեք և փորձարարական գիտելիքներ»: Այս ինքնուսիվիզմը իրական ճիշ էր կեղծ ուսուցիչների էլիտարության և հատուկ գիտելիքների շեշտադրության համար: Հրեական և հունական տարրերի միջև ճշգրիտ հարաբերությունները կեղծ ուսուցիչների մեջ անորոշ են: Նրանք ակնհայտորեն ունեն հրեական տարր, որը չափազանցում է «առասպելները», «ծագումնաբանությունները» և «օրենքը» (տես ծանուցում 1 Տիմ. 1:6-7): Հունական տարրին առնչվող շատ ենթադրություններ են եղել: Անշուշտ, անբարոյականության մի տարր էր, որն ավելի հունական կեղծ ուսուցիչներին էր բնորոշ, քան հուդայիզմին: Թե որքան հրեշտակային մակարդակի ավելի ուշ գնոստիկ համակարգ է ներգրավված Հովվական Նամակների հերետիկոսություններում, պարզապես անորոշ է: *Word Pictures in the New Testament*, հատոր 4, էջ 567: Ա.Թ. Ռոբերտսոնը բացահայտում է կեղծ ուսուցիչներին որպես «գնոստիկներ»:

Եզիպտոսում Նագ Համադի հնագիտական հայտնագործության շնորհիվ մենք այժմ շատ բան գիտենք Գնոստիկ ենթադրությունների և աստվածաբանության մասին: Այս տեքստերի անգլերեն թարգմանությունը կա, վերնագրված *The Nag Hammadi Library*, խմբագրված James M. Robinson and Richard Smith: Hans Jonas-ի «The Gnostic Religion» գրքում այս տեքստերի հետաքրքիր մեկնաբանություն կա:

▪ **«ճշմարտութեան»** «ճշմարտություն» տերմինը կիրառվում է Նոր Կտակարանում մի քանի ձևով.

1. Հիսուսի անձի համար (տես Հովհ. 8: 31,32; 14: 6)
2. նկարագրել Հոգին (տես Հովհ.16:13)
3. նկարագրելու «Խոսքը» (տես Հովհ. 17:17)

Աստծո ճշմարտությունը, ի վերջո, երևում է Հիսուս Քրիստոսի՝ Կենդանի Խոսքի մեջ, որը պատշաճ կերպով արձանագրված է Աստվածաշնչում՝ գրավոր Խոսքում. երկուսն էլ մեզ լույս են սփռում Սուրբ Հոգու գործի միջոցով: Այստեղ ներկայացված ճշմարտությունը զուգահեռ է 1 Տիմ. 1: 9 «առողջ ուսուցմանը»: և 1 Տիմ. 1:10 «օրհնյալ Աստծու փառավոր ավետարանը»: Այն վերաբերվում է Հիսուս Քրիստոսի բարի լուրին (տես 1 Տիմ. 4: 3; 2 Տիմ. 2:25; 3: 7; Տիտոս 1: 1):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈՂՈՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ
Պողոսի կողմից օգտագործված այս տերմինը և դրա հետ կապված ձևերը վերցված է դրա

համարժեք բառից *emet*, որը նշանակում է վստահելի կամ հավատարիմ (BDB 53, տես Հատուկ Թեմա: Հավատալ, հավատք, վստահություն և հավատարմություն Հին Կտակարանում): Միջկտակարանյան հրեական գրվածքներում այն օգտագործվել է ճշմարտության համար, ի տարբերություն կեղծիքի: Գուցե ամենամոտ զուգահեռը կլինի Մեռյալ Ծովի մագաղաթները «Շնորհակալության օրհներգերը», որտեղ օգտագործվում է բացահայտված վարդապետությունների համար: Էսսեն համայնքի անդամները դարձան «ճշմարտության վկաներ»:

Պողոսը տերմինն օգտագործում է որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին խոսելու միջոց:

1. Հռոմեացիս 1:18,25; 2: 8,20; 3: 7; 15: 8
2. 1 Կորնթացիս 13:6
3. 2 Կորնթացիս 4: 2; 6: 7; 11:10; 13: 8
4. Գաղատացիս 2: 5,14; 5: 7
5. Եփեսացիս 1:13; 6:14
6. Կողոսացիս 1: 5,6
7. 2 Թեսաղոնիկեցիս 2: 10,12,13
8. 1 Տիմոթեոս 2:4; 3:15; 4: 3; 6: 5
9. 2 Տիմոթեոս 2:15,18,25; 3: 7,8; 4: 4
10. Տիտոս 1: 1,14

Պողոսը նաև օգտագործում է այդ տերմինը՝ իր խոսքը ճշգրտորեն արտահայտելու համար

1. Գործք 26:25
2. Հռոմեացիս 9: 1
3. 2 Կորնթացիս 7:14; 12: 6
4. Եփեսացիս 4:25
5. Փիլիպեցիս 1:18
6. 1 Տիմոթեոս 2:7

Նա նաև օգտագործում է այն՝ իր դրդապատճառները 1 Կոր. 5: 8 և ապրելակերպը (նաև բոլոր քրիստոնյաների համար) Եփ. 4:24; 5: 9; Փիլ. 4:8 նկարագրելու համար: Նա երբեմն այն օգտագործում է մարդկանց համար:

1. Աստված, Հռ. 3: 4 (տես Հովհ. 3:33; 17:17)
2. Հիսուս, Եփ. 4:21 (նման Հովհ.14:6)
3. Առաքյալ վկաներ, Տիտոս 1:13
4. Պողոս, 2 Կոր. 6: 8

Պողոսը օգտագործում է ԲԱՅԱԶԵՎԸ (*alētheuō*) միայն Գաղ. 4:16 և Եփ. 4:15, որտեղ դա վերաբերում է ավետարանին: Հետագա ուսումնասիրության համար խորհրդակցում ենք Colin Brown (ed.), *The New International Dictionary of New Testament Theology*, հատոր 3, էջ 784-902:

2: 5 «մէկ Աստուած կայ» Սա շեշտադրում է մոնոթեիզմը/միաստվածությունը (տես Հռ. 3:30; 1 Կոր. 8:6; Եփ 4:6), որը գտնվում է 1 Տիմ. 1:17, որն արտացոլում է 2 Օր. 6: 4-6: Այնուամենայնիվ, այստեղ Որդի Հիսուսը և Հայր Աստվածը, թվում է այստեղ առանձին են: Կարևոր է հիշել Նոր Կտակարանի այն պնդումը, որ Հիսուսը Աստված է (տես Հովհ. 1: 1; Կող. 1: 14-16; Հռ. 1: 2, 3), այլև Հորից առանձին Անձ: Երրորդության վարդապետությունը (տես Հատուկ Թեմա Տիտոս 3: 6) ճանաչում է մի աստվածային էության միասնությունը և այնուամենայնիվ, երեք Անձերի հավիտենական առանձնահատկությունը: Այս աստվածաշնչյան պարադոքսը ցույց տալու միջոցներից մեկն այն է, որ պետք է հատվածները համեմատել Հովհաննեսի Ավետարանից:

1. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 1: 1; 5:18; 10: 30,34-38; 14: 9-10; 20:28):

2. Հիսուսը առանձին է Հորից (Հովհ.1: 2,14,18; 5: 19-23; 8:28; 10: 25,29; 14: 10,11,12,13,16;17:1- 2):
3. Հիսուսը նույնիսկ հավատարիմ է Հորը (Հովհ. 5:20,30; 8:28; 12:49; 14:28; 15: 10,19-24; 17:

8):

Որդու աստվածության և Հոգու անձի գաղափարը հստակ է Նոր Կտակարանում, բայց ամբողջությամբ մշակված չի եղել ուղղափառ աստվածաբանության մեջ մինչև երրորդ և չորրորդ դարերը: «Երրորդություն» տերմինը աստվածաշնչյան չէ, բայց գաղափարը անպայման կա (տես Մատթ. 3: 16-17; 28:19; Հովհ.14:26; Գործք 2: 32-33, 38-39; Հռ. 1:4-5; 5: 1-5; 8: 1-4,8-10; 1 Կոր. 12:4-6; 2 Կոր. 1: 21-22; 13:14; 4: 4-6; 1 Թես. 1: 2-5; 2 Թես. 2:13; Տիտոս 3: 4-6; 1 Պետ. 1: 2; Հուդա 20-21):

1 Տիմ. 2: 5-6 քերականությունը տալիս է աստվածաբանական պատճառներ՝ կապված Աստծո ինքյուզիվ/ներառող փրկության հետ:

1. Կա միայն մեկ Աստված: Ծննդ. 1: 26-27 մենք գիտենք, որ բոլոր մարդիկ ստեղծված են Իր պատկերով:
2. Աստծուն տանող միայն մեկ ճանապարհ կա Մեսիայի (տես Հովհ. 14:6), որը կանխատեսված էր Ծննդ. 3:15-ում:
3. Կա փրկության միայն մեկ միջոց, Հիսուսի՝ Աստծո անմեղ Գառան ավարտված գոհաբերության պատարագը (տես Հովհ. 1:29; 2 Կոր. 5:21):

Մեկ Աստվածը մի ճանապարհ է տվել, որ բոլորը հաղորդակցվեն Իր հետ (տես Ծննդ. 3:15): Ով որ գա, բայց նրանք պետք է գան Իր ճանապարհով, Իր պատրաստած ձևով, Իր Որդուն հավատալով, որպես ընդունման միակ հույսը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄՈՆՈԹԵԻԶՄ

Մարդիկ միշտ զգացել են, որ իրականությունն ավելի շատ է, քան ֆիզիկականը (այսինքն, ազդեցություն, որոնք իրենց հսկողությունից վեր են, ինչպիսիք են փոթորիկները, խավարումները, եղանակը, իրադարձությունները, մահը և այլն): Անտրոպոլոգները/մարդաբան մեզ ասում են, որ նրանք պարզունակ հումինոիդների գերեզմաններում գտել են բաներ, որոնք, ըստ երևույթին, հաջորդ կյանքի համար են, որոնք դիտվում են որպես այս կյանքի ընդլայնում:

Առաջին գրական մշակույթը Շումերականն էր (հարավային կողմը Տիգրիս, Եփրատ գետերի), սկսվել է մոտավորապես 10,000 - 8,000մ.թ.ա.: Նրանք գրել են բանաստեղծություններ՝ արտահայտելու իրենց տեսակետները աստվածների և նրանց փոխազդեցության մասին: Կրկին, շատ նման են մարդկանց, իրենց բոլոր թույլ կողմերով: Նրանց ավանդույթները նախքան գրվելը գոյություն են ունեցել բանավոր ձևով:

Եղել է աստվածաբանական զարգացում

1. Անիմիզմից դեպի
2. Պոլիթեիզմից դեպի
3. բարձր աստծուց (կամ դուալիզմ)

«Մոնոթեիզմ» գաղափարը (մեկ և միակ անձնական, անհատական, էթիկական Աստված է առանց իգական կողակցի), ոչ թե պոլիթեիզմի/բազմաստվածության «բարձր աստծուն» կամ բարի աստծուն պարսկական դուալիզմի (գրադաշտական), հատուկ է Իսրայելին (Աբրահամն ու Հորը, 2000մ.թ.ա.): Եգիպտոսում ընդամենը մեկ հակիրճ բացատրություն (Ամենհոտեպ IV, որը նաև հայտնի է որպես Ախենաթեն, 1367-1350 կամ 1386-1361մ.թ.ա., որոնք երկրպագեցին Աթենին, արևի աստծուն, որպես միակ աստված): Տես J. Assmann, *The Mind of Egypt*, էջ 216-217:

Այս գաղափարը Հին Կտակարանում արտահայտվում է մի քանի արտահայտություններով:

1. «չկայ մեր Եհովայ Աստուծոյ նմանը», Ելից 8:10; 9:14; 2 Օր. 33:26; 3 Թագ. 8:23
2. «չկայ մի ուրիշը բացի նորանից», 2 Օր. 4: 35,39; 32:39; 1 Թագ. 2: 2; 2 Թագ. 22:32; Ես. 45:21;

44: 6,8; 45: 6,21

3. «Եհովան մէկ է», 2 Օր. 6:4; Հռ. 3:30; 1 Կոր. 8: 4,6; 1 Տիմ. 2: 5; Հակ. 2:19
4. «Բնաւ չկայ քեզ նմանը» 2 Թագ. 7:22; Եր. 10: 6
5. «դու ես միայն Աստուած», Սաղ. 86:10; Ես. 37:16
6. «ինձանից առաջ մի աստուած չկազմուեցաւ, եւ ինձանից յետոյ չի լինելու», Ես. 43:10
7. «ուրիշը չկայ. Ինձանից ջոկ... ուրիշ ոչ մէկը», Ես. 45: 5,6,22
8. «Ես Տէրս եմ այս բոլորն անողը», Ես. 45: 7 (տես Ամովս 3: 6)
9. «նորանից ջոկ ուրիշ Աստուած չկայ», Ես. 45: 14,18
10. «Աստուած չկայ բացի ինձանից», Ես. 45:21
11. «ուրիշը չկայ աստուած», Ես. 46:9

Պետք է խոստովանել, որ այս կարևոր վարդապետությունը բացահայտվել է պրոգրեսիվ կերպով: Նախնական դրույթները կարելի էր հասկանալ որպես «հենթեիզմ» կամ գործնական մոնոթեիզմ (կան ուրիշ աստվածներ, տես Հեսու 24:15; 3 Թագ. 18:21), բայց միայն մեկ Աստված մեզ համար (տես Ելից 15:11; 20: 2-5; 2 Օր. 5: 7; 6: 4,14; 10:17; 32:12; 3 Թագ. 8:23; Սաղ. 83:18; 86: 8; 136: 1-9):

Առաջին տեքստերը, որոնք սկսում են արտահայտել եզակիություն (փիլիսոփայական մոնոթեիզմ) վաղուցվա են (տես Ելից 8:10; 9:14; 20: 2-3; 2 Օր.4: 35,39; 33:26): Լրիվ և մրցակցային պահանջները ներկայացված են Ես. 43-46-ում (տես 43: 10-11; 44: 6,8; 45: 7,14,18,22; 46: 5,9):

Հին Կտակարանը արժեզրկում է ազգերի աստվածներին, անվանելով

1. Մարդկային արարածներ – 2 Օր. 4:28; 4 Թագ. 19:18; Սաղ. 115: 4-8; 135: 15-18; Ես. 2: 8; 17:8; 37:19; 40:19; 41: 7,24,29; 44: 10,12; 46: 6-7; Եր. 10: 3-5; Հայտ. 9:10
2. Դներ – 2 Օր. 32:17; Սաղ. 106: 37; Ես. 8:19; 19: 3; 1 Կորնթ. 10:20; Հայտ. 9:20
3. ունայնություն, դատարկություն – 2 Օր. 32:21; 4 Թագ. 17:15; Սաղ. 31:6; Ես. 2:18; 41:29; Եր. 2: 5; 10:8; 14:22; 8:19
4. չաստվածներ – 2 Օր.32:21; 2 Մնաց. 13:9; Ես. 37:19; Եր. 2:11; 5: 7; 1 Կորնթ. 8: 4-5; 10:20; Հայտ. 9:20

Նոր Կտակարանը ակնարկում է 2 Օր. 6: 4-ը Հռ. 3:30; 1 Կոր. 8: 4,6; Եփ. 4: 6; 1 Տիմ. 2: 5; և Հակ. 2:19: Հիսուսն այն մեջբերում է որպես առաջին պատվիրան Մաթ. 22: 36-37; Մարկ. 12:29-30; Դուկ. 10:27: Հին Կտակարանը, ինչպես նաև Նոր Կտակարանը, հաստատում է այլ հոգևոր էակների (դներ, հրեշտակներ) իրականությունը, բայց միայն մեկ ստեղծող / փրկիչ Աստված (ՅԱՀՎԵ, Ծննդ. 1: 1):

Աստվածաշնչյան մոնոթեիզմը բնութագրվում է

1. Աստված մեկ է և յուրահատուկ (օնթոլոգիականությունը ենթադրվում է, չի նշվում)
2. Աստված անձ է/անձնական է (տես Տես. 1: 26-27; 3: 8)
3. Աստված էթիկական է (տես Ելից 34:6; Նեեմ. 9:17; Սաղ. 103:8-10)
4. Աստված մարդկանց ստեղծեց իր պատկերով (Ծննդ.1:26-27), հաղորդակցության համար (այսինքն՝ # 2): Նա նախանձոտ Աստված է (տես Ելից 20:5-6)

Նոր Կտակարանից

1. Աստված ունի երեք հավիտենական, անձնական դրսևորումներ (տես Հատուկ Թեմա: Երրորդություն)
2. Աստված կատարյալ և ամբողջությամբ հայտնված է Հիսուսի մեջ (տես Հովհ.1: 1-14, Կող. 1: 15-19; Եբր. 1: 2-3)
3. Աստծո հավիտենական ծրագիրը, մեղավոր մարդկության փրկության համար, Իր միակ Որդու զոհաբերությունն է (Ես. 53; Մարկ.10:45; 2 Կոր. 5:21; Փիլ 2: 6-11; Եբրայեցիս)

▪ **«Էւ մէկ միջնորդ Աստուծոյ եւ մարդկանց մէջ»** Սա Նոր Կտակարանի հաստատման օրինակ է, որ Հիսուսի անձի և գործի հանդէպ հավատքը միակ ձևն է՝ Հոր հետ ուղիղ լինելու համար (տես Հովհ. 10: 1-18; 14: 6): Սա հաճախ կոչվում է «ավետարանի էքսկլյուսիվիզմի/բացառիկության սկանդալը»: Այս ճշմարտությունը կարծես թե դուրս է մնացել մեր հանդուրժողականության օրվանից (առանց բացարձակության), բայց եթե Աստվածաշունչը Աստծո ինքնահայտնությունն է, ապա հավատացյալները պետք է հաստատեն այս էքսկլյուսիվիզմի/բացառիկությունը: Մենք չենք ասում, որ մէկ հարանվանությունն է միակ ճանապարհը, բայց մենք ասում ենք, որ Հիսուսի հավատքն է միակ ճանապարհը դեպի Աստված:

«Միջնորդ» տերմինն ունի քահանայական նշանակություն (տես Եբր. 8:6; 9:15; 12:24): Քահանան կանգնում էր կարիքավոր մարդկանց և սուրբ Աստծո միջև: Հիսուսը մեր Քահանայապետն է (տես Եբր. 7-9): Հիսուսը մեր

1. Փրկիչն է
2. Փոխանորդը
3. Միջնորդը
4. Բարեխոսը

▪ **«Քրիստոս Յիսուս մարդը»** Այս համարի շեշտը այն է, որ Հիսուսը ամբողջովին մարդ է և դեռ միակ միջնորդն է Աստծո և մարդու միջև (տես Հովհ. 14: 6): Գնոստիկ կեղծ ուսուցիչները հերքում էին Հիսուսի մարդեղությունը (տես Հովհ. 1:14; 1 Հովհ. 1:1-3):

Հնարավոր է, որ նախադրյալը գնոստիկները չեն, այլ Պողոսի Ադամ-Քրիստոս տիպաբանությունը (տես Հռ. 5: 12-21; 1 Կոր. 15: 21-22, 45-49; Փիլ. 2: 6): Հիսուսը համարվում էր երկրորդ Ադամը, նոր ցեղի սկիզբը, ոչ հրեա, ոչ հույն, ոչ արու, ոչ էգ, ոչ գերի, ոչ ազատ, այլ քրիստոնյա (տես 1 Կոր. 12:13; Գաղ. 3:28; Եփ. 2: 11-3: 13; Կող. 3:11):

Հնարավոր է նաև, որ 1 Տիմ. 2: 5 և 6-ը «ճշմարտություն» տերմինի աստվածաբանական սահմանումն է, որը գտնվում է 1 Տիմ. 2: 4:

2:6 «Որ իր անձը տուաւ» Հայրը ուղարկեց Նրան, բայց Հիսուսը պատրաստակամորեն եկավ և դրեց Իր կյանքը (տես Մատթ. 20:28; Մարկ. 10:45; Հովհ. 10: 17,18):

▪ **«ամենի համար փրկանք»** Սա արտացոլում է Ես. 53-ի մեծ ճշմարտությունը (1 Տիմ. 2: 6): «Փրկանք» տերմինը եկել է ստրուկների շուկայից և օգտագործվել է ստրկության կամ ռազմական գերության մեջ գտնվող ընկեր կամ բարեկամ ձեռք բերելու համար: Այս արտահայտության քերականությունը չափազանց կարևոր է 1) գոյություն ունի «փրկանք» բառի անսովոր բարդ ձևը *anti* (փոխարենը) ՆԱԽԴԻՐՈՎ, (2) «համար» ՆԱԽԴԻՐԸ *hyper* հունարեն ՆԱԽԴԻՐՆ է, որը նշանակում է «ի օգուտ» (տես Տիտոս 2:14): Աստվածաբանական շեշտը մեր համար Հիսուս Քրիստոսի փոխանորդ հանդիսացող քավությունն է (տես 2 Կոր. 5:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿԱԳԻՆ/ ՓՐԿԱՆՔ/ԱԶՍԱԳՐՈՒՄ

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ

Ա. Կան հիմնականում երկու եբրայերեն օրինական տերմիններ, որոնք փոխանցում են այս գաղափարը:

1. *Ga'al* (BDB 145 I, KB 169 I), որը հիմնականում նշանակում է «ազատել՝ զինը վճարելով»: *go'el* տերմինի ձևը ավելացնում է անձնական միջնորդի գաղափարը, սովորաբար ընտանիքի անդամ (այսինքն, ազգակից փրկիչ):

Առարկաները, կենդանիները, հողերը հետ գնելու իրավունքի այս մշակութային կողմը (տես Ղև.25,27) կամ հարազատներին (տես Հռութ 4:14; Ես. 29:22) աստվածաբանական կերպով փոխանցում է ՅԱՀՎԵԻ Եգիպտոսից Իսրայելի ազատագրմանը (տես Ելից 6: 6; 15:13; Սաղ. 74: 2; 77:15; Եր. 31:11): Նա դառնում է «Փրկիչը, Ազատողը» (տես Հոբ 19:25; Սաղ. 19:14; 78:35; Առ. 23:11; Ես. 41:14; 43:14; 44:6,24; 47:4; 48:17; 49: 7,26; 54: 5,8; 59:20; 60:16; 63:16; Եր.50:34):

2. *Padah* (BDB 804, KB 911), որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»:
 - ա. անդրանիկների փրկվելը (Ելից 13: 13-15 և Թվոց 18: 15-17)
 - բ. ֆիզիկական փրկագնումը հակադրվում է հոգևոր փրկագնմանը (Սաղ 49: 7,8,15)
 - գ. ՅԱՀՎԵՆ Իսրայելը կազատի իրենց մեղքից և ապստամբությունից (Սաղ. 130:7-8)

Բ. Աստվածաբանական գաղափարը ներառում է մի քանի կապակցված տարրեր:

1. Կա կարիք, ստրկություն, բռնազավթում, ազատագրկում:
 - ա. ֆիզիկական
 - բ. Հասարակական, սոցիալական
 - գ. հոգրոր (տես Սաղ. 130:8)
2. Գինը պետք է վճարվի ազատության, ազատման և վերականգնման համար:
 - ա. Իսրայել ազգի (տես 2 Օր.7: 8)
 - բ. անհատի (տես Հոբ 19:25-27; 33:28; Ես. 53)
3. Որևէ մեկը պետք է հանդես գա որպես միջնորդ և բարերար: *ga'al* մեջ սա սովորաբար ընտանիքի անդամն է կամ մոտ ազգականը (այսինքն, *go'el*, BDB 145):
4. ՅԱՀՎԵՆ հաճախ բնութագրում է Իրեն ընտանեկան տերմիններով:
 - ա. Հայր
 - բ. Ամուսին
 - գ. Մոտ ազգականի աղատագրումը ապահովվեց ՅԱՀՎԵԻ անձնական միջամտության միջոցով՝ գինը վճարվեց և ազատագրումն իրականացավ:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Կան աստվածաբանական գաղափարը փոխանցելու համար օգտագործվող մի քանի տերմիններ:

1. *Agorazō* (տես 1 Կոր. 6:20; 7:23; 2 Պետ. 2: 1; Հայտ. 5: 9; 14: 3-4): Սա առևտրային տերմին է, որը արտացոլում է ինչ-որ բանի համար վճարված գինը: Մենք արյան գնով գնված մարդիկ ենք, ովքեր չեն վերահսկում մեր սեփական կյանքերը: Մենք պատկանում ենք Քրիստոսին:
2. *Exagorazō* (տես Գաղ. 3:13; 4: 5; Եփ. 5:16; Կող. 4: 5): Սա նույնպես առևտրային տերմին է: Այն արտացոլում է մեզ փոխարինող Հիսուսի մահը: Հիսուսը կատարեց «անեծքը» օրենքի վրա հիմնված (այսինքն Մովսեսական օրենքը, տես Եփ. 2:14-16; Կող. 2:14), որը մեղավոր մարդիկ չէին կարող իրականացնել: Նա կրեց անեծք (տես 2 Օր. 21:23) բոլորի համար (տես Մարկ. 10:45; 2 Կոր. 5:21): Հիսուսում Աստծու արդարությունն ու սերը միաձուլվում են դառնալով լիովին ներում, ընդունում և հասանելիություն:

3. *Luō*, «ազատ արձակել»
- ա. *Lutron*, «զինը վճարվեց» (տես Մատթ. 20:28; Մարկ. 10:45): Սրանք Հիսուսի բերանից դուրս եկած հզոր խոսքեր են Նրա գալուստի նպատակի մասին՝ աշխարհի Փրկիչը լինելու համար, մեղքի պարտքը վճարելով, Նա պարտք չմնաց (տես Հովհ. 1:29):
- բ. *Lutroō*, «ազատել»
- (1) ազատել, փրկել Իսրայելին (Ղուկ. 24:21)
- (2) տալով իրեն, փրկագնելու և մաքրելու ժողովուրդին (Տիտոս 2:14)
- (3) անմեղ փոխանորդ (1 Պետ. 1:18-19)
- գ. *Lutrōsis*, «փրկագնում» կամ «ազատագրում»
- (1) Ջաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Ղուկ. 1:68
- (2) Աննայի գովքը Աստծուն Հիսուսի համար, Ղուկ. 2:38
- (3) Հիսուսը ավելի լավ, մեկ անգամ զոհաբերվեց, Եբր. 9:12
4. *Apolytrōsis*
- ա. փրկություն, ազատագրում Երկրորդ Գալստյան ժամանակ (տես Գործք 3: 19-21)
- (1) Ղուկաս 21:28
- (2) Հռոմեացիս 8:23
- (3) Եփեսացիս 1:14; 4:30
- (4) Եբրայեցիս 9:15
- բ. փրկագնումը Քրիստոսի մահվան մեջ
- (1) Հռոմեացիս 3:24
- (2) 1 Կորնթացիս 1:30
- (3) Եփեսացիս 1:7
- (4) Կոդոսացիս 1:14
5. *Antilytron* (տես 1 Տիմ. 2: 6): Սա կարևոր տեքստ է (ինչպես Տիտոս 2:14), որը կապում է խաչի վրա Հիսուսի փոխարինող մահվան հետ: Նա միակ ընդունելի զոհն է, ով մահանում է «բոլորի համար» (տես Հովհ. 1:29; 3: 16-17; 4:42; 1 Տիմ.2: 4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3: 9; 1 Հովհ. 2: 2; 4:14):
- Բ. Աստվածաբանական գաղափարը Նոր Կտակարանում
1. Մարդը ծառա է մեղքին (տես Հովհ. 8:34; Հռ. 3:10-18,23; 6:23):
2. Մարդկության մեղքին ծառա լինելը հայտնվել է Մովսեսական օրենքով (տես Գաղ. 3) և Հիսուսի Լեռան քարոզում (տես Մատ. 5-7): Մարդկային կատարումը մահվան դատավճիռ է դարձել (տես Կող. 2:14):
3. Հիսուսը, Աստծո անմեղ գառը, եկել և մահացել է մեր տեղը (տես Մարկ. 10:45; Հովհ. 1:29; 2 Կոր. 5:21): Մենք գնվել ենք մեղքից, որպեսզի ծառայենք Աստծուն (տես Հռ. 6):
4. Հետևաբար, ՅԱՀՎԵՆ և Հիսուսը «մերձավոր ազգականներ» են, ովքեր հանդես են գալիս մեր օգտին: Սա շարունակում է ընտանեկան փոխաբերությունները (այսինքն, հայր, ամուսին, որդի, եղբայր, մոտ ազգական):
5. Փրկագինը սատանայի համար չէ վճարված (այսինքն, միջնադարյան աստվածաբանություն), այլ Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտեցումը Աստծո սիրո և Քրիստոսի լիարժեք կատարած գործի հետ: Խաչի վրա խաղաղությունը վերականգնվեց, մարդկային ապստամբությունը ներվեց,

մարդկության մեջ Աստծո պատկերն այժմ լիովին ֆունկցիոնալ է դարձել մտերմիկ հաղորդակցությամբ:

6. Կա փրկության կամ ազատագրման ապագա ասպեկտը (տես Հո. 8:23; Եփ. 1:14; 4:30), որը ներառում է մեր հարուցյալ մարմինները և անձնական շփումը Երրորդության հետ (տես Հատուկ Թեմա: Երրորդություն): Մեր հարություն առած մարմինները կլինեն Նրա նման (տես 1 Հովհ. 3: 2): Նա ուներ ֆիզիկական մարմին, բայց լրացուցիչ տարածական ասպեկտ: Դժվար է սահմանել 1 Կոր. 15: 12-19 և 1 Կոր. 15: 35-58 պարադոքսը: Ակնհայտ է, որ կա ֆիզիկական, երկրային մարմին, և կլինի երկնային, հոգևոր մարմին: Հիսուսը երկուսն էլ ունեցել է:

- **«ամենի համար»** Շնորհակալ եմ Աստծուն «բոլորի, ամենի» բառի համար, որը հինգ անգամ օգտագործվում է 1 Տիմ. 2: 1-7: Անչափ կարևոր է, որ մենք գիտակցենք, որ Հիսուսի մահը ծածկեց ողջ աշխարհի մեղքերը (տես Հովհ.1:29; 3: 16,17; 1 Տիմ. 4:10; Տիտոս 2:11; Եբր. 2:9; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2: 2; 4:14): Միակ բանը, որ պահում է մեկին և բոլորին փրկվելուց, դա նրանց մեղքը չէ, այլ նրանց անհավատությունը՝ Հիսուս Քրիստոսի կատարած գործի հանդեպ (տես Հովհ.1:12; Գործք 17:30; 1 Տիմ.4:10; 1 Հովհ.5:10 -13): Այս ճշմարտությունը պետք է հավասարակշռի նախասահմանությունը (տես Հատուկ Թեմա Տիտոս 2: 11):

Արևելահայերեն «վկայություն լինի իր ժամանակներումը»

Արևմտահայերեն «իր ատենին վկայություն ըլլալու»

NASB «ժամանակին տրված վկայությունը»

NKJV «ժամանակին կվկայվի»

NRSV «սա հաստատվել է ճիշտ ժամանակին»

TEV «ապացույցը ճիշտ ժամանակին»

NJB «սա նշանակված ժամանակահատվածում տրված վկայությունն էր»

Այս արտահայտությունը զուգահեռ է 1 Տիմ. 6:15 և Տիտոս 1: 3: Աստված վերահսկում է պատմական իրադարձությունները: Քրիստոսը եկավ Իր նշանակված ժամանակին՝ փրկագնելու բոլոր մարդկությանը (կարդա Հո. 5: 18-19):

Մյուս հավանականությունն այն է, որ այն կարող է կապված լինել Հո. 5: 6; Գաղ. 4: 4; Եփ. 1:10, երբ առաջին դարի հունա-հռոմեական աշխարհի որոշակի պատմական պայմաններն ապահովեցին իդեալական ժամանակ.

1. *Pax Romana*, կամ Հռոմի խաղաղություն, թույլ տվեց մարդկանց ազատ երկրից երկիր տեղափոխվել:
2. Մի ընդհանուր լեզու (*Koinē* հունարեն) թույլ տվեց Միջերկրական աշխարհի բոլոր մարդիկ հասկանալ միմյանց:
3. Հունական և Հռոմեական կրոնների ակնհայտ սնանկացումը մարդկանց ստիպեց կյանքի իմաստը փնտրել: Նրանք ուզում էին ավելի շատ անձնական ասպեկտ իրենց հոգևոր վիճակի համար (Սա նաև երևում է միստիկ կրոնների առաջացման մեջ):

2: 7 «Որին ես կարգուեցայ» Սա շեշտը դնում է Պողոսի ընտրության և Աստծո կանչի վրա (Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած հանդիպումը), ինչպես 1: 1: Աստված ուզում է, որ հեթանոսները հասկանան Իր ինքյուզիվ/ընդգրկող ավետարանը:

▪ **«քարոզիչ եւ առաքեալ... վարդապետ»** Երբեմն սրանք թվարկվում են որպէս Սուրբ Հոգու առանձին պարզներ, ինչպէս 1 Կոր 12:28 կամ Եփ. 4:11. Այս ցուցակներում «մարգարե» տերմինը կարող է վերաբերել քարոզիչին (հատկապէս «մարգարեության» օգտագործումը 1 Կոր., տես 1 Կոր. 11: 4,5; 13: 9; 14: 1,3,4,5,24, 31,39): Ինչ-որ իմաստով առաջնորդության այս պարզները հռչակում են նույն ավետարանը, սակայն տարբեր շեշտադրումներով: Պողոսն այս ճշմարտության երեք տերմինն օգտագործում է կրկին 2 Տիմ. 1:11՝ իր ծառայությունը նկարագրելու համար:

▪ **«(ճշմարիտն եմ ասում, սուտ չեմ խօսում)»** Շատ մեկնաբաններ ասել են, որ դա անհամատեղելի կլինի Պողոսի գրած անձնական նամակին, իր սիրելի գործընկեր Տիմոթեոսին: Սակայն մենք պետք է հիշենք, որ այս նամակները պետք է հրապարակայնորեն կարդացվէին եկեղեցում (տես 1 Տիմ. 6:21բ; 2 Տիմ. 4:22բ; Տիտոս 3:15բ): Այս նամակը Պողոսի հանձնարարական նամակն էր և իշխանության փոխանցումը իր երիտասարդ առաքյալին՝ ուղարկված Եփեսոսի տնային եկեղեցիները, որոնք պայքարում էին կեղծ ուսուցիչների դեմ:

▪ **«հեթանոսների վարդապետ»** Պողոսը զգում էր, որ Աստված կանչել է իրեն, մասնավորապէս, Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզելու հեթանոսներին (տես Գործք 9:15; 22:21; 26:17; Հռ. 1:5; 11:13; 15:16; Գաղ. 1:16; 2: 7; Եփ. 3: 1-2, 8; 2 Տիմ. 4: 17): Սա ևս մեկ հաստատում է Աստծո սիրո և Քրիստոսի փրկության համընդհանրությունը:

▪ **«հաւատքի եւ ճշմարտութեան մէջ»** Սա կարող է վերաբերել (1) քարոզողի վերաբերմունքին կամ (2) պատգամի բովանդակությանը: 1 Տիմ. 1:14 «հավատքը» կապված է «սիրո» հետ: Այս երկու տերմինները նկարագրում են Հիսուսին և Նրա հետևորդները պետք է հետամուտ լինեն դրան:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 2:8-15
⁸Արդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ աղօթք անեն, սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն առանց բարկութեան եւ երկմտութեան: ⁹Այնպէս էլ կանայքը վայելուչ հագուստով ամօթխածութիւնով եւ պարկեշտութիւնով իրանց անձերը զարդարեն, ոչ թէ հիւսուածներով, կամ ոսկիով կամ մարգարիտներով կամ թանգազին հանդերձներով: ¹⁰Այլ ինչպէս կ'վայելէ աստուածպաշտութիւնը յանձն առած կանանց՝ բարի գործերով: ¹¹Կինը թող հանդարտութեամբ սովորէ ամեն հնազանդութիւնով: ¹²Կնկան հրաման չեմ տալիս, որ սովորեցնէ, եւ ոչ էլ մարդին վերայ իշխէ, այլ որ լուռ կենայ: ¹³Որովհետեւ Ադամն առաջ ստեղծուեցաւ եւ յետոյ Եւան: ¹⁴Եւ Ադամ չ'խաբուեցաւ այլ կինը խաբուելով մեղք գործեց: ¹⁵Սակայն կ'ապրի որդեծնութեան համար, եթէ կենայ հաւատքի եւ սերի եւ սրբութեան մէջ պարկեշտութեան հետ:

2:8 «Արդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ աղօթք անեն» Պողոսը պնդում է հասարակական կյանքում արժանապատվությունը և պատշաճությունը (տես 1 Տիմ. 2: 1-7), այնպէս էլ երկրպագության մէջ (տես 1 Կոր.11-14): «Ամեն տեղ» արտահայտությունը, հավանաբար, վերաբերում է Եփեսոսի կամ նրա մոտ գտնվող տնային եկեղեցիներին: Ընդունելի աղոթքը 8-րդ համարում սահմանվում է երեք ձևերով:

1. բարձրացնել սուրբ ձեռքեր
2. առանց բարկության
3. առանց վեճերի

Այս որակավորումներն ակնհայտորեն ցույց են տալիս, որ Պողոսը խոսում է հավատարիմ հավատացյալների հետ և մերժում կեղծ ուսուցիչներին, նրանց փոխարինող բանախոսները (հավանաբար երիտասարդ այրիները) և նրանց հետևորդները:

Պողոսը հաճախ է օգտագործում այս արտահայտությունը «ամեն տեղ» (տես 1 Կոր. 1: 2; 2 Կոր. 2:14; 1 Թես. 1: 8; 1 Տիմ. 2: 8): Դա կարող է հինկտակարանյան ակնարկ լինել Մադ. 1:11, որը մարգարեանում է Մեսիայի համաշխարհային երկրպագությունը: Դա համապատասխանում է 1 Տիմ. 2: 1-7 «բոլորի» կրկնվող օգտագործմանը:

- **«սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն»** Սա հրեական աղոթքի նորմալ դիրքն էր: Այն փաստում է, որ հավատացյալների խոսքերն ու կյանքը պետք է համաձայն լինեն (տես Հակ. 4: 8):
- **«առանց բարկութան»** Այս հունարեն *orgē* տերմինը նշանակում է «բնակեցված ընդդիմություն» (տես Մատթ. 5: 23-24; 6:15): Զայրույթը ուրիշների վրա ազդում է մեր փոխհարաբերությունների վրա (տես Մատթ. 5:21-24; Մարկ. 11:25; 1 Հովհ. 2:9,11; 4:20-21):

Արևելահայերեն «երկմտութան»
Արևմտահայերեն «երկմտութան»

- NASB «հակասություն»**
- NKJV «կասկած»**
- NRSV, TEV,**
- NJB «փաստարկ»**

Հույն փիլիսոփաներն այս տերմինը օգտագործեցին դասավանդման սեսիայի կամ երկխոսության համար: Նոր Կտակարանում այն ունի բացասական նշանակություն (տես Մատթ. 15:19; Մարկ. 7:21): Այստեղ դա վերաբերում է թե ուսուցանման կոնտեքստին, թե կեղծ ուսուցիչների ոչ պատշաճ, գայրացած և խտրական կեցվածքին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՂՈԹՔ, ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ

- Ա. Սինոպտիկ Ավետարաններ
 1. հավատացյալներին խրախուսվում է աղոթքի մեջ հարատևել և Աստված կտա «բարի բաներ» (Մարթ.7: 7-11) կամ «Իր Հոգին» (Ղուկ. 11: 5-13)
 2. եկեղեցական կարգապահության կոնտեքստում հավատացյալները (երկու) խրախուսվում են միավորվել աղոթքի մեջ (Մատթ. 18:19)
 3. հուդայականության հավատացյալների դատաստանի կոնտեքստում պետք է հավատքով խնդրել առանց երկմտելու (Մատթ. 21:22; Մարկ. 11:23-24)
 4. երկու առակների կոնտեքստում (Ղուկ. 18: 1-8, անիրավ դատավորը և Ղուկ. 18: 9-14, փարիսեցին և մեղավորը) հավատացյալները խրախուսվում են չնմանվել անաստված դատավորին և ինքնավստահ փարիսեցուն: Աստված լսում է խոնարհին և զղջացողին (Ղուկ.18: 1-14)
- Բ. Հովհաննեսի գրվածքները
 1. Հիսուսի բժշկած իծնե կույրի կոնտեքստում փարիսեցիների իսկական կուրությունն է բացահայտվում: Հիսուսի աղոթքները (ինչպես ամեն մեկինը) պատասխանվում են, քանի որ Նա գիտեր Աստծուն և ապրում էր համապատասխանաբար (Հովհ. 9:31):
 2. Հովհաննեսի Վերնատան պատմությունը (Հովհ. 13-17)
 - ա. 14: 12-14 - հավատքով աղոթքը բնութագրվում է
 - 1) հավատացյալների կողմից է արվում
 - 2) խնդրելով Հիսուսի անունով

- 3) ցանկանալով, որ Հայրը փառավորվի
- 4) պահելով պատվիրանները (հ. 15)
- բ. 15: 7-10 - հավատացյալի աղոթքը բնութագրվում է
 - 1) մնալով Հիսուսի մեջ
 - 2) Նրա խոսքը մնում է նրանց մեջ
 - 3) ցանկանալով, որ Հայրը փառավորվի
 - 4) շատ պտուղ բերող
 - 5) պահելով պատվիրանները (հ. 10)
- գ. 15: 15-17 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է
 - 1) նրանց ընտրությամբ
 - 2) նրանց պտուղ բերելով
 - 3) խնդրելով Հիսուսի անունով
 - 4) միմյանց սիրելու պատվերը պահելով
- դ. 16: 23-24 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է
 - 1) խնդրելով Հիսուսի անունով
 - 2) ցանկանալով, որ ուրախությունը լիարժեք լինի
- 3. Հովհաննեսի առաջին նամակը (1 Հովհ.)
 - ա. 3: 22-24 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է
 - 1) պահելով Նրա պատվիրանները (տես հհ.22, 24)
 - 2) պատշաճ կերպով ապրելով
 - 3) հավատալով Հիսուսին
 - 4) սիրելով միմյանց
 - 5) մնալով Նրանում և Նա մեր մեջ
 - 6) ունենալով Հոգու պարգևը
 - բ. 5: 14-16 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է
 - 1) վստահելով Աստծուն
 - 2) ըստ Նրա կամքի
 - 3) հավատացյալները աղոթում են միմյանց համար

Գ. Հակոբոս

- 1. 1-5-7 - հավատացյալները տարբեր փորձությունների առջև են կանգնում, պետք է իմաստություն խնդրել առանց երկմտելու
- 2. 4: 2-3 - հավատացյալները պետք է խնդրեն համապատասխան դրդապատճառներով
- 3. 5: 13-18 - առողջական խնդիրներ ունեցող հավատացյալները պետք է
 - ա. Խնդրեն երեցներին աղոթել
 - բ. Հավատքով աղոթելը կփրկի
 - գ. Խնդրեն, որ իրենց մեղքերը ներվեն
 - դ. Մեղք խոստովանել միմյանց և աղոթել միմյանց համար (նման է 1 Հովհ. 5:16)

Արդյունավետ աղոթքի բանալին Քրիստոսանման լինելն է: Սա նշանակում է Հիսուսի անունով աղոթել: Ամենավատ բանը, որ Աստված կարող էր անել շատ քրիստոնյաների համար, պատասխանել նրանց եսասիրական աղոթքներին: Մի առումով բոլոր աղոթքները պատասխանվում են: Աղոթքի ամենարժեքավոր ասպեկտը այն է, որ հավատացյալը ժամանակ է անցկացրել Աստծո հետ՝ վստահելով Աստծուն:

2:9

Արևելահայերեն «Այնպես էլ»
Արևմտահայերեն «Նոյնպես ալ»

NASB «նմանապես»

NKJV «ձևով»

NRSV, TEV «նաև»

NJB «նույնն է»

Սա ցույց է տալիս, որ կոնտեքստը « թե ինչպես պետք է տղամարդիկ և կանայք ներգրավվեն հանրային պաշտամունքի մեջ» (այսինքն, տնային եկեղեցիները, տես 1 Կոր. 11-14): Այս բառի շուրջ լավ քննարկումներ կան F. F. Bruce, *Answers to Questions*, էջ 114-115:

▪ **«կանայքը վայելուչ հագուստով ամօթխածութիւնով եւ պարկեշտութիւնով իրանց անձերը զարդարեն»** Հագուստը հայտնում է սիրտը և մտքերը: Հավատացյալները պետք է պատշաճ ձևով հագնվեն, ոչ միայն եկեղեցում, այլև բոլոր վայրերում և բոլոր ժամանակներում, քանի որ նրանք քրիստոնյա են: Այս հատվածի շեշտադրումը ոչ միայն արտաքին տեսքի վրա է, այլև աստվածպաշտության (տես 1 Տիմ. 2:10; 1 Պետ. 3: 3,4): Կյանքի բոլոր ոլորտներում հավատացյալները աշխարհի լույսն են և երկրի աղը (տես Մատթ. 5: 13-16): Մենք պետք է հիշենք, թե ում ենք ներկայացնում:

Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ հավատացյալները պետք է գորշ հագնվեն: Մենք չպետք է հագնվենք այնպես, որ հասարակությունն է հագնվում, որում հավատացյալը ապրում է: Եղեք կոկիկ, մաքուր, եղեք նորաձև, բայց ամենից շատ եղեք քրիստոնյա:

▪ **«պարկեշտութիւնով»** Տես ամբողջական ծանուցումը 1 Տիմ. 3: 2:

▪ **«ոչ թէ հիւսուածներով, կամ ոսկիով կամ մարգարիտներով կամ թանգազին հանդերձներով»** Սա նշանակում է, որ հավատացյալների առնվազն մի տոկոսը համեմատաբար հարուստ էր: Այդ օրերում հրեական և հռոմեական մազերի ոճերը շատ մանրակրկիտ, ճոխ և թանկ էին: Ակնհայտ է, որ քրիստոնյա կանայք հրահանգված էին աշխարհիկության կամ անձնական ազատության դեմ (հավանաբար հռոմեական մշակույթում սկսված կանանց ազատության շարժման մեջ էին բռնված, տես 1 Կոր. 11:2-16): Դա կարող է արտացոլել կեղծ ուսուցիչների էքսկյուսիվիզմը/բացառիկությունը, որոնք փնտրում էին հարուստների, ազդեցիկների և մտավորականների:

2:10 «բարի գործերով» Հավատացյալները պետք է հիշեն, որ բարի գործերով չեն փրկվել, այլ բարի գործերի համար (տես Եփ. 2:8-10; Տիտոս 3:8; Հակոբոս 2:14-26): Մեր կյանքը վստահելիություն է տալիս հավատքի մեր դավանությանը, որը Հակոբոսի և Հովհաննեսի ամբողջ գրքերի պնդումն է:

Այս կոնտեքստում «բարի գործերը» վերաբերում են նորմալ տեղական մշակութային սպասելիքներին (տես 1 Տիմ. 5:10; Տիտոս 2: 5):

▪ **«ինչպես կ'վայելէ աստուածպաշտութիւնը յանձն առած կանանց»** Սա հստակորեն սահմանափակում է կոնտեքստը փրկված կանանց համար: Սա հասարակության համար ընդհանուր ուղեցույց չէ: Աստծո զավակների համար պատշաճ զգեստը աստվածապաշտություն է: Գեղեցիկը որոշակի հագուստ չէ, այլ փոխված սիրտ: Իրականում գեղեցիկ և գրավիչ կանայք աստվածավախ կանայք են (իրենց կյանքի բոլոր ոլորտներում):

2:11 «Կինը» Սա կարող է վերաբերել բոլոր քրիստոնյա կանանց (տես Charles B. Williams թարգմանությունը, «ամուսնացած կին» 1 Տիմ. 2:11): Կոնտեքստը պետք է հստակեցնի գրողի հեղինակային նշանակությունը:

▪ **«թող հանդարտութեամբ սովորե»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է: Սկզբում դա շատ բացասական է թվում, բայց 1) կանայք չէին կարող սովորել հուդայականության Օրենքը կամ դպրոց հաճախել հունա-հռոմեական աշխարհում: Այսպիսով, մի իմաստով դա դրական քայլ է դեպի կանանց նկատմամբ Աստծո խոսքի ուսուցումը, 2) այս տեքստը պետք է դիտվի կանանց թիրախ վերցրած կեղծ ուսուցիչների լուսի ներքո (տես 1 Տիմ. 5:13; Գործք 20:30; 2 Տիմ. 3: 5-9; Տիտոս 1:11): Հնարավոր է, որ որոշ կանայք տնային եկեղեցիներում (Gordon Fee, *New International Biblical Commentary*, հատոր 13) հրապարակային երկրպագության մեջ կեղծ ուսուցիչների համար փոխնակներ էին համարվում:

▪ **«ամեն հնազանդությունով»** Սա նույնպես մեր օրերի համար բացասական է թվում, բայց հիշենք

1. «Հնազանդություն» տերմինը օգտագործվել է Հիսուսի կողմից: Նա հնազանդ էր Հորը (տես 1 Կոր. 15:28): Նա հնազանդ էր Իր երկրային ծնողներին (տես 1 Թես. 5:21): Այլ կերպ ասած, Նա կատարեց Իրենից ակնկալվող հասարակական և կրոնական պարտականությունները ճիշտ կեցվածքի միջոցով:

2. «Հնազանդ լինելը» Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար (տես Եփ. 5:21): Այն հինգ ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅԵՐԻՑ մեկն է, որը նկարագրում է, թե ինչ է նշանակում «Հոգով լցված» լինել (տես Եփ. 5:18):

3. Եփեսացիների այս նույն հատվածում Պողոսը օգտագործում է երեք ընտանեկան օրինակներ՝ ցույց տալու փոխադարձ հնազանդությունը տանը (1) կանայք՝ ամուսիններին, 2) երեխաները՝ ծնողներին և 3) ծառաները՝ տերերին:

Այս կոնտեքստի ծայրահեղ դրական կողմը (այսինքն, Եփր. 5:18- 6:9) այն է, որ Պողոսը սահմանափակում է այդ հասարակության մեջ ամեն իշխանություն ունեցողների գործությունը (այսինքն ամուսին, ծնողներ և տերեր): Իր օրերում Պողոսի կանանց, երեխաների և ծառաների մասին գրվածքները արմատապես դրական էին:

4. Պողոսը ստրկության դեմ չի գրոհում որպես խնդրի, քանի որ նա գիտեր, որ այդ խնդիրը կարող էր կործանել եկեղեցու արդյունավետությունը և վկայությունը պատմության այդ ժամանակաշրջանում: Կարծում եմ, որ նույնը վերաբերում է նաև կանանց սոցիալական վիճակին: Պողոսը հավաստիացնում է նրանց հոգևոր հավասարությունը (Գաղ. 3:28: Կող. 3:11), նրանց պարզևներով օժտված լինելը (տես 1 Կոր. 12: 7-13) և նրանց դերը ավետարանի տարածման գործում (օր. Հռ. 16): Բայց նա գիտեր, որ առաջնորդ կանայք (1) սխալ կրնկալվեին ծնելիության երկրպագության պատճառով և (2) կմերժվեին գրեթե բացառապես նահապետական, տղամարդու գերակշռված հասարակության կողմից:

2:12 «մարդին վերայ իշխե» Այս *authentēō* ԲԱՅՑ օգտագործվում է միայն Նոր Կտակարանում: Այն սահմանվում է որպես «մեկը, ով գործում է իր հեղինակությամբ» (*authentēs*, տեր) կամ «մեկը, ով տիրում է»: Տես քննարկում Moulton և Milligan, *Vocabulary of the Greek Testament*, էջ 91: Արդյոք դա նշանակում է, որ կանայք կարող են առաջնորդ լինել, եթե նրանք չեն տիրում: Անմիջական կոնտեքստը չի աջակցում սրան «բայց լուռ մնալ» ավելացված արտահայտությամբ (տես 1 Կոր. 14:34): Պողոսի հայտարարությունները ենթարկվող դերերի կանանց մասին չեն կարող բացատրել

այս *hapax legemonon*- ի օգտագործմամբ: Այն պետք է դիտվի մշակութային տեսանկյունից: Աստված ընտրեց Ինքն Իրեն բացահայտել կոնկրետ մշակութային միջավայրում: Այդ մշակույթում ամեն ինչ Աստծո կամքն է/էր բոլոր հավատացյալների համար բոլոր տարիքի բոլոր մշակույթներում (տես Gordon Fee, *Gospel and Spirit and How to Read the Bible For All Its Worth*, էջ 83-86): Ավետարանի ճշմարտությունն ու գորությունը արմատապես փոխում է մարդկային մշակույթը (այսինքն, ստրկությունը, տղամարդու գերիշխանությունը): Ամբարտավան, շահագործող գերիշխանությունը չարիք է, լինեն տղամարդիկ, թե կանայք: Կան երկու ծայրահեղություններ, որոնցից պետք է խուսափել (1) կանայք ոչինչ չեն կարող անել (Հին Մերձավոր Արևելքի մշակույթ) և (2) կանայք կարող են ցանկացած բան անել (արևմտյան ժամանակակից ինդիվիդուալիզմ/անհատականություն): Հավատացյալները (տղամարդ և կին) ծառայում են՝ իրենց մշակույթում առավելագույնի հասցնելու ավետարանչությունն ու աշակերտությունը, ոչ թե անձնական օրակարգերը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԱՅՔ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

- I. Հին Կտակարան
 - Ա. Մշակույթորեն կանայք համարվում էին սեփականություն, գույք
 - 1. ընդգրկվել են սեփականության, գույքի ցանկում (Ելից 20:17)
 - 2. ստրուկ կանանց կամ աղախինների պես էին վարվում (Ելից 21: 7-11)
 - 3. կանանց ուխտերը/երդումները չեղյալ էին համարվում սոցիալապես պատասխանատու տղամարդկանց կողմից (Թվոց 30)
 - 4. կանայք, որպես պատերազմական ավար (2 Օրինաց 20:10-14; 21:10-14)
 - Բ. Գործնականում կար հավասարություն
 - 1. Աստծո Իր պատկերով արու և էգ ստեղծեց (Ծննդոց 1: 26-27)
 - 2. պատվել հորն ու մորը (Ելից 20:12 [2 Օր.5:16])
 - 3. հարգել հորն ու մորը (Ղև. 19: 3, 20: 9)
 - 4. տղամարդիկ ու կանայք կարող էին ուխտավորներ լինել (Թվ. 6: 1-2)
 - 5. դուստրերը ժառանգության իրավունք ունեն (Թվ. 27: 1-11)
 - 6. ուխտի ժողովրդի մասն են (2 Օրինաց 29: 10-12)
 - 7. հետևել հոր և մոր ուսումնուքին (Առակաց 1:8; 6:20)
 - 8. Եմանի որդիներն ու դուստրերը (Ղևիի ընտանիքից) գլխավորում էին երաժշտությունը Տաճարում (1Մնաց. 25: 5-6)
 - 9. որդիներն ու աղջիկները պիտի մարգարեանան նոր դարաշրջանում (Հովել 2: 28-29)
 - Գ. Կանայք առաջնորդության դերերում
 - 1. Մովսեսի քույր Մարիամը կոչվում էր մարգարեուհի (Ել. 15: 20-21 նաև Միքիա 6: 4):
 - 2. Աստծո կողմից օժտված կանայք ձեռքերով մանեցին Խորանի համար (Ել. 35: 25-26):
 - 3. ամուսնացած կին Դեբորա անունով նույնպես մարգարեուհի (տես Դատ. 4:4), որը գլխավորում էր բոլոր ցեղերին (Դատ. 4: 4-5, 5: 7)
 - 4. Ողոսան մարգարեուհի էր, որին Յովսիա թագավորը պատվիրեց կարդալ և մեկնաբանել նոր հայտնաբերված «Օրենքի Գիրքը» (4 Թագ. 22:14; 2 Մնաց. 34: 22-27)
 - 5. Եսթեր թագուհին, մի աստվածավախ կին, որը փրկեց հրեաներին

Պարսկաստանում

II. Նոր Կտակարան

Ա. Մշակույթորեն կանայք թե հուդայականության մեջ և թե հունա-հռոմեական աշխարհում երկրորդ կարգի քաղաքացիներ էին, շատ քիչ իրավունքներով կամ արտոնություններով (բացառությամբ Մակեդոնիայի):

Բ. Կանայք առաջնորդության դերերում

1. Եղիսաբեթ և Մարիամ, աստվածավախ կանայք Աստծո համար (Ղուկ.1-2)
2. Աննա, մարգարեուհի ծառայում է տաճարում (Ղուկ. 2:36)
3. Լիդիա, հավատացյալ և տնային եկեղեցու առաջնորդ (Գործք 16: 14,40)
4. Փիլիպոսի չորս կույս աղջիկները մարգարեուհիներ էին (Գործք 21: 8-9)
5. Փիբե, սպասավոր Կենքրայի եկեղեցում (Հռ. 16:1)
6. Պրիսկիլան (Պրիսկա) Պողոսի գործընկեր և Ապողոսի ուսուցիչը (Գործք 18:26; Հռ. 16: 3)
7. Մարիամը, Տրիփանոսը, Տրիփոսը, Պերսիդեն, Յուլիան, Ներեոսի քույրը, Պողոսի մի խումբ կին գործընկերներ (Հռ. 16: 6-16)
8. Յունիա (KJV), հնարավոր է կին առաքյալ (Հռ. 16: 7)
9. Եվոդիան և Սյունտիքը, Պողոսի գործընկերներ (Փիլ. 4: 2-3)

III. Ինչպե՞ս է ժամանակակից հավատացյալը հավասարակշռում իրարամերձ աստվածաշնչյան օրինակները:

Ա. Ինչպե՞ս կարելի է որոշել պատմական կամ մշակութային ճշմարտությունները, որոնք կիրառելի են միայն բնագիր կոնտեքստում, հավիտենական ճշմարտությունները վավեր են բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիների, բոլոր հավատացյալների համար:

1. Մենք պետք է բուն ներշնչված հեղինակի մտադրությունը շատ լուրջ ընդունենք: Աստվածաշունչը Աստծո Խոսքն է և գործնական հավատքի միակ աղբյուրը:
2. Մենք պետք է գործ ունենանք ակնհայտ պատմականորեն պայմանավորված ներշնչված տեքստերի հետ:
 - ա. Իսրայելի աղանդները (այսինքն, ծես և պատարագ) և (տես Գործք 15; Գաղ. 3)
 - բ. առաջին դարի Հուդայականությունը
 - գ. Պողոսի ակնհայտ պատմականորեն պայմանավորված մտքերը 1 Կոր.
 - (1) հեթանոսական Հռոմի իրավական համակարգը (1 Կոր. 6)
 - (2) մնալ ստրուկ (1 Կոր. 7: 20-24)
 - (3) ամուրիություն (1 Կոր. 7: 1-35)
 - (4) կույսերը (1 Կոր. 7: 36-38)
 - (5) կուռքին զոհաբերած կերակուր (1 Կոր. 8; 10: 23-33)
 - (6) Տիրոջ ընթրիքին անարժանաբար մոտենալը (1 Կոր. 11)

3. Աստված լիարժեք և հստակ բացահայտեց Իրեն մի կոնկրետ մշակույթի, կոնկրետ օրվա մեջ: Մենք պետք է լրջորեն մոտենանք հայտնությանը, բայց ոչ պատմական հարմարեցման իր ամեն առումով: Աստծո Խոսքը գրվել է մարդկային բառերով, ուղղված որոշակի մշակույթի որոշակի ժամանակ մեջ:

Բ. Աստվածաշնչյան մեկնաբանությունը պետք է փնտրի բնօրինակի հեղինակի մտադրությունը: Ի՞նչ էր նա ասում իր օրերում: Սա ֆունդամենտալ և կարևոր է պատշաճ մեկնաբանության համար: Բայց հետո մենք պետք է կիրառենք այն մեր օրերում: Այժմ, ահա խնդիրը կանանց լիդերության (իրական մեկնաբանական խնդիրը կարող է սահմանել տերմինը: Արդյո՞ք միայն հովիվների ծառայությունն է համարվում

առաջնորդություն: Արդյո՞ք սպասավորները/սարկավազուհիները կամ մարգարեուհիները համարվում էին առաջնորդներ): Միանգամայն պարզ է, որ Պողոսը 1 Կոր. 14: 34-35 և 1 Տիմ. 2: 9-15 հաստատում է, որ կանայք չպետք է առաջնորդի դեր կատարեն հրապարակավ պաշտամունքի ժամանակ: Բայց ինչպե՞ս կարող եմ կիրառել դա այսօր: Ես չեմ ուզում, որ Պողոսի մշակույթը կամ իմ մշակույթը լռեցնի Աստծու Խոսքն ու կամքը: Հնարավոր է, որ Պողոսի օրոք չափազանց սահմանափակ էր, բայց նաև իմ օրոք կարող է լինել շատ բաց: Ես անհարմար եմ զգում ասելով, որ Պողոսի խոսքերը և ուսմունքները պայմանական են, առաջին դարի, տեղական իրավիճակային ճշմարտություններ: Ո՞վ եմ ես, որ թույլ տամ, իմ միտքը կամ իմ մշակույթը ժխտի ներշնչված հեղինակին:

Սակայն ի՞նչ անեմ, երբ կան կին առաջնորդների աստվածաշնչյան օրինակներ (անգամ Պողոսի գրվածքներում, տես Հռ.16): Լավ օրինակ է Պողոսի քննարկումը հրապարակավ պաշտամունքի մասին 1 Կոր. 11-14:1 Կոր. 11: 5-ում նա կարծես թույլ է տալիս կանանց քարոզել և աղոթել հրապարակավ պաշտամունքի ժամանակ իրենց գլուխները ծածկած, սակայն 14: 34-35 նա պահանջում է, որ նրանք լուռ մնան: Կային սպասավորուհիներ/սարկավազուհիներ (տես Հռ.16:1) և մարգարեուհիներ (տես Գործք 21: 9):

Հենց այս բազմազանությունն է, որ տալիս է ինձ ազատություն բացահայտելու Պողոսի մեկնաբանությունները (ինչը վերաբերվում է կանանց սահմանափակումներին), թե ինչպես է սահմանափակում առաջին դարի Կորնթոսը և Եփեսոսը: Այս երկու եկեղեցիներում էլ կային խնդիրներ կապված կանանց նոր-հիմնադրված ազատությունը իրականացնելու հետ (տես Bruce Winter, *After Paul Left Corinth*), որը կարող էր դժվարություններ առաջացնել եկեղեցու համար՝ հասնելու իրենց հասարակությանը Քրիստոսի համար: Նրանց ազատությունը պետք է սահմանափակվեր, որպեսզի ավետարանը կարողանար ավելի արդյունավետ լինել:

Իմ օրը Պողոսի ճիշտ հակառակ օրն է: Իմ օրերում ավետարանը կարող է սահմանափակվել, եթե պարզ է, որ վերապատրաստված կանանց չի թույլատրվել ավետարանը բաժնեկցել, չի թույլատրվել առաջնորդել: Ո՞րն է հրապարակավ պաշտամունքի վերջնական նպատակը: Արդյո՞ք դա ավետարանչություն և աշակերտություն չէ: Կարո՞ղ է Աստված փառավորվել և գոհություն ստանալ կին առաջնորդների միջոցով: Աստվածաշունչը որպես ամբողջություն կարծես թե ասում է «այո»:

Ես ուզում եմ զիջել Պողոսին; իմ աստվածաբանությունը հիմնականում Պողոսյան է: Ես չեմ ուզում չափազանց ազդվել կամ աղավաղվել ժամանակակից ֆեմինիզմի միջոցով: Սակայն, ես զգում եմ, որ եկեղեցին դանդաղում է արձագանքել ակնհայտ աստվածաշնչյան ճշմարտություններին, ինչպես ստրկության, ռասիզմի, մոլեռանդության և սեքսի աննպատակահարմարությանը: Այն նաև դանդաղում է համապատասխան արձագանքել կանանց իրավունքների ոտնահարմանը ժամանակակից աշխարհում: Աստված Քրիստոսով ազատում է ծառային ու կնոջը: Ես համարձակվում եմ թույլ չտալ, որ մշակույթը ազդի տեքստի վրա:

Եվս մեկ միտք; որպես մեկնաբան ես գիտեմ, որ Կորնթոսը շատ քայքայված եկեղեցի էր: Խարիզմատիկ պարզները արժեքավորվում էին այնտեղ և ցուցամոլություն էին անում: Հնարավոր է կանայք նույնպես բռնված էին սրանում: Ես նաև կարծում եմ, որ Եփեսոսը կեղծ ուսուցիչների ազդեցության տակ էր, որոնք

օգտվելով առիթից կանանց օգտագործում էին որպես փոխանորդ խոսնակներ Եփեսոսի տնային եկեղեցիներում:

- Գ. Առաջարկություններ հետագա ընթերցանության համար
How to Read the Bible For All Its Worth by Gordon Fee and Doug Stuart (էջ 61-77)
Gospel and Spirit: Issues in New Testament Hermeneutics by Gordon Fee
Hard Sayings of the Bible by Walter C. Kaiser, Peter H. Davids, F. F. Bruce, and Manfred T. Branch (էջ 613-616;665-667)

2: 13-15 Պողոսի փաստարկը այս կոնտեքստում աստվածաբանորեն վերաբերում է Ծննդոց 3-ին: Այն նաև վերաբերում է կեղծ ուսուցիչների անկարգությանը (տես 1 Տիմ. 1: 3-11; 4: 1-5; 5-11-13): Պողոսն օգտագործում է Ծննդոց 3-ը, որպես նմանություն, ինչպես որ Եվան խաբվեց օձի կողմից ընկնելով մեղքի, ապստամբության և անկախության մեջ, այնպես էլ կանանցից ոմանք կեղծ ուսուցիչների կողմից նույն կերպ խաբված էին (տես 1 Տիմ. 5:13; 2 Տիմ. 3: 6-9):

Մեղքի հետևանքները անմիջականորեն կապված են կնոջ ամուսնու հանդեպ ունեցած հնազանդությանը և ցանկությանը (տես Ծննդ. 3:16): Նրա անկախ գործողությունը եղել է և կա աստվածաբանական խնդիրը: Արդյո՞ք սա դեռ մնացել է այսօր: Արդյո՞ք Ավետարանը ամբողջությամբ հեռացրել է Ծննդոց 3-ի մեղքի բոլոր ասպեկտները: Արդյո՞ք մեր ժամանակակից մշակույթը իր վերապատրաստված, արտահայտված կին առաջնորդների հետ մերժում է Պողոսի հստակ հայտարարությունները: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 2:12.

2:14 «մեղք գործեց» Երկու մեղադրանք կա, որը նշանակված է Եվայի համար, նրա օրինազանցության պատճառով. 1) ցավը ծննդաբերության մեջ և (2) իր ամուսնուն հնազանդվելը: ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԸ ՎԱՂԱԿԱՍԱՐ Է, ինչը ենթադրում է, որ դրանք դեռևս գործում են: Հիսուսը սկսեց նոր դարաշրջան, բայց հավատացյալները դեռ ապրում են հին դարաշրջանում:

2:15 «Սակայն կ'ապրի որդեծնութեան համար» Սա շատ բարդ և խճճված հատված է: Հնարավոր է ամենաբարդը բոլոր Պողոսի գրվածքներում: Մենք պետք է հիշենք

1. դրա կապը Ծննդ. 3: 13,16
2. կեղծ ուսուցիչների ուսմունքները
3. հակադրությունը (այն է « բայց»), որը վերաբերում է կեղծ ուսուցիչների խաբեությանը «Կպահվի» կամ «կփրկվի» տերմինը կարող է կապված լինել կամ ծննդաբերության ֆիզիկական փորձառությանը (տես New American Standard Version), որը, կարծես, ամրապնդվում է 1 Տիմ. 4:16 բառի օգտագործմամբ՝ կեղծ ուսուցիչների չարաշահման համար (նրանցից ոմանք, ըստ երևույթին, պաշտպանում են որպես հոգևորապես բարձրակարգ վիճակ, տես 1 Տիմ. 4: 3) կամ հոգևոր վախճանաբանական իմաստով, որը ձևավորում է իր նորկտակարանյան օգտագործման մեծ մասը:

Մի նոր մեկնաբանություն հիմնված է հունական քերականության մանրամասների վրա, որտեղ «որդեծնության միջոցով» արտահայտության ՈՐՈՇԻՉ ՀՈՂԸ, հնարավոր է, վերաբերում է Հիսուս Թրիստոսի մարմնացումին.

1. այս կոնտեքստը վերաբերում է Ծննդ. 3:15
2. *dia* ՆԱԽԴԻՐԸ կարող է թարգմանվել «միջոցով»
3. կա ՈՐՈՇԻՉ ՀՈՂ «որդեծնություն» հասկացության հետ
4. թե ԵԶԱԿԻ և թե ՀՈԳՆԱԿԻ են օգտագործվում «կին...նրանք»

Այսպիսով, Եվան դառնում է բոլոր կանանց ներկայացուցիչը, որոնք փրկվում են հատուկ ծննդաբերությամբ Աստծո խոստումով (այսինքն, Հիսուսը, որը աստվածաբանորեն նման է Ադամ-Քրիստոս տիպաբանությանը, Հռ. 5: 12-21; 1 Կոր. 15:21-22, 44-48; Ֆիլ 2: 6-7):

Անմիջական կոնտեքստը, կարծես, ընդգծում է, որ կանայք, որպես տնային տնտեսուհիներ, Պողոսի օրոք հասարակության ակնկալիքն էր, և շատ հասարակությունների համար, հնագույն և ժամանակակից: Կնոջ փրկությունը չի գալիս հրապարակային երկրպագության մեջ առաջնորդությունից կամ անսպասելի մշակութային ազատությունից:

Ճշմարտության մեջ դա չի գալիս ակնկալվող սոցիալական դերերից, այլ հավատքով և դրա պտուղներով (տես 1 Տիմ. 2:15): Փրկությունը Քրիստոսի մեջ և միջոցով է: Աստվածավախ կանայք հավատում են Նրան և չեն ձգտում ուշադրություն դարձնել իրենց վրա: Սակայն, մեր մշակությամբ «անհարկի ուշադրություն» է տեղի ունենում, երբ կանայք սահմանափակ են: Առաջին հարյուրամյակում մեղավոր մարդիկ կարող էին անջատվել քրիստոնյա գերապատվություններից, այսօրվա մեղավոր մարդիկ անջատված են քրիստոնեական սեքսիզմով և օրինականությամբ: Նպատակը միշտ ավետարանչությունը և աշակերտությունն է, ոչ թե անձնական ազատությունները կամ անձնական նախասիրությունները (տես 1 Կոր. 9: 19-23):

▪ **«Եթե կենայ հաւատքի եւ սէրի եւ սրբութեան մէջ պարկէշտութեան հետ»** Սա ԵՐԸՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ կոնտինգենտային գործողություն: Դժվարությունը հավատացյալ կանանց շարունակությունն է հավատքի, սիրո, սրբության և ինքնազսպվածության: Տես Հատուկ Թեմա Համբերություն 2 Տիմ. 2:11.

«Ինքնազսպվածություն» տես լրիվ ծանուցումը 1 Տիմ. 3: 2:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչպես են այս բաժնի ճշմարտությունները կապվում կեղծ ուսուցիչների հետ:
2. Արդյոք մենք պետք է աղոթենք պետական պաշտոնյաների համար, ովքեր քրիստոնյա չեն և գործում են անբարեխիղճ և անաստված ձևով:
3. Աստված իսկապե՞ս ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն: Արդյո՞ք Հիսուսը իսկապես մահացավ բոլորի մեղքերի համար:
4. Սահմանիր «փրկագին» բառը:
5. Ինչու՞ է քրիստոնյայի պատշաճ հագնվելը թեմա՝ մեր ժամանակակից աշխարհում քննարկման համար:
6. Ինչպե՞ս են լավ գործերը կապվում փրկարար հավատքի հետ:
7. Ո՞րն է կանանց տեղը ժամանակակից եկեղեցում 11-14 համարների լույսի ներքո:
8. Ի՞նչ է նշանակում 15-րդ համարը Նոր Կտակարանի մնացած ուսմունքների լույսի ներքո:

1 ՏԻՄՈԹԵՈՍ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Եպիսկոպոսների որակավորումները	Երեցների որակավորումները	Ադմինիստրատիվ խնդիրներ	Առաջնորդները Եկեղեցում	Երեցի գործը
3:1բ-7	3:1-7	3:1-7	3:1-7	3:1-7
Սարկավագների որակավորումները	Սարկավագների որակավորումները		Օգնականները Եկեղեցում	Սարկավագներ
3:8-13	3:8-13	3:8-13	3:8-13	3:8-13
Մեր Կրոնի Խորհուրդը	Մեծ Խորհուրդը		Մեծ Գաղտնիքը	Հոգևոր Կյանքի Եկեղեցին և Խորհուրդը
3:14-16	3:14-16	3:14-16	3:14-16	3:14-16

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտոդության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ

- Ա. Այս գլուխը թվարկում է երեք տարբեր տեսակի ծառայողներ:
1. հովիվները (1 Տիմ. 3: 1-7)
 2. սարկավագներ (1 Տիմ. 3: 8-10,12-13)
 3. այրիի դերը (1 Տիմ. 3:11; 5: 9-16) կամ սարկավագուհիներ (տես Հռ.16:1)
- Բ. Այս որակավորումները կարող են ուղղակիորեն տարբերվել կեղծ ուսուցիչների կենսակերպից և ուսմունքներից:

Գ. 16-րդ համարը վաղ կազմված հայտարարությունն է կամ օրհներգը: Պողոսը հաճախ ընդգրկեց այսպիսի նյութը (տես Եփ. 5:19; Փիլ 2: 6-11; Կոր. 1: 15-16; 3: 15-20; 2 Տիմ. 2: 11-13): Ռիթմիկ կառուցվածքը ակնհայտորեն երևում է վեց ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԲԱՅԵՐ-ում, զուգորդված հինգ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ կամ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎԵՐ քերականական արտահայտություններով:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 3:1-7
¹Ճշմարիտ է այս խօսքը, եթե մեկը եպիսկոպոսութեան է ցանկանում բարի գործի է ցանկանում: ²Բայց եպիսկոպոսին պետք է անարատ լինել, մեկ կնկան մարդ, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասեր, սովորեցնելու յարմար. ³Ոչ գինեմոլ, ոչ զարկող, այլ հանդարտ, կռիւ չ'անող, ոչ արծաթասեր. ⁴Իր տանը բարի վերակացու լինող, որ որդիներ ունենայ հնազանդութեան մեջ ամեն պարկեշտութիւնով. ⁵(Բայց եթե մեկն իր տանը վերակացու լինել չ'գիտենայ, ի՞նչպէս նա Աստուծոյ եկեղեցուն խնամք կ'տանի.) ⁶Ոչ նորահաւատ որ չ'գոռոզանայ եւ սատանայի դատաստանն ընկնի: ⁷Բայց պետք է նորան, որսիններիցը բարի վկայութիւն էլ ունենայ. Որ չ'ընկնի նախատիքի եւ սատանայի որոգայթի մեջ:

3: 1 «Ճշմարիտ է այս խօսքը» Այս խոսքը կարող է հանդես գալ որպէս եզրափակիչ հայտարարություն և բացման հայտարարություն (տես 1 Տիմ. 1:15; 3: 1; 4: 9; 2 Տիմ.2:11; Տիտոս 3: 8): Սա Հովվական Նամակներում հինգ «Ճշմարիտ» արտահայտություններից երկրորդն է: Նրանք գործածվում են սինտակտիկ կերպով, ինչպէս Հիսուսն է օգտագործումը «ամեն» կամ «ամեն, ամեն» (թարգմանված «իսկապես, իսկապես» կամ «Ճշմարիտ, ճշմարիտ»), հատուկ ուշադրություն դարձնելով արտահայտությանը:

- **«եթե մեկը»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:
- **«է ցանկանում... ցանկանում»** Սրանք երկու ուժեղ հունարեն տերմիններ են, 1) «անձնատուր լինել» (տես 1 Տիմ. 6:10; Եբր. 11:16) և (2) «ցանկացավ» (տես Մատթ. 13:17; Ղուկ. 15:16): Սա ասում է ինձ, որ մեր ժամանակակից շեշտը Աստծո կանչի հինկտակարանյան տեսակի վրա է, որը ծառայության համար կարող է չափազանց սահմանափակ լինել: Եկեղեցում կա առաջնորդ լինելու ցանկություն: Հավատացյալների սրտերի ցանկությունները Տիրոջից են (տես Սաղ. 37: 4):

Արևելահայերեն «եպիսկոպոսութեան»
Արևմտահայերեն «եպիսկոպոսութեան»

- NASB **«երեցի պաշտոն»**
- NKJV **«եպիսկոպոսի դիրք, պաշտոն»**
- NRSV **«եպիսկոպոսի պաշտոն»**
- TEV **«եկեղեցու առաջնորդ»**
- NJB **«նախագահող երեց»**

Սա *episkopos* տերմինն է, և այն սովորաբար թարգմանվում է անգլերեն «եպիսկոպոս» կամ «վերակացու»: Դա, կարծես, հոմանիշ է մյուս երկու նորկտակարանյան տերմինների, տեղական եկեղեցու ղեկավար պաշտոնի համար: «Հովիվ», «վերակացու» և «երեց» տերմինները վերաբերում են նույն պաշտոնին (տես 1 Տիմ. 5:17; Գործք 20:17,28; Տիտոս 1: 5,7; 1 Պետ. 5:1-2): Նոր Կտակարանի

եկեղեցին ունեցել է ընդամենը երկու պաշտոններ՝ հովիվ և սարկավագ (տես Փիլ. 1: 1): Թվում է, թե «երեցր» ուներ հրեական ծագում, իսկ «վերակացուն»՝ հունական քաղաքային պետության ծագում:

3: 2 «անարատ լինել» Սա բանալի որակավորում է տեղական եկեղեցու ղեկավարության համար ամբողջ կոնտեքստում: Արտահայտությունը քննադատության տեղ չի թողնում, թե հավատացյալ համայնքում (1 Տիմ. 3: 2-6) և թե ոչ հավատացյալ համայնքում (1 Տիմ. 3:7): Այս նույն թեման կրկնվում է 7,10-րդ համարներում; 5: 7 և 6:14: Կատարյալ առաջնորդներ չկան, բայց կան աստվածավախ, հարգելի, ընդունելի հավատացյալներ: Տես ծանուցում Տիտոս 1: 6:

Արևելահայերեն «մէկ կնկան մարդ»

Արևմտահայերեն «մէկ կնոջ այր»

NASB, NKJV

NJB «մէկ կնոջ ամուսին»

NRSV «միայն մէկ անգամ ամուսնացած»

TEV «նա պետք է ունենա միայն մէկ կին»

Այս արտահայտությունը շատ քննարկումներ է առաջացրել: Առաջին դարում Եփեսոսում եկեղեցու խնդիրը ակնհայտ էր (տես 1 Տիմ. 3: 1,12; 5: 7 և Կրետեում, Տիտոս 1: 6): Ահա հիմնական մեկնաբանական տեսությունները:

1. դա վերաբերվում է բազմակնությանը
2. այն վերաբերվում է ամուսնալուծությունից հետո նորից ամուսնանալուն
3. այն վերաբերվում է երկրորդ ամուսնությանը՝ առաջին կնոջ մահից հետո
4. այն վերաբերվում է կնոջը հավատարիմ և ուշադիր տղամարդուն (ընտանեկան լավ հարաբերություններ հաստատելու մէկ այլ ձև, տես NEB)

Սա ակնհայտորեն վերաբերում է ընտանեկան հարաբերություններին, և ընտանեկան հարաբերությունների բնագավառում ցանկացած խնդրի, երբ որ մեկը ապառաղավորվում էր առաջնորդության պաշտոնից տեղական եկեղեցում: Թիվ 1-ը Հռոմեական կայսրությունում խնդիր չէր, բայց հուդայականության մեջ առկա խնդիր էր (թեև հազվադեպ էր առաջին դարում); # 2 մեծ խնդիր էր Հռոմեական կայսրությունում, ինչպես նաև հուդայականության մեջ (Hillel ընդդեմ Shammai); # 3 Վաղ Եկեղեցու հիմնական խնդիրն էր, հատկապես Տերտուլիանոսը և դեռևս խնդիր է Եվրոպայում մկրտական եկեղեցիներում: Սակայն, 1 Տիմ. 5: 14 գուցաևեռ հատված է, որտեղ երիտասարդ որբնայրիները կարող են ամուսնանալ առանց նախատիքի (տես Հռ. 7: 2-3; 1 Կոր. 7):

Մեկ այլ տարբերակ կա, որ պահանջը վերաբերվում է ամուսնությանը և ամուրիությանը: Կեղծ ուսուցիչները արգելում էին ամուսնությունը (տես 1 Տիմ. 4: 3): Դա կարող է ուղղակի հերքում լինել իրենց հակվածությանը ամուրիության և ասկետիզմի/սանձարձակության հանդեպ: Սա չի նշանակում, որ չամուսնացածը չի կարող եկեղեցու առաջնորդ լինել, բայց և ամուրիություն էլ չի պահանջվում: Կարծում եմ, որ սա լավագույն տարբերակն է և նաև որ այն պատասխանում է այլ մեկնաբանական խնդիրներին կապված 1) «գինով արբենալու» և (2) կանանց հարցին 1 Տիմ. 2: 8-15: Դրանք պետք է մեկնաբանվեն կեղծ ուսուցիչների լույսի ներքո:

Եթե հարցը ուժեղ, աստվածավախ ընտանիքն է, ապա ամուսնալուծությունը միակ կարևոր խնդիրը չէ: Նույնիսկ հինկտակարանյան ամուսնալուծության ժամանակ երբեմն պատշաճ տարբերակ էր՝ 1) ՅԱՀՎԵՆ բաժանվում է անհավատարիմ Իսրայելից և 2) քահանաներին հանձնարարված էր ամուսնալուծվել անհավատարիմ կանանցից (տես «Old Testament Perspective on Divorce and Remarriage» *Journal of the Evangelical Theological Society*-ի մեջ, հատոր 40, # 4, դեկտեմբեր 1997): Բոլոր մարդիկ փորձառում են պառակտումներ իրենց ընտանեկան կյանքի որոշ

բնագավառներում: Իմ հիմնական մտահոգությունը այս որակավորումը բառացիորեն ընդունելն է, որը այս կոնտեքստում նշանակում է բոլոր մյուսները բառացիորեն ընդունել: Եթե ամուսնալուծությունը ապարակավորում է, ապա այդպես էլ (ա) գինուց կախված լինելը (այսինքն, «գինեմոլ չլինել» 1 Տիմ. 3: 8, որը պարտադիր չէ, որ պատվիրանը ամբողջությամբ ձեռնպահ մնալու մասին է), և բ) «հսկել իրենց զավակներին» 1 Տիմ. 3: 4, որը կվերացնէր շատ ժամանակակից հովիվների և սարկավագների:

Ճշմարտապես, ես չեմ ճանաչում շատ քրիստոնյա առաջնորդների, որոնք կարող էին հետևողականորեն կատարել այդ բոլոր պահանջները իրենց կյանքի ընթացքում: Այսպիսով, նախքան մենք չափազանց կքննադատենք առաջնորդների թերությունները, հիշեք, որ այդ որակավորումը Աստծո կամքն է Իր բոլոր զավակների համար: Ես չեմ պաշտպանում չափանիշների իջեցումը, բայց դրանք չօգտագործել իրավական, դատական իմաստով: Եկեղեցին կարիք ունի աստվածավախ, սոցիալապես ընդունելի առաջնորդների: Այնուամենայնիվ, մենք պետք է ընտրենք փրկված մեղավորներից: Ժամանակակից եկեղեցիները պետք է փնտրեն այն առաջնորդներին, ովքեր ապացուցել են ժամանակի ընթացքում իրենց հավատարմությունը, ոչ թե կատարյալ լինելը:

Մեկ այլ միտք, եթե այս ցանկը չափազանց բառացիորեն ընդունենք, ապա Հիսուսը (քանի որ Նա ամուսնացած չէր) և Պողոսը (ինարավոր է, որ ամուսնալուծված է եղել) չէին կարող եկեղեցու առաջնորդներ լինել: Այդպես եք չե՞ք կարծում:

- **«զգաստ»** Սա բառացիորեն նշանակում է «սթափ լինել»: Քանի որ ակոհոլի չարաշահումը մասնավորապես հիշատակվում է 1 Տիմ. 3: 3, սա, հավանաբար, վերաբերում է այս տերմինի փոխաբերական օգտագործմանը, որը նշանակում է «խելամիտ լինել» (տես 1 Տիմ. 3:11; Տիտոս 2: 2):

Արևելահայերեն «զգաստ»
Արևմտահայերեն «զգաստ»

NASB «խելամիտ»
NKJV «սթափ միտք ունեցող»
NRSV «խելամիտ»
TEV «ինքնակառավարվող»
NJB «խելացի»

Այս տերմինը *sōphrōn* նշանակում է «հավասարակշռված» հունական փիլիսոփայություններում: Դա շատ հայտնի հունարեն տերմին էր, որը նշանակում էր ծայրահեղությունների խուսափում (այսինքն, այսպիսով առաջարկելով «ոսկե միջինը»): Այն օգտագործվել է առողջ միտք ունենալու համար (տես 1 Տիմ. 3: 2; Տիտոս 1: 8; 2: 2,5): Համապատասխան տերմինները նաև գտնվում են 1 Տիմ. 2: 9,15; 2 Տիմ. 1: 7; Տիտոս 2: 4,6,9,12,15.

Հիմնական արմատը (BAGD, էջ 802) գտնվում է Հովվական նամակներում մի քանի ձևով:

1. ԲԱՅ, *sōphroneō* - «խոհեմ», Տիտոս 2: 6)
2. ԲԱՅ, *sōphronizō* - «խրախուսել» (այսինքն, զգաստացնել), Տիտոս 2: 4
3. ԳՈՅԱԿԱՆ, *sōphronismos* - «աշակերտ» (այսինքն, ինքնակառավարող), 2 Տիմ. 1: 7
4. ԳՈՅԱԿԱՆ, *sōphrosunē* - «խելամիտ», 1 Տիմ. 2: 9,15
5. ՄԱԿԲԱՅ, *sōphronōs* - «խելամտորեն» (այսինքն, չափավոր), Տիտոս 2:12
6. ԱՕԱԿԱՆ, *sōphrōn* - «խելացի», «խոհեմ», «խոհուն», 1 Տիմ. 3: 2; Տիտոս 1:8; 2: 2,5

Արևելահայերեն «պարկեշտ»
Արևմտահայերեն «պարկեշտ»

NASB, NRSV «հարզված»

NKJV «լավ վարքի»

TEV «կանոնավոր»

NJB «սրտանց»

Սա *kosmikos* հունարեն տերմինի ձև է: Այն օգտագործվում է Տիտոսում երկու տարբեր իմաստներով 1) բացասական կերպով՝ խուսափել աշխարհային ցանկություններից (2:12) և (2) դրական իմաստով՝ կատարյալ բարի հավատարմությամբ/պատշաճ կարգով (2:10): 1 Տիմոթեոսում կոնտեքստը նշանակում է պատշաճ կարգ կամ կարգապահություն: Այն, ինչը պատշաճ է, հարզված և սպասված տեղական համայնքի կողմից: Հետևաբար, դա 1 Տիմ. 3: 7ա մի ասպեկտն է, «պետք է լավ համբավ ունենա *եկեղեցու* սահմաններից դուրս գտնվողների հետ»:

▪ **«հիւրասէր»** Պողոսի օրերի հյուրանոցները մարմնավաճառության համար էին ծառայում: Հետևաբար, քրիստոնյաները և հատկապես քրիստոնյա առաջնորդները ստիպված էին իրենց տները բացել շրջիկ միսիոներների և համայնքի կարիքավորների համար (տես 1 Տիմ. 5: 10; Տիտոս 1:8; Հռ. 12:13; Եբր. 13:2; 1 Պետ. 4: 9; 2 Հովհ. 5 և 3 Հովհ.):

▪ **«սովորեցնելու յարմար»** Առաջնորդները պետք է կարողանային ուսուցիչներ լինել (տես 2 Տիմ. 2:24): Հետաքրքիր է, որ 1 Կոր. 12:28 «սովորեցնելը» թվարկված է որպես առանձին պարզ, բայց կապված է հովիվի պարզևի հետ Եփ. 4:11: Ակնհայտ էր, որ կային ուսուցիչներ, բայց նաև բոլոր հովիվները պետք է ի վիճակի լինեին գործել այս ոլորտում: Մի իմաստով Եփեսացիս 4-ում բոլոր պարզներով օժտված մարդիկ ավետարանի քարոզիչներ են, բայց տարբեր իմաստներով և տարբեր շեշտադրումներով:

Որոշ աստվածաշնչյան գիտնականներ այս որակավորումը մեկնաբանում են լավ կրթված կամ կրթված մարդկանց համար, կամ, հնարավոր է, նրանց, ովքեր «ուսանելի» են:

Ի վերջո, ուսուցման այս ունակությունը կարող էր կապված լինել կեղծ ուսուցիչների հետ, ովքեր կարծում էին, որ իրենք Օրենքի ուսուցիչներ էին (տես 1 Տիմ. 1: 7), բայց ինքնախաբեքա էին:

3:3

Արևելահայերեն «Ոչ գինեմոլ»

Արևմտահայերեն «Ոչ գինեմոլ»

NASB «գինուց կախված չլինել»

NKJV «գինուն չտրվող»

NRSV «ոչ թե հարբեցող»

TEV «չպետք է հարբեցող լինի»

NJB «ծանր խմող չլինի»

Թվում է, թե ենթադրություն է Սեպտուագինդից Առ. 23: 29-35: Պետք է վերհիշել, որ Աստվածաշունչը խոսում է հարբեցողության դեմ, բայց չի սովորեցնում ամբողջովին ձեռնպահ մնալ խմիչքից (տես 1 Տիմ. 3:8; 5:23; Տիտոս 1:7; 2: 3): Ընդհանուր չափավոր լինելը գալիս է հավատացյալների Տեր Հիսուսին անհատական նվիրումից, հիմնվելով նրանց անձնական ազատությունների սահմանափակման վրա, կապված թե որ մշակույթում են ծառայում (տես Հռ. 14: 1-15: 13 և 1 Կոր. 8-10): Լավ հոդվածի համար տես *Hard Sayings of the Bible* by Kaiser, Davids, Bruce, and Branch, էջ 673-674:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԱԼ ԿՈՆՈՒԻ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

- I. Աստվածաշնչյան տերմիններ
- Ա. Հին Կտակարան
1. *Yayin* - Սա ընդհանուր տերմին է գինու համար (BDB 406, KB 409), որն օգտագործվում է 141 անգամ: Ստուգաբանությունն անորոշ է, քանի որ դա չունի հրեական արմատ: Դա միշտ նշանակում է թթվեցրած մրգահյութ, սովորաբար խաղողի: Որոշ բնորոշ հատվածներ Ծննդ. 9:21; Ելից 29:40; Թվոց 15: 5,10:
 2. *Tirosh* - Սա «նոր գինին» է (BDB 440, KB 1727): Մերձավոր Արևելքի կլիմայական պայմաններից ելնելով թթվեցումը շուտ է սկսվել, հյութ քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերվում է գինու թթվեցման գործընթացին: Որոշ բնորոշ հատվածներ, տես 2 Օր. 12:17; 18: 4; Ես. 62: 8-9; Ովս. 4:11:
 3. *Asis* – Սա ակնհայտորեն ակոհոլային խմիչքներ է («քաղցր գինի», BDB 779, KB 860, օրինակ Հովել 1: 5; Ես. 49:26):
 4. *Sekar* – Սա «թունդ խմիչք» տերմինն է (BDB 1016, KB 1500): Եբրայերեն արմատն օգտագործվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինի մեջ: Դրա վրա ինչ - որ բան է ավելացված , որպեսզի այն ավելի հարբեցնող լինի: Այն զուգահեռ է *yayin* (տես Առ. 20: 1; 31: 6; Ես. 28: 7):
- Բ. Նոր Կտակարան
1. *Oinos* – *yayin*-ի հունարեն համարժեքն է
 2. *Neos oinos* (նոր գինի)- *tirosh*-ի հունարեն համարժեքը (հմմտ. Մարկ. 2:22)
 3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) - գինի թթվեցման վաղ փուլում (հմմտ. Գործք 2:13)
- II. Աստվածաշնչյան օգտագործում
- Ա. Հին Կտակարան
1. Գինին Աստծո պարզն է (Ծննդ 27:28, Սաղ. 104: 14-15; Ժող. 9: 7; Ովս. 2: 8-9; Հովել 2: 19,24; Ամովս 9:13; Զաք. 10: 7):
 2. Գինի զոհաբերության արարողության մի մասն է (Ելից 29:40; Ղև. 23:13; Թվոց 15: 7,10; 28:14, 2 Օր. 14:26; Դատ. 9:13):
 3. Գինին օգտագործվում է որպես դեղորայք (2 Թագ. 16: 2; Առ. 31: 6-7):
 4. Գինի կարող է իսկական խնդիր լինել (Նոյ - Ծննդ 9:21; Ղովտ - Ծննդ 19: 33,35; Սամսոն - Դատ. 16; Նաբաղը - 1 Թագ. 25:36; Ուրիան - 2 Թագ. 11 : 13; Ամնոնը - 2 Թագ. 13:28; Էլան - 3 Թագ. 16: 9; Բենադադ - 3 Թագ. 20:12; իշխանները - Ամովս 6: 6 և տիկնայք - Ամովս 4):
 5. Գինին կարելի է չարաշահել (Առ. 20:1; 23: 29-35; 31: 4-5; Ես. 5: 11,22; 19:14; 28: 7-8; Ովսեէ 4:11):
 6. Գինին արգելվում էր որոշակի խմբերի (քահանաներին ծառայության ժամանակ, Ղև. 10: 9; Եզեկ. 44:21; Ուղտավորները, Թվ. 6 և իշխանները, Առ. 31: 4-5, Եսայի 56: 11-12; Ովսեէ 7: 5):
 7. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Ամովս 9:13; Հովել 3:18; Զաք. 9:17):
- Բ. Ոչ աստվածաշնչյան գրքեր
1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող. 31:27-33):
 2. Ռաբբիներն ասում են «Գինին բոլոր դեղերից մեծագույնն է, որտեղ գինին բացակայում է, դեղերն են անհրաժեշտ դառնում» (BB 58B):
- Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը փոխեց գինու (Հովհ. 2: 1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ. 11: 18-19; Ղուկ. 7: 33-34; 22: 17):
3. Պետրոսը մեղադրվում է հարբեցողության մեջ «նոր գինի» Պենտեկոստի Օրը (Գործք 2:13):
4. Գինի կարող է օգտագործվել որպես դեղամիջոց (Մարկ. 15:23; Ղուկ. 10:34; 1 Տիմ. 5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահող լինեն: Սա չի նշանակում լրիվ ձեռնապահ մնալ (1 Տիմ. 3: 3,8; Տիտոս 1: 7; 2: 3; 1 Պետ. 4: 3):
6. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Մատթ. 22:1; Հայտ. 19: 9):
7. Հարբեցողությունն արտահայտում էր ավստասանք ինչ որ առիթի դեպքում (Մատթ. 24:49; Ղուկ.12:45; 21:34; 1 Կոր. 5: 11-13; 6:10; Գաղ. 5:21; 1 Պետ. 4: 3; Հռ. 13 : 13-14):

III. Աստվածաբանական ներըմբռնում

Ա. Դիալեկտիկական լարվածություն

1. Գինին Աստծո պարզն է:
2. Հարբեցողությունը մեծ խնդիր է:
3. Հավատացյալները, որոշ մշակույթներում, պետք է սահմանափակեն իրենց ազատությունները հանուն Ավետարանի (Մատթ. 15: 1-20; Մարկ. 7: 1- 23; 1 Կոր. 8-10; Հռ. 14):

Բ. Տրված սահմաններից դուրս գալու միտում

1. Աստված է բոլոր լավ բաների աղբյուրը
 - ա. Ուտելիք –Մարկ. 7:19; Ղուկ. 11:44; 1 Կոր. 10: 25-26
 - բ. ամեն ինչ մաքուր է - Հռ. 14: 14, 20; 1 Տիմ. 4: 4
 - գ. ամեն բան օրինավոր է - 1 Կոր. 6:12; 10:23
 - դ. բոլոր բաները մաքուր են- Տիտոս 1:15
2. Մեղավոր մարդկությունը չարաշահել է Աստծո բոլոր պարզները՝ հանելով դրանք Աստծո կողմից տրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական ստեղծագործության մեջ ոչ մի չար բար չկա (տես վերը Բ. 1):

IV. Առաջին դարի հրեական մշակույթն ու խմորումը/թթվեցումը

Ա. Խմորումը շատ շուտ է սկսվում, խաղողը ճզմելուց մոտավորապես 6 ժամ անց

Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ երբ մի փոքր փրփուր է հայտնվում մակերեսին (դա խմորումի նշան է), այն ենթակա է գինու-տասասնորդի (*Ma aseroth* 1: 7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:

Գ. Հիմնական խմորումը/թթվեցումը ավարտվում է մեկ շաբաթ հետո:

Դ. Երկրորդական խմորումը տևում էր մոտ 40 օր: Այս վիճակում դա համարվում է «հնացած գինի» և կարող էր առաջարկվել գոհասեղանի ծառայության ժամանակ (*Edhuyyoth* 6:1):

Ե. Գինին, որը հանգստացել էր իր նստվածքի մեջ (հին գինի) համարվում էր լավը, բայց նախքան օգտագործելը պետք էր լավ քամել:

Զ. Գինին համարվում էր պատրաստ կամ տարիքով թթվեցումից սովորաբար մեկ տարի հետո: Երեք տարի էր ամենաերկար ժամանակահատվածը, որ գինին կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է բացվեր ջրով:

Է. Միայն վերջին 100 տարիների ընթացքում ստերիլ միջավայրի և քիմիական

հավելումների պատճառով խմբումը կամ թթվեցումը երկարել է: Հին աշխարհը չի կարող կանգնեցնել թթվեցման բնական գործընթացը:

V. Եզրափակիչ մտքեր

Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և աստվածաշնչյան մեկնաբանությունը չեն արժեզրկում Հիսուսին և առաջին դարի հրեական / քրիստոնեական մշակույթը: Նրանք ակնհայտորեն ոչ ամբողջապես չիմող էին:

Բ. Ես չեմ քարոզում ալկոհոլի սոցիալական օգտագործումը: Սակայն, շատերը չափազանցել են Աստվածաշնչի դիրքորոշումը այս թեմայի շուրջ և այժմ պնդում են, որ բարձրակարգ արդարությունը հիմնված է մշակութային / հարանվանական կողմնակալության վրա:

Գ. Ինձ համար Հռ. 14 և 1 Կոր. 8-10 գլուխները տալիս են պատկերացում և ուղեցույց՝ հիմնված սիրո և հարգանքի վրա, դեպի մեր հավատակիցները և ավետարանի տարածումը մեր մշակույթներում, ոչ անձնական ազատությունը, ոչ էլ դատապարտող քննադատությունը: Եթե Աստվածաշունչը միակ աղբյուրն է հավատքի և գործունեության, ապա մենք պետք է վերանայենք այդ հարցը:

Դ. Եթե մենք հակված ենք ամբողջական չափավորությանը որպես Աստծո կամք, ինչ ենք ենթադրում Հիսուսի մասին, ինչպես նաև այն ժամանակակից մշակույթները, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օրինակ Եվրոպա, Իսրայել, Արգենտինա):

▪ **«ոչ զարկոդ»** Այս բառը բառացիորեն նշանակում է «չհարձակվոդ» (տես Տիտոս 1:7): Սա կարող է կապված լինել ալկոհոլի չարաշահման հետ, քանի որ այն ազդում է բոլոր միջանձնային հարաբերություններում (այսինքն՝ ընտանիք, տնային եկեղեցիներ, կեղծ ուսուցիչներ):

▪ **«այլ հանդարտ»** Սա վերաբերվում է սիրառատ մտածելակերպին, որը պատրաստ է ուրիշներին զիջել (տես Եփ. 5:21): Այն նկարագրում է մի բարի, հեզ մարդու (տես Տիտոս 3:2; Հակոբոս 3:17; 1 Պետ. 2:18):

▪ **«կռիւ չ'անող»** Սա հունարեն տերմին է պայքարի, ճակատամարտի, կոնֆլիկտի համար, բայց ՀԱԿԱՌԱԿԸ, որն անտեսում է իմաստը: Հետևաբար, դա նշանակում է, մարդ ով չի պայքարում կամ խթանում հակասությանը (տես Տիտոս 3: 2): Հեշտ է տեսնել, թե ինչպես են կեղծ ուսուցիչները գրականորեն հակադրում 3-րդ գլխին (և բոլոր Հովվական նամակները):

Արևելահայերեն **«ոչ արծաթասէր»**

Արևմտահայերեն **«ոչ արծաթասէր»**

NASB **«ազատ փողասիրությունից»**

NKJV **«ոչ ազահ»**

NRSV **«ոչ թե փողասէր»**

TEV **«նա չպետք է փող սիրի»**

NJB **«ոչ կծծի»**

Սա «արծաթ» տերմինից և «եղբայրական սիրո» տերմինից բաղկացած մի բարդ բառ է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը հավասար է «ոչ թե փող սիրող» (տես 1 Տիմ. 6: 6-10; Տիտոս 1:7; Եբր. 13:5; 1 Պետ. 5: 2): Սա կեղծ ուսուցիչների ևս մեկ բնորոշ հատկանիշ էր: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՐՏՈՒԹՅՈՒՆ](#) 1 Տիմ. 6: 8.

3: 4-5 «Իր տանը բարի վերակացու լինող» Առաջնորդությունը կարելի է տեսնել տանը: Ամուսինների և կնոջ կամ երեխաների կամ ծնողների միջև ցանկացած դժվարություն հիմք էր որակագրկվելու համար այս վաղ եկեղեցու միջավայրում: Հիմնական մտահոգությունն է «քննադատության համար բռնվելու տեղ չկա»: Թե ինչպես է մեկն իր տունը դեկավարում, ցույց կտա եկեղեցուն առաջնորդելու իր միտումները (տես 1 Տիմ. 3: 5, որը ներածական հարցին «ոչ» պատասխան է ակնկալում): Օհ, սա կորակագրկի շատ ժամանակակից ծառայողների, եթե ընդունվի բառացիորեն և նամակում: Շատ դրական, ինչպես նաև բացասական հատկանիշներ են նշված 1 Տիմ. 3: 2-3-ում, որոնք բացահայտվում են տնային միջավայրում: «Նախ ստուգեք տունը» լավ խորհրդատվություն է կադրային հանձնաժողովների համար:

3: 5 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

▪ **«եկեղեցի»**

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵԿԵՂԵՑԻ (*ekklesia*)

Այս հունարեն *ekklesia* տերմինը երկու բառերից է կազմված «դուրս» և «կանչված»: Այս բառն ուներ աշխարհիկ օգտագործում (այսինքն՝ քաղաքացիներին կանչել են ժողովի, տես Գործք 19:32,39,41) և Սեպտուագինդում այս տերմինը օգտագործվում է կրոնական իմաստով Իսրայելի «համայնքի» համար (*Qahal*, BDB 874, KB 1078, տես Թվոց 16:3; 20:4; 2 Օր. 31:30): Վաղ եկեղեցին իրեն համարում էր որպես Հին Կտակարանի Աստծո ժողովրդի շարունակություն: Նրանք էին նոր Իսրայելը (տես Հռ. 2: 28-29; Գաղ. 3:29; 6:16; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6), Աստծո համաշխարհային առաքելության իրականացումը (տես Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5-6; Մատթ. 28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

Այս տերմինը մի քանի իմաստներով օգտագործվում է Ավետարաններում և Գործքում

1. աշխարհիկ քաղաքային ժողով, Գործք 19:32,39,41
2. Աստծո համամարդկային ժողովուրդը Քրիստոսում, Մատթ. 16:18 և Եփեսացիս թուղթը
3. Քրիստոնյա հավատացյալների տեղական համայնքը, Մատթ. 18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին); Գործք 13:1; Հռ. 16:5; 1 Կոր. 16:19; Կող. 4:15; Փիլիմոն 2
4. Իսրայել ժողովուրդը միասին, Գործք 7:38, Ստեփանոսի քարոզում
5. տարածաշրջանում Աստծո ժողովուրդը, Գործք 8:3; Գաղ. 1: 2 (Հուդա կամ Պաղեստին)

Եկեղեցին հավաքված ժողովուրդ է, ոչ թե շենք: Հարյուրավոր տարիներ չեն եղել եկեղեցական շինություններ: Հակոբոս թղթում (ամենահին քրիստոնեական գրքերից մեկը) եկեղեցուն ասվում է «*synagōgē*» (ժողովարան): Եկեղեցու համար այս տերմինը հանդիպում միայն Հակոբոսում (տես Հակ. 2: 2; 5:14):

3: 6 «Ոչ նորահաւատ» Սա բաց է թողնված Տիտոս թղթում: 1 Տիմոթեոսը գրվել է Եփեսոսի համար, որը հաստատված եկեղեցին էր, իսկ Տիտոսը գրվել է Կրետեին, որը նոր գործող էր: Նրանք բոլորն էլ նորադարձներ էին: Այստեղ օգտագործվող տերմինի արմատը նշանակում է «երիտասարդ բույս»: Սակայն ճշգրիտ ժամանակի գործոնն անորոշ է:

▪ «որ չզոռոզանայ եւ սատանայի դատաստանն ընկնի» Հպարտությունը մեծ խնդիր է հրեշտակների և մարդկանց համար (տես 1 Տիմ. 6:4, 2 Տիմ. 3:4): ԲԱՅԸ (ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) նշանակում է «կուրանալ»: Մեռական հոլովը «սատանայի» կարող է վերաբերել

1. սատանայի կողմից տրված դատավճիռը (տես 1 Տիմ. 3:7)
2. սատանան ստացավ նույն ձևի դատավճիռ (տես NKJV, TEV, NJB)

Պողոսը մարդու հոգևոր թշնամու մասին մի քանի անգամ նշում է 1 Տիմոթեոսում (բայց ոչ 2 Տիմոթեոսում կամ Տիտոսում):

1. դև/սատանա (*diabolos*, 1 Տիմ.3: 6,7)
2. սատանա (*Satanas*, 1 Տիմոթ. 1:20, 5:15)
3. դիվական/սատանայական (*daimonion*, 1 Տիմ. 4: 1)

Աստվածաշնչյան աշխարհայացքը, որ մարդն ունի հոգևոր հակառակորդ (տես Եփ. 2: 2; 6: 10-19), երևում է թե Հին Կտակարանում, և թե Նոր Կտակարանում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՏԱՆԱ

Այս թեման շատ բարդ է մի քանի պատճառներով.

1. Հին Կտակարանը չի բացահայտում բարու ռիսերիմ թշնամու, այլ որպես այլ ՅԱՀՎԵԻ ծառա (տես A. B. Davidson, *OT Theology*, էջ 300-306), որն առաջարկում է մարդկությանը այլընտրանք և մեղադրում է մարդկությանը անիրավության մեջ: Կա միայն մեկ Աստված (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ), մեկ զորություն/իշխանություն, մեկ պատճառ Հին Կտակարանում՝ ՅԱՀՎԵՆ (տես Ես. 45: 7; Ամովս 3: 6):
2. Աստծո անձնական ռիսերիմ թշնամու գաղափարը զարգացել է միջաստվածաշնչյան (ոչ կանոնական) գրականության մեջ, պարսկական դուալիստիկ կրոնների ազդեցության ներքո (գրահաղաշտական կրոն): Սա, իր հերթին, մեծապես ազդեց ուղղափառ հուդայականության և Էսսենական համայնքի վրա (այսինքն, Մեռյալ Ծովի մագաղաթները):
3. Նոր Կտակարանը զարգացնում է Հին Կտակարանյան թեմաները զարմանալիորեն սթափ, բայց ընտրովի, կատեգորիաներում:

Եթե մեկը չարի ուսումնասիրությանը մոտենում է աստվածաշնչյան աստվածաբանության տեսանկյունից (յուրաքանչյուր գիրք կամ հեղինակ կամ ժանր ուսումնասիրված և ուրվագծված է առանձին), ապա չարի տարբեր տեսակետներ են բացահայտվում:

Այնուամենայնիվ, եթե մեկը չարի ուսումնասիրությանը մոտենում է համաշխարհային կրոնների կամ արևելյան կրոնների ոչ աստվածաշնչյան կամ հավելյալ աստվածաշնչյան մոտեցումով, ապա Նոր Կտակարանյան զարգացման մեծ մասը ներկայացված է պարսկական դուալիզմի և հունա-հռոմեական սպիրիտիզմի տեսանկյունից:

Եթե մեկը ենթադրաբար հավատարիմ է Գրքի աստվածային հեղինակությանը (ինչպես ես եմ), ապա Նոր Կտակարանի զարգացումը պետք է դիտվի որպես պրոգրեսիվ հայտնություն: Քրիստոնյաները պետք է հսկեն հրեական ժողովրդական բանահյուսությանը կամ արևմտյան գրականությանը (Դանտե, Միլթոն) թույլ չտալու հետագա ազդեցություն գաղափարի վրա: Հայտնության այս բնագավառում կա խորհուրդ և անորոշություն: Աստված ընտրել է չհայտնել չարի բոլոր կողմերը, դրա ծագումը (տես Հատուկ Թեմա: Արուսյակ), նրա զարգացումը, նրա նպատակը, բայց հայտնում է նրա պարտությունը:

Հին Կտակարանում «սատանա» կամ «մեղադրող» տերմինը (BDB 966, KB 1317) կարող է վերաբերել երեք առանձին խմբերի

1. մարդ մեղադրողներ (տես 1 Թագ. 29: 4; 2 Թագ. 19:22; 3 Թագ. 11: 14,23,25; Սաղ. 109: 6)
2. հրեշտակային մեղադրողներ (տես Թվոց 22: 22-23; Հոբ 1-2; Զաք. 3: 1)

3. դիվային մեղադրողներ (տես 1 Մնաց. 21:1; 1 Թագ. 22:21; Ջաք 13:2)

Հետագայում միայն միջկտակարանյան ժամանակահատվածում Ծննդոց 3-ի օձը նույնանում է սատանայի հետ (այսինքն Իմաստության Գիրք 2.23-24; II Ենոք 31:3), և նույնիսկ ավելի ուշ դա դառնում է ռաբբիական տարբերակ (տես *Sot* 9 և *Sanh* 29): Ծննդոց 6-ի «Աստծո որդիները» հրեշտակ են դառնում I Ենոք 54:6: Ես սա նշում եմ, ոչ թե հաստատելու աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու նրա զարգացումը: Նոր Կտակարանում այս Հին Կտակարանյան գործունեությունները վերագրվում է հրեշտակային, անձնավորված չարին (տես 2 Կոր. 11:3; Հայտ. 12: 9):

Անձնավորված չարի ծագումը դժվար է կամ անհնար (կախված է ձեր տեսանկյունից) որոշել Հին Կտակարանից: Դրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ մոնոթեիզմն է (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ, ինչպես նաև 3 Թագ. 22:20-22; Ժող. 7:14; Ես. 45:7; Ամովս 3:6): Բոլոր պատճառները (տես Ես. 45:7; Ամովս 3:6) վերագրվում են ՅԱՀՎԵԻՆ, ցույց տալու Նրա եզակիությունն ու գերակայությունը (տես Ես. 43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Հնարավոր տեղեկությունների աղբյուրներն են (1) Հոբ 1-2, որտեղ սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն, հրեշտակները) կամ 2) Եսայիա 14 և Եզեկիել 28, որտեղ հպարտ մերձավոր արևելքի թագավորներ (Բաբելոն և Տյուրոս) հնարավոր է, որ նկարագրում են սատանայի հպարտությունը (տես I Տիմ. 3: 6):

Ես այս մտտեցման վերաբերյալ խառը զգացումներ ունեմ: Եզեկիելը օգտագործում է Եդեմի պարտեզի փոխաբերությունը, ոչ միայն Տյուրոսի թագավորի համար, որպես սատանա (տես Եզ. 28:12-16), այլ նաև Եզիպտոսի թագավորի համար, որպես Բաբի և չարի գիտության ծառ (Եզեկիել 31): Այնուամենայնիվ, Եսայիա 14, հատկապես հհ. 12-14-ը, կարծես, նկարագրում է հրեշտակային ապստամբությունը հպարտության միջոցով: Եթե Աստված ուզում էր մեզ բացահայտել սատանայի բնությունը և ծագումը, սա շատ շեղունակ ձև և տեղ է դա անել: Մենք պետք է զգուշանանք սխտեմատիկ աստվածաբանության միտումը տարբեր կտակարանների, հեղինակների, գրքերի և ժանրերի փոքր, երկիմաստ մասերը վերածելու և դրանք որպես մեկ աստվածային հանելուկ համադրելու:

Ես համաձայն եմ Ալֆրեդ Էդերսհայմի հետ (*The Life and Times of Jesus the Messiah*, հատոր 2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական հուդայականությունը մեծ ազդեցության ենթարկվել պարսկական դուալիզմի և դիվային շահարկումների կողմից: Ռաբբիները այս ոլորտում ճշմարտության լավ աղբյուր չեն: Հիսուսը արմատապես տարբերվում է այս բնագավառում ժողովարանի ուսմունքներից: Կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ ռիտերիմ թշնամու գաղափարը զարգացել է երկու պարսկական դուալիզմի բարձր չաստվածների, *Ahkiman* և *Ormaza* կողմից, և այնուհետև մշակվել ռաբբիների կողմից ՅԱՀՎԵԻ և սատանայի աստվածաշնչյան դուալիզմի մեջ:

Նոր Կտակարանում, անշուշտ, պրոգրեսիվ հայտնություն կա չարի անձնավորության, բայց ոչ այնքան ճարտար, որքան ռաբբիները: Այս տարբերության լավ օրինակն է «պատերազմը երկնքում»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, բայց մանրունքները հայտնի չեն (տես Հատուկ Թեմա: Սատանայի և Նրա հրեշտակների անկումը): Նույնիսկ այն, ինչ տրված է, ծածկված է ապոկալիպտիկ ժանրի մեջ (տես Հայտ. 12: 4, 7,12-13): Թեև սատանան պարտված է Հիսուսով և աքսորված երկիր, նա դեռ գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես Մաթ. 4: 1; Դուկ. 22: 31-32; 1 Կոր. 5: 5, 1 Տիմ. 1:20):

Այս ոլորտում մենք պետք է ընդլայնենք մեր հետաքրքրասիրությունը: Գոյություն ունի գայթակողության և չարի անձնական ուժ, սակայն կա միայն մեկ Աստված, և մենք դեռևս պատասխանատու ենք մեր ընտրությունների համար: Կա հոգևոր պատերազմ, փրկությունից առաջ և հետո: Հաղթանակը կարող է միայն գալ և մնալ Երրորդության միջոցով: Չարը պարտվել է և

3: 7 «պետք է նորան, դրսիններիցը բարի վկայութիւն էլ ունենալ» Առաջնորդութիւնը անհավատ համայնքի կողմից պետք է դիտվի որպէս անկեղծ և ազնիվ, որը եկեղեցին փորձում է Քրիստոսով հավատքի բերել (5:14; 6: 1, Տիտոս 2:5,6,10; 1 Կոր. 10:32; Կող. 4: 5; 1 Թես. 4:12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԴՍԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Դատաստանը անխուսափելի է (տես Մատթ. 12:36; Եբր. 9:27; 10:27; 2 Պետ. 2: 4,9, 3: 7):

Ա. Ո՞վ է դատավորը

1. Աստված (տես Հռ. 2: 2-3; 14: 10,12; 1 Պետ. 1:17; 2:23; Հայտ. 20: 11-15)
2. Քրիստոսը (տես Հովհ. 9:39; Մատթ. 16:27; 25:31-46; Գործք 10:42; 17:31; 2 Կոր. 5:10; 2 Տիմ. 4:1)
3. Հայրը Որդու միջոցով (տես Հովհ. 5:22-27; Գործք 17:31; Հռ. 2:16)

Դատաստանը տիպաբան է, բայց կրկնվող թեմա է Աստվածաշնչում: Այն հիմնված է մի քանի հիմնարար աստվածաշնչյան ճշմարտությունների վրա:

1. Սա բարոյական տիեզերք է, որը ստեղծվել է բարոյական Աստծո կողմից (մենք հավաքում ենք այն, ինչ մենք սերմանում ենք, Գաղ. 6:7):
2. Մարդկությունը մեղավոր է; մենք ապստամբեցինք:
3. Աստված այսպիսի աշխարհը չէ մտադրվել ունենալ:
4. Բոլոր գիտակից ստեղծագործությունները (հրեշտակները և մարդիկ) հաշիվ պիտի տան իրենց Արարչին իրենց կյանքի պարզևի համար: Մենք տնտեսներ ենք:
5. Հավիտենականությունը մշտապես կորոշվի այս կյանքում մեր կատարած գործողությունների և ընտրությունների միջոցով:

Բ. Արդյո՞ք քրիստոնյաները պետք է դատեն միմյանց: Այս հարցը պետք է լուծվի երկու ձևով:

1. հավատացյալներին հորդորված է չդատել միմյանց (տես Մատթ. 7: 1-5; Ղուկ. 6: 37,42; Հռ. 2: 1-11; Հակ. 4:11-12)
2. հավատացյալներին խորհուրդ է տրվում գնահատել առաջնորդներին (տես Մատթ. 7: 6, 15-16; 1 Կոր. 14:29; 1 Թես. 5:21; 1 Տիմ. 3:1-13; 1 Հովհ. 4: 1 -6)

Ճիշտ գնահատման համար որոշ չափանիշներ կարող են օգտակար լինել:

1. Գնահատումը պետք է լինի հաստատման նպատակով (տես 1 Հովհ. 4: 1, «փորձել», հաստատելու համար, տես Հատուկ Թեմա: Փորձել [peirazō և dokimazō])
2. գնահատումը պետք է կատարվի խոնարհությամբ և նրբանկատորեն (տես 6: 1)
3. գնահատումը չպետք է կենտրոնանա անձնական նախասիրության հարցերի վրա (տես Հռ. 14: 1-23; 1 Կոր. 8: 1-13; 10: 23-33)
4. գնահատումը պետք է բացահայտի այն առաջնորդներին, ովքեր «քննադատության չեն ենթարկվել» եկեղեցու կողմից կամ համայնքից (տես 1 Տիմ. 3):

- «Որ չ'ընկնի նախատինքի եւ սաստանայի որոգայթի մէջ» Պողոսը մտահոգված էր հոգևոր պատերազմի մասին (տեւ 1 Տիմ. 6: 9-10; Եփ. 2: 1-3; 4:14; 6:10-19): Աստվածապաշտ լինելը զենք է, բայց եսասիրությունը բաց դուռ է չարի կողմից շահագործվելու համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 3:8-13

⁸Այնպէս էլ սարկաւագները պէտք է ծանրաբարոյ լինեն. Ոչ երկու լեզուանի, ոչ գինու մոլի. Ոչ ամօթալից շահ սիրող. ⁹Այլ հաւատքի խորհուրդը սուրբ խղճմտանքի մէջ ունեցող: ¹⁰Եւ սորանք առաջ թող փորձուին, եւ յետոյ այն պաշտօնը մտնեն, եթէ անարատ լինեն: ¹¹Այնպէս էլ նորանց կանայքը պէտք է ծանրաբարոյ լինեն. Ոչ թէ չարախօս, այլ զգաստ, ամեն բանի մէջ հաւատարիմ: ¹²Սարկաւագները մէկ կնկան մարդ լինին, իրանց որդկանցը եւ իրանց տներին բարի վերակացու: ¹³Որովհետեւ պաշտօնը լաւ կատարողներն իրանց անձերի համար բարի աստիճան են շահում, եւ շատ համարձակութիւն՝ այն հաւատքումը որ Քրիստոս Յիսուսումն է:

3: 8 «սարկաւագները» Սարկավագների մասին ընդհանրապես չի հիշատակվում 2 Տիմոթեոսում և Տիտոսում: Սարկավագի պաշտոնը և գործառույթը չի սահմանվում Նոր Կտակարանում: Շատերը ենթադրում են, որ Գործք 6-ը այս հատուկ նպատակաուղղված պաշտոնի սկիզբն է, բայց դա քիչ հավանական է թվում: Այստեղ հանդես են գալիս հովիվների հետ միասին, որպես տեղական եկեղեցու երկու գործառույթներ / պաշտոններ (տեւ Փիլ. 1: 1): «Սարկավագ» տերմինը նշանակում է «փոշի բարձրացնել», որը փոխաբերական է խնամակալական ծառայության համար: Այն Նոր Կտակարանում դարձավ ընդհանուր բառ «ծառայության» համար (տեւ 1 Տիմ. 1:12; 4: 6; 2 Տիմ. 1:18; 4: 5, 11): Սարկավագները ծառաներ են, ոչ կառավարիչներ:

- «Այնպէս էլ» Եկեղեցու առաջնորդների որակավորումը տարածվում է նոր խմբի վրա, ինչպես որ իրենք են՝ «կանայք» 1 Տիմ. 3:11.
- «պէտք է ծանրաբարոյ լինեն» Տեւ ծանուցում 1 Տիմ. 2: 2:
- «Ոչ երկու լեզուանի» Սա նշանակում է տարբեր բաներ ասել տարբեր խմբերին՝ կեղծ ապացույցներով ընդունվելու համար: Սա սուտ խոսելու և կեղծիքի ձև է:

**Արևելահայերեն «ոչ գինու մոլի»
Արևմտահայերեն «ոչ գինեսեր»**

- NASB «կախվածություն չունենալ գինուց»
- NKJV «շատ գինուն չտրվել»
- NRSV «անձնատուր չլինել գինու մեջ»
- TEV «նրանք պետք է չափավոր գինի խմեն»
- NJB «նրանք չպետք է շատ գինի խմեն»

Սա *pros* և *echō* բաղադրիչն է, ինչը նշանակում է, «ունենալ լրացուցիչ» կամ «ամուր կառչել»: Այս կոնտեքստում, գուցե նաև «ինքն իրեն տալ կամ տրվել» (Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, էջ 349): Այս արտահայտությունը, ինչպես 1 Տիմ. 3:3, սա չի վերաբերվում ամբողջովին ձեռնպահ մնալուն, այլ չարաշահելուն: Որոշ մշակույթներում, նույնիսկ մեր օրերում քրիստոնյաները ոչ մի խնդիր չունեն այս դրույթի հետ: Ամերիկայում ավրոհովի չարաշահումը հանգեցրեց ժուժկալության շարժմանը, որը չափազանցաբար աստվածաշնչյան հատվածները: Եթե

մենք, ինչ-ինչ պատճառներով, դիտավորյալ չափազանցնում ենք աստվածաշնչյան դիրքորոշումը, մենք դառնում ենք չափանիշ, և ոչ թե Աստվածաշունչ: Խնդիր է ավելացնել Աստվածաշնչին (նույնիսկ ամենամաքուր դրդապատճառներով և անկեղծ պատճառներով), ինչպես նաև հանել Աստվածաշնչից: Արդյո՞ք Աստվածաշունչը միակ աղբյուրն է հավատքի և գործնականի համար: Եթե այո, ապա այն պետք է դատապարտեն բոլոր մշակույթները: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 3:

▪ **«Ոչ անօթալից շահ սիրող»** Սա վերաբերում է այս բաժնի եկեղեցական առաջնորդների գործարար ազնվությանը: Եթե փողը գերակա է (տես 1 Տիմ. 6:9-10), ապա Հիսուսը չի կարող լինել: Կեղծ վարդապետները հաճախ Նոր Կտակարանում բնութագրվում են որպես ազահ և սեռական շահագործող: Հիշեք, այս ամբողջ կոնտեքստը արտացոլում է հերետիկոսների չարաշահումները:

3: 9 «Այլ հաւատքի խորհուրդը ունեցող» Այս առեղծվածը, կարծես, վերաբերվում է թե հրեային, և թե հույնին, որ ընդգրկված են Աստծո ընտանիքում (տես Եփ. 2: 11-3: 13; Կող. 1: 26,27): «Հավատք» տերմինն ունի ՈՐՈՇԻՉ ՀՈՂ, որը նշանակում է, որ այն վերաբերվում է քրիստոնեական վարդապետության մարմնին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ «ԽՈՐՀՈՒՐԴ»

Ա. Սինոպտիկ Ավետարաններում «խորհուրդը» օգտագործվում է Հիսուսի առակներից ստացված հոգևոր գաղափարներից:

1. Մարկոս 4:11
2. Մատթեոս 13:11
3. Ղուկաս 8:10

Բ. Պողոսը այն օգտագործում է մի քանի տարբեր ձևերով:

1. Իսրայելի մասնակի խստացումը թույլ կտա հեթանոսներին ընդգրկվել փրկության ծրագրում: Հեթանոսների այս հոսքը կգործի այնպես, որ կարթնացնի հրեաներին՝ ընդունելու մարգարեների կողմից մարգարեացած Հիսուսին (տես Հռ. 11: 25-32):
2. Ավետարանը հայտնի դարձավ հեթանոսներին, որոնք ընդգրկվեցին փրկության մեջ Քրիստոսի միջոցով (տես Հռ. 16: 25-27; Կող. 2: 2):
3. Հավատացյալների նոր մարմինները Երկրորդ Գալստյան ժամանակ (տես 1 Կոր. 15: 5-57; 1 Թես. 4:13-18):
4. Ամփոփելով բոլոր բաները Քրիստոսում (տես Եփ. 1: 8-11):
5. Հեթանոսներն ու հրեաները որպես ժառանգորդներ (տես Եփ. 2: 11-3: 13):
6. Քրիստոսի և Եկեղեցու միջև մտերմիկ հարաբերությունը նկարագրված է ամուսնության տերմիններով (տես Եփ. 5: 22-33):
7. Հեթանոսներն ընդգրկված են ուխտի ժողովրդի մեջ և Քրիստոսի Հոգին բնակվում է նրանց մեջ, որպեսզի Քրիստոսի նման հասունություն ունենան, այսինքն, վերականգնելու մարդու մեջ Աստծո խեղաթյուրված պատկերը (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1; 6: 5, 11-13; 8:21; 9: 6; Կող. 1: 26-28):
8. Վերջին ժամանակի հակաքրիստոսը (տես 2 Թես. 2: 1-11):
9. Ավետարանի խորհուրդի մասին վաղ եկեղեցու հիմնը գտնվում է 1 Տիմ. 3:16.

Գ. Հովհաննեսի Հայտնության մեջ օգտագործվում է Հովհաննեսի ապոկալիպտիկ խորհրդանիշների իմաստը:

1. 1:20
2. 10: 7

3. 17: 5,6

Դ. Սրանք այն ճշմարտություններն են, որ մարդիկ չեն կարող բացահայտել; նրանք պետք է բացահայտվեն Աստծո կողմից: Այս հասկացությունները շատ կարևոր են Աստծո հավիտենական ծրագիրը բոլոր մարդկանց փրկագնման համար ճիշտ հասկանալու համար (տես Ծննդ. 3:15): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ](#).

▪ **«սուրբ խղճմտանքում»** «Խիղճ» տերմինը կարծես ենթադրում է, որ այս առաջնորդների քայլերը և խոսելը համընկնում են ավետարանի ճշմարտությունների հետ: Տես ամբողջ ծանուցումը 1 Տիմ. 1: 5:

3:10 «սորանք առաջ թող փորձուին» Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա հունարեն *dokimazō* տերմինն է, որը օգտագործվում է «փորձել՝ հավանություն ստանալու միտումով» (հմմտ. Հռ. 2:18; 12:2; 14:22; 1 Կոր. 3:13; 16: 3; 2 Կոր. 8:22; 1 Թեա. 2: 4): Այն հակադրվում է *peirazō*-ին, որը նշանակում է «փորձարկել՝ փորձության ենթարկելու կամ կործանելու համար» (տես 1 Կոր. 2: 5; 10: 9,13; Գաղ. 6: 1; Փիլ 1:10; 1 Թեա. 3: 5; 1 Տիմ. 6: 9): Տես Հատուկ Թեմա: Հունարեն բառեր փորձելու և դրանց լրացուցիչ իմաստների համար 1 Տիմ. 6: 9:

▪ **«եւ յետոյ այն պաշտօնը մտնեն»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է:

▪ **«եթէ»** Սա մեկ այլ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ինչպես 1Տիմ.3: 5:

▪ **«անարատ լինեն»** Տես ծանուցում 1 Տիմ. 3: 2:

3:11 «Այնպես էլ նորանց կանայքը պետք է ծանրաբարոյ լինեն» Սա չի վերաբերվում սարկավագների կանանց (տես KJV և NIV), տնային եկեղեցիներում ծառայող այլ կանանց: Հունարեն շարահյուսությունը տարբերակում է եկեղեցու ծառաների մեկ այլ խմբի (այսինքն, 1 Տիմ. 3:8 «նման»): Սարկավագուհիների մասին նշվում է Հռ. 16: 1 (տես Charles B. Williams- ի թարգմանությունը) և, հնարավոր է, Փիլ. 4: 3: Այս կին ծառաների որակավորումները նման են տղամարդ առաջնորդների որակավորումներին: Նրանք նախատեսված էին սարկավագներին օգնողներ լինելու համար այն դեպքերում, երբ տղամարդ սարկավագը պարզապես անհարմար կլիներ (իննամեկ հիվանդ կանակց, օգնել կանանց պատրաստվել մկրտությունից առաջ և հետո, կանոնավոր այցելություններ ավելի տարեց կանանց և այլն): Վաղ եկեղեցու հայրերի գրվածքներից մենք գիտենք, որ սարկավագի պաշտոնը շատ արագ զարգացավ և օգտագործվեց վաղ դարերում: Մեր օրերի ինդիքը այն է, որ մենք սարկավագներ ենք դրել հոգաբարձության մեջ, որը Տիմոթեոսի մյուս հատվածների պատճառով կարծես բացառում է կանանց: Այնուամենայնիվ, սարկավագները համարվում են ծառաներ և, հետևաբար, կանայք ունեն համապատասխան դեր: Հնարավոր է, որ սարկավագուհիները հոմանիշ էին «որբևայրիներ դերի» (տես 1 Տիմ. 5: 9), որոնք ավելի քան վաթսուն և ավելի տարեկան այրիներ էին, որոնք չունեին ընտանիք, որը վաղ քրիստոնյա եկեղեցին վարձել էր ծառայության համար: Կարծում եմ, որ Հռոմեացիների թղթից 16:1 իմ կատարած էկզեգետիկ մեջբերումը այստեղ կարող է օգտակար լինել:

Արևելահայերեն «նորանց»

Արևմտահայերեն «անոնց»

NASB, NKJV «ով եկեղեցու ծառա է»

NRSV «եկեղեցու սարկավագ»

TEV «ով ծառայում է եկեղեցուն»

NJB «եկեղեցու սարկավագուհի»

Սա *diakonos* տերմինն է: Սա ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԵԶԱԿԻ ԹԻՎ ԻԳԱԿԱՆ ՍԵՌ Է: Սա հունարեն տերմին է ծառայողի / ծառայի համար: Այն օգտագործվում է (1) Քրիստոսի համար Հռ. 15: 8; Մարկ. 10: 45; (2) Պողոսի համար Եփ. 3: 7; Կող. 1: 23,25; և (3) սարկավագների համար Փիլ. 1: 1; 1 Տիմ. 3:11:

Թե Նոր Կտակարանում և թե վաղ հետ-աստվածաշնչյան եկեղեցական գրվածքներում կան ապացույցներ սարկավագուհիների պաշտոնի համար: Նոր Կտակարանի Հովվական նամակներում տեղական եկեղեցու կանանց ծառայության մեջ մեկ այլ օրինակ է «այրիների դերը» (տես 1 Տիմ. 3:11, 5: 3-16): RSV, Amplified և Phillips- ի թարգմանությունները Հռ. 16: 1 ունեն «սարկավագուհի» բառը: NASB և NIV դա ունեն տողատակի ծանուցման մեջ: NEB ունի «պաշտոն զբաղեցնող»: Բոլոր հավատացյալները կոչվում են պարզներով օժտված, լիաժամ ծառայողներ (տես Եփ. 4:12): Ոմանք կանչված են առաջնորդության ծառայության դերերում: Մեր ավանդույթները պետք է ընթանան Սուրբ Գրքի ճանապարհով: Այս վաղ սարկավագներն ու սարկավագուհիները ծառաներ էին, այլ ոչ թե հոգաբարձության անդամներ:

M. R. Vincent, *Word Studies*, հատոր 2, էջ 752 և 1196, ասվում է, որ *Մտաքելական Մահմանադրությունները*, որոնք երկրորդ դարի վերջին կամ երրորդ դարի սկզբին են պատկանում, տարբերություն են դնում եկեղեցու կին օգնականների պարտականությունների և ձեռնադրության միջև:

1. սարկավագուհիներ
2. այրիներ (տես 1 Տիմ. 3:11; 5: 9-10)
3. կույսեր (տես Գործք 21: 9 և հնարավոր է 1 Կոր. 7:34)

Այս պարտականություններն ընդգրկում են

1. հոգ տանել հիվանդներին
2. հոգատար լինել ֆիզիկապես հալածվողների հանդեպ
3. այցելել նրանց, ովքեր բանտում են հավատքի համար
4. նորահավատներին ուսուցանելը
5. օգնել կանանց մկրտության մեջ
6. եկեղեցու որոշ կին անդամների վերահսկում

▪ **«Ոչ թե չարախօս»** Սա կեղծ ուսուցիչների խնդիրների առաջացման կատարյալ օրինակ է (տես 1 Տիմ. 5: 13-15; 2 Տիմ. 3: 1-7): Հնարավոր է, որ դա վերաբերվում է կեղծ ուսուցիչների ուսմունքների մասին խոսակցություններին: «Չարախոսություն/Բամբասանք» թարգմանված տերմինը հաճախ օգտագործվում էր սատանայի համար (տես Հովհ. 6:70): Այն բառացիորեն նշանակում էր «գրպարտություն» (NKJV, NRSV, NIV, տես 1 Տիմ. 3:11; 2 Տիմ. 3: 3; Տիտոս 2: 3), ոչ թե բամբասանք (NASB, TEV, NJB):

▪ **«զգաստ»** Տես ծանուցում 1 Տիմ. 3: 3:

▪ **«ամեն բանի մեջ հաւատարիմ»** Այս կրկին կարող է մատնանշել կեղծ ուսուցիչների տան եկեղեցիներում կանանց օգտագործելը: Այս առաջնորդները / ծառաները պետք է հավատարիմ լինեն հավատքի մեջ (ՀՈՂ չկա 1 Տիմ. 3:13 նաև) և իրենց կենսակերպի ընտրություններում:

3:12 Ժամանակակից թարգմանությունների մեծ մասում 1 Տիմ. 3: 8-13-ը մեկ պարբերություն է: Սարկավագները սկսում են քննարկումը (տես 1 Տիմ. 3:8) և վերջացնում քննարկումը (տես 1 Տիմ. 3:13), սակայն 1 Տիմ. 3:11-ում քննարկվում են սարկավագուհիները: Ահա թե ինչու որոշ թարգմանություններ նրանց անվանում են «սարկավագի կանայք»: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ սարկավագների օգնականները կամ սարկավագուհիները կարող են մշակութային առումով ավելի շատ համապատասխան լինել: Կին ծառաները (այսինքն, «այրիները») հատկապես նշվում են 1 Տիմ. 5: 9-10:

12 համարը շատ նման է վերակացուի կամ եպիսկոպոսի (այսինքն, հովվի) որակավորմանը 1 Տիմ. 3: 2-5:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 1 ՏԻՄՈԹԵՈՍՈՒՄ

- Ա. ծանրաբարո (1 Տիմ. 3:11)
- Բ. ոչ թե չարախոս (1 Տիմ. 3:11)
- Գ. զգաստ (1 Տիմ. 3:11)
- Դ. ամեն բանի մեջ հավատարիմ (1 Տիմ. 3:11)
- Ե. մենակ է մնացել հարազատների կողմից (1 Տիմ. 3:11)
- Զ. հույսը Աստծո վրա է դնում (1 Տիմ. 5: 5)
- Է. շարունակաբար աղոթում է (1 Տիմ. 5: 5)
- Ը. անարատ լինել (1 Տիմ. 5: 7)
- Թ. վաթսուն տարեկանից ոչ պակաս (1 Տիմ. 5: 9)
- Ժ. մեկ մարդու կին (1 Տիմ. 5: 9)
- Ի. Բարի գործերի վկայություն ունենա (1 Տիմ. 5:10)
 - 1. լավ երեխաներ է մեծացրել (1 Տիմ. 5:10)
 - 2. հյուրեր ընդունել (1 Տիմ. 5:10)
 - 3. լվացել սրբերի ոտքերը (1 Տիմ. 5:10)
 - 4. օգնել աղետի մեջ գտնվողներին (1 Տիմ. 5:10)
 - 5. յուրաքանչյուր բարի գործին նվիրված (1 Տիմ. 5:10)
- M. R. Vincent, *Word Studies*, հատոր 2, էջ 752 և 1196-ում ասվում է, որ Առաքելական Սահմանադրությունը, որը եղել է երկրորդ դարի վերջին կամ երրորդ դարի սկզբին, տարբերություն է դնում կին եկեղեցական օգնականների պարտականությունների և ձեռնադրության միջև:
 - Ա. սարկավագուհիներ
 - Բ. այրիներ (տես 1 Տիմ. 3:11; 5: 9-10)
 - Գ. կույսեր (տես Գործք 21: 9 և հնարավոր է 1 Կոր.7:34)
- Այս պարտականությունների մեջ են մտնում
 - Ա. Հիվանդների համար հոգ տանել
 - Բ. Հոգատար լինել ֆիզիկապես հավաճվողների հանդեպ
 - Գ. այցելել բանտում նրանց, ովքեր հավատքի համար են նստած
 - Դ. Ուսուցանել նոր հավատացյալներին
 - Ե. կանանց մկրտությանն օժանդակել
 - Զ. որոշ եկեղեցու կին անդամների վերահսկում

3:13 «կատարողներն» Սա «սարկավագ» -ի ԲԱՅԱԿԱՆ ձևն է: Դա Նոր Կտակարանում ընդհանուր տերմին է «ծառայող / ծառայի» համար: «Սարկավագ» բառը հունարենում այս համարում չկա:

- **«իրանց անձերի համար բարի աստիճան են շահում»** Սա պարտադիր չէ, որ վերաբերվի բարձր ղեկավարության դիրքորոշմանը (այսինքն, հովիվ), բայց հնարավոր է հարգանք վայելել իրենց համայնքում, ինչը թույլ է տալիս նրանց համարձակորեն ավետարանը բաժնեկցել:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 3:14-16

¹⁴Սա գրում եմ քեզ յուսալով որ շուտով քեզ մօտ գամ: ¹⁵Իսկ եթե ուշանամ, որ գիտենաս թե ի՞նչպես պետք է Աստուծոյ տան մեջ վարուիլ. Որ է կենդանի Աստուծոյ եկեղեցի, սին եւ հաստատութիւն ճշմարտութեան: ¹⁶Եւ յայտնապէս մեծ է Աստուածայաշտութեան խորհուրդը. Աստուած յայտնուեցաւ մարմնում, արդարացաւ Հոգով, երեւեցաւ հրեշտակներին, քարոզուեցաւ հեթանոսներին, հաւատացուեցաւ աշխարհքումը եւ վերացաւ փառքով:

3:14-15 Պողոսը մտադիր է այցելել Տիմոթեոսին Եփեսոսում: Հոգին ուղղեց, որ նա գրի այնպես, որ Աստծու կամքը արտահայտվի 1 Տիմոթեոսի մեջ և օրհնություն և ուղղություն լինի ժամանակի ընթացքում Իր եկեղեցու համար:

Այս համարները հաստատում են 1-3-րդ գլուխների մեկնաբանական կոնտեքստը՝ կապված հանրային պաշտամունքի հետ (ինչպես 1 Կոր. 11-14): Ես նաև կարծում եմ, որ այս գլուխները վերաբերում են կեղծ ուսուցիչների ներկայության վրա հիմնված արձագանքներին և որակավորումներին: Սա չեզոք վիճակ չէ:

Այս նույն աստվածաբանական իրավիճակը երևում է Ղևտացոց Գրքում: Գիրքը հիգիենիկ օրենքների կամ սովորությունների մասին հավաքածու չէ, որպես քանանացիների մշակույթի արձագանք: Ճիշտ այնպես, ինչպես հատուկ օրենքներից շատերը գրվել քանանացիներին և իսրայելացիներին սոցիալապես և կրոնապես հնարավորինս իրարից հեռու պահելու համար, այս հաստիքներն էլ առանձնացնում են Հովվական նամակները՝ հրեա / գնոստիկ կեղծ ուսուցիչներից:

3:15 «Իսկ եթե ուշանամ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է հնարավոր գործողություն:

- **«Աստուծոյ տան մեջ»** Պողոսն օգտագործում է բազմաթիվ հզոր հավաքական փոխաբերություններ՝ եկեղեցուն նկարագրելու համար, ինչպես օրինակ «մարմին», բայց ընտանիքը / տունը առավել խորաթափանց է (Աստված՝ որպես Հայր, Հիսուսը՝ Որդի, հավատացյալներ՝ որպես երեխաներ):

- **«եկեղեցի»** *Ekklesia* բարդ հունական բառ է, որը նշանակում է «դուրս» և «կանչել»: Դա օգտագործվել է Կոյնե հունարենում՝ նկարագրելու ցանկացած հավաքույթ, ինչպիսին էր քաղաքային ժողովը (տես Գործք 19:32): Վաղ հրեական եկեղեցին ընտրեց այս տերմինը, քանի որ այն օգտագործվել է Սեպտուագինդում՝ Հին Կտակարանի հունարեն թարգմանության մեջ, որը գրվել է դեռևս 250 մ.թ.ա. Ալեքսանդրիայում, Եգիպտոսում գտնվող գրադարանի համար: Այս տերմինը թարգմանել է եբրայերեն *qahal* բառը, որը օգտագործվել է «Իսրայելի ժողովը» արտահայտության մեջ (Ելից; ԹՎոց 20: 4): Նոր Կտակարանի գրողները պնդում էին, որ դրանք «աստվածայնորեն կանչվածներ» էին, որոնք իրենց օրերի Աստծո ժողովուրդն էին: Վաղ հրեա հավատացյալները ոչ մի արմատական բաժանում չէին տեսնում Հին Կտակարանի Աստծո ժողովրդի և իրենց՝ Նոր Կտակարանի Աստծո ժողովրդի միջև: Հավատացյալները, հետևաբար, պնդում են, որ Աստվածաշնչի ճշմարիտ ժառանգորդը Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է և ոչ թե ժամանակակից ուսրբիական հուդայականությունը, դա է: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 5:

«կենդանի Աստուծոյ» Հին Կտակարանը պնդում է, որ գոյություն ունի մեկ և միայն մեկ Աստված (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄՈՆՈԹԵԻԶՄ](#) 1 Տիմ. 2:5, հմմտ. Ելից 8:10; 9:14; 2 Օր.4:35, 39; 6: 4; 32:39; 1 Թագ. 2: 2; Ես. 40: 10-13; 44: 6-8; 45: 5-7): ԱՇԱԿԱՆ «կենդանի» բառը գալիս է ուխտի անունից (տես 1 Տիմ. 4:10) Աստծո՝ ՅԱՀՎԵԻ համար, որը եբրայերեն «լինել» ԲԱՅ-ից է (հմմտ. Ելից 3:14; տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՂ ԱՆՈՒՆՆԵՐԸ](#) 2 Տիմ. 1:2):

▪ **«սին եւ հաստատութիւն ճշմարտութեան»** Սա կարող է ակնարկ լինել Ես. 28:16, Աստծո հիմքը Հիսուս անկյունաքարն է, որը նույնպես վկայակոչված է 2 Տիմ. 2:19. Սա երրորդն է Աստծո և եկեղեցու կապող նկարագրական արտահայտությունների շարքից:

1. «Աստծո տունը/ընտանիքը» (1 Տիմ. 3:15)
2. «կենդանի Աստծո եկեղեցին» (1 Տիմ. 3:15)
3. «Ճշմարտության սյունը և աջակցությունը» (1 Տիմ. 3:15)

Ճշմարտություն տերմինը (*alētheia*) շատ տարածված է Պողոսի գրվածքներում (և Հովհաննեսի): Այն սովորաբար վերաբերվում է ավետարանի բովանդակությանը (կարդա Հո. 1: 18,25; 2: 2,8; 3: 7; 15: 8; 1 Կոր. 13:6; 2 Կոր. 4: 2; 6: 7; 7:14; 13: 8; Գաղ. 2: 5,14; 5: 7; Եփ. 1:13; 4:21; 5: 9; Փիլ. 1:18; Կող. 1: 5,6; 2 Թես. 2: 10,12,13; 1 Տիմ. 3:15; 4: 3; 6: 5; 2 Տիմ. 2: 15,18,25; 3: 7,8; 4: 4; Տիտոս 1: 1,14): Տես Հատուկ Թեմա. Ճշմարտությունը Պողոսի գրություններում 1 Տիմ. 2: 4:

3:16

Արևելահայերեն «յայտնապէս»

Արևմտահայերեն «Յայտնապէս»

NASB «ընդհանուր խոստովանությամբ»

NKJV «առանց հակասության»

NRSV, NJB «առանց որևէ կասկածի»

TEV «ոչ ոք չի կարող ժխտել»

Սա հունարեն տերմին է, որը սովորաբար օգտագործվում է, երբ մեկը դավանում կամ խոստովանում է իր հավատքը (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ](#) 1 Տիմ. 6:12): Այն գրական նշան է, որ հետևյալ տողերը վաղ հավատամքի հաստատումն է:

▪ **«մեծ է Աստուածպաշտութեան խորհուրդը»** Պողոսի գրվածքներում «խորհուրդ/առեղծված»-ը հաճախ վերաբերվում է հեթանոսական առաքելությանը (տես Եփ. 2: 11-3: 13), որը կարող է բանալի հանդիսանալ 1 Տիմ. 3:16: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 9: «Աստվածպաշտության» համար տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7:

Սա ներկայացնում է վաղ դավանանքային դրույթ կամ քրիստոնեական օրհներգ: Մեկ ուրիշը հայտնվում է 2 Տիմ. 2: 11-13: Կառուցվածքային օրինակ կարող է լինել

1. Ա Բ Գ Դ Ե Զ (հայտնում է ճշմարտություններ Քրիստոսի մասին)
2. ԱԲ, ԲԱ, ԱԲ (հակադրություն երկրի և երկնքի միջև կամ նվաստացում և մեծարում)
3. ԱԲԳ, ԱԲԳ (բացահայտեց ճշմարտություններ Քրիստոսի և Նրա եկեղեցու մասին)

Աստվածաշնչում խիազմի կառուցվածքային ավելի հստակ է դառնում ժամանակակից աստվածաբանների համար: 1990 Kregel- ի կողմից հրատարակված Companion Bible- ը և Kenneth E. Bailey's *Poet and Peasant* այս մոտեցումը լայնորեն տարածված է:

Պողոսը, կարծես, մեջբերում է վաղ օրհներգի մեկ հատված կամ հնարավոր է եկեղեցական պատարագ: Այս համարն ընդգծում է Հիսուսի մարդկայությունը և Նրա աշխարհասփյուռ ծառայությունը: Այն չի պարունակում Պողոսի երեք հիմնական աստվածաբանական

շեշտադրումները. 1) խաչը, 2) հարությունը և (3) Երկրորդ գալուստը: Պողոսը մեջբերում է մի քանի աղբյուրներ 1, 2 Տիմոթեոսի և Տիտոսի մեջ, որոնք բացատրում են յուրահատուկ բառապաշարը և տարբեր աստվածաբանական տերմինների օգտագործումը Պողոսի գրվածքներում:

Արևելահայերեն «Աստուած յայտնուեցաւ մարմնում»

Արևմտահայերեն «Աստուած մարմնով յայտնուեցաւ»

NASB «Նա, ով մարմնով հայտնվեց»

NKJV «Աստված մարմնով դրսևորվեց»

NRSV «Նա մարմնով հայտնվեց»

TEV «Նա հայտնվեց մարդու կերպարանքով»

NJB «Նա տեսանելի էր մարմնով»

Սա խոսում է Բեթլեհեմում Հիսուս Քրիստոսի մարմնավորման (ծննդի) մասին; Նրա կյանքը, ուսմունքները, մահը և հարությունը, որը լիովին բացահայտում է Հորը (տես Հովհ. 1:14-18): Կա նաև խիստ հետևություն Նրա նախագոյ լինելու մասին (տես Հովհ. 1: 1-5; 8: 57-58; 2 Կոր. 8:4; Փիլ. 2:6; Կող. 1:17): Սա Հիսուս Քրիստոսի մասին Ավետարանների կենտրոնական ճշմարտությունն է, որ Նա լիովին Աստված էր և լիովին մարդ (տես Հովհ. 1:14; Փիլ. 2: 6-8; Կող. 1:14-16; 1 Հովհ. 4:1-6):

Կա ավելի ուշ հունարեն ձեռագիր տարբերակ, որտեղ հարաբերական դերանունը *hos* (MSS ճ, A, C, F, G; UBS⁴- ը տալիս է «Ա» վարկանիշ [որոշիչ]) փոխվում է *theos*: Այս ուշ փոփոխությունը կարող է տեղի է ունեցել

1. շփոթմունք OC- ի վերաբերյալ (ով բառի համար երկաթագիր հունարեն հապավումները), որը կարդացվում է որպես H C (Աստված բառի համար երկաթագիր հունարեն հապավումը) կամ
2. որպես նպատակային աստվածաբանական փոփոխություն, ավելի ուշ դպիրների կողմից (հմտ. MSS ճ^c, A^c, C², և D²), որոնք ցանկանում են տեքստը ավելի կոնկրետ դարձնել որդեգրությունն ընդունող հերետիկոսությունների դեմ (տես Bart D. Ehrman, *The Orthodox Corruption of Scripture*, էջ 77-78):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐՄԻՆ (SARX)

Այս տերմինը առավել հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից Գաղատացի թղթում և դրա աստվածաբանական զարգացումը ստանում Հռոմեցի թղթում: Աստվածաբանները տարբերվում են այն բանով, թե ով ինչպես է բնութագրել տերմինի տարբեր լրացուցիչ իմաստները: Անշուշտ, որոշակի իմաստային համընկնումներ կան: Ստորև բերված է ընդամենը մի տարբերակ, որը ցույց է տալիս տերմինի լայն իմաստաբանական դաշտը:

- Ա. մարդկային մարմինը, Հովհ. 1:14; Հռ. 2:28; 1 Կոր. 5:5; 7:28; 2 Կոր. 4:11; 7:5; 12:7; Գաղ. 1:16; 2: 16,20; 4:13; Փիլ. 1:22; Կող. 1: 22,24; 2: 5; 1 Տիմ. 3:16
- Բ. մարդկային ծագումը, սերունդը, Հովհ. 3:6; Հռ. 1: 3; 4: 1; 9: 3,5,8; 11:14; 1 Կոր. 10:18; Գաղ. 4: 23,29
- Գ. մարդու անձը, Հռ. 3:20; 7:5; 8: 7-8; 1 Կոր. 1:29; 2 Կոր. 10:3; Գաղ. 2:16; 5:24
- Դ. մարդկային կերպով խոսելը, Հովհ. 8:15; 1 Կոր. 1:26; 2 Կոր. 1:12; 5:16; 10: 2; Գաղ. 6:12
- Ե. մարդու տկարությունը, Հռ. 6:19; 7:18; 8: 5-6,9; 2 Կոր. 10:4; Գաղ. 3: 3; 5: 13,16,19-21; Կող. 2:18
- Զ. մարդկանց թշնամանքը Աստծու հանդեպ, կապված անկման հետևանքների հետ, Հռ. 7:14; 13:14; 1 Կոր. 3: 1,3; Եփ. 2: 3; Կող. 2:18; 1 Պետ. 2:11; 1 Հովհ. 2:16

Պետք է ընդգծել, որ «մարմինը» Նոր Կտակարանում չի դիտվում որպես չար բան, ինչպես որ

հունական մտածողության մեջ է: Հույն փիլիսոփաների համար «մարմինը» մարդկային խնդիրների աղբյուրն էր, մահը ազատ է արձակվել իր ազդեցությունից: Սակայն Նոր Կտակարանում «մարմինը» հոգևոր բախման ճակատամարտն է (տես Եփ. 6:10-18), սակայն չեզոք է: Մարդը կարող է օգտագործել ֆիզիկական մարմինը բարու կամ չարի համար:

Արևելահայերեն «արդարացաւ Հոգով»
Արևմտահայերեն «Հոգիով արդարացաւ»

NASB «արդարացաւ Հոգու մեջ»

NKJV, NJB «Հոգով արդարացաւ»

NRSV «հոգով արդարացվեց»

TEV «ցույց տրվեցաւ Հոգու կողմից, որ ճիշտ է»

Այս արտահայտությունը կարելի է հասկանալ մի քանի ձևով:

1. Արդյո՞ք դա նշանակում է հիմնավորված թե արդարացված (այսինքն, ցույց է տրված, որ ճիշտ է, արդար է):
2. Արդյո՞ք դա նշանակում է, որ Սուրբ Հոգին գործում էր Հիսուսի ծառայության մեջ

(NASB):

3. Արդյո՞ք դա նշանակում է, որ Հիսուսի հոգին հաստատվեց Հոր կողմից (տես Մատթ. 3:17; 17:5), մինչ Հիսուսը ապրում էր որպես մարդ (NRSV):

Որոշ աստվածաբաններ «Հոգին» տեսնում են որպես Հիսուսի աստվածայնությունը, որը հիմնավորվեց կամ հաստատվեց Նրա հարությանը (տես Հռ. 1: 4; 1 Պետ. 3:18):

▪ **«Երեւեցաւ հրեշտակներին»** Հրեշտակները ձգտում էին իմանալ, թե Աստված ինչ էր անում մեղավոր մարդու հետ (տես 1 Կոր. 4: 9; Եփ. 2: 7; 3:10; 1 Պետ. 1:12): Այնուամենայնիվ, դա կարող է վերաբերել հրեշտակների Հիսուսին ծառայելուն, կամ Նրա փորձության փորձառության ժամանակ (տես Մատթ. 4:11; Մարկ. 1:13), Գեթսեմանի պարտեզում (կարդա Ղուկ. 22:43, ինչը կասկածելի տեքստ է) կամ հարությունից անմիջապես հետո (տես Ղուկ. 24: 4,23; Հովհ. 20:12):

Այս արտահայտությունը այնքան կարճ է և երկիմաստ, որ մի քանի տեսություններ են առաջարկվել մեկնաբանների կողմից և բոլորն էլ պարզապես ենթադրություններ են.

1. հրեշտակները ծառայում են Հիսուսին (վերևում)
2. հրեշտակները տեսնում են Նրա համբարձումը (աստվածավախ հրեշտակները և / կամ ընկած հրեշտակները, հմմտ. 1 Պետ. 3: 19-20,22)
3. հրեշտակները տեսնում են Նրան՝ երկնային գահին բարձրացած

▪ **«քարոզուեցաւ հեթանոսներին»** Սա ավետարանի համաշխարհային քարոզչությունն է (կարդա Ղուկ. 24: 46-47), որը չափազանց ցնցող էր առաջին դարի հրեաների համար, բայց սա, իրոք, ամբողջ կորիզն է (տես Մատթ. 28: 18-20): Սա աստվածապաշտության խորհուրդն է (տես Եփ. 2: 11-3: 13):

Արևելահայերեն «հաւատացուեցաւ աշխարհումը»

Արևմտահայերեն «աշխարհին ընդունուեցաւ»

NASB, NKJV «Հավատացվեալ աշխարհում»

NRSV, TEV,

NJB «հավատացվում է ողջ աշխարհում»

Դա ոչ միայն տիեզերական ուղերձ էր, այլև կար համընդհանուր արձագանք, և այժմ Եկեղեցին բաղկացած է թե հրեաներից և թե հեթանոսներից (տես Եփ. 2: 11-3: 13): Սա միշտ եղել է Աստծո ծրագիրը: Մեկ ճշմարիտ Աստվածն իրականացնում է Ծննդ. 3: 15-ի Իր խոստումը: Անձնական ապաշխարություն և հավատք ավետարանին (տես Հատուկ թեմա 1 Թեմա 1.16-ում) հիմա, այս կյանքում, երկինքը բացում է «ով որ» -ի համար (տես Հովհ. 1:12; 3: 16; Հռ. 10:9-13): Տես Հատուկ Թեմա: Պօղոսի *Kosmos* -ի օգտագործումը 1 Տիմ. 1:16.

▪ **«վերացալ փառքով»** Սա կարծես վերաբերում է Նրա համբարձմանը: Ջարմանալի է, որ Հիսուսի մահը, հարությունը և վերադարձը բաց է թողնված, բայց եթե սա քրիստոնեական օրհներգ էր, հնարավոր է միայն մի մասն է մեջբերվել, ապա դա հասկանալի է: Նաև, որստույգ որ ռիթմիկ (խիազմի) օրինակն է հետևում, որոշում է ինչ-որ մեկի մեկնաբանությունը (տես 1 Տիմ. 3:16): Այս օրհներգը/համոզմունքը կապված է բացման դրույթի հետ, որը հավանաբար կհերքի գնոստիցիզմը: Հիսուս մարդը փառավորվեց (տես # 2 խիազմի օրինակ): Այնուամենայնիվ, հետևելով NRSV- ին վերջին երեք տողերը կարող են վերաբերել Եկեղեցուն (տես # 3 խիազմի օրինակ): «Փառքի» մասին լրիվ ծանուցումը տես 1:17:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ

Հիսուսը իջավ երկնքից (տես Փիլ. 2: 6-7; 2 Կոր. 8:9): Այժմ Նա վերականգնված է Իր նախագոյ փառքին (տես Հովհ. 1: 1-3; 17:5; Եփ. 4:10; 1 Տիմ. 3:16; 1 Հովհ. 1: 2): Նա այժմ նստած է Աստծո աջ կողմում (տես Սաղ. 110:1; Ղուկ. 22: 69; Գործք 2:33; Հռ. 8: 34; Եփ. 1:20; Կող.3:1; Եբր.1:3; 8: 1; 10:12; 12: 2; 1 Պետ. 3:22): Սա հաստատում է Հոր հավանությունը Նրա կյանքի և մահվան մասին: Կան մի շարք տարբեր հունարեն բառեր, որոնք նկարագրում են Հիսուսի երկինք գնալը.

1. Գործք 1: 2,11,22; *analambanō*, վերանալ (տես 1 Տիմ. 3:16)
2. Գործք 1:9; *epairō*, վերանալ, բարձրացվել
3. Ղուկաս 9:51; *analēpsis* (ձև # 1)
4. Ղուկաս 24:51; *diistēmi*, հեռանալ, վերանալ, բարձրանալ

Հովհաննեսի Ավետարանում Հիսուսի վերադառնալու մի քանի խոսքեր կան (տես Հովհ. 7:33; 8: 14,21; 12: 33-34; 13: 3,33,36; 14: 4,5,12,28; 16: 5,10,17,28; 26: 7)

5. Հովհ. 3:13; 20:17, *ana BeBēken*, բարձրացել է
6. Հովհ. 6:62, *anabainō*, բարձրացավ, համբարձվեց

Այս իրադարձությունը արձանագրված չէ Մատթեոսի կամ Մարկոսի Ավետարանում: Մարկոսի Ավետարանն ավարտվում է 16: 8, բայց երեք ուշ լրացուցիչ ձեռագրերից մեկը նկարագրում է այդ իրադարձությունը Մարկ. 16:19-ում (այսինքն, *analambanō*):

Գործքում Հիսուսի համբարձման մասին մի քանի ակնարկներ կան.

1. Պետրոս - Գործք 2:33; 3:21
2. Ստեփանոս - Գործք 7: 55-56
3. Պողոս - Գործք 9: 3,5; 22: 6-8; 26: 13-15

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Քանի՞ տեսակի ծառայություններ կան:
2. Ինչու՞ են հովիվները, եպիսկոպոսները և երեցները Նոր Կտակարանում կոչվում տարբեր անուններով:
3. Արդյո՞ք Նոր Կտակարանում կային սարկավագուհիներ: Եթե այո, ապա ո՞րն էր նրանց ֆունկցիան:
4. Ինչու՞ է 16 համարը համարվում քրիստոնեական օրհներգ Քրիստոսի մասին:
5. Ի՞նչ է խիզազը: Ինչու՞ է դա կարևոր:

1 ՏԻՄՈԹԵՈՍ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ուրացության կանխատեսումը	Մեծ ուրացությունը	Կեղծ ուսուցիչները	Կեղծ ուսուցիչները	Կեղծ ուսուցիչները
4:1-5	4:1-5	4:1-5	4:1-5	4:1-11
Հիսուս Քրիստոսի բարի ծառայողը	Հիսուս Քրիստոսի բարի ծառայողը		Հիսուսի բարի ծառայողը	
4:6-10	4:6-10	4:6-10	4:6-10	
	Ուշադրություն դարձրեք ձեր ծառայությանը			
4:11-16	4:11-16	4:11-16	4:11-16	4:12-16

ԼԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ 4:1-16

- Ա. 1-3-րդ գլուխների նման, 4-6 գլուխները պետք է մեկնաբանվեն կեղծ ուսուցիչների լույսի ներքո:
- Բ. 4-րդ գլուխը արտացոլում է բացասական առաջնորդությունը (1 Տիմ. 4: 1-5) և դրական առաջնորդությունը (1 Տիմ. 4: 6-10):

Գ. 11-16-րդ համարները Պողոսի անձնական ուղերձն է Տիմոթեոսին, որը շարունակվում է մինչև 1 Տիմ. 6: 2:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 4:1-5

¹Եւ Հոգին յայտնի ասում է թէ յետին ժամանակներումը ոմանք հաւատքիցը կ'հեռանան, եւ մտիկ կ'տան մոլար ոգիների եւ դեւերի վարդապետութիւնների, ²Ստախօսների կեղծաւորութեամբը, որոնց խղճմտանքը տաղուած է. ³Որ ամուսնանալուց կ'արգիլեն, կ'հրաժարեն կերակուրներից որ Աստուած ստեղծեց հաւատացեալների եւ ճշմարտութիւնը ճանաչողների համար որ գոհութեամբ վայելեն: ⁴Որովհետեւ Աստուծոյ բոլոր ստեղծուածները բարի են, եւ ոչ մի բան խոտան չէ. Երբոր գոհութիւնով ընդունուի: ⁵Որովհետեւ սրբվում է Աստուծոյ խօսքովը եւ աղօթքով:

4: 1 «Եւ Հոգին յայտնի ասում է» Սա կարող է վերաբերվել

1. Հին Կտակարանի մարգարեությանը
2. Պողոսը որպես Հոգուց ուղղակիորեն ներշնչանք ստացող (տես Գործք 20:33)
3. ներշնչված ուղերձներ այլ շնորհալի, ժամանակակից առաջնորդներից (տես Գործք 21:11)

Արևելահայերեն «յետին ժամանակներումը»

Արևմտահայերեն «վերջին ատենները»

NASB, NRSV,

TEV «ավելի ուշ ժամանակներում»

NKJV «ուշ ժամանակներում»

NJB «վերջին ժամանակներում»

Պողոսը, ինչպես Հին Կտակարանի մարգարեները, խոսում էր իր ժամանակի համար, բայց դա վերաբերում է Երկրորդ գալուստից առաջ վերջին օրերին: Պողոսը սովորեցնում է հետաձգված *Parousia* 2 Թես. 2-ում: Հետևաբար, ապստամբության և կեղծ ուսմունքի այս բնութագիրը նկարագրում է իր օրերը (տես 2 Տիմ. 3: 1), ինչպես նաև Քրիստոսի առաջին և երկրորդ գալստյան միջև եղած ժամանակը (տես. 2 Պետ. 3: 3; Հուդա 1:18):

Նոր Կտակարանը հաճախ բնութագրում է այս վերջին օրերը կամ վերջին ժամանակները, ինչպես Հին Կտակարանի մարգարեները, որոնք վերցնում էին իրենց օրվա ճգնաժամը և դրան տալիս վախճանաբանական իմաստ (տես Մատթ. 24:10-12; Գործք 20:29-30; 2 Թես. 2: 3-12; 2 Տիմ. 3: 1-9; 4: 3-4, 1 Հովհ. 2:18-19; 4: 1-3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԵՏԱԶԳՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏ (Քրիստոսի մոտ և հետաձգված վերադարձը *Parousia*)

Հավատացյալների մեծ մասը սովորել է, որ Հիսուսը գալու է շուտով, հանկարծակի և անսպասելիորեն (տես Մատթ. 10: 23; 24:34; Մարկ. 9: 1; 13:30; Հայտ. 1: 1,3; 2:16; 3: 11; 22: 7,10,12,20; տես Հատուկ Թեմա: Շուտ վերադարձը): Սակայն հավատացյալների յուրաքանչյուր սպասող սերունդ մինչ օրս սխալ է եղել: Հիսուսի վերադարձի շուտ լինելը ամեն սերնդի հզոր խոստացված հույսն է, բայց իրականություն միայն մեկի համար (և այդ մեկը հալածվողն է):

Հավատացյալները պետք է ապրեն, իբր Նա վաղը գալու է, բայց պլանավորեն և իրականացնեն Մեծ Պատվիրանը (տես Մատթ. 28:19-20), եթե Նա ուշանում է:

Ավետարաններում գրված որոշ հատվածներ (տես Մատթ. 24: 45-51; 25: 5,19; Մարկ. 13:10; Ղուկ. 17: 2; 18: 8; 19: 11-27) և 1 և 2 Թեսաղոնիկեցիսը հիմնված են հետաձգված Երկրորդ Գալստյան վրա (*Parousia*): Կան մի քանի պատմական իրադարձություններ, որոնք նախ պետք է կատարվեն.

1. համաշխարհային ավետարանչությունը (տես Մատթ. 24:14; Մարկ. 13:10)
2. մեծ հավատուրացությունը (տես 2 Թես. 2: 3)
3. «Մեղքի մարդու» հայտնությունը (տես Մատթ. 24:15; 2 Թես. 2: 3,8-12; Հայտ. 13)
4. մեծ հալածանքը (տես Մատթ. 24:21,24; Հայտ.13)

Կա նպատակաուղղված երկիմաստություն (տես Մատթ. 24:42-51; Մարկ. 13:32-36): Ապրեք ամեն օրը, կարծես ձեր վերջինը լինի, բայց պլանավորեք ու պատրաստվեք ապագա ծառայության համար:

Արևելահայերեն «կ'հեռանալ»

Արևմտահայերեն «ապստամբին»

NASB «լքել, հեռանալ, ընկնել»

NKJV «հեռանալ, առանձնանալ»

NRSV «հրաժարվել, չընդունել»

TEV «հրաժարվել, լքել, թողնել»

NJB «լքել»

Սա համադրություն է *apo* (-ից) և *istēmi* (կանգնել) բառերից: Այստեղ այն օգտագործվում է ուխտադրության իմաստով Ղուկ. 8: 13 և Եբր. 3:12: 2 Տիմ. 2:19 դա նշանակում է «ձեռնպահ մնալ»: Իր ձևով դա ԱՂԱՌՆԻ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Իրական փրկության մեկ վկայությունն այն է, որ անձը մնում է եկեղեցում (տես 1 Հովհ. 2:18): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ](#) 1 Տիմ. 4:16.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆ/ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (APHISTĒMI)

Այս հունարեն տերմինը *aphistēmi* ունի լայն իմաստային դաշտ: Այնուամենայնիվ, անգլերեն «հավատուրացություն» տերմինը առաջացել է այս տերմինից և դրա օգտագործումը կասկածի տակ է դնում ժամանակակից ընթերցողներին: Կոնտեքստը, ինչպես միշտ, բանալին է և ոչ թե առկա սահմանումը:

Սա բարդ տերմին է բաղկացած *apo* ՆԱԽԴԻՐԻՑ, որը նշանակում է «-ից» կամ «հեռու -ից» և *histēmi* «նստել», «կանգնել» կամ «շտկել»: Ուշադրություն դարձրեք հետևյալ (ոչ աստվածաբանական) կիրառություններին.

1. տեղափոխել կամ տեղաշարժել, հեռանալ ֆիզիկապես
 - ա. Տաճարից, Ղուկ. 2:37
 - բ. տնից, Մարկ. 13:34
 - գ. մարդուց, Մարկ. 12:12; 14:50; Գործք 5:38
 - դ. բոլոր բաներից, Մատթ. 19: 27,29
2. հեռացնել քաղաքականորեն, Գործք 5:37
3. հեռացնել հարաբերորեն, Գործք 5:38; 15:38, 19: 9; 22:29
4. հեռանալ իրավաբանորեն (ամուսնալուծություն), 2 Օր. 24: 1,3 (LXX) և Նոր Կտակարանում, Մատթ. 5:31; 19: 7; Մարկ. 10: 4; 1 Կոր. 7:11
5. հեռացնել պարտքը, Մատթ. 18:7
6. լքելով ցույց տալ անտարբերություն, Մատթ. 4:20; 22:27, 4:28; 16:32

7. չքելով ցույց տալ մտահոգություն, Հովհ. 8:29; 14:18
8. թույլ տալ կամ թույլտվություն, Մատթ. 13:30, 19:14, Մարկ. 14: 6; Ղուկ. 13: 8

Աստվածաբանական իմաստով ԲԱՅՆ ունի նաև լայն կիրառություն.

1. չեղյալ հայտարարել, ներում, ներել մեղքի հանցանքը, Ելից 32: 32 (LXX); Թվոց 14:19; Հոբ 42:10 և Նոր Կտակարանում, Մատթ. 6: 12,14-15; Մարկ. 11: 25-26
2. զերծ մնալ մեղքից, 2 Տիմ. 2:19
3. անտեսել՝ զատվելով
 - ա. Օրենքից, Մատթ. 23:23; Գործք 21:21
 - բ. հավատքից, Եզ. 20: 8 (LXX); Ղուկ. 8:13; 2 Թես. 2: 3; 1 Տիմ. 4: 1; Եբր. 3:12

Ժամանակակից հավատացյալները բազմաթիվ աստվածաբանական հարցեր են տալիս, որ Նոր Կտակարանի գրողները երբեք չեն մտածել այդ մասին: Դրանցից մեկը վերաբերվում է ժամանակակից հակվածությանը՝ հավատքն (արդարացում) առանձնացնել հավատարմությունից (սրբացում):

Աստվածաշնչում կան անձինք, ովքեր Աստծո ժողովրդի մեջ են և ինչ-որ բան է տեղի ունենում, որը պատճառ է դառնում նրանց համար հեռանալու:

I. Հին Կտակարան

- Ա. Նրանք, ովքեր լսեցին տասներկու (տասը) լրտեսների բերած լուրը, Թվոց 14 (տես Եբր. 3: 16-19)
- Բ. Կորիսը, Թվոց 16
- Գ. Հեղիի որդիները, 1 Թագ. 2, 4
- Դ. Սավուղը, 1 Թագ. 11-31
- Ե. Սուտ մարգարեներ (օրինակներ)
 1. 2 Օր. 13: 1-5; 18: 19-22 (սուտ մարգարեին ճանաչելու կերպերը)
 2. Երեմիա 28
 3. Եզեկիել 13: 1-7
- Զ. Կեղծ մարգարեուհիներ
 1. Եզեկիել 13:17
 2. Նեեմիա 6:14
- Է. Իսրայելի չար առաջնորդները (օրինակներ)
 1. Երեմիա 5: 30-31; 8: 1-2; 23: 1-4
 2. Եզեկիել 22: 23-31
 3. Միքիա 3: 5-12

II. Նոր Կտակարան

- Ա. Այս հունարեն տերմինը բառացիորեն *apostasize* է: Հին և Նոր Կտակարանները երկուսն էլ հաստատում են չար և կեղծ ուսմունքի ինտենսիվացումը նախքան Երկրորդ Գալուստը (տես Մատթ. 24:24; Մարկ. 13:22; Գործք 20: 29,30; 2 Թես. 2: 9-12; 2 Տիմ. 4: 4): Այս հունարեն տերմինը կարող է արտացոլել Հիսուսի խոսքերը սերմնացանի առակում Մատ. 13; Մարկ. 4 և Ղուկ. 8: Այս կեղծ ուսուցիչները ակնհայտորեն քրիստոնյաներ չեն, բայց նրանք ներսից էին (տես Գործք 20: 29-30; 1 Հովհ. 2:19), սակայն, նրանք կարողանում են հրապուրել և գրավել մարմնավոր հավատացյալներին (տես Եբր. 3:12):

Աստվածաբանական հարցը հետևյալն է, կեղծ ուսուցիչները երբևէ եղել են հավատացյալ: Դժվար է պատասխանել, քանի որ կային կեղծ ուսուցիչներ տեղական եկեղեցիներում (տես 1 Հովհ. 2:18-19): Հաճախ մեր աստվածաբանական կամ

հարանվանական ավանդույթները պատասխանում են այս հարցին առանց հղում անելու հատուկ սուրբգրային համարներ (բացառությամբ ապացույց-տեքստի մեթոդով՝ մեջբերելով մի համար կոնտեքստից դուրս, ենթադրաբար ապացուցելու համար մեկի կողմնակալությունը):

Բ. Տեսանելի հավատք

1. Հուդա, Հովհ. 17:12
2. Միմոն Մոզը, Գործք 8
3. Որոնց մասին խոսվում է Մատթ. 7: 13-23
4. Որոնց մասին խոսվում է Մատթ. 13; Մարկ. 4; Դուկ. 8
5. Հրեաները Հովհաննեսի Ավետարանում 8: 31-59
6. Աղեքսանդրոսը և Հիմենոսը, 1 Տիմ. 1: 19-20
7. Որոնց մասին խոսվում է 1 Տիմ. 6:21
8. Հիմենոսը և Փիլետոսը, 2 Տիմ. 2: 16-18
9. Դեմասը, 2 Տիմ. 4:10
10. Կեղծ ուսուցիչները, 2 Պետ. 2: 19-22; Հուդա հհ. 12-19
11. հակաքրիստոսներ, 1 Հովհ. 2: 18-19

Գ. Անպտուղ հավատք

1. 1 Կոր. 3: 10-15
2. 2 Պետ. 1: 8-11

Մենք հազվադեպ ենք մտածում այս տեքստերի մասին, որովհետև մեր սիստեմատիկ աստվածաբանությունը (Կալվինիզմ, Արմինիանիզմ և այլն) թելադրում է լիազորված պատասխանը: Խնդրում եմ նախապես չդատել ինձ, քանի որ առաջ եմ բերել այս թեման: Իմ մտահոգությունը պատշաճ հերմենևտիկ վերլուծություն կատարելն է: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի մեզ հետ և ոչ թե փորձենք ձուլել այն նախադրված աստվածաբանության հետ: Մա հաճախ ցավոտ և ցնցող է, քանի որ մեր աստվածաբանության մեծ մասը հարանվանական է, մշակութային կամ հարաբերական (ծնող, բարեկամ, հոգևոր հովիվ) ոչ թե աստվածաշնչյան (տես Հատուկ Թեմա: Ի՞նչ է նշանակում ընդունել, հավատալ, խոստովանել, դավանել և կանչել): Ոմանք, ովքեր Աստծո ժողովրդի մեջ էին, պարզվում է այլևս Աստծո ժողովրդի մեջ չեն (օրինակ, Հո. 9: 6):

▪ **«հաւատքիցը»** Այս տերմինը (սովորաբար ՀՈՂԻ հետ) օգտագործվում է Հովվական նամակներում քրիստոնեական ճշմարտությունը հայտնված մարմնի համար (տես 1 Տիմ. 3: 9; 4: 6; 5: 8; 6: 10,12, 21; 2 Տիմ. 2:18; 3: 8,10; 4: 7; Տիտոս 1: 5,13; 2: 2): Այստեղ պարտադիր չէ, որ դրանք վերաբերվեն նրանց փրկությանը, այլ կեղծ ուսուցիչներին:

▪ **«մտիկ կ'տան»** Մա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՆԲԱՅ է, որն ընդգծում է շարունակական գործողություն: Այդ հավատուրացները շարունակում են համաձայնել և հավատալ դիվային ուսմունքին:

4:2

Արևելահայերեն «Մտախօսների կեղծաւորութեամբը»

Արևմտահայերեն «Մտախօսներուն կեղծաւորութիւնովը»

NASB «ստախոսների կեղծավորության միջոցով»

NKJV «սուտ է խոսում կեղծավորությամբ»

NRSV «ստախոսների կեղծավորության միջոցով»

TEV «տարածվում է խաբերա ստախոսների կողմից»

NJB «հրապուրված ստախոսների կեղծավորության պատճառով»

Սրանք հանդիսանում էին «Օրենքի ուսուցիչներ» (տես 1 Տիմ. 1:7): Ակնհայտ է, որ հուդայականության տարր կար: Նրանք վառ կերպով նկարագրված են 1 Տիմ. 1: 3-7; 4: 2-3,7 և 6: 3-10, 20-21:

1. նրանք սովորեցնում են օտար ուսմունք (1 Տիմ. 1: 3; 6: 3)
2. նրանք ուշադրություն են դարձնում առասպելների և ազգահամարների վրա (1 Տիմ. 1: 4)
3. նրանք ունայն խոսքերի հետևից գնացին (1 Տիմ. 1: 6)
4. նրանք վստահորեն պնդում են այն, ինչ իրենք չեն հասկանում (1 Տիմ. 1: 7; 6: 4)
5. նրանք կեղծավոր ստախոսներ են (1 Տիմ. 4: 2)
6. նրանց խղճմտանքը դադված է (1 Տիմ. 4: 2)
7. նրանք արգելում են ամուսնությունը (1 Տիմ. 4: 3)
8. նրանք հրաժարվում են սննդից (1 Տիմ. 4: 3)
9. նրանք առասպելների են հավատում (1 Տիմ. 4:7)
10. նրանք ինքնահավան են (1 Տիմ. 6:4)
11. նրանք ախտացած են վիճաբանությունների և խոսքերով հակառակելու համար(1 Տիմ. 6:4)
12. նրանք դատարկ վեճեր են առաջացնում (1 Տիմ. 6: 5)
13. նրանք ունեն կեղծ գիտելիքներ (1 Տիմ. 6: 20-21)
14. նրանք մոլորվել են հավատքից (1 Տիմ. 1:4; 6:21)

Արևելահայերեն «մոլար ոգիների եւ դեւերի վարդապետությունների»

Արևմտահայերեն «մոլորեցուցիչ ոգիներու ու դեւերու ուսմունքներու»

NASB «ստախոս ոգիները և դևերի վարդապետությունները»

NKJV «խաբերա ոգիները և դևերի վարդապետությունները»

NRSV «խաբուսիկ ոգիները և դևերի ուսմունքները»

TEV «պիղծ ոգիները ... դևերի ուսմունքները»

NJB «խաբուսիկ ոգիները և դավանանքները, որոնք գալիս են դևերից»

Պողոսի տեսակետը այս կեղծ ուսուցիչների մասին շատ բացասական է: Նա վերագրում է նրանց ուսմունքը սատանայի գործերին (տես Հատուկ Թեմա: Սատանա 1 Տիմ. 3: 6; տես 1 Տիմ. 2:14; 3: 6-7) և դևերին: Շատ դեպքերում Պողոսի տեսակետը այս հերետիկոսների զուգահեռ է Հին Կտակարանի քանանացիների պտղաբերության պաշտամունքի հետ: Աստված ասաց իսրայելացիներին լիովին կործանել այդ մարդկանց, քանի որ նրանք կապականեին հավատքը: Այս նույն նախազգուշացումները գտնվում են այստեղ (տես 2 Թես. 2: 9-10; Հակոբոս 3: 15; 1 Հովհ. 2: 18-19):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԴԻՎԱԿԱՆ (ԱՆՄԱՔՈՒՐ ՈԳԻ)

- Ա. Հնագույն ժողովուրդները հեթանոսներ էին: Նրանք մարդու հատկությունները վերագրում էին բնության, կենդանիների և բնական օբյեկտների ուժերին: Կյանքը բացատրվում էր այդ հոգևոր անձանց և մարդկության միջև եղած փոխգործակցության միջոցով:
- Բ. Այս մարմնացումը դարձավ բազմաստվածություն/polytheism (շատ աստվածներ): Սովորաբար դիվայինը (*genii*) փոքր կամ ցածր աստվածներ էին կամ կիսաստվածներ/demigods (բարի կամ չար), որոնք ազդում էին մարդկային կյանքերի

վրա:

1. Միջագետք, քառսև և հակամարտություն
2. Եգիպտոս, դասակարգ և գործողություն
3. Քանան, տես W. F. Albright's *Archaeology and the Religion of Israel*, հինգերորդ հրատ. էջ 67-92

Գ. Հին Կտակարանը չի հաստատում կամ զարգացնում փոքր աստվածների, հրեշտակների կամ դևերի թեման, հավանաբար, այն պատճառով, որ այնտեղ միաստվածության գաղափարը խիստ ընդունված էր (տես Հատուկ Թեմա Մոնոթեիզմ, տես Ելից 8:10; 9:14; 15:11; 2 Օր. 4:35, 39; 6: 4; 33:26; Սաղ. 35:10; 71:19; 86: 6; Ես. 46: 9; Եր. 10: 6-7; Միք. 7:18): Սա նշում է հեթանոս ազգերի կեղծ աստվածներին (*Shedim*, BDB 993, տես 2 Օր. 32:17; Սաղ. 106: 37) և նշում դրանցից մի քանիսի անունները:

1. *Se'im* (այծամարդ, սատիր կամ մագոս դևեր/այծեր, տես BDB 972 III, KB 1341 III, Ղև. 17: 7; 2 Մնաց. 11:15; Ես. 13:21; 34:14)
2. *Lilith* /Լիլիթ (իգական, գայթակող, հրապուրող դև, տես BDB 539, KB 528, Ես. 34:14)
3. *Mavet* (եբրայերեն տերմին մահվան համար օգտագործվում էր քանանական անդրժիրմյան աստծո համար, *Mot*, BDB 560, KB560, տես Ես. 28: 15,18; Եր. 9:21; ու հնարավոր է 2 Օր. 28:22):
4. *Resheph* (ժանտախտ, պատուհաս, կարկուտ, BDB 958, KB 958, տես 2 Օր. 32:24; Սաղ. 78:48, Ամբ. 3: 5)
5. *Dever* (ժանտախտ, համաճարակ, BDB 184, տես Սաղ. 91: 5-6; Ամբ. 3: 5)
6. *Az'azel* (անունը անորոշ է, բայց հնարավոր է, անապատի դև կամ լինի տեղի անուն, տես, BDB 736, KB 736, Ղևտ. 16:8,10,26)

(Այս օրինակները վերցված են *Encyclopaedia Judaica*, հատոր 5, էջ 1523):

Սակայն, ՅԱՀՎԵԻՑ բացի չկա դուալիզմ կամ հրեշտակային անկախությունը Հին Կտակարանում: Սատանան ՅԱՀՎԵԻ ծառան է (տես Հոբ 1-2; Զաքարիա 3), ոչ թե անկախ, ինքնուրույն թշնամի (տես A. B. Davidson, *A Theology of the Old Testament*, էջ 300- 306):

Դ. Հուդայականությունը զարգացավ բաբելոնյան գերության ընթացքում (586-538մ.թ.ա): Սրա վրա աստվածաբանորեն ազդել է պարսից զրադաշտության անձնավորած դուալիզմը, բարի, բարձր աստուածը կոչվում էր *Mazda* կամ *Ormazd* իսկ չար հակառակորդը՝ *Ahriman*: Դա թույլ տվեց հետզերության հուդայականության մեջ անձնավորված դուալիզմ ՅԱՀՎԵԻ և Իր հրեշտակների և սատանայի և նրա հրեշտակների կամ դևերի միջև:

Անձնավորված չարը հուդայական աստվածաբանության մեջ բացատրվում է և լավ փաստագրված է Alfred Edersheim's *The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2 հավելված XIII (էջ 749-863) և XVI (էջ 770-776): Հուդայիզմը անձնավորում է չարը երեք ձևերով,

1. Սատանա կամ *Sammael*
2. չար մտադրություն (*yetzer hara*) մարդկության մեջ
3. Մահվան հրեշտակը

Էդերշիմը/Edersheim բնութագրում է դրանք որպես (1) Մեղադրող, (2) Փորձիչ և (3)

Պատժող (հատոր 2, էջ 756): Կա մի նշանավորված աստվածաբանական տարբերություն հետեյիցի հուդայականության և չարի Նոր Կտակարանյան ներկայացման և բացատրության միջև:

Ե. Նոր Կտակարանը, հատկապես Ավետարանները, պնդում են չար հոգևոր էակների գոյությունը և ընդդիմությունը մարդկության և ՅԱՀՎԵԻ դեմ (հուդայականության մեջ

սատանան մարդու թշնամին էր, բայց ոչ Աստծո): Նրանք հակառակ են Աստծո կամքին, կանոնին և թագավորությանը:

Հիտուսը հանդիմանեց և արտաքսեց այդ դիվային էակներին, նաև կոչելով (1) անմաքուր հոգիներ (տես Ղուկ. 4:36; 6:18) կամ (2) չար հոգիներ (տես Ղուկ. 7:21; 8: 2) մարդ արարածներից: Հիտուսը հստակ տարբերակեց հիվանդության (ֆիզիկական և մտավոր) և դիվականի միջև: Նա ցույց տվեց Իր ուժը և հոգևոր խորաթափանցությունը՝ ճանաչելով և քշելով այդ չար հոգիներին: Նրանք հաճախ ճանաչում էին Նրան և փորձում էին դիմել Նրան, բայց Հիտուսը մերժեց իրենց վկայությունը, պահանջելով նրանցից լռել և վռնդում էր նրանց: Պիղծ հոգիներին սանձելը նշան է սատանայի արքայության պարտությանը:

Չարմանալիորեն տեղեկատվության պակաս կա Նոր Կտակարանի Առաքյալների նամակներում այս թեմայի մասին: Դևեր հանելը երբեք չի նշվում որպես հոգևոր պարզև, ոչ էլ մեթոդաբանություն կամ ընթացակարգը է տված ապագա ծառայող կամ հավատացյալ սերունդների համար:

Չ. Չարը իրական է. չարը անձնական է; չարը ներկա է: Ոչ նրա ծագումը և ոչ էլ նրա նպատակը չի բացահայտվել: Աստվածաշունչը պնդում է նրա իրականությունը և ազդեցիկորեն հակառակվում է նրա ազդեցությանը: Իրականում չկա ոչ մի վերջնական դուալիզմ: Աստված է գերագույն հսկողություն իրականացնողը; չարը պարտված է և դատապարտված; և հեռացվելու է արարչագործությունից:

Է. Աստծու ժողովուրդը պետք է դիմադրի չարին (տես Հակ. 4:7): Նրանք չեն կարող կառավարվել դրանով (տես 1 Հովհ. 5:18), բայց նրանք կարող են գայթակղվել և նրանց վկայությունն ու ազդեցություն կարող է վնասվել (տես Եփ. 6: 10-18): Չարը քրիստոնյայի աշխարհընկալման բացահայտված մասն է: Ժամանակակից քրիստոնյաները իրավունք չունեն վերանայել չարը (Rudolf Baltmann ապ-առասպելացու) ապ-անձնավորել չարը (սոցիալական կառույցները Paul Tillich), ոչ էլ փորձել բացատրել այն ամբողջությամբ հոգեբանական առումով (Sigmund Freud): Նրա ազդեցությունը համատարած է, բայց պարտված: Հավատացյալները պետք է քայլել Քրիստոսի հաղթանակով:

Արևելահայերեն «խղճմտանքը տաղուած է»

Արևմտահայերեն «խղճմտանքը խանձուած է»

NASB «այրված, խանձված իրեն խղճով»

NKJV «իրենց խիղճով ունենալով բրենդային երկաթով»

NRSV «խիղճները տաք երկաթով խանձված»

TEV «խիղճները խանձված են, ինչպես տաք երկաթով դաջված»

NJB «խիղճը դաջված է, կարծես կարմիր տաք երկաթով»

Սա վերաբերվում է երկու բաներից մեկին:

1. Կեղծ ուսուցիչները վեր էին ապաշխարությունից (տես Եփ. 4:19; Տիմոս 1:15): Այս հունարեն տերմինից մենք ստանում ենք «կորցնել» անգլերեն բառը:

2. Այս արտահայտությունը վերաբերվում է սատանայի նշանին, որը ցույց է տալիս իր սեփականությունը (օրինակ, Հայտ. 13: 16,17; 14:11; 16: 2; 19:20; 20: 4):

Քանի որ այդ մարդիկ հրաժարվեցին ճշմարտությունը տեսնել, նրանք այժմ անկարող են տեսնել ճշմարտությունը (տես 2 Կոր. 4: 4): Սա Ավետարանների աններելի մեղքն է և 1 Հովհ. 5 մահացու մեղքը:

Տես ծանուցում «խիղճ» 1 Տիմ. 1: 5:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔ (1 ՀՈՎՀԱՆՆՈՒ)

Ա. Հերմենևտիկ քննարկումներ

1. պատշաճ ինքնորոշումը պետք է կապված լինի I Հովհ. պատմական իրավիճակի հետ
ա. գնոստիկ կեղծ ուսուցիչների (տես Հատուկ Թեմա: Գնոստիցիզմ) ներկայությունը
եկեղեցիներում (տես 1 Հովհ. 2: 19,26; 3: 7; 2 Հովհ. 7)

(1) «Քերրինթուսյան/Cerinthian» գնոստիկները սովորեցնում էին, որ Հիսուս
մարդը ստացավ Քրիստոսի հոգին իր մկրտության ժամանակ և
Քրիստոսի հոգին հեռացավ մինչև խաչի վրա մահանալը (տես 1 Հովհ.
5: 6-8)

(2) դոկետիկ գնոստիկները սովորեցնում էին, որ Հիսուսը աստվածային
հոգի էր, ոչ թե իրական մարդ (տես 1 Հովհ. 1: 1-3)

(3) Երկրորդ դարի գրվածքներում հայտնված գնոստիցիզմը արտացոլում
էր երկու տարբեր տեսակետներ մարդու մարմնի մասին

ա) քանի որ փրկությունը ճշմարտությունն էր՝ բացահայտված մտքում,
մարդկային մարմինը հոգևորին չէր համապատասխանում: Հետևաբար,
ինչ էլ որ ցանկանար, կարող էր ունենալ: Դրանք հաճախ անվանվում են
անտիևտմիան կամ ազատամիտ գնոստիկներ:

բ) մյուս խումբը եզրակացնում էր, քանի որ մարմինը իրականում չար է
(այն է, հունական միտք), ցանկացած մարմնավոր ցանկությունից
պետք է հեռու մնալ: Դրանք կոչվում են ասկետիկ գնոստիկներ:

բ. այդ կեղծ ուսուցիչները թողել էին եկեղեցին (տես 1 Հովհ. 2:19), բայց նրանց
ազդեցությունը ոչ:

2. պատշաճ ինքնորոշումը պետք է կապված լինի ամբողջ գրքի գրական կոնտեքստին
ա. 1 Հովհ. գրվել է կեղծ ուսմունքների դեմ պայքարելու և ճշմարիտ

հավատացյալներին հավաստիացնելու համար

բ. այս երկու նպատակները կարելի է տեսնել ճշմարիտ հավատացյալների
փորձությունների մեջ

(1) վարդապետական

ա) Հիսուսը իրական մարդ էր (տես 1 Հովհ. 1: 1-3; 4:14)

բ) Հիսուսը իրական Աստված էր (տես 1 Հովհ. 1: 2; 5:20)

գ) մարդիկ մեղավոր են և պատասխանատու են սուրբ Աստծուն
(տես 1 Հովհ. 1: 6, 10)

դ) մարդիկ նաև ներվում են և արդարացվում Աստծո առաջ

i. Հիսուսի մահը (տես 1 Հովհ.1: 7;2: 1-2;3:16;4: 9-10,14, 5: 6-8)

ii. հավատք առ Հիսուս (տես 1 Հովհ. 1: 9; 3:23; 4:15; 5: 1,4-
5,10-12,13)

(2) գործնական (դրական)

ա) հնազանդ ապրելակերպ (տես 1 Հովհ. 2: 3-5; 3: 22,24; 5: 2-3)

բ) սիրո ապրելակերպ(1Հովհ. 2:10; 3: 11,14,18,23; 4: 7,11-12,16-18,21)

գ) Քրիստոսանման ապրելակերպ (մեղք չի գործում, տես 1 Հովհ. 1: 7;
2: 6,29; 3: 6-9; 5:18)

դ) ապրելակերպ հաղթելով չարին (տես 1 Հովհ. 2: 13,14; 4: 4; 5: 4)

ե) Նրա խոսքը մնում է նրանց մեջ (տես 1 Հովհ. 1:10; 2:14)

զ) նրանք ունեն Հոգին (տես 1 Հովհ. 3:24; 4: 4-6, 13)

- է) պատասխանված աղոթք (տես 1 Հովհ. 5: 14-15)
- (3) գործնական (բացասական)
 - ա) մեղքով ապրելակերպ (տես 1 Հովհ. 3: 8-10)
 - բ) ատելության ապրելակերպ (տես 1 Հովհ. 2: 9,11; 3:15; 4:20)
 - գ) անհնազանդության ապրելակերպ (տես 1 Հովհ. 2: 4; 3: 4)
 - դ) սիրում է աշխարհը (տես 1 Հովհ. 2: 15-16)
 - ե) ուրանում է Քրիստոսին (մերժում է Հորը և Որդուն, տես 1 Հովհ. 2: 22-23; 4: 2-3; 5: 10-12)

3. պատշաճ ինքնորոշումը պետք է կապված լինի համապատասխան տեքստում որոշակի թեմաների հետ (տես 1 Հովհ. 5: 16-17)

- ա. արդյոք հ. 16 «եղբայր» տերմինը վերաբերում է թե մահացու մեղք գործողին և, թե նրանց, որոնց մեղքերը մահացու չեն:
- բ. անարգողներ էին, մի ժամանակ եկեղեցու անդամներ (տես 1 Հովհ. 2:19):
- գ. ինչ է տեքստային նշանակությունը.
 - (1) «մեղք» բառի հետ ՀՈՂ չկա
 - (2) «տեսնել» ԲԱՅՇՆ որպես ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ հետ:
- դ. ինչպես կարող են մեկ քրիստոնյայի աղոթքները (տես Հակ. 5: 15-16) վերականգնել հավիտենական կյանքը «zōē» մի ուրիշ համար՝ առանց մեղավորի անձնական ապաշխարության:
- ե. ինչպես է հ.17 կապվում մեղքի տեսակների հետ (մահացու, ոչ մահացու):

Բ. Աստվածաբանական խնդիրները

1. Արդյոք թարգմանիչը պետք է փորձի այս տեքստը կապել
 - ա. Ավետարանների «մահացու» մեղքի հետ (տես Հատուկ Թեմա: Աններելի մեղք)
 - բ. Եբրայեցիս 6 և 10 «մի անգամ» մեղքը
1 Հովհ. կոնտեքստը կարծես զուգահեռ է Հիսուսի օրվա փարիսեցիների աններելի մեղքին (տես Մատթ. 12:22-37; Մարկ. 3: 2-29), ինչպես նաև Եբր. 6 և 10 գլուխների անհավատ հրեաներին: Բոլոր երեք խմբերը (փարիսեցիները, անհավատ հրեաները և գնոստիկ կեղծ ուսուցիչները) հստակ լսեցին ավետարանը, բայց հրաժարվեցին հավատալ Հիսուս Քրիստոսին:
2. Արդյոք ժամանակակից հարանվանական հարցերը աստվածաբանական ցանցն են՝ այս տեքստը դիտելու համար:
Ավետարանչականությունը չափից շատ ընդգծեց քրիստոնեական փորձառության սկիզբը և անտեսեց ճշմարիտ հավատքի շարունակական ապրելակերպի ապացույցները: Մեր ժամանակակից աստվածաբանական հարցերը կցնցեին առաջին դարի քրիստոնյաներին: Մենք ցանկանում ենք «համոզվածություն» հիմնված ընտրված աստվածաշնչյան «ապացուցող-տեքստերի» և մեր իսկ տրամաբանական եզրակացությունների կամ հարանվանական կողմնակալության վրա:
Մեր աստվածաբանական հարցերը, ցանցերը և առանձնահատկությունները արտացոլում են մեր անվստահելիությունները: Մենք ուզում ենք ավելի շատ տեղեկություններ և պարզաբանումներ, քան որ Աստվածաշունչն է տալիս, ուստի մեր սխտեմատիկ աստվածաբանությունները վերցնում են աստվածաշնչյան որոշ փոքրիկ կտորներ և վերածում տրամաբանական, արևմտյան, կոնկրետ

վարդապետությունների հսկայական ցանցերի:

Մատթ. 7 և Մարկ. 7 Հիսուսի խոսքերը բավարար էին վաղ եկեղեցու համար: Հիսուսը փնտրում էր աշակերտներ, ոչ թե որոշումներ, երկարաժամկետ հավատքի ապրելակերպ, այլ ոչ թե կարճաժամկետ էմոցիոնալ հավատք (տես Մատթ. 13:10-23; Հովհ. 8: 31-59): Քրիստոնեությունը մեկուսացած անցյալի գործողություն չէ, այլ շարունակական ապաշխարություն, հավատք, հնազանդություն և հաստատակամություն: Քրիստոնեությունը երկնքի տոմս չէ, անցյալում ձեռք բերված, ոչ էլ հրդեհային ապահովագրության քաղաքականություն՝ պաշտպանելու եսասեր, անաստված ապրելակերպից:

3. Արդյոք մահացու մեղքը վերաբերում է ֆիզիկական մահվանը, թե՞ հավիտենական: Այս կոնտեքստում Հովհաննեսը օգտագործում է *zōē*, նշանակում է, որ հակադրությունը վերաբերում է հավիտենական մահվանը: Հնարավոր է արդյոք, որ Աստված տուն ընդունի (ֆիզիկական մահ) մեղավոր զավակների: Այս կոնտեքստի իմաստն այն է, որ (1) հավատակից եղբայրների աղոթքները և (2) մեղավորի անձնական ապաշխարությունը միավորվելով վերականգնում են հավատացյալներին, բայց եթե նրանք շարունակում են ապրել այնպիսի կյանքով, որը նախատինք է բերում հավատացյալ համայնքին, ապա արդյունքը կարող է լինել այս կյանքից վաղաժամ ֆիզիկապես հեռանալը (տես *When Critics Ask* by Norman Geisler and Thomas Howe, էջ 541):

4: 3 «Որ ամուսնանալուց կ'արգիլեն, կ'հրաժարեն կերակուրներից» Ահա կեղծ ուսուցիչների ասկետիկ/ճգնավոր ուսմունքներից երկուսը: Առաջինը, արգելված ամուսնությունը կապված է հունական ակունքներին (գնոստիկ) կամ, հնարավոր է, հրեական էսսենների ազդեցության հետ (Մեռյալ Ծովի մագաղաթների համայնքը) ազդեցությունը: Ամուսնությունը Աստծո պարզն է (տես Ծննդ. 2:24) և Աստծո կամքը (տես Ծննդ. 1:28; 9: 1,7): Ամուսնությունը սահմանված կարգ է, իսկ ամուսնությունը հասուն կոչ և պարզ (տես Մատթ. 19: 11-12; 1 Կոր. 7):

Երկրորդ, որոշակի սննդամթերքներից հեռու մնալը, կարծես, վերաբերում է հրեական ֆոնին (տես Ղև. 11), սակայն կարող է վերաբերվել գնոստիկ արգելքներին: Երկու հասկացություններն էլ վերաբերում են Ծննդ. 1: 28-31-ի աստվածաբանական բնույթին: Մշտապես եղել են միտում կրոնական մարդկանց միջև, արժեզրկելու նյութական աշխարհը, մտածելու, թե ամուսնությունը ավելի հոգևոր վիճակ է, և սննդամթերքն ու խմիչքը բացառելը, և ասկետիզմ/ճգնավորությունը՝ որպես գերազանց հոգևոր վիճակ (տես Մատթ. 15:11; Մարկ. 7: 17-23; Հռ. 14:1-15:13; 1 Կոր. 8: 8; 10: 23-33; Կող. 2: 8-23): Գլուխ 3-ում առաջնորդների որակավորման ցանկը հավանաբար կապված է այդ կեղծ ուսմունքների հետ: Ուշադրություն դարձրեք, որ թե ամուսնությունը և թե զինին թույլատրվում են (տես 1 Տիմ. 3.2, 12; 5: 9 և 3: 3,8; 5:23):

▪ **«հաւատացեալների եւ ճշմարտութիւնը ճանաչողների համար»** Սա անսովոր քերականական կառուցվածք է (այսինքն ԱՕԱԿԱՆ և ԴԵՐԲԱՅ, հմմտ. Michael Magill, *NT TransLine*, էջ 785): Այս նույն ձևը հայտնվում է Տիտոս 1:15-ում: Այս հավատացյալները նկարագրվում են որպես

1. հավատացյալներ- ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ, ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ, ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ, ԱՐԱԿԱՆ ՍԵՆ, ԱՕԱԿԱՆ
2. ովքեր հայտնի են – ՎԱՂԱԿԱՏԱՐ, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ, ՀՈԳՆԱԿԻ, ԱՐԱԿԱՆ, ԴԵՐԲԱՅ

Ճշմարտությունն այստեղ (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 2: 4) այն է, որ բոլոր ստեղծագործությունը Աստուծոց է և պետք է Նրան շնորհակալություն հայտնել դրա համար: Ասկետիզմը խախտում է այս ճշմարտությունը:

4:4 «Որովհետև Աստուծոյ բոլոր ստեղծուածները բարի են, եւ ոչ մի բան խոտան չէ» Այս հսկայական ճշմարտությունը, որ ամեն բաները բարի են տես Ծննդ. 1:31; Հռ. 14: 14,20; 1 Կոր. 6:12; 10:26; Տիտոս 1:15: Այնուամենայնիվ, մենք սա պետք է հավասարակշռենք այն փաստով, որ թէն բոլոր բաները կարող են բարի և մաքուր լինել նրանց համար, ովքեր զիտեն, որ իրենց ծագումը Աստծո մեջ, ոչ թէ ամեն ինչ է շինություն եկեղեցու համար (տես 1 Կոր. 6:12 և 10:23): Հետևաբար, մենք, որպես քրիստոնյաներ, սահմանափակում ենք մեր ազատությունները հանուն ուրիշների ի հարգանս Քրիստոսի սիրո (կարդա Հռ. 14: 1-15: 13; 1 Կոր. 8-10):

«Մերժված» բառը բառացիորեն նշանակում է «շարժված, դեն նետած»: Moffatt-ը թարգմանում է «արգելված»: Զգուշացեք մշակութային և (կամ) հարանվանական ավանդույթների մասին (տես Ես. 29:13; Կող.2: 8-23):

4: 5 Աստված խոսեց և եղավ ստեղծագործությունը (տես Ծննդ.1: 3,6,7,14,20,24) և հաստատում է ամեն բաների բարի լինելը (տես Ծննդ. 1:31): Հավաստացյալը շնորհակալություն է հայտնում Աստծուն (տես 1 Տիմ. 4: 4 բ) իր ստեղծագործության և հոգատարության համար (կարդա Հռ. 14: 6; 1 Կոր. 10: 30-31):

- **«աղօթքով»** Այս տերմինը (*enteuxis*) միայն երկու անգամ է օգտագործվում Նոր Կտակարանում, երկու դեպքում էլ 1 Տիմոթեոսում (տես 1 Տիմ. 2: 1 և 4: 5): Դա նշանակում է հանդիպում որևէ մեկի հետ՝ հանդիպելու նպատակով: Այն հաճախ թարգմանվում է «բարեխոսություն» (տես 1 Տիմ. 2: 1); այս կոնտեքստում, «շնորհակալություն/զոհություն» ավելի հարմար է: Հիշեք, որ կոնտեքստը, ոչ թէ բառարաններն են որոշում բառերի իմաստը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 4:6-10
⁶Եթէ այս բաները եղբայրներին խրատ տաս, Յիսուս Քրիստոսի բարի պաշտօնեայ կ'լինես, սնուած հաւատքի խօսքերովը, եւ այն բարի վարդապետութիւնովն, որին հետեւեցիր: ⁷Եւ պիղծ ու պառաւական առասպելներիցը ետ կաց. Բայց վարժեցրու քո անձը աստուածապաշտութեան: ⁸Որովհետև մարմնի վարժութիւնը քիչ բանի համար է օգտակար. բայց աստուածապաշտութիւնն ամեն բանի համար օգտակար է, ունենալով այժմեան եւ զալու կենաց խոստումնքը: ⁹Ճշմարիտ է այս խօսքը եւ ամեն ընդունելութեան արժանի: ¹⁰Որովհետև հէնց սորա համար էլ աշխատում ենք եւ նախատվում, որ յոյս ենք դրել կենդանի Աստուծոյ վերայ, որ Փրկիչ է ամեն մարդկանց, եւ մանաւանդ հաւատացեալներին:

4: 6 «Եթէ այս բաները եղբայրներին խրատ տաս» *Hypotitēmi*, որը ՉԵԶՈՔ ՍԵՌ է նշանակում է «առաջարկել, խորհուրդ տալ»: Ուշադրություն դարձրեք այն հեգույթունը, որը Պողոսը հորդորում է Տիմոթեոսին՝ եկեղեցու անդամներին ուղղելու համար (տես 5-րդ գլուխ): Դիտարկենք հակադրությունը 1 Տիմ. 4:11, որտեղ նա խիստ հանձնարարություններ է տալիս այդ հաղորդակցության մեջ առկա խնդիրների համար: Երկուսն էլ հարմար են իրենց տեղում:

- **«սնուած հաւատքի խօսքերովը, եւ այն բարի վարդապետութիւնովն»** Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (թէն իր ձևով այն կարող է լինել ՉԵԶՈՔ ՍԵՌ, որը կխրախուսի հավատացյալներին իրենց համար սովորելու հավատքի ճշմարտությունները): Ծառայողները սնվում են քրիստոնեության ճշմարիտ սկզբունքներով (ես այս երկու արտահայտիչ արտահայտությունները

որպես հումանիշ եմ դիտում): Մա ճշմարիտ հոգևոր խորհուրդներն իմացող, այլ ոչ թե կեղծ ուսուցիչների դիվային գիտությունը: Մուրք Գրքի նպատակները հստակ շարադրված են 2 Տիմ. 3: 15-17, ինչպես յուրաքանչյուր հավատացյալի պատասխանատվությունն է 2 Տիմ. 2:15, հատկապես կեղծ ուսմունքի լույսի ներքո (տես 2 Տիմ. 2:14-18):

▪ **«որին հետևեցիր»** Մա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Տիմոթեոսը հավատարմության պատմություն ունեցավ: Այս տերմինը կարող է նշանակել կամ

1. հետևել (տես 2 Տիմ. 3:10)
2. սերտորեն ուսումնասիրել (տես Ղուկ. 1: 3)

4: 7 «Եւ պիղծ ու պառաւական առասպելներիցը ետ կաց» Հովվական նամակները խոչընդոտում են (ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ [deponent] ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կեղծ ուսուցիչների սպեկուլյատիվ քննարկումները (տես 1 Տիմ. 1: 4; 4: 7; 2 Տիմ. 2:14-18,23; Տիտոս 1:14; 3:9): Հենց այս ԲՍՅԸ (*paraiteomai*) օգտագործվում է 1 Տիմ. 4: 7; 5:11; 2 Տիմ. 2:23 և Տիտոս 3:10:

«Ծեր կանայք» արտահայտությունը (*graōdēs*) օգտագործվում է Նոր Կտակարանում միայն այստեղ: Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, էջ 82 ասում է, որ դա նշանակում է «հիմար» և «անհեթեթ»: Այն թարգմանվում է «ծեր կանանց պատմություններ» NRSV, NJB իսկ NKJV մեջ «ծեր կանանց առասպելներ»:

Քանի որ ես համաձայն եմ Գորդոն Ֆիլի հետ, որ կանայք կեղծ ուսուցիչների կողմից հետոքեն քանցվում էին և օգտագործվում էին որպես իրենց տեսակետների խոսնակներ տնային եկեղեցիներում տաճարում ներկայացուցիչների խոսակցություններ, այդ դեպքում մեկը կարող է հարց տալ

1. Արդյո՞ք կային ծեր կին կեղծ ուսուցիչներ (տես 1 Տիմ. 5: 6):
2. Արդյո՞ք դա մեթոդ էր ընդգծելու կանանց հետ կապված խնդիրը:
3. Արդյո՞ք դա պարզապես նահապետական մշակութային միտք էր:

▪ «Առասպել» տերմինը (NRSV, NJB) 1 Տիմ. 4: 7 սխալ է ընկալվել: Լավ հողված կա G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, գլուխ 13, էջ 219-242: Առասպելն ունի մի քանի հնարավոր լրացուցիչ իմաստներ:

▪ **«Բայց վարժեցրու քո անձը աստուածպաշտութեան»** Մա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է: «Կարգապահություն/դիսցիպլինա» կամ «մարզում», այն մարմնամարզիկին վերաբերվող փոխաբերություն է, որից մենք ստանում ենք անգլերեն «մարզասրահ» բառը: Ատլետիկ մարզումը լավ օրինակ է մեզ համար լարված, նվիրված, առաջնային ջանքերի համար որպեսզի մենք քրիստոնյաներս ավելի զգույշ լինենք հոգևոր ոլորտի համար (տես 1 Կոր. 9: 24-27; 2 Տիմ. 2: 5; 4: 7; Եբբ. 12:1-3):

▪ **«աստվածպաշտություն»**

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ/ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Մա առանցքային տերմին է Հովվական Նամակներում (այսինքն, 1 Տիմոթեոս; 2 Տիմոթեոս; Տիտոս): Մա վերաբերվում է թե ավետարանի վարդապետական և թե ամենօրյա կյանքին: Այն նկարագրում է հավատացյալի կյանքում ոչ թե բացառվածը, այլ սպասվածը: Դա բարդ տերմին է, կազմված երկու ուրիշ բառերից «բարի» (*eu*) և «պաշտամունք» (*sebomai*):

Ճշմարիտ երկրպագությունը դա ամենօրյա աստվածահաճո կյանք ապրելն է ճիշտ

մտածելակերպով (տես 1 Տիմ. 4:16ա): Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ է այս բառն օգտագործվում է Հովվական նամակներում

1. գոյական (*eusebeia*), 1 Տիմ. 2: 2; 3:16; 4: 7,8; 6: 3,5,6,11; 2 Տիմ. 3: 5; Տիտոս 1: 1
2. դերբայ (*eusebēs*), 2 Տիմ. 3:12; Տիտոս 2:12
3. բայ (*eusebeō*), 1 Տիմ. 5: 4
4. *theosebeia* կապված տերմին, 1 Տիմ. 2:10
5. Բացասական տերմին (ԱյՖա մասնիկով, *asebeia*), 2 Տիմ. 2:16; Տիտոս 2:12

4: 8 Ֆիզիկական մարմինը մեր կյանքի խնամակալության մի մասն է, բայց ոչ առաջնահերթ: Աստվածաշնորհությունն է առաջնահերթություն: Սա կարող է վերաբերվել

1. ֆիզիկական վարժությանը
2. ֆիզիկական կարգապահությանը
3. ասկետիզմին

Այն, ինչը ազդում է մարմնի վրա, դա է նշանակալի, բայց այն, ինչը ազդում է հոգու վրա, հավիտենական է: Ճշմարիտ վարժությունը 1 Տիմ. 4:10 « աշխատանք» և «ջանք» է: Ծառայությունը ազդում է ավետարանի արդյունքի վրա, սակայն ասկետիզմը ընդգծում է անհաստին:

4: 9 «Ճշմարիտ է այս խօսքը» Այս արտահայտությունը կարող է կապվել կամ 8 կամ 10-րդ համարի հետ: Պողոսը հաճախ է օգտագործում այս արտահայտությունը՝ կարևորելու համար Հովվական նամակներում նշանակալից մտքերը (տես 1 Տիմ. 1:15; 3: 1; 4: 9; 2 Տիմ. 2:11; Տիտոս 3:8), շատ նման է Հիսուսի «Ամեն, Ամեն»-ին կամ Պողոսի «Ես չեմ ուզում, որ դուք անտեղյակ լինեք եղբայրներ» իր վաղ գրվածքներում (տես Հռ. 1: 13; 11:25; 1 Կոր. 10: 1; 12:11; 2 Կոր. 1: 8; 1 Թես. 4:13):

4:10 «Որովհետև հենց սորա համար էլ աշխատում ենք եւ նախատվում» Սրանք երկուսն էլ մարզական փոխաբերություններ են: Վերջինը, որից մենք ստանում ենք անգլերեն «տառապանք» կամ «տանջվել» բառը նաև հանդիպում է Փիլ. 2:16; 1 Տիմ. 6:12 և 2 Տիմ. 4: 7:

Այս արտահայտության մեջ կա հունարեն ձեռագրի տարբերակ:

1. MSS ^α, D, L, P, ինչպես նաև Վուլգատ, Փեշիթա և Ղպտի թարգմանություններն ունեն «տառապում են նախատինքի պատճառով» (NKJV)
2. ^α *, A, C, F, G, K և 075-ը ունեն «ձգտել, ջանալ» (NASB, NRSV, TEV, NJB, NIV)

UBS⁴-ը «ձգտել, ջանալ»-ուն տալիս է «C» վարկանիշ, որը նշանակում է, որ հանձնաժողովը դժվարություններ ուներ տարբերակների միջև որոշելու հարցում:

Արևելահայերեն «որ յոյս ենք դրել»

Արևմտահայերեն «յուսացեր ենք»

NASB «քանի որ մեր հույսը ամրագրել ենք»

NKJV «քանի որ մենք վստահում ենք»

NRSV «քանի որ մենք ունենք մեր հույսը»

TEV «որովհետև մենք մեր հույսը դրեցինք»

NJB «այն է, որ մենք վստահություն ենք դրսևորել»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հավատացյալները հավատում են Աստծո հաստատուն, հուսալի, անփոփոխ բնույթին, որպես իրենց միակ հույսը (տես Մաղ. 102: 26-27; Մաղ. 3: 6; Եբր. 1: 11-12; 13: 8; Հակոբոս 1:17): Մեր փրկության վստահությունը հիմնավորված է ՅԱՀՎԵԻ բնույթով (տես 1 Տիմ. 6:17; Հռ. 15:12; 2 Կոր. 1:10):

▪ **«կենդանի Աստուծոյ վերայ»** Ես կարծում եմ, որ այս հունարեն արտահայտությունը արտացոլում է Հին Կտակարանի Աստծո ուխտի անունը: Սա «ՅԱՀՎԵ» տերմինի արմատային իմաստն է, որը եբրայերեն «լինել» ԲԱՅ- ից է առաջացել (տես Ելից 3:14; տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ](#) 2 Տիմ. 1: 2): ՅԱՀՎԵՆ մշտապես ապրող, միակ կենդանի Աստվածն է:

▪ **«որ Փրկիչ է ամեն մարդկանց, եւ մանաւանդ հաւատացեալներին»** «Փրկիչ» անվանումը շատ հաճախ օգտագործվում է Հովվական նամակներում (տես 1 Տիմ. 1: 2; 2: 3; 2 Տիմ. 1:10; Տիտոս 1 : 3-4; 2: 10-13; 3: 4,6): 1 Տիմոթեոսի ավելի վաղ գլուխներում այն օգտագործվում է որպես Ազատարար Աստված՝ բոլոր մարդկության համար (տես 1 Տիմ. 2: 4,6; Ղուկ. 2:11; Հովհ. 1:29; 4:42; Հռ. 5: 18-19; 2 Պետ. 3: 9): Տեսեք ամբողջական ծանուցումը 2 Տիմ. 1:10: Հնարավոր է «մանավանդ հավատացյալներին» փոքր արտահայտության պատճառով (որտեղ աստվածաբանորեն ակնկալում էր «միայն»), այն կարող է օգտագործվել *Elohim* հինկտակարանյան իմաստով, որը «պաշտպանիչն» է կամ «հայթայթողը» երկրի վրա ապրող ողջ կյանքի (տես Մաթ. 5:45; Գործք 17:28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ես պետք է խոստովանեմ ձեզ՝ ընթերցողներին, որ ես կողմնակալ եմ այս պահին: Իմ սիստեմատիկ աստվածաբանությունը կալվինիզմը կամ դիսպենսացիոնալիզմը չէ, այլ Մեծ Պատվիրանի ավետարանչականությունը (տես Մատ. 28:18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված հավիտենական ծրագիր է ունեցել մարդկության փրկության համար (օրինակ, Ծննդ. 19:3-5; 12:3; Ելից 19:5-6; Եր. 31: 31-34; Եզ. 18; 36: 22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հռ. 3: 9-18,19-20,21-31), բոլոր նրանց, որոնք ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Ուխտերը միավորված են Քրիստոսում (տես Գաղ. 3: 28-29; Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է, որը թաքնված էր, բայց հիմա բացահայտված (տես Եփ. 2: 11-3: 13): Սուրբ Գրքի հիմնական բանալին Նոր Կտակարանի ավետարանն է, այլ ոչ թե Իսրայելը:

Այս նախնական հասկացողությունը գունավորում է իմ Սուրբ Գրային բոլոր մեկնաբանությունները: Ես բոլոր տեքստերը կարդում եմ դրա միջոցով: Դա, անշուշտ, մի կողմնակալություն է (բոլոր թարգմանիչներն ունեն դրանք), բայց դա Սուրբ Գրային տեղեկացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2-ի ուշադրության կենտրոնում ՅԱՀՎԵՆ ստեղծում է մի վայր, որտեղ Նա և Իր ամենաբարձր ստեղծագործությունը՝ մարդկությունը, կարող են հաղորդակցվել (տես Ծննդ. 1: 26,27; 3: 8): Տիզիկական ստեղծագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Սուրբ Օգոստինոսը այն բնութագրում է որպես աստվածային միջամտությամբ ձևավորված փոս յուրաքանչյուր մարդու մեջ, որը կարող է լցվել միայն Աստծո կողմից:
2. Ք.Ս. Լյուիսը այս մոլորակը անվանեց «դիպած, ձեռք տված մոլորակ» (այսինքն, պատրաստված է Աստծո կողմից մարդկանց համար):

Հին Կտակարանը ունի բազմաթիվ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերվում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵԻ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդը, Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ծանուցում 12: 3:

3. Ելից 20-ում (2 Օր. 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի ուղղորդի իր հաստուկ ժողովուրդը: Նշենք, որ Ելից 19: 5-6, ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա եգալի հարաբերություններ Իսրայելի հետ: Եվ նաև այն, որ նրանք ընտրված են, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է լինի մեխանիզմ ազգերի համար՝ ճանաչելու ՅԱՀՎԵՆ և Նրան գրավելու համար: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):
4. 3 Թագ. 8 Սողոմոն տաճարը ընծայում է, որպեսզի բոլորը կարողանան գալ ՅԱՀՎԵՆ մոտ (տես 3 Թագ. 8: 43,60):
5. Սաղմոսներում- 22:27-28; 66:4; 86: 9 (Հայտ. 15:4)
6. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել իր համընդհանուր փրկության ծրագրերը:
 - ա. Եսայիա 2: 2-4; 12: 4-5; 25:6-9; 42: 6,10-12; 45:22; 49: 5-6; 51: 4-5; 56:6-8; 60: 1-3; 66: 18,23
 - բ. Երեմիա - 3:17; 4: 2; 16:19
 - գ. Միքիա 4:1-3
 - դ. Մադաքիա 1:11

Այս համընդհանուր շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵՆ ողորմության վրա, այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի: Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր ոգին»: Հնազանդությունը վճռական է, բայց դա ներքին բան է, ոչ միայն արտաքին (տես Հռ. 3: 21-31):

Նոր Կտակարանը հստակ ամրապնդում է համընդհանուր փրկության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանը- Մատթ. 28: 18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագիրը (այսինքն, կանխատեսված) – Ղուկ. 22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն- Հովհ. 3:16; 4:42; Գործք 10:34-35; 1 Տիմ. 2: 4-6; Տիտոս 2:11; 2 Պետ. 3: 9; 1 Հովհ. 2: 2; 4:14
4. Քրիստոսը միավորում է Հին և Նոր Կտակարանները- Գաղ. 3: 28-29; Եփ. 2: 11-3: 13; Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված է, բայց հիմա հայտնված (Եփ. 2: 11-3: 13):

Նոր կտակարանը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կենտրոնական, ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը վերջնական հայտնությունն է (տես Մաթ. 5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու [Հատուկ Թեմա: Ինչու՞ Նոր Կտակարանի ուխտի խոստումները այդքան տարբերվում են Նոր Կտակարանի ուխտի խոստումներից:](http://www.freebiblecommentary.org) Դուք կարող եք գտնել այն առցանց www.freebiblecommentary.org.

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 4:11-16

¹¹Այս բաները պատուիրիր եւ սովորեցրու:¹²Ոչ ոք քո մանկութիւնը չ'անարգէ. այլ օրինակ եղիր հաւատացեալներին խօսքով, վարքով, սիրով, հաւատքով, սրբութիւնով,¹³Մինչեւ որ գամ՝ միտք դիր կարդալուն, յորդորմունքին եւ վարդապետութեանը:¹⁴Անեղօգ մի լինիր այն քեզանում եղած շնորհքի համար. որ քեզ տրուեցաւ մարգարէութիւնով երիցութեան ձեռնադրութեամբը:¹⁵Մորանք մտածիր,

սորանցում կաց, որ քո յառաջադիմութիւնը ամենին յայտնի լինի:¹⁶Զգոյշ կաց անձիդ եւ վարդապետութեանդ, եւ դորանում յարատեւիր. Որովհետեւ այդ անելով քո անձն էլ կ'ապրեցնես, եւ քեզ լսողներին էլ:

4:11 «պատուիրիր» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, տերմինը նշանակում է «խիստ զինվորական պատվերներ» (տես 1 Տիմ. 1: 3, 18):

▪ **«Այս բաները... եւ սովորեցրու»** Սա եւ մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Պողոսը խրախուսում է Տիմոթեոսին պատասխանատվությունն իր վրա վերցնել: Այս եկեղեցին քայքայվել էր կեղծ ուսուցիչների և նրանց փոխնակների կողմից (այսինքն, հնարավոր է երիտասարդ այրիները, տես 2 Տիմ. 3: 6-7, կամ ավելի ծեր կանայք, տես 1 Տիմ. 4: 7):

4:12 «Ոչ որ քո մանկութիւնը չ'անարգէ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ՉԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել դեռևս գործընթացում գտնվող գործողությունը: Հռոմեական և հունական մշակույթում «երիտասարդ» տերմինը կարող էր վերաբերվել մինչև 40 տարեկան անձանց: Հնարավոր է, որ կեղծ ուսուցիչները կառչում էին Տիմոթեոսի տարիքից՝ նրա ուսմունքների վրա հարձակվելու կամ արժեզրկելու համար (տես 1 Կոր. 16:11): Տիմոթեոսը Պողոսի առաքելական փոխնակն էր: Պողոսը Տիմոսին շատ է խրախուսում նման կերպ Տիմոս 2: 15-ում:

▪ **«այլ օրինակ եղիր հաւատացեալներին խօսքով, վարքով, սիրով, հաւատքով, սրբութիւնով»** Տիմոթեոսն իր ապրելակերպով պետք է ցույց տար (ՆԵՐԿԱ ԶԵԶՈՔ [deponent] ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), որ ինքը սպառազինված է առաջնորդության համար (տես 1 Տիմ. 4: 6 և 7): Նա պետք է ապրեր կեղծ ուսուցիչների հակառակը:

Այս արտահայտության մեջ կա հունարեն ձեռագրի տարբերակ: *Textus Receptus* ավելացնում է «սիրով», «հոգով»: Սա գտնվում է K, L, P երկաթագիր ձեռագրերում, ինչպես նաև ավելի ուշ փոքրատառ ձեռագրերում: Այնուամենայնիվ, այն բացակայում է MSS ռ, A, C, D, F, G և Վուլգատ, Սիրիական և Ղպտի թարգմանություններում, ինչը ենթադրում է, որ այն ավելացվել է ավելի ուշ դպիրների կողմից:

▪ **«օրինակ»**

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԵՐՊԱՐ, ՕՐԻՆԱԿ, ՁԵՎ (TUPOS)

TUPOS տերմինն ունի լայն իմաստաբանական դաշտ:

1. Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*, p. 645
 - ա. օրինակ, մոդել
 - բ. պլան
 - գ. ձև, ոճ, գրելաձև
 - դ. հրամանագիր, որոշում, վճիռ կամ հրաման
 - ե. դատավճիռ կամ որոշում
 - զ. մարդու մարմնի մակետը, որն օգտագործվում է բժիշկ չաստծուն զոհ մատուցելու համար
 - է. ԲԱՅՆ օգտագործվել է օրենքի կետերի իմաստն ուժեղացնելու համար
2. Louw and Nida, *Greek-English Lexicon*, հատոր 2, էջ 249

- ա. սպի (տես Հովհ. 20:25)
 - բ. պատկեր, նմանություն (Գործք 7:43)
 - գ. մոդել, օրինակ, մակետ (տես Եբր. 8: 5)
 - դ. օրինակ (տես 1 Կոր. 10:6; Փիլ. 3:17)
 - ե. նախատիպ (տես Հռ. 5:14)
 - զ. տեսակ, ցեղ, կարգ (տես Գործք 23:25)
 - է. բովանդակություն, պարունակություն (տես Գործք 23:25)
3. Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, էջ 411
- ա. հարված, տպավորություն, նշան (տես Հովհ. 20:25)
 - բ. ուրվագծում, նկարագրություն
 - գ. պատկեր, նմանություն (տես Գործք 7:43)
 - դ. բանաձև, սխեմա, գծագիր, պլան (տես Հռ. 6:17)
 - ե. ձև, իմաստ, բովանդակություն (տես Գործք 23:25)
 - զ. կազմվածք, պակեր, նմանություն, պատճեն (տես 1 Կոր. 10:6)
 - է. ակնկալվող կերպար, պատկեր, տեսակ, տիպ (տես Հռ.5:14; 1 Կոր. 10:11)
 - ը. մոդել, օրինակ, նմուշ (տես Գործք 7:44; Եբր. 8:5)
 - թ. բարոյական օրինակ (տես Փիլ. 3:17; 1 Թեա.1:7; 2 Թեա. 3: 9; 1 Տիմ. 4:12; 1 Պետ. 5:3)

Հիշեք, բառապաշարները իմաստ չեն նշանակում: Միայն բառերի օգտագործումը նախադասության մեջ տալիս է նշանակություն (այսինքն, կոնտեքստ): Զգուշացեք բառին սահմանում տալուց և ամեն տեղ օգտագործել այդ բառը, որը հանդիպում է Աստվածաշնչում, Կոնտեքստում, կոնտեքստում, կոնտեքստին է որոշում իմաստը:

4:13 «Մինչևե որ գամ» (տես 1 Տիմ. 3:14)

▪ **«միտք դիր»** Սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Պողոսն ընդգծում է Տիմոթեոսի երեք հասարակական ֆունկցիաները, որպես պաշտամունքի պաշտոնական առաջնորդ:

1. նա պետք է Մուրբ Գիրքը հրապարակավ ընթերցեր
2. նա պետք է քարոզեր
3. նա պետք է սովորեցներ

Վաղ եկեղեցին պաշտամունքի հիմնական ձևը վերցրել է ժողովարանից (տես Գործք 13:15; 15:21):

4:14 «Անհոգ մի լինիր» Սա ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել դեռևս գործընթացում գտնվող գործողությունը: Արդյո՞ք այս համարը ենթադրում է, որ Տիմոթեոսը անտեսել էր իր պարզևները կամ, որ նա չպետք է անտեսեր իր պարզևները: Կարծում եմ, վերջինը:

▪ **«քեզանում եղած շնորհքի համար»** Յուրաքանչյուր հավատացյալի տրվում է հոգևոր պարզև դարձի գալու ժամանակ (տես 1 Կոր. 12: 7,11,18): Այս կոնտեքստում Տիմոթեոսի հոգևոր պարզև ճանաչվեց Լյուստրայի տեղական եկեղեցու առաջնորդների կողմից (տես Գործք 16: 2) և հաստատվեց հատուկ ծառայության համար (տես 1 Տիմ. 1:18): Հոգևոր պարզև տրվում է Եռյակ Աստծո կողմից (տես 1 Կոր. 12: 4-6) անհատ հավատացյալներին Քրիստոսի մարմնի ընդհանուր բարօրության համար (տես 1 Կոր. 12: 7,11): Պարզևի ճշգրիտ ժամանակը հատակորեն չի նշվում, պարզևների ճշգրիտ թիվը չի սահմանվում, և ճշգրիտ մեխանիզմը չի երևում: Ակնհայտ է, որ բոլոր հավատացյալները ունեն պարզևներ ծառայության համար (տես Եփ. 4:12):

- **«ձեռնադրութեամբը»** Սա կարծես թէ Նոր Կտակարանի եկեղեցու ընծայման կարգն էր (տես Գործք 6: 6; 13: 3; 2 Տիմ. 1: 6), որը նրանք վերցրել էին Հին Կտակարանից (տես Թվ. 8:10; 2 Օր. 34: 9):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՁԵՌՔ ԴՆԵԼԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Անձի ընդգրկվածության ժեստը օգտագործվում է Աստվածաշնչում տարբեր ձևերով:

1. երդում ուտել (այսինքն, ձեռքը ազդրի, երանքի տակ (տես Ծննդ. 24: 2,9; 47:29)
2. փոխանցնել ընտանեկան առաջնորդությունը (տես Ծննդ. 48: 14,17,18)
3. որպես փոխանորդ գոհաբերության կենդանու մահվամբ նույնանալը
 - ա. քահանաները (տես Ելից 29:10,15,19; Ղև. 16:21; Թվոց 8:12)
 - բ. հասարակ մարդիկ (տես Ղև.1: 4; 3: 2,8; 4: 4,15,24; 2 Մնաց. 29:23)
4. մարդկանց մի կողմ դնել, հատուկ ծառայություն կամ առաջադրանքի մեջ՝ Աստծուն ծառայելու համար (տես Թվոց 8:10; 27:18,23; 2 Օր. 34: 9; Գործք 6: 6; 13: 3; 1 Տիմ. 4:14; 5:22; 2 Տիմ. 1:6)
5. մասնակցել մեղավորի քարկոծման իրականացմանը (տես Ղև. 24:14)
6. ձեռքը մեկի բերանին դնել նշանակում է լռություն կամ հաշտություն (տես Դատ.18:19; Հոբ 21:5; 29:9; 40:4; Միքիա 7:16)
7. ձեռքը մեկի գլխի վրա նշանակում է ցավ / վիշտ (2 Թագ. 13:19)
8. ստանալու օրհնություն առողջության, երջանկության և աստվածապաշտության համար (տես Մատթ. 19:13,15; Մարկ. 10:16)
9. կապված ֆիզիկական բուժման հետ (տես Մատթ. 8: 3; 9: 18,20; Մարկ. 5:23; 6: 5; 7:32; 8:23; 16:18; Ղուկ. 4:40; 13:13; Գործք 9:17; 28: 8)
10. Սուրբ Հոգին ստանալու համար (տես Գործք 8: 17-19; 9: 17; 19: 6, 2 Օր. 34: 9)

Զարմանալիորեն գոյություն ունի տեղեկության բացակայություն այն հատվածներում, որոնք պատմականորեն օգտագործվել են եկեղեցում առաջնորդների նշանակմանը աջակցելու համար (այսինքն ձեռնադրություն, տես Հատուկ Թեմա: Ձեռնադրություն):

1. Գործք 6: 6, առաքյալները ձեռքերը դնում են յոթի վրա՝ տեղական ծառայության համար:
2. Գործք 13: 3, մարգարեներն ու ուսուցիչները ձեռքերը դնում են Բառնաբասի և Պողոսի վրա՝ միսիոներական ծառայության համար:
3. 1 Տիմ. 4:14, տեղացի երեցներն են որոշել Տիմոթեոսի նախնական կոչումը և նշանակումը:
4. 2 Տիմ. 1: 6, Պողոսը ձեռքերը դնում է Տիմոթեոսի վրա:

Այս բազմազանությունը և երկինաստությունը ցույց է տալիս կազմակերպության պակասը առաջին դարի եկեղեցում: Վաղ եկեղեցին շատ ավելի դինամիկ էր և պարբերաբար օգտագործվում էին հավատացյալների հոգևոր պարզկները (տես 1 Կոր. 12; 14): Նոր Կտակարանը պարզապես գրված չէ կառավարական մոդելի քարոզչության կամ բնութագրման համար (տես Գործք 15 բազմազանությունը) կամ ձեռնադրման արարողակարգը սահմանելու համար: Եկեղեցու կազմակերպչական ավանդույթները անհրաժեշտ են, բայց աստվածաշնչյան չեն: Առաջնորդի բարեպաշտությունը շատ ավելի կարևոր է քան առաջնորդության ձևը (այսինքն պետական կառուցվածքը):

- **«որ քեզ տրուեցաւ մարգարէութիւնով»** Արդյո՞ք սա նշանակում է, որ Տիմոթեոսի հոգևոր պարզկը տրվել էր նրան

1. իր ծառայության ժամանակահատվածում նա առանձնացված էր (տես 1 Տիմ. 1:14)

2. մարգարեության համար և ձեռք դնելու (տես 2 Տիմ. 1:6)
3. որ մարգարեները ընդունեցին նրա պարզևր և երեցները նրան առանձնացրին ծառայության համար (տես 1 Տիմ. 1:18)

Կարծում եմ, # 3-ը լավագույնն է:

Արևելահայերեն «երիցութեան»

Արևմտահայերեն «երեցներուն»

NASB, NKJV, «երեցների կողմից»

NRSV «երեցների խորհրդի կողմից»

TEV «երեցները»

NJB, NIV «երեցների մարմինը»

Պետք է խոստովանեմ, որ այս տեքստից որոշակի վրդովմունք եմ ապրում: Ես ունեմ աստվածաբանական կողմնակալություն քրիստոնեության մեջ զարգացած «հոգևորականության/ աշխարհիկ» դիկոտոմիայի դեմ: Ես հավատում եմ, որ բոլոր հավատացյալները կանչված են և պարզևներով օծված՝ հասունության և ծառայության համար (տես 1 Կոր. 12; Եփ. 4:11-12): Հավատացյալները սրբեր են և ծառայողները:

«Հավատացյալի քահանայություն» բարեփոխման գաղափարը, որը սկզբում արտահայտվել է Մարտին Լյութերի կողմից, բաց է թողնում աստվածաշնչյան միտքը՝ բոլոր հավատացյալները պետք է գործեն որպես քահանաներ (տես Ելից 19: 5-6; Թվ. 16: 3): Աստվածաշնչորեն դա պետք է լինի «հավատացյալների քահանայությունը»:

Հիմա սա ասելով ես գիտակցում եմ, որ Աստված կանչում է հավատացյալներին առաջնորդելու հավատացյալներին: Ոչ մի հարց չկա, որ ոմանք կանչված են և սպառազինված՝ ուղղելու, առաջնորդելու, դրդելու, հորդորելու և կազմակերպելու Աստծո ժողովրդին:

Սակայն այս առաջնորդները հատուկ կամ արտոնյալ հավատացյալներ չեն, այլ ծառա առաջնորդներ (տես Մատթ. 18: 1-4; 20: 20-28; 23:11): Ժամանակակից ձեռնադրությունը հակված է արժեզրկել մի քանի աստվածաշնչյան ճշմարտություններ.

1. բոլոր հավատացյալները ծառա ծառայողներ են
2. բոլոր հավատացյալներն ունեն պարզևներ ծառայության համար

Ձեռնադրությունը զարգացել է պարզևների ոչ պաշտոնական հաստատումից և աղոթքով նվիրվածությունը հատուկ ծառայության համար բարդ, բարձրաստիճան էլիտայի մեջ: Այս գաղափարը պետք է փոխվի, այս պարադիգմը/օրինակը պետք է վերագնահատվի, այս ոչ աստվածաշնչյան զարգացումը պետք է վիճարկվի: Ժամանակակից քրիստոնեությունը հիմնել է այնքան ավանդույթ և էլիտա այսպիսի փոքրիկ աստվածաշնչյան հիմքի վրա: Այսպիսով, որտեղ է հեղինակությունը, հստակ նորկտակարանյան հատվածներում թե՛ հարանվանական ավանդույթներում:

4:15

Արևելահայերեն «Սորանք մտածիր»

Արևմտահայերեն «Ատոնց վրայ խորհե»

NASB «Չիզ գործադրեք այս բաների հետ»

NKJV «խորհեք այս բաների մասին»

NRSV «այս բաները գործածեք»

TEV «գործնականում այդ գործերը արեք»

NJB «Թող այս լինի ձեր հոգսը»

Սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սեպտուագիւնում այս տերմինը օգտագործվել է մեղիտացիայի, խորհելու համար (կարդա Ես. 33:18; Գործք 4:25): Նոր Կտակարանում կարծես թե սա ունի ուժեղ վարժանքի ակտիվ իմաստ:

Արևելահայերեն «սորանցում կաց»

Արևմտահայերեն «ատոնցմով պարապե»

NASB «կլանվեք նրանց մեջ»

NKJV «ամբողջովին նրանց տրվեք»

NRSV, TEV «ձեզ նվիրեք դրանց»

NJB «ձեր գրադմունքը»

Սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Դա նշանակում է «ձեզ դրեք այս ուսմունքներում»: Թող դրանք գերակայեն ձեր կյանքում և ծառայության մեջ: Աստծո ճշմարտությունը պետք է հստակ և ակնհայտորեն ձևավորի մեր կյանքը այնպես, որ ուրիշները կարողանան հստակ տեսնել Քրիստոսին մեր մեջ:

- **«որ քո յառաջադիմութիւնը ամենին յայտնի լինի»** Հիշեք, որ Տիմոթեոսը պետք է ապրի հավատացյալների և ոչ հավատացյալների առջև այնպես, որ նրանք ավետարանի կամ նրա ծառայության համար քննադատության տեղ չունենան (տես 1 Տիմ. 3: 2, 7, 10; 5: 7,8,14; 6:14): Աստվածապաշտության մեջ այս գործընթացի ճշգրիտ հակառակը երևում է կեղծ ուսուցիչների մեջ (տես 2 Տիմ. 2:16 և 3: 9):

4:16 «Զգոյշ կաց անձիդ եւ վարդապետութեանդ» Ահա ևս մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Տիմոթեոսը պետք է ժամանակ տրամադրեր իր հոգևոր հասունացման և հոգևորապես կերակրվելու համար: Սա լավ խոսք է մեր օրերում հովիվների համար (տես 1 Տիմ. 4: 6, 7, 12):

- **«եւ դորանում յարատեւիր»** Սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Տիմոթեոսը պետք է լինի հաստատակամության օրինակ, քանի որ կեղծ ուսուցիչները և նրանց հետևորդները ակնհայտորեն հաստատակամ չեն: Փրկությունը կապված է ոչ միայն ապաշխարության, հավատքի և աստվածապաշտության հետ, այլև շարունակելու այդ բաներում: Հաստատակամությունը ճշմարիտ փրկության վկայությունն է: Ճշմարիտ աստվածաշնչյան քրիստոնեության մեջ թե ինչպես է մարդը սկսում, ինչպես է ապրում և ինչպես է ավարտում, ամենակարևորն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԵՐԵԼ

Աստվածաշնչյան վարդապետությունները, կապված քրիստոնեական կյանքի հետ, դժվար է բացատրել, որովհետև դրանք ներկայացվում են տիպիկ արևելյան դիալեկտիկական գույգերով (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն [աստվածաշնչյան պարադոքսներ]): Այս գույգերը թվում են իրար հակասող, բայց երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմուտքի քրիստոնյաները հակված են ընտրելու մեկ ճշմարտությունը և մերժելու և արժեզրկելու դրան հակասող մյուս ճշմարտությունը: Ահա որոշ օրինակներ.

Ա. Փրկությունը միայն Քրիստոսին վստահելու սկզբնական որոշումն է, թե՞ սրբացման գործընթաց ամբողջ կյանքի ընթացքում, որպես Քրիստոսի աշակերտ:

Բ. Փրկությունը սուվերեն Աստծո շնորհքի ընտրությունն է, թե՞ մարդու հավատքի արդյունքն ու ապաշխարհության արձագանքն Աստծո կանչին:

Գ. Փրկությունը դա մեկ անգամ ստացած, անհնարին կորցնել, թե՞ հավատացյալը պետք է շարունակաբար ջանք թափի դրան հասնելու և պահելու համար:

Համբերության թեման քննարկման առիթ է հանդիսացել հավատացյալներին ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է Նոր Կտակարանում հանդիպող ակնհայտ իրարամերժ տեքստերից.

Ա. համարներ վստահություն մասին

1. Հիսուսի պնդումները Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. 6:37; 10:28-29)

2. Պողոսի պնդումները (Հռ. 8:35-39; Եփ. 1:13; 2:5,8-9; Փիլ. 1:6; 2:13; 2 Թես. 3:3; 2 Տիմ. 1:12; 4:18)

3. Պետրոսի պնդումները (1 Պետ.1:4-5)

Բ. տեքստեր համբերելու կարիքի համար

1. Հիսուսի պնդումները (Մաթ. 10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13; Հովհ. 8:31; 15:4-10; Հայտ. 2:7,17,26; 3:5,12,21)

2. Պողոսի պնդումները (Հռ. 11:22; 1Կոր. 15:2; 2 Կոր. 13:5; Գաղ. 1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ. 2:12; 3:18-20; Կող. 1:23; 2 Տիմ. 3:2)

3. Եբրայեցիս թղթի հեղինակի պնդումները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)

4. Հովհաննեսի պնդումները (1 Հովհ. 2:6; 2 Հովհ.9)

5. Հոր պնդումները (Հայտ. 21:7)

Աստվածաշնչյան փրկության աղբյուրը սուվերեն Երրորդության սիրո, ողորմության և շնորհքի արտահայտությունն է: Ոչ մեկ մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (հմմտ. Հովհ. 6:44,65): Աստված անում է առաջին քայլը և հաստատում բոլոր կանոնները, բայց և պահանջում, որ մարդիկ արձագանքեն Իր կանչին՝ հավատքով և ապաշխարհությամբ, թե մեկ անգամ սկզբում և թե շարունակաբար ամբողջ կյանքի ընթացքում: Աստված հարաբերություններ է հաստատում մարդու հետ ուխտի հիման վրա: Կան արտոնություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է բոլոր մարդկանց: Հիսուսի մահը լուծեց ընկած արարչագործության մեղքի խնդիրը: Աստված հոգացել է փրկության ճանապարհը և ուզում է, որ նրանք, որ ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ, արձագանքեն Իր սիրուն և ինչ-որ առաջարկվում է Հիսուսի միջոցով: Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այս հարցի մասին, ոչ կալվինիստական տեսանկյունից, կարող եք կարդալ հետևյալ գրքերը.

1. Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ 348-365)

2. Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969

3. Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961

Աստվածաշունչը խոսում է այս բնագավառում երկու տարբեր խնդիրների մասին (1) ապահովագրության երաշխիք ապրելու անպտուղ և եսասեր կյանքով, (2) քաջալերելով նրանց, ովքեր ծառայության մեջ են և պայքարում են անձնական մեղքի դեմ: Խնդիրն այն է, որ սխալ խմբերը վերցնում են սխալ պատգամը և սահմանափակ աստվածաշնչյան հատվածների հիման վրա աստվածաբանական համակարգեր շինում: Որոշ քրիստոնյաներ պետք ունեն միայն փրկության վստահությանը վերաբերող հատվածներ, մյուսներին նախագուշացումներ և զգոնություն: Ո՞ր խմբին ես դու պատկանում:

- «Որովհետև այդ անելով քո անձն էլ կ'ապրեցնես, եւ քեզ լսողներին էլ» Սա կարող է վերաբերել 10-րդ համարին կամ կեղծ ուսուցիչներին (տես 1 Տիմ. 2:15): Պողոսը միշտ մտահոգված էր, որ իրեն հսկի, որպեսզի չորակագրկվի (տես 1 Կոր.9:27):

Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿՈՒԹՅՈՒՆ \(ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ\)](#) 2 Տիմ. 1:9.

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Արդյո՞ք կեղծ ուսուցիչները քրիստոնյա են: Նրանք երբևէ եղե՞լ են քրիստոնյա:
2. Ինչու՞ ձեռնպահ մնալը և ասկետիզմը վտանգ են եկեղեցու համար:
3. Ի՞նչ է նշանակում համար 10-ը: Արդյո՞ք բոլորը կփրկվեն վերջում:
4. Ինչպե՞ս էր Տիմոթեոսը հաղթահարելու իր երիտասարդությունը:

1 ՏԻՄՈԹԵՈՍ 5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պարտականություններ ուրիշների հանդեպ	Եկեղեցու անդամների վարմունքը	Հովիվը և հոտը	Պատասխանատվություններ հավատացյալների հանդեպ	Հովվական պրակտիկա
5:1-2	5:1-2	5:1-2	5:1-2	5:1-2
	Պատվել ճշմարիտ այրիներին			Այրիները
5:3-16	5:3-16	5:3-8	5:3-8	5:3-8
		5:9-16	5:9-10	5:9-16
			5:11-16	
	Պատվել Երեցների			Երեցները
5:17-23	5:17-25	5:17-22	5:17-22	5:17-22
		5:23	5:23	5:23
5:24-6:2ա		5:24-6:2ա	5:24-25	5:24-25

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ [\(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»\)](#)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ

- Ա. Գրքի ավելի մեծ պատմական միջավայրի լույսի ներքո, հովվական խորհրդատվության այս խոսքերը հավանաբար նաև գունավորված են կեղծ ուսուցիչների գործողությունների շնորհիվ
1. խնդիրներ այրիների հետ (1 Տիմ. 5: 3-16)
 2. խնդիրներ երեցների հետ (1 Տիմ. 5: 17-25)
 3. ստրուկների/ծառանների հետ կապված խնդիրներ (1 Տիմ. 6: 1-2ա)
 4. կեղծ ուսուցիչների հետ կապված խնդիրներ (1 Տիմ. 6: 2բ-10)
 - ա. վարդապետություն
 - բ. հարստություն
- Բ. Այս բաժնում կան երեք տերմիններ, որոնք օգտագործվում են երկու տարբեր իմաստներով
1. «երեց, ավագ»
 - ա. տարեց մարդ (1 Տիմ. 5:1)
 - բ. տնային եկեղեցու առաջնորդ (1 Տիմ. 5:17)
 2. «այրի»
 - ա. Ամուսնությունից զրկված կին, որին եկեղեցին օգնեց (1 Տիմ. 5: 3-8)
 - բ. եկեղեցական կին աշխատողի հատուկ կատեգորիա, որը եկեղեցին վարձեց (1 Տիմ. 5: 9-16)
 3. «պատիվ»
 - ա. հարգանք (1 Տիմ. 5: 3, 17)
 - բ. աշխատավարձ (1 Տիմ. 5: 3, 17)
 - գ. կամ երկուսն էլ
- Գ. Որոշ առումներով գլուխ 5-ը առընչվում է 3-րդ գլխին: 1 Տիմ. 5:17-ի «երեցները» վերաբերվում է 1 Տիմ. 3: 1 «վերակացուներին/եպիսկոպոսներին» իսկ 1 Տիմ. 5: 9- ի այրու «ցանկը» վերաբերվում է 1 Տիմ. 3:11-ի «կանանց»:
- Ես գիտակցում եմ, որ այս տարբերությունը եկեղեցին օգնող այրիների (1 Տիմ. 5: 3-8) և եկեղեցում ծառայող այրիների մեջ, կարծես, մի քիչ լարված է, բայց ահա թե ինչու եմ ես այս տեսակետը ընդունում:
1. Այրու որակավորումները խիստ են (տես 1 Տիմ. 5: 5, 9-10): Արդյո՞ք սա ենթադրում է, որ եկեղեցին միայն օգնում էր շատ հատուկ այրիներին:
 2. 1 Տիմ. 5: 9 «ցանկը» թվում է, որ այրիների հատուկ ցանկ էր:
 3. «Ցանկը» (տես 1 Տիմ. 5: 9) կամ խոստումը (բառացիորեն «առաջին հավատքը») 1 Տիմ. 5:12-ի նշանակում է ավելին, քան միայն կրկին ամուսնանալու խոստում: Ինչու՞ էր նորից ամուսնանալը խնդիր: Այն կվերացնի այրուն անհրաժեշտ եկեղեցական աջակցությունից, բայց եթե կար պայմանագիր եկեղեցում զբաղվելու համար: Այսպիսով, եկեղեցին օգնում էր կարիքավոր մարդկանց (այսինքն, աշխատավարձ), բայց նաև նրանցից ընդունել ծառայությունները (այսինքն, ծառայելով այլ կանանց):
 4. «Երեցների» քննարկումը, որը սկսվում է 1 Տիմ. 5:17, ներառում է եկեղեցու վճարովի օգնությունը:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 5:1-2

**¹Օերին սաստիկ մի յանդիմանիր, այլ յորդորիր ինչպէս հօր, երիտասարդներին եղբայրների պէս:
²Պառաւնեքին մայրերի պէս, մատղաշ կանանցը քոյրերի պէս բոլոր սրբութիւնով:**

5: 1 «սաստիկ մի յանդիմանիր» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ Է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է չսկսել գործել: Սա ուժեղ հունարեն տերմին է (օգտագործվում է միայն այստեղ), որը բառացիորեն նշանակում է «հարվածներ հասցնել» (տես 1 Տիմ. 3: 13): Քրիստոնյաները պետք է տարբեր կերպ վարվեն, նրանք միշտ պետք է գործեն սիրով՝ հաշտեցնելու պայմանով: Այս խորհուրդը կարող է արտացոլել Հին Կտակարանի տարեցների պատվելու հորդորը Ղև. 19:32.

- **«Օերին»** Սա բառացիորեն «երեց, ավագ» (*presbuteros*) տերմինն է: Կան երկու իմաստներ, որոնցում այս տերմինը օգտագործվում է այս կոնտեքստում.
 1. ծեր մարդու համար (1 Տիմ. 5:1)
 2. տեղական տնային եկեղեցիներում ղեկավար պաշտոնի համար (1 Տիմ. 5:17 հմմտ. 1 Պետ. 5: 1:5)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԵՑ

- I. Հին Կտակարանյան կիրառությունը
 - Ա. օգտագործվում է Աստծու հրեշտակների համար, որոնք կազմում են հրեշտակային խորհուրդը (BDB 278, KB 278, տես. Ես. 24:23): Այս նույն տերմինաբանությունն օգտագործվում է Հայտնության հրեշտակային արարածների համար (տես Հայտ. 4: 4,10; 5: 5,6,8,11,14; 7: 11,13; 11:16; 14: 3; 19: 4):
 - Բ. օգտագործվում է ցեղային առաջնորդների համար (*zaqen*) Հին Կտակարանում (տես Ելից 3:16; Թվոց 11:16): Ավելի ուշ՝ Նոր Կտակարանում այս տերմինը կիրառվում է մի խումբ առաջնորդների համար Երուսաղեմից, ովքեր կազմում էին հրեաների գերագույն ատյանը՝ Սենեդրիոնը (տես Մատթ. 21:23; 26:57): Հիսուսի օրերում այս յոթանասուներկու անդամներից բաղկացած մարմինը կառավարվում էր կոռումպացված քահանայության կողմից (այսինքն, ոչ թե Ահարոնի ցեղից, այլ հռոմեական իշխանների կողմից նշանակված):
- II. Նոր Կտակարանյան կիրառությունը
 - Ա. օգտագործվում է Նոր Կտակարանի եկեղեցու տեղական առաջնորդների համար: Դա երեք հոմանիշ տերմիններից մեկն էր (հովիվ, վերակացու և երեց, տես Տիտոս 1: 5,7; Գործք 20: 17,28): Պետրոսն ու Հովհաննեսը օգտագործում են այն՝ ներառելով իրենց ղեկավարության խմբի մեջ (տես 1 Պետ. 5: 1; 2 Հովհ. 1; 3 Հովհ. 1):
 - Բ. 1 Պետ. 1: 1 և 5-ում կա բառախաղ երեց (*presbuteros*) տերմինի մասին: Տերմինն ակնհայտորեն օգտագործվում է որպես առաջնորդության կոչում (տես հ.1) և տարիքի նշանակում (տես հ. 5): Միանգամայն զարմանալի է, որ այս տիպիկ հրեական տերմինի, օգտագործված հրեական ցեղերի առաջնորդության նշանակության համար, որ դա հիմնականում հունարեն տերմին էր «եպիսկոպոս» կամ «վերակացու» (*episcopos*), որը կիրառվում էր ղեկավարվող պաշտոնի համար հունական քաղաք-պետություններում: 1 Պետրոսը օգտագործում է հրեական տերմիններ՝ հեթանոս հավատացյալներին դիմելու համար:
Պետրոսը իրեն անվանում է «երեցոնկեր», *presbuteros* տերմինը և *syn*

ՆԱԽԴԻՐԸ, ինչը ենթադրում է «համատեղ մասնակցություն»: Պետրոսը չի հաստատում իր Առաքելական իշխանությունը (տես 2 Հովհ. 1, որտեղ մեկ այլ Առաքյալ իրեն անվանում է «երեց»), բայց զգուշացնում է (այսինքն, «հորդորում եմ», ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ), տեղական առաջնորդներին գործել և ապրել

1. Քրիստոսի օրինակի լույսի ներքո
2. Նրա մոտալուտ վերադարձի լույսի ներքո

Վաղ եկեղեցիները չեն վճարել ղեկավարության դիրքերը, սակայն ճանաչում էին Աստծո կողմից տրված ծառայության ու առաջնորդության պարզները յուրաքանչյուր տեղական եկեղեցում: Պարզների այս հաստատումը պետք է հավասարակշռված լինի մշակութային «տարիքային իմաստության» ակնածանքով, հատկապես հրեա հավատացյալների շրջանում: Հետևաբար, Պետրոսը անդրադառնում է երկու տիպի առաջնորդությանը:

Նաև նկատեք, որ «երեցները» ՀՈԳՆԱԿԻ են: Սա կարող է վերաբերվել (1) մի շարք տնային եկեղեցիների առաջնորդներին (տես Գործք 20:17) կամ (2) տարբեր հոգևոր պարզներ առաջնորդների մեջ (տես Եփ. 4:11), որը հստակ ասում է, որ ծառայությունը բոլոր հավատացյալների համար է: Սա զուգահեռ է «քահանաների թագավորություն» հասկացությանը (տես 1 Պետ. 2: 5, 9):

Գ. օգտագործվում է եկեղեցում մեծահասակ տղամարդկանց համար, պարտադիր չէ, որ ղեկավարության մեջ (տես I Տիմ. 5: 1; Տիտոս 2: 2):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԴՈՒ ՀԱՍԱԿ, ՏԱՐԻՔ

I. Ներածություն

Ա. Մեջբերում L. D. Johnson-ի «A Future for the Family» հոդվածից «Christian Life Commission» ամսագրում, 1973, էջ 16, «Hebrew-Christian Geriatrics» վերնագրով.

«Մեր վերաբերմունքը ծերության հանդեպ, արտացոլված է մեր վարքագծում, մեր զգացմունքային խոսակցությունները մերժելու համար, որ մենք ավելի սրտանց խորհուրդ ենք տալիս Աստվածաշունչին, քան հնազանդվում: Հավանաբար քաղաքակիրթ աղգերի մեջ ոչ մի հասարակություն չի ցուցաբերում ավելի քիչ մտահոգություն տարեցների մասին, քան մերն է: Մենք երիտասարդների սիրահար ենք: Մենք կենտրոնացած ենք երիտասարդության վրա, նրանց գուրգուրում, խիստ ուշադրություն ցուցաբերում, մենք ներում ենք նրանց, նախանձում ենք, և մեզ հիմարացնում ենք նրանց ընդօրինակելու համար: Մեր ամենաբարձր արժեքը երիտասարդությունն է, մեր ամենացածրը՝ տարիքը:

Այնուամենայնիվ, նման վերափոխված արժեքի համակարգի անհերթությունը պետք է ակնհայտ լինի: Արևմտյան աշխարհում մեզանից յուրաքանչյուր վեցը վաթսույն է, և այս համամասնությունը աճում է»:

Բ. Մշակույթները մեծապես տարբերվել են, թե ինչպես են նրանք վարվել իրենց տարեցների հետ.

1. Արևելյան մշակույթները մեծ հարգանք և խնամք են ցուցաբերել իրենց տարեցների հանդեպ:
2. Ամերիկյան հնդկական մշակույթը լքել է իրենց տարեցներին՝ մեռնելու համար:

Գ. Կան որոշ աստվածաշնչյան ուղեցույցներ, որոնք կօգնեն մեզ այս ոլորտում:

II. Աստվածաշնչյան նյութը

Ա. Հին Կտակարան

1. Տարիքը աստվածային օրհնություն է ուխտի մեջ քայլելու համար:
 - ա. Առակաց 16: 31
 - բ. Ծննդոց 15:15
 - գ. Ելից 20:12; 2 Օրինաց 6:2; 22: 6-7; 25:15
 - դ. Հոբ 5: 17-26 (հատկապես 26-րդ համարը)
 - ե. Սաղմոս 91:14-16
 - զ. Սաղմոս 92: 1-15 (հատկապես 14-15հհ.)
2. Նույնիսկ օրհնված տարիքն ունի իր յուրահատուկ խնդիրները
 - ա. ծերության գրաֆիկական նկարագրությունը գտնվում է Ժող. 12: 1-5
 - բ. Իսահակը վատ տեսողություն ուներ, Ծննդոց 27:1
 - գ. Հակոբը վատ տեսողություն ուներ, Ծննդոց 48:10
 - դ. Հեղին վատ տեսողություն ուներ, 1 Թագ. 3: 2
 - ե. Բերզելին վատ լսողություն և համտեսել ուներ, 2 Թագ. 19: 31-35
 - ֆ. Դավիթը ուներ վատ արյան շրջանառություն, 3 Թագ. 1:1-4
 - գ. Աքիան վատ տեսողություն ուներ, 3 Թագ. 14:1
3. Աստված երբեք չի թողնում մեզ, նույնիսկ ծերության ժամանակ:
 - ա. Սաղմոս 37:23-26
 - բ. Սաղմոս 71:9,18
 - գ. Սաղմոս 73:24
4. Տարիքը, քանի որ դա Աստծո օրհնության նշան է, պետք է հարգվի:
 - ա. Ղևտացոց 19:32
 - բ. Հռութ 4:15
 - գ. Առակներ 23:22
 - դ. Հարզանքի պակասը դատապարտելի է:
 - (1) 2 Օրինաց 28:50
 - (2) 1 Թագ. 2:31-32
 - (3) Եսայիա 3: 5
 - (4) Ողբ 4:16; 5:12
 - ե. Սողոմոնի իմաստությունը, 2:10
 - զ. Բեն Սիրաքի իմաստությունը (Ժող.) 8: 6
5. Օրհնյալ տարիքը բերում է իմաստություն և խոհեմություն
 - ա. 3 Թագ. 12:8
 - բ. Հոբ 12: 12,20
 - գ. Հոբ 15:10
 - դ. (Ժող. 25:6)
 - ե. Կան բացառություններ
 - (1) Հոբ 32: 6
 - (2) Ժողովող 4:13
6. Ո՞րն է համարվում մեծ տարիք:
 - ա. Ղևտացոց 27:1-8, 60 տարի
 - բ. Սաղմոս 90:10, նորմալը - 70, լավը - 80
 - գ. Եսայիա 65:20, 100 տարի

դ. Ժող. 18: 9 - 100 տարի

Բ. Նոր Կտակարան - 1 Տիմոթեոս

1. այրիների դերը, 5: 3 (այսինքն, եկեղեցու կողմից վարձված 60 -ից բարձր այրիներ)
2. վերաբերմունքը տարեցների նկատմամբ, 3: 1-2
3. հավատացյալները պատասխանատու են իրենց ընտանիքների համար, 3: 8

III. Որոշ գործնական առաջարկներ

Ա. Սովորեցրեք ձեր երեխաներին հարգել տարեց մարդկանց (մի օր էլ դուք դրա կարիքը կունենաք):

Բ. Ձեր ընտանիքի տարեց անդամների հետ կապ հաստատեք: Հնարավորության դեպքում այցելեք, եթե ոչ, զանգահարեք կամ գրեք հին բարեկամներին, հատկապես տոներին:

Գ. Այցելեք տարեց հարևանին կամ ծերանոց: Խրախուսեք ձեր եկեղեցուն տուն ընդունել և այցելել պարբերաբար:

Դ. Ժամանակ տրամադրեք ձեր փոքր երեխաներին պապիկների և տատիկների հետ ժամանակ անցկացնելու համար:

Ե. Քաջալերեք ձեր եկեղեցիներին զարգացնել ծառայություն մեծահասակների համար: Կարգավորել աշխատակազմի անդամներին:

Զ. Ինքդ անձամբ սկսիր պլանավորել և պատրաստվել կենսաթոշակային տարիքին:

▪ **«այլ յորդորիք ինչպես հօր»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Պողոսի շեշտադրումն այն է, որ Տիմոթեոսը տնային եկեղեցու անդամներին վերաբերվի որպես իր ամենամտերիմ ընտանիքի անդամներին (տես Մարկ. 3:31-35): «Հայրերին և մայրերին» պատվելը և հարգելը արտացոլում են Տասը Պատվիրանները (տես 1 Տիմ. 5: 4):

5: 2 «մատղաշ կանանց՝ քոյրերի պես բոլոր սրբութիւնով» (1) Տիմոթեոսի տարիքի և (2) կեղծ ուսուցիչների սեռական շահագործման պատճառով (տես 2 Տիմ. 3:6), Պողոսը հատկապես ուշադիր էր, երիտասարդ կանանց հետ մաքուր հարաբերություններ պահելու համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 5:3-8

³Որբեւայրիներին պատուիր որ ճշմարիտ որբեւայրի են: ⁴Բայց եթէ մէկ որբեւայրի որդիք եւ թոռներ ունենայ, թող առաջ սովորեն իրանց ընտանիքումը որդիական սէր ցոյց տալ եւ փոխարէն հատուցանել ծնողներին. որովհետեւ սա բարի է եւ Աստուծոյ առաջին ընդունելի: ⁵Իսկ նա որ ճշմարիտ որբեւայրի է եւ մինակ մնացած, նա յոյսը Աստուծոյ վերայ է դնում, եւ զիշեր եւ ցերեկ աղօթքին եւ աղաչանքին հետեւում: ⁶Բայց փափկասէր որբեւայրին կենդանոյն մեռած է: ⁷Եւ այս բաները պատուիրիր, որ անարատ լինեն: ⁸Բայց եթէ մէկը իրանների եւ մանաւանդ ընտանիքների համար խնամք չ'տանի, նա հաւատքիցն ուրացած է եւ անհաւատից էլ չար է:

5: 3 «Որբեւայրիներին պատուիր» «Պատիվ» տերմինը 1 Տիմ. 5: 3 և 17-ը կարող են նշանակել աշխատավարձ կամ թոշակ, որ տալիս է եկեղեցին

1. կարիքավոր այրիներին (տես 1 Տիմ. 5: 3-8)
2. հատուկ կանանց օգնականներին (տես 1 Տիմ. 5: 9-16)
3. երեցներին (տես 1 Տիմ. 5:17-22)

Թվում է, թե եկեղեցին, հետևելով Հին Կտակարանին և ժողովարանին (տես 2 Օր. 24:17-22; Ելից 22:22-24; Ես. 1:17; Գործք 6:1; 9: 39,41) այրիներին հոգ տանելու համար: Պողոսի մտահոգությունն այն էր, որ նրանք, ում եկեղեցին օգնում էր իրապես կարիքի մեջ էին, կամ չունեին իրենց սեփական ընտանիքը, իրենց օգնելու համար (տես 1 Տիմ. 5: 4, 16): Կեղծ ուսուցիչները շահագործում էին այրիներին (տես 1 Տիմ. 5: 6, 15): Պողոսը խրախուսում է եկեղեցուն՝ օգնելու իրական այրիներին:

5: 4 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (ինչպես 1 Տիմ. 5: 8): Կային այրիներ, որոնք անտեսված էին իրենց ընտանիքների կողմից (տես 1 Տիմ. 5: 8, 16):

▪ **«որովհետև սա բարի է եւ Աստուծոյ առաջին ընդունելի»** Սա հավանաբար վերաբերվում է Տասը պատվիրաններին՝ հոր և մորը հարգելու մասին (տես Ելից 20:12), այս դեպքում այրի մորը: Հին Կտակարանում Աստված պաշտպանում է տկարին, սոցիալապես մերժվածին և անգործին: «Աղքատին, որբին և օտարին» պաշտպանելու լուրը այստեղ դառնում է բնորոշ այնպես ինչպես 2 Օրինացի արտահայտությունն է (կրկնվում է Երեմիայի մեջ):

Հավատացյալները ցույց են տալիս իրենց սերն ու հարգանքը ՅԱՀՎԵԻ հանդեպ՝ պատվելով Նրա խոսքը և կամքը ամուր ընտանեկան կապերի և պարտականությունների պահպանման համար:

5: 5 «Իսկ նա որ ճշմարիտ որբեւայրի է եւ մինակ մնացած» Սա նույն հազվադեպ քերականական կառուցվածքն է, ինչպես 4: 3 (այսինքն, ԱԾԱԿԱՆ և ԴԵՐԲԱՅ, տես Տիտոս 1:15): Զարմանալի է, արդյոք դա դպիրի գրական նշանն էր, որը Պողոսը օգտագործեց Հովվական նամակներում: Պողոսը կոնկրետ ուղեցույցներ է տալիս իր ժամանակի համար՝ եկեղեցուց օգնություն ստանալու որակավորման համար (բայց ոչ 1 Տիմ. 5:9-ի «ցանկում»):

1. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ, ապրել և շարունակում է ապրել միայնակ
2. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ, եղել է և շարունակում է լինել աստվածավախ կին
3. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ, շարունակում է փախչել երկրային հաճույքներից, շարունակական աղոթքի միջոցով

Աննան (Ղուկ. 2:37) և Այծեմնիկը (Գործք 9:36) (չնայած նրան, որ կոնկրետ չի ասվում, որ այրի էր), համապատասխանում են այս որակավորումներին:

5:6

Արևելահայերեն «Բայց փափկասէր որբեւայրին»

Արևմտահայերեն «Բայց փափկասէր որբեւարին »

NASB «Բայց նա, ով իրեն հաճույքի է տալիս»

NKJV «բայց նա, ով ապրում է հաճույքի մեջ»

NRSV «ով ապրում է հաճույքի համար»

TEV «ով իրեն հաճույքի է տալիս»

NJB «ով միայն հաճույքի մասին է մտածում»

Սշակութային իրավիճակի պատճառով դա կարող է վերաբերել

1. այրիները դիմում են մարմնավաճառության, որպես ապրելու միջոց
2. կեղծ ուսուցիչների սեռական շահագործումը (տես 2 Տիմ. 3: 5-7)

Սա, կարծես, շատ խիստ նախազգուշացում է (տես 1 Տիմ. 5: 15):

Այս նույն բառը օգտագործվում է Հակոբոս 5: 5-ում:

▪ **«կենդանոյն մեռած է»** Սա վերաբերում է հոգևոր մահվան վիճակին (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Այս համարը նկարագրում է այրիներին Եփեսոսի տնային եկեղեցիներում: Կեղծ ուսուցիչները ոչ միայն իրենց «մահն» էին բերել, այլ այժմ հոգևորապես պատասխանատու են ուրիշների «մահվան» համար:

5:7

Արևելահայերեն **«Եւ այս բաները պատուիրիք»**

Արևմտահայերեն **«Որբեւարիներուն պատուիրէ»**

NASB **«Պատվիրեք այս բաները»**

NKJV **«այս ամենը հրամայեք»**

NRSV **«տվեք այս հրամանները»**

TEV **«տվեք նրանց այս հրահանգները»**

NJB **«նրանց հանձնարարեք սրանում»**

Այս տերմինը վերաբերում է «խիստ զինվորական հրամաններին» (տես 1 Տիմ. 1: 3, 18; 4:11): Սրանք առաջարկներ չեն եղել: Սրանք անձնական նախապատվություններ չեն:

▪ **«որ անարատ լինեն»** «Նրանք» կարծես, վերաբերվում է այրիների հարազատներին, որոնք ապրում էին ընտանիքներում: Դա եղել է և կա համապատասխան կոչումը բոլոր հավատացյալների համար: Ով չի կարողանում ապահովել իր հարազատներին, հատկապես իր անմիջական ընտանիքին, ուրացել է հավատքը և համայնքի աչքերում ավելի վատն է, քան անհավատը (1 Տիմ. 5:7,8): Սա արտացոլում է Հիսուսի ուսմունքները Մարկ. 7: 9-13-ում: Սա, կարծես, վերաբերվում է քննադատության համար տեղ չթողնելու կարևորությանը, թե հավատացյալների և թե անհավատների մոտ (տես 1 Տիմ. 3: 2,7,10; 5: 7; 6:14): Քրիստոնյաները միշտ պետք է ապրեն այնպես, որ ուրիշներին առաջնորդեն Քրիստոսի հավատքի մեջ: Սրա դրական կողմը երևում է 4-րդ համարում, մինչդեռ դա բացասական է: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ](#) 1 Տիմ. 3:12.

5: 8 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է, որ որոշ հավատացյալներ անտեսել են իրենց ընտանիքներին (հմմտ. 1 Տիմ. 5:4,16):

▪ **«նա հաւատքիցն ուրացած է եւ անհաւատից էլ չար է»** Կարծում են, սա վերաբերվում է համայնքում անձի վկայությանը (տես 1 Տիմ. 5: 7; 3: 4-5), այլ ոչ թե նրանց փրկությանը: Նույնիսկ անհավատներն են օգնում իրենց ընտանիքներին: Այնուամենայնիվ, կան այլ տեքստեր, որոնք օգտագործում են այս նույն տերմինը «ուրանալ» և դա ենթադրում է Աստծուն ամբողջությամբ մերժելը (տես 2 Տիմ. 2:12; Տիտոս 1:16; 2 Պետ. 2: 1; Հուդա 4): Կոնտեքստում սա կարող է ինչ-որ կերպ առընչություն ունենալ «հավատից ընկած կամ հեռացած» կեղծ ուսուցիչների գործողությունների կամ ուսմունքների հետ (տես 1 Տիմ. 1:19-20; 4: 1-2; 6: 9-10,20- 21) կամ նրանց հետևորդների (տես 1 Տիմ. 5: 6, 15): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ \(APHISTĒMI\)](#) 1 Տիմ. 4: 1:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 5:9-16

⁹Որբեւայրի նա ընտրուի, որ վաթսուն տարուց պակաս չէ եւ մէկ մարդի կին եղած է. ¹⁰Բարի գործերով վկայուած, եթէ երեխաներ է մեծացրել, հիւրեր ընդունել, սուրբերի ոտները լուացել, նեղացածներին ձեռնտու եղել, ամեն բարի գործերին հետեւել: ¹¹Բայց մատղաշ որբեւայրիներիցը ետ կաց. Որ երբոր ցանկութիւնով լցվում են՝ Քրիստոսի հակառակ՝ կամենում են ամուսնանալ. ¹²Եւ

դատապարտութիւն են ընդունում, որ առաջին հաւատքը դէն գցեցին: ¹³Միանգամայն էլ ծոյլ են սովորում տուները ման գալով. Եւ ոչ թէ միայն ծոյլ այլ եւ շատախօս, եւ հետաքրքիր, եւ խօսում են ինչ որ պէտք չէ: ¹⁴Կամենում եմ որ մատղաշ որբեւայրիներն ամուսնանան, որդիք ծնեն, տնաշէն լինեն. եւ հակառակողին ոչ մի պատճառ չ'տան հայեոյանք անելու: ¹⁵Որովհետեւ արդէն մի քանիսը խտտորուեցան սատանայի ետեւիցը: ¹⁶Եթէ մի հաւատացեալ մարդ կամ հաւատացեալ կին որբեւայրիներ ունենայ, նա թող նորանց խնամք տանէ. Եւ եկեղեցուն ծանրութիւն չ'լինի, որ ճշմարիտ որբեւայրիներին խնամք տանէ:

5: 9 «Որբեւայրի նա ընտրուի, որ վաթսուն տարուց պակաս չէ» Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ Է ԺԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար ենթադրում է դադարեցնել գործողութիւնը: Ահա մեկ այլ որակավորում այրիների համար, ովքեր ծառայողների թիմի անդամներ էին: «Ցանկ» տերմինը հունարեն բառ է, որը նշանակում է «իրավական ռեզիստը կամ գրանցում»: Այրիների դերը կարող է հոմանիշ լինել «սարկավագուհիներ» գաղափարին (տես 1 Տիմ. 3:11; Հռ. 16:1): Այնուամենայնիվ, երկրորդ դարի սկզբում գրված «Առաքելական Սահմանադրութիւնը» թվարկեց կին ծառայողների երեք կատեգորիաներ՝ կույսեր, սարկավագուհիներ և այրիներ:

Արևելահայերեն «մէկ մարդի կին եղած է»

Արևմտահայերեն «մէկ էրկան կին եղած»

NASB «մէկ մարդու կին եղած լինի»

NKJV «և, մինչև որ նա մի մարդու կինը չի եղել»

NRSV «և միայն մէկ անգամ է ամուսնացել»

TEV «Բացի այդ, նա պէտք է միայն մէկ անգամ ամուսնացած լինի»

NJB «ով ունեցել է միայն մէկ ամուսին»

Շատ քննարկումներ են եղել այն հարցի շուրջ, թե ինչ է նշանակում այս արտահայտութիւնը (տես 1 Տիմ. 3: 1, 12): Սակայն ակնհայտ է, որ ինչ էլ դա նշանակի, դա շատ լուրջ հարց էր Եփեսոսի և Կրետեի տնային եկեղեցիների համար (տես 1 Տիմ. 3: 1,12; 5: 9; Տիտոս 1: 6): Ուժեղ, աստվածավախ ընտանիքները եղել են (և կան) գորավոր վկայութիւն կորած և շփոթված աշխարհի համար:

Լրացուցիչ քննարկումների համար տես 3: 2: 1 Տիմ. 5:14 երիտասարդ այրիները խրախուսվում են ամուսնանալ: Ենթադրվում է, որ երկրորդ ամուսնութիւնը չի դիտվում որպէս մեղք (տես Հռ. 7: 2-3; 1 Կոր. 7): Եվրոպայում մկրտական շրջաններում այս « մէկ կնոջ ամուսինը» կամ «մէկ մարդու կին» հասկացողութիւնը մեկնաբանվել է որպէս երկրորդ ամուսնութիւնների աստվածաշնչան մերժում՝ հատկապէս հովիվների համար: Սակայն դա միջին արևելյան մշակույթում դա խնդիր չէր: Այս տեսութիւնը արտացոլում է վաղ եկեղեցու աճող ասկետիզմը, բայց ոչ Նոր Կտակարանի: Հունական մտածողութիւնը (այսինքն, մարմինը չար է) բացասական ազդեցութիւն ունեցավ վաղ հեթանոսական եկեղեցիների վրա:

5:10 «Բարի գործերով վկայուած» 1 Տիմ. 5:10- ի մյուս հատվածում թվարկվում են հինգ առանձնահատուկ բարի գործեր (բոլորը ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ): Տես Հատուկ Թեմա: Եկեղեցում կին աշխատողների կամ ծառայողների որակավորումները 1 Տիմ. 3:12: Այս լավ գործերը արտացոլում են կանանց ակնկալվող դերը տեղական համայնքում:

- **«եթէ»** Սա 1 Տիմ. 5:10-ի հինգ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ի շարքն է, որոնցից յուրաքանչյուրը ցույց է տալիս եկեղեցու կողմից վարձված այրու որակավորումը:
- **«եթէ երեխաներ է մեծացրել»** Սա չի նշանակում, որ անգավակ կինը հաշիվ չէ, այլ եթե նա երեխաներ է ունեցել, նրանք պետք է աստվածավախ լինեն: Սա հերթական շեշտադրումն է (տես 3-րդ գլուխ) ուժեղ, աստվածավախ, հավատարիմ ընտանեկան կյանքի:
- **«հիւրեր ընդունել»** Սա չի նշանակում ցանկացած մեկին կամ բոլորին ողջունել, ընդունել իր տանը, այլ ճանապարհորդող քրիստոնյա առաջնորդներին:
- **«սուրբերի ոտները լուացել»** Սա տան ծառայի հյուր ընդունելու գործողություն էր: Հիսուսը դա արեց Իր աշակերտների համար՝ նրանց խոնարհություն սովորեցնելու համար (տես Հովհ. 13): Այստեղ կարծես թե խոնար ծառայության փոխաբերական իմաստով է (և հնարավոր է որ սա լինի մշակութայնորեն համապատասխան հյուրընկալություն):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲԵՐ (*hagios*)

Սա եբրայերեն *kadosh* բառի հունարեն համարժեքն է (ԳՈՅԱԿԱՆ, BDB 871, ԲԱՅ, BDB 872, KB 1066-1067, տես Հատուկ Թեմա: Սուրբ), որն ունի հիմնական իմաստ՝ ինչ որ մեկին, ինչ որ բան կամ ինչ որ տեղ առանձնացնել, բացարձակապես ՅԱՀՎԵԻ օգտագործման համար: Սա ցույց է տալիս անգլերեն «սուրբ» բառի գաղափարը: Իսրայելը ՅԱՀՎԵԻ «սուրբ ազգն» էր (տես 1 Պետ. 2: 9, որը մեջբերում է Ելից 19: 6): ՅԱՀՎԵՆ Իր բնույթով առանձնացված է մարդկությունից (հավիտենական, ոչ արարված Սրբություն) և Իր բնավորությամբ (բարոյական կատարելություն): Նա չափանիշ է, որով բոլորը չափվում և դատվում են: Նա տրանսցենդենտ է, Սուրբը, Սուրբ Մեկը:

Աստված ստեղծեց մարդկանց՝ հաղորդակցվելու համար, սակայն մեղքը (Ծննդոց 3) պատճառեց հարաբերական և բարոյական վնաս Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև: Աստված ընտրեց վերականգնել Իր գիտակից ստեղծագործությունը; հետևաբար, Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինել (տես Ղև. 11:44; 19: 2; 20: 7,26; 21: 8): Հավատքով հարաբերությունները ՅԱՀՎԵԻ հետ, Իր ժողովուրդը սուրբ է դառնում Նրանում ունեցած իրենց ուխտի դիրքով, բայց նաև կանչված են ապրելու սուրբ կյանքեր (տես Հատուկ Թեմա: Սրբացում, տես Մաթ. 5: 48; Եփ. 4:1,17; 5:2-3,15; 1 Պետ. 1:15):

Այս սուրբ կյանքը հնարավոր է, քանի որ հավատացյալները լիովին ընդունված են և ներված (1) Հիսուսի կյանքի և (2) գործի և իրենց մտքերում և սրտերում Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ: Սա հաստատում է հավատացյալների պարադոքսալ իրավիճակը.

1. սուրբ լինել Քրիստոսի դրած արդարության պատճառով (այն է, Հռ. 4)
2. կանչված են սուրբ կյանքով ապրելու՝ Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ (տես Հատուկ Թեմա: Սրբացում)

Հավատացյալները «սրբեր» են (*hagioi*), քանի որ դա

1. Սուրբ Աստծո կամքն է (Հայրը, տես Հովհ. 6: 29,40; 1 Պետ. 1:15-16)
2. Սուրբ Որդու գործը (Հիսուս, տես 2 Կոր. 5:21; 1 Պետ. 1:18-21)
3. Սուրբ Հոգու բնակության ներկայությունը (տես Հռ. 8: 9-11,27)

Նոր Կտակարանում սուրբերը միշտ ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ են հանդես գալիս, (բացառությամբ մեկ անգամ Ֆիլ. 4:21, բայց նույնիսկ այդ ժամանակ էլ, կոնտեքստը այն դարձնում է ՀՈԳՆԱԿԻ): Փրկվել, նշանակում է լինել ընտանիքի, մարմնի, շինության մաս: Աստվածաշնչյան հավատքը սկսվում է անձնական ընդունելությամբ, բայց խնդիրները կորպորատիվ հաղորդակցության մեջ են:

Մենք յուրաքանչյուրս ունենք պարզվներ (տես 1 Կոր. 12:11), Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու առողջության, աճի և բարեկեցության համար (տես 1 Կոր. 12: 7): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Սրբությունը ընտանեկան բնութագիր է:

Այն դարձավ հավատացյալների տիտղոսը (տես Գործք 9: 13,32,41; 26:10; Հո. 1: 7; 1 Կոր.1: 2; 2 Կոր. 1: 1; Եփ. 1: 1; Կող. 1: 2) և ուրիշներին ծառայելու ձև (տես Հո. 12:13; 16: 2; Եփ. 1:15; Կող. 1: 4; 1 Տիմ. 5:10; Եբր. 6:10): Պողոսը Երուսաղեմի Մայր Եկեղեցու աղքատների համար հեթանոսական եկեղեցիներից հավաքեց հատուկ մեկանգամյա նվիրատվություն (տես Հո. 15:25-26; 1 Կոր. 16:1; 2 Կոր. 8:4; 9:1):

▪ **«նեղացածներին ձեռնտու եղել»** Այստեղ կրկին սա հավանաբար վերաբերվում է հավատացյալներին մխիթարող ծառայությանը, բայց դա կարող է ներառել կարիքավոր, վիրավորված, մեղավոր հարեւաններին ևս: Որակավորումներից յուրաքանչյուրը բացահայտում է այդ մեծահասակ այրիների ծառայող սրտերը:

5:11 «Բայց մատղաշ որբեւայրիներիցը ետ կաց. Որ երբոր ցանկութիւնով լցվում են՝ Քրիստոսի հակառակ կամենում են ամուսնանալ» Պետք է հիշենք ամուսնության դրական աստվածաբանությունը, որը ներկայացված է Աստվածաշնչում (տես Ծննդ. 1 և 2): Այս արտահայտությունը, կարծես, վերաբերվում է այն երդմանը, որ այդ այրիները տվել են այն ժամանակ, երբ նրանք դարձան տան եկեղեցու օժանդակողներ (տես 1 Տիմ. 5:12): Սա ամուսնության մասին ոչ թե նսեմացնող կամ թերագնահատող արտահայտություն է, այլ նսեմացնող մեկնաբանություն՝ Քրիստոսի անունով ուխտ կապելու և դա դրժելու մասին (այսինքն նաև ամուսնալուծությունը):

5:12 «Եւ դատապարտութիւն են ընդունում» King James տարբերակն ունի «դավաճանություն» (NKJF-ը «դատապարտություն»): Սա շատ խիստ, դաժան թարգմանություն է հունարեն *krino* բառի համար: Աստծուն տված երդումները եղել են / և կան լուրջ խոստում (տես Ղև. 27 և Թվոց 30), բայց ոչ թե փրկության հարց է սա:

Արևելահայերեն «որ առաջին հաւատքը դէն գցեցին»

Արևմտահայերեն «վասն զի նախկին հաւատքնին մէկդի ձգելով»

NASB «իրենց նախորդ խոստումը կողքին են դրել»

NKJV «նրանք հանել են իրենց առաջին հավատքը»

NRSV «առաջին խոստումը խախտելու համար»

TEV «նախկինում տված իրենց խոստումը խախտելու մասին»

NJB «իրենց նախնական խոստման հանդեպ անհավատարիմ լինելու համար»

Հունարեն *pistis* տերմինը, որը սովորաբար թարգմանվում է «հավատք», «վստահություն» կամ «հավատամք» ունի հին կտակարանյան հավատարմության կամ վստահության նշանակությունը: Ահա այսպես է այն օգտագործվում է այստեղ՝ Քրիստոսին ծառայելու առաջնային խոստումի իմաստով (բառացիորեն, «առաջին հավատքը»):

5:13 «տուները ման գալով» Հնարավոր է, այրիներն օգնում էին ամենօրյա խնամքի և շաբաթական սննդի բաշխման հարցում (ինչպես ժողովարանում էին անում) տարբեր տնային եկեղեցիների անդամներին: Նրանք այցելում էին տնից տուն՝ հավատացյալներից տեղեկանալու համար:

▪ **«Հատախօս, եւ հետաքրքիր»** Առաջին տերմինը օգտագործվում է 3 Հովհ. 10-ում՝ եկեղեցու առաջնորդի դեմ բերված կեղծ մեղադրանքների համար: Խնդիրը հստակ սահմանված է Տիտոս 1: 11-ում: Խնդիրը ոչ թե բամբասանքն էր, այլ հերետիկոսությունը:

Երկրորդ տերմինը օգտագործվում է Գործք 19:19-ում կախարդության կամ հմայության համար: Այնուամենայնիվ, այս կոնտեքստում վերաբերվում է այն կանանց, ովքեր իրենց գործը թողած խառնվում էին ուրիշների գործերով (NJB «ուրիշի գործին խառնվող»):

▪ **«Էւ խօսում են ինչ որ պէտք չէ»** Հովվական նամակների կոնտեքստում կեղծ ուսուցիչները խաբում են երիտասարդ կանանց (տես 2 Տիմ. 3: 5-7), հնարավոր է, որ նրանք տարածում էին կեղծ ուսմունքները մի տնային եկեղեցուց մյուսը, մի քրիստոնյա տնային տնտեսուհուց մյուսին (տես Տիտ. 1:11): Սա է պատճառը, որ Պողոսը թույլ չի տա, որ նրանք հրապարակայնորեն խոսեն տնային եկեղեցիներում (տես 1 Տիմ.2: 9-15) և նրանց թույլ չեն տա եկեղեցու օգնականներ լինել:

5:14 «Կամենում եմ որ մատղաշ որբեւայրիներն ամուսնանան» Ամուսնությունը (այս դեպքում երկրորդ ամուսնությունը) չար կամ պակաս հոգևոր չէ (տես 1 Կոր. 7: 8,39-40): Տնային տնտեսուհի լինելը աստվածային կոչում է (տես 1 Տիմ. 2:15):

▪ **«Էւ հակառակողին ոչ մի պատճառ չ'տան հայհոյանք անելու»** «Թշնամի կամ հակառակող» բառը ԵԶԱԿԻ է; դա կարող է վերաբերել

1. սատանային (տես 1 Տիմ. 5:15)
2. հակաքրիստոնեական հեթանոս հարևաններին (NJB ծանոթագրությունը, Jerome Biblical Commentary, էջ 356)
3. կեղծ ուսուցիչներին (տես 2 Տիմ. 3:6-7)

Այս այրիները, ովքեր սեռական կյանքի մեջ ակտիվացել էին, դուռ էին բացել ինչպես սատանայի հարձակման, այնպես էլ ամբողջ համայնքի քննադատության համար (հավատացյալ և անհավատ):

«Առիթ» տերմինը ռազմական տերմին է «հենակետ» կամ «գործողությունների հիմք, բազա» համար (տես Հռ. 7: 8,11): Ֆիզիկական մարմինը չար չէ, բայց գայթակղության մարտադաշտ է: Մարդու սեքսուալությունը խնդիր չէ: Մեղավոր մարդը վերցնում է Աստծո կողմից տրված լավ բաները և հանում Աստծո դրած սահմաններից դուրս:

5:15 «արդեն մի քանիսը խտորորուեցան սատանայի ետեւիցը» Հավանաբար Տիմոթեոսը Պողոսի հետ կապված էր կոնկրետ դեպքով, ինչպիսին է 6-րդ կամ 13-րդ համարներում հիշատակված այրին: Կեղծ ուսուցիչները այդ երիտասարդ այրիներին թիրախավորել էին, որպես փոխնակ խոսնակների (քանի որ նրանք ունեին մի քանի տղամարդ առաջնորդներ, տես 1 Տիմ. 1: 20): Կեղծ ուսուցիչների հետևում եղել է և կա չարի գործունեությունը: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: Սատանա 1 Տիմ. 3: 6:

5:16 «Եթէ» Սա ԱՌԱԶԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Պողոսը ցանկանում է, որ քրիստոնյա ընտանիքները կատարեն իրենց պարտականությունները (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Նա նաև ցանկանում է օգնել նրանց, ովքեր ընտանիք չունեն (տես 1 Տիմ. 5: 4, 8):

Արևելահայերեն «Եթէ մի հաւատացեալ մարդ կամ հաւատացեալ կին»
Արևմտահայերեն «Եթէ հաւատացեալ այր մարդ մը կամ կին մը»

NASB «Եթէ որեւէ կին, ով հավատացյալ է»

NKJV «Եթե որևէ հավատացյալ մարդ կամ կին»

NRSV «Եթե որևէ հավատացյալ կին»

REV, REB «Բայց եթե որևէ քրիստոնյա կին»

NJB «Եթե կին հավատացալը»

Ակնհայտ է, որ կա տեքստային տարբերակ

1. *pistē* - հավատացյալ կին, MSS 8, A, C, F, G, P
2. *pistos* - հավատացյալ մարդ, որոշ հին լատիներեն և Վուլգատ MSS և հունարեն տեքստը, որն օգտագործվում էր Օգոստինոսի կողմից
3. *pistos ē pistē* - հավատացյալ տղամարդ և կին, MS D և շատ փոքրատառ ձեռագրեր
4. *pistas* - հավատացյալ կանայք, որոշ հին լատիներեն և Վուլգատ MSS

UBS⁴-ը տալիս # 1-ին տարբերակին «B» վարկանիշ (գրեթե որոշակի):

- «Եկեղեցուն» Տես ծանուցում 1 Տիմ. 3:15 և Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 5:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 5:17-22

¹⁷Լաւ վերակացութիւն անող երեցները թող երկուպատիկ պատիւի արժանի լինեն. Մանաւանդ նորանք որ խօսքով եւ վարդապետութիւնով են աշխատում: ¹⁸Որովհետեւ զիրքն ասում է թէ Կալի մեջ աշխատող եզի դունչը չ'կապես. Թէ մշակը արժանի է իր վարձքին: ¹⁹Երեցի վերայ գանգատ մի ընդունիր. բայց միայն երկու կամ երեք վկաներով: ²⁰Մեղանչողներին ամենի առաջին յանդիմանիր, որ ուրիշներն էլ վախենան: ²¹Վկայութիւն եմ դնում Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի եւ ընտրուած հրեշտակների առաջին, որ այս բաները պահես առանց նախապաշարման. Ոչինչ չ'անելով աչառութեամբ: ²²Ձեռը շուտով մի դնիր մէկի վերայ, եւ ուրիշների մեղքերին մասնակից մի լինիր. Քո անձը սուրբ պահիր:

5:17 «երեցները» «Երեց» տերմինը (*presbuteros*) Հին Կտակարանի առաջնորդության անվանումն էր, իսկ «վերակացու» տերմինը (*episkopos*, տես 1 Տիմ. 3: 1), հունական քաղաքային առաջնորդության անվանումն էր: Այս երկու տերմինները որպես հոմանիշ օգտագործվում են Նոր Կտակարանում (տես Գործք 20:17, 28 և 1 Պետ. 5: 1-2, որտեղ երեցը օգտագործվում է հովիվների համար և նաև Տիտոս 1: 5,7-ում, որտեղ երեցը և վերակացուն նույն առաջնորդի համար է օգտագործվում):

Նոր Կտակարանը չի կարող օգտագործվել՝ աստվածային եկեղեցական քաղաքականություն հաստատելու համար: Այն արձանագրում է բոլոր երեք զարգացրած ձևերը:

1. եպիսկոպոսյան (Հակոբոսը, որպես հեղինակավոր առաջնորդ)
2. երիցական (վերանայված մի խումբ երեցներ)
3. համայնքային (համայնքն է քվիարկում)

Այստեղ ՀՈԳՆԱԿԻՆ, ինչպես նաև Գործք 20: 17 և Տիտոս 1: 5-ում, հնարավոր է մատնացույց է անում տնային եկեղեցիները: Վաղ եկեղեցին առանձնացված շենքեր չունեի մինչև երրորդ դարը: Ոչ մի տուն բավականաչափ մեծ չէր, որպեսզի տեղավորեին բոլոր հավատացյալներին, հետևաբար, մեծ քաղաքներում տարբեր քրիստոնեական տներ բացեցին իրենց դռները քրիստոնեական համայնքի կանոնավոր հավաքությունների համար: Այս մոտեցումը նաև պաշտպանում էր եկեղեցուն՝ բոլորը միանգամից ձերբակալվելուց:

Թե ինչպես էր քաղաքի առաջնորդությունը մի քանի տնային եկեղեցիներ կազմակերպում, պարզ չէ: Քանի որ եկեղեցին աճում էր, կազմակերպության կարիքը կար: Այդ կազմակերպության ձևը ոչ այնքան կարևոր է, որքան առաջնորդների բարեպաշտությունը:

▪ **«Երկուպատիկ պատիւի արժանի»** Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է: Այն կարող է վերաբերել աշխատավարձին (տես Գաղ. 6: 6) կամ հարգանքին (տես 1 Թես. 5: 12-13): 1 Տիմ. 5:18 հետևյալ կոնտեքստը առաջարկում է աշխատավարձ:

▪ **«Մանաւանդ նորանք որ խօսքով եւ վարդապետութիւնով են աշխատում»** Նոր Կտակարանում երեցները մշտապես հիշատակվում են ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ, որոնք, կարծես, ենթադրում են Եփեսոսի նման մեծ քաղաքներում տեղական տնային մի քանի եկեղեցիները (այսինքն Գործք 20: 17): Հովիվները պետք է կարողանային ուսուցանել և քարոզել (տես 1 Տիմ. 3: 2; 2 Տիմ. 2: 24; Եփ. 4:11):

Որոշ առաջնորդներ ունեն մեկ հոգևոր պարզ կամ ուրիշները մեկ ուրիշ: Առաջնորդները պետք է ուշադրություն դարձնեն իրենց պարզների վրա և թույլ տան այլ քրիստոնյաների գործածել իրենց պարզները: Որոշ հավատացյալներ զարմանալիորեն օժտված են առաջնորդության համար, հաճախ մի քանի ուղղությամբ: Նրանք, ովքեր գործում են մի քանի ոլորտներում, պետք է վարձատրվեն իրենց ջանքերի համար և պաշտպանված լինեն եկեղեցու կողմից իրենց անարդյունավետության ոլորտներում: Մենք, որպես Քրիստոսի մարմին, ուրախանում ենք մեր անդամների հոգևոր պարզներով, բայց նաև պետք է հիշենք, որ մենք խիստ միմյանց կարիքն ունենք (տես 1 Կոր. 12:7):

5:18 «գիրքն ասում է» Սա մեջբերում է 2 Օրինաց 25: 4-ից: Այն նաև մեջբերված է 1 Կոր. 9: 6-7,14: 1 Տիմ. 5: 18 յուրահատկությունն այն է, որ Հին Կտակարանը մեջբերվում է միևնույն դիրքով, ինչ որ Նոր Կտակարանը, որում մենք կողավորված գտնում ենք Ղուկ.10: 7 («մշակը արժանի է իր վարձքին»): Սա ցույց է տալիս Պողոսի տեսակետը ոչ միայն Հին Կտակարանի ներշնչման, այլև Նոր Կտակարանի հավասարության մասին (նկատի առնենք, թե ինչպես է Պետրոսը այդ նույն բանն անում Պողոսի գրվածքների հետ, տես 2 Պետ. 3: 15-16):

Պողոսը հաստատումը վճարվող առաջնորդության գաղափարի մասին շատ հետաքրքիր է:

1. հետևելով իր հրեական ժառանգությանը, նա սովորաբար գումար չէր վերցնում իր աշակերտներից (Փիլիպպեն և Թեսաղոնիկեն բացառություններ էին):
2. Այս հարցը օգտագործվել է կեղծ ուսուցիչների կողմից, Պողոսի վրա հարձակվելու համար (ինչպես Կորնթոսում, տես 2 Կոր. 11: 7-9; 12:13):
3. Հնարավոր է, որ որոշակի կապ գոյություն ունի այս համառոտ դրույթի և կեղծ ուսուցիչների ուսուցման կապակցությամբ, բայց թե ինչ, հստակ չէ:

5:19 «Երեցի վերայ գանգատ մի ընդունիր. բայց միայն երկու կամ երեք վկաներով» Սա ՆԵՐԿԱ ԶԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է «դադարեցնել գործընթացում առկա գործողությունը»: Սա արտացոլում է կեղծ ուսուցիչների կողմից ծագած տարաձայնությունները և մեղադրանքները:

Գաղափարը ինքնին հենց Մովսեսի գրվածքներից է (տես Թվոց 35:30; 2 Օրինաց 17:6; 19:15):

5:20 «Մեղանշողներին» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՆԲԱՅ Է: Կոնտեքստում սա վերաբերվում է առաջնորդներին, ովքեր շարունակում են մեղք գործել (տես 1 Կոր. 3: 10-15): Սա պարտադիր չէ, որ մեկանգամյա գործողություն լինի: Պողոսը անդրադառնում է մեղավոր հավատացյալների հետ վարվելու պատշաճ ընթացակարգերին Հռ. 16: 17-18; 1 Կոր. 5; Գաղ. 6: 1-5; 1 Թես. 5:14; 2 Թես. 3: 6-15; 1 Տիմ. 1:20; 5: 19-20; և Տիտոս 3: 10-11:

▪ **«ամենի առաջին յանդիմանիր, որ ուրիշներն էլ վախենան»** Սա կարծես թե խոսում է հրապարակային (այսինքն, մյուս երեցներից առաջ կամ ամբողջ եկեղեցու առջև) կարգապահական

գործողությունների մասին (տես Գաղ. 2:14; Հակ. 5:16), որոնք որոշ երեցներ արեցին մյուսների հանդեպ

1. չարաշահեցին իրենց հեղինակությունը
2. խթանեցին կեղծ ուսուցմանը
3. գրադվեցին այլ ոչ պատշաճ գործողություններով

«Հանդիմանելը» ընդհանուր դրույթ է Հովվական նամակներում (տես 2 Տիմ. 4: 2; Տիտոս 1: 9,13; 2:15):

«Մնացածը, ուրիշները» կարող է վերաբերել

1. մյուս տնային եկեղեցիներին
2. այլ տեղացի երեցներին
3. այլ հավատացյալներին

5:21 «Վկայութիւն եմ դնում Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի եւ ընտրուած հրեշտակների առաջին»

Այս հզոր երդումը մի քանի անգամ հանդիպում է Հովվական Նամակներում (տես 1Տիմ. 5:21; 6:13; 2 Տիմ. 4: 1; և համապատասխան իմաստով 2 Տիմ. 2:14): Պողոսը լուրջ էր վերաբերվում իր ուսմունքների իշխանությանն ու ծագմանը:

▪ **«ընտրուած հրեշտակների»** Մի փոքր զարմանալի է, որ «ընտրված հրեշտակները» հիշատակվում են Սուրբ Հոգու փոխարեն: Սա օգտագործվում է հետևյալ իմաստով

1. Նրանք, ովքեր ծառայում են Աստծո ընտրյալ ժողովրդին և ովքեր ներկա են նրանց հետ (տես Մաղ. 138: 1, 1 Կոր. 4: 9; Մատթ. 18:10; Ղուկ. 9:26 և Եբր. 1:14)
2. այն հատուկ հրեշտակները, որոնք Աստծո գահի մոտ են, որոնք բացառապես կապված են Իր ներկայության հետ (ռաբբիների գրականության մեջ, ներկայության յոթ հրեշտակները)

Այս արտահայտությունն ուղղակիորեն տարբերվում է Սատանայից (տես 1 Տիմ. 5:15):

▪ **«որ այս բաները պահես առանց նախապաշարման. Ոչինչ չ'անելով աչառութեամբ»**

Տիմոթեոսը չպետք է ունենար ոչ աչառություն, ոչ էլ զրպարտություն: «Պահպանել» բառը հունարեն «պահել, հսկել» բառից է: Քանի որ Աստված պահպանում է մեզ (տես 2 Թես. 3: 2; Հուդա 1:24) և մեր ժառանգությունը (տես 1 Պետ. 1: 4-5), մենք էլ պետք է պահենք Իր ճշմարտությունը: Մենք նաև պետք է հսկենք մեր անձերը կեղծ ուսմունքներից (տես 2 Տիմ. 4:15; 2 Պետ. 3:17; 1 Հովհ. 5:21):

Ուշադրություն դարձրեք, որ ուխտը փոխադարձ է՝ Աստված պահում է/հսկում մեզ, հավատացյալները պետք է պահեն / պահպանեն Իր ճշմարտությունը և իրենք իրենց: Հնարավոր է, որ այս մեղադրանքը Տիմոթեոսին կապված էր կեղծ ուսուցիչների ցուցաբերված կողմնակալությանը և կեղծավորությանը, իրենց մասին պնդելով, որպես ընտրյալ էլիտա, կամ էլ իրենց հատուկ գիտելիքները կամ հատուկ ազատությունները:

5:22 «Ձեռք շուտով մի դնիր մեկի վերայ»

Այս համարն ունի ևս երեք ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՄԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆՆԵՐ: Այն մեկնաբանվում է երկու ձևով, 1) վերաբերվում է ձեռնադրությանը (տես 1 Տիմ. 3:10; 4:14) կամ (2) վերաբերվում է ապաշխարող երեցին ընդունելու և վերականգնելու մասին, որը հրապարակայնորեն ճանաչվում և ընդունվում է (տես 1 Տիմ. 5:20): 2-րդ համարը տեղավորվում է 24 և 25-րդ համարների կեղծ ուսուցիչների պատմական կոնտեքստին լավագույնս: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: Ձեռք Դնել](#) 1 Տիմ. 4:14.

▪ **«եւ ուրիշների մեղքերին մասնակից մի լինիր»** Սա կարող է վերաբերել (1) չափից շուտ ձեռնադրելուն (տես 1 Տիմ. 3: 6) կամ (2) երեցներին առաջնորդության մեջ չափից շուտ

վերականգնելուն: Հիշեք, որ կոնտեքստը եկեղեցիներ ներխուժելու կեղծ ուսուցիչների գործունեությունն է: Մեր գործողությունները կարելի է մեկնաբանել որպես ուրիշների սխալների հաստատում կամ հավանություն (տես 2 Հովհ. 11):

▪ **«Քո անձը սուրբ պահիր»** Այս բառացիորեն նշանակում է «պահեք ձեզ մաքուր, անարատ» (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես 1 Տիմ. 4:12; 5: 2): Մեղքը

1. վերաբերմունք, կեցվածք
2. գործողություն
3. միություն, համագործակցություն

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 5:23

²³Այսուհետև միայն ջուր չ'իմես, այլ մի քիչ զինի գործածիր քո ստամոքսի եւ քո շուտ շուտ տկարանալու համար:

5:23 «Այսուհետև միայն ջուր չ'իմես» Սա կարծես թե կողմնակի կամ այսպես ասած չակերտների մեջ առնված մեկնաբանություն է Տիմոթեոսին ուղղված (NET Bible, էջ 2182, # 14): Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է մԷ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողությունը: Պողոսը Տիմոթեոսին աղաչում է փոխել իր նորմալ ամենօրյա գործունեությունը: 1 Տիմ. 5:22 «մաքուր պահիր քեզ» պատվերը չի ազդում զինի խմելու վրա: Զգուշացեք հարանվանական ավանդույթներից, որոնք հաճախ դուրս են Մուրբ Գրքից:

Տիմոթեոսը, ըստ երևույթին, լիովին հրաժարվել էր զինուց: Պողոսը նշում է, որ քիչ քանակությամբ զինին չի կարող խնդիր լինել եկեղեցու առաջնորդի համար: Պետք է հիշենք, որ վաղ միջերկրածովյան աշխարհը ամեն օր զինի էր խմում: Սա կարող է նշանակել (1) ավելացնել մի քիչ խմորված զինի, ջրի մաքրման համար կամ 2) երբեմն մի քիչ զինի խմել, երբ ձեր ստամոքսը խնդիր ունի: Գինին խնդիր չէ; մեղավոր մարդու չարաշահումն է խնդիր: Աստվածաշունչը արգելում է հարբեցողությանը (տես Առ. 23: 29-35; Ես. 5: 11,22; 28: 1-8), բայց չի սովորեցնում ամբողջությամբ ձեռնպահ մնալ (տես 1 Տիմ. 3: 3, 8): Մեր օրերի և հասարակության մեջ լիակատար ձեռնպահ մնալը պետք է կապված լինի Հռ. 14: 1-15:13; 1 Կոր. 8 և 10: 23-33-ի հոգևոր գաղափարների հետ: Այնուամենայնիվ, հավատացյալները պետք է դիմադրեն ասկետիզմի բոլոր ձևերին (տես Կող. 2: 20-23): Տես Հատուկ Թեմա: Վերաբերմունքը ակոհոլի և ակոհոլիզմի նկատմամբ 1 Տիմ. 3: 3:

«քո ստամոքսի եւ քո շուտ շուտ տկարանալու համար» Արդյո՞ք սրանք երկու տարբեր նկարագրող արտահայտություններ են, թե՞ նրանք խոսում են մեկ խնդրի մասին: Արդյո՞ք այս հատվածը ենթադրում է, որ Տիմոթեոսը ֆիզիկապես տկար մարդ էր: Տիմոթեոսի գործը դժվար էր և բարդ: Եթե նա նույնպես ֆիզիկապես թույլ էր, դա նրան դարձնում է ավելի հրաշալի դեր մոդել և ազնիվ մարդ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 5:24-25

²⁴Կան մարդիկ, որոնց մեղքերը յայտնի են, եւ առաջուց դատաստանի հասած. Իսկ ոմանցն էլ ետեւիցն են գալիս: ²⁵Այնպէս էլ բարի գործերը յայտնի են. Եւ ուրիշ կերպ լինողներն էլ չեն կարող ծածկուիլ:

5: 24-25 Այս համարները կարող են վերաբերվել 1 Տիմ. 5:22 նախազգուշացմանը: Իրենց պտուղներով դուք ի վերջո կձանաչեք նրանց (տես Մատթ. 7): Կոնտեքստում Պողոսը դիմում է կեղծ ուսուցիչներին և ճշմարիտ ուսուցիչներին: Նրանք ակնհայտ են իրենց ուսմունքներով և ապրելակերպով (մեղքերը,

որոնք ակնհայտ են) և այլ մեղքեր (այսինքն, թաքնված մեղքեր կամ վերաբերմունք/ դրդապատճառներ) կհայտնվեն Դատաստանի Օրր:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Թվարկեք 5-րդ գլխում նշված տեղական եկեղեցու վարձատրվող անձնակազմի պաշտոնները:
2. Թվարկեք ճշմարիտ այրու որակավորումները, ով կարող է նյութական աջակցություն ստանալ եկեղեցու միջոցներից:
3. Ինչպե՞ս են 7 և 14 համարները կապված 1 Տիմ. 3:
4. Ինչպե՞ս է 20 համարը կապված 24 և 25 համարներին:
5. Արդյո՞ք Աստվածաշունչը սովորեցնում է ամբողջությամբ ձեռնպահ մնալ ալկոհոլից:

1 ՏԻՄՈԹԵՈՍ 6

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պարտականություններ ուրիշների հանդեպ	Պատվել տերերին		Պատասխանատվություններ հավատացյալների հանդեպ	Ծառաներ
(5:1-6:2ա)	6:1-2	(5:1-6:2ա)	(5:1-6:2ա)	6:1-2ա
Կեղծ ուսմունք և ճշմարիտ հարստություն	Սխալ և ազահություն	Վերջնական պատվերներ	Կեղծ ուսմունք և ճշմարիտ հարստություն	Ճշմարիտ ուսուցիչը և կեղծ ուսուցիչը
6:2բ-10	6:3-10	6:2բ-10	6:2բ-5	6:2բ-10
Հավատքի բարի պատերազմը	Բարի դավանությունը		Անձնական պատվերներ	Տիրութեան մասին վկայությունը
6:11-16	6:11-16	6:11-16	6:11-16	6:11-16
	Պատվերներ հարուստին			Հարուստ քրիստոնյաներ
6:17-19	6:17-19	6:17-19	6:17-19	6:17-19
	Հավատքը հսկել, պահել			Վերջին զգուշացում և ամփոփում
6:20-21ա	6:20-21	6:20-21ա	6:20-21ա	6:20-21
6:21բ		6:21բ	6:20բ	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան քննադատության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն

քանային է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇԽԲՈՒՈՒՄՆԵՐ

- Ա. Կեղծ ուսուցիչների թեման վերադառնում է (տես 1 Տիմ. 1: 3-11, 19-20; 4: 1-5; 6: 3-11, 17-19): Այս ամբողջ նամակը անդրադառնում է հերետիկոսների կողմից բարձրացված վարդապետական և բարոյական խնդիրների առաջացմանը:
- Բ. 1-2 համարները կարծես թե իրենց տեղում չեն, բայց հավանաբար նաև վերաբերվում են քրիստոնյա ստրուկների և նրանց նոր իրավունքների և ազատությունների մասին կեղծ ուսուցիչների ուղերձներին: UBS⁴ և TEV տեսնում են, թե ինչպես է Պողոսը խրախուսում Տիմոթեոսին, թե ինչպես վարվել եկեղեցու տարբեր խմբերի հետ:
1. ծեր տղամարդիկ և կանայք (1 Տիմ. 5: 1-2)
 2. այրիներ (1 Տիմ. 5: 3-11)
 3. երեցներ (1 Տիմ. 5: 17-25)
 4. ստրուկներ (1 Տիմ. 6: 1-2)
- Գ. Չարմանալիորեն 1 Տիմոթեոսը չի ավարտվում մի շարք անձնական ողջույններով: Պողոսը ավելի երկար մնաց Եփեսոսում, քան ցանկացած այլ քաղաքում և մեծ ավետարանչական արդյունքներ ունեցավ: Նա այս քաղաքում շատ հավատարի հավատացյալների էր ճանաչում: Ինչու՞ է միայն Տիմոթեոսին ողջունում:
- Այս նամակը ակնհայտորեն պետք է կարդացվեր հավաքված եկեղեցում կամ տնային եկեղեցիներում («դուք» ՀՈԳՆԱԿԻ 1 Տիմ. 6:21): Այնուամենայնիվ, դա նաև անձնական նամակ էր խորհուրդով և հրահանգներով, մասնավորապես Տիմոթեոսի՝ իր առաքելական փոխնակի համար:

ԲԱՈՒ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 6:1-2

¹Նորանք որ ծառայութեան լծի տակ են, թող իրանց տերերին ամեն պատիւի արժանի համարեն. որ Աստուծոյ անունը եւ վարդապետութիւնը չ'հայհոյուի: ² Իսկ հաւատացեալ տէրեր ունեցողները թող չ'անարգեն նորա համար որ եղբարք են. Այլ առաւել եւս ծառայեն. Նորա համար որ հաւատացեալ են եւ սիրելի, որ բարերարութեանը մասնակից են. այս բաները սովորեցրու եւ յորդորի:

6: 1 «Նորանք որ ծառայութեան լծի տակ են» Քրիստոնեությունը հարմարվել է իր օրվա մշակույթին՝ կապված ստրկության հետ: Հռոմեական աշխարհի երկու երրորդը ստրուկ էր: Ավետարանի ճշմարտությունն էր, արդարությունը և Աստծո սերը, որը վերջ դրեց ստրկությանը: Պողոսը նախընտրեց գործ ունենալ տվյալ մշակույթ մարդկանց վերաբերմունքի հետ՝ այդ մշակույթային

իրավիճակի բռնի տապալման փոխարեն (շատ նման էր այն բանի, ինչ արեց կանանց հասարակական դերի հետ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ՀՈՐԴՈՐԸ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

1. Բավարարվեք, բայց եթե ազատության հնարավորությունը լինի, վերցրեք այն (1 Կոր. 7: 21-24):
2. Քրիստոսում չկա ստրուկ կամ ազատ (Գաղ. 3: 28; Կոլ. 3:11; 1 Կոր. 12:13):
3. Աշխատեք որպես Տիրոջը: Նա կվերադարձնի (Եփ. 6: 5-9; Կոլ. 3: 22-25; 1 Պետ. 2:18-20):
4. Քրիստոսով ծառաները դառնում են եղբայրներ (1 Տիմ. 6:2, Փիլիմոն 1:16-17):
5. Աստծո ստրուկները պատվում են Աստծուն (1 Տիմ. 6: 1, Տիտոս 2: 9):

Պողոսի հորդորը ստրկատերերին.

Քրիստոնյա ստրուկներն ու ստրկատերերը ունեն նույն Տերը, հետևաբար, նրանք պետք է հարգալից վերաբերվեն միմյանց (Եփ. 6:9; Կոլ. 4: 1):

Ստրկությունը մշակութային թեմա է (օրինակ, նահապետական մշակույթը), որը առաջին դարի աշխարհի սյունն էր: Նոր Կտակարանը չի վիճարկում երկու կողմերին: Այնուամենայնիվ, ավետարանի ճշմարտությունները ժամանակի ընթացքում փոխվել են մշակույթի այս ասպեկտներում:

▪ **«թող իրանց տերերին ամեն պատիւի արժանի համարեն»** Ակնհայտորեն համար 1-ը վերաբերվում է ոչ քրիստոնյա տերերին ծառայող քրիստոնյա ծառաներին, իսկ համար 2-ը վերաբերվում է քրիստոնյա տերերին ծառայող քրիստոնյա ստրուկներին: Քրիստոնյա ծառան պետք է վարվի հավատացյալների և անհավատների հետ այնպես, որ պատիվ բերի Աստծուն և Հիսուս Քրիստոսի ավետարանին (տես Եփ. 6:6-7): Համար1-ը ունի նույն կողմնորոշումը, ինչ 3: 2, 7, 10; 5: 7,8,14; և Տիտոս 2: 5-ը, որը նշանակում է, որ «քննադատության համար տեղիք չտալ»: Նաև տես 1 Տիմ. 6:14 այս նույն գլխում:

6: 2 «Իսկ հաւատացեալ տերեր ունեցողները թող չ'անարգեն նորա համար որ եղբարք են» Սա բառացիորեն նշանակում է «նայել ներքև», որը ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ե ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը ենթադրում է դադարեցնել գործողությունը: Այս արտահայտությունը վերաբերվում է վարդապետական հասկացությանը, որ այն ամենը, ինչ մենք հավատացյալներս անում ենք, պետք է լինի ամենաբարձ որակի՝ Քրիստոսի անվան համար (տես 1 Կոր. 10:31; Եփ. 6.6-7; Կոլ. 3:17; 1 Պետ. 4: 11):

«Տերեր» տերմինը ոչ սովորական տերմինն է ստրկատիրոջ համար, *kurios* (տես Եփ. 6: 5,98; Կոլ. 3:22; 4: 1), այլ *despotēs*: Այն սովորաբար օգտագործվում է Հայր Աստծո և Որդու համար, սակայն Հովվական նամակներում այն պարբերաբար օգտագործվում է երկրային ստրուկների տերերի համար (տես 1 Տիմ. 6:1,2; 2 Տիմ. 2:21; Տիտոս 2:9): Պողոսը, հավանաբար, օգտագործել է ուրիշ դպիր:

▪ **«այս բաները սովորեցրու եւ յորդորիր»** Սրանք երկու ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆՆԵՐ են, որոնք ենթադրում են շարունակական պարտականություն (տես 1 Տիմ. 4:11): Այս արտահայտությունը կարող է եզրակացնել նախորդ հորդորը (տես NASB, NKJV) կամ ներկայացնել այն, ինչ հետևում է (NRSV, TEV, NJB):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 6:3-10

³Իսկ եթե մեկն ուրիշ կերպ բան սովորեցնե՛լ եւ մտիկ չ'անե՛ մեր Տեր Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքերին, եւ աստուածպաշտութեան համեմատ վարդապետութեանը, ⁴Նա գոռոզացած է, ոչինչ

չ'իմանալով. այլ ախտացած է վիճաբանությունների՝ եւ խօսքերով հակառակելու համար, որ նորանից լինում է նախանձ, կռիւ, հայեցողութիւն, չար կարծիքներ, ⁵Դատարկ վեճեր այնպիսի մարդկանց որ մտքով ապականուած եւ ճշմարտութիւնիցը հեռացած են. որ աստուածաշնորհները շահավաճառութիւն են համարում. այնպիսիներիցը ետ քաշուիր: ⁶Բայց մեծ շահավաճառութիւն է իրաւ աստուածաշնորհները բաւականութեան հետ միասին: ⁷Որովհետեւ ոչինչ չենք բերել աշխարհքս եւ յայտնի է որ ոչինչ էլ չենք կարող դուրս տանիլ: ⁸Բայց եթէ կերակուր եւ հագուստ ունինք, նորանցով բաւականանանք: ⁹Իսկ նորանք որ կամենում են հարստանալ փորձութեան եւ որոգայթի եւ շատ անմիտ վնասակար ցանկությունների մէջ են ընկնում. որ ընկղմում են մարդկանց սատակումի եւ կորուստի մէջ: ¹⁰Որովհետեւ արծաթսիրութիւնը ամեն չարիքների արմատն է. Որին մի քանիսը անձնատուր լինելով հաւատքիցը մոլորուեցան, եւ իրանց անձերը շատ ցաւերով խոցեցին:

6: 3 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (որը ենթադրվում է ճշմարիտ) շարունակելով գրական կոնտեքստը 1 Տիմ. 6: 3-ից մինչև 1 Տիմ. 6: 5: Կային կեղծ ուսուցիչներ, որոնք մերժեցին Պողոսի ուսմունքները (տես 1 Տիմ.1: 3-7; 4: 1-3):

- **«մէկն ուրիշ կերպ բան սովորեցնէ»** Սա հունարեն *heteros* տերմինն է, որը նշանակում է «մէկ այլ ուրիշ տեսակի»: Կեղծ ուսմունքը հրեական օրինականության և հունական փիլիսոփայության համադրություն էր, որը նման էր այն բանին, ինչը գտնում ենք Կողոսացիս և Եփեսացիս թղթերում:
- **«եւ մտիկ չ'անէ ողջամիտ խօսքերին»** Տես ծանուցում 1 Տիմ. 1:10.
- **«մեր Տէր Յիսուս Քրիստոսի»** Պողոսը պնդում է, որ «առողջ խոսքերի» ծագումը Քրիստոսի ուսմունքներն են, որոնք տրվել են Պողոսին: Այս կեղծ ուսուցիչները մերժեցին թէ Քրիստոսի և թէ Նրա՝ Առաքյալի ուսմունքները:
- **«աստուածաշնորհեան համեմատ վարդապետութեանը»** Տես ծանուցում 1 Տիմ. 2:2: Քրիստոսի ուսմունքները որպէս նպատակ միշտ ունեցել են աստվածաշնորհությունը (տես 1 Տիմ. 3:16): Այս կեղծ ուսուցիչները փորձեցին առանձնացնել ճշմարտությունը կյանքից, արդարացումը սրբացումից, ՍԱՀՄԱՆԱԿԱՆԸ (ավետարանի ճշմարտությունը) ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԻՑ (ավետարանի բարեպաշտությունը, տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ / ՍՐԲԱՅՈՒՄ](#) 2 Տիմ. 2: 21:

6:4

Արևելահայերեն «Նա գոռոզացած է»

Արևմտահայերեն «Այնպիսին հպարտացած է»

NASB, NRSV «խայտառակ է»

NKJV, NJB «նա հպարտ է»

TEV «շփոթված է հպարտությամբ»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Տերմինը բառացիորեն նշանակում է «ծխով կուրացած» հպարտության իմաստով (տես 1 Տիմ. 3: 6; 6: 4; 2 Տիմ. 3: 4): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՉԱՐ ԱՐԱՐՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#) 1 Տիմ. 1: 9:

▪ **«ոչինչ չ'իմանալով. այլ ախտացած է վիճաբանությունների՝ եւ խօսքերով հակառակելու համար»** Շարունակական շեշտադրում է եղել Տիմոթեոսի վրա, որ չի խառնվել կեղծ ուսուցիչների այս անարդյունավետ քննարկումներին (տես 1 Տիմ. 1: 3,4; 2 Տիմ. 2:14; 4: 4, Տիտոս 1:14): Չարմանում եմ, թե ինչպե՞ս կարող ենք դա կիրառել այսօր:

«Ախտացած» տերմինը բառացիորեն նշանակում է «հիվանդ լինել»: Այն օգտագործվում էր փոխաբերական իմաստով՝ ինչ-որ բան փափագելու կամ խիստ ցանկանալու համար: Այս կեղծ ուսուցիչները չէին փնտրում բարեպաշտություն, այլ ցանկանում էին գաղտնի գիտելիքներ՝ չբացահայտված բաժինների կամ ճշմարտության երկրորդական հատվածների մասին: Նրանք ուզում էին վիճաբանել վարդապետական հարցերի շուրջ, որոնք միայն վիճաբանություններ ու հպարտ բաժանումներ էին առաջացնում:

Որքան շատ եմ մեծանում, այնքան շատ եմ իմանում, որ ես չգիտեմ և ավելի երջանիկ եմ, որ ավելի քիչ եմ հասկանում: Քրիստոնեության հիմնական ճշմարտությունները հստակ են և կրկնվող: Այնուամենայնիվ, ինչ-որ կերպ ձգտում ենք իմանալ «բոլոր» մանրամասները և հետևանքները և հյուսել աստվածաբանական ցանցեր, որոնք պարունակում են բարդ, անիմաստ, ապոկալիպտիկ և մարգարեական հատվածների բոլոր ընդհանրությունները: Մենք փառավորվում ենք մեր մանրամասնած համակարգերում՝ Քրիստոսի հետ փոխհարաբերություն ունենալու փոխարեն: Դժվար է դոգմատիկ, սիստեմատիկ աստվածաբանի համար ասելի անցքով անցնել, քան հարուստ մարդու համար:

Քարոզե՛ք հստակ ճշմարտությունները: Քննարկե՛ք երկրորդական հարցերը սիրով: Ողորմած եղե՛ք բոլորի հանդեպ: Հոգևոր հասունությունը մեզ ավելի քիչ դատապարտող և ավելի շատ Քրիստոսի նման կդարձնի:

6: 5 «մարդկանց որ մտքով ապականուած» Կամ (1) ամբողջ կոնտեքստը վերաբերվում է կեղծ ուսուցիչներին, կամ (2) առաջին մի քանի համարները վերաբերվում են նրանց, իսկ մնացածը՝ տեղական տնային եկեղեցիներում իրենց ուսմունքների պատճառով առաջացած հետևանքներին (տես Arichea and Hatton's *A Handbook on Paul's Letters to Timothy and Titus*, UBS): Կարծում եմ, որ երիտասարդ այրիները, և, հնարավոր է, որոշ ստրուկներ (տեր 1 Տիմ. 6: 1-2) կեղծ ուսուցիչների համար փոխնակ խոսնակներ էին (տես Gordon Fee's *First and Second Timothy and Titus in the New International Biblical Commentary*, հատ. 13):

▪ **«Ճշմարտությունիցը հեռացած են»** Այս վերջին արտահայտություններից երկուսն էլ ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԵՐ են, որը ենթադրում է մտքի ու սրտի հաստատուն վիճակ՝ արտաքին ուժերի ազդեցությունների արդյունքում, հավանաբար չարի (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 6): Նա ոչ միայն ստերի հայր է, այլ նաև կրոնական շահարկումների և աստվածաբանական էլիտարության: Տես Հատուկ Թեմա: Ճշմարտություն 1 Տիմ. 2: 4:

Արևելահայերեն «որ աստուածպաշտութիւնը շահավաճառութիւն են համարում»

Արևմտահայերեն «որոնք աստուածպաշտութիւնը շահավաճառութիւն մը կը սեպեն»

NASB «ովքեր ենթադրում են, թե աստվածպաշտությունը եկամուտ ձեռք բերելու միջոց է»

NKJV «ովքեր ենթադրում են, թե աստվածպաշտությունը եկամուտ ձեռք բերելու միջոց է»

NRSV «պատկերացնելով, թե աստվածպաշտությունը եկամուտ ձեռք բերելու միջոց է»

TEV «Նրանք կարծում են, որ կրոնը հարստանալու միջոց է»

NJB «պատկերացնում են, թե կրոնը շահույթ ստանալու ձև է»

Սա, կարծես, ներառում է երկու բաներից մեկը 1) կեղծ ուսուցիչները ուսուցանում էին հաջողության և հարստության աստվածաբանություն, կամ էլ 2) իրենց ուսուցման համար վարձատրվում էին (տես Տիտոս 1:11; 2 Պետ. 2:3): 2-րդը ավելի հավանական տարբերակ է:

King James տարբերակը 1 Տիմ. 6: 5 վերջում ավելացնում է «այնպիսիներիցը ետ քաշուիր» արտահայտություն, բայց սա միայն հանդիպում է հինգերորդ դարի Ուղղված հունական երկաթագիր ձեռագիր D-ում: Այն չի հայտնվում ավելի հին ձեռագրերում ռ, A, D *, F, կամ G. UBS⁴ ավելի կարճ տեքստին տալիս է «Ա» վարկանիշ (հուսալի):

«Աստվածպաշտություն» տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7:

6: 6 «բաւականութեան հետ միասին» Այս բառը հիմնականում ներառում է ոչ թե հպարտ ինքնաբավարարվածություն, այլ Սուրբ Հոգու խրախուսած բավարարություն, որը գալիս է ոչ թե հանգամանքից կամ անձնական ռեսուրսներից, այլ Քրիստոսով Աստծուց կախում ունենալուց (տես Ֆիլ. 4: 13):

6: 7 «Որովհետև ոչինչ չենք բերել աշխարհքս» Սա կարող է ակնարկ լինել մի քանի Հին Կտակարանյան հատվածների (տես Հոբ 1:21; Սաղ. 49:17; Ժող. 5:15): Դա 1 Տիմ. 6: 6 համար հիմք է տալիս: 6-րդ և 8-րդ համարները նման են հույն ստոյիկյան փիլիսոփաների դրույթներին: Պողոսը ծանոթ էր այդ բարոյականներին: Նրա բազմաթիվ մեղքերի եւ առաքիլությունների ցուցակները նույնպես նման են հույն գրողներին: Տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Kosmos* 1 Տիմ. 1:15:

KJV ավելացնում է «և դա հաստատ է» «որովհետև»-ի փոխարեն: Այս հավելումը հանդիպում է MSS ռ² և D²- ում, ինչպես նաև որոշ Հին Լատիներեն, Վուլգատ և Սիրիական տարբերակներում: MS D և որոշ Հին Լատիներեն, Վուլգատ և Սիրիական տարբերակները ունեն «ճշմարիտ, իրապես» բառը «որովհետև»-ից առաջ: UBS⁴- ը ավելի կարճ տեքստին տալիս է «Ա» վարկանիշ (հուսալի):

6: 8 Հավատացյալները պետք է գոհանան Աստծո ամենօրյա կարիքների բավարարման համար (տես Առ. 30: 8; Մատթ. 6:11): Պողոսը օգտագործելով «շահ, օգուտ» բառը 1 Տիմ. 6: 5-ում, նրան դրդեց խոսելու կեղծ ուսուցիչների ազահության մասին (տես 1Տիմ. 6: 6-10 և 17-19):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

I. Հին Կտակարանի ընդհանուր հայացքը

Ա. Աստված ամեն բանի սեփականատերն է

1. Ծննդոց 1-2
2. 1 Մնացորդաց 29:11
3. Սաղմոս 24:1; 50:12; 89:11
4. Եսայիա 66:2

Բ. Մարդիկ հարստության տնտեսներն են Աստծո նպատակների համար

1. 2 Օրինաց 8:11-20
2. Ղևտացոց 19:9-18
3. Հոբ 31: 16-33
4. Եսայիա 58: 6-10

Գ. Հարստությունը կարող է ծառայել պաշտամունքի մի մասն

1. երկու տասանորդ
 - ա. Թվոց 18:21-29; 2 Օրինաց 12: 6-7; 14: 22-27
 - բ. 2 Օրինաց 14: 28-29; 26: 12-15
2. Առակաց 3:9

- Դ. Հարստությունը համարվում է Աստծո կողմից պարզև ուխտի հավատարմության համար
 - 1. 2 Օրինաց 27-28
 - 2. Առակաց 3:10; 8: 20-21; 10:22; 15: 6
- Ե. Նախազգուշացում ուրիշների հաշվին հարստանալու դեմ
 - 1. Առակաց 21:6
 - 2. Երեմիա 5: 26-29
 - 3. Ովսեա 12: 6-8
 - 4. Միքիա 6:9-12
- Զ. Հարստությունն ինքնին մեղք չէ, եթե դա կյանքում առաջնահերթ չէ դառնում
 - 1. Սաղմոս 52:7; 62:10; 73: 3-9
 - 2. Առակաց 11:28; 23: 4-5; 27:24; 28: 20-22
 - 3. Հոբ 31: 24-28

II. Առակաց Գրքի յուրահատուկ հայացքը

- Ա. Հարստությունը պետք է ձեռք բերվի անձնական ջանքերի, աշխատանքի շնորհիվ
 - 1. անգործությունը և ծուլությունը դատապարտելի է – Առ. 6: 6-11; 10: 4-5,26; 12: 24,27; 13:4; 15:19; 18:9; 19: 15,24; 20:4, 13; 21:25; 22:13; 24: 30-34; 26: 13-16
 - 2. Ժրաջան աշխատասիրությունը գովելի է – Առ. 12:11,14; 13:11
- Բ. Աղքատություն-հարստություն, արդարություն -չարություն –Առ. 10:1; 11: 27-28; 13:7; 15: 16-17; 28: 6,19-20
- Գ. Իմաստությունը (ճանաչել Աստծուն և Նրա Խոսքը և ապրել այդ գիտելիքով) ավելի լավ է, քան հարստությունը – Առ. 3:13-15; 8: 9-11,18-21; 13:18
- Դ. Նախազգուշացումներ և հորդորներ
 - 1. նախազգուշացումներ
 - ա. զգուշացեք ուրիշի համար (գրավ) երաշխավոր լինելուց – Առ. 6:1-5; 11:15; 17:18; 20:16; 22:26-27; 27:13
 - բ. զգուշացեք չար կերպերով հարստանալուց (Առ.1:19; 10: 2,15; 11: 1; 13:11; 16:11; 20: 10,23; 21:6; 22: 16,22; 28: 8
 - գ. Պարտք չվերցնեք –Առ. 22:7
 - դ. Մի աշխատիր հարստանալ -Առ. 23:4-5
 - ե. հարստությունը չի օգնի դատաստանի օրը -Առ. 11:4
 - զ. հարստությունը շատ «ընկերներ» ունի-Առ. 14:20; 19: 4
 - 2. հորդորներ
 - ա. Առատաձեռնությունը գովելի է – Առ. 11:24-26; 14:31; 17:5; 19:17; 22: 9,22-23; 23:10-11; 28:27
 - բ. Արդարությունը ավելի լավ է, քան հարստությունը –Առ. 16:8; 28: 6,8,20-22
 - գ. աղոթեք կարիքի համար, ոչ թե առատության-Առ. 30:7-9
 - դ. աղքատին տալ նշանակում է Աստծուն տալ – Առ. 14:31

III. Նոր Կտակարանի ընդհանուր հայացքը

- Ա. Հիսուս
 - 1. հարստությունը ստեղծում է յուրահատուկ գայթակղություն, վստահելու ինքներս մեզ և մեր ռեսուրսներին Աստծո և Նրա ռեսուրսների փոխարեն
 - ա. Մատթեոս 6:24; 13:22; 19:23
 - բ. Մարկոս 10: 23-31

- գ. Ղուկաս 12: 15-21,33-34
- դ. Հայտնություն 3:17-19
- 2. Աստված կհոգա մեր ֆիզիկական կարիքները
 - ա. Մատթեոս 6:19-34
 - բ. Ղուկաս 12:29-32
- 3. ով ցանի նա էլ կհնձի (թե հոգևոր և թե ֆիզիկական)
 - ա. Մարկոս 4:24
 - բ. Ղուկաս 6: 36-38
 - գ. Մատթեոս 6:14; 18:35
- 4. ապաշխարությունը ազդում է հարստության վրա
 - ա. Ղուկաս 19: 2-10
 - բ. Ղևտացոց 5:16
- 5. տնտեսական շահագործումը դատապարտելի է
 - ա. Մատթեոս 23:25
 - բ. Մարկոս 12:38-40
- 6. վերջին դատաստանը կապված է, թե ինչպես ենք օգտագործում հարստությունը - Մատ. 25: 31-46

Բ. Պողոս

- 1. գործնական տեսակետ, ինչպես Առակացը (աշխատանք)
 - ա. Եփեսացիս 4:28
 - բ. 1 Թեսաղոնիկեցիս 4:11-12)
 - գ. 2 Թեսաղոնիկեցիս 3: 8,11-12
 - դ.1 Տիմոթեոս 5: 8
- 2. հոգևոր տեսակետ Հիսուսի նման (նյութականը փչանում է, բավարարված լինել)
 - ա. 1 Տիմոթեոս 6: 6-10 (բավարարվածություն)
 - բ. Փիլիպպեցիս 4: 11-12 (բավարարվածություն)
 - գ. Եբրայեցիս 13: 5 (բավարարվածություն)
 - դ. 1 Տիմոթեոս 6: 17-19 (առատաձեռնություն և վստահություն Աստծուն, ոչ թե հարստությանը)
 - ե. 1 Կորնթացիս 7: 30-31 (նյութական բաների վերափոխումը)

IV. Եզրակացություններ

- Ա. Չկա սիստեմատիկ աստվածաշնչյան աստվածաբանություն հարստության վերաբերյալ:
- Բ. Աստվածաշնչում այս թեմայի վերաբերյալ հստակ, որոշակի հատված չկա, ուստի այն պետք է հասկանալ տարբեր տեքստերի միջոցով: Փորձեք չհիմնվել առանձին, իրար հետ կապ չունեցող տեքստերի վրա:
- Գ. Առակները, որոնք գրվել են իմաստունների կողմից, ունեն տարբեր տեսակետ, քան աստվածաշնչյան այլ ժանրի գրքերը: Առակներն ունեն գործնական և անհատական կենտրոնացում: Այն հավասարակշռված է և պետք է հավասարակշիռ լինի մյուս Գրվածքների կողմից (տես Եր. 18:18):
- Դ. Մեր օրերում մարդիկ պետք է վերլուծեն հարստության հանդեպ ունեցած իրենց մոտեցումներն ու գործածումը Աստվածաշնչի լույսի ներքո: Եթե առաջնորդվենք կապիտալիստական կամ կոմունիստական թեորիաներով, ապա մեր առաջնահերթությունները սխալ կլինեն: Ինչու և ինչպես կարելի է հաջողության հասնել

դա ավելի կարևոր հարց է, քան թե որքան է կուտակել:
Ե. Հարստության կուտակումը պետք է հավասարակշռված լինի ճշմարիտ երկրպագության և պատասխանատու տնտես լինելու հետ (տես 2 Կոր. 8-9):

6: 9 «Իսկ նորանք որ կամենում են հարստանալ փորձութեան մեջ են ընկնում» Հավատացյալները շատ բաներ են բերում իրենց վրա ազահության երկրային բաների, գորության և ճանաչված լինելու պատճառով (տես Առ. 23: 4; 28:20; Մաթ. 6:19-34):

«Փորձություն» բառը հունարեն *peirasmos* տերմինն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ «ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ, ՓՈՐՁ» ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՔՆԵՐԸ

Կան երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն ինչ որ մեկին նպատակի համար փորձելու գաղափարը:

1. *Dokimazō, Dokimion, Dokimasia*

Այս բառը մետալուրգիական տերմին է՝ կրակով փորձելու ինչ-որ բանի իրական, ազնիվ լինելը (այսինքն, փոխաբերական իմաստով ինչ-որ մեկին) (տես Հատուկ Թեմա: Կրակ): Կրակը հայտնում է մետաղի իրական լինելը՝ այրման, թրժման միջոցով (այսինքն, մաքրում է, գտնում): Այս ֆիզիկական գործընթացը դարձավ Աստծո և / կամ Սատանայի և / կամ մարդկանց համար ուրիշներին փորձելու հզոր իդիոմա: Այս տերմինը օգտագործվում է միայն դրական իմաստով՝ փորձվում է և ընդունվում որպես պիտանի (տես Հատուկ Թեմա. Աստված փորձում է/ստուգում Իր ժողովրդին [Հին Կտակարան]):

Նոր Կտակարանում այն օգտագործվում է փորձելու համար

- ա. Եզնեբը, Ղուկ. 14:19
- բ. ինքներս մեզ - 1 Կոր. 11:28
- գ. մեր հավատքը, Հակոբոս 1: 3
- դ. նույնիսկ Աստծուն – Եբր. 3: 9

Ենթադրվում էր, որ այս փորձությունների արդյունքները կլինեն դրական (տես Հռ. 2:18; 14:22; 16:10; 2 Կոր. 10:18; 13: 3,7; Ֆիլ 2:27; 1 Պետ. 1:7), հետևաբար տերմինը տալիս է գաղափար, երբ ինչ որ մեկը փորձվում է և ապացուցվում որպես

- ա. Արժանի, կարևոր
- բ. Լավ, բարի
- գ. Անկեղծ, ազնիվ
- դ. Արժեքավոր, կարևոր
- ե. պատվավոր

2. *Peirazō, Peirasmus*

Այս տերմինը ունի ստուգման լրացուցիչ իմաստ, որը սխալը գտնելու կամ մերժելու համար է: Այն օգտագործվում է կապված անապատում Հիսուսի փորձության հետ:

ա. Նկարագրում է Հիսուսին ծուղակը գցելու փորձի մասին (տես Մատթ. 4: 1; 16: 1; 19: 3; 22:18, 35; Մարկ. 1:13; Ղուկ. 4: 2; Եբր. 2:18):

բ. Այս տերմինը (*peirazōn*) օգտագործվում է որպես տիտղոս սատանայի համար Մաթ. 4: 3; 1 Թես. 3: 5 (այն է «փորձիչը»):

գ. Օգտագործումը

- 1) Այն օգտագործվել է Հիսուսի կողմից, նախագուշացում, որ մարդիկ չփորձեն Աստծուն (տես Մատթ. 4: 7; Ղուկ. 4:12, [կամ Քրիստոսի տես 1 Կոր. 10: 9]):
- 2) Այն նաև նշանակում է, փորձել մի բան անել, որը ձախտվել է (տես Եբր.11:29):

3) Այն օգտագործվում է, երբ հավատացյալները փորձությունների կամ փորձանքների մեջ են հայտնվում (տես 1 Կոր. 7: 5; 10: 9, 13; Գաղ. 6:1; 1 Թեա. 3: 5; Եբր. 2:18; Հակ. 1: 2, 13, 14; 1 Պետ. 4:12; 2 Պետ. 2: 9):

- **«որոգայթ, ծուղակ»** Կան երեք տարբերակներ
1. թակարդ - MSS ճ, A, D², H
2. թակարդներ – փոքրատառ 33, 1175, և Փեշիտա և Ղպտի տարբերակները
3. դևի ծուղակը - MSS D *, F, G և Հին Լատիներեն տարբերակը UBS⁴- ը # 1 տարբերակն է տալիս «Ա» վարկանիշը (հուսալի):
- **«աստակումի եւ կորուստի մեջ»** Այս գաղափարը մի քանի անգամ օգտագործվում է Նոր Կտակարանում (տես Մատթ. 7:13; Հռ. 9:22; Փիլ. 1:28; 3:19; 2 Թեա. 2:3; 2 Պետ.2: 1; 3: 7; Հայտ. 17: 8-11): Փոխաբերականորեն սա նշանակում է բռնի կերպով դադարեցնել ֆիզիկական կյանքը: Այս տերմինը չի վերաբերվում ոչնչացման աստվածաբանական գաղափարին (տես Edward Fudge, *The Fire That Consumes* էդվարդ Ֆուդջը, որտեղ բերված են համոզիչ փաստեր լիակատար ոչնչացման օգտին), որը պնդում է, որ հոգևորապես կորսվածները մշտապես չեն տանջվում բաժանումից, այլ ինչ-որ ժամանակ դադարում են գոյություն ունենալուց: Աննիհիլացիոնիստները սա բառացիորեն են մեկնաբանում: Նրանք պնդում են, որ սա ավելի «մարդկային» է Աստծո տեսանկյունից, քան մեղավորին դատապարտել հավիտենական դժոխքում: Սակայն, նույն տերմինը (*aiōnion*), որը նկարագրում է հավիտենական երկինքը Մատթ. 25:46, նկարագրում է հավիտենական դժոխքը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ (*aiōnios*)

Robert B. Girdlestone իր *Synonyms of the Old Testament* գրքում հետաքրքիր մեկնաբանություն ունի «հավիտենական» բառի մասին.

«*aiōnios* ԱՕՍԱԿԱՆԸ Նոր Կտակարանում հավիտենական կյանքի հետ կապված օգտագործվում է ավելի քան քառասուն անգամ, որը մասամբ համարվում է պարզ, մասամբ էլ ապագայի խոստում: Այն նաև վերաբերվում է Աստծո անվերջանալի գոյությանը Հռ. 16:26; Քրիստոսի քավության անսպառ արդյունավետությանը Եբր 9:12; 13:20; և անցյալ դարերին Հռ. 16:25; 2 Տիմ. 1:9; Տիտոս 1:2:

Այս բառը օգտագործվում է հավիտենական կրակի, Մատթ. 18:8; 25:41; Հուդա 1:7; հավիտենական պատժի, Մատթ. 25:46; հավիտենական դատաստանի կամ դատապարտության, Մարկ. 3:29; Եբր. 6:2; հավիտենական ոչնչացում համար, 2 Թեա. 1: 9: Այս հատվածներում բառը նշանակում է վերջնականություն, և ըստ երևույթին, նշանակում է, որ երբ այս դատավճիռները կատարվեն, փորձառության ժամանակաշրջանը, փոփոխությունը կամ ինչ որ մեկի փոխվելու հնարավորությունը կդառնա բացարձակ և հավիտյան:

Մենք շատ քիչ բան գիտենք ապագայի մասին, մարդու կյանքի հետագա գոյության մասին և անհավատության բարոյական ծանրության մասին, որը դիտվում է հավիտենականության լույսի ներքո: Եթե մի կողմից սխալ է Աստծո խոսքին մի բան ավելացնելը, մյուս կողմից էլ չպետք է մի բան հանել դրանից; և եթե մենք երբեք ենք հավիտենական պատժի վարդապետության ներքո, ինչպես գրված է Սուրբ Գրքում, մենք պետք է բավարարված լինենք՝ սպասելով Քրիստոսի մեջ Աստծո սիրո ավետարանին, ընդունելով, որ կա մուրճ ֆոն, որը մենք չենք կարողանում հասկանալ (էջ 318-319):

6:10 «Որովհետև արծաթսիրությունը ամեն չարիքների արմատն է» Սա կարող էր հայտնի ասացվածք լինել: Փողը խնդիր չէ, փողասիրությունն է խնդիր: Հունարենում «արմատ» բառը չունի

ՈՐՈՇԻՉ ՀՈԴ և նշանակում է, որ այն շատ խնդիրներից մեկն է (տես 2 Տիմ. 2: 25-26; 3: 2-5, 7-9): Փողը գործիք է և ոչ թե նպատակ: Այն կարող է աստված դառնալ (մամոնա, տես Մատթ. 6:24; Ղուկ. 16:9-13): NASB թարգմանությունը, ինչպես NKJV և NRSV, փորձում են մեղմել հունարենը (բառ. «բոլոր չարիքների արմատը») հիպերբոլա՝ ավելացնելով «տեսակներ»(NKJV, NRSV, «տեսակներ»): Փողը միակ գայթակղությունը չէ (տես Կող. 3: 5), բայց այն նշանակալի է (տես 1 Տիմ. 3: 3):

▪ **«Որին մի քանիսը անձնատուր լինելով հաւատքիցը մոլորուեցան»** Արդյոք «հավատքը» այստեղ խոսում է փրկության թե՞ բարեպաշտ կյանքով ապրելու մասին: Այս կոնտեքստում կեղծ ուսուցիչները թողել են հավատքը և փորձում են ազդել ուրիշների վրա (տես Մարկ. 13:22): Ազահությունը և ֆինանսական շահագործումը (սեռական շահագործման հետ միասին, ինչպես նաև պահանջել հատուկ գիտելիքներ կամ հասկացողություն) դա կեղծ ուսուցիչների հերթական բնութագիրն է: Եթե փողը դառնում է գերագույն նպատակ, այն դառնում է աստված: NASB թարգմանության մեջ «Մամոնա» Մատթ. 6:24 մեծատառով է գրված, քանի որ ինչպես ենթադրվում է, այն արտացոլում է սիրիական փողի աստծո անունը: Փողասիրությունը կարող է դառնալ կռապաշտություն: Դա կարող է հանգեցնել աղետալի արդյունքների այս կյանքում և գալիք (տես 1 Տիմ. 4: 1; 5: 8; 2 Տիմ. 2: 25-26; Տիտոս 1:16):

Դժվար է հասկանալ կորսված կեղծ ուսուցիչ և խաբված հավատացյալի տարբերությունը: Հաճախ նրանք նայում են, մտածում և գործում միանման: Միայն Աստված գիտի թե ինչ կա մարդու սրտում: Նա է վերջնական որոշում ընդունողը: Հիսուսի խոսքերը Մատթ. 7 («իրենց պտուղներից կճանաչեք նրանց») և 13 (սերմնացանի առակը) շատ մտահոգիչ են թվում մեր նվիրական և ցանկալի սխտեմատիկ աստվածաբանության մեջ: Տես [ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ \(APHISTEMI\)](#) 1 Տիմ. 4: 1):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 6:11-16

¹¹Բայց դու, ով Աստուծոյ մարդ, փախիր սորանցից, եւ հետեիր արդարութեան, աստուածպաշտութեան, հաւատքի, սէրի, համբերութեան, հեզութեան: ¹²Պատերազմիր հաւատքի բարի պատերազմը, եւ բռնիր յաւիտենական կեանքը որի մէջ կանչուեցար, եւ դաւանեցիր բարի դաւանութիւնը շատ վկաների առաջին: ¹³Պատուիրում եմ քեզ Աստուծոյ առաջին ամեն բան կենդանի է անում, եւ Քրիստոս Յիսուսի առաջին որ բարի դաւանութիւնը վկայեց Պոնտացի Պիղատոսի առաջին: ¹⁴Որ դու պատուիրանքը անբիծ եւ անարատ պահես, մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը: ¹⁵Որ իր ժամանակին ցոյց կ'տայ Երանելին եւ միայն Հզօրը, թագաւորների Թագաւորը, եւ տէրերի Տէրը, ¹⁶Որ միայն նա անմահութիւն ունի անմատոյց լոյսի մէջ բնակուած. որ մարդկանցից ոչ ոք չ'տեսաւ եւ ոչ էլ կարող է տեսնել. նորան լինի պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս. Ամէն:

6:11 «Բայց դու փախիր սորանցից» Տիմոթեոսին պատվիրված է (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՀՐԱՄՍՅԱԿԱՆ, տես 2 Տիմ. 2: 22) փախչել 1 Տիմ. 6: 3-10 -ում քննարկված բաներից (այսինքն, անվերջ հակասություններ և / կամ փողասիրություն): Սա հակադրվում է նրան, որ նա պետք է քարոզեր և սովորեցներ (տես 1 Տիմ. 6:2), որոնք թվարկված են 1 Տիմ. 5: 1-6: 2 ա: Քրիստոնեությունը ներառում է նախնական և շարունակական ընտրություններ:

Արևելահայերեն «դու, ով Աստուծոյ մարդ»
Արևմտահայերեն «դու՛ն, ո՛վ մարդ Աստուծոյ»

NASB, NRSV

TEV « դու Աստծո մարդ»

NKJV «Ով Աստծո մարդ»

NJB «ինչպես Աստծուն նվիրված մեկը»

Սա պատվաբեր տիտղոս էր Հին Կտակարանում, որը օգտագործվում էր Մովսեսի (այն է 2 Օր. 33:1; Հեսու 14:6), Եղիայի, Եղիսեի, Սամուելի, Դավիթի և անանուն մարգարեների համար (այն է 1 Թագ. 2:27; 3 Թագ. 12:22; 13: 1): 2 Տիմ. 3: 16,17 այն օգտագործվում է Աստծո խոսքով սպառազինված բոլոր հավատացյալների համար: Կեղծ ուսուցիչները Աստծո մարդիկ չեն, ոչ էլ սպառազինված են Աստծո Խոսքով:

▪ **«էլ հետևիր»** Սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը շարունակական հրաման է ցույց տալիս: Առաջին («փախուստը») բացասական է, երկրորդ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ («հետապնդում») դրական: Երկուսն էլ կարևոր են դասավանդման և անձնական արդարության համար:

▪ **«արդարութեան»** Սա պետք է վերաբերվի սուրբ ապրելակերպին (տես Հակ. 3: 13-18), այլ ոչ թե վերագրյալ (արդարադատական) արդարությանը, ինչպես Հռ. 4: Հռոմեացիս 1-8 գլուխները (վարդապետական ամփոփագիր) խոսում են Քրիստոսի մեջ ունեցած մեր դիրքը (այսինքն արդարացում): Հովվական Նամակները (նամակներ կեղծ ուսմունքների դեմ) խոսում են մեր ունեցվածքի տիրապետման մասին (այսինքն, սրբացում, տես Հատուկ Թեմա 2 Տիմ. 2:21):

«Արդարության» համար տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ](#) ՏԻՏՈՍ 2:12.

Քրիստոնեական հատկանիշների այս ցանկը հակառակ է կեղծ ուսուցիչների ապրելակերպին: Իրենց պտուղներով դուք կճանաչեք նրանց (տես Մատթ. 7):

▪ **«աստուածաշնորհներ»** Սա կրկնվող թեմա է (տես 1 Տիմ. 3:10; 4: 7-8; 6: 3,5-6; 2 Տիմ. 3: 5, տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:7): Հավիտենական (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:7) կյանքը ունի տեսանելի և շոշափելի հատկանիշներ: Աստծուն ճանաչելու համար պետք է (ցանկանալ լինել) լինել Աստծո նման (տես Մատթ. 5:48):

Արևելահայերեն «համբերութեան»

Արևմտահայերեն «համբերութեան»

NASB, NJB «հաստատականություն»

NKJV «համբերություն»

NRSV, TEV «տոկունություն»

Հունարեն *hupomonē* բառը ունի մի քանի հնարավոր անգլերեն թարգմանություններ: *A Greek-English Lexicon of the New Testament*, Bauer, Arndt, Gingrich, and Danker նշում են, որ այս խոսքը նշանակում է համբերել տառապանքի և չարչարանքի ժամանակ (էջ 846): Տիմոթեոսը կանգնած էր 1) խնդիրների, 2) խնդիրներ առաջացնողների և 3) խնդիրներից տանջվողներին համբերություն սովորեցնելու առջև: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:16.

▪ **«հեզություն»** Տիմոթեոսը ոչ միայն պետք է տոկար և համբերեր, այլև դա պետք է աներ հավատարիմ, սիրով և հեզության հոգով (տես 1 Տիմ. 3:3; 2 Տիմ. 2:25; Տիտոս 3:3; Գաղ. 6: 1; Հակ. 1:21; 3: 13,17; 1 Պետ. 2:18; 3: 4):

6:12 «Պատերազմիր հաւատքի բարի պատերազմը» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (deponent) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այստեղ օգտագործվում են համանման ԲԱՅԸ և ԳՈՅԱԿԱՆԸ՝ ուժեղացնելու մարզական (տես 1 Տիմ. 1:18, Եբր. 12:1-3) կամ ռազմական (տես Եփ. 6:10-18) փոխաբերությունը (Պողոսը նույնպես «կռվել է բարի պատերազմը» (տես 2 Տիմ. 4: 7): Մենք անգլերեն «տառապանք, հոգևարք» բառը ստանում ենք այս փոխաբերությունից:

- **«բռնիք յաւիտենական կեանքը»** Սա ԱՕՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես 1 Տիմ. 6:19): Սա փոխաբերություն է մրցույթին հաղթող մարզիկի համար, ով ստանում է հաղթողի մրցանակ կամ ծաղկեպսակ: Սա ցույց է տալիս, որ մարդը կարիք ունի նախնական (տես 1 Տիմ. 6:12 ք) և շարունակական արձագանքի հավատքով: Հաջորդ արտահայտությունը ցույց է տալիս, որ Աստծո պահող գործությունը (տես 1 Տիմ. 6: 12գ): Փրկության այս ուխտի երկու ասպեկտներն էլ թե ճշմարիտ են և թե վավերական: նրանք պարադոքսալ են, բայց և ճշմարիտ: Հավիտենական կյանքը դա ավետարանի հույսի վերջնական իրականացումն է նշանակում (այսինքն, փառավորում, տես Հռ. 8:30):

- **«որի մեջ կանչուեցար»** Այս շեշտադրումը Աստծո իշխանության և գործության (տես 1 Կոր. 9: 9), վրա պետք է համակցված լինի մեր ամենօրյա հավատքի կյանքի հետ: Նախասահմանությունը և համբերությունը պետք է դիտվեն միասին որպես մեկ մետաղադրամի երկու կողմեր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ / ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՈՒՄԻԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ

Ընտրությունը հրաշալի վարդապետություն է: Այնուամենայնիվ, դա ոչ թե կողմնապահության կոչ է, այլ միջոց, գործիք՝ ուրիշների փրկության համար: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվել է ծառայության համար: Նոր Կտակարանում այն օգտագործվում է հիմնականում փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ հակասությունը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշնչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հռոմեացիս 9՝ Աստծո ինքնիշխան ընտրությունը և Հռոմեացիս 10՝ մարդու համար անհրաժեշտ արձագանքը (տես Հռ. 10: 11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ. 1: 4-ում: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն է և բոլորն էլ կարող են ընտրվել Նրա մեջ (Կարլ Բարթ): Հիսուսը Աստծո «այոն» է, մարդու կարիքի համար (Կարլ Բարթ): Եփ. 1: 4 նույնպես օգնում է պարզաբանել հարցը, հավաստելով, որ նախասահմանության նպատակը ոչ թե երկինքն է, այլ սրբությունը (Քրիստոսանմանություն): Մեզ հաճախ գրավում է ավետարանի օգուտը, շահը և անտեսում ենք պատասխանատվությունը: Աստծո կանչը (ընտրությունը) ժամանակի և հավիտենականության համար է:

Վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անկախ և առանձին հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ աստղը: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան, ոչ թե արևմտյան, ժանրերում: Մենք չպետք է հեռացնենք վարդապետական ճշմարտությունների դիալեկտիկական (պարադոքսալ) գույգերի պատճառած լարվածությունը.

- 1.Նախասահմանությունը և մարդու ազատ կամքը
- 2.Հավատացյալների ապահովությունը և համբերելու կարիքը
- 3.Ադամական մեղքը և կամավոր մեղքը
- 4.Անմեղություն (պերֆեկցիոնիզմ) և քիչ մեղավոր

5. Նախասկզբնական ակնթարթային արդարացում և սրբացում ու աստիճանաբար սրբացում
6. Քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվություն
7. Աստծո գերազանցությունը և Աստծո ներկայությունը
8. Աստված որպես վերջնականապես, ամբողջությամբ անճանաչելի և Աստված ճանաչված Սուրբ Գրքի միջոցով
9. Աստծո Թագավորությունը ներկայում և վերջնական իրականացումը ապագայում
10. Ապաշխարությունը որպես Աստծո պարզ և որպես մարդու ուխտի անհրաժեշտ արձագանք
11. Հիսուսը որպես Աստված և Հիսուսը որպես մարդ
12. Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը

«Ուխտի» աստվածաբանական գաղափարը միավորում է Աստծո ինքնիշխանությունը (ով միշտ նախաձեռնում է և սահմանում օրակարգը) պարտադիր նախնական և շարունակական գոյացող հավատքի պատասխանի միջոցով (տես Մարկ. 1:15; Գործք 3:16, 19; 20:21): Զգուշացեք պարադոքսի մի կողմի ապացուցման և մյուսի արժեզրկման մասին: Զգուշացեք միայն ձեր սիրած վարդապետությունը կամ աստվածաբանության համակարգը հաստատելու համար:

▪ **«ԷՆ ՊԱՆԱՆԵՑԻՐ ԲԱՐԻ ՊԱՆԱՆՈՒԹԻՆՆԵՐ»** Սա հունարեն *homologeō* բառն է, որը նշանակում է հրապարակայնորեն հայտարարել կամ դավանել (տես 1 Հովհ. 1: 9): Սա, կարծես վերաբերվում է Տիմոթեոսի մկրտությանը, որպես նրա հավատքի հրապարակավ դավանություն: Վաղ հավատացյալները կրկնեցին «Հիսուսը Տեր է» բանաձևը (տես Հռ. 10: 9-13), որպես Հիսուսի հանդեպ ունեցած հավատքի իրենց անձնական և հրապարակային խոստովանություն կամ դավանություն: Այս կարճ արտահայտությունը ցույց էր տալիս Նրա մարդեղությունը, աստվածությունը, քավությունը և վեհացում (տես Փիլ. 2: 6-11): Տես Հատուկ Թեմա: Ի՞նչ է նշանակում «ընդունել», «հավատալ», «խոստովանել / դավանել» և «կանչել»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ/ՂԱՎԱՆԵԼ

- Ա. «Խոստովանության» կամ «դավանանք» բառի համար կան նույն հունարեն արմատը ունեցող երկու ձևեր *homologeō* և *exomologō*: Բարդ տերմինը *homo*, նույնը; *legō*, խոսել; կամ *ex*,-ից: Հիմնական իմաստն է՝ ասել նույնը, համաձայնվել: Հունարեն *ex* ՆԱԽԴԻՐԸ ավելացված է՝ հրապարակային հռչակման գաղափարը ընդգծելու համար:
- Բ. Այս բառախմբի անգլերեն թարգմանություններն են
 1. գովերգել, փառաբանել
 2. համաձայնել
 3. հայտարարել, հռչակել (տես Մաթ. 7:23)
 4. դավանել
 5. խոստովանել (տես Եբր. 4:14; 10:23)
- Գ. Այս բառախումբն ունի երկու հակադիր օգտագործման ձևեր
 1. փառաբանել (Աստծուն)
 2. մեղքը ընդունել

Սա զարգացավ այն ժամանակ, երբ մարդը գիտակցեց Աստծո սրբությունը և իր մեղավոր վիճակը: Այս ճշմարտություններից մեկը գիտակցելու համար պետք է երկուսն էլ ընդունել:
- Դ. Այս բառախմբի գործածությունը Նոր Կտակարանում
 1. խոստանալ (տես Մատթ. 14:7; Գործք 7:17)

2. համաձայնվել կամ ինչ որ մի բանի թույլատրություն (տես Հովհ. 1:20; Ղուկ. 22:6; Գործք 24:14; Եբր. 11:13)
3. փառաբանել (տես Մատթ. 11:25; Ղուկ. 10:21; Հն. 14:11; 15:9; Եբր. 13:15)
4. հաստատել, համաձայնվել
 - ա. Մարդու հետ (տես Մատթ. 10:32; Ղուկ. 12:8; Հովհ. 9:22; 12:42; Հն. 10:9; Փիլ. 2:11; 1 Հովհ. 2:23; Հայտ. 3: 5)
 - բ. ճշմարտության հետ (տես Գործք 23:8; 1 Հովհ. 4:2)
5. հրապարակել, հայտարարել (կրոնական հաստատման մեջ ձևավորված իրավական իմաստ, Գործք 24:14; 1 Տիմ. 6:13)
 - ա. առանց մեղքի ընդունման (տես 1 Տիմ. 6:12; Եբր. 10:23)
 - բ. Հանցանքի խոստովանություն (տես Մատթ. 3: 6; Գործք 19:18; Եբր. 4:14; Հակ. 5:16; 1 Հովհ. 1:9)

- **«շատ վկաների առաջին»** Սա կարող է վերաբերվել
 1. Տիմոթեոսի ձեռնադրությանը (տես 1 Տիմ. 5:14; 2 Տիմ. 1: 6)
 2. նրա հրապարակային դավանումը տեղական եկեղեցու առաջ (տես Գործք 16: 1-2)
 3. ավելի հավանական է նրա մկրտությանը

6:13 «Պատուիրում եմ քեզ Աստուծոյ առաջին» 13-16 համարները հունարենում մեկ նախադասություն են: Ինչպես Տիմոթեոսը Հիսուսին դավանեց հրապարակավ (տես Մատթ. 10:32-33), հիմա Պողոսը նրան խրատում է Աստծո առաջ (տես 1 Տիմ. 5:21; 2 Տիմ. 4: 1):

Հովվական նամակներում Պողոսը հաճախ «խրատում» կամ պատվիրում է Տիմոթեոսին: Եբրեմն դրանք վերաբերվում են այն բաներին, որոնք Տիմոթեոսը պետք է անի (տես 1 Տիմ. 1:3, 18; 4:11; 5:21; 6:13; 2 Տիմ. 4:1) և եբրեմն այն, ինչ նա պետք է ասեր ուրիշներին (տես 1 Տիմ. 5: 7,21; 6:17; 2 Տիմ. 2:14):

«Քեզ» ԴԵՆԱՆՈՒՆԸ կապված է «պահել» ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ հետ 1 Տիմ. 6:14: Որոշ ձեռագրերում այն հանդիպում է ԲԱՅԻՑ հետո «Ես պատվիրում եմ» 1 Տիմ. 6:13 (MSS ա2 , A, D, H): Այն բացակայում է ս*, F, G ձեռագրերում: UBS⁴ չի կարող որոշել, թե որն է իրականը: Ակնհայտ է, որ ինչպես շատ հունարեն տարբերակներում այն չի ազդում (13-16 համարները մեկ ամբողջ են)երկար նախադասության իմաստի վրա:

- **«ամեն բան կենդանի է անում»** Աստված է բոլոր կենդանյաց կյանքի աղբյուրը (տես 1 Տիմ. 6:16; 1:17; 2 Տիմ. 1:10): Իրանից բացի կյանք չկա: Հին Կտակարանի ՅԱՀՎԵԻ անունը առաջացել է եբրայերեն «լինել» բայից (տես Ելից 3:14) և այս գաղափարի շուրջ կա բառախաղ: Աստված միակն է, ով կարող է տալ և պահել ֆիզիկական և հավիտենական կյանքը:

Այս տերմինը նշանակում է թե (1) կյանք տալ (տես 1 Թագ. 2: 6; 1 Տիմ. 6:13) և թե (2) պահել կյանքը (տես Դատ.8:19; 1 Թագ. 27:9, 11; 1 Թագ. 21:31; Ղուկ. 17:33; Գործք 7:19): ՅԱՀՎԵՆ եւ Քրիստոսի միջոցով:

- **«եւ Քրիստոս Յիսուսի առաջին որ բարի դաստիարակները վկայեց Պոնտացի Պիղատոսի առաջին»** Հիսուսը կոչվում է «Հավատարիմ վկան» (տես Հայտ. 1: 5; 3:14): «Առաջ» (*enōpion*) տերմինը կարող է նշանակել (1) «առջև» կամ (2) «ընթացքում»: Հետևաբար, սա կարող էր վերաբերել Հիսուսի ողջ կյանքի վկայությանը, կամ մասնավորապես Նրա փորձություններին (տես Մատթ. 27: 2; Հովհ. 18:33-37):

▪ **6:14 «Որ դու պատուիրանքը անբիծ եւ անարատ պահես»** Սա կարող է վերաբերվել 1 Տիմ. 6:11 և 12-ին: Տիմոթեոսը պետք է ապրեր հնազանդ և մաքուր կյանքով, ի տարբերություն կեղծ ուսուցիչների: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 2:

▪ **«մինչև յայտնությունը»** 2 Տիմ. 1:10 և Տիտոս 2:11 այս տերմինը (*epiphaneia*) օգտագործվում է Հիսուսի առաջին գալստյան համար, բայց այստեղ և 2 Թեմ. 2: 8; 2 Տիմ. 4: 1,8; Տիտոս 2:13 այն օգտագործվում է Նրա Երկրորդ Գալստյան համար: Երկրորդ Գալուստը միշտ եղել է ուժեղ խթան՝ ապրելու քրիստոնեական կյանքով: Տես Հատուկ Թեմա Տիտոս 2:13:

6:15 «Որ իր ժամանակին ցոյց կ'տայ» Այս նույն արտահայտությունն օգտագործվում է 1 Տիմ. 2: 6 և Տիտոս 1: 3-ում՝ Հիսուսի առաջին գալստյան համար: «Նա» նկարագրում է Հայր Աստծո գիտությունը և վերահսկողությունը Մեսիայի առաջին և երկրորդ գալուստների վրա (տես Մատթ. 24:36; Գործք 1: 7): Jerome Biblical Commentary (էջ 357) ենթադրում է, որ 1 Տիմ. 6: 15-16-ը քրիստոնեական օրհներգից մեջբերում է (տես 1 Տիմ. 1:17; 3:16; 2 Տիմ. 2: 11-13):

▪ **«Երանելին եւ միայն Հօրը, թագավորների Թագավորը, եւ տերերի Տէրը»** Այս աղոթքը նման է 1 Տիմ. 1:17: Այս բնութագրող արտահայտություններն ի սկզբանե և կոնստեքստում վերաբերում են Հայր Աստծուն.

1. «Երանելի/օրհնված» (1 Տիմ. 1:1)
2. «միայն Հօրը/Գերիշխանը» (1 Տիմ. 1:17)
3. «Տերերի Տերը» (2 Օր. 10:17; Սաղ. 136: 3)

«Թագավորների թագավոր»-ը զուգահեռ է «Տերերի տեր» տիտղոսին և օգտագործվում է Հիսուսի համար Հայտ. 17:14; 19:16: Այն ի սկզբանե ասվում էր Միջագետքի թագավորների համար, սակայն օգտագործվել է հրեաների կողմից միջկտակարանյան ժամանակահատվածում ՅԱՀՎԵԻ համար:

6:16 «Որ միայն նա անմահություն ունի» Սա «մահ» տերմինն է ԱԼՖԱ ժխտական մասնիկով (տես 1 Կոր. 15:53-54): Սա կարծես թե, «ՅԱՀՎԵԻ» հին կտակարանյան անվան հիմնական իմաստն է՝ մշտապես ապրող, միակ կենդանի Աստվածը (տես Ելք 3.14-16): Ուշադրություն դարձրեք մոնոթեիզմի գաղափարի վրա (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 2: 5) «որ միայն Նա ունի»: ՅԱՀՎԵՆ է կյանքի ծագումը և աղբյուրը և ուրիշը չկա:

▪ **«անմատոյց լոյսի մեջ բնակուած»** «Փառքի ամպը» ռաբբիները կոչեցին *Shekinah*, որը երբայերեն «բնակվել» տերմինից է առաջացել (այսինքն «մշտապես բնակվել» տես Ելից 24: 17; 23: 20):

▪ **«որ մարդկանցից ոչ ոք չ'տեսաւ եւ ոչ էլ կարող է տեսնել»** Հին Կտակարանում Աստծո սրբությունը այնքան զարմանալի էր, որ ոչ մի մեղավոր մարդ չէր կարող Աստծուն տեսնել և ապրել կամ ողջ մնալ (տես Ծննդ. 16: 13; 32:30; Ելից 20:19; 33: 18-20; Դատ. 6:22-23; 13:22; Ես. 6:5; Հովհ. 6:46; 1 Հովհ. 4:12): Նոր Կտակարանում հավատացյալները տեսել են Նրան, իսկապես հայտնված Հիսուսում (տես 1 Հովհ. 1:18; 6:46) և կտեսնեն նրան անձամբ մեկ օր (տես Մատթ. 5: 8; Եբր. 12:14; Հայտ. 22: 40):

▪ **«նորան լինի պատիւ եւ զօրութիւն յաիտեանս»** Պողոսը հաճախ ընդհատում է՝ Հայր Աստծուն գովաբանելու համար (տես 1 Տիմ. 1:17): Որդին Հոր ստեղծագործության, հայտնության,

փրկության և դատաստանի գործիքն է: Սակայն հավիտենական թագավորությունը պատկանում է Հորը Որդու միջոցով (կարդա Դան 7:13; 1 Կոր. 15:25-28):

- «Ամեն» Սա ճշմարտությունը հաստատող եբրայերեն իդիոմա է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄԵՆ

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» տերմինը առաջացել է եբրայերեն բառից
1. «ճշմարտություն» (*emeth*, BDB 49)
 2. «ճշմարտություն» (*emun, emunah*, BDB 53)
 3. «հավատք» կամ «հավատարմություն»
 4. «վստահություն» (*dmn*, BDB 52)
- Բ. Այս բառի ստուգաբանության համաձայն նշանակում է մարդ, ով ունի ֆիզիկական կայուն դիրքորոշում և ոտքերի վրա հաստատ կանգնած է: Հակառակը կլինի մեկը, ով անկայուն է, սայթաքում է (տես Սաղ. 35:6; 40:2; 73:18; Եր. 23:12) կամ գայթակղվում (տես Սաղ. 73:2): Այս բառացի օգտագործման արդյունքում մշակվեց փոխաբերական իմաստ հետևյալ հասկացողություններն արտահայտելու համար՝ հավատարիմ, հուսալի, անձնվեր և վստահելի (տես Ամբ. 2: 4):
- Գ. Հատուկ օգտագործում (տես Հատուկ Թեմա: Հավատք, վստահություն, հուսալիություն և հավատարմություն Հին Կտակարանում)
1. սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
 2. հավաստիացում, վստահություն, Ելից 17:12
 3. կայունություն, Ելից 17:12
 4. կայունություն, Ես. 33: 6
 5. ճշմարիտ, 1 Թագ. 10:6; 17:24; 22:16; Առ. 12:22
 6. ամուր, հաստատ, 2 Մնաց. 20:20; Ես. 7: 9
 7. հուսալի (Թորա), Սաղ. 119: 43,142,151,160
- Դ. Հին Կտակարանում օգտագործվում են երկու այլ եբրայերեն տերմիններ ակտիվ հավատքի համար:
1. *bathach* (BDB 105), վստահություն
 2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես Ծննդ. 22:12)
- Ե. Հավատք կամ վստահելիություն բառի իմաստից զարգացավ կրոնական օգտագործման ձև, որ ուրիշի ճշմարիտ կամ հավաստի միտքը հաստատելու համար էր օգտագործվում (տես Թվ. 5: 22; 2 Օր. 27: 15-26; 3 Թագ. 1:36; 1 Մնաց. 16: 36; Նեեմ. 5:13; 8: 6; Սաղ. 41:13; 72:19; 89:52; 106: 48; Եր. 11: 5; 28: 6):
- Զ. Այս տերմինի աստվածաբանական բանալին ոչ թե մարդկության հավատարմությունն է, այլ ՅԱՀՎԵԻ (տես Ելից 34: 6; 2 Օր. 32:4; Սաղ. 108:4; 115: 1; 117: 2; 138: 2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵԻ ողորմած, հավատարիմ, ուխտի նվիրվածությունն է և Նրա խոստումները: Նրանք, ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵԻՆ, պետք է լինեն Նրա նման (տես Ամբ. 2: 4): Աստվածաշունչը մարդկության մեջ Աստծո պատկերի վերականգնելու պատմությունն է (տես Ծննդ. 1: 26-27): Փրկությունը վերականգնում է Աստծո հետ մտերմիկ փոխհարաբերություն ունենալ մարդկության ունակությունը: Հենց սրա համար ենք մենք ստեղծվել:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» բառի օգտագործումը, որպես կրոնական հավաստիության վերջնական հաստատում, տարածված է Նոր Կտակարանում (տես 1 Կոր. 14:16; Հայտ. 1: 7; 5:14; 7:12):
- Բ. Աղոթքին մոտ գտնվող տերմին, որը օգտագործվում է Նոր Կտակարանում (տես Հռ. 1:25; 9: 5; 11:36; 16:27; Գաղ. 1: 5; 6:18; Եփ. 3:21; Ֆիլ. 4:20; 2 Թես. 3:18; 1 Տիմ. 1:17; 6:16; 2 Տիմ. 4:18):
- Գ. Հիսուսը միակն է, ով օգտագործեց տերմինը (կրկնապատկված Հովհ. 25 անգամ, այսինքն, Հովհ. 1:51; 3: 3,5,11 և այլն), ներկայացնելու նշանակալի մտքեր (տես Ղուկ. 4:24; 12: 37; 18: 17,29; 21:32; 23:43):
- Դ. Այն օգտագործվում է որպես կոչում Հիսուսի համար Հայտ. 3: 14 (տես նաև 2 Կոր. 1:20, հնարավոր է տիտղոս ՅԱՀՎԵԻ համար Ես. 65:16):
- Ե. Հավատարմության կամ հավատքի, հուսալիության կամ վստահության գաղափարը արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմիններով, որը թարգմանվում է անզլերեն, որպես «վստահություն», «հավատք» (տես Հատուկ Թեմա: Հավատք կամ Վստահություն):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 6:17-19

¹⁷Ներկայ աշխարհիս հարուստներին պատուիրիր որ չ'գոռոզանան, եւ ոչ էլ ունայն մեծութեան վերայ յոյս դնեն, այլ կենդանի Աստուծոյ վերայ որ ամեն բան տալիս է մեզ առատապէս վայելելու համար: ¹⁸Բարի գործեն, և բարի գործերով հարստանան, առատաձեռն եւ կարօտներին հաղորդող լինեն: ¹⁹Իրանց անձերի համար բարի հիմ գանձեն հանդերձեալի համար, որ յախտենական կեանք ձեռք բերեն:

6: 17-19 Կարող է հարց ծագել ընթերցողի մոտ 1 Տիմ. 6: 17-19-ը ուշացած միտք էր, թե Պողոսը ավելի շատ տեղեկություններ է ստացել Եփեսոսի տնային եկեղեցիների մասին: Հնարավոր է նաև, որ Պողոսը գրած լինի 1 Տիմ. 6: 17-21, ինչպես պարբերաբար փակում էր իր նամակները (տես 2 Թես. 3:17-18):

6:17 «Ներկայ աշխարհիս հարուստներին պատուիրիր որ չ'գոռոզանան» 9-րդ համարը զգուշացնում է փողի հանդեպ ունեցած չար ցանկության մասին, 17-րդ համարը զգուշացնում է նրանց, ովքեր ունեն փող և իրենց հավատքը դրել են դրա վրա, այլ ոչ թե Քրիստոսի (տես Մատթ. 6: 19-21; 13:22; 19: 23-30; Հակոբոս 1:9-11; 5: 1-6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՍ ԴԱՐԸ ԵՎ ԵԿՈՂ ԴԱՐԸ

Հին Կտակարանի մարգարեները ապագան պատկերացնում էին որպես ներկայի ընդլայնում: Նրանց համար ապագան կլինի աշխարհագրական Իսրայելի վերականգնումը: Այնուամենայնիվ, նույնիսկ նրանք դա տեսնում էին որպես նոր օր (տես Ես. 65:17; 66:22): Քանի որ Աբրահամի սերունդները շարունակում էին մերժել ՅԱՀՎԵԻՆ (նույնիսկ գերությունից հետո) նոր օրինակ/պարադիգմ զարգացավ հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն, I Ենք, IV Եզրա, II Բարուք): Այս գրվածքները բաժանում են երկու ժամանակաշրջանները ներկա չար ժամանակ, որտեղ տիրում է սատանան և գալիք արդարության ժամանակաշրջանը, որը տիրում է Մուրբ Հոգին և հաղթանակը, որը կլինի Մեսիայի գալուստով (հաճախ դիմամիկ մարտիկ):

Աստվածաբանության (վախճանաբանության) այս շրջանում ակնհայտ զարգացում կա:

Աստվածաբանները սա անվանում են «առաջադեմ հայտնություն»: Նոր Կտակարանը հաստատում է երկու դարաշրջանների այս նոր տիեզերական իրականությունը (այսինքն ժամանակավոր դուալիզմ):

Հիսուս	Պողոս	Երբայեցիս (Պողոս)
Մաթ. 12:32; 13:22,39	Հռ. 12:2	Եբր.1:2;Ո6:5; 11:3
Մարկ. 10:30	1 Կոր. 1:20՝ 2:6,8; 3:18	
Ղուկ. 16:8; 18:30; 20:34-35	2 Կոր. 4:4 Գաղ. 1:4 Եփ. 1:21; 2:2,7; 6:12 1 Տիմ. 6:17 2 Տիմ. 4:10 Տիտոս 2:12	

Նոր Կտակարանի աստվածաբանության մեջ այս երկու հրեական ժամանակները անսպասելի և անտեսված կանխատեսումների պատճառով համընկել է Մեսիայի երկու գալստյան հետ: Հիսուսի մարմնացումը իրականացրեց Հին Կտակարանի մարգարեությունները, որը սկիզբ դրեց նոր դարի (Դան 2:44-45): Այնուամենայնիվ, Հին Կտակարանը Նրա գալուստը դիտում էր որպես Դատավոր և Հաղթող, բայց Նա առաջին հերթին եկավ որպես Տառապող Ծառա (տես Ես. 53; Ջաք. 12:10), խոնարհ ու հեզ (տես Ջաք. 9: 9): Նա կվերադառնա իշխանության այնպես, ինչպես կանխագուշակել է Հին Կտակարանը (տես Հայտ. 19): Այս մարգարեության իրականացման երկու փուլերը ցույց են տալիս Աստծո Թագավորության ներկա լինել (բացված է), բայց նաև ապագան (լիովին չի ավարտվել): Սա արդեն Նոր Կտակարանի լարվածությունն է, արդեն բայց ոչ դեռ:

▪ **«Էլ ոչ էլ ունայն մեծութեան վերայ յոյս դնեն»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ է: Մարդիկ հակված են վստահել իրենց ռեսուրսներին, այլ ոչ թե Աստծո ռեսուրսներին (տես 1 Տիմ. 4: 10; 5: 5): Հիսուսի ամենաուժեղ բառերից ոմանք ուղղված էին հարուստներին (տես Ղուկ. 18: 18-30):

- **«այլ Աստուծոյ վերայ»** Կան մի քանի տարբերակներ
 1. Աստծո վրա - Ռ, F, G
 2. Աստծո վրա - MSS A, I, P
 3. կենդանի Աստծո վրա - MS D *
 4. կենդանի Աստծո վրա - MS D²

UBS⁴ # 1 տարբերակին տալիս է «Ա» վարկանիշ: Նկարագրող ձևը վերցված է 4: 10:

6:18 «պատուիրիր» Ահա Պողոսի եռապատիկ ուղեցույցը նրանց համար, ովքեր ունեն աշխարհիկ ապրանքներ:

1. շարունակել բարին գործել (տես 1 Տիմ. 5:10; 2 Տիմ. 2:21; 3:17; Տիտոս 3: 1,8,14)
2. պատրաստ լինել կիսվել ուրիշների հետ
3. առատաձեռն լինել (տես 2 Կոր. 8-9)

6:19 Այս համարը հիշեցնում է Հիսուսի Լեռան քարոզը, հատկապես 6-րդ գլուխը (տես Ղուկ. 12:15): Այն օգտագործում է երկու փոխաբերություններ 1) ճշմարիտ հարստություն դիզել և (2) հաստատուն և ամուր հիմք ստեղծել: Հարստության իմաստուն կերպով օգտագործողը երկուսն էլ անում է: Դրանք օգնում են հավատացյալներին ամուր բռնելու իրական կյանքը (այսինքն հավիտենական կյանքը, տես 1 Տիմ. 6:12):

Արևելահայերեն «յաւիտենական կեանք»
Արևմտահայերեն «յաւիտենական կեանքը»

NASB «իրական կյանք»

NKJV «հավիտենական կյանք»

NRSV «կյանքը, որ իսկապես կյանք է»

TEV «կյանքը, որն իրական կյանքն է»

NJB «միակը, որը նման է իրականին»

Անգլերեն թարգմանությունների բազմազանությունը ներառում է ընտրությունը

1. *ontōs* - MSS ճ, A, D *, F, G

2. *aiōniou* - MS D²

3. երկուսն էլ – փոքրատառերով 69, 296, 467 և 1175 (այդ կրկնօրինակները պետք է ունենային հունարեն ձեռագրերը, որոնք ունեն երկու տարբերակ)

UBS⁴ թույլ է տալիս # 1 տարբերակ և «Ա» վարկանիշ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 1 Տիմոթեոս 6:20-21

²⁰Ով Տիմոթեոս, պահիր քեզ տրուած աւանդը, եւ ետ կաց պիղծ ունայնաբանութիւններից եւ սուտանուն գիտութեան հակառակութիւններից. ²¹Որ մի քանիսը ընդունելով հաւատքիցը մոլորուեցան. Շնորհքը քեզ հետ լինի: Ամէն:

6: 20-21 Այս եզրափակիչ համարները (հավանաբար 1 Տիմ. 6:17-19) հնարավոր է, որ Պողոսի ձեռքով են գրվել՝ նամակը հեղինակային դարձնելու համար (տես 2 Թեմ. 3: 17-18):

6:20 «պահիր քեզ տրուած աւանդը» ԲԱՅՇ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: «Վստահված, ավանդված» բառը բանկային տերմինը վերաբերվում է «ավանդ»-ին, որը երեք անգամ օգտագործվում է Հովվական Նամակներում «ավետարանի» համար (տես 1 Տիմ. 1:11, տես լրիվ ծանուցումը 1 Տիմ. 1:18) կամ քրիստոնեական ճշմարտության մարմնին (տես Գործք 6:7; 13:8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Փիլ. 1:27; Հուդա 1: 3,20): Հավատացյալները Ավետարանի տնտեսներն են (տես 1 Կոր. 4: 1-2; 2 Տիմ. 1:12, 14):

▪ **«եւ ետ կաց պիղծ ունայնաբանութիւններից եւ սուտանուն հակառակութիւններից»** «Խուսափել» ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է, որը օգտագործվում է որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: 1 Տիմոթեոսը գրված է հիմնականում հերետիկոսության մասին, ոչ թե եկեղեցու կազմակերպման: Գրքում ներկայացված ուղեցույցները անմիջականորեն կապված են կեղծ ուսուցիչների խնդիրների հետ, ոչ թե պարտադիր համընդհանուր սկզբունքներ են բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիների համար:

▪ **«գիտութեան»** Հովվական Նամակներում կեղծ ուսուցիչները «հրեա օրինականների» և հույն գնոստիկների միացությունն է (շատ նման են Կողոսացիներին և Եփեսացիներին): «Գիտությունը» սովորաբար գաղտնի կամ հատուկ բացահայտված գիտելիք էր՝ այդ կեղծ ուսուցիչների պահանջը:

Այս կեղծ ուսուցիչները ճշմարտությունը բաժանում էին ճշմարտությունից, արդարացում սրբացումից և փրկությունը դարձան գաղտնի, հատուկ գիտելիքներ, բաժանված աստվածապաշտությունից:

6:21

Արևելահայերեն «Որ մի քանիսը ընդունելով հաւատքիցը մոլորուեցան»

Արևմտահայերեն «Մէկ քանիները զանոնք դաւանելով հաւատքէն մոլորեցան»

NASB «որը ոմանք դավանել են և դրանով իսկ մոլորվել են հավատքից»

NKJV «դավանելով այն, ոմանք շեղվել են հավատքից»

NRSV «դավանելով, ոմանք բաց թողնեցին հավատքը»

TEV «ոմանց համար ասվում է, որ այն ունեցել են, բայց արդյունքում նրանք կորցրել են հավատքի ճանապարհը»

NJB «ընդունելով դա, ոմանք բաց են թողել հավատքի նպատակը»

Այս նույն բառը օգտագործվում է 1 Տիմ. 1: 6 նկարագրելու կեղծ ուսուցիչներին, նաև տես 1 Տիմ. 1:19; 4: 1-2; 5:15; 6:10: Այս գրքում շատ ուժեղ զգուշացումներ կան:

Հիշեք քրիստոնեությունը (1) այն անձն է, որին պետք է ողջունել 2) վարդապետությունը, որը պետք է հավատալ և (3) ապրելու համար համապատասխան կյանք: Եթե սրանցից որևէ մեկը չի շեշտվում կամ դուրս է մնում, ապա մեծ խնդիրներ են առաջանում (տես Մատթ. 7:21-27):

- **«Շնորհքը քեզ հետ լինի»** «Քեզ»-ը ՀՈԳՆԱԿԻ է (MS D): Սա ցույց է տալիս, որ նամակը, չնայած հասցեագրված էր անհատին (եզակի «քեզ» MSS ռ, A, F, G) պետք է հրապարակայնորեն կարդացվեր: Պողոսը նրանց համար աղոթում էր այսպես Աստծո շնորհքը և ճշմարիտ գիտությունը (տես 1 Տիմ. 6:20): Այս նույն ՀՈԳՆԱԿԻ ավարտը գտնվում է բոլոր Հովվական Նամակներում (տես 2 Տիմ. 4:22; Տիտոս 3:15):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչու՞ քրիստոնեական եկեղեցին չի պայքարել ստրկության հարցում (Պողոսի մյուս հատվածները, որոնք խոսում են ստրուկների մասին, 1 Կոր. 7:21-24; Գաղ. 3:28; Եփ. 6:5-9; Կոր. 3: 22-25; Փիլիմոն 1:16,17; Տիտոս 2: 9; 1 Պետ. 2:18):
2. Ի՞նչ են ասում 1 և 2 համարները ասում մեր ժամանակակից գործատու- աշխատակից փոխհարաբերությունների մասին:
3. Ի՞նչ է հերետիկոսությունը:
4. Ո՞րն է տարբերությունը կեղծ ուսուցչի և մեկնաբանության մեջ տարբերությունների միջև:
5. Արդյո՞ք փողը չարիք է:
6. Նկարագրեք կեղծ ուսուցիչների աստվածաբանությունը, ինչքան որ կարող եք:

ՏԻՏՈՍ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. Ընդհանուր տեղեկություններ

Ա. Տիտոսը Պողոսի «Հովվական նամակների» հավաքածուի մասն է կազմում: Քանի որ 1 Տիմոթեոսը, Տիտոսը և 2 Տիմոթեոսը պարունակում են Պողոսի խորհուրդներն ու հորդորները իր ծառայակիցներին, թե

1. ինչպես վարվել կեղծ ուսուցիչների հետ
2. ինչպես հաստատել առաջնորդներ տեղական եկեղեցիներում
3. ինչպես խրախուսել աստվածապաշտությունը

Այս գրքերի ակնհայտ ժամանակագրական կարգը հետևյալն է՝ 1 Տիմոթեոս և / կամ Տիտոս, այնուհետև 2 Տիմոթեոս: Տիտոսը առնչվում է այն նույն թեմաներին, ինչպես 1 Տիմոթեոսը: Տիտոսը առաջինն է գրվել, քանի որ նրա ներածությունն այնքան երկար է և աստվածաբանորեն ներգրավված, ինչպես Հռոմեացիսը:

Բ. Պողոսի և իր ծառայակիցների աշխարհագրական շարժումները չեն համապատասխանում Պողոսի Գործքի աշխարհագրական շարժմանը: Հետևաբար, շատերը (ես նույնպես) ենթադրում են, որ դա ապացույց է, որ Պողոսը ազատվել է քանտից և կատարել չորրորդ միսիոներական ճանապարհորդություն:

Գ. Այս չորրորդ միսիոներական ճանապարհորդության տարեթիվը տատանվում է 60-ականների սկզբից մինչև 68 թիվը, քանի որ Պողոսը գլխատվեց Ներոնի գահակալության ընթացքում իսկ Ներոնն էլ սպանվեց 68-ին (շատերը ենթադրում են 65-ի հավաճանքը):

II. Տիտոս մարդը

Ա. Տիտոսը Պողոսի ամենավստահելի գործընկերներից էր: Սա վկայում է այն մասին, որ Պողոսը նրան ուղարկեց Կորնթոսի և Կրետեի խառնված եկեղեցիներին:

Բ. Նա ամբողջովին հեթանոս էր (Տիմոթեոսը կիսով չափ հույն էր), դարձի եկած Պողոսի քարոզչության ընթացքում: Պողոսը հրաժարվեց թլպատել նրան (տես Գաղ. 2: 3):

Գ. Նա հաճախ հիշատակվում է Պողոսի նամակներում (տես 2 Կոր. 2:13; 7: 6-15; 8: 6-24; 12:18; Գաղ. 2: 1-3; 2 Տիմ. 4:10) և շատ զարմանալի է, որ Ղուկասը չի նշում նրան Գործքում: Որոշ մեկնաբանություններ այն թերիացնում են

1. Հավանաբար նա Ղուկասի (հավանաբար եղբայր) բարեկամն էր, և Ղուկասի կողմից նրա անունը ներառելը կդիտվեր որպես մշակութային խախտում
2. Տիտոսը Պողոսի կյանքի ու ծառայության հիմնական աղբյուրն է Ղուկասի համար և, հետևաբար, ինչպես Ղուկասը, չէր նշվի

Դ. Նա ուղեկցում էր Պողոսին ու Բառնաբասին Երուսաղեմի բոլոր կարևոր ժողովներին, արձանագրված Գործք Առաքելոց 15-ում, որտեղ քննարկվում և կարգավորվում էր նոր հեթանոս հավատացյալների հարաբերությունները Սովսիսական օրենքի հետ:

- Ե. Այս գիրքը կենտրոնանում է այն խորհուրդի վրա, որը Պողոսը տալիս է Տիտոսին Կրետեի ծառայության մասին: Տիտոսը գործում է որպես Պողոսի պաշտոնական փոխարինող / լեզիտիմ:
- Զ. Նոր Կտակարանում Տիտոսի մասին վերջին տեղեկությունը այն է, որ նա ուղարկվեց Դադմատիա՝ ծառայելու համար (տես 2 Տիմ. 4:10):

III. Կեղծ ուսուցիչները

- Ա. Ակնհայտ է, որ կային մի խումբ կեղծ ուսուցիչներ Կրետեում, ովքեր դեմ էին Պողոսի ավետարանին:
- Բ. Նրանց աստվածաբանական ուսմունքները հակասում են աստվածահաճո ապրելակերպին, որը ակնկալվում է բոլոր հավատացյալներից:
 1. հղումներ աստվածահաճո ապրելու համար, Տիտոս 1: 1,16; 2: 7,14; 3: 1,8,14
 2. բնավորության հատկությունների ամփոփում, Տիտոս 2:11-14; 3: 4-7
- Գ. Այս կեղծ ուսմունքի մեջ ակնհայտ զգացվում է հրեական տարրը (տես Տիտոս 1: 10,14; 3: 8-9): Այս հերետիկոսությունները հրեական օրինապաշտության և հունական սպեկուլյատիվ մտքի համադրություն են (Գնոստիցիզմ, տես Հատուկ Թեմա Տիտոս 1: 1): Նրանք նման են 1 Տիմոթեոսում, Կողոսացիներին և Եփեսացիներին ուղղված կեղծ ուսուցիչներին: Հովվական Նամակների ուշադրության կենտրոնում հերետիկոսություն է, և ոչ թե բացառապես եկեղեցական կազմակերպությունը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

ՏԻՏՈՍ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ *

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույն	Ողջույն	Ողջույն	Բացման ողջույններ	Դիմում
1:1-4	1:1-3 1:4ա 1:4բ	1:1-3 1:4ա 1:4բ	1:1-3 1:4ա 1:4բ	1:1-4
Տիտոսի գործը Կրետեում	Որակավորված երեցներ	Կառավարում	Տիտոսի գործը Կրետեում	Երեցներ կարգել
1:5-9	1:5-9 Երեցների առաջադրանքը	1:5-9	1:5-9	1:5-9 Հակառակվել կեղծ ուսուցիչներին
1:10-12ա 1:12բ-16	1:10-16	1:10-16	1:10-16	1:10-14 1:15-16

*Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է պարբերությունները: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Այս թեման յուրաքանչյուր թարգմանված տարբերակում ձևավորվում է իր իսկ ձևով: Կարողավ տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձևեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխի ժամանակ դուք նախ պետք է կարդաք Աստվածաշունչը և փորձեք որոշել թեմաները (պարբերությունները): Հետո ձեր հասկացողությունը համեմատեք ժամանակակից թարգմանությունների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանն ու շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված – ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ խեղաթյուրել նրա պատգամը/ ուղերձը: Աստվածաշնչի ընթերցողներն պարտավոր են կիրառել ներշնչված ճշմարտությունը ժամանակակից իրավիճակի և իրենց կյանքերի մեջ:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հասկանումները ամբողջությամբ ներկայացված են հետևյալ փաստաթղթերում. [Հունարեն Քերականական Կառուցվածքի Համառոտ Սահմանումները](#), [Տեքստային Քննադատություն](#) և [Բառարան](#):

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Գույզ պետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 1:1-3

¹Պողոս Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ. Աստուծոյ ընտրուածների հաւատքի եւ աստուածապաշտական ճշմարտութեան գիտութեան համեմատ, ² Յաւիտենական կեանքի յոյսովը, որ յաւիտենական դարերից առաջ խոստացաւ անսուտ Աստուածը. ³Բայց իր ժամանակին յայտնեց իր խօսքը քարոզութիւնով, որ ինձ հաւատացուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամանի համեմատ.

1: 1 «Պողոս» Պողոսի օրերում հրեաները երկու անուն ունեին՝ հրեական և հռոմեական (տես Գործք 13: 9): Պողոսի հրեական անունը Սավուղ էր: Նա, ինչպես Իսրայելի հնագույն թագավորը, Բենիամինի ցեղից էր (տես Հռ. 11:1; Փիլ. 3: 5): Նրա հռոմեական անունը հունարենով Պողոս էր (Պաուլոս), նշանակում էր «փոքր»: Սա վերաբերվում է

1. նրա ֆիզիկական հասակը, որի մասին հիշատակվում է երկրորդ դարի անկանոն գրքում, *The Acts of Paul*, Թեսաղոնիկեի մասին գլխում, որը կոչվում է «Պողոս և Թեքլա»
2. նրա անձնական զգացողությունը՝ սուրբերից ամենափոքրը, քանի որ նա սկզբում հալածում էր Եկեղեցին (տես 1 Կոր. 15: 9; Եփ. 3:8; 1 Տիմ. 1:15)
3. պարզապես ծնողների կողմից ծննդյան պահին տրված անունը

Տարբերակ # 3 թվում է լավագույնը:

▪ **«Աստուծոյ ծառայ»** Սա Հին Կտակարանի առաջնորդներին տրված պատվավոր կոչում էր (տես 2 Օր. 34: 5; Հեսու 1: 1-2; 14: 7; 24: 29; 2 Թագ. 7:5,8; 4 Թագ. 10:10; Սաղ. 89: 3; 105: 42; Ես. 20: 3; Դան. 6:20; 9:11): Պողոսը սովորաբար օգտագործում է «Քրիստոսի ծառայ» արտահայտությունը (տես Հռ. 1: 1; Գաղ. 1:10; Փիլ. 1: 1): Այնուամենայնիվ, նա այստեղ «Աստծո ծառայ» էր: Սա կարող է ցույց տալ, որ այդ կեղծ ուսուցիչները ինչ-որ կերպ կապված էին հուդայականության հետ:

1. Այս նամակի բացման հաստատում Աստված նշված է հինգ անգամ (տես Տիտոս 1: 1-4):
2. Սա կարող է նաև բացատրել, թե ինչու է «Փրկիչ» անունը երեք անգամ Հայր Աստծո համար ասվում, իսկ երեք անգամ Հիսուսի համար:
3. 2 Տիմ. 1: 10,14; 3: 8-9-ից ակնհայտ է, որ Կրետեում տեղի ունեցած հակասության մեջ կար հրեական տարր:

▪ **«առաքելալ»** Այս բառացիորեն «ուղարկված մեկը», որը նշանակում էր ռաբունական հուդայականության մեջ իշխանությամբ լիազորված մեկը: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 1: Դա նման է ներկայիս դեսպանի գաղափարին (տես 2 Կոր. 5:20): Սա նաև Պողոսի կերպն էր, հաստատելու և ամրապնդելու իր իշխանությունը Քրիստոսում, ինչպես որ նախորդ կոչումն էր «Աստծո ծառա»: Նա հաստատեց իր լիազորությունը, որպեսզի գորացնի Տիտոսին: Այս նամակը պետք է կարդացվեր ամբողջ եկեղեցու առաջ ինչպես 1 Տիմ. 6:21; 2 Տիմ. 4:22; և Տիտոս 3:15 ՀՈԳՆԱԿԻՆԵՐՆ են հստակ ցույց տալիս:

- **«հավատքի»** ԳՈՅԱԿԱՆԸ չունի ՈՐՈՇԻՉ ՀՈԴ; հետևաբար, դա կարող է վերաբերել
 1. անհատի անձնական վստահությունը Քրիստոսին
 2. հավատարիմ ապրելակերպ (Հին Կտակարանյան իմաստը)
 3. Քրիստոնեական վարդապետության մարմինը (տես Գործք 6: 7; 18: 8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Փիլ. 1:27; Հուդա 3,20)

Պողոսի առաքելությունն էր

1. խթանել արդեն փրկվածների հավատքը
2. ընտրվածներին հավիտենականությունից բերել դեպի անձնական հավատքի («կանչել կանչվածներին»)

Երկուսն էլ անհրաժեշտ են, բայց թե որն է այստեղ ընդգծված անորոշ է:

Պողոսը մի քանի անգամ օգտագործում է *kata* առաջին գլխում:

1. հավատքի համեմատ, Տիտոս 1: 1
2. աստվածապաշտության համեմատ, Տիտոս 1: 1
3. հրամանի համեմատ, Տիտոս 1: 3
4. հասարակաց հավատքի համեմատ, Տիտոս 1: 4
5. ինչպես պատվիրեցի, Տիտոս 1: 5 (բարդ բառ)
6. ուսուցման համաձայն, Տիտոս 1:9

Ակնհայտ է, որ կա ճշմարտության և վարքի չափանիշ (տես Տիտոս 3: 5, 7):

▪ **«Աստուծոյ ընտրուածների»** Այս բառացիորեն նշանակում է «ըստ ընտրվածների հավատքի»: Հին Կտակարանում ընտրությունը Աստծուն ծառայելու համար էր, իսկ նոր Կտակարանում օգտագործվում էր Աստծո կողմից փրկության համար (տես Հռ. 8: 29-30; 9: 1; Եփ. 1: 4-11; 2 Տիմ. 1:9): Ընտրության իմաստը լավ արտահայտված է Գործք 13:48-ում: Եկեղեցին Աստծո ընտրյալներն են (տես Հռ. 8:32; Կոր. 3:12; 2 Տիմ. 2:10): Եկեղեցին նորություն չէր, այլ Աստծո Հին Կտակարանի մարդկանց ընդարձակումը: Տես Հատուկ Թեմա: Ընտրություն (Նախասահմանություն) 1 Տիմ. 6:12.

▪ **«գիտութեան»** Սա հունարեն *epiginōskō* բարդ տերմինն է, որը ենթադրում է լիարժեք փորձառական գիտելիքներ: Սա ճշմարիտ դարձի գալու մասին իդիոմա է (տես Հովհ. 8:32; 1 Տիմ. 4:3; 2 Տիմ. 2:25; 1 Հովհ. 2:21; 3 Հովհ. 1): Սա հակադրվում էր կեղծ ուսուցիչներին, որոնց շեշտը գաղտնի գիտելիքի վրա էր, որը կապ չունեի սուրբ կյանքի հետ: Այս նույն արտահայտությունն օգտագործվում է 1 Տիմ. 2: 4, բայց շեշտը Աստծո կամքի վրա է բոլոր մարդկանց համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԳՆՈՍՏԻՑԻՉՄ (հունարեն *gnosis* բառից, որը նշանակում է «գիտություն», տես 1 Տիմ. 6:20)

I. Առաջին դարի միջավայրը

Առաջին դարի հռոմեական աշխարհը ընտրության ժամանակ էր Արևելյան և Արևմտյան կրոնների միջև: Հունական և հռոմեական պանթեոնների աստվածները վատ համբավ ունեին: Միստիկ կրոնները շատ տարածված էին, քանի որ նրանք շեշտը դնում էին աստվածների և գաղտնի գիտելիքների հետ անձնական հարաբերությունների վրա: Հին հունական փիլիսոփայությունը տարածված էր և միաձուլվում էր այլ աշխարհայացքների հետ: Ընտրողական կրոնի այս աշխարհում եկավ քրիստոնեական հավատքի բացառիկությունը (Հիսուսը Աստծուն տանող միակ ճանապարհն է, տես Հովհ. 14:6): Որն էլ որ լինեք հերետիկոսության հստակ ֆոնը, դա փորձ էր քրիստոնեությունը բացառիկ դարձնելու (այսինքն, Հովհ. 14:6; 1 Հովհ. 5: 12), ավելի հստակ հունա-հռոմեական լսարանին ընդունելի և մտավոր դարձնելու համար: Հնարավոր է, որ գնոստիկ միտքը ծագել է հրեական աղանդների մեջ (այսինքն՝ մեկ օրինակ. DSS աղանդ): Սա կարող է բացատրել Նոր Կտակարանյան գրքերի հրեական տարրերից մի քանիսը, որոնք վերաբերվում են Գնոստիցիզմին:

II. Հերետիկոսության հիմնական դրույթներից մի քանիսը ներքին ապացույցներով վերցված 1 Հովհանուց

- Ա. մերժում էին Հիսուս Քրիստոսի մարմնացումը
- Բ. ժխտում էին փրկության մեջ Հիսուս Քրիստոսի կենտրոնական լինելը
- Գ. համապատասխան քրիստոնեական ապրելակերպի պակասը
- Դ. շեշտը գիտելիքի վրա էր (հաճախ գաղտնի)
- Ե. էքսկյուսիվիզմի և էլիտարության միտում

III. Առաջին դարի սկսնակ գնոստիցիզմը

Ա. Առաջին դարի սկսնակ գնոստիցիզմի հիմնական ուսմունքները կարծես շեշտը դնում էին օնթոլոգիական (հավիտենական) դուալիզմի վրա հոգևորի և նյութականի միջև: Հոգին (բարձր աստված) համարվում էր բարի, իսկ նյութը չար էր: Այս դիքոտոմիան նման է

1. Պլատոնիզմի իդեալականը ի տարբերություն ֆիզիկականի
2. Երկնայինը երկրայինի
3. անտեսանելի ի տարբերություն տեսանելիի

Կար նաև գաղտնի գիտելիքի վրա խիստ շեշտադրում (գաղտնաբառերը կամ գաղտնի ծածկագրեր, որոնք թույլ են տալիս հոգի անցնել հրեշտակային ոլորտներով [*aeons*] մինչև բարձր աստվածը) անհրաժեշտ փրկության համար:

4. Հնարավոր է ազդեցությունը գրադաշտականությունից էր

Բ. Կան սկսնակ գնոստիցիզմի երկու ձևեր, որոնք, ըստ էության, կարող են լինել 1 Հովհ. ֆոնը

1. Դոկետիկ գնոստիցիզմ, որը ժխտում է Հիսուսի իսկական մարդեղությունը, քանի որ նյութը չար է
2. Կերինտիան գնոստիցիզմ, որը նույնացնում է Քրիստոսին բազմաթիվ *aeons* -ից մեկի հետ կամ հրեշտակային մակարդակների միջև բարի բարձր աստծո և չար նյութի միջև: Այս «Քրիստոս Հոգին» իջավ Հիսուս մարդու վրա իր մկրտության ժամանակ և հեռացավ նրանից մինչև խաչելությունը:

3. այս երկու խմբերում ոմանք գործածեցին ասկետիզմ (եթե մարմնին ուզում է, դա չար է), մյուսը անտինոմիանիզմ (եթե մարմինը ուզում է, արա)

Գ. Առաջին դարում գնոստիցիզմի զարգացող համակարգի մասին գրավոր ապացույց չկա: Մինչև երկրորդ դարի կեսը արձանագրված ապացույցներ գոյություն չեն ունեցել (տես Nag Hammadi տեքստերը): «Գնոստիզիզմի» մասին լրացուցիչ տեղեկությունների

համար տես

1. *The Gnostic Religion* by Hans Jonas, published by Beacon Press
2. *The Gnostic Gospels* by Elaine Pagels, published by Random House
3. *The Nag Hammadi Gnostic Texts and the Bible* by Andrew Helmbold

IV. Հերետիկոսությունն այսօր

- Ա. Այս հերետիկոսության հոգին այսօր ներկա է մեզ հետ, երբ մարդիկ փորձում են քրիստոնեական ճշմարտությունը միավորել այլ մտային համակարգերի հետ:
- Բ. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ ներկա է, երբ մարդիկ շեշտում են «ճիշտ» վարդապետությունը անձնական հարաբերությունների և հավատքի կենսակերպի բացառման համար:
- Գ. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ ներկա է, երբ մարդիկ քրիստոնեությունը դարձնում են բացառիկ մտավորականություն:
- Դ. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ ներկա է, երբ կրոնական մարդիկ վերադառնում են ասկետիզմին կամ անտինոմիանիզմին, որպես Աստծո բարեհաճությունը գտնելու լավագույն միջոց:

▪ **«աստուածապաշտական ճշմարտության գիտութեան համեմատ»** Սա խիստ հակադրություն է կեղծ ուսուցիչների էքսկյուսիվիզմի: Նրանք շեշտեցին գիտելիքը որպես էլիտար խմբի ունեցվածք: Ճշմարտությունը պետք է կապված լինի առօրյա կյանքի հետ (տես 1 Տիմ. 2: 2): Աստվածապաշտությունը (*eusebeia*) ընդհանուր թեմա է Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 2: 2; 3:16; 4: 7,8; 6: 3,5,6,11; 2 Տիմ. 3: 5; Տիտոս 1: 1; բարդ ձևը *theosebeia*, 1 Տիմ. 2:10; և ԱԾԱԿԱՆ *eusebōs* 2 Տիմ. 3:10; Տիտոս 2:12): Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7:

Սա ակնհայտորեն արտացոլում է կեղծ ուսուցիչների սխալները: Հավատացյալները ոչ միայն կանչված են երկինք մահանալուց հետո, այլ Քրիստոսանման լինելու հիմա (տես Հռ. 8: 28-29; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 1 Թես. 3: 13; 4: 3): Ավետարանի նպատակը չի ավարտվում, մինչև բոլորը ճանաչեն Փրկչին և բոլորն արտացոլեն Նրա կերպարը: Տես Հատուկ Թեմա: Ճշմարտությունը Պողոսի գրվածքներում 1 Տիմ. 2: 4:

1: 2 «Յավիտենական կեանքի յոյսովը» *epi* ՆԱԽԴԻՐԸ ենթադրում է «հանգչել, պառկել»: RSV և TEV ունեն «որը հիմնված է» արտահայտությունը: Այս «հոյս» տերմինը երկիմաստություն ունի Աստծո փրկագնման հավիտենական ծրագրի ավարտի վերաբերյալ:

Պողոսի գրվածքներում հավիտենական կյանքը միշտ նոր դարաշրջանի կյանքն է, վախճանաբանական կյանքը (տես Հռ. 2: 7; 6: 22,23; Գաղ. 6: 8; 1 Տիմ. 1:16; Տիտոս 1: 2; 3: 7): Հովհաննեսի գրվածքներում այն վերաբերում է ներկայիս իրականությանը, որը հիմնված է Քրիստոսին որպես Փրկչի վստահելու վրա (տես Հովհ. 3:15; 10:28; 12:25; 17:2-3; 1 Հովհ. 1: 2; 2:25; 3:15; 5:11,13,20): Երկուսն էլ ճշմարիտ են: Նոր դարը մեկնարկվել է Հիսուսի առաջին գալուստով: Հավատացյալներն արդեն այս նոր դարի մի մասն են: Նոր դարը կավարտվի Երկրորդ գալուստով: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ](#) 1 Տիմ. 6:8.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՅՍ (*elpis*, Պողոսի գրվածքներում)

Պողոսը հաճախ օգտագործեց այս տերմինը մի քանի տարբեր, բայց կապակցված իմաստներով: Հաճախ դա կապված էր հավատացյալի հավատքի հետ (օրինակ, 1 Տիմ. 1: 1): Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ և այլն: Ավարտը հստակ է, բայց ժամանակի տարրը ապագան է և անհայտ: Հույսը հաճախ կապված էր «հավատքի» և «սիրո» հետ (տես 1 Կոր. 13:13; 1 Թես. 1: 3; 2 Թես. 2:16): Պողոսի որոշ գործածումների

մասնակի ցանկը

1. Երկրորդ Գալուստը, Գաղ. 5:5; Եփ. 1:18; 4: 4; Տիտոս 2:13
2. Հիսուսը մեր հույսն է, 1 Տիմ. 1: 1 (Աստված մեր հույսն է, 1 Տիմ. 5: 5; 1 Պետ. 3: 5)
3. Հավատացյալը պետք է ներկայանա Աստծո առաջ, Կող. 1: 22-23; 1 Թես. 2:19
4. Հույսը պահվում է երկնքում, Կող. 1: 5
5. Վստահությունն ավետարանին, Կող. 1:23; 1 Թես. 2:19
6. Գերագույն փրկությունը, Կող. 1: 5; 1 Թես. 4:13; 5: 8
7. Աստծո փառքը, Հռ. 5: 2; 2 Կոր. 3:12; Կող. 1:27
8. Քրիստոսի կողմից հեթանոսների փրկությունը, Կող. 1:27
9. Փրկության վստահություն, 1 Թես. 5: 8
10. Հավիտենական կյանք, Տիտոս 1: 2; 3: 7
11. Քրիստոնեական հասունության արդյունքներ, Հռ. 5: 2-5
12. Ամբողջ ստեղծագործության փրկությունը, Հռ. 8: 20-22
13. Որդեգրության վախճանը, Հռ. 8: 23-25
14. Տիտոս Աստծո համար, Հռ. 15:13
15. Պողոսի ցանկությունը հավատացյալների համար, 2 Կոր. 1: 7
16. Հին Կտակարանը որպես ուղեցույց Նոր Կտակարանի հավատացյալների համար, Հռ. 15: 4

▪ **«անսուտ Աստուածը»** Մեր հավատքը հիմնված է Աստծո հավատարմության և հուսալիության վրա Իր խոստումների հանդեպ (տես Թվոց 23:19; 1 Թագ. 15:29; Հռ. 3:4; 2 Տիմ. 2:13; Եբր. 6:18): Մեր հույսը հիմնված է Աստծո անփոփոխ բնույթի վրա (տես Մատթ. 102: 27; Մատթ. 3: 6; Եբր. 13: 8; Հակոբոս 1:17):

▪ **«յավիտենական դարերից առաջ խոստացաւ»** ՍաԱՕՐԻՍ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: ՉԵԶՈՔ ՍԵՌԸ շեշտում է Աստծո թեման (տես Հռ. 4:21; 2 Տիմ. 1: 9): «Հավիտենական դարերից առաջ» արտահայտությունը բառացիորեն նշանակում է «հավիտենականությունից առաջ» (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:10): Սա կարող է վերաբերվել Աստծո փրկարար խոստումներին և նախապատրաստումներին ստեղծագործությունից առաջ (տես Մատթ. 25:34; Հովհ. 17:24; Եփ.1: 4; 1 Պետ. 1: 19-20; Հայտ. 13: 8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԿՐԻ ՏԱՐԻՔՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (Օննոց 1-11)

- I. Ուսումնասիրության այս բաժինը կողմնակալ է այն ենթադրությունների համար, որոնք պետք է կատարվեն նույնիսկ ռացիոնալ մտածողությամբ: Ենթադրությունները պետք է լինեն աստվածաբանական հասկացությունների և մեկնաբանությունների համեմատ տիեզերաբանների, երկրաբանների և առնչվող գիտությունների արտահայտած տարբեր կարծիքների գնահատման կենտրոնը: Տես John H. Walton, *Genesis One As Ancient Cosmology*:
- II. Գիտության համար ակնհայտ ենթադրություններն են
 - Ա. որ այսօր աշխարհում գրանցված և չափված փոփոխության (այսինքն, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական) տատանումները հաստատուն են անցյալում (այսինքն, միասնականություն, «ներկան անցյալի բանալին է»)
 - Բ. ռադիոմետրիկ մեթոդի տարեգրման արդյունքները (որոնք կոչվում են բացարձակ մեթոդներ), որը հանդիսանում է երկրի և տիեզերական իրադարձությունների տարեգրման հիմնական ժամանակագրության բանալին, «փչացնում են» մյուս անհրաժեշտ ենթադրությունները.

1. ժայռերի նախնական կառուցվածքը (այսինքն, անկայուն ատոմային տարրերի, ծնողի և դստեր հարաբերությունը)
2. այս տարրերի/իզոտոպների ճշգրիտ կես կյանքի ժամանակահատվածը
3. ջերմաստիճանը ազդում է նաև «ծնող» և «դուստր» տոկոսային հարաբերության վրա՝ նմուշում (այսինքն, ձևավորման ժամանակ և / կամ հրաբխային մագմային խցիկներում)
4. ռադիոակտիվ տարրերի ստեղծման սկզբնական աղբյուրը և ժամկետները հայտնի չեն; ժամանակակից տեսությունները պնդում են, որ ծանր տարրերը ստեղծվում են աստղերի և գերնոր ջերմամիջուկային ռեակցիաներով

Գ. որ երկրաբանության վեց ենթադրյալ սկզբունքները (կոչված հարաբերական տարեգրություն) ազդում են պալեոնտոլոգիայի վրա.

1. շերտավորման օրենքը՝ ծածկված ժայռերի անբավարար հաջորդականության մեջ, վերևի շերտը ավելի ցածր տարիք է, և ստորին շերտը ավելի մեծ է
2. սկզբնական հորիզոնական շերտերի սկզբունքը-թերաճ ժայռի շերտերը տեղադրվել են գրեթե հորիզոնական հարթակում
3. խաչաձև կտրվածքի հարաբերությունների սկզբունքը, երբ ժայռերը կտրվում կամ փոխվում են տեղաշարժման արդյունքում, ապա նրանց տարիքը ավելի մեծ է, քան հենց տեղաշարժը
4. ընդգրկման սկզբունքը, հարակից ժայռերի առկայության դեպքում դրանցից մեկի մասնիկները, որոնց շերտը գտնվում է ստորև, տեղի է ունենալու ավելի բարձր շերտում, որը հանդիսանում է թիվ 1 ենթադրության հաստատումը
5. փոխհարաբերությունների (հարաբերությունները) սկզբունքը՝ տարբեր վայրերում հաստատված նմանատիպ ժայռերի տեսակները պետք է համապատասխանեն միմյանց. երբ դա չի իրականանում, ապա նմանատիպ օգտակար հանածոները օգտագործվում են հաստատելու ժայռի կազմման ամսաթվի համաչափությունը
6. Հեղեղային իրավահաջորդության սկզբունքը՝ հանածոների օրգանիզմների որոշակի և որոշելի հաջորդականության մեջ հաջողության են հասնում:
 - ա. տարածված բրածոները
 - բ. սահմանափակվում է երկրաբանական ժամանակի կարճ տարածությամբ

III. Գիտնականների որոշ մեկնաբանություններ

Ա. Գիտնականների մեծ մասը գիտակցում է, որ ճշմարիտ գիտությունը հետազոտական մեթոդ է, որը ձգտում է համադրել բոլոր հայտնի փաստերն ու անոմալիաները փորձված տեսության մեջ: Որոշ բաներ իրենց բնույթով չեն կարող փորձարկվել:

Բ. Այս բնագավառում գիտական ենթադրությունների մասին որոշ մեկնաբանություններ գիտնականների կողմից

1. «Վարդապետությունը (այսինքն, միասնականությունը) չպետք է տառացիորեն ընդունվի: Ասել, որ անցյալում երկրաբանական գործընթացները նույնն էին, ինչ որ այսօր է տեղի ունենում, չնկատելով, որ նրանք միշտ նույն

հարաբերական նշանակություն են ունեցել և գործում են նույն կերպ (Tarbuck եւ Lutgens, *Earth Science*, 6th ed., էջ 262):

2. «Կարևոր է հասկանալ, որ ռադիոմետրիկ ճշգրիտ տարեթիվը կարելի է ձեռք բերել միայն այն ժամանակ, երբ հանքանյութը մնում է փակ համակարգում իր կազմավորման ժամանակահատվածում, այսինքն, ճշգրիտ տարեթիվը հնարավոր չէ իմանալ, եթե չլինեին ոչ ավել, ոչ էլ պակաս ծնող կամ դուստր իզոտոպները» (*Earth Science*, 6th ed., էջ 276):
3. «Մենք շտապում ենք շեշտել, որ այս միասնականությունը ենթադրություն է, որ մենք անում ենք բնության մասին, այսինքն, վարդապետությունը, այլ ոչ թե տրամաբանորեն ապացուցված օրենքը» (Dott and Balten, *Evolution of the Earth*, 4th ed., էջ 44):
4. «Ճառագայթման կայունացումներ, որոնք բնութագրում են ռադիոակտիվ քայքայման տատանումները և կառավարում են իզոտոպ տվյալների և դրանց համապատասխան ռադիոիզոտոպիկ տարիքի միջև հարաբերությունները, արդյունքում հայտնի են ճշգրիտ ժամանակի որոշ մեթոդների ճշգրտությունը, ինչպիսիք են $40\text{Ar} / 39\text{Ar}$ տեխնիկան («Progress and challenges in geochronology" by Renne, Ludwig and Karner in *Science Progress* [2000], 83 [1], 107):
5. «Մարդկանց գիտության մեջ առանց վերապատրաստման չեն կարող հասկանալ, որ ցանկացած ռադիոմետրիկ տարեգրության մեթոդ կարող է վստահ լինել միայն տարիքի նմուշների համար, որոնք կապված են տվյալ տարրի կես կյանքին (Hugh Ross, *Reasons to Believe Newsletter*):

IV. Ենթադրությունները հատուկ չեն գիտական համայնքի համար, բայց ակնհայտորեն գոյություն ունեն նաև կրոնական համայնքում:

Ա. Մարդիկ ձգտում են միասնական սկզբունքին կամ մոդելին համապատասխանել իրենց զգայական փորձին և տրամադրել էմոցիոնալ կայունություն: Գիտության այս միավորման սկզբունքը դարձել է «Էվոլյուցիա»:

1. Theodosius Dobzhansky, «Changing Man», *Science*, 155, 409-415, «Էվոլյուցիան այն գործընթացն է, որը կյանք է ստեղծում ոչ կյանքի միջավայրից, որը մարդուն բերել է կենդանիներից, և որը կարող է անխուսափելիորեն նշանակալից բաներ անել ապագայում»:
2. Brian J. Alters and Sandra M. Alters, *Defining Evolution* էջ 104 , «Էվոլյուցիան բոլոր կենսաբանական գիտությունների հիմնական կոնտեքստն է ... Էվոլյուցիան բացատրական հիմք է, միաբանող տեսությունը, կենսաբանության ուսումնասիրության համար անհրաժեշտ է, ինչպես որ ատոմային տեսությունը անխուսափելի է քիմիայի ուսումնասիրության համար»:

Բ. Շատ պահպանողական քրիստոնյաների համար միավորող տեսությունը (այսինքն, մեկնաբանությունը) դարձավ Օնդոց 1-3-ի բառացի մեկնաբանությունը: Սա ճշմարիտ է երիտասարդ գիտնականների համար (Creation Research Society- ը հռչակում է երկիրը մոտավորապես 10,000 տարեկան) իսկ հին երկրի լիտերալիստները (Հավատալ տարեգրության պատճառներին 4,6 միլիարդ տարվա ընթացքում ժամանակակից երկրաբանության լույսի ներքո): Գրքի մեկնությունը մեկն է այն ոսպնյակի միջոցով, որի միջոցով բոլորն էլ դիտարկվում և գնահատվում են: Մեկը չի կարող ենթարկվել սուբյեկտիվ ենթադրություն, քանի որ բոլոր մարդկային գիտելիքները որոշակի մակարդակի նախապայման են: Այնուամենայնիվ, մեկի ենթադրությունների

գնահատումը կարևոր է նրանց «ճշմարտության» համարժեք գնահատականների համար:

Գ. Հիմնարար քրիստոնեությունը փորձում է հազցնել իրեն «գիտական» փաստարկով, երբ կենտրոնական հարցը հերետիկոսական մեթոդաբանություն է: Սա չի նշանակում, որ «ժամանակակից էվոլյուցիոն գիտությունը» նախադրյալ չէ, կամ դրա եզրակացությունները չեն ձևավորվում մի նախադիտային աշխարհայացքով: Մենք պետք է զգույշ լինենք և վերլուծական: Թվում է, թե երկու կողմերի համար էլ ապացույց կա: Ես ինքս պետք է հարցնեմ, թե որ տեսակետն էմ ես, բնականաբար, զգացմունքային կամ կրթականորեն նկարագրված (այսինքն ինքնաբավարարված ենթադրություն):

V. Անձնական եզրակացություն

Ա. Քանի որ ես աստվածաբան եմ, ոչ թե գիտնական, շատ կարևոր է, որ ես կարդամ և տրամադրեմ շատ ժամանակ ժամանակակից միասնականության գիտությանը: Ես անձամբ ազիտացված չեմ «էվոլյուցիայով», այլ «նատուրալիզմով» (Carl Sagan- ի կողմից տարածված մեկ սահմանում, «տիեզերքը ամեն ինչն էր, ամեն ինչ, և այն ամենը, ինչ կլինի»): Ես գիտակցում եմ, որ դա մի կողմնակալություն է, բայց իմ միավորման տեսությունը գերբնականություն և հատուկ կրիատիվիզմ է, սակայն ես չեմ ժխտում կամ սպառնալիք զգում էվոլյուցիայի կոմից: Իմ հիմնական հեռանկարն այն է, որ գոյություն ունի անձնական Աստված, ով նախաձեռնեց և ուղղեց գործընթացը մի նպատակի համար: Ինձ համար «խելացի դիզայնը» դառնում է խելամիտ տեսություն (տես M. J. Behe, *Darwin's Black Box* and William A. Demski, ed. *Mere Creation: Science, Faith and Intelligent Design*): Դա էվոլյուցիայի «պատահականությունն» է և նատուրալիզմի «անփոխարինելիությունը», որն ինձանում անհանգստություն և շփոթություն է առաջացնում: Գործընթացը կյանքի ակնհայտ մասն է: Ես պետք է վստահ լինեմ, որ ես չեմ ընդունում այն, ինչ հարմար է առանց գնահատման: Փորձել եմ բացահայտել իմ ենթադրությունները:

1. Ծննդոց 1-3-ը (և դրա համար, «Հայտնություն» գրքի մեծ մասը), նրա ներշնչված հեղինակը մտադրված չէր, որ բառացիորեն ընդունվեր: «Ինչպես է այն սկսվել» և «Ինչպես է այն ավարտվելու» գրված է գրական ժանրում:

2. Էվոլյուցիան ակնհայտ է որոշակի մակարդակներում («հորիզոնական էվոլյուցիա», «միկրոէվոլյուցիա», «էվոլյուցիան տեսակների մեջ»), այլ ոչ թե այս մոլորակի կյանքի միակողմանի գործոնն է, ոչ էլ տիեզերքի զարգացումը: Խորհուրդ կա այստեղ: Ես անձամբ հարմար եմ զգում Աստվածաշնչի հետ (այսինքն, հատուկ հայտնություն), որը պատմում է ինձ «ով» և «ինչու» և բնույթը (այսինքն, բնական հայտնություն), այսինքն, ժամանակակից գիտական հետազոտություն, որը պատմում է ինձ «ինչպես» և «երբ հիմնված մոդելների և տեսությունների զարգացման վրա:

3. Նույնիսկ «թեիստիկ էվոլյուցիայի» վերջնական իրականությունը չէր կարող ինձ մերժել իմ հավատքի ենթադրություններից որևէ մեկը: Տես Darrel R. Falk, *Coming to Peace with Science: Bridging the Worlds Between Faith and Biology*. Ես ունեմ համոզմունքներ (ինչպես և դուք): Իմ աշխարհայացքը աստվածաշնչյան քրիստոնեությունն է: Իմ աշխարհի պատկերը աճող և փոխվող հասկացողություն է:

Բ. Երկրի «իրական» տարիքը իմ աստվածաբանության խնդիրը չէ, բացառությամբ.

1. Ակնհայտ «Մեծ պայթյուն» գաղափարը, որը սկիզբ է առնում տիեզերքի

սկզբունքից, կարծես սահմանափակվում է էվոլյուցիոն զարգացման համար անսահմանափակ ժամանակի հնարավորություններով (այսինքն նատուրալիզմ):

2. Սկիզբը և դադարը բրածոների գրառումներում, կարող են նշանակել «կետադրյալ հավասարակշռություն», որը ենթադրում է, որ էվոլյուցիոն շանսը տեղի է ունենում պոթելոմներում (հավանաբար Աստծո ընթացիկ ստեղծագործական գործողություններ) և պարտադիր չէ, որ աստիճանաբար փոխվի ժամանակի ընթացքում փոփոխության կամ հարմարվողականության միջոցով:
3. Հին երկիրը և ժամանակակից մարդկության հատուկ ստեղծագործման նախընտրական մոդելն է, որը ես ընտրում եմ, մինչև որ ավելի շատ հասկացա Աստվածաշնչի, հնագիտության և ժամանակակից գիտության իմ ուսումնասիրությունից: Դրանց հերթականությունը ցույց է տալիս իմ կողմնակալությունը (բայց մենք բոլորս ունենք):
4. Գիտությունը թշնամի չէ ինձ համար, ոչ էլ փրկիչ: Դա այնքան հետաքրքիր է ապրել այս գիտելիքների աճի այս շրջանում: Այն այնքան մխիթարիչ է, որ հերմենևտիկորեն տեղեկացված հավատացյալ լինի: Հավատքի և մտքի ինտեգրումը, կամ Աստվածաշունչը և գիտությունը, հավաստիությունը, հրաշալի հնարավորություն է: Նոր գիրքը խրախուսեց ինձ այս հարցում John H. Walton, *The Lost World of Genesis One: Ancient Cosmology and the Origins Debate*:

VI. Ներկայիս ենթադրությունները, որոնք վերաբերում են երկրի տարիքին

Ա. Լուսնի ժայռերի և մետեորների ռադիոմետրիկ տարեգրությունը եղել է 4.6 միլիարդ տարի: Նրանք պարունակում են նույն տարրերը, որոնք այս արեգակնային համակարգի մոլորակներն են, ուստի այն եզրակացությունն է, որ այս պահին ձևավորել է մեր արևը և նրա հարակից մոլորակները, կոմետները և աստերոիդները: Ամենահին երկրային ժայռերը եղել են ռադիոմետրիկ՝ 3,8 միլիարդ տարի:

Բ. Առաջին մարդկային զույգի գերբնական ստեղծագործության համար (*Homo sapiens*) տարեթիվը ավելի բարդ խնդիր է, բայց դա տասնյակ հազարավոր աստիճանի տիրույթում, հնարավոր է, 40,000:

Ժամանակը միայն խնդիրն է մեզ համար, որոնք ստեղծվել են ժամանակագրական հերթական ժամանակահատվածում: Աստված ժամանակին չի անցել: Ես հավատում եմ, որ երկիրը և նրա միջավայրը ժամանակի ընթացքում ստեղծվել է որպես «վայր» Աստծո կողմից իր բարձրագույն ստեղծագործության հետ հաղորդակցվելու համար, որը ստեղծվել է Իր կողմից Իր պատկերով: Այս համոզմունքների միակ աղբյուրը ներշնչված Աստվածաշունչն է: Ես դրան հետևում եմ և թույլ եմ տալիս ժամանակակից գիտությանը բարձրացնել Աստծո ստեղծագործական գործունեության ֆիզիկական ասպեկտների իմացությունը:

VII. Գրքեր, որոնք օգնել են ինձ հասկանալ Ծննդոց 1-11 գլուխները

Ա. Derek Kidner, *Genesis, Tyndale OT Commentaries*, հատոր 1

Բ. Hugh Ross- ի գրքերը

Գ. John H. Walton-ի գրքերը

Դ. Phillip E. Johnson-ի գրքերը

Ե. R. K. Harrison-ի գրքերը

Զ. Bernard Ramm-ի գրքերը

Այս հեղինակները պատասխանում էին իմ փնտրող մտքի աղոթքին: Ես այնպիսի

խաղաղություն եւ գտել իրենց գաղափարների և ակնարկների մեջ: Եթե ես ստիպված լինեի ընտրել մեկ հեղինակ, ես չեի կարող դա անել: Եթե ծագումնաբանությունը կամ տիեզերաբանությունը կամ Ծննդոցը հետաքրքիր է ձեզ համար, խնդրում եմ ձեզ կարդալ այս եղբայրների գրքերը:

1:3

Արևելահայերեն «իր ժամանակին»

Արևմտահայերեն «իր ժամանակին»

NASB, NKJV,

NRSV «ճիշտ ժամանակին»

NJB «ժամանակին»

TEV «ճիշտ ժամանակին»

Այս արտահայտությունը ՀՈԳՆԱԿԻ է (այսինքն, «հավիտենական ժամանակներից առաջ») և կարող է արտացոլել Քրիստոսի ամբողջ իրադարձությունը (տես 1 Տիմ. 2: 6; 6: 14-15; Գաղ. 4:4): Սա կարող է վերաբերվել

1. Կոյնե հունարեն լեզվի տարածվածությունը
2. Հռոմի քաղաքական խաղաղությունը
3. Հռոմեոսի աստվածների պատվի և հավատի կորստից հետո աշխարհի կրոնական ակնկալիքները

▪ **«յայտնեց»** Սա նշանակում է «հստակորեն բերել լույսի տակ» կամ «հստակ բացահայտված»: Հիսուսը հստակ հայտնվում է Ավետարաններում և առաքյալների քարոզներում (տես 2 Տիմ. 1:10):

▪ **«իր խօսքը»** Սա կարող է վերաբերվել (1) Քրիստոսի մասին ավետարանի ուղերձին կամ (2) հենց Քրիստոսին (տես Հովհ. 1: 1; Հայտ. 19:13):

▪ **«որ ինձ հաւատացուեցաւ»** Պողոսը խորապէս զգում էր իր պատասխանատվությունը Ավետարանի (տես 1 Կոր. 9:17; Գաղ. 2:7; 1 Թես. 2: 4; 1 Տիմ. 11: 11) և բոլոր հավատացյալների հանդեպ (տես 1 Կոր. 4: 1-2 և 1 Պետ. 4:10):

▪ **«մեր Փրկիչ Աստուծոյ»** Սա Աստծո ընդհանուր անվանումն է Հովվական Նամակներում (տես Տիտոս 1: 3; 2:10; 3: 4): Տեսեք ամբողջական ծանուցումը 2 Տիմ. 1:10. Այնուամենայնիվ, յուրաքանչյուր կոնտեքստում այն օգտագործվում է նաև Հիսուսի համար (տես 1: 4; 2:13; 3: 6): Նախկինում այդ տիտղոսով կոչվում էին հռոմի կայսրերը (որպէս «Տեր»):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 1:4

՝Տիտոս՝ սիրելի որդու, մեր հասարակաց հաւատքի համեմատ, շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը՝ մեր Փրկիչիցը:

1: 4 «Տիտոս» Այս նամակը հասցեագրված է Տիտոսին, սակայն այն պետք է հրապարակավ ընթերցվեր բոլոր տնային եկեղեցիներում (տես Տիտոս 3:15 ՀՈԳՆԱԿԻ «ձեզ»): Տիտոսը Պողոս առաքյալի հավատարիմ դեսպանն էր հեթանոսներին: Արտասովոր է, որ նա Գործքում չի հիշատակվում (տես Ներածություն II, Գ.):

▪ **«սիրելի որդու»** Պողոսն օգտագործում է այս նույն տերմինաբանությունը Տիմոթեոսի համար 1 Տիմ. 1: 2 և 2 Տիմ. 1: 2, Փիլիմոն 1: 10-ում «իմ որդուն» Օնեսիմոսի մասին: Սա ընտանեկան փոխաբերություն է Պողոսի նորադարձների և ընկերների համար:

▪ **«հասարակաց հաւատքի»** «Հասարակաց» -ը այստեղ չի օգտագործվում անմաքուր իմաստով, ինչպես Գործք 10:14 և 11:8-ում, բայց իր իմաստով համամարդկային է կամ սովորական: Նմանատիպ արտահայտություն օգտագործվում է Հուդա 1: 3-ում: Դա հասարակաց է այն իմաստով, որ այն բոլոր մարդկանց համար է և հասանելի բոլորին: Սա կարող է լինել ուղղակի հակաթույն՝ կեղծ ուսուցիչների էլիտիզմի և էքսկլուսիվիզմի դեմ:

▪ **«շնորհք, ողորմություն և խաղաղություն լինի Աստուած Հորիցը»** Այս երկու տերմինները հաճախ ձևավորում են Պողոսի բացման աղոթքները: Հնարավոր է, որ «շնորհքը» (*charis*) բառախաղ է «ողջույնների» համար (*charein*, տես Հակ. 1: 1; Գործք 15:23), նույն հունարեն բառն է, որը օգտագործվում է շատ հունարեն նամակների բացման խոսքի մեջ: Պողոսը վերցնում է սովորական մշակութային բացման խոսքը, *charein* և փոխում է այն յուրահատուկ քրիստոնեական *charis*-ի:

«Խաղաղություն» տերմինը կարող է արտացոլել եբրայերեն ողջույնի «*Shalom*» իմաստը: Եթե դա այդպես է, ապա Պողոսը հունարեն և եբրայերեն ողջույնները համատեղում է մեկ քրիստոնեական ողջույնի մեջ:

Textus Receptus (տես KJV) և հունարեն ձեռագրերը A, C² և K- ն ավելացնում են «ողորմություն» բառը շնորհքին և խաղաղությանը: Սա, հավանաբար, 1 Տիմ. 1: 2 և 2 Տիմ. 1: 2-ից ստացված ձուլումն է: Կարճ ձևը գտնվում է *α, C*, D, F, G* և *P* ձեռագրերում, ինչպես նաև լատիներեն Վուլգատում: UBS⁴-ը կարճ տարբերակին տալիս է «Ա» վարկանիշ (հուսալի):

«Հայր» տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 2:

▪ **«Տեր Յիսուս Քրիստոսիցը՝ մեր Փրկչիցը»** Այս արտահայտությունը կապում է Հայր Աստծուն, Հին Կտակարանի ՅԱՀՎԵԻՆ և Հիսուս Մեսիային «Փրկիչ» տերմինը օգտագործելով (տես Տիտոս 1: 3-4; 2: 10,13; 3: 4,6): Այն օգտագործվում է Հոր համար Տիտոս 1: 3-ում իսկ Հիսուսի համար Տիտոս 1: 4-ում: Օգտագործելով Հին Կտակարանի Աստծո անունները կամ կոչումները Հիսուսի համար՝ Նոր Կտակարանի հեղինակների համար սովորական եղանակ էր՝ Հիսուսի աստվածությունը հաստատելու համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 1:5-9

⁵Նորա համար թողի քեզ Կրետի մեջ որ պակասորդները ուղղես, և ամեն մեկ քաղաքում երեցներ կարգես, ինչպես ես քեզ պատուիրեցի. ⁶Եթէ մէկն անարատ է, մէկ կնկան մարդ, հաւատացեալ որդիք ունենայ որոնց վերայ անառակութեան գանգատ չ'կայ կամ անհնազանդ չեն: ⁷Որովհետեւ եպիսկոպոսը պէտք է անարատ լինի ինչպէս Աստուծոյ տնտես. Ոչ յանդուգն, ոչ բարկացող, ոչ զինեմոյ, ոչ զարկող, ոչ պիղծ շահ սիրող: ⁸Այլ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ. ⁹Հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որ կարող լինի ողջամիտ վարդապետութիւնով յորդորել էլ, և հակառակողներին յանդիմանել էլ:

1: 5 «Նորա համար» Տիտոսի հանձնարարությունն էր 1) կարգավորել այն բաները, որոնք կիսատ էին արված կամ բացթողնվել վիճակում էին, և (2) կարգել երեցներ (տես Գործք 14:23): Խնդիրը գոյություն ունեցող կառույցը բարեփոխելը չէր, որը անբավարար էր, այլ համակարգ կառուցել: Այստեղ մենք տեսնում ենք տարբեր տիպի քաղաքական կառույց, քան 1 Տիմոթեոս 3-ը, որը հասցեագրված էր Եփեսոսի եկեղեցուն: Տիտոսը նշանակում է ոչ թե ժողովական քվեարկություն: Ուշադրություն

դարձրեք «յուրաքանչյուր քաղաքում» արտահայտությանը: Հիշեք, որ Տիմոթեոսն ու Տիտոսը առաքելական լիազորներ էին, ոչ թե տեղական հովիվներ կամ տարածքային առաջնորդներ:

- **«Կրեւէի»** Սա փոշտացիների և մինչ հունական միևնույն մշակույթի բնօրրանն էր: Գործք 27: 7-13-ում նշվում է, որ Պողոսը այս կղզի այցելել է Հռոմ գնալու ճանապարհին, սակայն չի նշում, որ այնտեղ քարոզել է: Սա է պատճառը, որ շատ մեկնաբաններ (ներառյալ այս հեղինակը) հավատում են, որ այս Հովվական նամակները արտացոլում են չորրորդ միսիոներական ճանապարհորդությունը, երբ Պողոսը ազատվել էր հռոմեական դանտարկությունից 60-ականների սկզբին:

- **«որ»** Սա *hina* է (նպատակի պարագա), որը բնորոշ է Պողոսի նամակներին (տես Տիտոս 1: 9,13; 2: 4,5,8,10,12,14; 3,7,8,13,14):

Պողոսը ուզում էր, որ Տիտոսը

1. կարգավորեր (ԱՕՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ) կիսատ թողածը
2. նշանակեր (ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ) երեցներ

- **«կարգես»** «Կարգել» ԲՄՅԸ նշանակում է «նշանակել, գործի դնել»: Նույն ԲՄՅԸ օգտագործվում է Առաքյալների համար «յոթին կարգեցին» Գործք 6: 3-ում: Սա իշխանության պատվիրակությունն է:

Պողոսը Տիտոսին ուղղորդում է նոր եկեղեցիներում երեցներ նշանակել, քանի ինքը և Բառնաբասը արեցին Գործք 14: 23: Պողոսը չի պատվիրում Տիմոթեոսին նույնը անել, քանի որ Եփեսոսի տնային եկեղեցիները հաստատման գործընթացի մեջ էին (տես 1 Տիմ. 3):

- **«երեցներ»** *presbuteroi* տերմինը հոմանիշ է «վերակացուների» (տես Տիտոս 1:7) և «հովիվների» հետ (տես Գործք 20: 17,28; Տիտոս 1: 5,7): Այս տերմինը ունի հրեական ծագում, իսկ «վերակացուն» ունի հունական պետական քաղաքական-վարչական հիմք: Ծանոթացեք 1 Տիմ. 3: 6 որակավորմանը, որ նրանք չպետք է նորադարձ լինեին, այստեղ բաց է թողնված: Սա նշանակում է, որ դրանք նոր ձևավորվող եկեղեցիներ էին: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԵՑ](#) 1 Տիմ. 5: 1:

- **«ինչպես ես քեզ պատուիրեցի»** Սա ԱՕՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Տիտոսը Պողոսի վստահված անձն էր:

1: 6 «Եթե» Սա ԱՌԱԶԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Պողոսը ենթադրում էր, որ յուրաքանչյուր քաղաքում որակավորված մարդիկ լինեն:

Արևելահայերեն «անարատ»

Արևմտահայերեն «անմեղադրելի»

NASB «անթերի»

NKJV, NRSV «անմեղ»

TEV «առանց մեղքի»

NJB «անթերի կերպար»

Սա 1 Տիմոթեոսի և Տիտոսի բոլոր որակավորումների, ինչպես դրական, այնպես էլ բացասական բանալին է (տես Տիտոս 1: 6,7; 1 Տիմ 3: 2,7,10; 5: 7; 6:14): Սա 1 Տիմոթեոս 3-ի ճիշտ նույն հունարեն տերմինը չէ, այլ նույն կերպ օգտագործվող հոմանիշը: Ծառայողը պետք է լավ վկայություն ունենա հավատացյալ համայնքի և անհավատ համայնքի մոտ (տես Տիտոս 2: 5,8,10; Գործք 2:47; 4:

4,31; 5: 13,42): Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 2: Այդ որակավորումները պետք է մեկնաբանվեն երկու նպատակների լույսի ներքո 1) առաջնորդները պետք է ընդունվեն հավատացյալների և անհավատների կողմից; ավետարանչությունը վերջնական նպատակն է և 2) առաջնորդները պետք է տեսանելի կերպով տարբերվեն կեղծ ուսուցիչներից:

Դժվար է իմանալ, թե ինչպես պետք է կիրառել այդ որակավորումները տարբեր մշակույթների և ժամանակաշրջանների մեջ: Հավատացյալները պետք է պաշտպանվեն պատմականորեն պայմանավորված կանոններից, սակայն բաց լինեն Աստծո կողմից տրված սկզբունքների համար: Ժամանակակից արևմտյան եկեղեցիների հետ իմ փորձառությունը եղել է հետևյալը.

1. դրանք ապացուցում են այդ որակավորումներից մեկ կամ մի քանի տեքստերը, բայց անտեսում կամ արժեզրկում են մյուսները
2. ավելացնում են այդ ուղեցույցները և պահանջում աստվածաշնչյան իշխանություն լրացումների համար
3. այս կանոնները մեկնաբանում են մեր օրվա լույսի ներքո առաջին դարի մշակույթի փոխարեն, որը վնասվել էր կեղծ ուսուցիչների կողմից
4. նրանք երկիմաստ արտահայտություններ են անում և դրանք դարձնում են դոգմատիկ կանոններ, որոնք համընդհանուր կիրառելի են

Խնդրում եմ խորհրդակցել իմ ավելի մանրամասն քննարկման հետ 1 Տիմոթեոս 3, www.freebiblecommentary.org.

▪ **«մեկ կնկան մարդ»** Այս արտահայտությունը շատ քննարկումներ է առաջացրել: Ակնհայտ է, որ Եփեսոսի եկեղեցու համար կարևոր խնդիր էր (տես 1 Տիմ. 3: 1, 12; 5: 7): Սա կարող է վերաբերվել

1. բազմակնությանը
2. ամուսնալուծությունից հետո նորից ամուսնանալուն
3. ամուսնու մահից հետո երկրորդ ամուսնությանը
4. մարդ, որը հավատարիմ է և ուշադիր իր կնոջը և ընտանիքին

Վաղ եկեղեցին բարձր է արժևորում ընտանեկան հարաբերությունները, և այս բնագավառում ցանկացած խնդիր անձին որակագրկում է եկեղեցու առաջնորդի պաշտոնից:

1. Առաջինը Հռոմեական կայսրությունում խնդիր չէր, բայց կարող էր խնդիր լինել հրեական համայնքում (Հակոբ, Եղկանա, Դավիթ, Սողոմոն):
2. Երկրորդը մեծ խնդիր էր կայսրությունում, ինչպես նաև հուդայականության մեջ, որը հիմնված էր Շամմայի կոնսերվատիվ դպրոցի և Հիլելի լիբերալ դպրոցի միջև ռաբիական քննարկումների հիման վրա:
3. Երրորդը վաղ եկեղեցու հիմնական մտահոգությունն էր, հատկապես Տերտուլիանոսի համար և դեռևս խնդիր է Եվրոպայում; սակայն 1 Տիմ. 5: 9 (կարդա Հռ. 7: 1-2; 1 Կոր. 7) այրիները կարող են կրկին ամուսնանալ առանց նախատինքի:
4. Չորրորդը վերաբերվում է կեղծ ուսուցիչների ամուսնության արժեզրկմանը (տես 1 Տիմ. 4: 3): Այս իմաստով դա ամուր ընտանեկան կյանքի անհրաժեշտության հաստատման այլ ձև է, սակայն պարտադիր չէ բացառել չամուսնացած սողամարդկանց (հիշեք, Հիսուսը եւ Պողոսը ամուրի էին):

▪ **«հաւատացեալ որդիք ունենայ որոնց վերայ անառակութեան զանգատ չ'կայ կամ անհնազանդ չեն»** Սա քննարկվում է 1 Տիմ. 3: 4-5): Առաջնորդի հատկանիշները լավ արտահայտվում են իր ընտանեկան կյանքում: Ամուսնու և կնոջ, երեխաների կամ տատիկ պապիկների միջև ցանկացած դժվարություն կամ բախում վաղ եկեղեցու համար կարող էր հիմք հանդիսանալ

առաջնորդությունից որակագրկելու համար: Հիմնական մտահոգությունն էր «քննադատության տեղիք չտալը»: Թե ինչպես է կառավարում իր տունը, ցույց է տալիս, թե ինչպես կառաջնորդի եկեղեցին: Այն քրիստոնյաները, ովքեր պրոֆեսիոնալ ծառայողներ են, անհանգստանում են այս որակավորման համար: Հաճախ քարոզիչի երեխաները ապստամբում են, նույնիսկ ունենալով աստվածավախ ընտանիք և աստվածավախ ծնողներ: Գուցե այս հարցում մեր դոգմատիզմի պակասը պետք է արտացոլվի նաև մյուսների որակավորումների նկատմամբ:

▪ Արդյոք Տիտոս 1: 6 վերաբերվում է հովիվի երեխաներին, թե դա ևս որակավորում է հովիվի համար: Երկու դեպքում էլ այն կենտրոնանում է ընտանիքի կենսակերպի և իշխանության նկատմամբ վերաբերմունքի վրա: Կարծում եմ, որ որակավորումների ընդլայնված ցանկում, այն վերաբերում է առաջնորդի թեկնածուին:

1: 7 «եպիսկոպոսը» Այս *episkopon* տերմինը սովորաբար թարգմանվում է «վերակացու» կամ «եպիսկոպոս»: Կոնտեքստը ցույց է տալիս, որ նրանք վերաբերվում են նույն անձին (տես Տիտոս 1: 5,7 և Գործք 20: 17,28): Այս տերմինն ունի հունական, քաղաքական, պետական, վարչական հիմք: Տեսեք ծանուցում 1 Տիմ. 3: 2:

▪ **«ինչպես Աստուծոյ տնտես»** Սա վերաբերվում է տնային տնտեսին (տես 1 Կոր. 4: 1; 9:17): Այս ընտանեկան տերմինը վերաբերվում է Տիտոս 1:6-ի որակավորմանը: Հովիվը, որպես ընտանիքի տղամարդ, արտացոլում է, թե ինչպես է առաջնորդելու եկեղեցին: Տիտոս 1: 7-ում կան հինգ բացասական, իսկ Տիտոս 1:8-ում վեց դրական հատկանիշներ: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՉԱՐ ԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#) Նոր Կտակարանում 1 Տիմ. 1: 9:

Արևելահայերեն «Ոչ յանդուզն»
Արևմտահայերեն «ո չ յանդուզն»

NASB, NKJV «ոչ ինքնահավան»
NRSV, TEV «ոչ ամբարտավան»
NJB «երբեք ամբարտավան»

Սա բարդ տերմին է կազմված *autus* (ինքնուրույն, անձամբ) և *edomai* (հաճույք) բառերից: Սա բնորոշում է այն անձին, որը ինքնահավան է, համառ, ամբարտավան, ինքնահաճո (տես 2 Պետ. 2:10):

▪ **«ոչ բարկացող»** Սա *orgē* տերմինն է, որը վերաբերվում էր զայրույթի բորբոքմանը: Դա 1 Տիմ. 3: 3 որակավորման ցանկի «հեզ» և «խաղաղ» տերմինների հակառակն է: Սա բնութագրում է զայրույթի կամ տրամադրության կտրուկ փոփոխություն:

Արևելահայերեն «ոչ գինեմոլ»
Արևմտահայերեն «ոչ գինեմոլ»

NASB, NRSV «կախվածություն գինուց»
NKJV «չի տրվել գինուն»
TEV «կամ հարբեցող»
NJB «կամ շատ խմող»

Սա, կարծես, ակնարկ է Սեպտուագիդից Առ. 23: 29-35: Պետք է ընդգծել, որ Աստվածաշունչը արգելք է դնում հարբեցողության դեմ, բայց չի սովորեցնում ամբողջությամբ բացառելը (տես Ծննդ. 27:28; Սաղ. 104:14, 15; Ժող. 9: 7; Առ. 31: 6-7): Ամբողջովին բացառելը գալիս է անհատ հավատացյալի հավատարմությունից Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, հիմնվելով մարդու անձնական ազատությունների սահմանափակման վրա, հանուն ուրիշների, հանուն այն մշակույթի, որտեղ նա ծառայում է (տես Հռ. 14: 1-15: 13; 1 Կոր. 8-9; 10: 23-33): Տես Հատուկ Թեմա: Աստվածաշնչի վերաբերմունքը ակոհոլի (խմորում) և հարբեցողության նկատմամբ (հակում) 1 Տիմ. 3: 3:

Արևելահայերեն «ոչ զարկող»
Արևմտահայերեն «ոչ զարնող»

NASB «ոչ կռվարար»
NKJV, NRSV,
TEV, NJB «ոչ բռնի, կատաղի»

Սա բառացիորեն նշանակում է «ոչ հարձակվող»: Դա կարող է պայմանավորված լինել ակոհոլի չարաշահման հետ կամ կոնկրետ անձի առանձնահատկությանը (տես 1 Տիմ. 3: 3):

Արևելահայերեն «ոչ պիղծ շահ սիրող»
Արևմտահայերեն «ոչ անարգ շահախնդրության ետևե եղող»

NASB «ոչ ստոր շահամոլ»
NKJV «ոչ ազահ փողի համար»
NRSV «կամ ազահ շահի համար»
TEV «կամ ազահ փողի համար»
NJB «ոչ ազահ, կծծի»

Այս նույն խնդիրը արտացոլվում է Տիտոս 1:11-ի կեղծ ուսուցիչների մեջ: Տես լրիվ ծանուցումը 1 Տիմ. 3: 8:

1: 8 «հիւրասէր» Սա բառացիորեն նշանակում է «օտարներին սիրող»: Պողոսի օրերի պանդոկները հանրաձանոթ պոռնկության տներ էին, հետևաբար, քրիստոնյաները, և հատկապես քրիստոնյա առաջնորդը, պետք է իրենց տները բացեին ճանապարհորդ միսիոներների և համայնքի կարիքավորների համար (տես 1 Տիմ. 5:10; Հռ. 12: 13; Եբր. 13: 2; 1 Պետ. 4: 9; 3 Հովհ. 1: 5):

▪ **«բարեսէր»** Տիտոսի 1: 8-ի առաջին երկու տերմիններն էլ բարդ կառուցվածք ունեն *phileos* և *agathos*: Այս արտահայտությունը հունա-հռոմեական մշակույթի հաստատման ընդհանուր արտահայտությունն էր: Այն հաճախ հայտնաբերվել է իրենց արձանագրություններում: Դրա հակառակը գտնվում է 2 Տիմ. 3: 3, որը բնորոշում է կեղծ ուսուցիչներին:

Արևելահայերեն «խոհեմ»
Արևմտահայերեն «խոհեմ»

NASB, NJB «խելամիտ»
NKJV «խոհեմ»
NRSV «խելամիտ»
TEV «կարգապահ»

Այս տերմինը իր տարբեր ձևերով տարածված է Հովվական նամակներում (տես 1 Տիմ 2: 9,15; 3: 2; 2 Տիմ. 1: 7; Տիտոս 1: 8; 2: 2,4,5,6, 9,12,15): Տերմինը արտացոլում է ծայրահեղությունների խուսափումը: Այն ենթադրում է հավասարակշռված կյանք:

Տես ամբողջական ծանուցումը 1 Տիմ. 3: 2:

Արևելահայերեն «արդար, սուրբ»
Արևմտահայերեն «արդար, սուրբ»

NASB «արդար, նվիրված»
NKJV «արդար, սուրբ»
NRSV, NJB «ուղիղ, նվիրված»
TEV «ուղիղ, սուրբ»

Այս հատկանիշները թվարկված չեն 1 Տիմոթեոս 3-ում: Նրանք հաճախ կապված են հունական մշակույթի հետ: Կան այնպիսի տերմիններ, որոնք արտացոլում են Աստծո հանդեպ պարտականության և մարդու հանդեպ պարտականության միջև փոխհարաբերությունները:

▪ **«ժուժկալ»** Սա նկարագրում է Պողոսի քարոզչությունը Փելիքսի և Դրուսիլայի առաջ Գործք 24: 24: Սա 1 Կոր. 9:25 մեջ Պողոսի մարզական փոխաբերություններից մեկն է: Այն նաև օգտագործվում է քրիստոնյայի հասունության որակավորման համար Տիտոս 2: 2 և 2 Պետ. 1: 6: ԳՈՅԱԿԱՆԸ հանդիպում է Սուրբ Հոգու պտուղի ցանկում Գաղ. 5:23: Այն արտացոլում է այն անձին, ով Սուրբ Հոգու միջոցով կարողացել է վերահսկել մեղավոր աշխարհի համակարգի կիրքերն ու ձգումները և սատանայի գայթակղությունները (դիվային) և ընկած մեղքի բնույթը: Սա նկարագրում է այն հավատացյալին, ով դարձել է Քրիստոսով վերահսկվող:

1:9

Արևելահայերեն «Հաստատ բռնելով հաւատարիմ խօսքը»
Արևմտահայերեն «Հաստատ բռնելով հաւատարիմ խօսքը»

NASB, NKJV «արագ բռնելով հավատարիմ խոսքը»
NRSV «պետք է հստակ գիտակցի այն խոսքը, որը վստահելի է»
TEV «պետք է խստորեն պահի այն ուղերձը, որին կարելի է վստահել»
NJB «ամուր բռնում է անփոփոխ ուղերձը»

Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է: Հավատացյալները պետք է կապված լինեն առաքելական, պատմական քրիստոնեության շղթային: Նրանք պետք է հասկանան և հաստատակամորեն պահեն Հին և Նոր Կտակարանները, որոնք հանդիսանում են միակ ճշմարիտ Աստծո ինքնահայտնությունը: Սա նրանց և մեր, հավատքի և գործնական կյանքի միակ ուղեցույցն է:

Արևելահայերեն «վարդապետութեան»
Արևմտահայերեն «վարդապետութեան»

NASB, NRSV «որը համապատասխանում է ուսմունքին»
NKJV «ինչպես իրեն են սովորեցրել»
TEV «որը համաձայն է վարդապետության»
NJB «ավանդույթից»

Եկեղեցու առաջնորդները պետք է փոխանցեն առաքելական ճշմարտությունները, որոնք իրենք սովորել են առանց փոփոխության ենթարկելու:

▪ **«որ կարող լինի ողջամիտ վարդապետութիւնով յորդորել էլ»** Ծառայողը, իր անձը նախապատրաստելով, հոգևոր պարզկներով և սիրով, պետք է կարողանա աշխատել հավատացյալների և անհավատների հետ: Նրա խնդիրն է ուսուցանել, քարոզել և ձևափոխել (այսինքն, ապրել) ավետարանը և ուղղել կեղծ ուսմունքները (տես 2 Տիմ. 4: 2):

«Ողջամիտ վարդապետություն» տես 1 Տիմ. 1:10.

▪ **«եւ հակառակողներին յանդիմանել էլ»** Հաջորդ մի քանի համարները (տես Տիտոս 1:10-16) նկարագրում են այդ կեղծ ուսուցիչների վերաբերմունքը և գործողությունները: Կար ակնհայտ հրեական տարր (տես Տիտոս 1:10,14):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 1:10-16

¹⁰Որովհետեւ շատ անհնազանդներ, զրախօսներ, խաբեբաներ կան, մանաւանդ նորանք որ թլփատութիւնիցն են: ¹¹Որոնց պէտք է պապանձեցնել, որ ամբողջ տները կործանում են, սովորեցնելով այն որ արժան չէ պիղծ շահի պատճառով: ¹²Նորանցից մէկը՝ հէնց իրանց յատուկ մարգարէ՝ ասեց. Կրեւտացիք միշտ ստախօս են, չար գազաններ, դատարկափոր: ¹³Այս վկայութիւնը ճշմարիտ է. նորա համար սաստիկ յանդիմանիր նորանց, որ առողջ լինեն հաւատքումը. ¹⁴Եւ մտիկ չ'տան Հրեական առասպելներին եւ այն մարդկանց պատուիրանքներին որ ճշմարտութիւնիցը թեքուած են: ¹⁵Ամեն բան սուրբ է սուրբերին. բայց պիղծերին եւ անհաւատներին ոչ մի բան սուրբ չէ, այլ պղծուած է նորանց միտքը եւ խորհուրդները: ¹⁶Խոստովանում են թէ Աստուծուն գիտեն, բայց իրանց գործերովն ուրանում են նորան. Պիղծ են եւ անհնազանդ եւ ամեն բարի գործի համար անպիտան:

1:10

Արևելահայերեն «անհնազանդներ»

Արևմտահայերեն «անհնազանդները»

NASB «ապստամբ մարդիկ»

NKJV, NJB «անհնազանդ»

NRSV «ապստամբ ժողովուրդ»

TEV «ով ապստամբում է»

Սա «ենթակա լինել» տերմինն է (*hypotassō*) բացասական ԱԼՖԱ ՄԱՄՆԻԿՈՎ (տես Տիտոս 1:6): Սա նշանակում է «ոչ իշխանության տակ»: Տեքստի մեջ սա վերաբերվում է «այն մարդկանց, ովքեր հակասում են» Տիտոս 1:9-ում: Նրանք նկարագրված են Տիտոս 3:9-11:

Արևելահայերեն «զրախօսներ, խաբեբաներ կան»

Արևմտահայերեն «ունայնություն խօսողները ու խաբողները»

NASB «դատարկ խոսողներ և խաբեբաներ»

NKJV, NRSV «անվերջ խոսողներ և խաբեբաներ»

TEV «խաբում են ուրիշներին իրենց անհեթեթությամբ»

NJB «ով խոսում է անհեթեթություն և փորձում է ուրիշներին հավատացնել»

Այս երկու բառերը կարելի է գտնել Նոր Կտակարանում միայն այստեղ: Հովվական Նամակների առաջնային խնդիրը կեղծ ուսուցիչներն են (բնութագրվում են այս տերմիններով Տիտոս 1:10) և նրանց նորադարձները: Այն, ինչին մենք հավատում ենք և ինչպես որ ապրում ենք, քրիստոնեության կարևորագույն դրույթներն են:

▪ **«մանաւանդ նորանք որ թլփատութիւնիցն են»** Այս արտահայտությունը հիշեցնում է Պողոսի աստվածաբանական հակառակորդներից մեկին Երուսաղեմի Ժողովի ժամանակ (Գործք 15) և Գաղատիայի եկեղեցիներում (Գաղ. 2: 12): Անորոշ է, թե ինչպես էին այս վաղ հրեա օրենսգետները, ովքեր պնդում էին, որ մարդը պետք է հրեա դառնա և պահի Մովսեսական Օրենքը, նախքան Հիսուսին հավատարը և քրիստոնյա դառնալը, կապված են Կողոսացիս, Եփեսացիս և Հովվական նամակների կեղծ ուսուցիչների հետ: Այս ուշ հերետիկոսները կարծես թե հրեական օրինականության և հունական փիլիսոփայական մտքի կապակցումը լինեն (Գնաստիկներ): Տես 1 Տիմոթեոսի Ներածությունը, Գ. Կեղծ Ուսուցիչները և Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 8:

Առաքյալների մահից հետո և քրիստոնեության արագ տարածման արդյունքում բազմաթիվ խիստ խմբավորումներ զարգացան Հին Մերձավոր Արևելքի և Միջերկրական աշխարհով մեկ: Նոր Կտակարանը ուղեցույցներ է տալիս, թե ինչպես կարելի է ճանաչել այդ կեղծ ուսուցիչներին, հասկապես Մատթ. 7 և 1 Հովհ. -ում, որոնք կենտրոնանում են համապատասխան ապրելակերպի և ճշմարիտ վարդապետության վրա:

1:11 «Որոնց պետք է պապանձեցնել» Սա «բերանը դնել» բարդ արտահայտության ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԻՆՏԻՆԻՏԻՎ է (այսինքն, բերանը փակել, բերանը խցան դնել կամ լռություն): Եկեղեցու առաջնորդները պետք է վերահսկեն, թե ով է խոսում տնային եկեղեցիներում: Նույն սկզբունքը ճշմարիտ է նաև այսօր: Կրոնական և թեոքրիական ազատությունները որևէ մեկին և ամենքին չեն տալիս իրավունք՝ Աստծո հավաքված ժողովրդին դիմելու համար:

▪ **«որ ամբողջ տները կործանում են»** Սա կարող էր վերաբերել տնային եկեղեցիներին (տես Հռ. 16:5; 1 Կոր. 16:19; Կող 4:15; 1 Տիմ. 3:15) կամ այրիների շահագործմանը և նրանց, ու հետ որ խոսում էին (տես 2 Տիմ. 3:6):

▪ **«պիղծ շահի պատճառով»** Սա ցույց է տալիս կեղծ ուսուցիչների իրական բնույթը (տես 1 Տիմ. 1: 7; 6: 5,10; 2 Պետ. 2: 3,14; Հուդա 1:16): 1 Տիմ. 3-ի եկեղեցու առաջնորդները պետք է ազատ լինեն այս գայթակղությունից (տես 1 Տիմ. 3: 3,8; 6: 9-10):

Կեղծ ուսուցիչները և աղանդավոր խմբերը կարող են արագ ճանաչվել երեք հատկանիշներով:

1. փողի շահագործում
2. սեռական ազատության շահագործում
3. որ ունեն եզակի և ուղղակի հայտնություն

Եթե ձեր կրոնական առաջնորդները ցանկանում են ձեր գումարը, ձեր կնոջը և պնդում են, որ Աստված է իրենց ասել, հեռու փախեք:

1:12 «Նորանցից մեկը՝ մարգարե» Եփիմենիդեսը ապրել է Ք.Ա. վեցերորդ դարում Կրետեում: Այն փաստը, որ Պողոսը մեջբերում է նրանց բանաստեղծներից մեկին, ցույց է տալիս հունական ազդեցությունը այս կղզու վրա և հերետիկոսության մեջ: Պողոսն իր գրվածքներում առնվազն երեք անգամ մեջբերում է հունական փիլիսոփաներից և բանաստեղծներից (տես Գործք 17:28; 1 Կոր. 15:13; Տիտոս 1:12): Նրա Տարոսն հայրենի քաղաքը հայրենի հայտնի էր իր ուսումնական

հաստատություններով: Պողոսը բարձր կրթություն ուներ ինչպես հունական, այնպես էլ եբրայերեն մշակույթներից:

Պողոսը, թերևս, Եփիմենիդեսին կոչել է մարգարե, քանի որ նա իսկապես գրեց Կրետեի բնակիչների մասին, կամ գուցե այն պատճառով, որ կրետացիները նրան համարում էին հունական աստվածների կողմից ներշնչված խոսնակ: Նա հայտնի էր որպես Կրետեի ամենախմաստուն մարդկանցից մեկը:

- **«Կրետացիք միշտ ստախոս են»** Սա վեցաչափ բանաստեղծական ձև է: Կրետացիները հավատում և մեծարում էին, որ Ջևսը թաղված է իրենց կղզում: «Կրետիկությամբ տառապող, բթամիտ, ապուշ» արտահայտությունը նշանակում է «ստախոս»: Այս կոնտեքստում այս բնութագիրը կարծես վերաբերվում է կեղծ ուսուցիչներին, ոչ թե եկեղեցիներին կամ հանրությանը:

- **«Պատարկավոր»** Բառի հիմնական իմաստը ազահությունն է (տես Փիլ. 3:19):

1:13 «աստիկ յանդիմանիր նորանց» Այս բառացիորեն նշանակում է «դանակով կտրել»: Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այս ուժեղ տերմինը նոր Կտակարանում օգտագործվում է միայն այստեղ: Լրացուցիչ հորդորներ, որոնք խստորեն դատապարտելու համար են, կարելի է տեսնել 1 Տիմ. 5:25; 2 Տիմ. 4: 2; Տիտոս 2:15.

- **«որ առողջ լինեն հաւատքումը»** Սա ցույց է տալիս, որ կարգապահությունը պետք է լինի փրկող, վերականգնող, ոչ թե պատժիչ (տես 1 Կոր. 5: 5; Եբր. 12: 5-13): Տիտոս 1:13-ի ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ վերաբերում են կեղծ ուսուցիչներին (տես 2 Տիմ. 2:25-26):

«Առողջ» տերմինը կրկնվող թեմա է Հովվական նամակներում, որը վերաբերվում է մի բանի առողջ լինելուն (տես 1 Տիմ. 1:10; 2 Տիմ. 1:13; 4: 3; Տիտոս 1: 9,13; 2: 1,2,8):

1:14 «Հրեական առասպելներին» Այս առասպելները կարող են կապված լինել Մեսիայի տոհմաբանության մասին հրեական ենթադրությունների հետ (տես Տիտոս 3:9; 1 Տիմ. 1:4, 2 Տիմ. 4:4): «Առասպելի» մասին տարբեր բացատրությունների համար տես լավ քննարկում G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, էջ 219-242:

- **«մարդկանց պատուիրանքներին»** Սա, կոնտեքստում, կարծես թե վերաբերվում է հրեաների Բանավոր Ավանդույթին, որը հետագայում համակարգվեց Բաբելոնյան և Պաղեստինյան Թալմուդներում (հմմտ. Ես. 29:13; Մարկ. 7: 7-8; Կող. 2:16-23):

- **«այն որ ճմարտութիւնիցը թեքուած են»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է: Այս կեղծ ուսուցիչները շարունակում են հեռանալ Ավետարանից: Տես Հատուկ Թեմա Ճմարտություն 1 Տիմ. 2: 4:

1:15 «Ամեն բան սուրբ է սուրբերին» «Ամեն բան» հունարեն նախադասության մեջ սկզբում է դրվում է՝ շեշտադրման համար: Այս ճմարտությունը որոշ հավատացյալների համար դժվար է հասկանալ (տես 1 Տիմ. 4: 4; Մարկ. 7: 15-23; Ղուկ. 11:41; Հռ. 14:14,20; 1 Կոր. 10: 23-33): Սա, հնարավոր է, վերաբերում է ասկետիզմին, որն այնքան տարածված է հունական կրոնական փիլիսոփայական ավանդույթների մեջ (տես 1 Տիմ. 4: 3; Կող. 2: 20-22): Օրինապաշտ քրիստոնյաները հաճախ հենց այս հարցում կորցնում են աստվածաշնչյան հավասարակշռությունը (տես Հռ. 14:1-15:13):

▪ **«բայց պիղծերին եւ անհաւատներին ոչ մի բան սուրբ չէ»** Առաջինը բառը կազմված է ԲԱՅԻՑ, որը ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, իսկ երկրորդը՝ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը խոսում է հաստատուն վիճակի մասին, որը դասավորվել էր արտաքին ուժերի գործողությունների միջոցով, այստեղ հնարավոր է՝ սատանայի: Այս տեսակ մարդը շեղում է ամեն ինչ և ամենքին անձնական շահի համար (օրինակ, Գործք 20:29):

1:16 «Խոստովանում են թէ Աստուծուն գիտեն» Հունարեն նախադասության մեջ «Աստված» բառը սկզբում է դրվում՝ շեշտելու համար: Այս կեղծ ուսուցիչները պնդում են, որ կրոնավոր են: Նրանք պնդում են, որ բարեպաշտությունը հիմնված է մարդկային կանոնակարգերի վրա (կարդա Ես. 29:13; Կող. 2: 16-23), բայց իրականում դրանք ապականված են: Ոմանք դա տեսնում են որպես հերետիկոսության հրեական տարրի ևս մեկ ապացույց, Քրիստոս անվան փոխարեն «Աստված» բառը ունենալով: «Խոստովանել, դավանել» տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ](#) 1 Տիմ. 6:12.

▪ **«բայց իրանց գործերովն ուրանում են նորան»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հավատացյալների կենսակերպի ընտրությունը ցույց է տալիս նրանց ճշմարիտ ապաշխարությունը (տես Մաթ. 7: 16,20; 1 Հովհ. և Հակոբոս):

▪ **«Պիղծ են, գարշելի, նողկալի»** Այս տերմինը հաճախ օգտագործվում է Մեպտուագինդում և թարգմանվում «նողկալի, գարշելի» (տես Հայտ. 17: 4) և հաճախ կապվում է կռապաշտության հետ: Այն բառացիորեն նշանակում է «գարշելի, հոտով» (տես Հայտ. 21: 8):

▪ **«եւ անհնազանդ եւ ամեն բարի գործի համար անպիտան»** Ինչպիսի ցնցող արտահայտություն (տես 1 Կոր. 3: 10-15; 2 Պետ. 1: 8-11):

«Անհնազանդ» բառը նաև օգտագործվում է Տիտոս 3: 3-ում, նկարագրելու համար, թե ինչպես են հավատացյալներն ապրել մինչև որ Աստծո / Քրիստոսի շնորհքը փոխեց նրանց (3: 4):

«Անպիտան» բառը բառացիորեն նշանակում է «փորձը, ստուգարքը անցնելու ձախողումը» (*dokimos* ԱԼՖԱ մասնիկով, տես 1 Կոր. 9: 27; 2 Տիմ. 3: 8): Տես Հատուկ Թեմա «Ստուգել, Փորձել» հունարեն ժամանակաձևը 1 Տիմ. 6: 9:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչու է 1 Տիմ. 3: 1-13 առաջնորդների որակավորումների ցանկը տարբերվում է Տիտոս 1-ի ցանկից:
2. Ինչպե՞ս են այս ցանկերը, որոնք արտացոլում են առաջին դարի հունա-հռոմեական մշակույթը, վերաբերվում իմ օրվան, իմ եկեղեցուն:
3. Ինչպե՞ս է այս ցանկի վրա ազդում կեղծ ուսուցիչների ուսմունքներն ու ապրելակերպը:

4. Ամփոփեք ամբողջ ցանկը մեկ նախադասությամբ, որը նկարագրում է քրիստոնյա առաջնորդին:
5. Արդյո՞ք այս հատվածը արտացոլում է մեկ այլ եկեղեցական քաղաքականություն, քան 1 Տիմոթեոսը:
6. Ինչպիսի՞ կեղծ ուսուցիչներ կային Կրետեում: Նրանք քրիստոնյա էին, թե՞ ոչ:
7. Թվարկեք այն համարները, որտեղ արտացոլված են կեղծ ուսուցիչների հրեական ասպեկտը:
8. Թվարկեք այն համարները, որտեղ արտացոլված են կեղծ ուսուցիչների հունական փիլիսոփայական ասպեկտը:
9. Բացատրեք Տիտոս 1: 15-ի համընդհանուր սկզբունքը:

ՏԻՏՈՍ 2

ԺԱՍՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Առողջ վարդապետության ուսմունքը	Առողջ եկեղեցու հատկանիշները	Հովիվը և հոտը (2:1-3:11)	Առողջ վարդապետություն	Որոշակի հատուկ բարոյական ցուցումներ
2:1-10	2:1-10	2:1-2 2:3-5 2:6-8 2:9-10	2:1-5 2:6-8 2:9-10	2:1-10
	Վարժված փրկարար Շնորհքով			Քրիստոնեական բարոյական կյանքի հիմքը
2:11-15	2:11-15	2:11-14 2:15-3:8ա	2:11-14 2:15	2:11-14 2:15

ԸԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քննադատության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

1-10 ՀԱՄԱՐՆԵՐԻ ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Պողոսը խրախուսում է տարբեր խմբերի մարդկանց
 1. մեծահասակ տղամարդկանց (Տիտոս 2: 1-2)
 2. մեծահասակ կանանց Տիտոս 2: 3 (տես 1 Տիմ. 2:9-15)
 3. երիտասարդ կանանց (Տիտոս 2: 4-5)
 4. երիտասարդ տղամարդկանց (Տիտոս 2: 6)
 5. Տիտոսին, Տիտոս 2: 7-8,15 (տես 1 Տիմ. 4: 12-13)
 6. ծառաներին (Տիտոս 2: 9-10)

- Բ. Տիտոս 2-ում Տիտոս 1: 5-9 և Տիմոթեոսի 3-ում թվարկված եկեղեցու առաջնորդների որակավորումները տարածվում են երկու սեռի և բոլոր տարիքի հավատացյալների համար:

- Գ. Աստվածահաճո կյանք ապրող քրիստոնյաների նպատակը հստակ արտահայտված է Տիտոս 2: 11-14-ում, որը հունարենում մեկ նախադասություն է:

- Դ. Տիտոս 2-ը իրական հակադրությունն է Տիտոս 1: 10-16-ում նկարագրված կեղծ ուսուցիչների ապրելակերպի:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 2:1-2
¹Բայց դու խօսիր ինչ որ կ'վայելէ ողջամիտ վարդապետութեանը: ²Ծերերը զգաստ լինեն, ծանրաբարոյ, խոհեմ, ողջամիտ հաւատքով, սիրով, համբերութեամբ.

2: 1 «Բայց դու» ԵԶԱԿԻ ԴԵՐԱՆՈՒՆ «դու»-ը ընդգծված է: Սա ցույց է տալիս կեղծ ուսուցիչների և Տիտոսի՝ ճշմարիտ առաջնորդի / ուսուցչի միջև մեծ տարբերությունը (տես 1 Տիմ. 6: 11; 2 Տիմ. 3: 1,14):

- **«խօսիր»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես 1 Տիմ. 4:13; 2 Տիմ. 4:2): Ավետարանը և դրա հետևանքները պետք է կապվեն:

- **«ինչ որ կ'վայելէ ողջամիտ վարդապետութեանը»** Ողջամիտ ուսմունքը կրկնվող թեմա է (տես Տիտոս 1: 9,13; 2: 1,2,8; 1 Տիմ. 1: 10; 2 Տիմ. 1: 13; 4: 3): Ուշադրություն դարձրեք, որ այս կոնտեքստում ողջամիտ կամ առողջ ուսմունքը վարդապետական չէ, այլ գործնական կենսակերպ, մարդակենտրոն Քրիստոսանմանություն: Մենք չպետք է արդարացումը բաժանենք սրբացումից:

2: 2 «Ծերերը» Տիտոս 1: 5 և 1 Տիմ. 5: 1,17-ում սա նույն բառն է թարգմանված «երեցներ», բայց այս կոնտեքստը պահանջում է ուրիշ թարգմանություն (տես Փիլեմոն 9): Այս մշակություն սա վերաբերվում է 60-ն անց մարդկանց: Տես [ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԵՐԵՑ](#) 1 Տիմ. 5: 1:

Արևելահայերեն «զգաստ»
Արևմտահայերեն «զգաստ»

NASB, NRSV «զուսպ լինել»
NKJV, TEV «սթափ, զգաստ»
NJB «զգույշ»

Սա բառացիորեն նշանակում է «սթափ լինել», որը կարող է կապ ունենալ թունավորման հետ (տես Տիտոս 1: 6, 7): Այս տերմինը նաև օգտագործվել է փոխաբերականորեն մտքի զգոնության կամ սթափ լինելու համար (օրինակ, 1 Տիմ. 3: 2, 11):

- **«խոհեմ»** Այս տերմինը օգտագործվում է Տիտոս 2: 2, 4, 5, 6 և 12-ում: Տես ծանուցում «խելամիտ, խոհեմ» 1 Տիմ. 3: 2:

Արևելահայերեն «խոհեմ»
Արևմտահայերեն «խոհեմ»

NASB, NJB «հարգալից»

NKJV «լուրջ»

NRSV «խելամիտ»

TEV «ծանրաբարո»

Այս տերմինը մի քանի անգամ օգտագործվում է Հովվական Նամակներում (տես Տիտոս 2: 2,7; 1 Տիմ. 2: 2; 3: 4,8,11; և 2 Տիմ. 2: 2; 3: 4 տերմինի ձևը): Բառերի, Արնդտի, Գինգրիիսի և Դանցերի բառապաշարի համաձայն, այն կարելի է թարգմանել «ակնածանք, արժանապատվություն, լրջություն, հարգանք, սրբություն կամ հավասարակշռություն» (տես 47 էջ):

Այս բառը կապված է լատիներեն «Augustus/վեհափառ» տերմինի հետ (Գործք 25: 21, 25; 27:11): Այն օգտագործել են ինչ-որ մեկին մեծարելու կամ երկրպագության համար, հատկապես կայսրին, և համապատասխան իրավիճակը նկարագրելու համար, որը պետք է ունենար մարդը նրա ներկայությամբ:

- **«ողջամիտ»** Սա կրկնվող փոխաբերական տերմին է Տիտոս 2: 1-ից «առողջ»: Քրիստոնյաները պետք է ողջամիտ և կայուն լինեն իրենց հավատքի, սիրո և իրենց համբերության մեջ (տես 1 Տիմ. 6:11; 2 Տիմ. 3: 10), ինչպես նաև իրենց վարդապետության մեջ: Պողոսի համար, հավատալը և ապրելը, անբաժան էին, պարզապես կեղծ ուսուցիչների հակառակն էր:

- **«համբերութեամբ»** տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:16 և ուրիշ ձևով 2 Տիմ. 2:11.

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 2:3-5

³Նոյնպես էլ պառաւները սրբավայել վարմունքով լինեն, ոչ քանսարկու, ոչ գինեմոլ, այլ բարի խրատ տուող. ⁴Որ զգաստացնեն մատղաշ կանանցը՝ լինել այրասէր եւ որդեսէր, ⁵Խոհեմ, մաքուր, անարատ, բարեգործ, իրանց մարդկանց հնազանդ, որ Աստուծոյ խօսքը չ'հայիոյուի:

2: 3 «սրբավայել վարմունքով» Սա *hieros* բարդ տերմինն է, որը նշանակում է սուրբ կամ սրբազան (*hierou*- ից, տաճարի համար) և *prepei*- ով, որը նշանակում է հարմար կամ պատշաճ: Մեծահասակ քրիստոնյա կանայք պետք է վարվեն աստվածահաճո, սուրբ կերպերով (տես 1 Տիմ. 2: 10):

Արևելահայերեն «ոչ քանսարկու»

Արևմտահայերեն «ոչ քանսարկու ըլլալ»

NASB «չարամիտ բամբասանքներ»

NKJV, NRSV,

TEV «ոչ զրպարտիչներ»

NJB «ոչ քանասարկու»

Այստեղ օգտագործվող տերմինը (*diabolos*) նույնն է, ինչ օգտագործվում է սատանայի համար՝ «գրպարտիչ» (տես Հովհ. 6: 20; 1 Տիմ 3:6: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ](#) Սատանա 1 Տիմ. 3: 6): Այնուամենայնիվ, դա ՀՈԳՆԱԿԻ է և ՀՈԴ չունի (տես 1 Տիմ. 3:11; 2 Տիմ. 3: 3): Ջոն Կալվինն ասել է, որ «շատախոսությունը կանանց հիվանդությունն է, և այն ավելանում է տարիքի հետ»:

Խնդիրը վերաբերում է ոչ միայն հեքիաթ պատմելուն, այլև կեղծ տեղեկատվության փոխանակմանը (տես 1 Տիմ. 5: 13): Երիտասարդ այրիները, հավանաբար, եղել են Եփեսոսի տներում և տնային եկեղեցիներում կեղծ ուսուցիչների փոխնակ խոսնակները (տես 2 Տիմ. 3: 5-7): Արդյոք այս արտահայտությունը (տես 1 Տիմ. 3:11; 2 Տիմ. 3: 3) անդրադառնում է նույն խնդրին պարզ չէ:

- **«ոչ զինեմու»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա ավելի ուժեղ միտք է, քան Տիտոս 1: 7 կամ 1 Տիմ: 3: 3,8: Ալկոհոլիզմը (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 3) պետք է որ խնդիր է եղել Կրետեում, ինչը ցույց է տալիս, որ Նոր Կտակարանի ուղեցույցները կարող են ուժեղացնել կամ մեղմացնել կախվածությունը որոշակի մշակույթներում:

- **«այլ բարի խրատ տուող»** Ըստ 1 Տիմ. 2:12 սա, ըստ երևույթին, նշանակում է տնային ուսուցիչներ կամ երիտասարդ կանանց դաստեարակներ: 4-5 համարները տալիս են ուսմունքի բովանդակությունը: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 3:

2: 4 «զգաստացնեն մատղաշ կանանցը» Հիմնական տերմինը *sōphrōn* գտնվում է Տիտոս 2: 4,5,6-ում և 12-ում: Դրա հիմնական իմաստը նշանակում է «առողջ մտքի լինել, սթափ լինել» : Այն պնդում է ինքնակարգավորվող, հավասարակշռված կյանք:

- **«լինել այրասեր և որդեսեր»** Այս երկու հունարեն բառերը Նոր Կտակարանում կարելի է գտնել միայն այստեղ: Ամուսնացած կնոջ համար Աստծո կամքն այն է, որ նրանք սիրեն իրենց ամուսիններին ու երեխաներին: Կեղծ ուսուցիչները տներ էին քանդում (տես Տիտոս 1:11; 2 Տիմ. 3: 6):

2: 5 Երիտասարդ կանանց բնութագիրը, որպես հնազանդ տնային տնտեսուհիներ, առաջին դարի միջերկրածովյան մշակույթի ակնկալվող սոցիալական նորմն էր (տես 1 Տիմ. 2:10): Արդյո՞ք այս պատգամը վերաբերվում է ամուսնացած կանանց բոլոր ժամանակներում բոլոր մշակույթներում: Սա հեշտ հարց չէ: Ժամանակակից քրիստոնյաները այստեղ պետք է թույլ տան որոշ մեկնաբանությունների ազատություն առանց դոգմատիզմի: Խնդրում ենք կարդալ *How to Read the Bible For All Its Worth* Fee և Stuart և *The Gospel and Spirit* by Gordon Fee:

- **«Խոհեմ»** Տես ամբողջական ծանուցումը 1 Տիմ. 3: 2:

- **«մաքուր»** Այս տերմինը գտնվում է միայն այստեղ Հովվական Նամակներում: Պողոսը 2 Կոր. 11: 2 օգտագործեց սա «մաքուր հարս, սուրբ կույս» (այսինքն, Եկեղեցին):

Արևելահայերեն «բարեգործ»

Արևմտահայերեն «տնաշեն, բարեգործ»

NASB «տանը աշխատողներ»

NKJV «տնաշեններ»

NRSV «տնային տնտեսության լավ կառավարիչներ»

TEV «լավ տնային տնտեսուհիները»

NJB «ինչպես աշխատել իրենց տներում»

Այս արտահայտության մեջ կա հունարեն ձեռագրի խնդիր (տես BAGD, էջ 561): Շատ վաղ երկաթագիր ձեռագրեր (*a* *, *A*, *C*, *D* *, *F*, *G*, *I*), շատ վաղ եկեղեցու հայրեր, և շատ ավելի ուշ փոքրատառ ձեռագրեր ունեն ընդհանուր տերմինը՝ տնային աշխատող (*oikourgos*, «տուն» + «աշխատող») սակայն որոշ հին տեքստեր (*σ*^c, *D*^c, *H*, *L*, *P*) ունեն տնային տնտեսուհի (*oikouros*, «տուն» + «պահակ»), որը նման է 1 Տիմ. 5:14, *oikodesmoteu* (տնային կառավարիչ, «տուն» + «տեր»):

Այս տերմինը, *oikourgous*, շատ հազվադեպ է հանդիպում (Bruce M. Metzger, *Commentary on the Greek New Testament*, էջ 654): Տեքստային քննադատության հիմնական դրույթներից մեկն այն է, որ առավել անսովոր տերմինը կամ արտահայտությունը հավանաբար բնօրինակն է, քանի որ դպիրները ավելի հավանական է, այն փոխել են ծանոթ մի բանի:

- **«իրանց մարդկանց հնազանդ»** «Ենթակա» կամ «հնազանդ» տերմինը առաջացել է ռազմական տերմինից, որը վերաբերվում է հրամանների շղթային: Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է (տես Եփ. 5: 21; Կոր. 3:18; 1 Տիմ. 2, 11-12; 1 Պետ. 3: 1): Սակայն ուշադրություն դարձրեք, որ Պողոսը, Եփ. 5:21-ում հնազանդությունը կապում է Հոգով լցված լինելու հետ (տես Եփ. 5:18) և այն դարձնում բոլոր քրիստոնյաների փոխադարձ պատասխանատվությունը: Խնդրում ենք կարդալ ծանուցումներ 1 Տիմ. 2: 11-12:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ (*hypotassō*)

Սեպտուագիտը այս տերմինն օգտագործում է տասը տարբեր եբրայերեն բառեր թարգմանելու համար: Նրա հիմնական եբրայերեն իմաստը «պատվիրել» կամ «հրամանի իրավունք»: Սա վերցված է Սեպտուագիտից (*LXX*):

1. Աստված պատվիրում է (տես Դև. 10: 1; Հովնան 2: 1; 4: 6-8)
2. Մովսեսը պատվիրում է (տես Ելից 36: 6; 2 Օր. 27:1)
3. թագավորները պատվիրում են (տես 2 Մնաց. 31:13)

Նոր Կտակարանում այս իմաստը շարունակվում է Գործք 10:48, որտեղ Առաքյալը պատվիրում է «հնազանդություն»: Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում մշակվում են լրացուցիչ իմաստներ:

1. զարգանում է կամավորական ասպեկտ (հաճախ ՉԵԶՈՔ ՍԵՌ)
2. այս ինքնասահմանափակող գործողությունը կարելի է տեսնել Հիսուսի հնազանդության մեջ
 - ա. Հորը (տես 1 Կոր. 15:25)
 - բ. իր երկրային ծնողներին (տես Դուկ. 2:51)
3. հավատացյալները հնազանդվում են մշակույթի ասպեկտներին, որպեսզի ավետարանը բացասական ազդեցություն չունենա
 - ա. մյուս հավատացյալները (տես Եփ. 5:21)
 - բ. հավատացյալ կանայք (տես Կոր. 3:18; Եփ. 5:22-24; Տիտոս 2: 5; 1 Պետ. 3: 1)
 - գ. հավատացյալները հեթանոս իշխանություններին (տես Հռ. 13:1-7; 1 Պետ. 2:13)

Հավատացյալները գործում են սիրո շարժառիթներից ելնելով, Աստծու համար, Քրիստոսի համար, Թագավորության համար, ուրիշների բարօրության համար:

Ինչպես *agapaō* (սերը), եկեղեցին այս տերմինը լրացնում է նոր իմաստով, հիմնված Թագավորության կարիքների և ուրիշների կարիքների վրա: Այս տերմինը ստանձնում է անձնագոհության նոր ազնվություն, ոչ թե հրամանատարության վրա, այլ ինքնորոշման Աստծո եւ Նրա Սեպիայի նոր հարաբերությունների վրա: Հավատացյալները հնազանդվում և ենթարկվում

- **«որ Աստուծոյ խօսքը չ'հայհոյուի»** Հավատացյալների կենսակերպը կարևոր է: Սա կրկնվող թեմա է Հովվական Նամակներում, «քննադատության համար տեղ չտալ» (տես Տիտոս 2: 8,10; 1 Տիմ. 3: 2,7,10; 5: 8,14; 6: 1; Տիտոս 1: 6-7,8,10): Հավատացյալների կյանքը և խոսքերը պետք է ուրիշներին բերեն Քրիստոսին: Ճշմարիտ, ողջամիտ, առողջ ուսմունքը երբեք չի բաժանում արդարացումը սրբացումից:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 2:6-8

Նոյնպես էլ յորդորիք երիտասարդներին որ խոհեմ լինեն. ⁷Ամեն կողմանէ քո անձը բարի գործերի օրինակ դնելով՝ վարդապետութեան մէջ անեղծութիւն, ⁸Ծանրաբարոյութիւն, ⁹Ողջամիտ խօսք անմեղադրելի. Որ հակառակորդը ամաչէ, ձեզ վերայ չար ասելու բան չ'ունենայով:

2:6

Արևելահայերեն «խոհեմ»

Արևմտահայերեն «խոհեմ»

NASB «խելամիտ»

NKJV «սթափ միտք ունեցող»

NRSV, TEV «ինքնակառավարվող»

NJB «չափավոր»

Երիտասարդ տղաներին տրվում է միայն մեկ ուղեցույց («խելամիտ կամ խոհեմ լինել», տես Տիտոս 2: 2, 4, 5): Սա միակ ՀՐԱՄՍՅԱԿԱՆ է Տիտոս 2: 2-6: Տես այս հասարակ հունարեն տերմինի ամբողջ ծանուցումը 1 Տիմ. 3: 1: Այն բնութագրում է շատ հունական փիլիսոփաների կյանքի հիմնական ուղեցույցը (այսինքն, «ոսկե միջինը»):

2: 7 «Ամեն կողմանէ» Քերականորեն անորոշ է, թե արդյոք Տիտոս 2: 7-ի «ամեն կողմանէ կամ բոլոր բաներում»-ը վերաբերում է այս համարին և այդպիսով մեկ այլ ուղեցույց է երիտասարդների համար կամ Տիտոս 2: 7-ի «քո անձը», որը վերաբերում էր Տիտոսին:

- **«քո անձը օրինակ դնելով»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է, որը օգտագործվում է որպես ՀՐԱՄՍՅԱԿԱՆ (տես 1 Տիմ. 4:12):

«Օրինակ» (*typos*) բառի համար տես Հատուկ Թեմա 2և, Տեսակ 1 Տիմ. 4:12.

- **«բարի գործերի»** Սա հերթական շեշտադրումն է (տես Տիտոս 1.16; 2: 7,14; 3: 1, 8, 14): Կյանքի փոփոխությունը դարձավ քրիստոնեական պատգամի վկայությունն ու ներգրավումը:

Արևելահայերեն «վարդապետութեան մէջ անեղծութիւն»

Արևմտահայերեն «վարդապետութեան մէջ անեղծութիւն»

NASB « վարդապետության մեջ մաքրությամբ»

NKJV «վարդապետության մեջ ցույց տալով շիտակություն»

NRSV «ձեր ուսմունքի մեջ ցույց տվեք շիտակություն»

TEV «անկեղծ եղեք ... ձեր ուսմունքի մեջ»

NJB «անկեղծությամբ... երբ դուք ուսուցանում եք»

Սա կարծես թե նկարագրում է Տիտոսի ուսուցման կերպը (ի տարբերություն կեղծ ուսուցիչների անմաքուր կյանքի և դրդապատճառների), ոչ միայն նրա քարոզչության և ուսուցման բովանդակությունը: Տիտոսը պետք է փոխանցեր առաքելական ճշմարտությունները, որը ստացել էր Պողոսից: Եթե դա վերաբերվում է բովանդակությանը, ապա հնարավոր է շեշտը դնել հարության վրա (տես Հռ. 2: 7; 1 Կոր. 15: 42,53,54):

Այս արտահայտության հետ կապված մի շարք հունական ձեռագրերի խնդիրներ կան: Bruce M. Metzger-ի *A Textual Commentary on the Greek New Testament* նշվում է, որ *aphthorian* (անփութություն) տերմինը

1. ունի լավ ձեռագիր աջակցություն (այսինքն, α^* , A, C, D *)
2. համապատասխանում է կոնտեքստին
3. բացատրում է այլ տարբերակները
4. տարբերակներից առավել անսովորն է

Ամենատարածված տարբերակը (այսինքն, α^c , D^c, L, և ավելի ուշ փոքրատառ ձեռագրեր) *adiaphthorian* (անկեղծություն) (էջ 654):

2: 8 «Ողջամիտ խօսք» Սա Տիտոս 2: 1 և 2-ում օգտագործված նույն հերթական տերմինն է, որը նշանակում է «առողջ» (փոխաբերական կերպով հակառակ կեղծ ուսուցիչների անառողջ պատգամին):

Արևելահայերեն «անմեղադրելի»
Արևմտահայերեն «անմեղադրելի»

NASB «արժանապատիվ»
NKJV «ակնածանք»
NRSV «ծանրության»
TEV «լուրջ»
NJB «լրջություն»

Տես ամբողջական ծանուցում Տիտոս 2:2

- **«ձեզ վերայ չար ասելու բան չ'ունենալով»** Սա ուղեցույց է ինչպես քրիստոնյա առաջնորդների, այնպես էլ ընդհանուր առմամբ հավատացյալների համար (տես Տիտոս 1: 6-7,8,10; 1 Տիմ. 3: 2,7,10; 5: 8,14; 6: 1): Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 2:
- **«հակառակորդը»** Այս կոնտեքստում դա կարող է վերաբերել (1) Տիտոսի 1: 10-16-ի կեղծ ուսուցիչներին կամ (2) հասարակության անհավատներին, որոնք քրիստոնեությունը քննադատեցին հեթանոսական անտեղյակությունից: Հավատացյալների կյանքը պետք է լռեցնի երկու խմբերին և նրանց ներգրավել ավետարանին:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 2:9-10
Պատաներն իրանց տերերին հնազանդ լինեն, ամեն բաների մեջ հաճոյ լինեն, ոչ թէ հակառակ խօսողեր. ¹⁰Բան չ'թագցնեն, այլ կատարեալ բարի հաւատարմութիւն ցոյց տան. որ մեր Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը զարդարեն ամեն բաների մեջ:

2: 9 «Պատաներն իրանց տերերին հնազանդ լինեն» «Հնազանդ լինել» ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԻՆՖԻՆԻՏԻՎ է (տես Եփ. 6: 5-9; Կոր. 3: 22-24; 1 Տիմ. 6: 1- 2): «Հորդորել» ԲԱՅՐՈՒ ԳԱՂԻԱ է Տիտոս 2: 6-ից: Կանանց պես,

ստրուկներին նույնպես հորդոր կա աստվածահաճո վերաբերմունք ունենալ մշակութային իշխանության կառույցների նկատմամբ Քրիստոսի անվան համար: Խնդիրը անձնական ազատություն չէ, այլ ավետարանչությունը: Տես Հատուկ Թեմա: Պողոսի հորդորները ստրուկներին 1 Տիմ. 6: 1.

- **«ամեն բաների մեջ»** Այս արտահայտությունը կրկնվում է 10-րդ համարի վերջում: Հատկանշական է, որ հավատացյալները գիտակցում են, որ իրենց կյանքը, բոլոր ոլորտներում, արտացոլում է Աստծուն: Այս գաղափարը աստվածաբանորեն զուգահեռ է Եփ. 5:21 փոխադարձ հնազանդությանը և Տիտոս 5: 22-6: 9 աստվածավախ կանանց հնազանդությանը (տես H. E. Butt's *The Velvet Covered Brick*):

- **«հաճոյ լինեն»** Անսասան, բայց ենթադրվող, նշանակությունը ոչ միայն ստրկատերերի համար է, այլև Աստծուն (կարդա Հռ. 12: 1-2; Եփ. 6: 7-8):

Արևելահայերեն «ոչ թե հակառակ խօսողեր»
Արևմտահայերեն «ոչ հակառակախօսներ»

- NASB **«ոչ փաստարկային»**
- NKJV **«չպատասխանել»**
- NRSV, TEV **«չխոսել»**
- NJB **«առանց փաստարկի»**

Թե ինչպես են հավատացյալները կարգավորում են նույնիսկ ծանր իրավիճակները և պայմանները հստակ և վճռական վկայություն է Քրիստոսի հանդեպ իրենց հավատքի մասին (տես Եփ. 6:5-9):

2:10 «Բան չ'բազցնեն» Սա երևի տարածված խնդիր է եղել ստրուկների համար (տես Եփ. 4:28):

- **«ցոյց տան»** Այս տերմինը նշանակում է տալ ինչ-որ բանի արտաքին և հստակ ապացույց: Հավատացյալ ստրուկների կյանքը պետք է փառք բերեր Աստծուն և ապացուցեր ավետարանի կյանքի փոխող գործությունը: Մարդու սոցիալական կարգավիճակը քննադատական խնդիր չէր, այլ նրա կենսակերպը:

- **«մեր Փրկիչ Աստուծոյ»** Սա ընդհանուր տիտղոս էր, որն օգտագործվում էր Կեսարի կողմից և նրա համար: Սա Հռովական Նամակների բնորոշ արտահայտությունն է Աստծո համար (տես Տիտոս 1: 3-2: 10; 3: 4): Նույն տիտղոսը կրկին օգտագործվում է Հիսուսի համար (տես Տիտոս 1: 4; 2:13; 3: 6): Տես ամբողջական ծանուցումը 2 Տիմ. 1:10.

ՏԻՏՈՍ 2:11-14 ՀԱՄԱՐՆԵՐԻ ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս կարճ հատվածը (Տիտոս 2: 11-14) տալիս է քրիստոնյաների աստվածավախ կյանք ապրելու աստվածաբանական պատճառները: Այս քննարկումը շատ նման է Տիտոս 3: 4-7 և 2 Տիմ. 1: 8-10 համարներին:

Բ. Տիտոս 2: 11-ը վերաբերում է Մեսիայի առաջին գալստյանը՝ Մարմնացումը (տես Տիտոս 3: 4; 2 Տիմ. 1:10): Տիտոս 2:13-ում օգտագործվում է նույն տերմինը, «հայտնվելով», որը վերաբերվում

է Քրիստոսի Երկրորդ Գալուստին (տես 1 Տիմ. 6:14; 2 Տիմ. 4:1,8): Առաջին գալուստը բնութագրվում էր Աստծո շնորհքով; երկրորդը՝ կրնութագրվի Աստծո արդարությամբ:

- Գ. Տիտոս 2:12-ը աստվածահաճո կյանքի հատկանիշների ամփոփումն է, որը պահանջվում է առաջնորդներից 1:5-9 և բոլոր քրիստոնյաներից 2:1-10:
- Դ. Տիտոս 2:13-ը ավետարանը սահմանում է Պողոսին բնորոշ կատեգորիայով «արդեն» (Աստծո արքայությունը ներկա է) և «բայց դեռ ոչ» (Աստծո արքայությունը ապագայում է): Այս լարվածությունը վերաբերվում է քրիստոնեական կյանքի մասին Պողոսի քննարկումներից շատերին:
- Ե. Արդյո՞ք Տիտոս 2:13-ում խոսքը միայն Հիսուսի մասին է (տես NASB, RSV, NEB, NIV) թե այն կրկնակի հղում է ուղղված Հայր Աստծուն և Որդի Հիսուսին (տես KJV, ASV, Moffatt թարգմանությունը և 2 Պետ. 1: 1): Կան մի քանի պատճառներ, թե ինչու է հղումը ուղղված Հիսուսի աստվածությանը, որը կրում է այն բոլոր կոչումները, որոնք օգտագործվում էին Հռոմի կայսրի համար.
 - 1. Երկու ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ հետ կա միայն մեկ ՀՈԴ
 - 2. 14 համարը վերաբերվում է միայն Քրիստոսին
 - 3. «մեծ» և «հայտնվել» տերմինները երբեք չեն օգտագործվում Նոր Կտակարանում Հայր Աստծո համար
 - 4. Պողոսը և այլ Նոր կտակարանյան հեղինակների գրվածքներում կան մի քանի այլ հատվածներ, որտեղ լիակատար աստվածը վերագրվում է Հիսուսին
 - 5. վաղ եկեղեցու հայրերի մեծամասնությունը տեսնում էր այն որպես Հիսուսին վերաբերող: Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ վաղ տարբերակները հակված էին ընդունել այդ արտահայտությունը, որպես ՅԱՀՎԵԻՆ և Հիսուսին վերաբերող:
- Զ. 14-րդ համարը նկարագրում է Եկեղեցին Իսրայելի կողմից օգտագործվող Հին Կտակարանյան տերմիններով: Որոշ հատվածներում Եկեղեցին Աստծո Իսրայելի հանդեպ Աստծո ցանկության արդյունք է (տես Հռ. 2: 28-29; Գաղ. 6:16; 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6): Այնուամենայնիվ Իսրայելը մնում է Աստծո յուրահատուկ սիրո և հոգատարության օբյեկտը (տես Հռ.11):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 2:11-14

¹¹Որովհետև Աստուծոյ շնորհքը երեւեցաւ. Որ փրկարար է, ամեն մարդկանց համար. ¹²Որ խրատում է մեզ, որ ուրանանք ամբարշտութիւնը եւ աշխարհական ցանկութիւնները. Եւ խոհեմութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածայաշտութեամբ ապրենք այս աշխարհումը. ¹³Սպասելով այն երանելի յոյսին եւ մեծ Աստուծոյ եւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքի յայտնութեանը, ¹⁴Որ իր անձը մեզ համար տուաւ, որ մեզ ամեն անօրէնութիւնից փրկէ, եւ սրբէ իրան համար յատուկ ժողովորդ շինէ բարի գործերի նախանձաւոր:

2:11 «Որովհետև» 11-14 համարները կապվում են 1-10-ի հետ և աստվածաբանական հիմքեր են տալիս բարեպաշտ կյանք ապրելու համար:

- **«Աստուծոյ շնորհքը երեւեցաւ»** Սա վերաբերվում է Հիսուսի մարմնավորմանը (տես 2 Տիմ. 1:10; Տիտոս 3: 4-7): Հիսուսի կյանքը, ուսուցումը և մահը լիովին բացահայտեցին Հոր սերը, ողորմությունը և շնորհքը: Երբ մենք տեսնում ենք Հիսուսին, մենք տեսնում ենք Աստծուն (տես Հովհ. 1: 1-14; 14: 8-11; Կող. 1: 15-19; Եբր. 1:1-3):

epiphany (հայտնվել) տերմինը օգտագործվում է Տիտոս 2:13-ում Քրիստոսի Երկրորդ Գալուստի համար (տես Տիտոս 2: 11,13; 3: 4; 2 Թես. 2: 8; 1 Տիմ. 6:14; 2 Տիմ. 1: 10; 4: 1,8): Տես Հատուկ Թեմա: Նոր Կտակարանյան տերմիններ Քրիստոսի վերադարձի համար Տիտոս 2:13:

- **«Որ փրկարար է, ամեն մարդկանց համար»** Աստված ուղարկեց Քրիստոսին՝ մահանալու բոլոր մարդկանց մեղքի համար (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:10), բայց նրանք անձամբ պետք է արձագանքեն ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ և համբերությամբ: Հետևյալ հատվածները արտացոլում են Քրիստոսի կատարած գործի համընդհանուր շրջանակները:

1. «Աշխարհի համար» (Հովհ. 1:29; 3:16; 6: 33,51; 2 Կոր. 5:19; 1 Հովհ. 2: 2; 4:14)
2. «բոլոր մարդիկ» (Հռ. 5:18; 1 Կոր. 15:22; 1 Տիմ. 2: 4-6; Եբր. 2: 9; 2 Պետ. 3: 9)

Տես ամբողջական ծանուցում 1 Տիմ. 2: 4 և Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:10.

Աստված մարդկանց ստեղծել է Իր պատկերով (տես Ծննդ. 1: 26-27): Ծննդոց 3:15-ում Նա խոստացավ փրկել բոլոր մարդկանց: Նա մասնավորապես նշում է իր համաշխարհային օրակարգը, նույնիսկ Աբրահամի (տես Ծննդ. 12: 3) և Իսրայելի կանչի մեջ (տես Ելից 19: 5): Հին Կտակարանի խոստումը Իսրայելին (հրեա ընդդեմ հեթանոսի) այժմ ամփոփվում է որպես հավատացյալ և անհավատ (տես Եփ. 2: 11-3: 13): Փրկության Աստծո հրավերը ամբողջ աշխարհի համար է, անհատի վրա կենտրոնացած, և Հոգով գործակած:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ(ԿԱԼՎԻՆԻԶՄ) ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱԶՍ ԿԱՄՔԸ (ԱՐՄԻՆԻԱՆԻԶՄ)

Տիտոս 2:11 հավասարակշռում է ընտրության մասին Նոր Կտակարանյան ուրիշ հատվածները: Ես կարծում եմ, որ աստվածաբանորեն օգտակար կլինի զետեղել իմ մեկնաբանական նյութերը Հռ. 8:29 և 9 գլուխը, ինչպես նաև Եփ. 1:

I. Հռոմեացիս 8:29- Պողոսն օգտագործում է «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ») երկու անգամ, այստեղ և 11:2-ում: 11:2-ում այն վերաբերում է Իսրայելի հանդեպ ունեցած Աստծո սիրուն, որն Աստված ուներ ժամանակներից առաջ: Հիշեք, որ «ճանաչել, իմանալ» տերմինը եբրայերենում կապված էր մտերմիկ, անձնական հարաբերությանը և ոչ թե ինչ-որ մեկի մասին փաստեր ունենալուն (հմտ. Ծննդ. 4:1; Եբ. 1:5): Այստեղ պատկերված են իրար կապակցված մի շարք իրադարձություններ (հմտ. Հռ. 8:29-30): Այս տերմինը կապված է նախասահմանության հետ: Ինչևէ, պետք է հստակ սահմանել, որ Աստծո կանխագիտությունը ընտրության հիմք չէ, եթե դա այդպես լիներ, ապա ընտրությունը կհիմնվեր ապագայում մեղավոր մարդկության արձագանքի վրա, որը կնշանակեր, որ ընտրությունը կախված է մարդու գործերից ու վարքից: Այս տերմինը նաև հանդիպում է Գործք 26:5; 1 Պետ. 1:2,20 " 2 Պետ. 3:17:

Ա. «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ») Երկու տերմիններ էլ «կանխագիտություն» (*proginōskō*) կամ «նախասահմանություն» (*proorizō*) բարդ բառեր են, կազմված «սկզբից, մինչև, նախօրոք» (*pro*) նախդիրից և ուստի պետք է թարգմանվի «իմանալ նախապես», «նախապես սահման դնել» կամ «նախապես չափել»: Նոր կտակարանում նախասահմանության մասին որոշ չափով հստակ հատվածներն են Հռ. 8:28-30; Եփ. 1:3- 14 և Հռ. 9: Այս տեքստերը միանշանակ ընդգծում են Աստծո գերիշխանությունը: Նա է ամեն բանի լիիրավ

հսկողը, ներառյալ մարդու պատմությունը: Գոյություն ունի աստվածային փրկության ծրագիր, որը իրականում է ժամանակի մեջ: Ինչևէ, այս ծրագիրը պատահական կամ ընտրողական չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո գերիշխանության և կանխագիտության վրա, այլ Նրա անփոփոխ կերպարի, որի մեջ մտնում է սերը, ողորմությունը և անարժան շնորհքը: Տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը:

Մենք պետք է զգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) անհատապաշտությունից կամ մեր ավետարանչական նախանձավորության համար, չգունավորելու համար այս հիանալի ճշմարտությունը: Մենք նաև պետք է հսկենք այն, որ չհայտնվենք պատմական աստվածաբանական կոնֆլիկտի մեջ Օգոստինոսի և Պելագիուսի կամ կալվինիզմի և արմինիականության միջև:

Բ. «նախասահմանված» (*proorizō*, «սահմաններ դնել նախապես»)

Նախասահմանությունը մի վարդապետություն չէ, որը նշանակում է սահմանափակել Աստծո սերը, շնորհքն ու ողորմությունը, և ոչ էլ դուրս մղել որոշները ավետարանից: Նրա նշանակությունը ամրապնդում է հավատացյալներին՝ շարունակելով ձևավորել նրանց աշխարհայացքը: Աստված բոլոր մարդկանց համար է (հմմտ. 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9): Աստված է հսկում ամեն բան: Ո՞վ կամ ի՞նչը կարող է մեզ բաժանել Նրանից (հմմտ. Հռ. 8:31-39): Նախասահմանությունը ձևավորում է երկու կերպերից մեկ կյանքին նայելու համար: Աստված նայում է ամբողջ պատմությանը որպես ներկայում կատարվող գործողություն: Մարդիկ սահմանափակ են ժամանակի մեջ: Մեր հեռանկարային և մտային կարողությունները սահմանափակ են: Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև չկա հակասություն: Սա ուխտի յուրահատկությունն է, այսպես է կառուված այն: Եվ սա մեկ ուրիշ օրինակ է այն բանի, որ աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է ներքին դիալեկտիկական հակասությունով: Աստվածաշնչյան վարդապետությունները սովորաբար ներկայացվում են տարբեր տեսանկյուններից:

Նրանք հաճախ թվում են պարադոքսային: Ճշմարտությունը հավասարակշռություն է թվացյալ հակառակ գույգերի միջև: Մենք չպետք է դիտավորյալ հեռացնենք այդ լարվածությունը, ընտրելով երկուսից միայն մեկը: Մենք նաև չպետք է մեկուսացնենք որևէ աստվածաշնչյան ճշմարտություն միայն իր սեփական սահմաններով և մտքերով:

Կարևոր է նաև ավելացնել, որ ընտրության նպատակը ոչ միայն երկինքն է մեր մահից հետո, այլ քրիստոսանմանությունը հիմա ներկայում (տես Հռ. 8: 29-30; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 2:10; 4:13; 1 Թես. 3:13; 4: 3; 5:23; 2 Թես. 2:13; Տիտոս 2:14; 1 Պետ. 1:15): Մենք ընտրվել ենք «սուրբ և անարատ» լինելու համար: Աստված գերադասում է մեզ փոխել այնպես, որ ուրիշները կարողանան տեսնել այդ փոփոխությունները և Քրիստոսի հավատքով արձագանքեն Աստծո կանչին: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ պատասխանատվություն ուխտի համաձայն: Սա հատվածի գլխավոր ճշմարտությունն է: Սա է քրիստոնեության նպատակը: Սրբությունը Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար: Աստծո ընտրությունը դա քրիստոսանման լինելն է (տես Եփ. 1:4), և ոչ թե հատուկ դիրք: Աստծո պատկերը, որը տրվել է մարդուն արարչագործության ժամանակ, (տես Ծննդ. 1:26; 5:1,3; 9:6) պետք է վերականգնվի:

Գ. «կերպարանակից անել Իր Որդու պատկերին» - Աստծո գերագույն նպատակը մեղքի

պատճառով կորած պատկերի վերականգնումն է: Հավատացյալները պետք է քրիստոսանման լինեն (տես Եփ. 1:4):

II. Հռոմեացիս 9

Ա. Հռոմեացիս 9-ը Նոր Կտակարանի ամենաուժեղ հատվածներից մեկն է Աստծո սուվերենության մասին (ուրիշ էակ, Եփ. 1:3-14) մինչ գլուխ 10-ը հստակ և շարունակաբար ընդգծում է մարդու ազատ կամքը (հմտ. «յուրաքանչյուրը» Հռ. 9: 4; «ով որ» 9:11,13; «բոլորը» 9: 12 {երկու անգամ}): Պողոսը երբեք չի փորձում հաշտեցնել այս աստվածաբանական լարվածությունը: Նրանք երկուսն էլ ճշմարտություն են: Աստվածաշնչյան վարդապետություններից շատերը ներկայացված են պարադոքսալ կամ դիալեկտիկական գույգերով: Աստվածաբանության համակարգերից շատերը տրամաբանական են, բայց ունեն հակում ապացուցելու տեքստը աստվածաշնչի ճշմարտության միայն մեկ տարրը: Ինչպես Օգոստինոսիանիզմը և կալվինիզմը, նմանապես կիսա-պեդագյանիզմն ու արմինիանիզմը ունեն ճշմարտության տարրեր և սխալներ: Վարդապետությունների միջև գոյություն ունեցող աստվածաշնչյան լարվածությունը գերադասելի է նայել հիմնավորված տեքստին դոգմատիկ, ռացիոնալ, աստվածաբանական համակարգը, որը Աստվածաշունչը դնում է որոշակի մեկնաբանական սահմանների մեջ:

Բ. Այս նույն ճշմարտությունը հաստատված է Հռ. 8:29-30 և Եփ.1:4,11: Այս գլուխը Նոր Կտակարանում Աստծո գերիշխանության ամենաուժեղ արտահայտությունն է: Այն որ Աստված պատասխանատու է Իր ամբողջ արարչագործության և դրա փրկագնման համար չի կարող վեճի առարկա լինել: Այս մեծ ճշմարտությունը երբեք չպետք է փոքրացնել և ոչ էլ կողքով անցնել: Ինչևէ, պետք է հավասարակշռությունը պահվի ուխտի Աստծո ընտրության որպես միջոց մարդ արարածի հետ հաղորդակցության, Իր պատկերով ստեղծված: Անշուշտ ճիշտ է, որ որոշ Հին Կտակարանային ուխտեր, ինչպես Ծննդ.15, անպայմանական են և ընդհանրապես կախված չեն մարդու արձագանքից, բայց մյուս ուխտերը պայմանական են՝ կախված մարդու արձագանքից (օր. Եդեմ, Նոյ, Մովսես, Դավիթ): Աստված Իր ստեղծագործության համար ունի փրկության ծրագիր և ոչ մի մարդ չի կարող ազդել այս ծրագրի վրա: Աստծո կամքով որոշ անհատներ մասնակցում են Իր ծրագրերի իրականացմանը: Մասնակցության այս հնարավորության մեջ կա աստվածաբանական ճնշում գերիշխանության (Հռ.9) և մարդու ազատ կամքի միջև (Հռ.10):

Ճիշտ չէ վերցնել աստվածաշնչյան մեկ համար և անտեսել մյուսները: Վարդապետությունների միջև կա լարվածություն, որովհետև արևելյան մտածելակերպ ունեցող մարդիկ ճշմարտությունը ներկայացնում են դիալեկտիկական կամ լարվածությամբ լցված գույգեր: Ցանկացած վարդապետություն պետք է փոխկապակցված լինի մյուս վարդապետությունների հետ: Ճշմարտությունը դա ճշմարտությունների մոզայկա է:

III. Եփեսացիս 1

Ա. Ընտրությունը հիանալի վարդապետություն է: Բայց ընտրությունը դա ֆավորիտ/սիրելի լինելը չէ, այլ որ հավատացյալը լինի ճանապարհ, գործիք կամ միջոց, որը կնպաստի ուրիշների փրկությանը: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվում էր ծառայության համար; Նոր Կտակարանում այն հիմնականում օգտագործվում է փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ կոնֆլիկտը Աստծո

գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշնչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հո. 9-ը Աստծո գերիշխան ընտրության վերաբերյալ և Հո. 10-ը մարդու անհրաժեշտ արձագանքի մասին (տես 10:11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ.1:4:

Հիսուսն Աստծո ընտրյալ Մարդն է և բոլոր մարդիկ պոտենցիալորեն ընտրված են Նրանում (Կարլ Բարտ): Հիսուսն Աստծո «այո»-ն է՝ ուղղված մեղավոր մարդու կարիքին (Կարլ Բարտ): Եփեսացիս 1:4 օգնում է հստակեցնել այս վիճելի հարցը, պնդելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (քրիստոսանմանությունը): Ավետարանում մեզ հաճախ գրավում է հավատացյալի շահն ու արտոնությունը, բայց մենք հակված ենք անտեսելու մեր պատասխանատվությունները: Աստծու կանչը (ընտրություն) թե երկրային կյանքի համար է, և թե հավիտենականության:

Աստվածաշնչյան վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անհատապես և անկախ հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ առանձին աստղը: Աստված ներկայացնում է Իր ճշմարտությունները արևելյան ժանրով և ոչ թե արևմտյան: Եվ մենք չպետք է հեռացնենք լարվածությունը, որ կան որոշ վարդապետական ճշմարտությունների մեջ, որ ակնհայտ գոյություն ունեն երկու դիալեկտիկական (պարադոքսալ) կողմերում. (Աստծո գերազանցությունը և Աստծո ներունակությունը; Հավատացյալների ապահովությունը և համբերատարության կարիքը; Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը, քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվությունը ուխտի գործընկերոջը և այլն):

«Ուխտ»-ի աստվածաբանական հասկացողությունը միավորում է Աստծո գերիշխանությունը (Ով միշտ նախաձեռնում և կանոններ է հաստատում) պարտադիր նախասկզբնական և շարունակական ապաշխարհությունը և հավատքի արձագանքը մարդկանց կողմից: Ջգուշացեք փնտրելուց հաստատող տեքստ պարադոքսի միայն մեկ կողմը և նվազեցնել մյուսի իմաստը: Ջգուշացեք հաստատելու միայն ձեր սիրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը:

Բ. «Նա մեզ ընտրեց» Եփ. 1:4 ԱՕՐԻՍ ՉԵԶՈՔ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը շեշտում է ԵՆԹԱԿԱՆ: Սա կենտրոնանում է ժամանակներից առաջ Հոր ընտրության վրա: Աստծո ընտրությունը չպետք է ընկալվի դետերմինիզմի իսլամական իմաստով, ոչ էլ ծայրահեղ կալվինիստական իմաստով, ինչպես որոշները հակառակվում են մյուսներին, բայց վավերական իմաստով: Աստված խոստացավ փրկել մեղավոր մարդկությանը (տես Ծննդ.3:15): Աստված կանչեց և ընտրեց Աբրահամին՝ բոլոր մարդկանց ընտրելու համար (տես Ծննդ. 12:3; Ելից 19:5-6): Աստված Ինքը ընտրեց բոլոր մարդկանց, ովքեր կհավատան Քրիստոսին: Աստված միշտ առաջինն է նախաձեռնում փրկությունը (տես Հովհ. 6:44,65): Այս տեքստը և Հռոմեացիս 9 աստվածաշնչյան հիմք են նախասահմանության վարդապետության համար, ընդգծված Օգոստինոսի և Կալվինի կողմից:

Աստված ընտրեց հավատացյալներին ոչ միայն փրկելու (արդարացում), այլ նաև սրբացման համար (տես Կող. 1:10-12): Սա կարող է վերաբերել (1) մեր դիրքորոշումը Քրիստոսում (2 Կոր. 5:21) կամ (2) Աստծո ցանկությունն է վերարտադրել Իր կերպարը Իր զավակների մեջ (տես Եփ. 2:10; Հո. 8:28-29; Գաղ. 4:19): Աստծո կամքը

Իր գավակների համար հետևյալն է՝ մի օր նրանց տեսնել երկնքում և քրիստոսանման լինել ներկայում:

«Նրանում» բանալի գաղափար է Եփ.1:4: Հոր օրհնությունները, շնորհքը և փրկությունը հորդում են Քրիստոսի միջոցով (տես Հովհ.14:6): Ուշադրություն դարձրեք այս քերական ձևի կրկնողությանը (ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՆՎ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ) հ. 3, «Քրիստոսում» հ.4, «Նրանում» հ.7, «Նրանում» հ.9, «Նրանում» հ.10, «Քրիստոսում», «Նրանում» հ.12, «Քրիստոսում» և հ.13 «Նրանում» (երկու անգամ): Հիսուսն Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկությանը (Կարլ Բարտ): Հիսուսն ընտրյալ է և բոլոր մարդիկ պոտենցիալ կերպով ընտրվում են Քրիստոսի միջոցով:

«Նախքան աշխարհի ստեղծվելը» արտահայտությունը նաև օգտագործվում է Մաթ. 25:34; Հովհ. 17:24; 1 Պետ.1:19-20 և Հայտ.13:8: Այն ցույց է տալիս Երրորդության փրկագնման գործունեությունը նույնիսկ մինչև Ծննդ. 1:1: Մարդիկ սահմանափակ են իրենց ժամանակի զգացողությունով; ամեն ինչ մեզ համար անցյալ, ներկա և ապագա է, բայց ոչ Աստծո համար:

Նախասահմանության նպատակը սրբությունն է, ոչ թե արտոնությունը: Աստծո կանչը Ադամի մի քանի գավակներին ընտրելը չէ, այլ բոլորին: Այդ կանչը այն է, ինչ Աստված նախատեսեց մարդկությանը լինելու Իր նման (տես 1 Թես. 5:23; 2 Թես. 2:13): Իր կերպարին (տես Ծննդ.1:26-27): Սուրբ կյանքի փոխարեն նախասահմանությունը դարձնել աստվածաբանական դավանանք դա ողբերգություն է: Հաճախ մեր աստվածաբանությունները ավելի բարձր են խոսում քան աստվածաշնչյան տեքստը:

«Անբիծ, անարատ» (*amōmos*) կամ «արատ չունենալ» տերմինը օգտագործվում է

1. Հիսուսի (տես Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)
2. Ջաքարիայի և Եղիսաբեթի (տես Ղուկ.1:6)
3. Պողոսի (տես Փիլ. 3:6)
4. բոլոր ճշմարիտ քրիստոնյաների համար (տես Փիլ. 2:15; 1 Թես. 3:13; 5:23):

Աստծո անփոխարինելի կամքը յուրաքանչյուր քրիստոնյայի համար ոչ միայն սպասվող երկինքն է, բայց ներկայում քրիստոսանման լինելը (տես Հռ. 8:29-30; Գաղ. 4:19; 1 Պետ.1:2): Հավատացյալները պետք է արտացոլեն Աստծո առանձնահատկությունները մեղավոր, ընկած աշխարհին ավետարանչության նպատակով:

Քերականորեն «սիրով» արտահայտությունն այս համարում կարող է խոսել հ.4 կամ հ. 5-ի հետ: Ինչնէ, երբ այս արտահայտությունն օգտագործվում է ուրիշ տեղ Եփեսացիս թղթում, այն միշտ վերաբերում է Աստծո հանդեպ ունեցած մարդու սիրուն (տես 3:17; 4:2,15,16):

- Գ. Եփեսացիս 1:5 «Նա նախասահմանեց մեզ» արտահայտությունը ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա հունարեն «նախքան» և «նշան անել» բարդ տերմին է: Այն վերաբերվում է Աստծո նախասահմանած փրկարար ծրագրին (տես Ղուկ. 22:22; Գործք 2:23; 17:31; Հռ.8:29-30): Նախասահմանությունը մարդկության փրկության հետ կապված մի քանի ճշմարտություններից մեկն է: Դա աստվածաբանական օրինակի կամ հարակից ճշմարտությունների շարք է: Սա երբեք չի կարելի ընդգծել առանձին: Աստվածաշնչյան ճշմարտությանը տրվել են մի շարք լարվածությամբ լի, պարադոքսալ գույգեր: Հարանվանությունը հակված է եղել վերացնել

աստվածաշնչյան լարվածությունը՝ ընդգծելով միայն դիալեկտիկական ճշմարտություններից մեկը (նախասահմանությունը և մարդու ազատ կամքը; հավատացյալների ապահովությունը և սուրբերի համբերատարության կարիքը; ադամական մեղքը և կամավոր մեղքը; անմեղությունը և քիչ մեղանչելը; անմիջապես հոչակված սրբացումը և պրոգրեսիվ սրբացումը; հավատքը և գործերը; քրիստոնյայի ազատությունը և քրիստոնյայի պատասխանատվությունը; տրանսցենդենտը և ներհատկությունը):

Աստծո ընտրությունը հիմնված չէ մարդու կանխատեսության վրա, այլ Նրա շնորհալի, ողորմած կերպարի վրա (հմմտ. հհ.9 և 11): Նա ցանկանում է, որ բոլորը (ոչ միայն որոշ հատուկ մարդիկ, ինչպիսիք են գնոստիկները կամ ժամանակակից ծայրահեղ կալվինիստները) փրկվեն (տես Եզ.18:21-23,32; Հովհ.3:16-17; 1 Տիմ.2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9): Աստծո շնորհքը (Աստծո կերպարը) այս հատվածի աստվածաբանական բանալին է (հմմտ. հհ.6,7,9), ինչպես Աստծո ողորմությունն է նախասահմանության այլ հատվածի բանալին, Հռ. 9-11:

Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո շնորհքն ու ողորմությունն է (տես Ես. 53:6 և մի քանի ուրիշ Հին Կտակարանյան մեջբերումներ Հռ. 3:9-18):

Այս առաջին աստվածաբանական գլուխները մեկնաբանելու համար կարևոր է հասկանալ, որ Պողոսը շեշտում է այն բաները, որոնք ամբողջովին կախված չեն մարդուց՝ նախասահմանություն (գլուխ 1), շնորհք (գլուխ 2), և փրկության Աստծո հավիտենական ծրագիրը (խորհուրդ Եփ. 2:11-3:13): Սա կեղծ ուսուցիչների հակակշռող շեշտադրումն է մարդկային արժանիքների և հպարտության վրա:

2:12 «խրատում է մեզ» Այս բառացիորեն նշանակում է երեխայի կարգապահություն կամ խրատ (տես 1 Տիմ. 1:20; 2 Տիմ. 2:25; 3:16): Շնորհքը անձնավորվում է որպես սիրող ծնող (տես Եբր. 12: 5):

- **«ամբարշտութիւնը»** Սա բառախաղ է *asebeia* (անբարոյականություն, անաստվածություն ԱԼՏԱ ԲԱՅԱՍԱԿԱՆ) և *eusebia* (աստվածապաշտություն, բարեպաշտություն, տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7) միջև: Սրանք կարող են արտացոլել Հին Կտակարանի Իմաստուն Գրականության «երկու ճանապարհները» (տես Հեսու 24: 14-15; Սաղմոս 1; Առ. 4: 10-19; Մատթ. 7: 13-14): Մենք պետք է ետ դառնանք չարից, որովհետև Քրիստոսը Իրեն տվեց մեզ ազատելով չարից; մենք պետք է դառնանք դեպի բարին, քանի որ Քրիստոսը օրինակ թողեց: Շնորհքը մեզ սովորեցնում է ինչպես դրական, այնպես էլ բացասական դաս:

- **«աշխարհական ցանկութիւնները»** (տես Տիտոս 3: 3; 1 Տիմ. 6: 9; 2 Տիմ. 2:22; 3: 6; 4: 3)

- **«խոհեմութեամբ»** Տես ամբողջական ծանուցումը 1 Տիմ. 3: 2:

- **«արդարութեամբ»** Տես 2, 4, 5, 6 համարները և Հատուկ Թեմա ստորև

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդարությունը» այնպիսի կարևոր թեմա է, որ Աստվածաշունչ սերտող ուսանողը պետք է անհատականորեն ուսումնասիրի այդ գաղափարը:

Հին Կտակարանում Աստծո բնույթը նկարագրվում է որպես «արդար» կամ «ուղիղ» (ԲԱՅ, BDB 842, KB 1003, ԱՐԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 841, KB 1004, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 842, KB 1006):

Միջազգետքյան տերմինը առաջացել է «գետի եղեգից», որը օգտագործվել է որպես շինարարական գործիք՝ պատերի և ցանկապատերի հորիզոնական ուղղությունը ստուգելու համար: Աստված ընտրեց փոխաբերական կերպով օգտագործել այդ տերմինը Իր բնությունը նկարագրելու համար: Նա ուղիղ գիծ է (քանոն), որով ամեն ինչ գնահատվում և չափվում է: Այս գաղափարը հաստատում է Աստծո արդարությունը և դատելու իրավունքը:

Մարդը ստեղծվել է Աստծո պատկերով (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1,3; 9: 6): Մարդը ստեղծվել է Աստծո հետ հաղորդակցվելու համար (այսինքն, Ծննդ. 3: 8): Ամբողջ ստեղծագործությունը Աստծո և մարդկության փոխհարաբերության բեմն է կամ ֆոնը: Աստված ուզում էր Իր ամենաբարձր ստեղծագործությունը՝ մարդկությունը ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և Իր նման լինի: Մարդու հավատարմությունը փորձվեց (տես Ծննդ. 3) և առաջին զույգը ձախողեց: Սա հանգեցրեց Աստծո և մարդկության միջև փոխհարաբերությունների խզմանը (տես Հո. 5: 12-21):

Աստված խոստացել է վերանորոգել և վերականգնել հաղորդակցությունը (տես Ծննդ. 3:15; տես Հատուկ Թեմա: ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը): Նա դա անում է Իր կամքի և Իր Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել ինտերվալը (տես Հո. 1: 18-3: 20; Հայտ. 5):

Անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար ուխտի գաղափարն էր, հիմնված Նրա հրավերքի և մարդու ապաշխարող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38): Մեղքի պատճառով մարդիկ անկարող էին համապատասխան գործել (տես Հո. 3: 21-31; Գաղ. 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը Իր ձեռքը վերցնե՝ վերականգնելու ուխտը զանց արած մարդկանց: Նա դա արեց

1. Քրիստոսի կատարած գործի (այսինքն, դատական արդարության) միջոցով մարդկությանը արդարացնելու համար,
2. մարդկության ձրի արդարություն տալով Քրիստոսի կատարած գործի միջոցով (այսինքն, դրված արդարություն)
3. տալով Սուրբ Հոգին, որն արդարություն է բերում (այսինքն, Քրիստոսանմանություն, Աստծո պատկերի վերականգնում) մարդկության մեջ
4. վերականգնելու Եդեմի պարտեզի ընկերակցությունը (համեմատել Ծննդոց 1-2-ը, Հայտնություն 21-22-ի հետ)

Սակայն Աստված պահանջում է ուխտի արձագանք: Աստված որոշում է (այսինքն, ձրի տալիս է, տես Հո. 5: 8; 6:23) և հոգում է, բայց մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդ ապրելակերպով
4. համբերությամբ

Արդարությունը, հետևաբար, ուխտի, փոխադարձ գործողությունն է Աստծո և Նրա բարձրագույն ստեղծագործության միջև, հիմնված Աստծո բնույթի, Քրիստոսի կատարած գործի և Հոգու տված կարողության վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձամբ և շարունակաբար պատշաճ արձագանքի: Գաղափարը կոչվում է «արդարացում շնորհքով հավատքի միջոցով» (տես Եփ. 2:8-9): Գաղափարը բացահայտվում է Ավետարաններում, բայց ոչ այս տերմիններում: Այն հիմնականում սահմանում է Պողոսը, որն օգտագործում է հունարեն «արդարություն» տերմինը իր տարբեր ձևերով, ավելի քան 100 անգամ:

Պողոսը, լինելով լավ կրթված ռաբբի, օգտագործում է *dikaionē* տերմինն իր եբրայերեն իմաստով *tsaddiq* տերմինն օգտագործվում է Սեպտուագինդում, ոչ թե հունական գրականության մեջ: Հունարեն գրվածքներում այս տերմինը կապված է այն անձի հետ, ով հավատարիմ է Աստծո և

հասարակության ակնկալիքներին (այսինքն Նոյ, Հոբ): Եբրայերեն իմաստով այն միշտ կառուցված է ուխտի տերմիններով (տես Հատուկ Թեմա: Ուխտ): ՅԱՀՎԵՆ արդար, էթիկական, բարոյական Աստված է: Նա ցանկանում է, որ Իր ժողովուրդն արտացոլի Իր կերպարը: Փրկված մարդը դառնում է նոր արարած (տես 2 Կոր. 5:17; Գաղ. 6:15): Այս նոր լինելը հանգեցնում է աստվածապաշտության նոր ապրելակերպին (տես Մատթեոս 5-7; Գաղ. 5: 22-24; Հակոբոս, 1 Հովհ.): Քանի որ Իսրայելը թեոկրատիա էր, հստակ սահմանազատում չկար աշխարհիկ (հասարակության նորմերի) և սուրբ (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունն արտահայտվում է եբրայերեն և հունարեն լեզուներով՝ թարգմանվելով անգլերեն որպես «իրավունք» (հասարակությանը վերաբերող) և «արդարություն» (կրոնին վերաբերող):

Հիսուսի ավետարանը (բարի լուրը) այն է, որ ընկած մարդկությունը վերականգնվի՝ Աստծո հետ հաղորդակցվելու համար: Դա կատարվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով: Որդու կյանքի, մահվան և հարության շնորհիվ և Հոգու հովանավորության և դեպի ավետարանը քաշելու միջոցով: Արդարացումը Աստծո ձրի գործն է, բայց դա պետք է դրսևորվի աստվածապաշտության մեջ (Օգոստինոսի դիրքորոշումը, որը արտացոլում է թե Ռեֆորմացիայի շեշտադրումը ավետարանի ձրի-ության վրա և թե հռոմեական կաթոլիկ շեշտադրումը՝ սիրո և հավատարմության փոփոխված կյանքի վրա): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն» տերմինը հանդիսանում է ՕԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ (այսինքն մեղավոր մարդկանց Աստծուն ընդունելի լինելու գործողությունը (դիրքի սրբացում), իսկ կաթոլիկների համար դա ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ է, որը Աստծուն ավելի նմանվելու գործընթացն է [փորձառու առաջադիմական սրբացում]: Իրականում, իհարկե, այն երկուսն է:

Իմ Աստվածաշնչի մասին ունեցած կարծիքով Ծննդոց 4-ից մինչև Հայտնություն 20 Աստված վերականգնում է Եդեմի ընկերակցությունը: Աստվածաշունչը սկսվում է երկրի վրա Աստծո և մարդու հաղորդակցությունից (տես Ծննդոց 1-2), և Աստվածաշունչը վերջանում է նույն տեղանքով (տես Հայտ. 21-22): Աստծո պատկերն ու նպատակը կվերականգնվի:

Վերոհիշյալ քննարկումները փաստաթղթավորելու համար ուշադրություն դարձրեք հետևյալ Նոր Կտակարանյան հատվածներին, որոնք լուսաբանում են հունարեն բառախումբը:

1. Աստված արդար է (հաճախ Աստծու որպես Դատավոր)
 - ա. Հռոմեացիս 3:26
 - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1: 5-6
 - գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16: 5
2. Հիսուսն արդար է
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի կոչումը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2: 1,29; 3: 7
3. Աստծո կամքը Իր ստեղծագործության համար արդարությունն է
 - ա. Ղևտացոց 19: 2
 - բ. Մատթեոս 5:48 (տես 5: 17-20)
4. Աստծո արդարության ապահովման և կայացման միջոցները
 - ա. Հռոմեացիս 3: 21-31
 - բ. Հռոմեացիս 4
 - գ. Հռոմեացիս 5: 6-11
 - դ. Գաղատացիս 3: 6-14
5. Տրված Աստծո կողմից

- ա. Հռոմեացիս 3: 24; 6:23
- բ. 1 Կորնթացիս 1:30
- գ. Եփեսացիս 2:8-9
- 6. Հավատքով ստացած
 - ա. Հռոմեացիս 1:17; 3: 22,26; 4: 3,5,13; 9:30; 10: 4,6,10
 - բ. 2 Կորնթացիս 5: 7,21
- 7. Որդու կատարած գործերի միջոցով
 - ա. Հռոմեացիս 5: 21
 - բ. 2 Կորնթացիս 5:21
 - գ. Փիլիպեցիս 2: 6-11
- 8. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն
 - ա. Մատթեոս 5: 3-48; 7: 24-27
 - բ. Հռոմեացիս 2:13; 5:1-5; 6: 1-23
 - գ. Եփեսացիս 1:4; 2:10
 - դ. 1 Տիմոթեոս 6:11
 - ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
 - զ. 1 Հովհաննես 3:7
 - է. 1 Պետրոս 2:24
- 9. Աստված արդարությամբ կդատի աշխարհին
 - ա. Գործք 17:31
 - բ. 2 Տիմոթեոս 4: 8

Արդարությունը Աստծո առանձնահատկությունն է, ձրի տրված Քրիստոսի միջոցով մեղավոր մարդկությանը: Դա է

1. Աստծո որոշումն է
2. Աստծո պարզևն է
3. Քրիստոսի գործը
4. ապրելու կյանքը

Բայց դա նաև արդարացման գործընթաց է, որը պետք է ուժեղ և հաստատակամորեն պահել, որը մի օր կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ համագործակցությունը վերականգնվում է փրկության ժամանակ, սակայն առաջ է ընթանում կյանքի ընթացքում՝ մահվան կամ *Parousia* ժամանակ Նրա հետ դեմ առ դեմք հանդիպելով (տես 1 Հովհ. 3: 2):

Ահա լավ մեջբերում այս քննարկումն ավարտելու համար: Այն վերցված է *Dictionary of Paul and His Letters* from IVP .

«Կավվինը ավելի շատ, քան Լյութերը, ընդգծում է Աստծո արդարության հարաբերական կողմը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության մասին կարծես ներառում է արդարացման ասպեկտը: Կավվինը շեշտում է հաղորդակցության հրաշալի բնույթը կամ Աստծո արդարության մեզ վրա դրվելը» (էջ 834):

Ինձ համար հավատացյալի հարաբերությունը Աստծո հետ ունի երեք ասպեկտ:

1. ավետարանը մարդ է (Արևելյան Եկեղեցու և Կավվինի շեշտադրումը)
2. ավետարանը ճշմարտություն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. ավետարանը փոխված կյանք է (կաթոլիկ շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճշմարիտ են և պետք է միասին ընկալվեն՝ առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան քրիստոնեության համար: Եթե որևէ մեկը գերակշռում է կամ արժեզրկվում է, խնդիրներ են առաջանում:

Մենք պետք է ընդունենք Հիսուսին:

Մենք պետք է հավատանք ավետարանին:
Մենք պետք է ձգտենք Քրիստոսանմանությանը:

- «այս աշխարհում» Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 6:17.

2:13 «Մպասելով» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ է, որը վերաբերվում է Քրիստոսի վերադարձի շարունակական անձնական ակնկալիքին:

- «երանելի յոյսին» Սա ևս մեկ հղում է Երկրորդ Գալուստին:
- «յայտնություն» տես ստորև Հատուկ Թեմա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Վախճանաբանական շեշտադրում հատուկ գալիք օրվա վրա, երբ մարդիկ կհանդիպեն Հիսուսին (որպես Փրկիչ և Դատավոր) մի քանի անուններով է հանդես գալիս:

1. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրը» (տես 1 Կոր. 1:8)
2. «Տիրոջ օրը» (տես 1 Կոր. 5: 5; 1 Թես.5:2; 2 Թես.2: 2)
3. «Տեր Հիսուսի օրը» (տես 2 Կոր.1:14; MS ռ ունի «Տեր Հիսուսի...» 1 Կոր. 5:5;)
4. «Հիսուս Քրիստոսի օրը» (տես Փիլ. 1: 6)
5. «Քրիստոսի օրը» (տես Փիլ.1:10; 2:16)
6. «Նրա օրը (Մարդի Որդին)» (տես Ղուկ.17:24)
7. «այն օրը, երբ Մարդու Որդին կհայտնվի» (տես Ղուկ.17:30)
8. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը» (տես 1 Կոր. 1:7)
9. «երբ Տեր Հիսուսը հայտնվի երկնքից» (տես 2 Թես. 1:7)
10. «Տեր Հիսուսի ներկայությամբ Իր գալստյան ժամանակ» (տես 1 Թես. 2:19)

Առնվազն չորս կերպ կա, որոնցում Նոր Կտակարանի հեղինակները խոսում են Հիսուսի վերադարձի մասին:

1. *epiphaneia*, որը վերաբերում է կուրացնող պայծառությանը, որը աստվածաբանորեն (թե ոչ ստուգաբանորեն) կապված է «փառքի» հետ: 2 Տիմ. 1:10; Տիտոս 2:11 և 3:4 վերաբերում է Հիսուսի առաջին գալստյանը (այսինքն, մարմնավորմանը) և Նրա Երկրորդ գալուստին: Այն օգտագործվում է 2 Թես. 4: 8, որը ներառում է Երկրորդ Գալստյան բոլոր երեք հիմնական տերմինները. 1 Տիմ.6:14; 2 Տիմ. 4: 1,8; Տիտոս 2:13:
2. *parousia*, որը նշանակում է ներկայություն և ի սկզբանե վերաբերվում էր արքայական այցին: Սա ամենատարածված տերմինն է (տես Մատթ. 24:3,27,37,39;1 Կոր.15:23; 1 Թես. 2:19; 3:13; 4:15; 5:23; 2 Թես.2: 1,8; Հակ.5: 7,8; 2 Պետ.1: 6; 3: 4,12; 1 Հովհ. 2:28):
3. *apokalupsis* (կամ *apocalypsis*), որը նշանակում է մերկացնել, ծածկոցը հանել՝ բացահայտելու նպատակով: Սա Նոր Կտակարանի վերջին գրքի անունն է (տես Ղուկ.17:30; 1 Կոր. 1: 7; 2 Թես. 1: 7; 1 Պետ. 1: 7; 4:13):
4. *phaneroō*, որը նշանակում է թեթև կամ հստակ բացահայտում կամ դրսևորում: Տերմինը հաճախ օգտագործվում է Նոր Կտակարանում Աստծո հայտնության բազմաթիվ ասպեկտների համար: Սա, ինչպես *epiphaneia*, կարող է վերաբերվել Քրիստոսի առաջին գալստյանը (տես 1 Պետ. 1:20; 1 Հովհ. 1: 2; 3: 5,8; 4: 9) և Նրա երկրորդ գալստյանը (տես Մատթ. 24:30; Կող. 3: 4; 1 Պետ. 5: 4; 1 Հովհ. 2:28; 3: 2):

5. «Գալուստ» *erchomai* հասկացության ընդհանուր տերմինը երբեմն օգտագործվում է նաև Քրիստոսի վերադարձի համար (տես Մատ.16:27-28; 23:39; 24:30; 25:31; Գործք 1:10-11; 1 Կոր. 11:26; Հայտ. 1: 7,8):

6. Այն նաև օգտագործվում է «Տիրոջ օրը» արտահայտությամբ (տես 1 Թեա. 5:2), որը Աստծո օրվա օրհնության (հարության) և դատաստանի Հին Կտակարանյան անվանումն է:

Նոր Կտակարանը ամբողջությամբ գրված է Հին Կտակարանի աշխարհայացքի շրջանակներում, որը պնդում է

ա. ներկայիս չարը, ապստամբ ժամանակաշրջանը

բ. արդարության գալիք նոր դարաշրջանը

գ. Մեսիայի (Օծյալի) կատարած գործի միջոցով Հոգու կողմից բերված ժամանակաշրջանը,

Պրոգրեսիվ հայտնության աստվածաբանական ենթադրությունը պարտադիր է, քանի որ Նոր Կտակարանի հեղինակները թեթևակի կերպով փոխում են Իսրայելի ակնկալիքները: Մեսիայի զինվորական, ազգայնական (Իսրայել) գալստյան փոխարեն, երկու գալուստ կա: Առաջին գալուստը դա աստվածության մարմնավորումն է Հիսուս Նազովրեցու հասկացությամբ և ծնունդով: Նա եկավ որպես ոչ զինվորական, ոչ դատական «տառապող ծառա» Ես.53: Նա եղի (ոչ թե պատերազմական ձիու կամ թագավորական ջորու) ավանակի վրա հեծած, Չաբ. 9: 9: Առաջին գալուստը սկսեց Նոր Մեսիական ժամանակաշրջանով՝ Աստծո Թագավորությունը երկրի վրա: Մի առումով Թագավորությունը այստեղ է, բայց, իհարկե, մյուս առումով այն դեռ հեռու է: Այս լարվածությունը, Մեսիայի երկու գալուստների միջև, որը, մի իմաստով, երկու հրեական ժամանակաշրջանների համընկնումն է, որը Հին Կտակարանում անտեսանելի էր, կամ, գոնե անհայտ: Իրականում, այս երկակի շեշտը ընդգծում է ՅԱՀՎԵԻ բոլոր մարդկությանը փրկելու պարտավորությունը (տես Ծննդ. 3: 15; 12: 3; Ելից 19: 5 և մարգարեների քարոզչությունը, հատկապես Եսայիա և Հովնան):

Եկեղեցին չի սպասում Հին Կտակարանի մարգարեության կատարմանը, քանի որ շատ մարգարեություններ վերաբերվում են առաջին գալուստ (տես, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 165-166): Հավատացյալներն ակնկալում են հարուցյալ Թագավորների Թագավորի և Տերերի Տիրոջ փառահեղ գալուստը, արդարության նոր ժամանակաշրջանի ակնկալվող պատմական իրականացումը երկրի վրա այնպես, ինչպես երկնքում է (տես Մատթ. 6:10): Հին Կտակարանի ներկայացումները սխալ չէին, բայց ոչ էլ լիարժեք (տես [Հատուկ Թեմա: Ինչու՞ են Հին Կտակարանի Ուխտի խոստումները կարծես թե տարբերվում Նոր Կտակարանի Ուխտի խոստումներից](#)): Նա կվերադառնա այնպես, ինչպես որ մարգարեները կանխատեսել էին՝ ՅԱՀՎԵԻ իշխանությունով և գործությունով:

Երկրորդ գալուստը աստվածաշնչյան տերմին չէ, բայց գաղափարը ամբողջ Նոր Կտակարանի աշխարհայացքն է և շրջանակը: Աստված բոլորը ուղղելու է: Աստծո և Իր պատկերով ստեղծված մարդու միջև հաղորդակցությունը կվերականգնվի: Չարը դատապարտվելու է և հեռացվելու: Աստծո նպատակները ոչ, չեն կարող, չկատարվել:

Առաջին դարի եկեղեցին երկրպագում էր թե շաբաթ և թե շաբաթվա առաջին օրը (այսինքն, կիրակի, հարության օրը): Ժողովարանը դիմեց աճող քրիստոնեական շարժմանը՝ պահանջելով անդամներին մերժել Հիսուսին, որպես Մեսիա (այսինքն 18 օրհներգությունները): Այս պահին (70թ.) քրիստոնյաները հանդիպում են բացառապես կիրակի օրը:

▪ «**փառքի**» Այս բառը կարելի է հասկանալ երկու ձևով 1) «փառահեղ հայտնվելը» (տես NKJV) կամ 2) «փառքի հայտնվելը» (տես NASB, NRSV , TEV և NJB): Հին Կտակարանում փառքը հաճախ

կապվում է Աստծո ներկայության հետ (հատկապես *Shekinah* փառքի ամպը անապատում թափառելու ժամանակ): Փառք բառը առաջացել է եբրայերեն *kabod* տերմինից, որը վերաբերում է պայծառ շքեղությանը: Երկրորդ Գալուստի հետ կապված հունարեն տերմիններից երկուսը վերաբերում է նաև պայծառությանը կամ շքեղությանը՝ *epiphaneia* (տես Մաթ. 25:31) և *phanerōō* (տես Մաթ. 24:30): Հիսուսը խոսեց Իր և Իր Հոր փառքի մասին Հովհ. 17: 1-5,22,24:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (*doxa*)

«Փառք»-ի աստվածաշնչյան գաղափարը դժվար է սահմանել: LXX- ն օգտագործեց *doxa* –ն թարգմանելու ավելի քան քսան եբրայերեն բառեր: Այն բազմիցս տարբեր ձևերով օգտագործվել է Նոր Կտակարանում: Այն վերաբերում է Աստծուն, Հիսուսին, մարդկությանը և Մեսիական Թագավորությանը:

Հին Կտակարանում ամենատարածված եբրայերեն բառը «փառք»-ի համար (*kabod*, BDB 458, KB 455-458) սկզբում առևտրային տերմին էր, որը վերաբերում էր կշեռքի նժարներին («ծանր լինել», KB 455): Այն, ինչը ծանր էր, արժեքավոր էր կամ ուներ հատուկ զին: Հաճախ պայծառության գաղափարին ավելացվել է բառ՝ Աստծո մեծությունը արտահայտելու համար (տես Ելից 19: 16-18; 24:17; 33:18; Ես. 60: 1-2): Միայն Նա է արժանի և պատվավոր (տես Սաղ. 24: 7-10; 66: 2; 79: 9): Նա շատ փայլուն է, պայծառ ընկած մարդկության համար, ուստի Նա Իրեն ծածկում է ամպով, ձեռքով կամ ծխով (տես Ելից 16: 7,10; 33: 17-23; Ես. 6: 5): ՅԱՀՎԵՆ կարող է ճշմարտապես երևալ միայն Քրիստոսի միջոցով (տես Հովհ. 1:18; 6:46; 12:45; 14: 8-11; Կող.1: 15; 1 Տիմ. 6:16; Եբր.1: 3; Հովհ. 4:12):

kabod բառի համար լիարժեք քննարկում, տես Հատուկ Թեմա: Փառք (Հին Կտակարան): Հավատացյալների փառքը այն է, որ նրանք հասկանում են ավետարանը և փառքը Աստծո մեջ, այլ ոչ թե իրենց (տես 1 Կոր. 1: 29-31; Եր. 9: 23-24): Մանրամասն քննարկման համար տես NIDOTTE, հատոր 2, էջ 577-587:

▪ **«մեծ Աստուծոյ եւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի»** Այստեղ Հիսուսին միանշանակորեն տրվել է Աստծո տիտղոսը: Կայսերը ունեցել են նմանատիպ կոչումներ (օր. Պտղոմեոս I): «Հայտնվել» (որը կոնտեքստում վերաբերվում է Քրիստոսի Երկրորդ Գալուստին) և «մեծ» տերմինները երբեք չեն օգտագործվում ՅԱՀՎԵՆ համար: Բացի այդ «Փրկիչ» բառի հետ ՀՈՂ չկա: Կոյնե հունարենի շարադրանքը սատարում է սա որպես Հիսուսի կոչում, քանի որ երկու ԳՈՅԱԿԱՆՆԵՐՆ էլ ունեն միայն մեկ ՀՈՂ (տես NET Աստվածաշունչը): Հիսուսն Աստված է (տես Հովհ. 1: 1; 8: 57-58; 20: 28; Հո. 9:5; Փիլ. 2:6; 2 Թես. 1:12; Եբր. 1:8; 2 Պետ. 1: 1,11; 1 Հովհ. 5:20): Հին Կտակարանում Մեսիան (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 1) ակնկալվում էր, որ լինեք աստվածային ուժ ունեցող մեկը, ինչպես դատավորները: Նրա աստվածությունը զարմացրեց բոլորին (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄՈՆՈԹԵԻԶՄ](#) 1 Տիմ. 2: 5):

2:14 «Որ իր անձը մեզ համար տուաւ» Սա հետևում է Սարկ. 10:45; 2 Կոր. 5:21; և Եբր. 9:14 աստվածաբանությանը: Սա վերաբերվում է փոխարինող քավությանը (տես Ես. 53; Գաղ. 1: 4; 1 Տիմ. 2: 5-6; Եբր. 9: 12-15; 1 Պետ. 1: 18-19): Հայր Աստվածը «ուղարկեց», բայց Որդին «Իրեն տվեց»:

▪ **«մեզ փրկել»** «Փրկանք» և «փրկագնում» տերմիններն ունեն Հին Կտակարանյան արմատներ (NASB ներկայացնում է Տիտոս 2: 14-ը որպես Հին Կտակարանյան մեջբերում): Երկու բառերն էլ վերաբերվում են ստրկությունից գնված որևէ մեկին, ինչպես Իսրայելը փրկվեց Եգիպտոսից: Սա նաև ենթադրում է, որ հավատացյալները Քրիստոսի միջոցով ազատ են մեղքի զորությունից (տես Հո. 6): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿԱՆՔ/ՓՐԿԱԳՆՈՒՄ](#) 1 Տիմ. 2: 6:

▪ **«սրբէ»** Հղում է Տիտոս 2:13-ում «Արդարության» մասին Հատուկ Թեման: Աստվածաբանական հարցն այն է, թե ինչպես է Նա սրբացնում, մաքրում մարդկանց: Արդյո՞ք դա ձրի նվեր է Քրիստոսի միջոցով, տրված աստվածային հրամանով, թե՞ դա լիազորված, ապաշխարող, հնազանդ, համբերատար հավատք է: Արդյո՞ք այդ բոլորը Աստծո գործն է, թե՞ լիազորված մարդկային արձագանքը:

Ինձ համար, քանի որ ես Աստվածաշունչը համարում եմ պարադոքսալ գույգերով ներկայացված ճշմարտությունը, դա թե սուրբ Աստծո ձրի գործն է և թե մեղավոր մարդու անհրաժեշտ նախնական և շարունակական գործողությունը (տես Հատուկ Թեմա Տիտոս 2: 11): Սրանք միավորված են «ուխտ» գաղափարի մեջ (տես Հատուկ Թեմա 2 Տիմ. 2: 1):

▪ **«իրան համար յատուկ ժողովուրդ»** Սա Հին Կտակարանի ուխտի տերմինաբանությունն է (տես Ելից 19: 5; 2 Օր. 14: 2; 1 Պետ. 2: 5,9,10; Հայտ. 1: 6): Եկեղեցին հոգևոր Իսրայելն է (տես Գաղ. 6:16; Հռ. 2:29): Եկեղեցին ունի բոլոր մարդկանց քարոզելու իշխանությունը (տես Մատթ. 28:19-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8), ավետարանը բաժնեկցելով և ավետարանը ապրելով:

▪ **«բարի գործերի նախանձառ»** Քրիստոնեության նպատակը ոչ միայն երկինքն է, երբ հավատացյալները մահանում են, այլև հիմա Քրիստոսանմանությունը (տես Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 2:10): Աստծո ժողովուրդը բնութագրվում է բարի գործերի փափագով (տես Հակոբոս և 1 Հովհ.):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 2:15
¹⁵Այդ բաները խօսիր եւ յորդորիր եւ յանդիմանիր բոլոր սաստկութիւնով. ոչ ով քեզ չ'անարգէ:

2:15 «խօսիր եւ յորդորիր եւ յանդիմանիր» Կան երեք ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝ շարունակիր սովորեցնել (տես Տիտոս 2:1), շարունակիր հորդորել և շարունակիր հանդիմանել (տես 2 Տիմ. 3:16): Եկեղեցու առաջնորդները պետք է խրախուսեն սուրբերուն և ճանաչեն կեղծ ուսուցիչներին:

▪ **«բոլոր սաստկութիւնով»** Հիսուսի մասին ասվում է, որ ունի ամեն իշխանություն (*exousia*) երկնքում և երկրի վրա (տես Մատթ. 28:18): Նա այս իշխանությունը հանձնեց Իր Առաքյալներին (Պողոսը, լինելով վերջինը, ժամանակից դուրս ծնված): Պողոսը իր իշխանությունը (*epitaē*) հանձնեց Տիմոթեոսին և Տիտոսին, որպես իր անձնական ներկայացուցիչները:

Այս ականատեսների մահից հետո գրված Նոր Կտակարանը (ինչպես նաև Հին Կտակարանը) իշխանություն է դարձել «հավատացյալների հաջորդ սերունդների համար» (տես 2 Տիմ. 3:15-17):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ (*exousia*)

I. Ղուկասն է օգտագործում- Հետաքրքիր է նայել Ղուկասի օգտագործած *exousia* (իշխանություն, զորություն, ուժ կամ օրինական իրավունք):

1. Ղուկաս 4: 6 – սատանան ակնարկում է, որ կարող է Հիսուսին իշխանությունը տալ:
2. Ղուկաս 4:32, 36- հրեաները զարմանում էին, թե ինչպես է Հիսուսը սովորեցնում, օգտագործելով Իր անձնական հեղինակությունը:
3. Ղուկաս 9: 1- Նա սովեց Իր զորությունն ու իշխանությունը Իր Առաքյալներին:
4. Ղուկաս 10:19- Իր իշխանությունը սովեց յոթանասուն միսիոներներին:
5. Ղուկաս 20: 2,8- տրվում է Հիսուսի իշխանության հիմնական հարցը:

6. Ղուկաս 22:53 - չարին թույլատրված է դատապարտել և սպանել Հիսուսին: Թեև ոչ Ղուկասում, Մատթեոսի Մեծ Պատվիրանում (Մատթ. 28:18), «ամեն իշխանություն ինձ է տրվել երկնքում և երկրի վրա», հրաշալի հայտարարությունն է Հիսուսի իշխանության մասին: Հիսուսը պնդում էր, որ Նա իշխանություն ունի, քանի որ

1. Աստված խոսեց Իրեն հետ
 - ա. մկրտություն (Ղուկաս 3: 21-22)
 - բ. այլակերպություն (Ղուկաս 9:35)
2. Հին Կտակարանյան իրականացած մարգարեությունը
 - ա. Հուդայի ցեղը (տես Ծննդ. 49:10)
 - բ. Հեսսեի ընտանիքը (տես 2 Թագ. 7)
 - գ. ծնված Բեթլեհեմում (տես Միքիա 5: 2)
 - դ. ծնված Դանիել 2-ի չորրորդ կայսրության ժամանակ (Հռոմ)
 - ե. օգնել աղքատներին, կույրերին, կարիքավորներին (Եսայիա)
3. Նրա դևեր հանելը բացահայտեցին Նրա զորությունն ու իշխանությունը սատանայի և նրա թագավորության վրա
4. Մահացածներին վերակենդանացնելը ցույց տվեց Իր զորությունը ֆիզիկական կյանքի և մահվան վրա:
5. Նրա հրաշքները բացահայտում են Նրա զորությունը և իշխանությունը ժամանակավորի, տարածականի և ֆիզիկականի վրա:
 - ա. բնություն
 - բ. կերակրելը
 - գ. բուժելը
 - դ. միտք կարդալը
 - ե. ձուկ բռնելը

II. Պողոսը քրիստոնյա կանանց հետ կապված կիրառեց «իշխանություն» բառը իշխանության հարցը ևս քննարկվում է 1 Կոր.11-ում՝ կապվախ կնոջ գլուխը ծածկելու հետ: Հետևյալ գրառումներս են.

1 Կորնթ. 11:10 «Նորա համար պետք է, որ կինը շուք դնե գլխի վերայ հրեշտակների համար»: 1 Կորնթացիսի մեջ իշխանության օգտագործումը կարելի է հասկանալ մի քանի ձևով: Հիմնական խնդիրը (այս կոնտեքստում) այն է, որ «հեղինակություն» է ներկայացնում (*exousia*):

Նախ, պետք է նշել, որ *exousia* հաճախ կապված է *dunamis* (զորություն) հետ: Օտտո Բեթզը հետաքրքիր հոդված ունի *exousia* -ի վերաբերյալ *New International Dictionary of New Testament Theology*, հատոր 2, էջ 606-611: Ահա հինգ օրինակ.

«Հատկանշական է Նոր Կտակարանի համար, որ *exousia*- ն *ei dunamis*- ը երկուսն էլ կապված են Քրիստոսի կատարած գործի, տիեզերական ուժային կառույցների նոր կարգադրության հետևանքի և հավատացյալների գորացման հետ» (էջ 609):

«Հավատացյալների *exousia* : Քրիստոնյա հավատացյալի իշխանությունը հիմնված է Քրիստոսի իշխանության վրա և բոլոր ուժերի զինաթափման վրա, դա նշանակում է թե ազատություն և թե ծառայություն» (էջ 611):

«Նա ազատ է ցանկացած բան անելու համար (1 Կոր. 6:12; 10:23 *exestin*), այս պնդումը, որը սկզբնապես արվեց Կորնթոսի աղանդավոր էնտոզիաստների կողմից, գրավեց Պողոսին և ընդունվեց որպես ճիշտ» (էջ 611):

«Գործնականում, սակայն, այս տեսականորեն անսահմանափակ ազատությունը

կառավարվում է այն հանգամանքով, թե ինչն է օգտակար մյուս անհատ քրիստոնյաների համար և ամբողջ համայնքի, հաշվի առնելով, որ լիակատար փրկագնումը դեռ զալու է (1 Կոր.6:12; 10: 23)»(էջ 611):

«Ամեն բան օրինաւոր է [*exestin*] ինձ, բայց ամեն բան օգուտ չէ. ամեն բան օրինաւոր է [*exestin*] ինձ, բայց ամեն բան շինութիւն չէ տալիս: Ոչ ով միայն իր անձի օգուտը չ'որոնէ, այլ ամեն մէկն ընկերինն էլ» (1 Կոր. 10: 23): Այս մեջբերումների միջի մեջբերումը հավանաբար Կորնթոսի ազատականների կարգախոսն է: Պողոսը համարում է նրանց, ընդունելով իրենց ճշմարտությունը, բայց ցույց տալով, որ այն ամբողջ ճշմարտությունը չէ»(էջ 611):

Պողոսը հաճախ օգտագործում է այս երկու տերմինները Կորնթոսի եկեղեցուն ուղղված իր նամակներում:

1. *exousia*, 1 Կոր. 7:37; 9: 4,5,6,12 (երկու անգամ), 18; 11:10; 2 Կոր. 13:10
2. *dunamis*, 1 Կոր. 1:18; 2: 4,5; 4: 19,20; 5: 4; 15: 24,43; 2 Կոր. 4: 7; 6: 7; 8: 3 (երկու անգամ); 12:9; 13: 4 (երկու անգամ)

Իրավունքներն ու իշխանությունը հիմնական խնդիրներն էին ինչպես օրինականների, այնպես էլ ազատամիտների համար: Պողոսը փորձում է գիծ գծել երկու ծայրահեղությունների միջև: Այս կոնտեքստում քրիստոնյա կանայք խրախուսվում են ընդունելու Աստծո տված ստեղծագործության կարգը (այսինքն, Քրիստոս-տղամարդ-կին), Թագավորության առաջխաղացման նպատակով: Պողոսը հաստատում է սկզբնական փոխհարաբերությունը (տես Ծննդ. 1: 26-27, 2:18), 1 Կոր. 11: 11-12: Դա աստվածաբանորեն վտանգավոր է

1. այս կոնտեքստում մեկ համար մեկուսացնել
2. կիրառել կոշտ սիստեմատիկ հարանվանական ցանց, յուրաքանչյուր դարում յուրաքանչյուր մշակույթի մեջ տղամարդկանց և կանանց / ամուսինների և կանանց հարաբերությունների կապակցությամբ
3. բաց թողնել Պողոսի հավասարակշռությունը քրիստոնեական ազատության և քրիստոնեական հավաքական ուխտի պարտավորությունների միջև

Որտեղից էին քրիստոնյա կանայք ստանում ազատությունը՝ մասնակցելու որպես առաջնորդ պաշտամունքի հավաքույթի ժամանակ (այսինքն տնային եկեղեցի): Անկասկած, ոչ ժողովարանից: Արդյո՞ք դա մշակութային միտում էր վերցված առաջին դարի հռոմեական հասարակությունից: Դա, անշուշտ, հնարավոր է, և իմ կարծիքով օգնում է բացատրել այս գլխի բազմաթիվ ասպեկտներ: Այնուամենայնիվ, հնարավոր է նաև, որ ավետարանի գորությունն է կորած «Աստծո պատկեր» վերականգնելու աղբյուրը: Մարդկային կյանքի և հասարակության բոլոր ոլորտներում ցնցող նոր հավասարություն կա: Բայց այս հավասարությունը կարող է վերածվել անձնական շահագործման լիցենզիայի: Պողոսը խոսում է այս անհամապատասխան ընդլայնման մասին:

F. F. Bruce, *Answers to Questions*, իսկապես օգնեց ինձ մտածել ժամանակակից արևմտյան քրիստոնեության եկեղեցական ավանդույթների հետ կապված բազմաթիվ հակասական հարցերի շուրջ: Որպես վերլուծաբան ես միշտ մտածել էի, որ կանանց ծածկվելը նախատեսված էր ցույց տալ Աստծո պարզեր (կամ Ծննդ. 1: 26,27 համահավասարությունը), ոչ թե նրա ամուսնու իշխանությունը: Այնուամենայնիվ, ես չէի կարողանում գտնել այս մեկնաբանությունը աստվածաշնչյան ռեսուրսների մեջ, որը ես օգտագործում եմ, հետևաբար, ես չէի ցանկանում մեկնաբանել այն, կամ քարոզել / ուսուցանել: Ես դեռ հիշում եմ այն հուզմունքը և ազատությունը, երբ ես զգացի, որ F. F. Bruce-ը նույն բանն էր մտածում (տես *Answers to Questions*, էջ 95): Կարծում եմ, բոլոր

հավատացյալները կանչված են, լիիրավ, Քրիստոսի նվիրյալ սպասավորներ (տես Եփ. 4: 11-12):

- **«ոչ ով քեզ չ'անարգե»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ Ժխտական ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես 1 Տիմ. 4: 12): Սա կարող է վերաբերվել
 1. նրանց, ովքեր եկեղեցու ներսում էին և Տիտոսի տարիքի կամ տրված իշխանության առնչությամբ դժգոհություններ ունեին
 2. նրանց, ովքեր ներգրավված էին կեղծ ուսուցիչների հետ, հնարավոր է, նույնիսկ գլխավոր խոսնակի հետ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Այս գլխում խոսվում է Քրիստոսի առաջին գալստյան թե՞ Նրա Երկրորդ Գալուստի մասին:
2. Ի՞նչ է նշանակում 13 համարը:
3. Թվարկեք քարոզիչի երեք առաջադրանքները Տիտոս 2:15
 - ա.
 - բ.
 - գ.
4. Արդյո՞ք Տիտոս 2:15-ը փակում է 2-րդ գլուխը, թե սկսում է 3-րդ գլխի քննարկումը:

ՏԻՏՈՍ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

USB ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պատրաստ լինել քարի գործերի համար	Շնորհքի ժառանգների ժառանգությունը	Հովիվը և Հոտը (2:1-3:11)	Քրիստոնեական վարքագիծ	Ընդհանուր հրահանգներ հավատացյալների համար
3:1-7	3:1-8	2:15-3:8ա	3:1-8ա	3:1-3 3:4-8ա
3:8-11	Խուսափեք կռիվներից 3:9-11	3:8բ-11	3:8բ-11	Անձնական խորհուրդ Տիտոսին 3:8բ-11
Անձնական հրահանգներ և բարևներ	Վերջնական պատգամներ	Վերջնական հրահանգներ	Վերջնական հրահանգներ	Գործնական խորհուրդներ, հրաժեշտներ և բարեմաղթանքներ
3:12-14	3:12-14 Հրաժեշտ	3:12-14	3:12-14	3:12-14
3:15	3:15	3:15ա 3:15բ	3:15ա 3:15բ	3:15

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն

4. և այլն

ՏԻՏՈՍ 3 ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Այս գլուխը բնութագրում է ամբողջ գրքի թեմաները:
 1. Քրիստոնեական բնույթը ընդգծվում է Տիտոս 1:16; 2: 7,14; 3: 1-2, 8
 2. Քրիստոնեական վարդապետությունը ամփոփված է Տիտոս 2: 11-14 և 3: 4-7
 3. Հավատացյալները պետք է ճիշտ ապրեն, քանի որ նրանք հաշտվել են Աստծո հետ: Մենք պետք է վերցնենք մեր Հոր ընտանիքի հատկանիշները: Քրիստոնեության նպատակը ոչ միայն երկինքն է, երբ մենք մահանում ենք, այլ Քրիստոսանմանությունը հիմա (տես Հռ. 8: 28-29; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 1 Թես. 3: 13; 4: 3): Մեր նոր կյանքի նպատակը՝ ավետարանը հասցնել մեղավորներին (տես Մատթ. 28: 18-20; Ղուկ. 24: 46-47; Գործք 1: 8): Բայց Պողոսը ուզում է համոզվել, որ «լավ ապրելու» կոչը չշփոթեն «արդարության գործերի հետ»:

- Բ. Ողջ Երրորդությունը ակտիվ է մարդկության փրկության մեջ (տես Հատուկ Թեմա Տիտոս 3: 6)
 1. Հոր սերը (Տիտոս 3: 4)
 2. Հոգու նորոգումը և մկրտությունը (Տիտոս 3: 5)
 3. Որդու միջնորդությունը (Տիտոս 3:6)

- Գ. Տիտոս 3:9-11-ը Պողոսի շարունակական նախազգուշացումն է կեղծ ուսուցիչների դեմ և հորդոր բարեպաշտ գործերին, որոնք այնքան բնորոշ են Հովվական Նամակներին (տես Տիտոս 1: 10-16; 1 Տիմ. 1: 3-7):

- Դ. Տիտոս 3: 12-15-ը տալիս է Տիտոսին քաջալերանքի և հրահանգների անձնական եզրակացությունը:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 3:1-11

¹Նորանց միտքը բեր, որ իշխանություններին եւ պետություններին հնազանդեն, հպատակեն, եւ ամեն բարի գործերի համար պատրաստ լինին. ²Ոչ մէկին չ'հայհոյեն, կռիւ չ'անեն, հեզ լինեն, ամեն մարդկանց ամեն քաղցրութիւն ցոյց տան: ³Որովհետեւ մենք էլ էինք մի ժամանակ անմիտ, անհնազանդ, մոլորած, ցանկութիւնների եւ կերպ կերպ անատակութիւնների ծառայողներ, վարվում էինք չարութիւնով եւ նախանձով, ատելի էինք, եւ իրար ատող: ⁴Բայց երբ որ մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնը եւ մարդասիրութիւնը յայտնուեցաւ, ⁵Ոչ թէ արդարութեան գործերիցը, որ մենք արինք, այլ իր ողորմութեան համեմատ փրկեց մեզ միւսանգամ ծնուելու աւագանովը, եւ Մուրբ Հոգու նորոգութիւնովը, ⁶Որ առատութիւնով թափեց մեզ վերայ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ձեռովը, ⁷Որ նորա շնորհքովն արդարացած ժառանգ լինենք յաւիտենական կեանքի յոյսովը: ⁸Ճշմարիտ է այս խօսքը եւ կամենում եմ, որ դու այս բաները հաստատես, որ Աստուծուն հաւատացողները ջանք անեն բարի գործերի մէջ կենալու, սորանք են բարի եւ մարդկանց օգտակար: ⁹Բայց յիմար վիճարբանութիւններից, ազգահամարներից եւ հակառակութիւններից, եւ օրէնքի կռիւներից ետ քաշուիր. որ անօգուտ եւ ունայն են: ¹⁰Հերձուածող մարդից, երբոր առաջին եւ երկրորդ անգամ խրատել ես, ետ կաց: ¹¹Գիտենալով որ այնպիսին ծռուած է եւ մեղք է գործում ինքն իր անձը դատապարտելով:

3: 1 «Նորանց միտքը բեր» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը նշանակում է «շարունակել հիշեցնել»: Սա ակնհայտորեն կապված է 2: 15-ի հետ: Տիտոսը նրանց պետք է հիշեցնեք այն ամենի մասին, ինչ նրանք արդեն գիտեին (տես 2 Տիմ. 2:14; 2 Պետ. 1:12; 3: 1-2; Հուդա 1: 5): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՉԱՐ ԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#) Նոր Կտակարանում 1 Տիմ. 1: 9:

- **«հնազանդեն»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԻՆՖԻՆԻՏԻՎ է, որը նշանակում է «շարունակել քո անձը հեղինակության, իշխանության տակ դնել»: Սա զինվորական տերմին է հրամանների շղթայի համար: Այս նույն տերմինը օգտագործվում է քրիստոնյա կանանց համար, Տիտոս 2: 5 և քրիստոնյա ծառաներ համար, Տիտոս 2: 9: Այն նաև օգտագործվում է Եփ. 5:20-ում բոլոր քրիստոնյաների համար: Սա հիմնականում քրիստոնյաների համար կյանքի կեցվածք է բոլոր առումներով: Տես Հատուկ Թեմա: Հնազանդություն (*hypotassō*) Տիտոս 2: 5:

- **«իշխանություններին և պետություններին»** Այս երկու տերմինները՝ *exousia* (տես Հատուկ Թեմա Տիտոս 2:15) և *archē* (տես ստորև Հատուկ Թեմա) Միջերկրական աշխարհում ունեն լայն նշանակություն: Այնուամենայնիվ, իշխանության կամ գործության տեսանկյունից որոշակի իմաստային համընկնում կա:

1. *Exousia* օգտագործվում է քաղաքացիական իշխանությունների համար Հռ. 13: 1 և Տիտոս 3:1: 1 Տիմ. 2: 2 և 1 Պետ. 2: 13-17-ը աստվածաբանորեն զուգահեռ են, թեև այս երկու հատուկ հունարեն տերմինները չեն օգտագործվում:
2. *Exousia* և *archē* օգտագործվում են հոգևոր իշխանությունների և ուժերի համար Եփ. 2: 2 և Կող. 2:15: Եփ. 3:10 և 6:12 այս երկու տերմինները կապված են «երկնավորների հետ», որը հատուկ է Եփեսացիսին և վերաբերվում է մարդկային պատմության մեջ գործող հոգևոր աշխարհին:
3. Կան Պողոսին պատկանող մի քանի տեքստեր, որոնք միավորում են քաղաքացիական և հոգևոր իշխանությունները (այսինքն, 1 Կոր. 15:24; Եփ. 1:21 և Կող. 1:16):

Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ](#) 1 Տիմ. 2:2.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԿԻԶԲ/ՄԱԳՈՒՄ ARCHĒ

Հունարեն *archē* տերմինը նշանակում է ինչ-որ բանի «սկիզբ» կամ «ծագում»:

1. ստեղծված կարգի սկիզբը (տես Հովհ. 1: 1; Եբր. 1:10)
2. ավետարանի սկիզբը (տես Մարկ. 1: 1; Փիլ. 4:15; 2 Թես. 2:13; Եբր. 2: 3; 1 Հովհ. 1:1)
3. առաջին ականատեսները (տես Ղուկ. 1: 2)
4. նշանների սկիզբը (հրաշքներ, տես Հովհ. 2:11)
5. սկզբունքների սկիզբը (տես Եբր. 5: 12)
6. հավաստիացում, հիմնված ավետարանի ճշմարտությունների վրա (տես Եբր. 3:14)
7. սկիզբը, Կող. 1:18; Հայտ. 3:14

Այն օգտագործվել է «կանոն» կամ «հեղինակություն» բառի համար,

1. մարդկային իշխանությունների համար
 - ա. Ղուկ. 12:11
 - բ. Ղուկ. 20:20
 - գ. Հռ. 13:3; Տիտոս 3:1
2. հրեշտակային իշխանությունների համար
 - ա. Հռ. 8: 38
 - բ. 1 Կոր. 15:24

գ. Եփ. 1:21; 3:10; 6:12

դ. Կոր. 1:16; 2: 10,15

ե. Հուդա 1: 6

Հուդա գիրքի այս կեղծ ուսուցիչները արհամարհեցին բոլոր իշխանությունները՝ երկրային և երկնային: Նրանք անտիոնոմյան ազատամիտներ են: Նրանք իրենց և իրենց ցանկությունները դրեցին Աստծուց, հրեշտակներից, քաղաքացիական իշխանություններից և եկեղեցական առաջնորդներից առաջ:

▪ **«հպատակեն»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԻՆՏԻՆԻՏԻՎ է: Սա բարդ բառ է և բառախաղ «հնազանդվել» (*peithomai*), ինչպես նաև «իշխանավորներ» (*archē*): Այն գտնվում է Նոր Կտակարանում միայն այստեղ Գործք 27:21: Հնազանդության և ենթարկվելու գաղափարը կրկնվում է քրիստոնյա կանանց, երեխաներին և ծառաներին ուղղված Պողոսի հորդորներում Եփ. 5: 21-6: 9 և Կոր. 3:18-25:

▪ **«ամեն բարի գործերի համար պատրաստ լինին»** Այս արտահայտությունը կոնտեքստում կարող է վերաբերվել հավատացյալների ծառայությանը քաղաքացիական իշխանություններին և (կամ) համայնքային ծառայությանը՝ իրենց մերձավորներին: Սակայն նման արտահայտություններ հայտնվում են 2 Տիմ. 2:21 և 3:17, որտեղ կոնտեքստը վերաբերվում է ընդհանուր առմամբ աստվածահաճո կյանքին (տես Տիտոս 2:14; 2 Կոր. 9:8; Եփ. 2:10): Տիտոսի 1:16-ի կեղծ ուսուցիչները անորակ են ցանկացած աշխարհիկ կամ հոգևոր բարի գործի համար:

3: 2 Այս նախադասությունը թվարկում է չորս բաներ, որոնք քրիստոնյաները պետք է անեն իրենց հարևանների, ընկերների հետ: Քրիստոնյաներն իրենց թաղամասերում փոքրամասնություն էին կազմում: Թե ինչպես են նրանք վարվել՝ վճռորոշ վկայություն էր: Բացի այդ, այս ցանկը կարող է արտացոլել, թե կեղծ ուսուցիչներն ինչ են անում իսկ ճշմարիտ հավատացյալները ինչ չպետք է անեն:

Սա լավ խորհուրդ է քաղաքական գործողությունների մեջ ներգրավված ժամանակակից հավատացյալների համար: Թե ինչպես ենք գործում, դա այնքան կարևոր է, ինչքան որ ինչ ասում ենք: Ոչ մի պատճառ չի հետաձգում ավետարանչությունը:

Արևելահայերեն «Ոչ մեկին չ'հայհոյեն»

Արևմտահայերեն «Մեկը ուն հայհոյութիւն չընեն»

NASB «ոչ ոքի չգրպարտել»

NKJV, NRSV «ոչ ոքի համար չարը չխոսել»

TEV «որևէ մեկի համար չչարախոսել»

NJB «այլ մարդկանց մասին չբանբասել»

Այս տերմինը բառացիորեն նշանակում է «հայհոյանք» (տես 1 Տիմ. 1:13,20; 2 Տիմ. 3: 2; 1 Պետ. 4: 4; 2 Պետ. 2: 2,10,11,12): Այն սովորաբար օգտագործվում է Աստծո մասին չար խոսելու համար (տես Մաթ. 26:65): Այն օգտագործվել է Պողոսի կողմից, ով պնդում է, որ քրիստոնյայի վարքագծի պատճառով ավետարանի մասին չպետք է չարը խոսվի (տես Հռ. 14:16; 1 Կոր. 10: 30 և այստեղ): Թե ինչպես են հավատացյալներն ապրում, կարևոր է եկեղեցու ավետարանչական վկայության համար:

▪ **«կրիւ չ'անեն»** Սա, ինչպես այս բոլոր երեք տերմինները, վերաբերվում է հավատացյալի շփումը անհավատների հետ: Տես ծանուցում 1 Տիմ. 3: 3:

▪ **«հեզ լինեն»** Տես ծանուցում 1 Տիմ. 3: 3:

Արևելահայերեն «ամեն մարդկանց ամեն քաղցրություն ցույց տան»

Արևմտահայերեն «ամեն մարդու քաղցրություն ցուցնեն»

NASB «բոլոր մարդկանց հանդեպ հոգատարություն ցույց տալ»

NKJV, NRSV «բոլորի հանդեպ քաղաքավարություն ցուցաբերել»

TEV «միշտ ցուցաբերել նրբանկատ վերաբերմունք բոլորի հանդեպ»

NJB «միշտ քաղաքավարի լինել բոլոր տեսակի մարդկանց հետ»

Այս արտահայտությունը կրկին վերաբերվում է հավատացյալների գործողություններին անհավատների նկատմամբ: 2 Տիմ. 2:25 վերաբերվում է հավատացյալների հանդեպ ունեցած մեր գործողություններին (տես 1 Տիմ. 6:11):

«Բոլորի» թեման բնորոշ է Հովվական Նամակներին: Աստված սիրում է բոլոր մարդկանց, Հիսուսը բոլոր մարդկանց համար մահացավ, քրիստոնյաները պետք է դրականորեն արձագանքեն բոլոր մարդկանց (տես 1 Տիմ. 2: 1,4,6; 4:10; Տիտոս 2:11):

3: 3 «Որովհետև մենք էլ էինք մի ժամանակ» Այս համարում նկարագրված գործողությունները բնութագրում են մեղավոր մարդկությունը (Ծննդոց 3; Հռ. 1: 19-3: 31), նույնիսկ քրիստոնյաներին, մինչ նրանց փրկվելը (տես Հռ. 1: 29-31; 2 Կոր. 6: 9-11; Եփ. 2: 3; 4: 17-21; Գաղ. 5: 19-21):

- **«անմիտ»** Այս տերմինը «մտածելու» կամ «տրամաբանելու» բացասական տերմինն է (կարդա Ղուկ. 6:11; 24:25; Հռ. 1: 14,21; Գաղ. 3: 1, 3; 1 Տիմ. 6: 9; 2 Տիմ. 9: 9): Սա սխալ, անտեղի մտածողության համար օգտագործվող ուժեղ տերմին է:

- **«անհնազանդ»** Սա «հավատալը» տերմինն է, որը բացակայում է: Այն օգտագործվել է

1. Ագրիպասա թագավորը Գործք 26:19
2. հեթանոսները Հռ. 1:30; Եփ. 2: 2; 5: 6
3. հրեաները Ղուկ. 1:17; Հռ. 11: 30,32; Եբր. 4: 6
4. կեղծ ուսուցիչները Տիտոս 1:16; 2 Տիմ. 3: 2

- **«մոլորած»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը բառացիորեն նշանակում է «խաբված» կամ «գայթակղված»: Այն ի սկզբանե վերաբերում էր թափառական, շրջմոլիկ մարդուն (այսինքն, մոլորակները, որոնք չեն հետևում գիշերային երկնքի համաստեղությունների ակնկալվող ընթացքին) և անգլերենում կոչվում են «մոլորակ»: Այն օգտագործվում է որպես փոխաբերություն մի բանի համար, որը սխալմունք է, մոլորված է և այլն: Այս տերմինը, ինչպես նախորդ երկուսը, օգտագործվում է Պողոսի կողմից՝ մարդու մեղքը նկարագրելու համար, Հռ. 1:27 և 2 Թեա. 2:11: Նաև նկատեք դրա օգտագործումը 1 Տիմ. 4: 1-2; 2 Տիմ. 3:13; 1 Պետ. 2:25; 2 Պետ. 2:18; 3:17; և Հուդա 11:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ ենթադրում է արտաքին գործոնի գործողություն, այստեղ սատանան կամ դիվայինը:

- **«ծառայողներ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը բառացիորեն նշանակում է «ծառայել որպես ստրուկներ» մարդկային ցանկություններին (տես Հռ. 6: 6,12):

- **«կերպ կերպ»** Սա «գունավոր» ածականն է, որն օգտագործվում էր ծիածանի համար: Այն օգտագործվել է բազմակողմանի բաների համար (այսինքն, [1] 1 Պետ. 1: 6 և Հակոբոս 1: 2, շատ կամ

կերպ կերպ փորձությունները, որոնց ենթարկվում են հավատացյալները և [2] 1 Պետ. 4:10, երվիներանգ, Աստծո շնորհքի բազմակողմանի բնույթը):

- **«ցանկությունների»** Սա բարդ տերմին է կազմված «վրա» (*epi*) և «մտքի կամ հոգու» (*thumos*) բառերից: Այն վերաբերվում է ինչ-որ բանի հանդեպ ուժեղ ցանկություն ունենալուն, հաճախ բացասական իմաստով: Այս տերմինը նաև օգտագործվում է Հռ. 1:24՝ մեղավոր մարդկությանը նկարագրելու համար:
- **«անատակությունների»** Մենք անգլերեն «հեղոնիզմ» տերմինը ստանում ենք այս հունարեն բառից (կարդա Ղուկ. 8:14; Հակ. 4: 1-3): Անձնական բավարարվածությունը կարող է դառնալ բռնակալ:
- **«վարվում էինք չարությունով եւ նախանձով»** Սա մեկ այլ նկարագրություն է Հռ. 1:29-ում մեղավոր մարդկության առանձնահատկություններից:

Արևելահայերեն «ատելի էինք, եւ իրար ատող»
Արևմտահայերեն «ատելի էինք եւ մեկգմեկ կատէինք»

NASB, NKJV «ատող, ատում են միմյանց»
NRSV «վիրավորական է, ատում են միմյանց»
TEV «մյուսները ատեցին մեզ և մենք ատեցինք նրանց»
NJB «ատում ենք միմյանց և ատում ենք մեզ»

Սա օգտագործում է երկու հոմանիշ հունարեն տերմիններ աստվածության համար (ԱՇՄԿԱՆ *stugētos* և ԴԵԴԲԱՅ *miseō*): Խնդիրների այս ցանկը հիշեցնում է Մատթ. 7, «նրանց պտուղներից դուք կիմանաք նրանց»: Այս կոնտեքստը նկարագրում է հավատացյալներին նախքան ապաշխարելը, բայց հույսով ենք, ոչ թե դրանից հետո: Այն շարունակում է նկարագրել կեղծ ուսուցիչներին և նրանց խաբեբա հետևորդներին:

3: 4-7 Սա հունարենում մեկ երկար նախադասություն է, որը սահմանում է ավետարանը (նման է 2: 11-14): Դա կարող է նույնիսկ վերցված լինել օրհներգից, հավատամքից կամ երգից (տես Nestle-Aland Greek NT 26 և 27 հրատարակություններ):

3: 4 «Բայց երբ որ քաղցրությունը եւ մարդասիրությունը՝ Օ՛, ինչպիսի փոփոխություն է շնորհքը բերում: Մենք անգլերեն «բարեգործություն, մարդասիրություն» տերմինը ստանում ենք այս բառից, որը կազմված է երկու հունարեն բառերից «եղբայրական սեր» (*phileō*) և «մարդկություն» (*anthropos*): Նոր Կտակարանում այս բառը գտնվում է միայն այստեղ և Գործք 28: 2-ում: Աստված սիրում է Իր պատկերով ստեղծված մարդկանց (այսինքն, Ծննդ. 1: 26-27), նույնիսկ մեղավոր մարդկանց (տես Հռ. 5: 8):

- **«մեր Փրկիչ Աստուծոյ»** Սա ՅԱՀՎԵԻ նկարագրությունը (տես 4 Թագ. 13:5; Սաղ. 106:21; Ես. 19:20; 43:3,11; 45:15,21; 49:26; 60:16; Ղուկ. 1:47): Սա կարող է արտացոլել Կայսրի համար օգտագործվող ժամանակակից տիտղոսները (տես 1 Տիմ. 1: 1): Սա Հովվական Նամակների բնորոշ արտահայտություն է: Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսին կոչում են նույն անունով ինչ Տիտոս 3: 6-ում (տես 1 Տիմ. 1:1; 2: 3; 4:10; Ղուկ. 2:11; Հովհ. 4:42; Գործք 5:31; 13:23; 2 Տիմ. 1:10): Համեմատեք Տիտոս 1: 3-4; 2: 10-13; 3: 4-6: Հորը և Որդուն միավորելու եղանակներից մեկը՝ երկուսի համար էլ

նույն անունը օգտագործելն էր: Արարիչ Աստծո սիրտը՝ փրկել, ազատագրել, ներել, վերականգնել, վերամիավորել Իր ապստամբ արարածներին (տես Հովհ. 3:16; Հռ. 5:8): Տես ամբողջ ծանուցումը 2 Տիմ. 1:10.

▪ **«այստնուեցաւ»** Սա վերաբերվում է Հիսուսի առաջին գալուսն: Նույն տերմինը օգտագործվում է Տիտոս 2:13-ում, Հիսուսի Երկրորդ Գալուստի համար (տես 1 Տիմ. 6:14): Տես Հատուկ Թեմա: Նոր Կտակարանյան տերմիններ Քրիստոսի վերադարձի համար Տիտոս 2:13: Աստծո խոստացված փրկությունը (այսինքն, Մեսիան, տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 1) ծնվել է Բեթլեհեմում (տես Տիտոս 2:11):

3: 5 «փրկեց մեզ» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է ավարտված գործողություն անցյալում: Սա Տիտոսի 3: 4-7 երկար հունարեն նախադասության հիմնական ԲԱՅՆ է: Տես Հատուկ Թեմա. Հունարեն Բայի ժամանակաձևերը, որոնք օգտագործվում են Փրկության համար 2 Տիմ. 1: 9:

▪ **«Ոչ թե գործերիցը, որ մենք արինք»** Այս արտահայտությունը հունարեն նախադասության մեջ դրվում է սկզբում՝ շեշտադրման համար: Փրկությունը հիմնված է ոչ թե մարդկանց ջանքերի վրա, այլ Աստծո գործն է դա (տես Տիտոս 3: 20,28; 4: 4-5; Հռ. 9:11; Գաղ. 2:16; Եփ. 2:8-9; 3: 9; 2 Տիմ. 9: 9): Սա աստվածաբանական լարվածություն է «հավատք առանց գործերի» և «հավատքի գործեր»-ի միջև (տես Եփ. 2:8-10; Հակ. 2:14-26): Հովվական Նամակների հրեա գնոստիկ կեղծ ուսուցիչները շեշտում էին մարդկային արժանիքները:

▪ **«արդարութեան»** Հավատացյալները պետք է հետամուտ լինեն արդարությանը (այսինքն Քրիստոսանամանությանը) փրկվելուց հետո (տես 1 Տիմ 6:11), բայց մեղավոր մարդիկ երբեք չեն կարող մոտենալ սուրբ Աստծուն իրենց ինքնաարդարության արժանիքների հիման վրա (տես Ես. 64: 6 և մի շարք Հին Կտակարանյան մեջբերումներ Հռ. 3: 10-18): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ](#) Տիտոս 2:12.

▪ **«այլ իր ողորմութեան համեմատ»** Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո սիրառատ, ողորմած շնորհքն է: Դա նրա բնավորությունն ու նպատակասլաց գործողությունն է, որը հանգեցրել է ներման և վերականգնման հնարավորությանը (տես Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5-6; Մաղ. 3:6; Եփ. 2: 4-7; 1 Պետ. 1: 3): Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:10.

▪ **«միսանգամ ծնուելու աւագանովը»** Սա բառացիորեն նշանակում է «վերականգնվել, ծնվել լվացվելով»: Լվանալ, լվացվել, լողանալ տերմինը (*loutron*) օգտագործվում է երկու անգամ միայն Նոր Կտակարանում (Եփ. 5:26 և այստեղ): Այն հազվադեպ է օգտագործվում Սեպտուագինդում: Դա կարող է վերաբերվել

1. լողանալու տեղին
2. լողանալու ջրին
3. լողանալու գործողությանը

Ղևտացոց գրքում լվացումը մաքրովղ մարդկանց կամ իրերի խորհրդանիշն էր (տես Մեռյալ Ծովի մագաղաթները): Եփ. 5:26 լվացվելը վերաբերվում է ծիսական լվացվելուն ամուսնությունից առաջ:

«Վերածնում» (*palingenesia*) տերմինը հազվագյուտ տերմին է, որը հանդիպում է միայն Մատթ. 19:28 և այստեղ: Այն «կրկին» (*palin*) և «ծնունդ» (*genesis*) բարդ կապակցությունն է: Հետևաբար, այն

վերաբերվում է նոր ծնունդին, որը կատարվում է Քրիստոսի ավարտված գործի և Հոգու փչելու շնորհիվ: Նոր ծնունդի գործը ջրային մկրտությունն է, Սուրբ Հոգու գործունը (տես Տիտոս 3: 5-6), Քրիստոսի մահվան և հարության միջոցով (տես Տիտոս 3:6) և այս ամենի հիմքը Հոր սերն ու ողորմությունն է (տես Տիտոս 3: 4): Սա այն տեքստը չէ, որը աջակցում է մկրտությամբ վերածնմանը: Մկրտությունը հանրային խոստովանության / դավանության առիթ էր (տես Գործք 2:38) և հավատացյալի Քրիստոսի հետ մահանալու, թաղվելու և հարություն առնելու խորհրդանշական գործողությունն է (տես Հռ. 6: 3-9; Կոր. 2:12): Վաղ եկեղեցում մկրտությունը հնարավորություն էր մարդու հավատքի հրապարակային դավանության համար («Հիսուսը Տեր է», տես Հռ. 10:13): Ուշադրության կենտրոնում Սուրբ Հոգու գործողությունն է (այսինքն, ծնել և նորոգել):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

- I. Մկրտությունը հրեական կյանքում
 - Ա. Մկրտությունը առաջին և երկրորդ դարի հրեաների համար սովորական ծես էր:
 1. երկրպագության նախապատրաստում տաճարում (այսինքն, մաքրագործման ծես)
 2. պրոֆեթիաների ինքնամկրտությունը

Եթե հեթանոսական ծագում ունեցող որևէ մեկը պետք է դառնար Իսրայելի լիարժեք զավակ, նա ստիպված էր կատարել երեք առաջադրանք.

 - ա. թլփատությունը, եթե տղամարդ էր
 - բ. ինքնամկրտում ընկղմամբ, երեք վկաների ներկայությամբ
 - գ. գոհաբերություն տաճարում
 - 3. մաքրման ծեսը (տես Ղևտացոց 15)

Պաղեստինում առաջին դարի աղանդավորական խմբերի մեջ, ինչպես օրինակ Էսսենների, մկրտությունն ակնհայտորեն սովորական, կրկնվող փորձառություն էր: Այնուամենայնիվ, հուդայականության համար, Հովհաննեսի ապաշխարության մկրտությունը նվաստացուցիչ էր Աբրահամի զավակի համար անցնել հեթանոսական ընդունման ծեսի միջով:

 - Բ. Որոշ Հին Կտակարանյան նախադեպեր կարող են հղում կատարել ծիսական լվացման համար:
 1. որպես հոգևոր մաքրության խորհրդանիշ (տես Ես. 1:16)
 2. որպես քահանաների կողմից կատարված հերթական ծես (տես Ելից 19:10; Ղև. 16)

Պետք է նշել, որ առաջին դարի հրեական մշակույթի մյուս բոլոր մկրտություններն ինքնակառավարվող էին: Միայն Հովհաննես Մկրտիչի մկրտության կոչը նրան ներգրավեց որպես գնահատող/դատավոր (տես Մաթ. 3:7-12) և ապաշխարության այս գործողության ադմինիստրատոր (Մատթ. 3: 6):
- II. Մկրտությունը Եկեղեցում
 - Ա. Աստվածաբանական նպատակը
 1. մեղքերի թողություն - Գործք 2:38; 22:16
 2. Սուրբ Հոգու ընդունում - Գործք 2:38 (Գործք 10: 44-48)
 3. միություն Քրիստոս հետ – Գաղ. 3: 26-27
 4. եկեղեցու անդամակցություն - 1 Կոր. 12:13
 5. հոգևոր շրջադարձի խորհրդանիշը - 1 Պետ. 3: 20-21
 6. հոգևոր մահվան և հարության խորհրդանիշը - Հռ. 6: 1-5
 - Բ. Մկրտությունը վաղ եկեղեցու հնարավորությունն էր մարդու հրապարակային դավանության (կամ խոստովանության) համար: Դա փրկության մեխանիզմ չէ/չէր, այլ

հավատքի բանավոր հաստատման առիթ (այսինքն, հավանաբար «Հիսուսը Տեր է»): Հիշեք, որ վաղ եկեղեցին չուներ շենքեր և հանդիպում էին տներում կամ հաճախ գաղտնի վայրերում՝ հավաճանքների պատճառով:

- Գ. Շատ մեկնաբաններ պնդել են, որ 1 Պետրոսը մկրտության քարոզ է: Չնայած հնարավոր է, բայց սա չէ միակ տարբերակը: Ճիշտ է, որ Պետրոսը հաճախ օգտագործում է մկրտությունը որպես հավատքի անհրաժեշտ տարր (տես Գործք 2: 38,41; 10:47): Այնուամենայնիվ, դա սրբազան արարողություն չէ/չէր, այլ հավատքի քայլ, որը խորհրդանշում է մահը, թաղումը և հարությունը, քանի որ հավատացյալը նույնանում է Քրիստոսի սեփական փորձառության հետ (տես Հռ. 6: 7-9; Կող. 2:12): Գործողությունը խորհրդանշական է, այլ ոչ թե սրբազան: գործողությունը խոստովանության առիթն է, ոչ թե փրկության մեխանիզմը:

III. Մկրտությունը և ապաշխարությունը Գործք 2:38-ում

Curtis Vaughan, Գործքն ունի հետաքրքիր ծանուցում 28 էջ, Գործք 2: 38-ի վերաբերյալ:

«Մկրտվել» հունարեն բառը երրորդ դեմքի հրամայական է, «ապաշխարել» բառը, երկրորդ դեմքի հրամայական: Այս փոփոխությունը ավելի ուղղակիորեն երկրորդ դեմքի հրամանից ավելի քիչ ուղիղ երրորդ դեմքի «մկրտված» բառը, ենթադրում է, որ Պետրոսի գլխավոր պահանջը, որը առաջնային կարևորության էր, վերաբերվում էր ապաշխարությանը:

Սա հետևում է Հովհաննես Մկրտչի (տես Մատթ. 3: 2) և Հիսուսի (տես Մատթ. 4:17): քարոզչության շեշտադրմանը: Ապաշխարությունը կարծես հոգևոր բանալին է, իսկ մկրտությունը՝ հոգևոր փոփոխության արտաքին դրսևորումը: Նոր Կտակարանը ոչինչ չի հայտնում չմկրտված հավատացյալների մասին: Վաղ եկեղեցու համար մկրտությունը հավատքի հանրային խոստովանությունն էր: Դա Քրիստոսի հավատքի հրապարակային խոստովանության դեպքն է, ոչ թե փրկության մեխանիզմը: Պետք է հիշել, որ մկրտությունը չի հիշատակվում Պետրոսի երկրորդ քարոզում, բայց ապաշխարությունը՝ այո (տես Գործք 3:19; Ղուկ. 24:17): Մկրտության օրինակ թողեց Հիսուսը (տես Մատթ. 3: 13-18): Մկրտությունը պատվիրվեց Հիսուսի կողմից (տես Մատթ. 28:19): Փրկության համար մկրտության անհրաժեշտության արդի հարցը Նոր Կտակարանում չի քննարկվում, բոլոր հավատացյալները պետք է մկրտվեն: Այնուամենայնիվ, պետք է նաև պահպանվել սրբազան մեխանիզմից: Փրկությունը հավատքի խնդիր է, ոչ թե ճիշտ տեղ, ճիշտ խոսքեր, ճիշտ ծիսական գործողություն:

- **«նորոգությունվր»** Սա նաև հազվագյուտ տերմին է, որը Նոր Կտակարանում օգտագործվում է միայն երկու անգամ, այստեղ և Հռ. 12: 2: Սա նշանակում է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան դարձնել նոր: Համապատասխան տերմին կարելի է գտնել Կող 3:10-ում: Քերականորեն այն հոմանիշ է «վերածնունդ» բառին: Կա միայն մեկ ՀՈՒ (dia) նրանց երկուսի համար: Հետևաբար, սա ոչ թե շնորհքի երկու գործերն են, այլ մեկ գործի երկու կողմերը: Սա նշանակում է, որ դրանք մեկ գործողություն են, որոնք կառավարվում են Սուրբ Հոգով: Դա նման կլինի Հովհ. 3: 5-8 և 1 Պետ. 1:23:

3: 6 «թափեց» Սա կարող է վերաբերվել Հորը (տես Տիտոս 3: 4) կամ Սուրբ Հոգուն (տես Տիտոս 3: 5): Նույն ԲԱՅՈՒ նույն երկխոսությունում օգտագործվում է Գործք 2: 17-18,33; 10:45, որը վերցված է Հովհ. 2: 28-30:

- «մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ձեռովը» «Փրկիչ» անունը կիրառվում է Հայր Աստծո համար, իսկ հիմա Տիտոս 3: 4-ում Որդի Աստծո համար: Նույն անունները փոփոխաբար կարելի է գտնել Տիտոս 1: 3-4 և 2:10 և 13:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ծանոթացեք Երրորդության բոլոր երեք անձանց գործունեությանը միասնական կոնտեքստներում: «Երրորդություն» տերմինը առաջինը առաջ քաշվեց Տերտուլիանոսի կողմից, այն աստվածաշնչյան բառ չէ, բայց գաղափարը տարածված է:

- Ա. Ավետարանները
 1. Մատթ. 3: 16-17; 28:19 (և զուգահեռներ)
 2. Հովհ. 14:26
- Բ. Գործք - Գործք 2: 32-33, 38-39
- Գ. Պողոս
 1. Հռ. 1: 4-5; 5: 1,5; 8: 1-4,8-10
 2. 1 Կոր. 2: 8-10; 12: 4-6
 3. 2 Կոր. 1: 21-22; 13:14
 4. Գաղ. 4: 4-6
 5. Եփ. 1: 3-14,17; 2:18; 3: 14-17; 4: 4-6
 6. 1 Թես. 1: 2-5
 7. 2 Թես. 2:13
 8. Տիտոս 3:4-6
- Դ. Պետրոս - 1 Պետ. 1: 2
- Ե. Հուդա - հհ. 20-21

Աստծո հոգնակիության ակնարկը Հին Կտակարանում:

- Ա. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ Աստծո համար
 1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է (տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները), բայց երբ օգտագործվում է Աստծո համար, այն միշտ ունի ԵԶԱԿԻ ԲԱՅ
 2. «Մեր» Ծննդոց 1:26-27; 3:22; 11: 7
- Բ. «Տիրոջ հրեշտակը» (տես Հատուկ Թեմա: Տիրոջ Հրեշտակը) Աստծո տեսանելի ներկայացուցիչն էր
 1. Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31: 11,13; 48: 15-16
 2. Ելից 3: 2,4; 13:21; 14:19
 3. Դատ. 2: 1; 6: 22-23; 13: 3-22
 4. Չաք. 3: 1-2
- Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծննդ. 1:1; Սաղ. 104: 30; Ես. 63: 9-11; Եզ. 37: 13-14
- Դ. Աստված (ՅԱՀՎԵ) և Մեսիան (Ադոնայ) առանձին են, Սաղ. 45: 6-7; 110: 1; Չաք: 2: 8-11; 10: 9-12
- Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Չաք. 12:10
- Զ. Բոլոր երեքը նշված են Ես. 48:16; 61: 1

Հիսուսի աստվածությունը և Հոգու անձնավորությունը խնդիրներ են առաջացրել խիստ մոնոթեիստիկ/միաստվածություն (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ), առաջին հավատացյալների մոտ:

1. Տերտուլիանոսը - Որդուն ենթարկեց Հորը
2. Օրիգենը - ենթարկեցնում է Որդու և Հոգու աստվածային էությանը

3. Արիոսը - հերքեց Որդու և Հոգու աստվածությունը
 4. Մոնարխիզմը- հավատում էր մեկ Աստծո հաջորդական ժամանակագրական դրսևորմանը՝ որպես Հայր, ապա Որդի, և ապա Հոգի
 Երրորդությունը պատմականորեն զարգացած ձևակերպումն է՝ տեղեկացված աստվածաշնչյան նյութով:

1. Հիսուսի լիակատար աստվածությունը հավասար է Հոր հետ և որն էլ հաստատվել է 325 թ. Նիկիայի ժողովի ժամանակ (տես Հովհ. 1: 1; Փիլ. 2: 6; Տիտոս 2:13)
2. Հոգու լիակատար անձ և Աստված լինելը հավասար է Հորն ու Որդուն, որն էլ հաստատվել է Կ. Պոլսի ժողովում 381թ.
3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* –ի աշխատության մեջ

Այստեղ իսկապես խորհուրդ կա: Սակայն Նոր Կտակարանը հաստատում է մեկ աստվածային էությունը (մոնոթեիզմ) երեք հավիտենական անձնական դրսևորումներով (Հայր, Որդի և Հոգի):

3: 7 «Որ» Սա նպատակի արտահայտություն է (*hina*) ինչպես 3: 8, 13 և 14:

Արևելահայերեն «նորա շնորհքովն արդարացած»

Արևմտահայերեն «անոր շնորհքովը արդարացած»

NASB «արդարացված Իր շնորհքով»

NKJV, NRSV «արդարացված Իր շնորհքով»

TEV «Նրա շնորհքով, մենք կարող ենք Աստծո հետ ճիշտ լինել»

NJB «արդարացված իր շնորհքով»

Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲՍՅ է (տես Հո. 1:16-17; 3:24), կապված «արդարություն» բառի հետ: Տես ամբողջ ծանուցումը Տիտոս 2:12: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ ենթադրում է Հոգու գործոնը: «Հավատքով արդարացած» դատական (օրինական) փոխաբերություն է, որը շատ հաճախ օգտագործվում է Պողոսի կողմից՝ ընդգծելով Աստծո նախաձեռնող շնորհքը (տես 1 Տիմ. 1: 2,14; 2 Տիմ. 1: 2; Տիտոս 1: 4): «Արդարացնել» և «արդարացում» շատ տարածված է Գաղատացիսի և Հռոմեացիսի մեջ և ընդամենը երկու անգամ հանդիպում է Պողոսի մյուս նամակներում (1 Կոր. 6:11 և այստեղ): Հավատացյալները ներվում և ընդունվում են այն պատճառով, թե որ Նա և ինչ է արել, և ոչ թե այն պատճառով, թե ովքեր են նրանք կամ թե ինչ են արել:

- **«Ժառանգ լինենք»** Սա ընտանեկան փոխաբերությունների վերջնական կիրառությունն է, որոնք օգտագործվում են հավատացյալներին նկարագրելու համար (տես Հո. 4:13; 8: 14-17; Գաղ. 3: 29; 4: 7; Եբր. 6: 7; Հակ. 2: 5):

- **«յավիտենական կեանքի»** Տես ծանուցում Տիտոս 1: 2:

3: 8 «Ճշմարիտ է այս խօսքը» Սա ընդհանուր տեքստային նշան է Պողոսի հինգ աստվածաբանական պնդումների համար Հովվական նամակներում (տես 1 Տիմ. 1:15; 3: 1; 4: 9; 2 Տիմ. 2:11): Ստույգ թե որ համարներին է սա վերաբերվում, քննարկվել է մեկնաբանների մեջ, ամենից շատ ենթադրում է Տիտոս 3: 4-7:

- **«այս բաները հաստատես»** Տես ծանուցում 1 Տիմ. 1: 7

- **«որ»** Սա ևս մեկ *hina* (նպատակի պարագա), ինչպես Տիտոս 3: 7, 13 և 14:
 - **«Աստուծուն հաւատացողները»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է, որը նկարագրում է անցյալի գործողության շարունակական արդյունքների մասին, որոնք դառնում են բնակության հաստատված վիճակը: Մովորաբար Նոր Կտակարանում հավատքի առարկան Հիսուսն է, բայց հաճախ Աստծո համար օգտագործվող ԴԵՐԱՆՈՒՆԸ (Նրան) երկիմաստ է և կարող է վերաբերվել Հորը կամ Որդուն: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏԱԼ, ՎԱՍՏԱԶԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ \(առ\)](#) Հավատալ և վստահել 1 Տիմ. 1:16.
 - **«ջանք անեն բարի գործերի մեջ կենալու»** «Զգույշ, ուշադիր» տերմինը «մտածել» կամ «ուշադիր քննարկել» ԲԱՅԻ ձև է, որը Նոր Կտակարանում գտնվում է միայն այստեղ: ԻՆՖԻՆԻՏԻՎ «զբաղվել, պարտավորվել» բառը, սովորաբար թարգմանվում է «կառավարել, ղեկավարել» (տես 1 Տիմ. 3: 4,5,12): Հավատացյալները պետք է մշտապես մտածեն և առաջնորդվեն աստվածահաճո կյանքով ավետարանի համար: Պողոսը կրկին հաստատում է, որ մարդիկ Աստծո հետ հաշտված են, բացի անձնական բարի գործերից զատ, բայց նաև Աստծո նպատակը յուրաքանչյուր հավատացյալի համար՝ անձնական բարի գործերն են (տես Եփ. 2:8-10 և Հակ. 2:14-23): Շարժառիթը երախտագիտությունն է Աստծու անարժան շնորհքի համար, ազդեցությունը Քրիստոսանմանությունը, նպատակը ավետարանչությունն է:
 - **«մարդկանց»** Կրկին համընդհանուր շեշտադրումն այն է, որ Աստված սիրում է ողջ մարդկությանը և ցանկանում է, որ բոլորը փրկվեն (Հովհ. 3:16; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9): Անհավատներին Աստծուն բերելու հիմնական ուղին հավատացյալների փոխված կյանքն է (տես Մատթ. 5:16; 1 Պետ. 2:12):
- 3: 9 «Բայց ետ քաշուիր»** Սա ՆԵՐԿԱ ԶԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է, այսինքն « շարունակել հեռու մնալ կամ խուսափել » (տես 2 Տիմ. 2:16):
- **«յիմար վիճաբանութիւններից»** Այս տերմինը առաջինն է հունարեն տեքստում շեշտադրման համար (տես 1 Տիմ. 6: 4-5; 2 Տիմ. 2: 14,23): Տիմոթեոսը Պողոսի առաքելական պատվիրակն է: Նա չի կարող քննարկել կամ շահարկել, այլ հաստատել առաքելական ճշմարտությունը իշխանությունով:
 - **«ազգահամարներից»** Կրետեում կային նույն տիպի կեղծ ուսուցիչներ ինչպես Եփեսոսում (տես 1 Տիմ. 1:4): Այս տոհմաբանությունները, հավանաբար, հրեական էին, կապված Մեսիայի հետ, այլ ոչ թե գնոստիկ հրեշտակային մակարդակներով (*eons*):
 - Տիտոս 3: 9 կան մի շարք ԳՈՅԱԿԱՆՆԵՐ կապված «և» (*kai*) - ի հետ, որը կարող է վերաբերվել առանձին կողմերին կամ ընդհանուր միտմանը (այսինքն «հակասություններ», «սերնդաբանություն », «վեճեր» և «անհամաձայնություններ»):
 - **«օրէնքի»** Սա ցույց է տալիս հրեական տարրը այս կեղծ ուսմունքի մեջ (տես Տիտոս 1:10,14; 1 Տիմ. 1: 3-7): Տես Հատուկ Թեմա: Պողոսի տեսակետը Մովսեսական Օրենքի մասին 1 Տիմ. 1: 8:

▪ **«որ անօգուտ եւ ունայն են»** Աստվածաբանական բժախնդրությունը և շահարկումները միշտ չէ, որ օգտակար են Քրիստոսի մարմնի համար: Տիտոսը, ինչպես Տիմոթեոսը, խոսում է Պողոսի առաքյալի իշխանությամբ:

3:10 «եւ կայ» Սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, ինչպես Տիտոս 3: 9: Նույն տերմինը «հրաժարվել, մերժել» օգտագործվում է 1 Տիմ. 4: 7; 5:11 և 2 Տիմ. 2:23: Նույն գաղափարը օգտագործվում է Հռ. 16:17; Գաղ. 1: 8-9; 2 Թեա. 3: 6-14:

Հերձվածող մարդու հետ երկխոսելու մեր փորձի մեջ չպետք է որևէ ժեստ կամ ողջուն լինի, որը կարող է դիտվել որպես ընդունում կամ հաստատում (տես 2 Հովհ. 10):

Արևելահայերեն «Հերձուածող մարդից»

Արևմտահայերեն «Հերձուածող մարդէ»

NASB «հերձված մարդ»

NKJV «բաժանող մարդ»

NRSV «ով բաժանում է առաջացնում»

TEV «նրանք, ովքեր բաժանումներ են առաջացնում»

NJB «եթե ինչ-որ մեկը վիճարկում է, երբ դուք սովորեցնում եք»

Սա հունարեն *hairitikos* տերմինն է (որը Նոր Կտակարանում հանդիպում է միայն այստեղ), որից մենք ստանում ենք անգլերեն «հերետիկոս» տերմինը: Այս տերմինը սկզբում նշանակում էր «կողմեր ձեռնարկել» կամ «ընտրել ինքն իրեն»: Այն օգտագործվում է Նոր Կտակարանում

1. «աղանդ» Գործք 5:17; 24:14
2. «հերձված» 1 Կոր. 11:19; Գաղ. 5:20
3. «ուսմունքներ» 2 Պետ. 2: 1

▪ **«երբոր առաջին եւ երկրորդ անգամ խրատել ես»** Սա համապատասխանում է եկեղեցու կարգապահության մյուս Նոր Կտակարանյան հաստատումներին (տես Մատթ. 18: 15-17; Գաղ. 6: 1; 2 Թեա. 3:15; Հակ. 5:19): Այն կարող է արտացոլել Ղև. 19:17.

3:11 «Գիտենալով որ այնպիսին» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Նրանց գործողությունները հստակ ցույց են տալիս և շարունակում են ցույց տալ, թե ովքեր են նրանք իրականում (տես Մատթ. 7):

▪ **«ծռուած է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս ձևը նոր Կտակարանում հանդիպում է միայն այստեղ: Սա բարդ տերմին է կազմված *ek* (-ից) և *strophō* (շրջվել, դառնալ, փոխվել), այսինքն նշանակում է դառնալ, հեռանալ ինչ որ բանից: Դա բառախաղ է Քրիստոսին գալու համար (դարձի գալ) Մատթ. 18: 3 (*epistrophō*), որն արտացոլում է Աստծուն դառնալու (*shub*) Հին Կտակարանյան տերմինը (Մատթ. 13:15; Մարկ. 4:12; Ղուկ. 22:32; Հովհ. 12:40; Գործք 3:19; 25:27; Հակ. 5:19-20): Այս կեղծ ուսուցիչներն հեռանում էին Աստծուց (տես Տիտոս 1:14, *apostrophō*) դառնալով դեպի հերետիկոսները և կեղծ ուսմունքներին:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ նշանակում է արտաքին գործոն: Այս կոնտեքստում այն պետք է լինի սատանան կամ դիվայինը: «Սատանա» տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 3: 6 և «դիվային» տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 2:

- **«եւ մեղք է գործում»** Մա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է սովորական, ընթացիկ, ապրելակերպի առանձնահատկություններ (տես 1 Տիմ. 5:20, նաև նկատեք ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ 1 Հովհ. 3: 6,9-ում):
- **«ինքն իր անձը դատապարտելով»** Մա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այս ձևը Նոր Կտակարանում գտնվում է միայն այստեղ: Մեր գործողություններն ու խոսքերն են բացահայտում մեր սրտերը (տես 1 Տիմ. 5:24; Մատթ. 7):

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 3:12-14
¹²Երբոր Արտեմասին կամ Տիքիկոսին ուղարկեմ քեզ մօտ շտապիր որ գաս Նիկոպոլիս ինձ մօտ. Որովհետև որոշել եմ ձմեռն այնտեղ մնալ: ¹³Եւ օրինական Ձենասին եւ Ապոլոսին շուտով ճանապարհ դիր. Եւ նայիր որ ոչ մի բան չ'պակասի նորանց: ¹⁴Բայց մերիններն էլ թող սովորեն բարի գործերի մեջ կենալ հարկատր պիտոյքների համար, որ անայտուղ չ'լինին:

3:12 «Արտեմասին» Այս մարդը մեզ համար անհայտ է, բայց ոչ Աստծո համար:

- **«Տիքիկոսին»** Նա հիշատակվում է Գործք 20:4; Եփ. 6: 21-22; Կող. 4: 7-8 և 2 Տիմ. 4:12: Նա Պողոսի բանտային նամակները կրողն է: Այս երկու տղամարդիկ պետք է փոխարինեին Տիտոսի առաջնորդությանը Կրետեում, որպեսզի նա կարողանա միանալ Պողոսին ձմռանը:
 Մա ցույց է տալիս, որ նամակը, թեև գրված էր Տիտոսին, նպատակ էր հետապնդում տեղեկացնել, ուսուցանել և խրախուսել ամբողջ Կրետեի եկեղեցուն: Տիտոսին ուղղված Պողոսի խոսքերից շատերը իմաստ չէին ունենա, եթե Տիտոսը հեռանար նամակը ստանալուց անմիջապես հետո, քանի դեռ ակնհայտ չէր քրիստոնյաների համար, որ Պողոսը դիմում էր նրանց Տիտոսին ուղղված իր խոսքերով:
- **«Շտապիր որ գաս ինձ մօտ»** Մա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է: Պողոսը չէր ցանկանում մենակ մնալ (տես 2 Տիմ. 4:9,21), կարծում էր, որ նա ծանր աչքի խնդիրներ ուներ, հավանաբար, վերադառնալով Դամասկոսի ճանապարհից իր դարձի գալուց հետո (տես Գործք 9: 3-9,12, 17-18): Հավատում էր, որ նրա «մարմնի խայթոցը» (տես 2 Կոր. 12:7) հավանաբար աչքի խնդիրն էր: Ուշադրություն դարձրեք Գաղ. 4:15-ի անսովոր արտահայտությանը: Նաև Գաղ. 6:11 Պողոսը մեկնաբանում է իր սեփական ձեռագրի մասին, որոնք շատ մեծ-մեծ էին: Նա գրեց իր նամակների վերջին մի քանի տողերը, դրանք հաստատելու համար (տես 2 Թեա. 2:2; 3:17; 1 Կոր. 16:21; Կող. 4:18; Փիլ. 19):
- **«Նիկոպոլիս»** Այս անունով կան մի քանի քաղաքներ, ինչը նշանակում է «հաղթանակի քաղաք»: Մա, հավանաբար, ավամերձ քաղաք է, Ակտիումի ճակատամարտի վայրին մոտ:

3:13

Արևելահայերեն «շուտով ճանապարհ դիր... որ ոչ մի բան չ'պակասի նորանց»
Արևմտահայերեն «փութով ճամբայ դիր... հոգ տանելով որ անոնց բան մը չպակասի»

- NASB **«ջանասիրաբար օգնիր ... իրենց ճանապարհին»**
- NKJV **«ուղարկիր... շտապելով իրենց ճանապարհորդության համար»**
- NRSV **«ջանք գործադրիր, որպեսզի ուղարկես ... իրենց ճանապարհը»**
- TEV **«ամեն ինչ արա, որպեսզի օգնես ... սկսել իրենց ճանապարհորդությունները»**

NJB «անհամբերությամբ օգնիր նրանց ճանապարհին»

Սա ԴԵՐԲԱՅ *spoudaiōs* է, ինչը նշանակում է «լրջորեն» կամ «անհամբեր» կամ «ջանասիրաբար» (տես Ղուկ. 7: 4 և համապատասխան տերմին Փիլ. 2:28): Այն համակցված է ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ *propempō*-ի հետ, որը նշանակում է ճամփորդության համար անհրաժեշտ ամեն ինչի տրամադրում (տես 3 Հովհ. 6 և Գործք 15:3): Ակնհայտ է, որ Ջենասը և Ապոդոսը առաքելություն էին իրականացնում: Պոդոսը Հռոմի տնային եկեղեցիներից նման օգնություն է խնդրում Հռ. 15:24.

- **«օրինական Ջենասին»** Անկախ նրանից, թե նա հրեա էր կամ հույն փաստաբան անհայտ է:
- **«Ապոդոսին»** Նա շատ պերճախոս քարոզիչ էր Ալեքսանդրիայից, ում Պրիսկիդան և Ակյուդասն են օգնել ամբողջովին հասկանալ ավետարանը (տես Գործք 18: 24,28; 19: 1; 1 Կոր. 1:12; 3: 5,6,22; 4: 6; 16:12): Այս երկու տղամարդիկ, հավանաբար, Պոդոսի Տիտոսին ուղղված նամակի կրողներն էին:

3:14 «մերիններն էլ թող սովորեն բարի գործերի մեջ կենալ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես Տիտոս 1:16; 2: 7,14; 3:18), քաջալերող միսիոներները ավետարանչական գործունեություն է (տես Տիտոս 2: 7,14; 3: 8):

- **«որ անպտուղ չ'լինին»** «Անպտուղ» տերմինը երկիմաստ է: Կարծում եմ, դա զուգահեռ է Պոդոսի «ապարդյուն, զուր» բառի հետ (տես *eikē* 1 Կոր. 15:2; Գաղ. 3:4; 4:11 կամ *kenos* 1 Կոր.15:10,58; 2 Կոր. 6:1; Գաղ. 2: 2; Փիլ. 2:16; 1 Թեա. 2: 1; 3: 5), որը վերաբերվում է արդյունավետ ավետարանական և միսիոներական ուղղվածություն ունեցող եկեղեցիների կայացմանը: Պոդոսը սկսեց եկեղեցիները ընտրված վայրերում `ամբողջ տարածքը ավետարանելու նպատակով: Եթե ինչ-որ պատճառներով սկզբի համայնքները կորցրել էին իրենց «մեծ պատվիրան» նպատակը, ապա նրանց հիմնվելը ապարդյուն էր:

Արևելահայերեն Աստվածաշունչ: Տիտոս 3:15
¹⁵Բարեւ են տալիս քեզ այն ամենը որ ինձ հետ են. Բարեւ տուր նորանց որ սիրում են մեզ հաւատքով. Ծնորհքը ձեր ամենի հետ լինի: Ամէն:

3:15 «Բարեւ են տալիս քեզ այն ամենը որ ինձ հետ են» Պոդոսը սովորաբար, բայց ոչ միշտ (տես 1 Տիմոթեոս) ամփոփում է իր նամակը ողջույններով (1) իր միսիոներական թիմի կողմից և 2) եկեղեցու հավատացյալներին կամ տեղացիներին, ում նա գրում է:

- **«հաւատքով»** Հավատք տերմինը կարող է օգտագործվել վարդապետության համար, ինչպես Գործք 6:7; 13:8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; Փիլ. 1:27; Հուդա 3,20 կամ որպես Քրիստոսի միջոցով Աստծո հետ մարդու անձնական փոխհարաբերությունը արտահայտելու միջոց (տես Հովհ. 1:12; 3:16): Այն կարող է օգտագործվել նաև հավատարմության կամ վստահելիության իմաստով: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ \(ԽՈՂ\)](#) Հավատալ և վստահել 1 Տիմ. 1:16. Այս արտահայտությունը վերաբերում է այն փաստին, որ Կրետեի կեղծ ուսուցիչները մերժեցին Պոդոսի առաքելական իշխանությունը և ուսմունքները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ (ԴՁՌ)

I. Նախաբան

Պետք է նշել, որ այս աստվածաբանական հասկացողության կիրառությունն այնքան կարևոր է Նոր Կտակարանում, բայց այնքան էլ պարզ չի սահմանվում Հին Կտակարանում: Անշուշտ, կա այնտեղ, բայց ներկայացված է միայն բանալի հատվածներում և անձերի մեջ

Հին Կտակարանի կապակցումները

Ա. անհատը և համայնքը

Բ. անձնական հանդիպումը և ուխտի հնազանդությունը

Հավատքը թե անձնական հանդիպում է և թե առօրյա ապրելակերպ: Այն ավելի հեշտ է նկարագրել հավատարիմ անձի կյանքի մեջ, քան թե բառերով (այն է, բառային սերտողություն): Այս անձնական ասպեկտը լավագույնս ներկայացված է

Ա. Աբրահամը և իր սերունդը

Բ. Դավիթը և Իսրայելը

Այս մարդիկ հանդիպեցին Աստծուն և նրանց կյանքերը ամբողջովին փոխվեցին (ոչ թե կատարյալ կյանքեր, այլ շարունակական հավատքի կյանք): Փորձությունները ցույց տվեցին իրենց հավատքի տկարություններն ու ուժերը, բայց սերտ, հուսալի հարաբերությունը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այն փորձվեց և գտվեց, բայց այն շարունակվեց, որպես ապացույց նրանց նվիրվածության և ապրելակերպի:

II. Օգտագործվել է հիմնական արմատը

Ա. ԴՁՌ (BDB 52, KB 63)

1. ԲԱՅ

ա. *Qal* հիմք – աջակցել, պաշտպանել, պահել, սնուցել, կերակրել (4 Թագ. 10:1,5; Եսթեր 2:7, ոչ աստվածաբանական կիրառություն)

բ. *Niphal* հիմք – համոզվել կամ հաստատել, հիմնել, պնդել, հավատարիմ լինել կամ վստահելի, հուսալի

(1) մարկանց, Ես. 8:2; 53:1; Եր. 40:14

(2) իրերին, Ես. 22:23

(3) Աստծուն, 2 Օր. 7:9; Ես. 49:7; Եր. 42:5

գ. *Hiphil* հիմք – հաստատ կանգնել, հավատալ, վստահել

(1) Աբրահամը հավատաց Աստծուն, Ծննդ. 15:6

(2) Իսրայելացիք Եգիպտոսում հավատացին, Ել. 4:31; 14:31 (ժխտում է, 2 Օր. 1:32)

(3) Իսրայելացիք հավատացին ՅԱՀՎԵԻՆ, ով խոսեց Մովսեսի միջոցով Ել. 19:9; Սաղ. 106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն, Ես. 7:9

(5) ով որ հավատա Նրան, Ես. 28:16

(6) հավատալ Աստծո մասին ճշմարտություններին, Ես. 43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (արական) - հավատարմություն (2 Օր. 32:20; Ես. 25:1; 26:2)

3. ՄԱԿԲԱՅ – ճշմարիտ, ես համամիտ եմ, թող այդպես լինի (տես 2 Օր. 27:15-26; 3 Թագ. 1:36; 1 Մնաց. 16:36; Ես. 65:16; Եր. 11:5; 28:6): Սա հոգևոր կիրառությունն էր «ամեն» բառի Հին և Նոր Կտակարաններում:

Բ. BDB) ԴՁՌ 54, KB 68) ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ ամրություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց, Ես. 10:20; 42:3; 48:1
2. Աստծո, Ել. 34:6; Սաղ. 117:2; Ես. 38:18,19; 61:8
3. ճշմարտության, 2 Օր. 32:4; 3 Թագ. 22:16; Սաղ. 33:4; 98:3; 100:5; 119:30; Եր. 9:4; Չաք. 8:16

Գ. BDB) ܡܘܨܪ 53, KB 62), հաստատակամություն, կայունություն, հավատարմություն

1. ձեռքերի. Ել. 17:12
2. ժամանակի, Ես. 33:6
3. մարդկանց, Եր. 5:3; 7:28; 9:2
4. Աստծո, Սաղ. 40:11; 88:12; 89:2,3,6,9; 119:138

III. Գաղափարի կիրառությունն ըստ Պողոսի

Ա. Պողոսը ՅԱՀՎԵԻ և Հին Կտակարանի մասին իր նոր հասկացողությունը հիմնում է իր անձնական հանդիպումը Հիսուսի հետ Դամասկոսի ճանապարհին (տես Գործք. 9:1-19; 22:3-16; 26:9-18):

Բ. Նա գտավ Հին Կտակարանյան հենարան իր նոր հասկացողության համար երկու բանալի հատվածներում, որոնք օգտագործում են շաքարմատը:

1. Ծննդ. 15:6 – Աբրամի անձնական հանդիպումը նախաձեռնված էր Աստծո կողմից (Ծննդ. 12), արդյունքում հավատքի հնազանդ կյանք էր (Ծննդ. 12-22) : Պողոսն այդ մասին ակնարկում է Հռ. 4 և Գաղ. 3:
2. Ես. 28:16 – նրանք, ովքեր հավատում են դրան (Աստծո ստուգած և ամուր տեղադրած անկյունաքար) երբեք չեն
ա. Հռ. 9:33 «ամաչի» կամ «հուսահատվի»
բ. Հռ. 10:11 «ամաչի»
3. Ամբ. 2:4 – նրանք, ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարիմ կյանքով (տես Եր. 7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռ.1:17-ում և Գաղ. 3:11-ում (նաև տես Եբր. 10:38):

IV. Գաղափարի կիրառությունը ըստ Պետրոսի

Ա. Պետրոսը կապակցում է

1. Ես. 8:14 – 1 Պետ. 2:8 (գլորման քար)
2. Ես. 28:16 – 1 Պետ. 2:6 (անկյունաքար)
3. Սաղ. 111:22 – 1 Պետ. 2:7 (անարգված քար)

Բ. Նա օգտագործում է յուրահատուկ լեզու, որը նկարագրում է Իսրայելին «ընտիր ազգ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ»

1. 2 Օր. 10:15; Ես. 43:21
2. Ես. 61:6; 66:21
3. Ելից 19:6; 2 Օր. 7:6

Իսկ հիմա օգտագործում է այն Քրիստոսով եկեղեցու հավատքի համար(տես 1 Պետ. 2:5,9):

V. Գաղափարի կիրառությունը ըստ Հովհաննեսի

Ա. Տերմինի կիրառությունը Նոր Կտակարանում

«Հավատաց» տերմինը առաջացել է հունարեն (*pisteuō*) տերմինից, որը նաև կարող է թագմանվել «հավատալ», «հավատք», կամ «վստահություն»: Օրինակ, որպես գոյական Հովհաննեսը Ավետարանում չի հանդիպում, բայց որպես բայ հաճախ է օգտագործվում: Հովհ. 2:23-25 գոյություն ունի որոշակի անորոշություն ժողովրդի անկեղծության մեջ Հիսուս Նազովրեցուն, որպես Մեսիա ընդունելու առումով: Ուրիշ օրինակներ, երբ «հավատալ» տերմինը օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8:31-59 և

Գործք. 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Դրան անպայման պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես Մաթ. 13:20-22,31-32):

Բ. Օգտագործվում է ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ

1. *eis* նշանակում է «մեջ»: Այս հատուկ քերականական կառուցվածքը ընդգծում է հետևյալ միտքը, երբ հավատացյալներն իրենց վստահություն/հավատքը դնում են Հիսուսի վրա
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; 1 Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 17:37,42; Մաթ. 18:6; Գործք. 10:43; Փիլ.1:29; 1 Պետ. 1:8)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
 - դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; 1 Հովհ. 5:10)
 - ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք. 19:4; Գաղ. 2:16)
 - զ. Լույսին (Հովհ. 12:36)
 - է. Աստծուն (Հովհ. 14:1)
2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ. 3:15; Մարկ. 1:15; Գործք. 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» ինչպես, Մաթ. 27:42; Գործք. 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4:5,24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ. 2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ ինչպես Գաղ. 3:6; Գործք. 18:8; 27:25; 1 Հովհ.3:23;5:10;
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» ցույց է տալիս եությունը այն բանի, թե ինչին հավատալ
 - ա. Հիսուսն Աստծո Մուրբն է (Հովհ. 6:69)
 - բ. Հիսուսը – ԵՍ ԵՄ (Հովհ. 8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Նա Հոր մեջ (Հովհ. 10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
 - ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
 - զ. Հիսուսն ուղարկված էր Հոր կողմից (Հովհ. 11:42; 17:8,21)
 - է. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 14:10-11)
 - ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
 - թ. Հիսուսն Իրեն ճանաչեցնում է Հոր ուխտի անվան հետ, «ԵՄ ԵՄ» (Հովհ. 8:24; 13:19)
 - ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
 - ի. Հիսուս մեռավ և հարություն առավ (1 Թես. 4:14)

VI. Ամփոփում

Ա. Աստվածաշնչյան հավատքը մարդու արձագանքն է Աստծո խոսքին/խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (տես Հովհ.6:44,65), բայց Աստծո հետ հաղորդակցվելու համար մարդիկ պետք է արձագանքեն (տես Հատուկ Թեմա: Ուխտ):

1. ապաշխարություն (տես Հատուկ Թեմա: Ապաշխարություն)
2. հավատք/վստահություն (տես Հատուկ Թեմաներ)
3. հնազանդություն
4. համբերություն (տես Հատուկ Թեմա: Համբերություն)

Բ. Աստվածաշնչյան հավատքը

1. անձնական հարաբերություն (ներքին հավատք)

2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատում (հավատքը Աստծո հայտնության մեջ, Սուրբ Գիրք)

3. համապատասխան հնազանդությամբ արձագանքել դրան (ամենօրյա հավատարմություն)

Աստվածաշնչյան հավատքը երկինք գնալու ուղեգիր չէ, ոչ էլ ապահովագրություն: Այն անձնական հարաբերություն է: Դա արարչագործության նպատակն է և մարդը, որը ստեղծվել է Աստծո պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1:26-27): Հարցը մտերմիկ հարաբերությունն է: Աստված փափագում է մտերմություն, և ոչ թե որոշակի աստվածաբանական չափանիշ: Բայց Սուրբ Աստծո հետ հաղորդակցվելու համար պահանջվում է, որ զավակները ցուցաբերեն «ընտանեկան» առանձնահատկություն (այն է, սրբություն, հմմտ. Ղև. 19:2; Մաթ. 5:48; 1 Պետ. 1:15-16): Անկումը (հմմտ. Ծննդ. 3) ազդեց մեր ճիշտ արձագանքելու կարողության վրա: Ուստի, Աստված գործեց մեր օգտին (հմմտ. Եզ. 36:27-38), տալով մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի», որը կտա մեզ կարողություն, հավատքի և ապաշխարհության միջոցով հաղորդակցվել Նրա հետ և հնազանդվել Նրան:

Երեքն էլ անհրաժեշտ են: Երեքն էլ պետք է լինեն անպայման: Նպատակն է ճանաչել Աստծուն (թե երբայական և թե հունական իմաստներով) և անդրադարձնել Նրա կերպարը մեր կյանքերում: Հավատքի նպատակը մեկ օր երկնքում հայտնվելը չէ, բայց ամեն օր Քրիստոսանման լինել:

Գ. Մարդկային հավատարմությունը արդյունքն է (ՆԿ), և ոչ թե (ՀԿ) Աստծո հետ հարաբերություն ունենալու համար; մարդու հավատքը Նրա հավատարմությանը; մարդու վստահությունը Նրա հուսալիությանը: Նոր Կտակարանի փրկության տեսանկյան սիրտը այն է, որ մարդիկ պետք է արձագանքեն սկզբում և շարունակաբար Աստծո շնորհքին և ողորմությանը, որը երևում է Քրիստոսի մեջ: Նա սիրեց, Նա ուղարկեց, Նա ապահովվեց, մենք պետք է արձագանքենք հավատքով և հավատարմաբար (հմմտ. Եփ. 2:8-9 և 10):

Հավատարիմ Աստվածն ուզում է, որ հավատարիմ մարդիկ ցույց տան Իրեն անհավատ աշխարհում և նրանց առաջնորդեն անձնական հավատքի մեջ:

▪ **«Շնորհքը ձեր ամենի հետ լինի»** «Ձեր»-ը ՀՈԳՆԱԿԻ է: Այս նամակը պետք է կարդացվեր Կրետեում գտնվող տնային եկեղեցիներում, ինչպես բոլոր Հովվական Նամակները (տես 1 Տիմ. 6:21; 2 Տիմ. 4:22):

▪ King James Version տարբերակը եզրափակում է «Ամեն» բառով, սակայն սա առկա չէ հունարեն P⁶¹, Ռ*, A, C, or D* ձեռագրերում: Հավանաբար հետագայում դպիրները նկատեցին, որ դրանք օգտագործվում են Հռ.16:27; Գաղ. 6:18; Փիլ. 4:20; 2 Թեա. 3:18; 1 Տիմ. 6:16; և 2 Տիմ. 4:18 և ավելացվեց այն այստեղ, ինչպես արվել է Հռ.15:33; 16: 20,24; 1 Կոր. 16:24; 2 Կոր. 13:14; Եփ. 6:24; Փիլ. 4:23; 1 Թեա. 5:28; 1 Տիմ. 6:21; 2 Տիմ. 4:22; և Տիտոս 3:15: UBS⁴ գնահատում է իր բացթողումը որպես «Ա» (հուսալի):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս

պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչու՞ պետք է քրիստոնյաները հնազանդվեն քաղաքացիական իշխանությանը: Իսկ եթե իշխանությունները քրիստոնյա չեն՞:
2. Ի՞նչ է Տիտոս 3: 4-7-ի հիմնական շեշտը:
3. Մկրտությունը անհրաժեշտ է՞ փրկության համար: Ինչու՞ : Ինչու՞ ոչ:
4. Ինչու՞ պետք է հավատացյալները ենթարկվեն քաղաքացիական իշխանությանը:
5. Ի՞նչ է հերետիկոսը:
6. Ուրվագծեք Տիտոսի 3: 5-7-ի աստվածաբանական արտահայտությունները:
7. Ի՞նչ է նշանակում Տիտոսի 3: 8 և 14-ի «բարի գործերը»:
8. Կեղծ ուսուցիչները հրեա են թե՞ գնոստիկներ: Ինչու՞ :

2 ՏԻՄՈԹԵՈՍ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույն	Բարև	Ողջույն	Ներածություն	Ողջույն և գոհություն
1:1-2	1:1 1:2ա 1:2բ	1:1 1:2ա 1:2բ	1:1 1:2ա 1:2բ	1:1-2
Նվիրվածություն Ավետարանին	Տիմոթեոսի հավատքը և ժառանգությունը	Գոհություն և հորդոր	Գոհություն և քաջալերանք	1:3-5
1:3-14	1:3-7 Չամաչել Ավետարանից 1:8-12 Հավատարիմ լինել հավատքին 1:13-18	1:3-7 Քաջությունը ցույց տալու կոչ (1:8-2:13) 1:8-14	1:3-7 1:8-10 1:11-14	1:3-5 Տիմոթեոսի ստացած պարգևները 1:6-11 1:12
1:15-18		1:15-18	1:15-18	1:13-14 1:15-18

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 1:1-2

¹Պողոս Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, կեանքի խոստմունքի պէս, որ Քրիստոս Յիսուսումն է, ²Տիմոթեոս՝ սիրելի որդուս, շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը:

1: 1 «Պողոս» Տարսնացի Սողոսը առաջինը անգամ անվանվում է Պողոս Գործք 13:9-ում: Հավանական է, սփյուռքի հրեաների մեծ մասն ուներ եբրայական անուն (Սողոս, Սավուդ) և հունական անուն (Պողոս): Եթե այդպես է, ապա Սավուդի ծնողները նրան տվեցին այդ անունը, ուրեմն ինչու՞ է «Պողոս» անունը հանկարծ հայտնվում Գործք 13-ում: Հնարավոր է 1) ուրիշները սկսեցին նրան կանչել այդ անունով, կամ 2) նա սկսեց ինքն իրեն անվանել «փոքր» կամ «նվազագույն» տերմինով: Հունարեն Պատուխ անունը նշանակում է «փոքր»: Մի քանի տեսություններ են առաջ բերվել հունարեն անվան ծագման մասին, 1) երկրորդ դարի ավանդույթը, որ Պողոսը կարճահասակ էր, գեր, ճաղատ, ծուռ ոտ, հաստ հոնքերով, և ուներ դուրս պրծած աչքեր, վերցված Թեսաղոնիկեի Պողոսն ու Թեքլան անանուն գրքից, որը անվան հնարավոր աղբյուրն է, 2) Պողոսն իրեն անվանում է «սուրբերից ամենավերջինը, փոքրը», քանի որ նա հալածեց Եկեղեցին (տես Գործք 9: 1-2; 1 Կոր. 15: 9; Եփ. 3:8; 1 Տիմ. 1:15): Ոմանք այս «փոքրությունը» ընդունում են որպես ինքնը ընտրած անուն: Սակայն Գաղատացիս թղթում նա ընդգծում է իր անկախությունը և հավասարությունը Երուսաղեմի Տասներկուսի հետ, որը քիչ հավանական է (տես 2 Կոր. 11:5; 12:11; 15:10):

- **«առաքեալ»** Սա առաջացել է հունարեն «ուղարկել» (*apostellō*) բառից: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 1: Հիսուսը ընտրեց տասներկուսին՝ Իր հետ լինելու համար հատուկ իմաստով և նրանց կոչեց «Առաքյալներ» (տես Ղուկ. 6:13): Այս տերմինը հաճախ օգտագործվում է Հիսուսի կողմից որպես Հորից ուղարկված (տես Մատթ. 10:40; 15:24; Մարկ. 9:37; Ղուկ. 9:48; Հովհ. 4:34; 5: 24,30,36,37, 38; 6: 29,38,39,40,57; 7:29; 8:42; 10:36; 11:42; 17: 3, 8,18,21,23,25; 20:21): Հրեա աղբյուրներում առաքյալ նշանակում էր ուղարկված որպես մեկ այլ մարդու պաշտոնական ներկայացուցիչ, որը նման է «ղեսպանին» (տես 2 Կոր. 5:20):
- **«Քրիստոսի»** Սա եբրայերեն *messiah* տերմինի հունարեն համարժեքն է, որը նշանակում է «օծյալ»: Դա նշանակում էր «կանչված և սպառազինված Աստծո կողմից կոնկրետ գործի համար»: Հին Կտակարանում երեք խմբի առաջնորդներն էին օծվում՝ քահանաներ, թագավորներ և մարգարեներ: Հիսուսը կատարեց բոլոր այդ երեք օծյալ պաշտոնները (տես Եբր. 1: 2-3): Նա խոստացվածն է, ով պետք է բացեր արդարության նոր դարաշրջանը: Տես [ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՄԵՄԻՍ](#) 1 Տիմ. 1: 1:
- **«Յիսուս»** Այս եբրայերեն անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ փրկում է», «ՅԱՀՎԵՆ փրկություն է» կամ «ՅԱՀՎԵՆ բերում է փրկություն»: Սա նույնն է, ինչ Հին Կտակարանյան «Հեսու» անունը: «Հիսուս» անունը բխում է եբրայերեն փրկություն *hosea* բառից, որը ածանցվում է Աստծո ուխտի

անունի հետ «ՅԱՀՎԵ»: Դա հրեշտակի միջոցով Աստծո կողմից Մարիամին հայտնած անունն էր (տես Մատթ. 1:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ա. *El* (BDB 42, KB 48)

1. Աստվածության համար հնագույն տերմինի սկզբնական նշանակությունն անորոշ է, թեև շատ գիտնականներ հավատում են, որ այն առաջացել է արքադերեն արմատից, «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» (տես Ծննդ. 17: 1; Թվոց 23: 19; 2 Օր. 7:21; Սաղ. 50:1):
2. Քանանական դիցարանի բարձր աստված *El* է (Ras Shamra տեքստերը), որը կոչվում է «աստվածների հայրը» և «երկնքի տեր»
3. Աստվածաշնչում *El-ը* հաճախ բարդ բառեր է ստեղծում՝ ուրիշ տերմիններին միանալով: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու կերպը:
 - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված», BDB 42 & 751 II), Ծննդ. 14: 18-22; 2 Օր. 32:8; Ես. 14:14
 - բ. *El-Roi* («Աստված, ով տեսնում է» կամ «Աստված, ով հայտնում է իրեն», BDB 42 & 909), Ծննդ. 16:13
 - գ. *El-Shaddai* («Ամենագոր Աստված» կամ «Ամենաողորմած Աստված» կամ «Լեռնան Աստված», BDB 42 և 994), Ծննդ. 17: 1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6: 3
 - դ. *El-Olam* («Հավիտենական Աստված», BDB 42 & 761), Ծննդ. 21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տված Աստծո խոստման հետ, 2 Թագ. 7: 13,16
 - ե. *El-Berit* («Ուխտի Աստված», BDB 42 & 136), Դատ. 9:46
4. *El* հավասար է
 - ա. ՅԱՀՎԵԻՆ ԹՎ. 23:8; Սաղ. 16: 1-2; 85:8; Ես. 42: 5
 - բ. *Elohim* Ծննդ. 46: 3; Հոբ 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
 - գ. *Shaddai* Ծննդ. 49:25; Թվոց 24: 4,16
 - դ. «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր. 4:24; 5: 9; 6:15
 - ե. «ողորմած» 2 Օր. 4:31; Նեեմ. 9:31
 - զ. «մեծ և հրաշալի» 2 Օր. 7:21; 10:17; Նեեմ. 1: 5; 9:32; Դան. 9: 4
 - է. «գիտություն» 1 Թագ. 2: 3
 - ը. «Իմ գորավոր բերդը/ուժեղ ապաստարան» 2 Թագ. 22:33
 - թ. «ինձ համար վրեժխնդիր եղող» 2 Թագ. 22:48
 - ժ. «սուրբը» Ես. 5:16
 - ի. «հզոր» Ես. 10:21
 - լ. «Իմ փրկությունը» Ես. 12: 2
 - խ. «մեծ ու հզոր» Եր. 32:18
 - ծ. «հատուցող» Եր. 51:56
5. Բոլոր Աստծո անունների համադրությունները կարելի է գտել Հեսու 22:22-ում (*El, Elohim, ՅԱՀՎԵ*, կրկնողաբար)

Բ. *Elyon* (BDB 751, KB 832)

1. Սրա հիմնական նշանակությունն է «բարձր», «մեծարված» կամ «վեր բարձրացված» (տես Ծննդ. 40:17; 3 Թագ. 9: 8; 4 Թագ. 18:17; Նեեմ. 3:25; Եր. 20: 2; 36:10; Սաղ. 18:13):
2. Այն օգտագործվում է զուգահեռ իմաստով Աստծո մի քանի այլ անունների /

տիտղոսների համար:

ա. *Elohim* - Սաղ. 47:1-2; 73:11; 107: 11

բ. ՅԱՀՎԵ - Ծննդ. 14:22; 2 Թագ. 22:14

գ. *El-Shaddai* - Սաղ. 91: 1,9

դ. *El* - Թվոց 24:16

ե. *Elah* հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7-ում, որը կապված է *Illair* հետ (արամերեն «Բարձր Աստված») Դան. 3:26; 4: 2; 5: 18,21

3. Այն հաճախ օգտագործվում է ոչ իսրայելացիների կողմից:

ա. Մելքիսեդեկ, Ծննդ. 14: 18-22

բ. Բաղդամ, Թվ. 24:15

գ. Մովսեսը, խոսելով ազգերի մասին 2 Օր. 32: 8

դ. Նոր Կտակարանում Դուկասի Ավետարանը գրվելով հեթանոսներին, նաև օգտագործում է հունարեն համարժեքը *Hupsistos* (տես 1: 32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)

Գ. *Elohim* (ՀՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵԶԱԿԻ), հիմնականում օգտագործվում է բանաստեղծության մեջ (BDB 43, KB 52)

1. Այս տերմինը Հին Կտակարանից դուրս չի հանդիպում:

2. Այս բառը կարող է նշանակել Իսրայելի Աստված կամ ազգերի աստվածներ (տես Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստվածապաշտ էր (տես Հեսու 24: 2):

3. Այն կարող է վերաբերել Իսրայելի դատավորներին (տես Ելից 21: 6; Սաղ. 82: 6):

4. *elohim* տերմինը նաև օգտագործվում է այլ հոգևոր արարածների համար (հրեշտակներ, դևեր), ինչպես 2 Օր. 32: 8 (LXX); Սաղ. 8: 5; Հոբ 1: 6; 38: 7:

5. Աստվածաշնչում դա Աստծո առաջին անունն է (տես Ծննդ. 1: 1): Այն օգտագործվում է բացառապես մինչև Ծննդ. 2: 4, որտեղ այն համակցված է ՅԱՀՎԵԻ հետ: Հիմնականում (աստվածաբանորեն) խոսքը վերաբերվում է Աստծուն որպես արարիչ, ապահովող և այս ողջ մոլորակի կյանքը պահպանող (տես Սաղ.104):

Դա հումանիշ է *El-* ի հետ (տես 2 Օր. 32: 15-19): Այն կարող է նաև զուգորդվել ՅԱՀՎԵԻ հետ, ինչպես Սաղմոս 14-ը (*Elohim*, հհ.1,2, 5; ՅԱՀՎԵ, հհ. 2, 6; նույնիսկ *Adon*, հ.4):

6. Թեև ՀՈԳՆԱԿԻ է և օգտագործվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ նշանակում է Իսրայելի Աստվածը, բայց սովորաբար այն ունի ԵԶԱԿԻ ԲԱՅ՝ մերժելու մոնոթեիստիկ կիրառությունը (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ):

7. Ջարմանալի է, որ Իսրայելի մոնոթեիստիկ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է (նաև տես «մեզ, մեր» Ծննդ. 1:26; 3:22; 11: 7): Թեև հստակ չէ, ահա տեսությունները:

ա. Եբրայերենը շատ ՀՈԳՆԱԿԻՆԵԸ ունի, հաճախ օգտագործվում է շեշտադրման համար: Սրան շատ մոտ է ավելի հին եբրայերեն քերականական կանոնը, որը կոչվում է «Մեծության, գերազանցության հոգնակի», որտեղ ՀՈԳՆԱԿԻՆ օգտագործվում է գաղափարը ավելի ամրապնդելու կամ մեծացնելու համար:

բ. Սա կարող է վերաբերել հրեշտակների ժողովին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որտեղ, որ ապրում է (տես 3 Թագ. 22:19-23; Հոբ 1:6; Սաղ. 82:1; 89:57):

գ. Հնարավոր է նույնիսկ, որ սա արտացոլում է Նոր Կտակարանի բացահայտումը՝ մեկ Աստված երեք անձերով: Ծննդոց 1: 1-ում Աստված ստեղծում է; Ծննդ. 1: 2 Հոգին շրջում է, և Նոր Կտակարանից Հիսուսը Հայր

Աստծո օգնականն է ստեղծագործության մեջ (տեա Հովհ. 1: 3, 10; Հո. 11:36; 1 Կոր. 8:6; Կող.1: 16; Եբր. 1:2; 2:10):

Դ. ՅԱՀՎԵ (BDB 217, KB 394)

1. Սա է այն անունը, որը արտացոլում է աստվածությունը, որպես ուխտ-կապող Աստված: Աստված որպես փրկիչ, փրկագնող: Մարդիկ խախտում են ուխտերը, բայց Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տեա Սաղ. 103):

Այս անունը առաջին անգամ հիշատակվում է *Elohim*- ի հետ Ծննդ. 2: 4: Ծննդոց 1-2-ում չկա երկու ստեղծագործություն, այլ երկու շեշտադրում.

ա. Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական, Սաղ. 104)

բ. Աստված որպես մարդկության հատուկ ստեղծող (Սաղ. 103)

Ծննդոց 2: 4-3: 24 սկսում է հատուկ հայտնությունը մարդկության արտոնյալ դիրքի և նպատակների մասին, ինչպես նաև մեղքի և ապստամբության խնդիրը կապված եզակի դիրքորոշման հետ:

2. Ծննդ. 4: 26 ասվում է, որ «մարդիկ սկսեցին կանչել Տիրոջ անունը» (ՅԱՀՎԵ): Սակայն, Ելից 6: 3 ենթադրում է, որ վաղ ժամանակների ուխտի ժողովուրդը (նախահայրերը և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես *El Shaddai*: ՅԱՀՎԵ անունը բացատրվում է միայն մեկ անգամ Ելից 3: 13-16, հատկապես հ.14: Սակայն Մովսեսի գրվածքները հաճախ բառերը թարգմանում են հայտնի բառախաղերի միջոցով, այլ ոչ թե ստուգաբանորեն (տեա Ծննդ. 17: 5; 27:33; 29: 13-35): Այս անվան իմաստին վերաբերող մի քանի տեսություններ են եղել (վերցված է IDB, հատոր 2, էջ 409-11):

ա. արաբերեն արմատից, «բուռն սեր ցուցաբերել»

բ. արաբերեն արմատից «փչել» (ՅԱՀՎԵՆ որպես փոթորկի Աստուած)

գ. Ուգարիտի (քանանական) արմատից «խոսել»

դ. փյունիկյան ձեռագրից, պատճառական դերբայ, որը նշանակում է «Նա, ով պահում է» կամ «Նա, ով հաստատում է»

ե. եբրայերեն *Qal* ձևից «այն մեկը, ով» կամ «Նա, ով ներկա է» (ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ «Նա, ով լինելու է»)

զ. եբրայերեն *Hiphil* ձևից «Նա, ով հանդիսանում է գոյության աղբյուրը»

է. եբրայերեն արմատից «ապրել» (տեա Ծննդ. 3:21), որը նշանակում է «հավիտյան ապրող, միակ կենդանի Տեր»

ը. Ելից 3: 13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱԸ ձևով, որը օգտագործվում է ՎԱՂԱԿԱՏԱԸ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ, « Ես կշարունակեմ լինել այն, ինչ կամ» կամ «Ես շարունակելու եմ լինել այն, ինչ միշտ եղել եմ» (տեա J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, էջ 67): ՅԱՀՎԵԻ լրիվ անվանումը հաճախ արտահայտվում է հապավումով կամ, հնարավոր է, յուրօրինակ ձևով:

(1) *Yah* (օրինակ, Hallelu - yah, BDB 219, տեա Ելից 15:2; 17:16; Սաղ. 89: 8; 104: 35)

(2) *Yahu* ("iah" անունների վերջավորությունը, օրինակ՝ Եսայիա)

(3) *Yo* ("Jo" անունների սկիզբ, օրինակ, Հեսու կամ Հովել)

3. Հետագայում հուդայականության մեջ այս ուխտի անունը դարձավ սուրբ (ՅԱՀՎԵ), որը հրեաները վախենում էին արտասանել, որ պատվերը զանց չանեին Ելից 20: 7; 2 Օր. 5:11; 6:13: Այսպիսով նրանք «սեփականատեր», «վարպետ», «ամուսին», «տեր»

Եբրայերեն տերմինը փոխարինեցին *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ նրանք կարդում էին Հին Կտակարանյան տեքստերը և հանդիպում էին ՅԱՀՎԵ անունին, նրանք արտասանում էին «տեր»: Սա է պատճառը, որ ՅԱՀՎԵՆ անգլերեն թարգմանություններում գրվում է ՏԵՐ:

4. Ինչպես *El* -ը, ՅԱՀՎԵՆ հաճախ համակցված է այլ տերմինների հետ՝ ընդգծելու Իսրայելի Ուխտի Աստծո որոշ առանձնահատկությունները: Թեև շատ հնարավոր կապակցված տերմիններ կան, ահա մի քանիսը:

- ա. ՅԱՀՎԵ - *Yireh* (ՅԱՀՎԵՆ կհոգա, BDB 217 և 906), Ծննդ. 22:14
- բ. ՅԱՀՎԵ - *Rophekha* (ՅԱՀՎԵՆ ձեր բժիշկն է, BDB 217 & 950, *QAL* դերբայ), Ելից 15:26
- գ. ՅԱՀՎԵ - *Nissi* (ՅԱՀՎԵՆ իմ դրոշակն է, BDB 217 & 651), Ելից 17:15
- դ. ՅԱՀՎԵ - *Meqaddishkem* (ՅԱՀՎԵՆ, ով սրբացնում է ձեզ, BDB 217 & 872, *Piel* դերբայ), Ելից 31:13
- ե. ՅԱՀՎԵ - *Shalom* (ՅԱՀՎԵՆ խաղաղություն, BDB 217 & 1022), Դատ. 6:24
- զ. ՅԱՀՎԵ - *Sabaoth* (ՅԱՀՎԵՆ զորաց Աստված, BDB 217 & 878), 1 Թագ. 1: 3,11; 4: 4; 15: 2; հաճախ Մարգարեններում
- է. ՅԱՀՎԵ - *Ro'I* (ՅԱՀՎԵՆ իմ հովիվն է, BDB 217 & 944, *QAL* դերբայ), Սաղ. 23: 1
- ը. ՅԱՀՎԵ - *Sidqenu* (ՅԱՀՎԵՆ մեր արդարությունն է, BDB 217 & 841), Եր. 23: 6
- թ. ՅԱՀՎԵ - *Shammah* (ՅԱՀՎԵՆ այստեղ է, BDB 217 & 1027), Եզ. 48:35

▪ **«Աստուծոյ կամքովը»** Այս նույն ներածական արտահայտությունն օգտագործվում է 1 Կոր. 1: 1; 2 Կոր. 1: 1; Եփ. 1: 1; և Կող. 1: 1: Պողոսը համոզված էր, որ Աստված ընտրել էր իրեն որպես Առաքյալ: Այս կոչումի հատուկ նշանակությունը սկսվեց Դամասկոս ճանապարհին իր դարձի գալուց հետո (տես Գործք 9: 1-22; 23: 3-16; 26: 9-18): Պողոսը հաճախ պնդեց իր Աստծուց տրված իշխանությունը և կանչը՝ հաստատելու իր գրվածքները, որպես հատուկ Աստծուց ստացած (այսինքն, ներշնչված, տես 2 Տիմ. 3:1,6; 1 Կոր. 2: 9-13; 1 Թես. 2:13):

Արևելահայերեն «կենքի խոստումների պէս»

Արևմտահայերեն «կենաց խոստումին պէս»

NASB, NKJV «ըստ կյանքի խոստման»

NRSV «հանուն կյանքի խոստման»

TEV «ուղարկեց խոստացված կյանքը հոչակելու»

NJB «իր կյանքի խոստման համաձայն»

Պողոսը պնդում է, որ իր փրկությունը, կանչը և ծառայության համար սպառազինվելը բոլորը հիմնված են Աստծո իրական կյանքի՝ Քրիստոսի միջոցով հավիտենական կյանքի խոստումների վրա (տես 2 Տիմ. 1, 2, 9, 13): Պողոսը մի քանի անգամ ակնարկում է ունենալու և կյանք տալու Աստծո գաղափարը Հովվական Նամակներում (տես 2 Տիմ. 1:1; 1 Տիմ. 6: 15-16,19; Տիտոս 1: 2):

1: 2 «Տիմոթեոս՝ սիրելի որդուս» Ավետարանում փոխաբերականորեն Պողոսը Տիմոթեոսի հոգևոր հայրն է համարվում (տես 2 Տիմ. 2: 1; 2 Տիմ. 1: 2; Տիտոս 1:4): Այս բացման կետը ցույց է տալիս նրանց փոխադարձ սերը: Տես [ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՄՈԹԵՈՍ](#) 1 Տիմ. 1: 1:

▪ **«շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն»** Դիտեք Պողոսի բացման ողջույնի ընդհանրությունը և տարբերությունները

1. «Չնորիք լինի ձեզ եւ խաղաղութիւն Աստուածանից՝ մեր Հօրիցը եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը» (Հռ. 1:7; 1 Կոր. 1: 3; 2 Կոր. 1: 2; Գաղ. 1: 3; Եփ. 1:2; Փիլ. 1:2; 1 Թեա. 1: 2; Փիլիմոն 1:3)
2. «Շնորհք լինի ձեզ հետ՝ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը» (Կող. 1: 2)
3. «Չնորիք լինի ձեզ հետ եւ խաղաղութիւն մեր Հայր Աստուածանից եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը» (1 Թեա. 1: 1)
4. «Չնորիք, ողորմութիւն եւ խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը» (1 Տիմ. 1: 2; 2 Տիմ. 1: 2)
5. «Չնորիք, ողորմութիւն եւ խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը՝ մեր Փրկչիցը» (Տիտոս 1: 4)

Ուշադրություն դարձրէք, որ կա բազմազանություն, բայց որոշ տարբեր չափանիշ են

1. «Շնորհք»-ով է սկսում բոլոր բարեմաղթանքները: Սա ստանդարտ հունական բացման քրիստոնէացված ձև է: Այն կենտրոնանում է Աստծո բնույթի վրա:
2. «Խաղաղություն» սա Աստծո հուսալիությանը ապավինող մարդկանց վստահության արդյունքն է՝ հավատալով Նրա հավատարմությանը:
3. «Ողորմություն» Աստծո բնավորությունը նկարագրելու մեկ այլ միջոց է և հատուկ է 1 և 2 Տիմոթեոսին: Այս տերմինը օգտագործվել է Սեպտուագինդի մեջ՝ եբրայերեն *hesed* տերմինը թարգմանելու համար (այսինքն, ուխտի սեր և հավատարմություն): Աստված ողորմած է և վստահելի:
4. Հայրը և Որդին նշվում են յուրաքանչյուր ողջույնի խոսքի մեջ (1 Թեա.-ում նրանք նշվում են նախորդ արտահայտության մեջ): Նրանք միշտ էլ քերականորեն կապված են: Սա մի միջոց էր, որ Նոր Կտակարանի գրողները հաստատեցին Հիսուս Նազովրեցու լիակատար աստվածությանը: Սա նաև վերաբերվում է Հին Կտակարանում ՅԱՀՎԵԻՆ, որով դիմել են Հիսուսին (այսինքն, Տէր և Փրկիչ):

▪ **«Աստուած Հօրիցը եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը»** Բացման խոսքը, որին հետևում է «Չնորիք, ողորմություն և խաղաղություն» արտահայտությունը, ունի մեկ ՆԱԽԴԻՐ (*apo*), որը Հորն ու Որդուն կապող հավասար քերականական հարաբերություն է (տես 1 Տիմ.1: 2; Տիտոս 1: 4 և 2 Տիմ. 1: 2): Պողոսը օգտագործեց մի մեթոդ, որը հաստատեց Հիսուսի աստվածությունը:

«Հայր» չի օգտագործվում սեռական սերնդի կամ ժամանակագրական հաջորդականության իմաստով, այլ որպէս սերտ ընտանեկան հարաբերություններ: Աստված ընտրեց ընտանեկան տերմիններ՝ Իր անձը մարդկությանը հայտնելու համար (տես Ովսեա 2-3, որտեղ Աստված երևում է որպէս փափագող, հավատարիմ սիրող և Ովսեա 11, որտեղ Նա հանդես է գալիս որպէս սիրող հայր և մայր):

Հայտնության աստվածությունը ոչ թէ առաջին շարժիչն է կամ հունական փիլիսոփայության առաջին պատճառը, այլ Հիսուս Քրիստոսի հայրը: Աստվածաշունչը մարդկային հիմնավորված փիլիսոփայություն չէ, այլ աստվածային ինքնաբացահայտում, հայտնություն, որը չի կարող բացահայտվել մարդկային վերլուծության միջոցով: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՅՐ](#) 1 Տիմ. 1: 2:

▪ **«Տէր»** Աստված հայտնեց Իր ուխտի անունը՝ ՅԱՀՎԵ Մովսեսին Ելից 3:14: Սա եբրայերեն «լինել» ԲԱՅՆ էր: Ավելի ուշ հրեաները վախենում էին այս սուրբ անունը արտասանել, երբ նրանք կարդում էին սուրբ գրքերը, որ չլինի թե գուր տեղը բերան առնեն և կոտրեն Տասը պատվիրաններից մեկը (տես Ելից 20: 7; 2 Օր. 5:11): Հետևաբար, նրանք փոխարինեցին մեկ այլ բառով, *Adon*, որը նշանակում է «ամուսին, սեփականատեր, վարպետ, տեր»: Սա ՅԱՀՎԵՆ որպէս ՏԵՐ անգլերեն լեզվի թարգմանության աղբյուրն է: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ](#) 2 Տիմ. 1: 1:

Երբ Նոր Կտակարանի հեղինակները Հիսուսին անվանեցին «Տեր» (*kurios*), նրանք հաստատում էին Հիսուսի աստվածությունը: Այս հաստատումը դարձավ վաղ եկեղեցու մկրտության բանաձևը «Հիսուսը Տեր է» (տես Հռ. 10: 9-13; Փիլ. 2: 6-11):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 1:3-14

³Շնորհակալ եմ Աստուածանից, որին պաշտում եմ իմ նախնիքներից. Մաքուր խղճմտանքով, որ անպակաս յիշում եմ քեզ իմ աղօթքներումը գիշեր եւ ցերեկ, ⁴Ցանկանալով քեզ տեսնել երբ յիշում եմ քո արտասուքը, որ ուրախութիւնով լցուիմ. ⁵Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը որ քեզանում է. Որ առաջ քո Լօիդա տատումը եւ քո Եւնիկէ մօրումը բնակուեցաւ, համոզուած եմ որ քեզանում է: ⁶Այդ պատճառով միտքդ եմ բերում որ արծարծես Աստուծոյ այն շնորհքն, որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վերայ դնելովը: ⁷Որովհետեւ Աստուած չ'տուաւ մեզ երկչտութեան հոգի, այլ զօրութեան եւ սէրի եւ զգաստութեան: ⁸Ուրեմն ամօթ մի համարիր մեր Տիրոջ վկայութիւնը, եւ ոչ էլ ինձ որ նորա կապուածն եմ. այլ միասին չարչարուիր աւետարանի համար Աստուծոյ զօրութեան համեմատ, ⁹Որ փրկեց մեզ, եւ սուրբ կոչումով կանչեց. ոչ թէ մեր գործերի համեմատ, այլ իր յառաջադրութեան եւ շնորհքի համեմատ, որ տրուեցաւ մեզ Քրիստոս Յիսուսումը յաւիտենական դարերից առաջ, ¹⁰Եւ հիմա յայտնուեցաւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի երեւելովը. որ խափանեց մահն եւ լոյսի մեջ բերաւ կեանքն ու անմահութիւնը աւետարանի միջոցով, ¹¹Որին ես քարոզիչ եւ առաքեալ կարգուեցայ, եւ հեթանոսների վարդապետ: ¹²Որ այդ պատճառով էլ չարչարանքները կրում եմ. Բայց ամօթ չեմ համարում. որովհետեւ գիտեմ թէ ո՞ւմ եմ հաւատացել. Եւ համոզուած եմ թէ նա կարող է իմ աւանդը պահել մինչեւ այն օրը: ¹³Ունեցիր ողջամիտ խօսքերի օրինակը, որ ինձանից լսեցիր հաւատքով եւ սիրով որ Քրիստոս Յիսուսումն է: ¹⁴Այն բարի աւանդը պահիր Սուրբ Հոգովը, որ բնակուած է մեզանում:

1: 3 «Շնորհակալ եմ Աստուածանից» Բնորոշ էր հին միջերկրական նամակներին՝ նամակի սկզբում շնորհակալության աղոթքը ներառելու համար: Պողոսը սովորաբար հետևեց այս օրինակին (տես Հռ. 1: 8; 1 Կոր. 1: 4; Եփ. 1: 15-16; Փիլ. 1: 3-4; Կող. 1: 3-4; 1 Թես. 1:2; 2 Թես. 1: 3; Փիլիմոն 4):

▪ **«որին պաշտում եմ իմ նախնիքներից»** Պողոսը չէր գիտակցում, որ քրիստոնեությունը իրենից առանձին կամ նոր հավատք էր հանդիսանում, որը տարբեր էր Հին Կտակարանից (տես Գործք 24:14; 26: 5-6, 22; Հռ. 4; 2 Կոր. 11: 22; և Փիլ. 3: 5): Գաղ. 6: 15-16 նա օգտագործում է «Աստծո Իսրայելը» Հին Կտակարանյան անունը՝ եկեղեցուն նկարագրելու համար: Հռ. 2: 28-29 նա պնդում է, որ Աբրահամի իսկական զավակները հավատքով են, այլ ոչ թե էթնիկ ծագումով (տես Հռ. 9: 6): Ոչ հրեա կա ոչ հույն (տես Հռ. 3:22; 1 Կոր. 12:13; Գաղ. 3: 28; Կող. 3:11):

▪ **«Մաքուր խղճմտանքով»** տես ծանուցում 1 Տիմ. 1: 5:

▪ **«յիշում եմ»** Պողոսը հիշում է Տիմոթեոսի կյանքը, ընտանիքը և ծառայության կանչը: Նա 2 Տիմ. 1: 3-6 օգտագործում է *mneia* տերմինը չորս ձևով:

1. 2 Տիմ. 1: 3 Պողոսը միշտ հիշում է Տիմոթեոսին իր աղոթքներում
2. 2 Տիմ. 1: 4 նա օգտագործում է ԴԵՐԲԱՅ ձևը՝ Տիմոթեոսին հիշեցնելու իրենց արտասուքով բաժանվելը
3. 2 Տիմ. 1: 5 օգտագործում է ԲԱՂԱԴԲՅԱԼ ձևը (*hupo + mneia*)՝ հիշեցնելով Տիմոթեոսին իր ընտանիքի անկեղծ հավատքի մասին:
4. 2 Տիմ. 1: 6 օգտագործում է տերմինի ԲԱՂԱԴԲՅԱԼ ԲԱՅԱԿԱՆ ձևը (*ana + mneia*)՝ հիշեցնելով Տիմոթեոսին իր կոչման և ծառայության համար սպառազինման մասին

Այն աստվածաբանորեն օգտակար է և քաջալերանք էտ նայելու մեր կյանքին և տեսնելու Աստծո ձեռքը, որը ներգրավված էր յուրաքանչյուր փուլում (ընտանեկան հավատքի, անձնական հավատքի, կոչ և ծառայության սպառազինության, աստվածապաշտ ընկերների և ուսուցիչների համար):

1:4 Պողոսը և Տիմոթեոսը հիանալի հարաբերություններ ունեցան Քրիստոսի ծառայության մեջ: Նրանց բարեկամությունը քաջալերեց և գորացրեց նրանց ծառայության համար (տես 2 Տիմ. 4: 9, 21):

1: 5 «անկեղծ հաստքը» Բառացիորեն սա նշանակում է «անկողմնակալ, անկեղծ»: Այն օգտագործվում է «մաքուր հավատքի» իմաստով (տես 1 Տիմ. 1: 5):

- **«որ քեզանում է»** Անորոշ է կոնտեքստից (և 3: 15, ինչպես նաև Գործք 16: 1), արդյոք դա վերաբերվում է հուդայականությանը (Տիմոթեոսի տատին և հնարավոր է մորը) թե քրիստոնեությանը (Տիմոթեոսի դարձի գալը): Այն ակնհայտորեն վերաբերվում է ՅԱՀՎԵԻ հավատքին և Նրա փրկարար ծրագրին (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 10):

Արևելահայերեն «համոզուած եմ որ քեզանում էլ»
Արևմտահայերեն «համոզուած եմ որ դուն դեռ ունիս»

NASB «Վստահ եմ, որ դա նաև քո մեջ է»
NKJV «Ես համոզված եմ, որ քո մեջ կա»
NRSV «Վստահ եմ, ապրում է քեզանում»
TEV «Վստահ եմ, որ դու նաև այն ունես»
NJB «Ես համոզված եմ, որ քո մեջ է»

Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս արտահայտությունը հունարենում խիստ հաստատում է Տիմոթեոսի կյանքում և ծառայության մեջ Հոգու աշխատանքի նկատմամբ վստահության շարունակությունը (տես Փիլ. 1: 6):

1: 6 «միտքդ եմ բերում որ արծարծես» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է բորբոքման կամ բոցավառման մշտական անհրաժեշտություն: Գոյություն ունի պարզևներով օժտվածության կամային ասպեկտը (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒՒՆՏ](#) 2 Տիմ. 2: 1): Սա չի նշանակում ենթադրել, որ Տիմոթեոսը թույլ տվեց, որ Աստծո կանչի և պարզևի բոցը մարի, բայց դժվար իրավիճակներում, ինչպիսին իր ներկայիս հանձնարարությունն էր, նա պետք է ուժ ստանար Աստծո նախորդ կանչից և սպառազինությունից:

- **«Աստուծոյ այն շնորհքն»** «Պարզև» (*charisma*) տերմինի արմատը առաջացել է «շնորհք» (*charis*) բառից: Սա կարող էր վերաբերվել Սուրբ Հոգուն կամ, ավելի ճիշտ այս կոնտեքստում, ծառայության պարզևներին: Յուրաքանչյուր հավատացյալ ունի գերբնական պարզև կամ պարզևներ ծառայության համար (1 Կոր. 12: 7,11,18): Տիմոթեոսի պարզևը ընդունվել էր Պողոսի և նրա տնային եկեղեցու կողմից (տես 1 Տիմ. 4: 14):

- **«իմ ձեռքերը քեզ վերայ դնելովը»** Սա չի կարող լինել ապացույց տեքստ «առաքելական հաջորդականության» համար: Տեսեք ամբողջական ծանուցում 1 Տիմ. 4:14: Ձեռք դնելը մի քանի պատճառներ է ունեցել Աստվածաշնչում: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4:14:

1: 7 «Որովհետև Աստուած չ'տուաւ մեզ երկչոտութեան հոգի» Նոր Կտակարանի հին հունարեն տեքստերը բոլորը գրվել են մեծատառերով (երկաթագիր/uncials), ուստի ժամանակակից թարգմանություններում մեծատառերով գրելը մեկնաբանության հարց է: Հունարեն տեքստում ՈՐՈՇԻՉ ՀՈՂ չկա: Կան նաև Նոր Կտակարանյան զուգահեռներ փոքրատառ «ս» համար (տես Հո. 8:15; 1 Կոր. 2:12), սակայն երկու կոնտեքստում էլ Սուրբ Հոգին հատուկ նշվում է: Շատ ժամանակակից թարգմանություններ ունեն «հոգի...» բառը (այսինքն KJV, ASV, NKJV, NASB, RSV, NRSV, NEB, REB և NIV): Սակայն, մյուսները ենթադրում են, որ այստեղ վերաբերվում է Սուրբ Հոգուն (տես TEV, NJB և Նոր Կտակարանի William's թարգմանությունը): Իրականում դա կարող է լինել նպատակային անորոշություն (տես NEB և NJB):

Աստված յուրաքանչյուր հավատացյալի տվել է ամենամեծ պարզև՝ Հոգին, ինչպես նաև հոգևոր պարզև կամ պարզևներ ծառայելու համար, բայց նաև համարձակ ու հզոր փափագ՝ ծառայելու, բաժնեկցելու, գնալու և Քրիստոսանման լինելու համար:

Robert Girdlestone, *Synonyms of the Old Testament*, հետաքրքիր քննարկումներ ունի Նոր Կտակարանում «հոգի» տերմինի օգտագործման մասին (էջ 61-63):

1. չար հոգիներ
2. մարդու հոգի
3. Սուրբ Հոգի
4. այն բաները, որոնք Հոգին արտադրում է մարդու հոգու մեջ և միջոցով
 - ա. «ոչ թե ստրկության հոգին» այլ «որդեգրության հոգին», Հո. 8:15
 - բ. «հեզության հոգի», 1 Կոր. 4:21
 - գ. «հավատքի հոգի», 2 Կոր. 4:13
 - դ. «իմաստութեան եւ յայտնութեան հոգի՝ իր գիտութիւնովը», Եփ. 1:17
 - ե. «ոչ թե երկչոտության հոգի», այլ «զորության, սերի եւ զգաստության», 2 Տիմ. 1:7
 - զ. «խաբեության հոգի», «ճշմարտության հոգի», 1 Հովհ. 4: 6

Արևելահայերեն «երկչոտութեան հոգի»

Արևմտահայերեն «երկչոտութեան հոգի»

NASB, NJB «երկչոտության հոգի»

NKJV «վախի հոգի»

NRSV «վախկոտության հոգի»

TEV «Հոգին ... մեզ չի վախեցնում»

Կա մեկ բացասական և երեք դրական կողմեր Աստծո պարզևներ տալու մեջ:

Արևելահայերեն «զգաստութեան»

Արևմտահայերեն «զգաստութեան»

NASB «կարգապահություն»

NKJV «առողջ միտք»

NRSV «ինքնակարգապահություն»

TEV, NJB «ինքնակառավարում»

Տես ամբողջական ծանուցում 1 Տիմ. 3:2.

1:8-14 Հունարենում սա մեկ նախադասություն է:

1: 8 «ամօթ» Սա առաջին գլխի բանալի արտահայտությունն է (տես 2 Տիմ. 1, 8, 12, 16; ինչպես նաև Մարկ. 8: 38; Հռ. 1:16): Այստեղ նրա քերականական ձևը ԱՕՐԻՍ ՎՐԱՎՈՐԱԿԱՆ (deponent) ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է; դա չի նշանակում, որ Տիմոթեոսը ամաչում էր, այլ սա հորդոր է, որ չամաչի: Պողոսը, հավանաբար, նկատի ուներ Հին Կտակարանի մեղքի գաղափարը, որը բերում էր խնդիրներ և արդարությունը, որը բերում էր օրհնություններ (տես 2 Օր. 27-28; Հոբ, Սաղ. 73): Պողոսը չէր տառապում մեղքի պատճառով, այլ Քրիստոսի համար:

- **«մեր Տիրոջ վկայութիւնը, եւ ոչ էլ ինձ որ նորա կապուածն եմ»** Պողոսը հորդորեց Տիմոթեոսին շարունակել քարոզել Քրիստոսի չարչարանքները (տես Օննդ. 3:15; Ես. 53; Գործք 3:18; 26:23), ինչպես նաև նմանվել Պողոսին որպես ավետարանի հոգևոր բանտարկյալի և ավետարանի պատճառով ֆիզիկապես բանտարկյալի: Քարոզի բարի լուրը, անկախ արժեքից կամ հետևանքներից (տես Գաղ. 4:17; 2 Կոր. 4: 7-12; 6: 3-10; 11: 23-29):

- **«միասին»** Պողոսի աստվածաբանության պատճառով հավատացյալների նույնացումը Քրիստոսի հետ մահվան (կարդա Հռ. 6; Գաղ. 2:20) և տառապանքի մեջ (տես Հռ. 8:17; 2 Կոր. 1:15; Փիլ. 3:10; նաև 1 Պետ. 4:13), Պողոսը հաճախ նոր հունարեն բառեր է ստեղծում օգտագործելով *syn* ՆԱԽԴԻՐԸ, որը նշանակում է «համատեղ մասնակցություն»:

1. տառապանքի մեջ (1: 8 և 2: 3)
2. մահվան մեջ (2:11)
3. ապրելու մեջ (2:11)
4. թագավորելու մեջ (2:12)

- **«չարչարուիր անտարանի համար»** Սա ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես 2 Տիմ. 2: 3, 9; 4: 5; Հռ. 8:17; 1 Պետ. 3:14; 4: 12-19): Այս արտահայտության բանալին է «ավետարանի համար», ոչ թե մեր չարությունը (տես 1 Պետ. 2:15-16): Ժամանակակից քրիստոնյաները պետք է գիտակցեն, որ ավետարանի համար չարչարվելը նորմա է, ոչ թե բացառություն (տես Մատթ. 5: 10-12; Հովհ. 15: 18-21; 16: 1-2; 17:14; Գործք 14:22; Հռ. 5: 3-4; 2 Կոր. 4: 16-18; 6: 4-10; 11: 23-28; Փիլ. 1:29; 1 Թեո. 3: 3; 2 Տիմ. 3:12; Հակ. 1: 2-4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԻՆՉՈՒ՞ ԵՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՏԱՌԱՊՈՒՄ

1. Անձնական մեղքի պատճառով (ժամանակավոր դատաստան): Սա չի նշանակում, որ բոլոր խնդիրները և բացասական հանգամանքները մեղքի արդյունք են (տես Հոբ; Սաղ. 73; Ղուկ. 14: 1-5; Նեեմիա 9; Հովհ. 9; Գործք 5: 1-11; 1 Կոր. 11:29-30; Գաղ. 6: 7):
2. Զարգացնել Քրիստոսանմանություն (Եբ. 5: 8): Նույնիսկ Հիսուսը, մարդկային կերպով ասած, պետք է հասունանար, ինչպես նաև Իր հետևորդները (տես Հռ. 5: 3-4; 8: 28-29; 2 Կոր.12:7-10; Փիլ. 3:10; Եբր.12: 5-12; Հակ. 1: 2-4; 1 Պետ. 1:7):
3. Հզոր, արդյունավետ վկայություն զարգացնել (տես Մատ. 5: 10-12; Հովհ. 15: 18-22; 1 Պետ.2: 18-21; 3: 13-17):
4. Որպես Նոր դարաշրջանի ծնունդի ցավեր (տես Մատթ. 24: 6; Մարկ. 13:8):
Երկու գիրք, որոնք օգնել են ինձ հասկանալ այս մեղավոր աշխարհի անարդարությունն ու չարիքը դա Hannah Whithall Smith, *The Christian's Secret of a Happy Life* and John W. Wenham, *The Goodness of God*.
Հավատացյալները պետք է հիշեն, որ խնդիրներն ու տառապանքը պարտադիր չէ, որ Աստծո զայրույթի կամ մերժման նշան լինեն է: Մեղավոր աշխարհում վատ բաներ են տեղի ունենում

հավատարիմ հետևորդների հետ (տես 1 Պետ. 4: 12-19): Աստծո խոստումները և Քրիստոսի ինքնագոհաբերող մահը Աստծո սիրո նշաններն են (տես Հռ. 5: 8): Սուրբ Գիրքը պետք է վեր դասվի ժամանակավոր հանգամանքներից:

1: 9 «Որ փրկեց մեզ, եւ կանչեց» Սրանք երկու ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ են միացված «և» (*kai*): Հռ. 8: 29-30-ը սկզբում «կանչեց» հետո «փրկեց», որը վերաբերվում է Աստծո գերիշխանությանը (ընտրությանը), սակայն այստեղ կանչը վերաբերվում է ծառայությանը (կոչված կոչումով, տես 2 Տիմ. 1:6-8 և Հատուկ Թեմա 2 Տիմ. 1: 9):

Սա Նոր Կտակարանի համարժեքն է Իսրայելի կողմից օգտագործվող Հին Կտակարանի ուխտի լեզվի համար: Հիսուսով հավատացյալները Աստծո ուխտի ժողովուրդ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Փրկությունը ոչ թե արդյունք է, այլ ամենօրյա առնչություն Աստծո հետ Քրիստոսի միջոցով: Այն չի ավարտվել, երբ մեկը հավատում է Քրիստոսին, այլ այն նոր է սկսվել (դարպաս, ապա ճանապարհ), տես Մատթ. 7: 13-14): Դա կրակից փրկվելու ապահովության քաղաքականությունն չէ, ոչ էլ երկնքի տոմս, այլ աճող Քրիստոսանման կյանք (տես Հռ. 8: 28-29; 2 Կոր. 3:18; 7: 1; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 4:13; 1 Թես. 3:13; 4: 3,7; 5:23; 1 Պետ. 1:15): Ամերիկայում խոսք ունենք, որն ասում է, ինչքան երկար է զույգը ապրում միասին, այնքան ավելի շատ են սկսում նմանվել իրար: Սա է փրկության նպատակը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՕՐԻՍՏ)

- Գործք 15:11
- Հռոմեացիս 8:24
- 2 Տիմոթեոս 1: 9
- Տիտոս 3: 5
- Հռոմեացիս 13:11 (համատեղում է ԱՕՐԻՍՏԸ ապագա կողմնորոշման հետ)

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐՊԵՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ)

- Եփեսացիս 2: 5,8
- ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅ (ՆԵՐԿԱ)
- 1 Կորնթացիս 1:18; 15: 2
- 2 Կորնթացիս 2:15
- 1 Պետրոս 3:21

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (ԱՊԱԳԱ ԲԱՅԱԶԵՎ-ում կամ կոնտեքստում)

- Հռոմեացիս 5: 9,10; 10: 9,13
- 1 Կորնթացիս 3:15; 5: 5
- Փիլիպեցիս 1:28
- 1 Թեսաղոնիկեցիս 5: 8-9
- Եբրայեցիս 1:14; 9:28
- 1 Պետրոս 1: 5

Հետևաբար, փրկությունը սկսվում է նախնական հավատքի որոշմամբ (տես Հովհ. 1:12; 3:16; Հռ. 10:9-13), բայց դա պետք է երևա հավատքի ապրելակերպի մեջ (տես Հռ. 8:29; Գաղ. 2:19-20; Եփ. 1: 4; 2:10), որը մի օր կվերջանա (տես 1 Հովհ. 3: 2): Այս վերջնական վիճակը կոչվում է փառավորում (տես Հռ. 8: 28-30): Սա կարելի է պատկերել այսպես

1. սկզբնական փրկությունը - արդարացում (փրկվել մեղքի պատժից)
2. առաջընթաց փրկություն - սրբացում (փրկվել մեղքի ուժից)

3. վերջնական փրկություն - փառավորում (փրկված մեղքի ներկայությունից)

- **«սուրբ կոչումով»** Սա կարող էր վերաբերվել Աստծուն որպես սուրբ, բայց հավանաբար կոնտեքստում այն վերաբերվում է Աստծո կամքին սուրբ ուխտի մարդկանց համար: Աստծո կամքը մարդկանց համար միշտ եղել է «Իր պատկերով ստեղծելը» (տես Ծննդ. 1: 26-27), որպեսզի արտացոլեն Իր պատկերը աշխարհին (տես Ծննդ. 12: 3; Ելից 19: 5-6): Մեսիայի կատարած գործը վերականգնել է Աստծո պատկերը, որը կորել է Ադամի և Եվայի ապստամբությամբ Ծննդոց 3. Քրիստոնեության նպատակը Քրիստոսանմանությունն է (տես Հո. 8:29; Գաղ. 4:19; Եփ. 1: 4) .

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆՉՎԱԾ

Աստված միշտ նախաձեռնում է՝ կոչելով, ընտրելով և քաշելով հավատացյալներին Իրեն (տես Հովհ. 6: 44,65; 15:16; 1 Կոր. 1: 1-2; Եփ. 1: 4-5, 11): «Կանչ/կոչ» տերմինը օգտագործվում է մի քանի աստվածաբանական իմաստներով:

- Ա. Հին Կտակարանում «անունը կանչել» միշտ եղել է պաշտամունքի կոնտեքստում (տես Ծննդ. 4:26; 12: 8; 21:33; 26:25; Ելից 34:5):
- Բ. Մեղավորները կանչված են փրկության Աստծո շնորհքով (տես Ելից 34: 6-7) Քրիստոսի ավարտած գործով և Հոգու համոզմամբ (*klētos*, տես Հո. 1: 6-7; 9:24, որը աստվածաբանորեն նման է 1 Կոր. 1: 1-2 և 2 Տիմ. 1: 9; 2 Պետ. 1:10):
- Գ. Մեղավորները կանչում են Տիրոջ անունը՝ փրկվելու համար (*epikaleō*, տես Գործք 2:21; 22:16; Հո. 10: 9-13): Այս արտահայտությունը հրեական պաշտամունքի իդիոմա է:
- Դ. Հավատացյալները կանչում են Նրա անունը ճգնաժամի և փորձության ժամանակ (Գործք 7:59):
- Ե. Հավատացյալները կանչված են ապրելու Քրիստոսանման կյանքով (*klēsis*, տես 1 Կոր. 1:26; 7:20; Եփ. 4: 1; Փիլ.3:14; 2 Թես.1:11; 2 Տիմ.1: 9):
- Զ. Հավատացյալները կանչված են ծառայության առաջադրանքներին (տես Գործք 13:2; 1 Կոր. 12:4-7; Եփ. 4: 1):

- **«ոչ թե մեր գործերի համեմատ»** Սա Պողոսի քարոզի հիմնական միտքն էր Գործք 15 և Գաղատացիս գիրքի հուդայականներին: Հովվական նամակների կեղծ ուսուցիչները նույնպես ունեն հրեական գործեր-արդարություն մտածելակերպ: Պողոսի գրվածքների հերթական թեմա է գործեր-արդարություն գաղափարի մերժումը (տես Հո. 3:20, 27-28; 4: 4-5, 8; 9:11, Գաղ. 2:16; 3:11; Եփ. 2: 8-9; Փիլ. 3: 9; 2 Տիմ. 1: 9, Տիտոս 3: 5):

- **«իր յառաջադրութեան եւ շնորհքի համեմատ»** Աստծու կամքն ու բնավորությունը չի կարող առանձնանալ: Նա գործել է ի օգուտ մարդկության, որը հիմնված է, թե ով է Նա (տես Եփ. 1: 4-5, 11): Ավետարանը արտացոլում է Հոր սիրտը, Որդու սիրառատ գործողությունները և Հոգու գորությունը: Փրկությունը Աստծո գաղափարն էր, Աստծո նախաձեռնությունը և Աստծո նպատակը:

- **«որ տրուեցաւ մեզ Քրիստոս Յիսուսումը յաւիտենական դարերից առաջ»** Ավետարանը «պլան Բ» չէր: Դա միշտ Աստծո ծրագիրն էր՝ փրկել Իր պատկերով և Իր հետ հաղորդակցվելու համար ստեղծված մեղավոր մարդկությանը: Ծննդոց 3-ում գրված է մարդու ապստամբության մասին, այն նաև արձանագրում է Աստծու խոստումը և ծրագիրը (տես Ծննդոց 3:15; Հո. 16:25-26; Եփ. 2: 11-3: 13, տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 10):

Քրիստոսի միջոցով այս կանխորոշված ծրագիրը հաճախ երևում է Գործքում Առաքյալների քարոզներին (տես Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29, ինչպես նաև Հիսուսի խոսքերի մեջ Մարկ. 10: 45; Ղուկ. 22:20): Հնարավոր է ակնարկվում է Տիտոս 1: 2 (տես Հատուկ Թեմա: Հավիտենական Տիտոս 1: 2) և Հայտ. 13:8:

Իսրայելը Աստծո փրկության ծրագրում միայն առաջին փուլն էր (տես Ծննդ. 12: 3; Ելից 19:5-6): Մեսիան մշտապես եղել է մեղավոր մարդկության միակ հույսը:

1:10 «յայտնուեցաւ» Այստեղ *epiphany* տերմինը վերաբերվում է Քրիստոսի առաջին գալուն (տես 1 Տիմ. 6:14; Տիտոս 2:11), բայց 2 Տիմ. 4: 1 և Տիտոս 2:13 նույն խոսքը վերաբերվում է Նրա Երկրորդ Գալստյանը: Տես Հատուկ Թեմա: Նոր Կտակարանյան տերմիններ Քրիստոսի վերադարձի համար Տիտոս 2:13:

▪ **«մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի»** Փրկիչը Հին Կտակարանի ՅԱՀՎԵԻ անունն է (տես Սաղ. 106: 21; Ես. 43:3; 11,15,21; 49:26; 60:16; 63: 8; Ովս. 4; Ղուկ. 1:47): Նոր Կտակարանում այն վերագրվում է Հիսուսի, որպես Աստծո Մեսիա (տես Ղուկ. 2:11; Հովհ. 4:42; 13:23; Եփ. 5:23; Փիլ. 3:20; 1 Հովհ. 4:14): Միայն Հովվական Նամակներում են երկու անունները օգտագործվում սերտ հարևանությամբ, թե Հայր Աստծո և թե Որդի Աստծո համար:

Ա. Աստված

1. Աստված մեր Փրկիչը (1 Տիմ. 1:1)
2. Աստված մեր փրկիչը (1 Տիմ. 2: 3)
3. բոլոր մարդկանց փրկիչը (1 Տիմ. 4:10)
4. Աստված մեր փրկիչը (Տիտոս 1: 3)
5. Աստված մեր փրկիչը (Տիտոս 2.10)
6. Աստված մեր փրկիչը (Տիտոս 3: 4)

Բ. Քրիստոս

1. մեր փրկիչը (2 Տիմ. 1:10)
2. մեր փրկիչ Տեր Հիսուս Քրիստոսը (Տիտոս 1: 4)
3. մեր մեծ Աստվածը և Փրկիչը, Քրիստոս Հիսուսը (Տիտոս 2:13)
4. մեր փրկիչ Հիսուս Քրիստոսը (Տիտոս 3:6)
5. մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս (1 Պետ. 1:11)
6. Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս (2 Պետ. 2:20)
7. մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսը (2 Պետ. 3:18)

Հովվական նամակները, որոնք գրվել են 60-ականների կեսերին, նույնպես արձագանքում էին Հռոմեական կայսրության պնդմանը՝ որպես Աստված և փրկիչ (ինչպես նաև այդ անունները օգտագործվել են միասին կրոններում): Քրիստոնյաների համար այս անունները վերապահված էին ՅԱՀՎԵԻ և Նրա Մեսիայի համար:

▪ **«որ խափանեց մահն»** Տես ստորև Հատուկ Թեմա:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԸ ՎԱՏՆԵԼ (*katargeō*)

Սա (*katargeō*) Պողոսի սիրելի խոսքերից մեկն էր: Նա օգտագործեց այն առնվազն քսանչորս անգամ, բայց շատ լայն իմաստային տիրույթ ունի:

Ա. Հիմնական արմատավորումը գալիս է *argos* բառից, որը նշանակում է

1. Ոչ ակտիվ

2. Անհիմն
3. Չօգտագործված
4. Անօգուտ
5. Չգործող

Բ. *kata* բարդ բառը օգտագործվում է արտահայտելու համար

1. Անգործություն
2. Անօգուտություն
3. Այն, որը չեղյալ է հայտարարվել
4. Այն, ինչն արվել է
5. Այն, որ ամբողջովին անգործ էր

Գ. Ղուկասը մեկ անգամ օգտագործում է այն՝ անպտուղ, այսինքն անօգուտ ծանկարագրելու համար (տես Ղուկ. 13:7)

Դ. Պողոսն այն օգտագործում է փոխաբերական իմաստով երկու հիմնական ձևերով

1. Աստված կատարում է անգործունակ բաներ, որոնք թշնամանք են մարդկությանը
 - ա. Մարդկության մեղքի բնույթը, Հո. 6: 6
 - բ. Մովսեսական օրենքը «սերնդի» Աստծո խոստման հետ կապված-Հո. 4:14; Գաղ. 3:17; 5: 4,11; Եփ. 2:15
 - գ. Հոգևոր ուժեր - 1 Կոր. 15:24
 - դ. «Անօրենության մարդը» - 2 Թեա. 2: 8
 - ե. Ֆիզիկական մահը - 1 Կոր. 15:26; 2 Տիմ. 1:10 (Եբր. 2:14)
2. Աստված փոխարինեց հինը (ուխտը, դարը) նորով
 - ա. Մովսեսական Օրենքի հետ կապված բաներ-Հո. 3: 3,31; 4:14; 2 Կոր. 3: 7,11,13,14
 - բ. Օրենքի օգտագործման ամուսնության նմանությունը- Հո. 7: 2,6
 - գ. Այս դարի բաները - 1 Կոր. 13: 8,10,11
 - դ. Այս մարմինը-1 Կոր. 6:13
 - ե. Այս դարի առաջնորդները -1 Կոր. 1:28; 2: 6

Այս բառը շատ տարբեր եղանակներով է թարգմանված, բայց նրա հիմնական իմաստը նշանակում, անիմաստ, անվավեր, անգործունյա, անգոր, բայց ոչ պարտադիր, ոչ գոյություն ունեցող, ոչնչացված կամ վերացած:

▪ **«լոյսի մեջ բերաւ կեանքն ու անմահութիւնը»** «Կյանք» տերմինը մի քանի անգամ օգտագործվում է Հովվական Նամակներում և կարող է նշանակել

1. հավիտենական կյանք (1 Տիմ. 1:16; 6:12; Տիտոս 1: 2; 3: 7)
2. իրական կյանք (1 Տիմ. 6:19)
3. ներկա կյանք և գալիք կյանք (1 Տիմ. 4:8)
4. Քրիստոսով կյանքի խոստում (2 Տիմ. 1: 1)
5. կյանք ու անմահություն Քրիստոսի միջոցով (2 Տիմ. 1:10)

Հովվական Նամակներում իրար հետ կապված երկու տերմիններ են օգտագործված, որոնք արտահայտում են երբեք չավարտվող, նոր կյանք:

1. «ապականված» ԱԼՖԱ ՄԱՍԻԿՈՎ (2 Տիմ. 1:10; Տիտոս 2:7; Հո. 2:7; 1 Կոր. 15:52-54)
2. «մահ» ԱԼՖԱ ՄԱՍԻԿՈՎ (1 Տիմ. 6:16 և 1 Կոր. 15:53-54)

Սա հունական այն գաղափարը չէ, որ յուրաքանչյուր մարդ նախագոյ «հոգի» է: Հավատացյալների անմահությունը սկսվում է Քրիստոսին հավատալով և ապաշխարությամբ:

Աստված է անմահության միակ աղբյուրը (տես 1 Տիմ. 1:17; 6:16): Նա դա ձրի է տալիս Քրիստոսի միջոցով (և միայն Քրիստոսը):

▪ **«աւետարանի միջոցով»** Այս հունարեն բառը սկզբնապես նշանակում էր «բարի լուր բերելու վարձք»: Այն սկսվեց օգտագործվել միայն քրիստոնեության մեջ ներման և ընդունման Աստծո հրաշալի պատգամի մասին, Հիսուսի կյանքի, ուսմունքների, մահվան և հարության միջոցով: Այնուհետև դարձավ այն տերմինը, որն օգտագործվում էր Հիսուսի կյանքի մասին գրքերը նկարագրելու համար (այսինքն, չորս Ավետարանները): Հիսուսը Աստծու սիրո և մեղավորների համար ապահովությունն ստեղծելու բարի լուրն է:

1:11 «Որին ես կարգուեցայ» Սա ԱՕՐԻՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս համարում Պողոսը հաստատում է իր Աստծո կողմից տրված պարգևներն ու առաջադրանքները, կապված ավետարանի հետ (տես 1 Տիմ. 2: 7):

▪ **«քարոզիչ»** Սա ոչ այնքան պարզ է, որքան առաջադրանք (տես TEV): Քարոզելը երբեք չի համարվել պարզ, բայց մի առումով այն բոլոր առաջնորդների պարգևների կենսական ասպեկտը պետք է լինի (այսինքն, Եփ. 4:11), որը կոչվում է հոչակել: Այս ԳՈՅԱԿԱՆԸ կազմված է *kērussō* ԲԱՅԻՑ, որը նշանակում է հրապարակայնորեն հրապարակել կամ հոչակել: Այն ստացավ տեխնիկական իմաստ Առաքելական քարոզչության (*kērygma*) համար, հատկապես, երբ հայտնվում է Գործքում Պետրոսի և Պողոսի արձանագրված քարոզներում: Տես Հատուկ Թեմա: Վաղ Եկեղեցու *Kerygma* 2 Տիմ. 3:15.

▪ **«եւ առաքյալ»** «Առաքյալ» բառը առաջացել է հունարեն բառից, որը նշանակում է «ուղարկել» (*apostellō*): Հիսուսն ընտրեց Իր տասներկու աշակերտներին՝ հատուկ իմաստով Իր հետ լինելու համար և կոչեց նրանց «Առաքյալներ» (տես Ղուկ. 6:13): ԲԱՅԱԿԱՆ ձևը հաճախ օգտագործվում է Հիսուսի կողմից Հորից ուղարկված լինելը փաստելու համար (տես Մատթ. 10:40; 15:24; Մարկ. 9:37; Ղուկ. 9:48; Հովհ. 4:34; 5: 24,30,36,37, 38; 6: 29,38,39,40,57; 7:29; 8:42; 10:36; 11:42; 17: 3,18,21,23,25; 20:21): Հրեական աղբյուրներում այդ տերմինը օգտագործվել է այն անձի համար, ով հանդիսացել է մեկ այլ անձի պաշտոնական ներկայացուցիչը, ինչպես «դեսպան»-ը:

Այս տերմինն ուներ հատուկ հեղինակավոր նշանակություն: Սա օգտագործվել է այն մարդկանց համար, ովքեր գիտեին Քրիստոսին Նրա ֆիզիկական կյանքի և ծառայության ժամանակ (տես Գործք 1: 21-26): Պողոսը պնդում էր, որ նա նույնպես տեսել է Տիրոջը Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած տեսիլքում և կանչի ժամանակ (տես Գործք 9): Այս մարդիկ հատուկ կանչված և սպառազինված էին Հոգու միջոցով, որպեսզի գրեն և բացատրեն Հիսուսի երկրային կյանքի իրադարձությունները, ուսմունքները և հրաշքները:

Այս տերմինը օգտագործվել է եկեղեցում շարունակական պարզի համար (տես 1 Կոր. 12:28; Եփ. 4:11): Նրանց ճշգրիտ ֆունկցիան երբեք չի հստակեցված; դա կարող է լինել եկեղեցու հիմնում նոր տարածքներում կամ տարածաշրջանային առաջնորդություն (տես Գործք 14: 4, 14; 18: 5; 1 Կոր. 4: 9; Գաղ. 1:19; Փիլ. 2:25; 1 Թես. 2:6):

▪ **«վարդապետ»** Սա նշված է որպես հոգևոր պարզ Գործք 13:1; Հռ. 12: 6-7; 1 Կոր. 12:28; և Հակ. 3: Այն կապված է հովիվի պարզի հետ Եփ. 4:11 և 1 Տիմ. 3: 2; 2 Տիմ. 2:24: Երբ օգտագործվում է որպես առանձին պարզ, այն կարող է վերաբերվել նորադարձների ուսուցանելուն, սակայն երբ կապված է հովիվի հետ, դա կարող է վերաբերվել հավատացյալներին վարդապետություն ուսուցանելուն (տես 2 Տիմ. 2:15; 3: 16-17):

KJV և NKJV թարգմանություններում ավելացված է «հեթանոսներին» տերմինը: Սա չի հանդիպում հունական երկաթագիր ձեռագրերում ռ* և A, բայց դա հանդիպում է MSS ռ², C, D, F, G, և այլ հին տեքստերում: Դա կարելի է տեսնել 1 Տիմ. 2: 7 և հավանաբար դա լրացում է վաղ դպիրների կողմից: UBS⁴ տալիս է բացատրություն է տալիս «Բ» վարկանիշ (գրեթե հուսալի):

1:12 «այդ պատճառով էլ չարչարանքները կրում եմ» Սա պետք է որ վերաբերվի 2 Տիմ. 1: 8: Պողոսը անձամբ գիտեր հոգևոր առաջնորդության զինը (տես 2 Կոր. 4: 7-12; 6: 3-10; 11: 24-28):

- **«Բայց ամօթ չեմ համարում»** Սա վերաբերվում է 2 Տիմ. 1: 8,16 Պողոսի հորդորին: Պողոսի խնդիրները որոշ իմաստով ավետարանի հոչակման իր հաջողությունների մեջ էր (տես Գաղ. 6:17):

- **«որովհետև զիտեմ թե ո՞ւմ»** Ուշադրություն դարձրեք, որ շեշտը դրված է անձնական հարաբերությունների վրա, այլ ոչ թե հանգամանքների:

- **«եմ հաւատացել»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը բառացիորեն նշանակում է «Ես հավատացել եմ և շարունակում եմ հավատալ»: Այն վերաբերվում է Դամասկոս ճանապարհին Պողոսի դարձի գալու փորձառությանը (տես Գործք 9):
«Հավատալ» տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1:16.

- **«Եւ համոզուած եմ»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐՄՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այն վերաբերվում է Պողոսի վստահությանը Աստծուն և Աստծուց, նույնիսկ իր փորձառած հալածանքների և բանտարկությունների մեջ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Ա. Կարո՞ղ են քրիստոնյաներն իմանալ, որ իրենք փրկված են (տես 1 Հովհ. 5:13): 1 Հովհ. ունի երեք ստուգաքք կամ փաստեր:

1. Վարդապետական (հավատք) (1 Հովհ. 1,5,10; 2: 18-25; 4: 1-6,14-16; 5: 11-12)
2. Կենսակերպ (հնազանդություն) (1 Հովհ. 2: 2-3; 2: 3-6; 3: 1-10; 5:18)
3. Սոցիալական (սեր) (1 Հովհ. 1: 2-3; 2: 7-11; 3: 11-18; 4: 7-12, 16-21)

Բ. Փրկության վստահությունը դարձել է հարանվանական խնդիր

1. Ջոն Կալվինը վստահությունը հիմնավորում է Աստծո ընտրության վրա: Նա ասաց, որ այս կյանքում մենք երբեք չենք կարող վստահ լինել:
2. Ջոն Ուեյլին վստահությունը հիմնավորում է կրոնական փորձառության վրա: Նա հավատում էր, որ մենք ունակ ենք ապրելու վերը նշված մեղքից:
3. Հռոմեական կաթոլիկները և Քրիստոսի Եկեղեցին վստահությունը հիմնավորում է հեղինակավոր Եկեղեցու վրա: Խումբը, որին պատկանում է, վստահության բանալին է:
4. Ավետարանականների մեծամասնությունը վստահությունը հիմնավորում է Աստվածաշնչի խոստումների վրա, կապված հավատացյալների կյանքում Հոգու պտուղի հետ (Քրիստոսանմանություն, տես Գաղ. 5: 22-23):

Գ. Հավատացյալների հիմնական վստահությունը կապված է Երրորդության կերպարի հետ

1. Հոր Աստծո սերը
 - ա. Հովհ. 3:16; 10: 28-29
 - բ. Հո. 8: 31-39
 - գ. Եփ. 2: 5, 8-9

- դ. Փիլ.1:6
- ե. 1 Պետ.1: 3-5
- զ. 1 Հովհ. 4: 7-21
- 2. Որդի Աստծո գործերը
 - ա. մահ մեր փոխարեն
 - 1) Գործք 2:23
 - 2) Հռ. 5: 6-11
 - 3) 2 Կոր. 5:21
 - 4) 1 Հովհ. 2: 2; 4: 9-10
 - բ. քահանայապետական աղոթք (Հովհ.17:12)
 - գ. շարունակելով բարեխոսությունը
 - 1) Հռ. 8:34
 - 2) Եբր. 7:25
 - 3) 1 Հովհ. 2: 1

- 3. Հոգի Աստծո ծառայությունը
 - ա. կանչել (Հովհ. 6:44,65)
 - բ. կնքել
 - 1) 2 Կոր. 1:22; 5: 5
 - 2) Եփ. 1:13-14; 4: 3
 - գ. վստահեցնել
 - 1) Հռ.8: 16-17
 - 2) 1 Հովհ. 5: 7-13

Դ. Բայց մարդիկ պետք է արձագանքեն Աստծո ուխտի առաջարկին (սկզբում և շարունակաբար)

- 1. Հավատացյալները պետք է ետ դառնան մեղքից (ապաշխարություն) դեպի Աստծուն Հիսուսի միջոցով (հավատք)
 - ա. Մարկ.1:15
 - բ. Գործք 3:16, 19; 20:21
- 2. հավատացյալները պետք է ընդունեն Աստծո առաջարկը Քրիստոսում(տես Հատուկ Թեմա: Ի՞նչ է նշանակում ընդունել, հավատալ, խոստովանել/դավանել, կանչել)
 - ա. Հովհ. 1:12; 3:16
 - բ. Հռ. 5: 1 (և նմանաբանություն 10: 9-13)
 - գ. Եփ. 2: 5, 8-9
- 3. հավատացյալները պետք է շարունակեն հավատքով(տես Հատուկ Թեմա: Համբերություն, երկայնատություն)
 - ա. Մարկ. 13:13
 - բ. 1 Կոր. 15:2
 - գ. Գաղ.6:9
 - դ. Եբր. 3:14
 - ե. 2 Պետ.1:10
 - զ. Հուդա 20-21
 - է. Հայտ. 2: 2-3,7,10,17,19,25-26; 3: 5,10,11,21

Ե. Փրկության վստահությունը դժվար է քանի որ

- 1. հաճախ հավատացյալները փնտրում են որոշակի փորձառություններ, որոնք

- խոստացված չեն Աստվածաշնչում
2. հաճախ հավատացյալները լիովին չեն հասկանում ավետարանը
 3. հաճախ հավատացյալները շարունակում են կամայականորեն մեղանշել (տես 1 Կոր. 3: 10-15; 9:27; 1 Տիմ. 1:19-20; 2 Տիմ. 4:10; 2 Պետ.1:8-11)
 4. որոշակի անհատականության տեսակներ (այսինքն, պերֆեկցիոնիստները/ կատարելության հավատացողները) երբեք չեն կարող ընդունել Աստծո անպայմանական ընդունումը և սերը
 5. Աստվածաշնչում կան կեղծ խոստովանությունների օրինակներ (տես Մատթ. 13:3-23; 7:21-23; Մարկ. 4:14-20; 2 Պետ. 2:19-20; 1 Հովհ. 2:18- 19, տես Հատուկ Թեմա: Ուխտադրություն)

Տես Հատուկ Թեմա: Քրիստոնեական վստահություն այս վարդապետության այլ ուրվագծի համար:

- **«Նա կարող է պահել»** «Նա կարող է» արտահայտությունը հրաշալի նկարագրական նշանակություն է Աստծո համար (տես Հռ. 16:25; Եփ. 3:20 և Հուդա 1:24): Աստված ոչ միայն կարող է, այլև Նա պատրաստ է պաշտպանել մեր հավատքի դավանությունը առ Քրիստոս (տես 1 Պետ. 1: 4-5) և մեր հավատարիմ ապրելակերպը: Ոչ միայն փրկությունը Աստծո կողմից նախաձեռնված, ստեղծված և Աստծո կողմից կատարված իրադարձություն է, այլև քրիստոնեական կյանքը:
- **«Իմ աւանդը»** Աստված պահպանում է հավատացյալի հավատքի դավանությունները (տես 1 Պետ. 1: 4-5): Այնուամենայնիվ, հավատացյալները պետք է պահեն ավետարանի իրենց տնտեսությունը (տես ամբողջական ծանուցում 1 Տիմ. 1:18, տես 1 Տիմ. 6:20; 2 Տիմ. 1:14): Քրիստոնեությունը ուխտ է օգուտներով և արտոնություններով, բայց նաև պահանջներով և պարտականություններով:
- **«այն օրը»** Սա Հին Կտակարանի ձև է, որը վերաբերում է վերջին ժամանակին (տես 2 Տիմ. 1:18): Հին Կտակարանը հստակ հայտնեց Աստծո մեկ կուլմինացիոն միջամտությունը մարդկության պատմության մեջ: Այնուամենայնիվ, Նոր Կտակարանի պրոգրեսիվ հայտնությունից հիմա հավատացյալները գիտեն, որ կա երկու գալուստ, մարմնավորումը (Աստծո թագավորության հանդիսավոր բացումը) և Երկրորդ Գալուստը (Աստծո արքայության ավարտը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՆ ՕՐԸ

Այս արտահայտությունը «այն օրը» կամ «այդ օրը» ութերորդ դարի մարգարեների խոսելաձևն էր՝ Աստծո այցելության (ներկայության) մասին, ինչպես դատաստանի՝ այնպես էլ վերականգնելու համար:

Ովսեէ		Ամովս		Միքիա	
դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
1:11	1:5		1:14(2)		2:4
	2:3		2:16		3:6
2:15			3:14	4:6	
2:16	4:5		5:18 (2)		5:10
2:18	5:9		5:20		7:4
2:21	6:2		6:3	7:11(2)	
	7:5		8:3	7:12	

9:5	9:11	8:9 (2)
10:14		8:10
		8:13

Այս օրինակը բնորոշ է մարգարեներին: Աստված ժամանակին մտադիր է հանդես գալ ընդդեմ մեղքի, սակայն Նա նաև առաջարկում է ապաշխարության և ներման օր նրանց, ովքեր փոխում են իրենց սրտերը և գործողությունները (ստանում են նոր սիրտ, նոր միտք և նոր հոգի, տես. Եզ. 36:22-27): Աստծո փրկագնման և վերականգնման նպատակը կավարտվի: Նա կունենա ժողովուրդ, ովքեր կարտացոլեն Իր հատկանիշները: Արարչագործության նպատակը (հաղորդակցությունը Աստծո և մարդկության միջև) կիրականանա:

1:13

Արևելահայերեն «Ունեցիր»

Արևմտահայերեն «Ամուր բռնե»

NASB «պահպանիր»

NKJV «ամուր բռնիր»

NRSV «կառչիր»

TEV «ամուր պահիր»

NJB «պահիր»

Սա ամենատարածված «Ես ունեմ» (*echō*) է, սակայն այն ունի լայն իմաստաբանական շարք, ինչպես որ թարգմանություններն են ցույց տալիս: Ձևը ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Տիմոթեոսը պետք է շարունակի պահել Պողոսի կողմից տրված առաքելական ճշմարտությունը (տես 2 Տիմ. 1:14; Տիտոս 1:9):

- **«օրինակը»** Հունարենում «օրինակ/ստանդարտ» տերմինը նշանակում է «էսքիզ, ուրվագիծ» և օգտագործվել է ճարտարապետի էսքիզների, գծագրերի համար (այսինքն՝ պլան): Պողոսը Տիմոթեոսին տվել էր ընդհանուր աստվածաբանական ծրագիր:
- **«ողջամիտ խօսքերի»** Սա կրկնվող թեմա է Հովվական Նամակներում, որը վերաբերվում է առողջ ուսմունքներին (տես 1 Տիմ. 1:10; 4: 6; 6: 3; 2 Տիմ. 1:13; 4: 3,4; Տիտոս 1: 9,13; 2: 1,2): Այս համարը ակնհայտորեն արտացոլում է կեղծ ուսուցիչների առկայությունն ու խնդիրները:
- **«հաստքով եւ սիրով»** Սա վերաբերվում է այն ձևին, որով առաջնորդները պետք է պահպանեն, անցնեն և պաշտպանեն ավետարանի ճշմարտությունը (տես 1 Կոր. 13):

1:14 «պահիր Սուրբ Հոգովը» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Նշենք, որ հավատացյալները պետք է պահեն, բայց Սուրբ Հոգին է այն միջոցն ու գորությունը, որով դա արվում է:

- **«որ բնակուած է մեզանում»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հոգու և Որդու գործերի միջև գոյություն ունի ձգողականություն: G. Campbell Morgan նշեց, որ Հոգու լավագույն անունը «մյուս Հիսուսն է»: Ստորև ներկայացվում է Որդու և Հոգու գործի և անունների ուրվագծային համեմատությունը.

1. Հոգին կոչվում է «Հիսուսի Հոգին» կամ նմանատիպ արտահայտություն (տես Հո. 8: 9; 1 Կոր. 15:45; 2 Կոր. 3:17; Գաղ. 4:6; 1 Պետ. 1:11):
2. Երկուսն էլ նույն տերմիններով են կոչվում
 - ա. «Ճշմարտություն»
 - (1) Հիսուս (Հովհ. 14:6)
 - (2) Հոգի (Հովհ. 14:17; 16:13)
 - բ. «Փաստաբան/Բարեխոս»
 - (1) Հիսուս (1 Հովհ. 2: 1)
 - (2) Հոգի (Հովհ. 14:16; 16: 7)
3. Երկուսն էլ բնակվում են հավատացյալների մեջ
 - ա. Հիսուսը (Մատթ. 28:20; Հովհ. 14:20,23; 15:4-5; Հո. 8:10; 2 Կոր. 13:5; Գաղ. 2:20; Եփ. 3:17; Կող. 1:27)
 - բ. Հոգին (Հովհ. 14: 16-17; Հո. 8:9, 11; 1 Կոր. 3:16; 6:19; 2 Տիմ. 1:14)
 - գ. Հայրը (Հովհ. 14:23; 2 Կոր. 6:16)

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՐՊԵՍ ԱՆՁ

Հին Կտակարանում «Աստծո Հոգին» (*ruach*) մի ուժ էր, որն իրականացրել է ՅԱՀՎԵԻ նպատակը, բայց քիչ ակնարկ կա, որ դա անձ է (Հին Կտակարանի մոտոթեիզմ/միաստվածություն, տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ): Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում բացահայտվում է Սուրբ Հոգու լիարժեք անձ և անձեղությունը,

1. Նա կարող է հայհոյվել (տես Մատթ 12:31; Մարկ. 3:29)
2. Նա սովորեցնում է (տես Դուկ. 12:12; Հովհ.14:26)
3. Նա վկայում է (տես Հովհ.15:26)
4. Նա հանդիմանում է, առաջնորդում է (տես Հովհ.16:7-15)
5. Նա անվանվում է «ով» (*hos*, տես Եփ. 1:14)
6. Նա կարող է վշտնալ, տրտմել (տես Եփ. 4:30)
7. Նա կարող է մարել (տես 1 Թես. 5:19)
8. Նա կարող է դիմադրվել (տես Գործք 7:51)
9. Նա պաշտպանում է հավատացյալներին (տես Հովհ.14:26; 15:26; 16:7)
10. Նա փառավորում է Որդուն (տես Հովհ. 16:14)

Երրորդության մասին տեքստերը (այստեղ երեքն են, տես Հատուկ Թեմա:Երրորդություն) նույնպես խոսում են երեք անձանց մասին:

1. Մատթ. 28:19
2. 2 Կոր. 13:14
3. 1 Պետ. 1: 2

Չնայած հունարեն «հոգի» (*pneuma*) բառը ՉԵԶՈՔ է, երբ խոսքը վերաբերվում է Հոգուն, Նոր Կտակարանը հաճախ օգտագործում է ԱՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ (տես Հովհ.16: 8,13-14):

Հոգին կապված է մարդու գործունեության հետ:

1. Գործք 15:28
2. Հռոմ. 8:26
3. 1 Կոր. 12:11
4. Եփ. 4:30

Գործք Առաքելոցի հենց սկզբում ընդգծվում է Հոգու դերը (ինչպես Հովհաննեսի Ավետարանում): Պենտեկոստեն Սուրբ Հոգու գործի սկիզբը չէր, այլ նոր սկիզբ: Հիսուսը միշտ ունեցել

Է Հոգին: Նրա մկրտությունը Հոգու գործի սկիզբը չէր, այլ նոր սկիզբ: Հոգին Հոր նպատակի արդյունավետ միջոցն է Աստծո պատկերով ստեղծված բոլոր մարդկանց վերականգնման համար (տես Հատուկ Թեմա: ՅԱՉՎԵԻ Հավիտենական փրկության ծրագիրը):

Արևելահայերեն «Այն բարի աւանդը»
Արևմտահայերեն «Այն բարի աւանդը»

NASB «գանձը, որը վստահված է ձեզ»
NKJV «այն լավ բանը, որը նվիրված է ձեզ»
NRSV «լավ գանձն է ձեզ վստահված»
TEV «լավ բաները, որոնք վստահված են ձեզ»
NJB «վստահելի տրված թանկարժեք բանը»

Սա վերաբերում է ինչ-որ մեկին ինչ որ բան վստահելուն՝ ապահով պահպանելու համար: Սա, հնարավոր է բառախաղ է *pistis* տերմինի շուրջ, որը թարգմանվում է անզլերեն, որպես հավատք, վստահություն: Հավատացյալները վստահել են (տես ամբողջ ծանուցումը 1 Տիմ. 1:18) իրենց հավատքը Աստծուն (տես 2 Տիմ. 1:12): Աստված, իր հերթին, վստահել է նրանց ավետարանի ուղերձը (տես 1 Տիմ. 6:20): Հավատացյալները ավետարանի ուղերձի տնտեսներն են: Մենք մի օր հաշիվ պիտի տանք Նրան (տես 2 Կոր. 5:10), թե ինչպես ենք մենք վարվել ճշմարտության այս ավանդի հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՎՎԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՈՒՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆԸ

60-ականների կեսերին հովվական նամակների (այսինքն, 1 Տիմոթեոս, Տիտոս, 2 Տիմոթեոս) գրվելու ժամանակ (Պողոսը գլխատվեց 67թ.) արդեն ավետարանի ճշմարտությունների իմաստը ընկալվում էր վարդապետական իմաստով: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Պողոսը վերաբերվում այս «գարգացած *kerygma*» արտահայտությանը (տես Հատուկ Թեմա: Վաղ Եկեղեցու *Kerygma*), որը եկեղեցու պաշտպանությունն էր կեղծ ուսուցիչների դեմ:

1. «ողջամիտ ուսմունք»
ա. 1 Տիմ. 1:10
բ. 2 Տիմ. 4: 3
գ. Տիտոս 1:9; 2: 1
2. «հավատարիմ խոսքեր»
ա. 1 Տիմ. 1:15; 3: 1; 4: 8-9
բ. 2 Տիմ. 2: 11-13
գ. Տիտոս 1:9; 3: 5-8
3. «ուսմունքը»
ա. 1 Տիմ. 4:16; 6: 1
բ. 2 Տիմ. 3:10
գ. Տիտոս 2:7
4. «լավ ուսմունքը»
ա. 1 Տիմ. 4: 6
5. «աստվածապաշտության ուսմունքը»
ա. 1 Տիմ. 6: 3
բ. Տիտոս 1: 1
6. «ողջամիտ բառեր»
ա. 1 Տիմ. 6: 3

- բ. 2 Տիմ. 1:13
7. «ինչը վստահված է»
ա. 1 Տիմ. 6:20
բ. 2 Տիմ. 1: 12,14 (այսինքն «լավ ավանդ»)
8. «հավատքը»
ա. 1 Տիմ. 1: 5,19; 3: 9,13; 4: 1,6; 5: 8; 6: 10,12,21
բ. 2 Տիմ. 3:10; 4: 7
գ. Տիտոս 1:13; 2: 2

Ավետարանի այս վարդապետական ձևակերպումը պետք է լինի

1. հսկել - 1 Տիմ. 6:20; 2 Տիմ. 1:14
2. պահպանել - 2 Տիմ. 4: 7
3. հաստատ բռնել- Տիտոս 1: 9
4. հանձնել հավատարիմ մարդկանց - 2 Տիմ. 2: 2

Բոլոր հավատացյալներին վստահվել է ավետարանը (*kerygma*): Մենք պետք է պաշտպանենք այն, պահենք այն և փոխանցենք անփոփոխ:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 1:15-18

¹⁵Սա գիտես, որ ինձանից ետ քաշուեցան այն ամենը որ Ասիայումն էին. Որոնցից են Փիզելոս եւ Հերմոգինէս: ¹⁶Տէրը ողորմութիւն տայ Ոնեսիփորոսի տանը, և որ շատ անգամ հանգստացրեց ինձ, եւ իմ կապանքն ամօթ չ'համարեց. ¹⁷Այլ երբոր Հռովմումն էր, շատ ջանքով որոնեց ինձ եւ գտաւ: ¹⁸Տէրը տայ նորան որ ողորմութիւն գտնէ Տէրիցն այն օրումն. Եւ թէ որքան ծառայութիւն արաւ ինձ Եփեսոսումը որ դու ինքդ լաւ գիտես:

1:15 «այն ամենը որ Ասիայումն էին» Սա հիպերբոլա/չափազանցում է: Պողոսը ընդգծում է, որ շատերն էին վախենում և դադարում էին նրա հետ շփվելուց:

- «որ ինձանից ետ քաշուեցան» Պողոսի օգնողներից ոմանք (տես 2 Տիմ. 4:10,16) թողեցին նրան բանտարկության մեջ (տես 2 Տիմ. 1:8, 16), բայց պարտադիր չէ, որ նրանք թողեցին Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը: Սա հավանաբար կապված էր Պողոսի հռոմեական դատավարության հետ:
- «Փիզելոս եւ Հերմոգինէս» Ոչինչ հայտնի չէ Փիզելոսի կամ Հերմոգինէսի մասին:

1: 16-18 Այս համարները երկար, ընդարձակված աղոթք են (ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԸՂԶԱԿԱՆ):

1:16 «Ոնեսիփորոսի» Սա հավատացյալ է և իր ընտանիքը (կամ տնային եկեղեցին), որոնք չլքեցին Պողոսին (տես 2 Տիմ. 4:19): Անորոշ ձևերով (զգացմունքային, ֆինանսապես) այս մարդը Պողոսին խրախուսում էր բանտում, ինչպես նաև անհրաժեշտ ծառայություն է մատուցել Եփեսոսում (տես 2 Տիմ. 1:18):

1:18 «Տէրը ... Տէրիցն» Եբրայերենում հստակ տարբերություն կա ՅԱՀՎԵԻ (ՏԵՐ) և Ադոնայ (Տեր, տես Սաղ. 110:1): Հունարենով երկուսն էլ թարգմանվում են որպես *kurios*. Թվում է, թե այս աղոթքը հասցեագրված է Մեսիային և վերաբերվում է «ՅԱՀՎԵԻ օրվան», Հին Կտակարանյան

արտահատությունը ժամանակի վերջի համար (օրհնության կամ դատաստանի օր): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՂ ԱՆՈՒՆՆԵՐԸ](#), տես 2 Տիմ. 1: 2:

Սա մեզ համար տարօրինակ աղոթք է թվում: Որոշ մեկնաբաններ ենթադրել են, որ Ոննեսիփորոսը մահացել էր, եթե այդպես է, ապա սա Աստվածաշնչում միակ աղոթքն է մահացածների անունից կամ համար: Պողոսը խնդրում էր, որ Աստված օրհնի նրա «տունը» (այսինքն՝ ընտանիքը կամ տան եկեղեցին) իր հավատարիմ ծառայության համար (տես 2 Օր. 7: 9; 5: 10 և նույն գաղափարը 1 Կոր.7:14):

ՔՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Արդյո՞ք Պողոսը քրիստոնեությունը տեսնում էր առանձին Հին Կտակարանի հավատքից թե դրա ընդլայնված տարբերակը:
2. Ո՞րն է ձեր դիտարկումը նպատակը:
3. Թվարկե՞ք աստվածաբանական կարևոր նյութերը 2 Տիմ. 1: 9:
4. Ինչպե՞ս Հիսուսը վերջ դրեց մահվանը:
5. Ինչպե՞ս է «պահպանել, հսկել» բառը տարբեր կերպ օգտագործված 2 Տիմ. 1:12 և 2 Տիմ. 1:14
6. Ինչու՞ Պողոսի գործընկերները լքեցին նրան: Արդյո՞ք դա ենթադրում է, որ նրանք այլևս հավատացյալ չէին:

2 ՏԻՄՈԹԵՈՍ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Քրիստոսի Հիսուսի բարի զինվոր	Եղեք ուժեղ շնորհքով	Քաջություն ցույց տալու կոչ (1:8-2:13)	Քրիստոսի Հիսուսի հավատարիմ զինվոր	Ինչպես Տիմոթեոսը դիմագրավի դժվարություններին
2:1-7	2:1-13	2:1-7	2:1-7	2:1-2 2:3-7
2:8-13		2:8-13	2:8-13	2:8-13
Հաստատված աշխատող	Հաստատված և չհաստատված աշխատողներ	Հովիվը և հոտը (2:14-4:5)	Հաստատված աշխատող	Պայքար կեղծ ուսուցիչներից եկող անմիջական վտանգի դեմ
2:14-26	2:14-26	2:14-19 2:20-3:9	2:14-19 2:20-26	2:14-18 2:19 2:20-21 2:22-26

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ([«Աստվածաշնչյան քնթերցանության լավ ուղեցույց»](#))

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 2:1-7

¹Արդ դու, իմ որդեակ, զօրացիր այն շնորհքովը որ Քրիստոս Յիսուսումն է: ²Եւ այն բաները որ ինձանից լսեցիր շատ վկաներով, յանձնիր հաւատարիմ մարդկանց որ կարող լինեն ուրիշներին սովորեցնել: ³Իսկ դու նեղութիւնները կրիր ինչպէս է Քրիստոս Յիսուսի բարի զինուոր: ⁴Ոչ մի զինուորութիւն անող այս աշխարհքի գործերովը չէ զբաղվում, որպէս զի զօրապետին հաճոյ լինի: ⁵Եւ եթէ մէկը մրցէ էլ՝ պասակ չի ստանալ եթէ օրինաւորապէս չ'մրցէ: ⁶Աշխատող հողագործն առաջ պէտք է պտղիցը վայելէ: ⁷Իմացիր ինչ որ ասում եմ. Տէրը քեզ իմաստութիւն տայ ամեն բանի մէջ:

2: 1 «Արդ» Սա կարծես վերաբերվում է 2 Տիմ. 1:15-18, որտեղ Պողոսը հակադրում է նրանց, ովքեր լքեցին իրեն հավատարիմների հետ:

▪ **«իմ որդեակ»** Սա վերաբերում է Պողոսին, ավետարանում որպէս Տիմոթեոսի հայր, (տես 2 Տիմ. 1:2; 1 Տիմ. 1: 2; Տիտոս 1:4):

- **«զօրացիր»** Սա կարող է լինել
 1. ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ «շարունակել ուժեղ լինել» (*Word Pictures in the Greek New Testament* by A. T. Robertson; *A Grammatical Analysis of the Greek NT* by Zerwick and Grosvenor; and *Analytical Greek New Testament* by Barbara and Timothy)
 2. ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ «շարունակեք ուժեղ լինել» (*The Analytical Greek Lexicon Revised* by Harold K. Moulton and the Charles B. Williams translation):

Արդյոք ք հավատացյալը մասնակցում է զորացմանը, թե Աստված է զորություն տվողը: Սա լարվածություն է Աստծո ինքնիշխանության և մարդկանց ազատ կամքի միջև: Նոր Կտակարանում երկուսն էլ ներգրավված են փրկության և քրիստոնեական կյանքի մէջ: Աստված գործում է մեղավոր մարդկության հետ ուխտ փոխհարաբերության մէջ: Կան թե իրավունքներ և թե պարտականություններ, պահանջներ և արտոնություններ: Շնորհքը (այսինքն, աստվածային նախաձեռնությունը) միշտ առաջնահերթ է, բայց մարդու արձագանքը կարևոր է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏ

Հին Կտակարանյան *berith* տերմինը (BDB 136, KB 157), «ուխտ», հեշտ չէ սահմանել: Եբրայերենով համապատասխանող ԲԱՅ չկա: Ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու բոլոր փորձերն անհիմն են եղել: Հնարավոր է, ամենալավ կանխատեսումը «կտրել» է (BDB 144) նշելով կենդանիների զոհաբերությունը, որ ուղեկցում է ուխտերին (տես Ծննդ. 15: 10,17): Այնուամենայնիվ, զաղափարի ակնառու կենտրոնը ստիպեց զիտնականներին ուսումնասիրել բառի օգտագործումը՝ որոշելու համար նրա ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը այն միջոցն է, որով մեկ ճշմարիտ Աստվածը (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ) գործ է ունենում Իր մարդ ստեղծագործության հետ: Ուխտի, պայմանագրի կամ համաձայնության գաղափարը կարևոր է՝ հասկանալու աստվածաշնչյան հայտնությունը: Աստծո սուվերենության և մարդու ազատ կամքի միջև լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մէջ: Որոշ ուխտեր հիմնված են բացառապէս Աստծո բնույթի և գործողությունների վրա:

1. ստեղծագործությունը (տես Ծննդոց 1-2)
2. պահպանությունը և խոստումը Նոյին (տես Ծննդոց 6-9)
3. Աբրահամի կանչը (տես Ծննդոց 12)

4. ուխտը Աբրահամի հետ (տես Ծննդոց 15)

Սակայն ուխտի բնույթը պահանջում է արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվեր Աստծուն և չուտեր Եդեմի պարտեզի ծառից
2. հավատքով Նոյը ջրից հեռու հսկայական նավ պետք է կառուցեր և հավաքեր կենդանիներին
3. հավատքով Աբրահամը պետք է թողներ իր ընտանիքը, հետևեր Աստծուն և հավատարապազա սերունդներին
4. հավատքով Մովսեսը իսրայելացիներին Եգիպտոսից դուրս բերեց դեպի Սինա լեռը և ստացան կոնկրետ ուղեցույցներ կրոնական և հասարակական կյանքի համար, օրհնությունների և անեծքների խոստումներով (տես Ղև. 26; 2 Օր. 27-28)

Այս նույն լարվածությունը՝ Աստծո հարաբերությունը մարդու հետ երևում է «նոր ուխտի» մեջ (տես Եր. 31: 31-34; Եր. 7:22; 8: 6,8,13; 9:15; 12:24): Լարվածությունը հստակ երևում է համեմատելով Եզ. 18:31-ը Եզ. 36: 27-38-ի հետ (ՅԱՀՎԵԻ գործողությունը): Արդյո՞ք ուխտը հիմնված է Աստծո ողորմած գործողությունների վրա, թե մարդու արձագանքի: Սա տաք խնդիր է Հին Ուխտի և Նոր Ուխտի միջև: Երկուսի նպատակն էլ նույնն է.

1. ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերությունների վերականգնումը, որը կորել էր Ծննդոց 3-ում
2. արդար մարդկանց հաստատումը, որոնք արտացոլում են Աստծո կերպարը:

Երեմիա 31: 31-34- ի նոր ուխտը լուծում է լարվածությունը՝ հանելով մարդու բաժինը որպես ընդունման միջոց: Աստծո օրենքը դառնում է ներքին ցանկություն արտաքին իրավական կողմի փոխարեն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, բայց մեթոդաբանությունն է փոխվում: Մեղավոր մարդկությունն ապացուցեց, որ չի կարող արտացոլել Աստծո պատկերը: Խնդիրը ոչ թե Աստծո ուխտն էր, այլ մարդու մեղավորությունն ու թուլությունը (Ծննդոց 3; Հռոմեացիս 7; Գաղատացիս 3):

Նույն լարվածությունը Հին Կտակարանի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև մնում է նաև Նոր Կտակարանում: Փրկությունը բացարձակապես ձրի է Հիսուս Բրիստոսի կատարած գործի շնորհիվ, բայց այն պահանջում է ապաշխարություն և հավատք (ինչպես նախապես, այնպես էլ շարունակաբար, տես Հատուկ Թեմա: Հավատքը Նոր Կտակարանում): Հիսուսն Իր նոր հարաբերությունները հավատացյալների հետ անվանեց «նոր ուխտ» (տես Մատթ. 26:28; Մարկ. 14:24; Ղուկ. 22: 20; 1 Կոր. 11:25): Գոյություն ունի օրինական հոչակում (դատական) և Քրիստոսանմանության կոչ (տես Մատթ. 5:48; Հռ. 8: 29-30; 2 Կոր. 3:18, 7: 1; Գաղ. 4:19; Եփ. 1: 4; 4:13; 1 Թեա. 3:13; 4: 3,7; 5:23; 1 Պետ. 1:15), ընդունման մասին սահմանվող հայտարարություն (Հռ. 4) և հրամայական կոչ սրբության (Մաթ. 5:48): Հավատացյալները չեն փրկվում իրենց գործերով, այլ հնազանդվելով (տես Եփ. 2: 8-10; 2 Կոր. 3: 5-6): Բարեպաշտ կյանքը դառնում է փրկության ապացույց, այլ ոչ թե փրկության միջոց (տես Հակոբոս և 1 Հովհաննես): Սակայն հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ: Այս լարվածությունը հստակ երևում է Նոր Կտակարանի նախազգուշացումներից (տես Հատուկ Թեմա: Ուխտադրություն):

2: 2 «այն բաները որ ինձանից լսեցիր» Տիմոթեոսը պետք է փոխանցի Պողոսի Առաքելական ուսմունքները, այլ ոչ թե իր անձնական տեսակետները կամ տեսությունները (տես 2 Տիմ. 1:13, տես Հատուկ Թեմա 2 Տիմ. 1:14):

- **«շատ վկաներով»** Այս արտահայտությունը կարող էր նշանակել
 1. Տիմոթեոսի ձեռնադրության քարոզը (տես 2 Տիմ. 1:6; 1 Տիմ. 4:14)
 2. ինչ Տիմոթեոսը լսեց Պողոսից, նաև լսեց այլ մարգարեների / ուսուցիչների կողմից

3. Տիմոթեոսը լսեց, որ Պողոսը բազմիցս քարոզում և սովորեցնում է նույն ճշմարտությունները

- **«յանձնիր»** Սա ԱՕՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա նույնն է, որն օգտագործվում է 2 Տիմ. 1: 12,14 և 1 Տիմ. 1:18. Տես ծանուցում 2 Տիմ. 1:12 և 1 Տիմ. 1:18.

Արևելահայերեն «հաւատարիմ մարդկանց»

Արևմտահայերեն «հաւատարիմ մարդոց»

NASB, NKJV «հավատարիմ մարդկանց»

NRSV «հավատարիմ մարդկանց»

TEV, NJB «վստահելի մարդկանց»

Սա հունարեն *pistis* գոյականն է թարգմանված անգլերեն, որպես «հավատք», «հավատամք» կամ «վստահություն»: Այստեղ այն օգտագործվում է որպես ԱԾԱԿԱՆ *pistos* Հին Կտակարանյան իմաստով՝ վստահելի, հավատարիմ, հուսալի խելամիտ եկեղեցու առաջնորդներին: Սա բաշխման և բազմապատկման սկզբունքն է: Հիսուսն անցկացրեց Իր ժամանակը որոշ ընտրյալների վրա, որպեսզի նրանց միջոցով շատերին հասներ: Երկու հիանալի գրքեր, որոնք զարգացնում են այս գաղափարը *The Master Plan of Evangelism* և *The Maser Plan of Discipleship*, by Robert E. Coleman:

- **«որ կարող լինեն»** Քրիստոնյա քարոզիչների/ուսուցիչների իրավասությունը/ համապատասխանությունը գալիս է

1. Աստծուց, տես 2 Կոր. 2:17; 3: 5-6

2. նրանք ընդունել և հավատացել էին առաքելական ճշմարտությանը

Համապատասխանությունը չի գալիս որևէ մեկի ընդունակություններից, կրթությունից կամ անձի տեսակից: Մենք պետք է Աստծո խոսքի / ճշմարտության հավատարիմ փոխանցողները լինենք:

2: 3 «Իսկ դու նեղութիւնները կրիր» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Դա եղել է հերթական թեման (տես 2 Տիմ. 1: 8,12; 2: 3,9; 4: 5): Տեսեք ամբողջական ծանուցումը 2 Տիմ. 1: 8: Ծառայությունը հաճախ առաջանում է մեղավոր հարևանի, քաղաքացիական իշխանությունների կամ մշակույթի արձագանքից:

- **«բարի զինուոր»** Պողոսը հաճախ բնութագրում է քրիստոնեական կյանքը որպես զինվորական կյանք (տես հ.4) կամ որպես մարմնամարզիկ (տես հ.3) (տես Հռ. 13:12; 2 Կոր. 6: 7; 9: 7; 10: 4; Եփ. 6:11-17; Փիլ. 2:25; Փիլիմոն 2; 1 Տիմ. 1:18; 6:12; 2 Տիմ. 4: 7):

2: 4 «Ոչ մի զինուորություն անող» Պողոսը օգտագործում է երեք մասնագիտական օրինակ՝ Տիմոթեոսին քաջալերելու համար:

- **«այս աշխարհքի գործերովը չէ զբաղվում»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է, որը շեշտում է սուբյեկտի շարունակական գործողությունները: Այն չէ, որ աշխարհիկ բաները վատ են, դրանք պարզապես չեն կարող գերակայող կամ վերջնական լինել (տես 2 Պետ.): Առաջնորդները պետք է պահեն ծառայության ֆոկուսը:

2: 5 «Եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը խոսում է հնարավոր գործողությունների մասին:

▪ **«օրինաւորապէս չ'մրցել»** Սա օգտագործվել է պրոֆեսիոնալ մարզիկների համար: Եթե մրցակիցը շեղվում է կանոններից, ապա նա որակագրկված է (տես 1 Կոր. 9: 24-27):

2: 6 «Աշխատող հողագործն» Պողոսն օգտագործում է երեք ծանր մասնագիտական օրինակներ.

1. զինվորները պայքարում են իրենց հրամանատարի համար
2. մարզիկները ձգտում են կանոնների շրջանակներում պսակ ստանալ
3. գյուղացիները ջանք չեն խնայում իրենց բերքի պտուղներից ճաշակելու համար

Բոլորի համար պահանջվում է նվիրվածություն, ջանք, համբերություն և տառապանք: Բոլորն էլ ստանում են իրենց վարձատրությունը (տես Առ. 27:18):

2: 7 «Իմացիք ինչ որ ասում եմ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը նշանակում է «շարունակել մտածել այդ մասին»: Ուշադրություն դարձրեք մարդու պատասխանատվության և Աստծո ռոգորմած վերաբերմունքի միջև գոյություն ունեցող շարունակական խաղին:

▪ **«Տերը քեզ իմաստութիւն տայ ամեն բանի մէջ»** Տերը, Սուրբ Հոգու միջոցով, կտա Իր ժողովրդին հասկացողություն (տես Հովհ. 14:16; 16:13): Դա կարող է արտացոլել Եր. 31: 31-34-ի նոր ուխտը (հտկ. 2 Տիմ. 2: 33-34):

Սա, անշուշտ, չի վերաբերվում կյանքի բոլոր բնագավառներում կոնկրետ, ամբողջական գիտելիքների մասին, այլ ավետարանի և դրա հետևանքների լիարժեք և ամբողջական գիտելիքներին: Հոգին տալիս է հավատացյալներին այն բոլոր գիտելիքները, որոնք անհրաժեշտ են Աստծուն հաճելի կյանքով ապրելու համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 2:8-13

⁸Յիշիր Յիսուս Քրիստոսին մեռելների միջից յարութիւն առածին, որ Դաւիթի սերունդիցն է, իմ անետարանի համեմատ, ⁹Որի համար չարչարվում եմ մինչև և կապանքի մէջ լինել չարագործի պէս. բայց Աստուծոյ խօսքը կապուած չէ: ¹⁰Վասն որոյ ամեն բանի համբերում եմ ընտրուածների համար. որ նորանք էլ հասնեն այն փրկութեան, որ Քրիստոս Յիսուսումն է յաւիտենական փառքի հետ: ¹¹Ճշմարիտ է այս խօսքը, որ եթէ հետը մեռանք՝ հետն էլ կ'ապրենք: ¹²Եթէ համբերենք, հետն էլ կ'թափաւորենք, եւ եթէ ուրանանք, նա էլ կ'ուրանայ մեզ: ¹³Եւ եթէ չ'հաւատանք, նա հաւատարիմ կ'մնայ, իր անձը չէ կարող ուրանայ:

2: 8 «Յիշիր» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Պողոսը մի քանի անգամ հիշելու կոչ է անում Տիմոթեոսին (տես 2 Տիմ. 1: 3,4,5,6; 2: 8,14): Այս առանձնահատկությունը ընդգծում է Քրիստոսի վերաբերյալ վարդապետությունները:

▪ **«Յիսուս Քրիստոսին մեռելների միջից յարութիւն առածին»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է, որ Հիսուսին հարություն տվեց Հայրը, և որ Նա մնում է Հարությալը: Հիսուսի հարությունը նշան էր, որ Հայրը լիովին ընդունեց Որդու երկրային գործը, ուսմունքները և մեղքի զոհաբերությունը: Հիսուսի հարությունը քրիստոնեության կենտրոնական սյուներից մեկն է (տես 1 Կոր. 15):

Հիսուսի հարությունը նաև Գործքում Պետրոսի և Պողոսի վաղ քարոզչության անբաժան մասն է (*kerygma*, տես 2 Տիմ. 3:15), որոնք ցույց են տալիս վաղ եկեղեցում հաճախակի կրկնվող ավետարանի հիմնական ճշմարտությունները.

1. Մեսիան պետք է տառապի

2. Հիսուսը կատարեց Հին Կտակարանի մարգարեությունը
3. Հոգու նոր ժամանակաշրջանը եկել է Հիսուսով
4. Հիսուսը մահացավ մեղավորների համար, որը Աստծո նախանշած ծրագիրն էր
5. Հիսուսը հարություն առավ մեռելներից և բարձրացավ Աստծո աջ կողմը
6. Հիսուսը կրկին գալու է
7. Ով հավատա Նրան, ապաշխարի և հավատա, կփրկվի

Jerusalem Bible (1966) 365-րդ էջում տեղ գտած միտքը լավ մեկնաբանություն է տալիս, «հունական մտածելակերպով շատ դժվար է ընդունել հարությունը», Գործք 17:37; 1 Կոր. 15:12

2: 9 «Որի համար չարչարվում եմ» Սա առաջին դարի ավետարանի քարոզչության առանձնահատկությունն էր: Պողոսը գիտեր, որ նա կանի, և կոչ արեց Տիմոթեոսին միանալ իրեն (տես 2 Տիմ. 1: 8; 2: 3; 4: 5):

▪ **«մինչև կապանքի մեջ լինել չարագործի պես»** Պողոսը ազատագրվեց ավետարանը քարոզելու համար և ակնկալում էր, որ շուտով կգլխատվի (տես 2 Տիմ. 4: 6): Մեղավոր աշխարհում Աստծուն ծառայելը զին ունի (տես 2 Կոր. 4: 7-15; 6: 1-10; 11: 23-30):

▪ **«բայց Աստուծոյ խօսքը կապուած չէ»** Այս հատորը ես վերնագրել եմ «Պողոսը կապված, բայց Ավետարանը արձակված» վերցնելով այս համարը: Միայն մեր լռությունն է բանտարկում «Աստծու խոսքը»:

▪ **«Դաւիթի սերունդիցն է»** Սա խոսում է Նրա ճշմարիտ մարդեղության (տես Մատթ. 1: 1; Հո. 1: 3) և մարգարեության կատարման մասին (տես 2 Թագ. 7:14):

▪ **«իմ ավետարանի համեմատ»** Սրանք Պողոսի խոսքերն են Հո. 2:16; 16:25: Սա վերաբերվում է իր առաքելական ավետարանի քարոզչությանը:

2:10 «համբերում եմ» Սա նշանակում է «կամավոր, ակտիվ, կայուն տոկունություն»: Պողոսը ընտրեց մնալ ավետարանի ծառայության լծի տակ հանուն ուրիշների:

▪ **«ընտրուածների համար»** Աստված ճանաչում է Իրեններին (տես Տիտոս 1: 1; Հայտ. 13: 8): Ակնհայտորեն սա վերաբերվում է ինչպես նրանց, ովքեր արձագանքել են, և նրանց, ովքեր դեռևս չեն արձագանքել ավետարանին (տես Հո. 11: 25-26):

▪ **«որ նորանք էլ հասնեն այն փրկութեան»** Այս փրկությունը միայն Քրիստոսի միջոցով է և տալիս է հավիտենական կյանք (տես 1 Թես. 5: 9; 2 Թես. 2:13-14):

▪ **«յաւիտենական փառքի հետ»** Նոր Կտակարանի փրկությունը կարող է բնութագրվել հետևյալ կերպ՝ բաներից, որոնցից ազատագրվում ենք և բաներ, որոնք ստանում ենք փրկության արդյունքում:

- Ա. Ազատագրվում ենք
 1. մեղքից
 2. սատանայից և դիվային ուժերից
 3. սխալներից
 4. ինքնախաբեությունից
- Բ. Ստանում ենք

1. խաղաղություն Աստծո հետ հիմա
2. կյանքի նպատակ հիմա
3. պարզներ ծառայության համար հիմա
4. Հոգով լցված և ուղղորդված կյանք հիմա
5. ապագայի իրականացում
6. ապագայի տուն երկնքում
7. ապագա փառք Քրիստոսի հետ
8. ապագան թագավորում Քրիստոսի հետ
9. ապագայում Քրիստոսի նման մարմին

▪ **«փառք»** Այս փառքը վերաբերվում է վերջնական փրկությանը, որը կոչվում է «փառավորում» Հո. 8: 28-30: Տես ամբողջական ծանուցումը 1 Տիմ. 1:17.

2:11 «եթե» Սա հինգ «վստահության արժանի արտահայտություններից» վերջինն է Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 1:15; 3: 1; 4: 9; Տիտոս 3: 8): Այս մեկը (2 Տիմ. 2: 11-13), կարծես թե, մեջբերում է հավատամքից կամ օրհներգից:

1. չորս «եթե» -ների շարքը (ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, տես 2 Տիմ. 2: 11,12,13 երկու անգամ)
2. առաջին երկուսը դրական են, վերջին երկուսը՝ բացասական
3. երրորդ և չորրորդ նախադասություններն ունեն լրացուցիչ տող

▪ **«հետը մեռանք»** Սա մի քանի *syn* բաղադրիչներից մեկն է 2 Տիմոթեոսում: Այն խոսում է ընկղմամբ մկրտության աստվածաշնչյան փոխաբերության մասին (տես Հո. 6: 1-11; Գաղ. 2:20): Այս ճշգրիտ ձևը հանդիպում է միայն այստեղ, Մարկ. 14:31 և 2 Կոր. 7: 3:

▪ **«հետն էլ կ'ապրենք»** Սա ևս մեկ հազվագյուտ *syn* բաղադրիչ է (տես Հո. 6: 8; 2 Կոր. 7:3): Սա վերաբերվում է հավատացյալների վստահությանը, որ հավատարիմ մնալով Հիսուսի հետ հաղորդակցությանը, ոչ միայն այժմ հավատքով, այլև մի օր (և ամեն օր) դեմ առ դեմ:

Առաջին երեք «եթե» նախադասություններն ավարտվում են ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐՈՎ, որը տալիս է վախճանաբանական (այսինքն, վերջնական ժամանակի) միջավայր: Ամբողջ Նոր Կտակարանը ունի այս նույն արդեն բայց ոչ դեռ լարվածությունը: Աստծո արքայությունը եկել է (բացվել է) Հիսուսով, բայց այն չի ավարտվել: Հավատացյալներն այժմ Թագավորության բազմաթիվ ասպեկտներն են փորձառում, սակայն մյուսները վերապահված են Երկրորդ Գալուստի համար:

▪ **«Եթե համբերենք»** Այս քերականական կառուցվածքը (ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ) ենթադրում է, որ հավատացյալները կհամբերեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչյան վարդապետությունները, կապված քրիստոնեական կյանքի հետ, դժվար է բացատրել, որովհետև դրանք ներկայացվում են տիպիկ արևելյան դիալեկտիկական զույգերով (տես Հատուկ Թեմա: Արևելյան Գրականություն [աստվածաշնչյան պարադոքսներ]): Այս զույգերը թվում են իրար հակասող, բայց երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմտաքրիստոնյաները հակված են ընտրելու մեկ ճշմարտությունը և մերժելու և արժեզրկելու դրան հակասող մյուս ճշմարտությունը: Ահա որոշ օրինակներ.

1. Փրկությունը միայն Քրիստոսին վստահելու սկզբնական որոշումն է, թե՞ սրբացման գործընթաց ամբողջ կյանքի ընթացքում, որպես Քրիստոսի աշակերտ:
2. Փրկությունը սուվերեն Աստծո շնորհքի ընտրությունն է, թե՞ մարդու հավատքի արդյունքն ու ապաշխարհության արձագանքն Աստծո կանչին:
3. Փրկությունը դա մեկ անգամ ստացած, անհնարին կորցնել, թե՞ հավատացյալը պետք է շարունակաբար ջանք թափի դրան հասնելու և պահելու համար:

Համբերության թեման քննարկման առիթ է հանդիսացել հավատացյալներին ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է Նոր Կտակարանում հանդիպող ակնհայտ իրարամերժ տեքստերից.

1. համարներ վստահություն մասին
 - ա. Հիսուսի պնդումները Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. 6:37; 10:28-29)
 - բ. Պողոսի պնդումները (Հռ. 8:35-39; Եփ. 1:13; 2:5,8-9; Փիլ. 1:6; 2:13; 2 Թեա. 3:3; 2 Տիմ. 1:12; 4:18)
 - գ. Պետրոսի պնդումները (1 Պետ.1:4-5)
2. տեքստեր համբերելու կարիքի համար
 - ա. Հիսուսի պնդումները Սինոպտիկ Ավետարաններում (Մաթ. 10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13)
 - բ. Հիսուսի պնդումները Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. 8:31; 15:4-10)
 - գ. Պողոսի պնդումները (Հռ. 11:22; 1Կոր. 15:2; 2 Կոր. 13:5; Գաղ. 1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ. 2:12; 3:18-20; Կող. 1:23; 2 Տիմ. 3:2)
 - դ. Եբրայեցիս թղթի հեղինակի պնդումները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 - ե. Հովհաննեսի պնդումները (1 Հովհ. 2:6; 2 Հովհ.9; Հայտ. 2: 7,17,26; 3: 5,12,21; 21: 7)

Աստվածաշնչյան փրկության աղբյուրը սուվերեն Երրորդության սիրո, ողորմության և շնորհքի արտահայտությունն է: Ոչ մեկ մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (հմմտ. Հովհ. 6:44,65): Աստված անում է առաջին քայլը և հաստատում բոլոր կանոնները, բայց և պահանջում, որ մարդիկ արձագանքեն Իր կանչին՝ հավատքով և ապաշխարհությամբ, թե մեկ անգամ սկզբում և թե շարունակաբար ամբողջ կյանքի ընթացքում: Աստված հարաբերություններ է հաստատում մարդու հետ ուխտի հիման վրա: Կան արտոնություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է բոլոր մարդկանց: Հիսուսի մահը լուծեց ընկած արարչագործության մեղքի խնդիրը: Աստված հոգացել է փրկության ճանապարհը և ուզում է, որ նրանք, որ ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ, արձագանքեն Իր սիրուն և ինչ-որ առաջարկվում է Հիսուսի միջոցով: Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այս հարցի մասին, ոչ կալվինիստական տեսանկյունից, կարող եք կարդալ հետևյալ գրքերը.

1. Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ 348-365)
2. Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969
3. Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961

Աստվածաշունչը խոսում է այս բնագավառում երկու տարբեր խնդիրների մասին (1) ապահովագրության երաշխիք ապրելու անպտուղ և եսասեր կյանքով, (2) քաջալերելով նրանց, ովքեր ծառայության մեջ են և պայքարում են անձնական մեղքի դեմ: Խնդիրն այն է, որ սխալ խմբերը վերցնում են սխալ պատգամը և սահմանափակ աստվածաշնչյան հատվածների հիման վրա աստվածաբանական համակարգեր շինում: Որոշ քրիստոնյաներ պետք ունեն միայն փրկության վստահությանը վերաբերող հատվածներ, մյուսներին նախազգուշացումներ և զգոնություն: Ո՞ր

խմբին եւ դու պատկանում:

Կա պատմական աստվածաբանական հակասություն, որտեղ Օգոստինոսը հակասում է Պելագիուսին իսկ Կալվինը՝ Արմինիուսի (կիսա-Պելագյան): Խնդիրը ներառում է փրկության հարցը. Եթե մեկը իսկապես փրկված է, արդյո՞ք պետք է համբերի հավատքի և պտուղ բերելու:

Կալվինիստները շարունակում են հետևել աստվածաշնչյան այն տեքստերին, որոնք հաստատում են Աստծո գերիշխանությունը և պահելու զորությունը (Հովհ. 10:27-30; Հռ. 8:31-39; 1 Հովհ. 5:13-18; 1 Պետ.1:3-5) և ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ ինչպես ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԵՐԸ Եփ. 2: 5,8:

Արմինիականները շարունակում են հետևել այդ աստվածաշնչյան տեքստերին, որոնք զգուշացնում են հավատացյալներին «պահել», «կառչել» կամ «շարունակել» (Մատթ. 10:22; 24:9-13; Մարկ. 13:13; Հովհ.15:4-6; 1 Կոր. 15:2; Գաղ. 6: 9; Հայտ. 2: 7,11,17,26; 3: 5,12,21; 21: 7): Ես անձամբ չեմ հավատում, որ Եբրայեցիս 6 և 10-ը կիրառելի են, բայց շատ արմինիականներ դրանք օգտագործում են որպես նախազգուշացում ընդդեմ հավատուրացության: Մատթեոս 13 և Մարկոս 4 Սերմնացանի առակը վերաբերվում է ակնհայտ հավատքի հարցին, ինչպես որ Հովհ. 8:31-59: Ինչպես որ կալվինիստները մեջբերում են ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐ՝ փրկությունը նկարագրելու համար, արմինիականներն էլ մեջբերում են ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ հատվածները, ինչպես 1 Կոր. 1:18; 15: 2; 2 Կոր. 2:15:

Սա կատարյալ օրինակ է, թե ինչպես են աստվածաբանական համակարգերը չարաշահում մեկնաբանության ապացույց-տեքստային մեթոդը: Սովորաբար առաջնորդող սկզբունքը կամ գլխավոր տեքստը օգտագործվում է աստվածաբանական ցանցի ստեղծման համար, որով դիտվում են բոլոր մյուս տեքստերը: Զգուշացեք ցանկացած աղբյուրի ցանցերից: Նրանք գալիս են արևմտյան տրամաբանությունից, ոչ թե հայտնությունից: Աստվածաշունչը արևելյան գիրք է: Այն ներկայացնում է ճշմարտությունը լարվածությամբ լցված, թվացյալ պարադոքսալ զույգերով: Քրիստոնյաները պետք է հաստատեն և ապրեն լարվածության մեջ: Նոր Կտակարանը ներկայացնում է ինչպես հավատացյալների անվտանգությունը, այնպես էլ հավատքի և բարեպաշտության շարունակման պահանջը: Քրիստոնեությունը նախապաշարմունք է ապաշխարության և հավատքի համար, հետևում է ապաշխարության և հավատքի շարունակական արձագանքին: Փրկությունը ոչ թե ապրանք է (տոմս դեպի երկինք, կամ ապահովագրություն հրդեհից), այլ փոխհարաբերություն: Դա որոշում է և աշակերտություն: Այն նկարագրված է Նոր Կտակարանում բոլոր ԲԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐՈՎ.

ԱՕՐԻՍ (ավարտված գործողություն), Գործք 15:11; Հռ. 8:24; 2 Տիմ. 1: 9; Տիտոս 3: 5
ՎԱՂԱԿԱՏԱՐ (ավարտված գործողությունը շարունակական արդյունքներով), Եփ. 2: 5,8
ՆԵՐԿԱ (շարունակական գործողություն), 1 Կոր. 1:18; 15: 2; 2 Կոր. 2:15
ԱՊԱԳԱ (ապագա իրադարձություններ կամ որոշակի իրադարձություններ), Հռ. 5: 8,10; 10:9; 1 Կոր. 3:15; Փիլ. 1:28; 1 Թես. 5: 8-9; Եբր. 1:14; 9:28

2:12 «հետև էլ կ'թագաւորենք» Սա ևս մեկ *syn* բարդ կառուցվածք է այստեղ և 1 Կոր. 4: 8: Պողոսը շատ է սիրում այս բարդ միացությունները: Ժամանակը, տեղը և մասնակիցները անորոշ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԹԱԳԱՎՈՐԵԼ ԱՍՏՈՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
Քրիստոսի հետ թագավորելու գաղափարը ավելի մեծ աստվածաբանական կատեգորիայի մասն է, որը կոչվում է «Աստծո Արքայություն»: Սա փոխանցում է Հին Կտակարանյան Աստծո գաղափարը, որպես Իսրայելի ճշմարիտ թագավոր (տես 1 Թագ. 8: 7): Նա խորհրդանշական կերպով թագավորեց (1 Թագ. 8:7; 10: 17-19), Հուդայի ցեղի (տես Օննդ. 49:10) և Հեսեի ընտանիքի սերնդի

միջոցով (տես 2 Թագ. 7):

Հիսուսը Հին Կտակարանյան մարգարեության խոստացված իրականացումն է: Նա Բեթլեհեմում Իր մարմնացումով բացեց Աստծո Արքայությունը: Աստծո Թագավորությունը դարձավ Հիսուսի քարոզչության հիմնական սյունը: Թագավորությունը լիովին եկավ Նրանով (տես Մատթ. 10:7; 11:12; 12:28; Մարկ. 1:15; Դուկ. 10:9, 11; 11:20; 16:16; 17:20-21):

Սակայն Թագավորությունը նաև ապագա էր (վախճանաբանական): Այն ներկա էր, բայց չամբողջացած (տես Մատ. 6:10; 8:11; 16:28; 22: 1-14; 26:29; Դուկ. 9:27; 11:2; 13:29; 14:10-24; 22: 16,18): Հիսուսն առաջին անգամ եկավ որպես տառապող ծառա (տես Ես. 52: 13-53: 12), որպես խոնարհ (տես Ջաք. 9: 9), բայց Նա կվերադառնա որպես Թագավորների Թագավոր (տես Մատթ. 2: 2; 21: 5; 27: 11-14): «Թագավորել» գաղափարը, անշուշտ, այս «թագավորության» աստվածաբանության մի մասն է: Աստված թագավորությունը տվել է Հիսուսի հետևորդներին (տես Դուկ. 12:32):

Քրիստոսի հետ թագավորելու գաղափարն ունի մի քանի ասպեկտներ և հարցեր:

1. Արդյո՞ք այն հատվածները, որոնք պնդում են, որ Աստված Քրիստոսի միջոցով հավատացյալներին տվել է «թագավորությունը», վերաբերվում է «թագավորելուն» (տես Մատթ. 5: 3,10; Դուկ. 12:32):
2. Արդյո՞ք Հիսուսի խոսքերը առաջին դարի հրեական կոնտեքստում ուղղված աշակերտներին, վերաբերվում են բոլոր հավատացյալներին (տես Մատթ. 19:28; Դուկ. 22:28-30):
3. Արդյո՞ք Պողոսը շեշտը դնում է այս կյանքում հիմա թագավորելու վրա: Հակասում է թե՛ լրացնում վերոնշյալ տեքստերը (տես Հռ. 5:17; 1 Կորնթ. 4: 8):
4. Ինչպե՞ս են տառապանքները և թագավորությունը կապված իրար հետ (տես Հռ. 8:17; 2 Տիմ. 2:11-12; 1 Պետ. 4: 13; Հայտ. 1: 9):
5. Հայտնության կրկնվող թեման կիսում է փառավորված Քրիստոսի թագավորումը, բայց այդ թագավորությունը ինչպիսի՞ն է
 - ա. երկրային, Հայտ. 5:10
 - բ. հազարամյա, Հայտ. 20:4-6
 - գ. հավիտենական, Հայտ. 2:26; 3:21; 22: 5 և Դան. 7: 14,18,27

▪ **«Էս եթե ուրանանք, նա էլ կ'ուրանայ մեզ»** Սա մեծ նախազգուշացում է (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԳՐԺՈՒԹՅՈՒՆ \(APHISTEMI\)](#) 1 Տիմ. 4: 1): Հիշեք, որ դա հալածանքների, խոշտանգումների և մահվան ժամանակաշրջան էր (տես Մատթ. 10:32-33; Դուկ. 9:26; 1 Տիմ. 5: 8; Տիտոս 1:16; 2 Պետ. 2:1; Հուդա 4):

2:13 «Ես եթե չ'հաւատանք, նա հաւատարիմ կ'մնայ» Այս արտահայտությունը շատ զարմանալի է: Վիճակը դեռևս ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ է (ենթադրվում է, որ ճիշտ է); մեկը կարող էր ակնկալել ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ (պոտենցիալ գործողություն):

Ի՞նչ առումով է հավատացյալը անհավատ: Արդյո՞ք սա նշանակում է

1. երբեք հալածանքների կամ փորձության ժամանակ
2. հետևել կեղծ ուսուցիչներին
3. անաստված ապրելակերպ

Սա կարող է արտացոլել Հին Կտակարանի Աստծո հավատարմության ուխտի գաղափարը Իսրայելի շարունակական անհավատարմության մեջ (տես Մատ. 3: 6): Ի վերջո հավատացյալների հույսը Աստծո անփոփոխ բնույթն ու խոստումներն են: ՅԱՀՎԵԻ հավատարմությունը թե բնութագրող անուն է (2 Օր. 7: 9; Ես. 49:7; 1 Կոր. 1: 9; 10:13; 2 Կոր. 1:18; 1 Թես. 5:24; 2 Թես. 3: 3) և թե

առանձնահատկություն (Սաղ. 36:5; 40:10; 89: 1,2,5,8; 92: 2; 119: 90; Եբր. 6: 17-18; 1 Պետ. 4:19), որը լիովին բացահայտված է Քրիստոսում (Եբր. 6: 13-20): Քանի որ ոմանք հրաժարվում են հավատքից (տես Հատուկ Թեմա: Ուխտադրություն 1 Տիմ. 4: 1) դա չի նշանակում, որ Աստված լքեց նրանց (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ 2](#) Տիմ.1:12): Ազատ կամքը գործում է յուրաքանչյուր մակարդակում: Աստծո շնորհքը և հավատարմությունը վտանգված չեն կեղծ ուսուցիչների և նրանց հետևորդների անհավատարմության պատճառով:

- **«իր անձը չէ կարող ուրանալ»** Այս փաստը պնդում է, որ Աստծո բնույթն անփոփոխ է (տես Սաղ. 102:27; Մաղ. 3:6), այնպես որ Հիսուսն էլ է անփոփոխ (տես Եբր. 13: 8): Այս ողորմության և շնորհքի անփոփոխ աստվածային բնույթն է, որը հիմնավորվում է հավատացյալի հույսն ու վստահությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 2:14-19

¹⁴Այս բանը յիշեցրու Տիրոջ առաջին վկայութիւն դնելով, որ խօսքերով կոխ չ'անեն, որ ոչինչի պիտանի չէ եւ լսողներին է միայն կործանում: ¹⁵Ձանք արա որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստուծոյ առաջին իբր մի մշակ առանց ամօթի, որ ճշմարտութեան խօսքն ուղիղ մատակարարես: ¹⁶Բայց պիղծ ունայնախօսութիւնիցը ետ քաշուիր. Որովհետեւ աւելի առաջ կ'գնան ամբարշտութեան մէջ: ¹⁷Եւ նորանց խօսքերը քաղցկելի պէս ճարակում է. որոնցից են Հիմենոսը եւ Փիլետոսը, ¹⁸Որոնք ճշմարտութիւնիցը մոլորել են, ասելով թէ մեռելների յարութիւնն արդէն եղած է. Եւ կործանում են ոմանց հաւատքը: ¹⁹Բայց Աստուծոյ հաստատ հիմքը կանգնած է եւ այս կնիքն ունի, թէ Տէրը ճանաչում է նորանց որ իրն են. Եւ թէ ետ կենայ անիրաւութիւնից այն ամենն որ Քրիստոսի անունն կանչում է:

2:14 «յիշեցրու» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Տես ծանուցում 2 Տիմ. 1: 3 «հիշում»:

- **«Այս բանը»** Սա կարող է վերաբերվել 2 Տիմ. 2: 11-13 կամ 14-19: Կեղծ ուսուցիչները բնութագրվում են 2 Տիմ. 2:14, 16 և 23, ինչպես 1 Տիմ. 1: 4,6; 6: 4,20:

Արևելահայերեն «Տիրոջ առաջին վկայութիւն դնելով»

Արևմտահայերեն «Տէրոջը առջեւ վկայելով»

NASB «հանդիսավոր կերպով պահանջեց նրանց Աստծո ներկայության մեջ»

NKJV «պահանջելով նրանց Տիրոջ առաջ»

TEV «նախազգուշացրու նրանց Աստծո առաջ»

NJB «նրանց ասա Աստծո անունով»

Կա հունարեն ձեռագիր տարբերակ «Աստված» (MSS ա, C, F, G, I) և «Տեր» (MSS A, D) անունների միջև: Նմանատիպ արտահայտություն «Աստված» բառով հայտնվում է 2 Տիմ. 4: 1 և 1 Տիմ. 5: 4,21 (տես Metzger, էջ 647), հետևաբար, *Theos* հավանաբար բնօրինակն է: UBS⁴ տալիս է «Բ» վարկանիշ (գրեթե որոշակի): Այս շատ տարբերակների նման, սա ոչ մի աստվածաբանական տարբերություն չի տալիս:

Սա *dia + marturomai* բարդ տերմինն է, որը նշանակում է «լրջորեն և հարգանքով հռչակել» (տես Ղուկ. 16:28; Գործք 2:40; 8:25; 10:42; 18: 5; 20: 21,24; 23: 11; 28:23; 1 Տիմ. 5:21; 2 Տիմ. 2:14; 4: 1):

Տիմոթեոսը պետք է օգտագործեր իր իշխանությունը որպես Պողոս առաքյալի ներկայացուցիչ և Աստծո խոսնակ՝ հանդիմանելու կեղծ ուսուցիչներին ոչ բարեպաշտ կյանքով ապրելու համար, այլ ոչ թե աստվածաբանական շահարկումների (տես 2 Տիմ. 2:14-26):

- **«որ խօսքերով կռիւ չ'անեն»** Ներկայացված էր փաստական տարր (տես 2 Տիմ. 2:16; 1 Տիմ. 1: 3-4; 4: 7; 6: 4,5,20; Տիտոս 3: 9) .

Տիմոթեոսին զգուշացված է չմտնել աստվածաբանական երկխոսության մեջ այդ կեղծ ուսուցիչների հետ մի քանի պատճառներով:

1. դա անիմաստ էր, քանի որ նրանց մտքերը խանձվել ու կուրացել էին (տես 2 Տիմ. 2:14; 1 Տիմ. 4:2; 6: 5; Տիտոս 3:11)
2. դա կարող է դառնալ գայթակղություն և այլ հավատացյալների հոգևոր անկման պատճառ այն հանգեցնում է այլ հավատացյալների, որոնք երկխոսության մասին գոռում են (տես 2 Տիմ. 2:14,18; 1 Տիմ. 6:20-21)
3. այն կհանգեցնի էլ ավելի անօրինականության կամ անաստվածության (տես 2 Տիմ. 2:16,19; 1 Տիմ. 6: 3)
4. այն կտարածվի գանգրենայի նման (տես 2 Տիմ. 2:17)

- **«եւ լսողներին է միայն կործանում»** «Կործանել» հունարեն տերմին է, որից մենք ստանում ենք «աղետ» անգլերեն բառը: Այն բառացիորեն նշանակում էր «տապալել» (տես 2 Պետ. 2:6) կամ «խորտակել» (տես Մաթ. 21:12):

2:15 «Ջանք արա որ քո անձն» Սա ԱՕՐԻՍՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ Է ԱՕՐԻՍՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԻՆՖԻՆԻՏԻՎՈՎ: Սա կոչ է անում կամքի վճռական գործողություն (տես Հո. 6: 13; Եփ. 4:3):

- **«ընտիր կանգնեցնես»** Սա մետալուրգիական տերմին է, որը դարձավ իդիոմա «հավանություն ստանալու համար փորձություն» բառակապակցության համար, փոխաբերություն ինչ-որ բան հաստատելու համար (տես 1 Կոր. 11:19; 2 Կոր. 10:18): Տես Հատուկ Թեմա: Հունարեն տերմիններ «Փորձել» և դրանց լրացուցիչ իմաստները 1 Տիմ. 6: 9:

- **«Աստուծոյ»** Աստված է, որ պետք է հավանի մեր ուսուցումը, քարոզելը և մեր ապրելակերպը:

- **«իբր մի մշակ առանց ամօթի»** Առանց Սուրբ Հոգու ուսմունքը և ոչ Քրիստոսանման ապրելակերպը կհանգեցնի հավատացյալներին ամօթի, երբ նրանք կանգնեն իրենց Տիրոջ առջև (տես 2 Կոր. 5:10): Պողոսը մտահոգված էր Տիրոջ առջև ամօթով չմնալու համար, այլ ոչ թե մարդկանց առաջ (տես 2 Տիմ. 1:8,12,16):

- **«ուղիղ մատակարարես»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «ուղիղ կտրել»: Սա հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ: Սա հաճախ օգտագործվում էր ճանապարհ կառուցելու կամ քարե շինություն կառուցելու համար (տես Առ. 3: 6; 11: 5, Սեպտուագիանում):

Այս տերմինը փոխաբերականորեն օգտագործվում է ուղիղ գծով կտրելու համար: Աստծո Խոսքը ճշմարտության ուղիղ (արդար) ճանապարհն է: «Ուղիղ» բառը Հին Կտակարանյան շինարարական տերմին է, որը վերցված է «գետի եղեգ/գերան» բառից, որն օգտագործվել է պատերի, փողոցների և հորիզոնական ուղղությունների հաստատման համար: ՅԱՀՎԵՆ այս տերմինն օգտագործել է Իր կերպարը բնութագրելու համար: Այն թարգմանվում է «արդար» կամ «ճիշտ» (և բոլոր համապատասխան ձևերը, տես Հատուկ Թեմա Տիտոս 2:12): Աստված քանոն է կամ չափանիշը, որով բոլորը գնահատվում են: Առաքելական ճշմարտությունը արտացոլում է Աստծո

առանձնահատկությունը: Առաքյալների կենսակերպը արտացոլում է Աստծո առանձնահատկությունը: Կեղծ ուսուցիչները երկու դեպքում էլ ձախողել են:

- **«Ճշմարտության խօսքն»** Եփ. 1:13; Կող. 1: 5 և Հակոբոս 1:18-ում սա վերաբերվում է ավետարանին: Այստեղ այն վերաբերվում է Պողոսի քարոզված և Տիմոթեոսին փոխանցված և հասուն հավատացյալների կողմից ընդունված և ապրած առաքելական ճշմարտությանը: Նոր Կտակարանում Առաքելական քարոզչության, ուսուցման և նամակների զարգացման մասին լավ գիրք է, տես *Birth of a New Testament by William L. Bevins* (Union Baptist University, Carson City, TN): Տես Հատուկ Թեմա: Ճշմարտությունը Պողոսի գրվածքներում 1 Տիմ. 2: 4:

2:16 «Բայց պիղծ ունայնախօսութիւնիցը ետ քաշուիր» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա Հովվական նամակների հիմնական թեման է (տես 1 Տիմ. 6:20; Տիտոս 3:9):

- **«աւելի առաջ կ'գնան»** Հավատացյալները պետք է ուղիղ ճանապարհ կտրեն արդարության և ճշմարտության (տես 2 Տիմ. 2:15), բայց կեղծ ուսուցիչները և նրանց հետևորդները ճանապարհ են գցում անաստվածության և ինքնախաբեության (տես 2 Տիմ. 3: 9,15):

2:17

Արևելահայերեն «նորանց խօսքերը քաղցկեղի պէս ճարակում է»

Արևմտահայերեն «անոնց խօսքը քաղցկեղի պէս կը ճարակէ»

NASB, NRSV «նրանց խոսքը կտարածվի գանգրենայի պես»

NKJV «նրանց պատգամը կտարածվի քաղցկեղի նման»

TEV «նման ուսուցումը նման է բաց ցավի, որը ուտում է մարմինը»

NJB «այս տեսակ զրույցը տարածում է ապականություն, ինչպես գանգրենան»

Ինչպիսի կեղծ ուսմունքների ազդեցության գաղափարախոսություն: Հերետիկոսությունը տարածվում է ինչպես արագ աճող քաղցկեղ, անգամ հավատացյալների շրջանում, և հետևանքներն այնքան սարսափելի են ինչքան փոխաբերությունը (տես 1 Տիմ. 6: 20-21):

- **«Հիմենսը»** Տես ծանուցում 1 Տիմ. 1:20.

- **«Փիլետոս»** Այս անձի մասին միակ հիշատակումն է Նոր Կտակարանում:

2:18 «Որոնք ճշմարտութիւնիցը մոլորել են» Սա բառացիորեն նշանակում է «բաց թողնել կամ վրիպել նշանակակետը, թիրախը», որը փոխաբերություն է վերցրած աղեղնաձգությունից (տես 1 Տիմ. 1:19; 4: 1; 5: 8; 6:10, 21): Մեղքի ընդհանուր բառը (*hamartia*) նշանակում է նշանակակետից վրիպել: Սա վերաբերվում է այս գլխում առկա շեշտադրմանը՝ ուղիղ ճանապարհ կտրելու համար (տես 2 Տիմ. 2:15-16): Աստված «ուղիղ» է (այսինքն, երբայական առևտրային փոխաբերություն, օգտագործելով գետի եղեգ բառը, տես Հատուկ Թեմա Տիտոս 2:12), որը հավասար է «ճիշտ» կամ «արդար» տերմինին: Իր ժողովուրդը պետք է արտացոլի Իր կերպարը, սակայն այդ կեղծ ուսուցիչները և նրանց հետևորդները առաքյալի ճշմարտությունից շեղվելով հստակ ցույց էին տվել, որ հեռացել էին ուղիղ ճանապարհից (այսինքն «Ճանապարհը», որը եկեղեցու վաղեմի տիտղոսն էր): Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ \(APHISTĒMI\)](#) 1 Տիմ. 4:1

▪ **«ասելով թե մեռելների յարութիւնն արդէն եղած է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԻՆՏԻՆԻՏԻՎ է (տես 1 Կոր. 15:12): Հնարավոր մեկնաբանություններն են

1. Հունական դուալիզմ, որը մերժեց հավիտենականության ֆիզիկական կողմը
2. Հունական փիլիսոփայությունը շեշտը դնում է մահվան ժամանակ Աստծո հետ միավորվելու վրա
3. սաղուկեցիների նման մերժում են ցանկացած ֆիզիկական բան կյանքից հետո
4. հարությունը միայն Քրիստոսի համար էր
5. հարությունը արդէն եղել է (տես 2 Թես. 2: 1-2)
6. հավատացյալի նոր կյանքի հարությունը տեղի է ունենում փրկության ժամանակ (կարդա Հովհ. 5:25; Հռ. 6:1-11; Կող. 2: 12-13)

UBS⁴ փակագծերում ունի «ը» որոշիչ հոդը, ցույց տալու համար, որ առաջին տեքստը՝ MSS ռ, F, G և վրացական տարբերակը (5-րդ դար), ինչպես նաև Ալեքսանդրիացի Կիրիլը (444թ.) հնարավոր է բացատրել է այն:

Թեև նմանատիպ տարբերակներ կան, իրական տեքստը չի կորել, այլ դարձել տարբերակներից մեկն է: Առաքյալների ներշնչված տեքստը դեռևս հասանելի է ժամանակակից ընթերցողներին: Այստեղ չկա ճշմարտության, իմաստի կամ վարդապետության կորուստ:

Գնոստիցիզմը, ըստ երևույթին, արել է այս աստվածաբանական պնդումը: Սա նշվել և հերքվել է հետևյալ մարդկանց կողմից

1. Պոլիկարպը (69-155թթ.) Փիլ. 3: 5
2. Հուստին Լահատակ (սպանված 162-168թթ.) - *Dialogue with Trypho* 80
3. Իրանիուս (գրել է *Adv. Haer* 180թթ.) - *Against Heresies* I.23.5; II.31.2
4. Տերտուլիան (160-220թթ.)
 - ա. *Prescriptions Against Heretics* 33: 7
 - բ. *Of the Resurrection of the Flesh* 19ն

Արևելահայերեն «Եւ կործանում են ոմանց հաւատքը»

Արևմտահայերեն «և կը կործանեն ոմանց հաւատքը»

NASB «այդպիսով խափանելով որոշների հավատքը»

NKJV «նրանք տապալում են որոշների հավատքը»

NRSV, TEV «նրանք ոտնահարում են որոշների հավատքը»

NJB «նրանք ոտնահարում են որոշ մարդկանց հավատքը»

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է «կործանել» (տես Հովհ. 2:15) կամ «տապալել» բառից, որը փոխաբերական կերպով օգտագործվել է «կործանել» կամ «ապականել» բառի համար (տես Տիտոս 1:11-ը և 1 Տիմ. 1:19; 6:21 արդյունքները): Իրականում, թե դա ինչ է նշանակում կամ ենթադրում հավատորացության մասին (տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 1) անորոշ է, բայց դա, անշուշտ, հոգևոր աղետ է: Մատթեոս 7-ի խոսքերը, «իրենց պտուղներովը կճանաչվեն» (տես 2 Տիմ. 2:19), ճշմարիտ են:

«Հավատք» տերմինը կարելի է հասկանալ երեք ձևով

1. անձ, որին ընդունում ես
2. ճշմարտություններ այդ մարդու մասին, որին հավատում ես
3. կյանք, ապրելու այդ մարդու նման

2:19 «Աստուծոյ հաստատ հիմքը» Աստծո ժողովուրդը որպես շինվածք, Քրիստոսի հիմք վրա շինված, Պողոսի սիրելի փոխաբերություններից մեկն է (տես 1 Կոր. 3: 10; Եփ. 2: 20; 1 Տիմ. 3:15): Այս

կոնտեքստում այն վերաբերվում է Աստծո ճշմարտությանը, որը մնում է հաստատ և ամուր, ի տարբերություն կեղծ ուսուցիչների: Հավատացյալի հույսը Աստծո բնության է և Իր խոստումների հանդեպ ունեցած հավատարմությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ) - 1
Տիմոթեոս 1: 17-ից

Ա. «Թագավոր» - այս գոհությունը նման է 1 Տիմ: 6: 15-16, որը կարող է արտացոլել 2 Օր. 10:17: Այն արտացոլում է ուշ ժողովարանի լեզուն («Տիեզերքի թագավորը», տես Հայտ. 15: 3) և սփյուռքի հրեաները:

Միանգամայն հնարավոր է, որ Պողոսը մեջբերում է վաղ եկեղեցու հավատքի կամ օրհներգի մասին, ինչպես նա անում է 1 Տիմ. 3:16; 6: 15-16 և 2 Տիմ. 2: 11-13:

Բ. «Հավիտենական» - Մա չորս հզոր ԱՕԱԿԱՆՆԵՐԻՑ առաջինն է, որոնք նույնն են, որ օգտագործվում են «հավիտենական կյանք» արտահայտության մեջ 1 Տիմ. 1:16, բայց այստեղ Աստծուն նկարագրելու համար է: Այն բառացիորեն «դարերի» (*aiōnion*), որը կարող է լինել փոխաբերություն հավիտենականության համար կամ հղում կատարում հրեական երկու դարերի գաղափարի մասին.

1. ներկայիս չար ժամանակաշրջանը, որը բնութագրվում է որպես անկախ և ապստամբ (հրեշտակ և մարդ)

2. Սուրբ Հոգու կողմից բերված և Մեսիայի կողմից իրականացվող արդարության գալիք խոստացված ժամանակաշրջանը (տես Հատուկ Թեմա: Այս դարը ու գալիք դարը):

Գ. «անմահ» - Մա բառացիորեն նշանակում է «անապական»: Այն փոխաբերականորեն վերաբերում է մշտապես գոյություն ունեցող, միակ կենդանի Տիրոջը (ՅԱՀՎԵՆ եբրայերեն «լինել» ԲԱՅԻՑ է, տես Ելից 3:14, տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները): Միայն Աստված ունի կյանք Ինքն Իրենում (տես Հռ. 1:23; 1 Տիմ. 1:17; 6:16): Բոլոր մյուս կյանքը ստացված նվեր է և տնտեսում: Դա գալիս է միայն Հոր շնորհքից, Քրիստոսի կատարած գործի միջոցով (տես 2 Տիմ. 1:10) և Հոգու ծառայության միջոցով:

Դ. «անտեսանելի» - սա օգտագործվում է հոգևոր ոլորտի իմաստով (տես Կող. 1:15) կամ, հնարավոր է, ՅԱՀՎԵՆ, որպես անտեսանելի Աստված (այսինքն՝ ոչ պատկերներ, տես Ելից 33:20; 2 Օր. 4: 15; 1 Տիմ. 6:16): Աստված հավիտենական Հոգին է ներկա բոլոր ստեղծագործության մեջ:

Ե. «միակ Աստվածը» - Մա վերաբերում է հրեական մոնոթեիզմին (տես Հատուկ Թեմա: Մոնոթեիզմ): Այս կոնտեքստը արտացոլում է Իսրայելի եզակի աշխարհայացքը: Աստվածաշունչը մարդկությանը ներկայացնում է հավատքի տեսանկյունից, որը վեր է հինգ զգայարաններից:

1. Կա մեկ և միայն մեկ Աստված (տես Ծննդ. 1: 1; Ելից 8:10; 9:14; 2 Օր. 4:35-39; 1 Թագ. 2:2; 2 Թագ. 7:22; 22:32; 3 Թագ. 8: 23; Սաղ. 86: 8,10; Ես. 43:11; 44:6,8; 45:6-7,14,18,21-22; 46: 5,9; Եր. 2:11; 5: 7; 10: 6; 16:20):

2. Նա անձնական, արարիչ, փրկարար Աստված է (տես Ծննդ. 1-2; 3:15; Սաղ. 103-104):

3. Նա հույսի և վերականգնման խոստումներ է տալիս Մեսիայի միջոցով (տես Ես. 53):

4. Հավատքը Մեսիային վերանորոգում է ապստամբության խախտումը (ավետարանը):

5. Ով որ հավատում է Մեսիային, կարող է ունենալ հավիտենական կյանք (ավետարան):
Textus Receptus, հետևելով հունարեն երկաթագիր ձեռագրերին, *α*^c, *D*^c, *K*, *L* և *P* ավելացնում է «իմաստուն» բառը (NKJV, «Աստծուն, ով իմաստուն է»): Այս հավելումը բացակայում է հունարեն ձեռագրերում *α* *, *A*, *D* *, *F*, *G*, և *H* *: Դա կարող է լինել դպիրի

կողմից հավելում Հռ. 16:27-ից: UBS⁴- ը ավելի կարճ տեքստ է և տալիս «Ա» վարկանիշ (որոշակի):

Զ. «պատիվ և փառք» - սա հիմնականում Հին Կտակարանյան *kabod* տերմինի իմաստն է (տես 1 Տիմ. 1:11): Այն օգտագործվում է մի քանի անգամ «Հայտնության» գրքում այլ գովեստների, փառաբանությունների հետ (տես Հայտ. 4: 9,11; 5: 12,13; 7:12):

Հին Կտակարանում ամենատարածված երբայերեն «փառք» բառը (*kabod*, տես Հատուկ Թեմա. Փառք [ՀԿ]) սկզբնապես առևտրային տերմին էր, որը վերաբերում էր մի գույզ կշռաքարերին, որոնք նշանակում էին «ծանր» լինել: Այն ինչը ծանր էր, արժեքավոր էր կամ ուներ հատուկ արժեք: Հաճախ պայծառության գաղափարը ավելացվել է՝ Աստծո մեծությունն արտահայտելու համար (տես Ելից 15:16, 24:17; Ես. 60: 1-2): Միայն Նա է արժանի և պատվելի: Նա շատ պայծառ է մեղավոր մարդկանց համար (տես Ելից 33:17-23; Ես. 6:5): Աստված կարող է միայն ճշմարտապես ճանաչվել Քրիստոսի միջոցով (տես Եր. 1:14; Մատթ. 17:2; Եբր. 1: 3; Հակ. 2: 1):

«Փառք» տերմինը միանգամայն երկիմաստ է:

1. դա կարող է գուգահեռ լինել «Աստծո արդարության»
2. դա կարող է վերաբերել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը»
3. այն կարող է վերաբերել Աստծո պատկերին, ինչպիսին մարդկությունը ստեղծվել է (տես Ծննդ. 1: 26-27; 5: 1; 9: 6), որը, սակայն, հետագայում փչացավ ապստամբության միջոցով (տես Ծննդ. 3: 1-22; Հռ. 3: 9-18)

Այն առաջին հերթին օգտագործվում է ՅԱՀՎԵԻ ներկայության համար Իր ժողովրդի հետ (տես Ելից 16: 7-10; Ղև. 9:23; Թվոց 14:10):

Է. «Հավիտյանս հավիտենից» - սա բառացիորեն նշանակում է «դարեց դար», իդիոմա է հավիտենականության համար (տես Գաղ. 1: 5; Փիլ. 4:20; 2 Տիմ. 4:18): Այս նույն տերմինը օգտագործվում է 1 Տիմ. 4:16 «հավիտենական կյանքի» համար և 2 Տիմ. 4:18 «Հավիտենական թագավորի» համար: Տես Հատուկ Թեմա: Հավիտյան (հունարեն իդիոմա):

▪ **«կանգնած է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾՄԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Միավորված Աստվածաշնչային Ընկերությունները *A Handbook on Paul's Letters to Timothy and Titus*, էջ 210 թվարկում է այս «հիմքի» բացահայտման չորս տարբերակները:

1. Քրիստոսն ինքը, անկյունաքարը (տես Ես. 28:16; Հռ. 9:33; 1 Կոր. 3:10-12)
2. Քրիստոսի մասին ուղերձը (տես Եփ. 2:20)
3. Եկեղեցին՝ Քրիստոսի մարմինը
4. Ճշմարտությունը (ողջամիտ ուսմունքը)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՔԱՐ» (BDB 6, KB 7) ԵՎ «ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ» (BDB 819, KB 944)

- I. Հին Կտակարանյան հասկացողություն
- Ա. Քարի գաղափարը, որպես ծանր ամուր նյութ, որից լավ հիմք է ստացվել, օգտագործվել է ՅԱՀՎԵԻՆ բնութագրելու համար (տես Հոբ 38:6; Մաղ. 18: 2 օգտագործում է երկու բառ «ժայռ, քար»-ի համար, BDB 700, 849):
- Բ. Այնուհետև այն դարձել է Մեսիական անուն (տես Ծննդ. 49:24; Մաղ. 118:22; Ես. 28:16):
- Գ. «Քար» կամ «ժայռ» տերմինը եկել է ներկայացնելու Մեսիայի կողմից ՅԱՀՎԵԻ դատաստանը (տես Ես. 8:16, [BDB 6 CONSTRUCT BDB 103]; Դան. 2: 34-35,44-45 [BDB 1078]):
- Դ. Սա մշակվել է դառնալով շինարարության փոխաբերություն (հատկապես Ես. 28:16):

1. հիմքի քար, առաջինն է դրվում, որը ապահով էր և անկյուններ էր ստեղծում շենքի մնացած հատվածի համար, որը կոչվում էր «անկյունաքար»
2. այն կարող էր նաև վերաբերել այնտեղ տեղադրված վերջին քարին, որը պատերը պահում էր միասին (տես Զաք. 4: 7; Եփ. 2: 20,21), որը կոչվում էր «գլխարկ, կափարիչ», Եբրայերեն *rosh* (այսինքն գլուխ) բառից
3. դա կարող է վերաբերել «բանալի քարին», որը գտնվում է դռան կամարի կենտրոնում և պահում է ամբողջ պատի ծանրությունը

II. Նոր Կտակարանյան հասկացողություն

- Ա. Հիսուսը մի քանի անգամ մեջբերեց Սաղմոս 118-ը Իր համար (տես Մատթ. 21: 41-46; Մարկ. 12:10-11; Ղուկ. 20:17)
- Բ. Պողոսը 118-րդ Սաղմոսն օգտագործում է անհավատարիմ և ապստամբ Իսրայելն ՅԱՀՎԵԻ մերժման կապակցությամբ (տես Հռ. 9:33)
- Պ. Պողոսը օգտագործում է «անկյունաքար» հասկացությունը Եփ. 2: 20-22 Քրիստոսի համար
- Դ. Պետրոսն օգտագործում է Հիսուսի այս հասկացությունը 1 Պետ. 2: 1-10: Հիսուսը անկյունաքարն է, իսկ հավատացյալները կենդանի քարերը (այսինքն հավատացյալները որպես տաճարներ, 1 Կոր. 6:19), կառուցվում են Նրա վրա (այսինքն, Հիսուսը նոր Տաճարն է, տես Մարկ. 14:58; Մատթ. 12: 6; Հովհ. 2:19-20): Հրեաները մերժեցին իրենց հույսի հիմքը, երբ նրանք մերժեցին Հիսուսին որպես Մեսիա:

III. Աստվածաբանական դրույթներ

- Ա. ՅԱՀՎԵՆ թույլ տվեց Դավիթին / Սողոմոնին կառուցել տաճար: Նա ասաց նրանց, որ եթե նրանք պահեն ուխտը Նա կօրհնի նրանց և նրանց հետ լինի (տես 2 Թագ. 7), բայց եթե ոչ, ապա տաճարը ավերակների կվերածվի (տես 3 Թագ. 9: 1-9):
- Բ. Ռաբբիական հուղայականությունը կենտրոնացած է կերպի և ծիսակարգի վրա, և անտեսում է հավատքի անձնական կողմը (տես Եր. 31: 31-34; Եզ. 36:22-38): Աստված փնտրում է ամենօրյա, անձնական, աստվածային հարաբերություններ Իր պատկերով ստեղծվածների հետ (տես Ծննդ. 1: 26-27): Ղուկաս 20: 17-18-ում գրված են վախեցնող խոսքեր դատաստանի մասին, ինչպես Մատթ. 5:20, ուղղված հուղայականությանը:
- Գ. Հիսուսն օգտագործեց տաճարի գաղափարը ներկայացնելու Իր ֆիզիկական մարմինը (տես Հովհ. 2: 19-22): Սա շարունակվում և ընդլայնում է Հիսուս Մեսիայի վրա ունեցած անձնական հավատքի գաղափարը, որը ՅԱՀՎԵԻ հետ հարաբերության բանալին է (այսինքն, Հովհ. 14: 6; 1 Հովհ. 5: 10-12):
- Դ. Փրկությունը նպատակ ունի վերականգնել Աստծո վնասված պատկերը մարդկանց մեջ (Ծննդ. 1.26-27 և Ծննդոց 3), որպեսզի հնարավոր լինի Աստծո հետ հաղորդակցվել: Քրիստոնեության նպատակը այժմ Քրիստոսանմանությունն է: Հավատացյալները պետք է դառնան կենդանի քարեր (այսինքն, փոքրիկ տաճարներ կառուցված Քրիստոսի վրա):
- Ե. Հիսուսը մեր հավատքի հիմքն է և մեր հավատքի անկյունաքարը (այսինքն, Ալֆան և Օմեգան): Բայց և, գայթակղության քարը և գործման վեմ (Ես. 28:16): Բաց թողնել Նրան, նշանակում է բաց թողնել ամեն ինչ: Այստեղ չկա միջին գոտի:

▪ «այս կնիքն ունի» Սա հնարավոր է ակնարկում է

1. շենքի նպատակը անկյունաքարին ամրագրելու հնագույն սովորույթը

2. վերաբերվում է սեփականության պաշտոնական կնիքին (տես Հովհ. 3:33; 6:27; Հռ. 4:11; 15:28; 1 Կոր. 9:2; 2 Կոր. 1:22; Եփ. 1:13; 4:30; Հայտ. 7: 3-8)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՆԻՔ

Կնիքը հնում եղել է վավերացման կերպ, ցույց տալու

1. ճշմարտությունը (տես Հովհ. 3:33)
2. սեփականությունը (տես Հովհ. 6:27; 2 Տիմ. 2:19; Հայտ. 7: 2-3; 9: 4)
3. անվտանգություն կամ պաշտպանությունը (տես Ծննդ. 4:15; Մատթ. 27:66; Հռ. 4:11; 15:28; 2 Կոր. 1:22; Եփ. 1:13; 4:30; Հայտ. 20: 3)
4. դա կարող է նաև լինել պարզևի Աստծո խոստման իրականության նշանը (տես Հռ. 4: 11 և 1 Կոր. 9:2)

Այս կնիքի նպատակը Հայտ. 7: 2-4; 9: 4-ում ճանաչել Աստծո ժողովրդին, որ Աստծո բարկությունը չազդի նրանց վրա: Մատանայի կնիքը բացահայտում է իր ժողովրդին, որոնք Աստծո զայրույթի առարկան են: Հայտնության մեջ «նեղություն» (այսինքն *thlipsis*) միշտ վերաբերում է անհավատներին, որոնք հավաճում են հավատացյալներին, իսկ բարկությունը / զայրույթը (այսինքն, *orgē* կամ *thumos*) միշտ Աստծո դատաստանն է անհավատների վրա, որպեսզի նրանք կարողանան ապաշխարել և հավատքով գալ դեպի Քրիստոսը: Դատաստանի այս դրական նպատակը կարելի է տեսնել Ղև. 26; 2 Օր. 27-28; 30; Սաղ. 1-ի ուխտի անեծք / օրհնություն բաժնում:

▪ **«Տերը ճանաչում է նորանց որ իրն են»** Սա կարող է ակնարկ լինել Թվոց 16: 5 Սեպտուագիանում ֆրակցիաների և բաժանման պատմական միջավայրը, ինչպես նաև Հովհ.10: 14,27:

▪ **«Թող ամեն ոք, ով անուն է տվել Տիրոջ անունը»** Սա կարող է լինել նպատակալաց երկինաստություն: Արդյոք «Տեր» տերմինը վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ ԹԵ՛ Հիսուսին: Հին Կտակարանում ՅԱՀՎԵԻ անունը կանչելը երկրպագության փոխաբերություն էր: Նոր Կտակարանի հեղինակը «անունը» օգտագործում է որպես միջոց

1. հաստատելու Հիսուսի աստվածությունը
2. ընդունելու Նրան որպես Փրկիչ և Տեր
3. ակնարկելու, որ Իրեն կանչելն այն է, որ Իր գործողությունները և բնավորությունը զարգացնել առօրյայում (ինչպես նաև երկրպագության իրադարձությունները)

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը վերաբերվում է նրանց, ովքեր շարունակում են պնդել հարաբերություններ Հիսուսի հետ: Երբայերենում անունը մարդուն բնորոշելու ձև էր: Եթե հավատացյալները կանչում են Հիսուսի անունը փրկվելու համար և արտացոլում Նրա անունը որպես հետևորդներ, ապա նրանք պետք է հավատան և ապրեն ինչպես որ Նա արեց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ (Նոր Կտակարան)

Սա տարածված Նոր Կտակարանյան արտահայտություն է եկեղեցում Աստված Երրորդության անձնական ներկայության և ակտիվ գործության համար: Դա կախարդական բանաձև չէր, այլ կոչ Աստծո բնավորությանը:

Հաճախ այս արտահայտությունը վերաբերվում է Հիսուսին որպես Տեր (տես Փիլ. 2:11)

1. մկրտության ժամանակ, երբ անձը դավանում է Հիսուսին (տես Հռ. 10:9-13; Գործք 2:21,38; 8: 12,16; 10:48; 19: 5; 22:16; 1 Կոր. 1 : 13,15; Հակ. 2: 7)

2. դևեր հանելու ժամանակ (տես Մաթ. 7:22; Մարկ. 9:38; Ղուկ. 9:49; 10:17; Գործք 19:13)
3. բժշկության ժամանակ (տես Գործք 3: 6,16; 4:10; 9:34; Հակ. 5:14)
4. ծառայության ժամանակ (տես Մատթ. 10:42; 18: 5; Ղուկ. 9:48)
5. եկեղեցու կարգապահության ժամանակ (տես Մատթ. 18: 15-20)
6. հեթանոսներին քարոզելու ժամանակ (տես Ղուկ. 24:47; Գործք 9:15; 15:17; Հռ. 1: 5)
7. աղոթքի մեջ (տես Հովհ. 14: 13-14; 15: 7,16; 16:23; 1 Կոր. 1: 2)
8. քրիստոնեությանը վկայակոչելու ձև (տես Գործք 26: 9; 1 Կոր. 1:10; 2 Տիմ. 2:19; Հակ. 2: 7; 1 Պետ. 4:14)

Այն, ինչ մենք անում ենք որպես քարոզիչներ, ծառայողներ, օգնականներ, բժշկողներ, դևեր հանողներ և այլն, մենք անում ենք Նրա բնավորությամբ, Իր իշխանությունով, Իր անունը կանչելով (տես Փիլ. 2:9-10):

▪ **«ետ կենայ անհրաուրթինից»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Դա կարող է ակնարկ լինել Թվոց 16: 26-27 Սեպտուագիդում: Կոնտեքստում դա ակնհայտորեն վերաբերվում է անաստված կեղծ ուսուցիչների և նրանց հետևորդների հետ ասոցացվողներին (այսինքն «խայտառակություն կավե անոթ», 2 Տիմ. 2:20; 3: 5):

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 2:20-26

²⁰Բայց մի մեծ տան մեջ ոչ միայն ոսկեղեն եւ արծաթեղեն անոթներ կան. այլ փայտե եւ հողե էլ. կան որ պատիւի համար են, եւ կան որ անարգութեան համար են: ²¹Եթէ մեկը իր անձը մաքրէ այդպիսիներից, նա պատուական անօթ կ'լինի՝ սրբուած եւ իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստուած: ²²Երիտասարդական ցանկութիւններիցը փախիր. այլ հետեւիր արդարութեան, հաւատքի, սէրի, խաղաղութեան, Տիրոջ անունը և սուրբ սրտանց իրանց վերայ կանչողների հետ: ²³Բայց յիմար եւ անկիրթ վիճաբանութիւններից ետ քաշուիր. Իմանալով որ կոիւներ են ծնում: ²⁴Բայց Տիրոջ ծառային պէտք չէ կոիւ անել, այլ ամենի հետ հեզահոգի լինել, սովորեցնող, ոյս չ'պահող, ²⁵Հակառակողներին հանդարտութիւնով խրատել. թերեւս Աստուած նորանց ապաշխարութիւն տայ ճշմարտութիւնն իմանալու համար, ²⁶Եւ սատանայի որոգայթիցն զգաստանալու, որից նորանք որսացուել են նորա կամքին ծառայելու համար:

2:20 «մեծ տան» Անմիջական կոնտեքստը հստակորեն ենթադրում է, որ դա եկեղեցու համար օգտագործվող փոխաբերություն է (տես Հովհ. 14:2):

▪ **«պատիւի համար են, եւ կան որ անարգութեան համար»** Ոմանք սա համարում են հավատացյալների տարբեր տեսակի հմտությունները, անձերը և պարզները (տես Հռ. 9: 19-24; 1 Կոր. 12:12-31), բայց ուրիշները դա կապում են խնդիրներ ստեղծողներին հետ 2 Տիմ. 2: 22-23:

2:21 «Եթէ մեկը իր անձը մաքրէ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է պոտենցիալ գործողություն, բայց ինչ-որ չափով պայմանավորված անձի կամավոր գործողությունների հետ:

«Մաքրել» տերմինը ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է և կարող է կապված լինել կեղծ ուսուցիչներից ետ դառնալուն կամ հեռանալուն: *ek + kathairō* բարդ տերմինը օգտագործվում է միայն այստեղ և 1 Կոր. 5: 7: Աստծո Թագավորության գործի մեջ հավատացյալներն ունեն ընտրություն իրեն ընդգրկվածության և օգտակարության մեջ:

- **«սրբուած»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը ենթադրում է մի քանի բան:
 1. դրանք անցյալում սրբացվել են, և այդ վիճակը կամ իրավիճակը շարունակվում է (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ)
 2. նրանք սրբվել են Աստծո կողմից (ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ)
 Ուշադրություն դարձրեք մեկի ընտրությանը՝ մաքրելու իրեն, ապա Աստծո գործողությանը: Սրբացումը թե աստվածային արարք է և թե մարդկային գործ: Այս օրինակը բնորոշում է ուխտի փոխհարաբերությունները մարդկանց հետ Աստծո բոլոր գործերում: Նա միշտ ձեռնարկում է նախաձեռնությունը և սահմանում է օրակարգը, սակայն մարդկությունը պետք է պատշաճ կերպով պատասխան տա և շարունակի արձագանքել:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ/ ՍՐԲԱՅՈՒՄ

Նոր Կտակարանը պնդում է, որ երբ մեղավորները դիմում են Հիսուսին ապաշխարությամբ և հավատքով (տես Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21), և նրանք անմիջապես արդարանում են և սրբանում: Սա նրանց նոր դիրքն է Քրիստոսում: Նրա արդարությունը դրվել է նրանց վրա (տես Ծննդ. 15: 6; Հռ. 4): Նրանք հռչակվում են արդար և սուրբ (Աստծո դատական ակտ):

Բայց Նոր Կտակարանը նաև հավատացյալներին կոչ է անում դեպի սրբություն կամ սրբացում: Դա թե աստվածաբանական դիրքն է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի մեջ և թե Քրիստոսանման նման լինելու կոչ՝ կեցվածքով և գործերով առօրյայում: Քանի որ փրկությունը ձրի պարզ է և արժեքը՝ ամեն ինչի կենսակերպ, այնպես էլ սրբացում:

Նախնական արձագանք	Պրոգրեսիվ Քրիստոսանմանություն
Գործք 26:18	Հռոմեացիս 6:19
Հռոմեացիս 15:16	2 Կոր. 7:1
1 Կորնթացիս 1:2-3; 6:11	Եփեսացիս 1:4; 2:10
2 Թեսաղոնիկեցիս 2:13	1 Թես. 3:13; 4:3-4,7; 5:2
Եբրայեցիս 2:11; 10:10,14; 13:12	1 Տիմոթեոս 2:15
2 Պետրոս 1:2	2 Տիմոթեոս 2:21
	1 Պետրոս 1:15-16
	Եբրայեցիս 12:14

- **«Տիրոջն օգտակար»** Սա հունարեն տերմին է, որից մենք ստանում ենք անգլերեն «բռնակալ» բառը: Այն վերաբերում է ստրուկի սեփականատիրոջը (տես հ.24), լիակատար իշխանություն ունենալով մյուսի նկատմամբ (տես 1 Տիմ. 6: 1-2; Տիտոս 2:9; 1 Պետ. 2:18):

Հավատացյալները, ովքեր սրբում են իրենց, օգտակար են Աստծուն: Կեղծ ուսուցիչները օգտակար չեն:

- **«ամեն բարի գործերի համար պատրաստուած»** Սա մեկ այլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ կամ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այս ԲԱՅՑ հանդիպում է միայն այստեղ և Եսայիայից մեջբերված 1 Կոր. 2: 9 մեջ (այսինքն, Ես. 64: 4 և 65:17): Լավ գործերը մեզ ընդունելի չեն դարձնում կամ մեզ բերում Աստծուն (տես Եփ. 2:8-9), բայց երբ մենք հանդիպում ենք Նրան Քրիստոսով, դրանք են սպասված արդյունքը (տես Եփ. 2:10; Հակ. 2: 14-26): Մենք Քրիստոսանմանության համար ստեղծված ժողովուրդ ենք, Աստծո պատկերի վերականգնումը, որը կորել էր Ծննդոց 3-ում մեղքի անկման պատճառով: Հավատացյալների աստվածահաճո կյանքերը հաստատում են իրենց փրկությունը և ուրիշներին գրավում դեպի Քրիստոսը: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՉԱՐ ԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#) Նոր Կտակարանում 1 Տիմ. 1: 9:

2:22

Արևելահայերեն «փախիր. այլ հետեւիր»

Արևմտահայերեն «փախիր. այլ հետեւիր»

NASB, NKJV «Փախիր ... հետևիր»

NRSV «Հեռու մնա ... հետևիր»

TEV «Խուսափիր...ջանք արա»

NJB «Հեռացիր ...կենտրոնացիր»

Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են: Հավատացյալները պետք է շարունակեն ցուցադրել Աստծո առանձնահատկությունը (տես 1 Տիմ. 6:11):

▪ **«Երիտասարդական ցանկություններիցը»** Կյանքի յուրաքանչյուր փուլ ունի իրեն հատուկ գայթակղությունները (տես Ժող. 3: 1-8; 11:10; 12: 1-8):

▪ **«արդարութեան, հաւատքի, սէրի, խաղաղութեան»** Սրանք բոլոր Եոյակ Աստծո առանձնահատկություններն են (տես Հատուկ Թեմա 2 Տիմ. 2:19), որը պետք է մշակվի և ցուցադրվի Իր ժողովրդի մեջ (տես 1 Տիմ. 1:5,14): «Արդարության» համար տես Հատուկ Թեմա Տիտոս 2:13:

▪ **«Տիրոջ անունը և սուրբ սրտանց իրանց վերայ կանչողների հետ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը ենթադրում է շարունակական գործողություն: Հովել 2:32, Գործք 2:21 և Հռ. 10: 9-13 այս արտահայտությունը, կարծես, ենթադրում է նախնական պատասխան, բայց այս կոնտեքստում այն վերաբերվում է հասուն հավատացյալներին: Մեր հասուն հավատացյալների հետ նպատակային և շարունակական կապը, հավատարիմ, ուրախ և խաղաղ քրիստոնեական կյանքի գաղտնիքն է: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԻՐՏԸ](#) 1 Տիմ. 1: 5:

2:23 «ետ քաշուիր» Տիմոթեոսին պատվիրված է շարունակել չմասնակցել կեղծ ուսուցչի հիմար վիճաբանություններին և շահարկումներին (ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ [deponent] ՀՐԱՄԱՅԱԿԱՆ):

▪ **«յիմար»** Այս տերմինը կարող է արտացոլել «անիմաստ չարի» եբրայերեն / արամերեն տերմինը (այսինքն, *raca* տես Մատթ. 5:22):

▪ **«անկիրթ»** Այս տերմինն օգտագործվում է ԱԼՖԱ ՄԱՍՆԻԿՈՎ՝ երեխաներին սովորեցնելու, հորդորելու համար: Պողոսը հաճախ է օգտագործում բացասական տերմին իր տարբեր ձևերով Հովվական Նամակներում (տես 1 Տիմ. 1:20; 2 Տիմ. 2:25; 3:16; Տիտոս 2:12): Այս կեղծ ուսուցիչները առանց իմաստության և առանց ուսուցման են. սա նպատակասլաց ու ցանկալի է: Նրանք ցանկանում են քննարկել և շահարկել ոչ էական բաների մասին (տես 1 Տիմ. 1: 4; 4: 7; 6: 4; 2 Տիմ. 2:14; 4: 4; Տիտոս 1:14; 3: 9): Այս տիպի ամբարտավան քննարկումները բազմիցս դատապարտվում են Հովվական Նամակներում:

2: 24-25 Ահա մի շարք բաներ, որոնք հավատացյալները պետք է անեն, որպեսզի օգնեն «գայթակղվածներին» վերադառնալ Տիրոջը.

1. չպետք է վիճաբանող լինեն (տես 1 Տիմ. 3: 3; Տիտոս 3: 9)
2. բարի լինել բոլորի հանդեպ (տես Տիտոս 3: 2)
3. կարողանան սովորեցնել (տես 1 Տիմ. 3: 2; Տիտոս 1: 7)

4. համբերատար լինեք այն ժամանակ, երբ անարդար եք մեղադրվում (տարբեր տերմիններ, քայց զուգահեռ 1 Տիմ. 3: 3; 6:11; 2 Տիմ. 3: 10; Տիտոս 2: 2)
5. նրբանկատորեն ուղղեք (տես 1 Տիմ. 3: 3; Տիտոս 3: 2)

Ակնհայտ է, որ Պողոսը արտացոլում է առաջնորդության անհրաժեշտ հատկությունները (տես 1 Տիմ. 3), ինչպես նաև յուրաքանչյուր հավատացյալի աստվածահաճո հատկանիշները (տես Տիտոս 3:1-3):

2:25 «Հակառակողներին» Մա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է (այսինքն, նրանք, ովքեր շարունակում են կամայական կերպով հակադրել առաքելական ճշմարտությանը և էթիկային): Ուշադրություն դարձրեք, նույնիսկ դրանք պետք է դիտվեն որպես պոտենցիալ հավատացյալներ: Ինչպես ենք վերաբերվում նրանց, ովքեր հակադրվում են ավետարանին, կարևոր բան են ասում ավետարանի և մեր մասին:

▪ **«Թերևս Աստուած նորանց ապաշխարութիւն տայ»** Եվ «էթե» բառը հունարեն տեքստում չկա, ուրեմն ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԸ նշանակում է ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ:

Բառարանի հետ կապված աստվածաբանական հարցը Աստծո ինքնիշխանությունն է, որը կապված է փրկության հետ, մարդկանց ազատ կամքի հետ: Արդյոք հավատքն ու ապաշխարությունը (տես Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21) մարդկային արձագանք է թե՛ Աստծո պարզև: Կան տեքստեր, որոնք խստորեն ենթադրում են, որ դրանք Աստծո պարզևն են (տես Գործք 5: 31; 11:18; Հռ. 2: 4): Քանի որ ես հավատում եմ, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է (տես 2 Տիմ. 3:16), ապա պետք է համեմատել տվյալ աստվածաբանական հարցի հետ կապված բոլոր տեքստերը և ոչ թե զիջել ապացույց տեքստի մեթոդին: Ակնհայտ է, որ մեկ ճշմարիտ Աստվածը վերահսկում է բոլոր բաները: Բայց Նա ընտրել է ուխտի միջոցով կապ հաստատել Իր բարձրագույն ստեղծագործության հետ: Աստված միշտ ձեռնարկում է նախաձեռնությունը և սահմանում օրակարգը, սակայն մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել: Դա երբեք չի եղել կամ- կամ-ի հարց: Դա միշտ էլ երկուսն է և հարաբերություններ: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏ](#) 2 Տիմ. 2: 1

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Այս գաղափարը շատ կարևոր է, քայց դժվար է սահմանել: Մեզանից շատերն ունեն սահմանում, որը գալիս է մեր հարանվանական պատկանելությունից: Այնուամենայնիվ, սովորաբար «սահմանել, դնել» աստվածաբանական սահմանումը հիմնվում է մի քանի երբայերեն (և հունարեն) բառերի վրա, որոնք հստակ չեն տալիս տվյալ բառի սահմանումը: Պետք է հիշել, որ Նոր Կտակարանի հեղինակները (բացառությամբ Ղուկասի) երբայեցի մտածողներ էին, որոնք օգտագործում էին Կոինե հունարեն տերմիններ, ուստի սկսելու տեղը հենց երբայերեն տերմիններն են, որոնցից հիմնականում երկուսն են:

1. *nacham* (BDB 636, KB 688)
2. *shub* (BDB 996, KB 1427)

Առաջին, *nacham*, տերմինը որը բնագրում կարծես նշանակում էր «խորը շունչ քաշել», օգտագործվում է մի քանի իմաստներով:

- ա. «հանգստություն» կամ «մխիթարություն» (օրինակ, Ծննդ. 5:29; 24:67; 27:42; 37:35; 38:12; 50:21; հաճախ օգտագործվում է անուններով, տես 4 Թագ. 15:14; 1 Մնաց. 4:19; Նեեմ. 1: 1; 7: 7; Նաում 1: 1)
- բ. «տրտմեց, վշտացավ» (օրինակ, Ծննդ. 6: 6,7)

գ. «փոխեց միտքը» (օրինակ, Ելից 13:17; 32: 12,14; Թվոց 23:19; Հոբ 42: 5-6)

դ. «գույթ, կարեկցանք» (օրինակ, 2 Օր. 32:36)

Ուշադրություն դարձրեք, որ բոլորը ներառում են խորը զգացմունքներ: Ահա բանալին՝ խորը զգացմունքներ, որոնք հանգեցնում են գործողությունների: Գործողության այս փոփոխությունը հաճախ ուղղված է այլ անձանց, բայց նաև դեպի Աստված: Դա Աստծո հանդեպ վերաբերմունքի և գործողության այս փոփոխությունն է, որը տալիս է այս տերմինը աստվածաբանական նշանակություն: Բայց այստեղ խնամք պետք է իրականացվի: Աստծո մասին ասվում է «ապաշխարեց» (տես Օմնդ. 6: 6,7; Ելից 32:14; Դատ. 2:18; 1 Թագ. 15:11,35; Սաղ. 106:45), բայց դա չի նշանակում մեղքի կամ սխալի արդյունք գոջալ, այլ գրական կերպով ցույց է Աստծո կարեկցանքը և գույթը (հմմտ. Թվոց 23:19; 1 Թագ. 15:29; Սաղ. 110: 4; Եբեմ. 4: 27-28; Եզեկ. 24:14): Մեղքի և ապստամբության պատիժը ներվում է, եթե մեղավորը իսկապես դարձի գա իր մեղքերից և դառնա Աստծուն: Դա կյանքի վերանայումն է:

Երկրորդ տերմինը, *shub*, նշանակում է «դառնալ, դիմել» (վերադառնալ, ետ գալ, դարձի գալ, դիմել): ԲԱՅՇ *shub* (BDB 996, KB 1427) հիմնականում նշանակում է «ետ դառնալ» կամ «վերադառնալ»: Այն կարող է օգտագործվել

1. ետ դառնալ Աստծուց, Թվ. 14:43; Հեսու 22: 16,18,23,29; Դատ. 2:19; 8:33; 1 Թագ. 15:11; 3 Թագ. 9:6; Եր. 3:19; 8: 4
2. դառնալ Աստծուն, 3 Թագ. 8: 33,48; 2 Մնաց. 7:14; 15:4; 30:9; Սաղ. 51:13; 116:7; Ես. 6:10; 10: 21,22; 31:6; Եր. 3: 7,12,14,22; 4: 1; 5:3; Ովս. 3: 5; 5: 4; 6:1; 7: 10,16; 11:5; 14: 1,2; Ամովս 4: 6, 8-11 (նկատի ունենալով, մասնավորապես, Երեմիա 7 և Ամովս 4)
3. ՅԱՀՎԵՆ, ի սկզբանե, ասել էր Եսայիային, որ Հուդան չի կարող ապաշխարել (տես Ես 6:10), բայց ոչ առաջին անգամ գրքում, Նա կոչ է անում նրանց վերադառնալ Իրեն:

Ապաշխարությունը ոչ այնքան զգացմունք է, որքան վերաբերմունք կամ կեցվածք Աստծո նկատմամբ: Դա կյանքի վերափոխում կամ վերանայում է՝ ես-ից դեպի Աստված: Դա նշանակում է փոխելու և փոխվելու պատրաստակամություն: Դա ոչ թե մեղքի ամբողջական դադարեցումն է, այլ ամենօրյա հայտնի ապստամբության դադարեցում: Այն Օմնդոց 3-ում եսակենտրոն մեղքի արդյունքի փոփոխությունն է: Այն նշում է, որ վերականգնվել է Աստծո պատկերն ու նմանությունը (Օմնդ. 1: 26-27), որը վնասվել էր: Մեղավոր մարդկանց կողմից Աստծո հետ համագործակցությունը կրկին հնարավոր է:

Հին Կտակարանում ապաշխարությունը նախնառաջ նշանակում է «գործողությունների փոփոխություն», իսկ Նոր Կտակարանում «ապաշխարությունը», առաջին հերթին նշանակում է «մտքի փոփոխություն» (տես Հատուկ Թեմա: Ապաշխարություն [Նոր կտակարան]): Երկուսն էլ անհրաժեշտ են աստվածաշնչյան ճշմարիտ ապաշխարության համար: Անհրաժեշտ է նաև հասկանալ, որ ապաշխարությունը թե նախնական գործողություն է և թե ընթացիկ գործընթաց: Նախնական գործողությունը կարելի է տեսնել Մարկ. 1:15; Գործք 3:16 և 19; 20:21, մինչդեռ շարունակվող գործընթացը կարելի է տեսնել 1 Հովհ. 1: 9; Հայտ. 2 և 3: Ապաշխարությունը տարբերակ չէ (տես Ղուկ.13: 3,5):

Եթե ճիշտ է, որ երկու ուխտի պահանջներն են «ապաշխարությունը» և «հավատքը» (օրինակ, Մատթ. 3: 2; 4:17; Մարկ. 1: 4,15; 2:17; Ղուկ. 3: 3,8; 5: 32; 13: 3,5; 15: 7; 17: 3), ապա *nacham* վերաբերում է իր մեղքի ճանաչմանը և դրա ուժեղ զգացմունքներին, մինչդեռ կասկածը վերաբերում է մեղքից վերադառնալուն, ապա Աստծուն դառնալու (այս երկու հոգևոր գործողությունների մասին է Ամոս 4: 6-11-ը, «դուք չդարձաք Ինձ» [հինգ անգամ] և Ամովս 5: 4, 6, 14, «փնտրեք Ինձ...փնտրեք Տիրոջը...փնտրեք բարին այլ ոչ թե չարը»):

Ապաշխարության գործողության առաջին մեծ օրինակն է Դավթի մեղքը Բերսաբեի հետ (տես 2

Թագ.12; Մադ. 32,51): Դավիթը, նրա ընտանիքի և Իսրայելի համար շարունակվում էին հետևանքներ, բայց Դավիթը վերականգնվեց Աստծո հետ հաղորդակցվելը: Նույնիսկ չար Մանասեն կարող է ապաշխարել և ներվել (տես 2 Մնաց. 33: 12-13):

Այս երկու տերմիններն օգտագործվում են զուգահեռաբար Մադ. 90:13: Պետք է լինի մեղքի ճանաչում և նպատակային, անձնապես շրջադարձ դրանից, ինչպես նաև ցանկություն փնտրելու Աստծուն և Նրա արդարությունը (տես Ես. 1: 16-20): Ապաշխարությունն ունի ճանաչողական ասպեկտ, անձնական ասպեկտ և բարոյական ասպեկտ: Բոլոր երեքն էլ պահանջվում են, թե նոր հարաբերություն հաստատել Աստծո հետ և թե պահպանել նոր հարաբերություններ: Չղջման խորը զգացմունքը դա մնալու նվիրում է՝ Աստծուն և Աստծո համար:

▪ **«Ճշմարտությունն իմանալու համար»** Ճշմարտության ճանապարհը (*alētheia*) և լիակատար գիտություն (*epignosis*) չկա (1) հրեական ծագումնաբանությունների կամ (2) գնոստիկ շահարկումների մեջ, այլ Հիսուս Քրիստոսի ավետարանում (տես 2 Տիմ. 3: 7; 1 Տիմ. 2: 4; Տիտոս 1: 1): Տես Հատուկ Թեմա: Ճշմարտություն 1 Տիմ. 2: 4:

2:26 «զգաստանալու» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է (*ana + nēphō*) բարդ ձևն է *nēphalios* («աթափ») տերմինի, որը փոխաբերական կերպով օգտագործվում է «զգոն լինել» բառի համար (տես 1 Տիմ. 3: 2, 11; Տիտոս 2: 2):

▪ **«որից նորանք որսացուել են»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը «բռնել» + «կենդանի» բարդ տերմինն է, որն օգտագործվում էր կենդանիներին որսալու համար: Այստեղ օգտագործվում է ռազմագերի վերցնելու համար: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ և անմիջական կոնտեքստը բացահայտում է սատանային որպես գործակալ, իսկ կեղծ ուսուցիչներին և նրանց հետևորդներին, որպես բանտարկյալներ: Ինչպես որ ավետարանն է մարդկանց բռնում (տես Ղուկ. 5: 10), այնպես էլ չարը (տես 1 Տիմ. 3: 7):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ո՞րն է հովիվի հիմնական նպատակը:
2. Ինչու՞ է տառապանքը քրիստոնեության մի մասը:
3. Ինչու՞ է հարությունը այդքան կարևոր քրիստոնեական հավատքի համար:
4. Ինչի՞ մասին է հ.12: Ի՞նչ է դա նշանակում:
5. Ինչպե՞ս է Տիմոթեոսը վերաբերվում կեղծ ուսուցիչներին:
6. Ինչու՞ է հ.15 կարևոր բոլոր քրիստոնյաների համար:
7. Արդյո՞ք Աստված պարզևատրում է մարդկանց ապաշխարությունը: Եթե այդպես է, ապա ոմանց թե՞ բոլորի:
8. Ո՞վքեր են ընկել կեղծ ուսուցիչների և նրանց հետևորդների ցանցը: Ինչպե՞ս կարող են փախչել

2 ՏԻՄՈԹԵՈՍ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Վերջին Օրերի մարդկանց բնութագիրը	Վտանգավոր ժամանակներ և վտանգավոր մարդիկ	Հովիվը և Հոտը (2:14-4:5) 2:20-3:9	Վերջին Օրերը	Վերջին Օրերի վտանգները
3:1-9	3:1-9		3:1-9	3:1-5 3:6-9
Վերջին պատվերները Տիմոթեոսին (3:10-4:8)	Աստծո Մարդը և Աստծո Խոսքը		Վերջին հրահանգները (3:10-4:8)	
3:10-17	3:10-17	3:10-4:5	3:10-4:5	3:10-13 3:14-17

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան քննադատության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք զլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 3:1-9

¹Սա գիտացիր, որ յետի օրերումը չար ժամանակներ կ'գան: ²Որովհետև մարդիկ կ'լինին ինքնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայեռիչ, ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ, ³Անգութ, անհաշտ, բանասարկու, անժուժկալ, դաժան, անբարեսէր, ⁴Մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի

ցանկասեր քան թէ աստուածասեր: ⁵Որ աստուածպաշտութեան կերպարանքն ունին, բայց նորա զօրութիւնն ուրացած են. նորանցից էլ ետ քաշուիր: ⁶Որովհետեւ սորանցից են որ տունէ տուն են մտնում, եւ գերի անում մեղքերով բեռնաւորուած տկարամիտ կնիկներին, որ կերպ կերպ ցանկութիւններով վարուած են. ⁷Որ ամեն ժամանակ սովորում են, եւ երբէք դէպի ճշմարտութեան գիտութիւնը չեն կարողանում գալ, ⁸Այլ ինչպէս որ Յանէսը եւ Յամբէսը Մովսէսին հակառակ կեցան, այնպէս էլ սորանք են հակառակ կենում ճշմարտութեանը, մարդիկ՝ մտքով ապականուած, անպիտան հաւատքի համար: ⁹Բայց աւելի չեն յառաջանալ. Որ սորանց անմտութիւնն ամենին յայտնի կ'ըլլին. ինչպէս նորանցն էլ եղաւ:

3: 1 «յետի օրերումը» Այս ժամանակահատվածը մի քանի անուններով է հիշվում:

1. հետին օրերում, Թվ. 24:14; 2 Օր. 8:16; Դան. 2:28; 10:14
2. վերջին օրերում, Եր. 23:20; 30:24; 49:39; Եզ. 38: 8,16; Ով. 3: 5; Հովել 2:28 (Գործք 2:17); Հովհ. 6: 39,40,44,54; 11:24; 12:48; 2 Տիմ. 3: 1; Հակ. 5:3
3. հետին ժամանակում, 1 Պետ. 1: 5
4. ժամանակների վերջում, 1 Պետ. 1:20
5. հետին օրերում, 2 Պետ. 3: 3
6. վերջին ժամանակը, 1 Հովհ. 2:18

Վերջին օրերի վերջում «Տիրոջ օրն է» (այսինքն, «կատարում, ավարտ», Մատթ. 13: 39,40; 24:3; 28:20; Եբր. 9:26):

Միջկտակարանյան ժամանակաշրջանի հրեաները տեսնում էին երկու շրջան՝ ապստամբության և մեղքի ներկայիս ժամանակները (սկսած Ծննդոց 3) և Հոգու իշխանությունով Մեսիայի գալուստով սկսվող արդարության գալիք ժամանակաշրջանը: Հին Կտակարանը ընդգծում է Մեսիայի գալուստը դատաստանի և իշխանության մեջ հաստատելու նոր ժամանակաշրջանը: Այնուամենայնիվ, չկարողացան ակնհայտորեն տեսնել Հիսուսի առաջին գալուստը 1) Եսայիա 53-ի «Տառապող ծառան»; 2) Չաք. 9: 9 խոնարհը էշին նստած; 3) Չաք. 12:10 խոցվածը: Նոր Կտակարանի առաջընթաց հայտնությունից մենք գիտենք, որ Աստված պլանավորեց Մեսիայի երկու գալուստ: Մարմնացման (առաջին գալուստ) և երկրորդ գալուստյան միջև ընկած ժամանակահատվածը ներառում է երկու հրեական շրջանների համընկումը: Նոր Կտակարանում սա նշված է «վերջին օրեր» արտահայտությամբ: Մենք ավելի քան 2000 տարի է այս ժամանակահատվածում է: Տես Հատուկ Թեմա. Այս դարաշրջանն ու գալիք դարաշրջանը 1 Տիմ. 6:17: Վերջին օրերը հիմա են (տես Գործք 2: 16-17; Եբր. 1: 2; 1 Պետ. 1:20; 4: 7; 1 Հովհ. 2:18):

▪ **«չար ժամանակներ կ'գան»** Սա վերաբերվում է նոր ժամանակաշրջանի «ծնունդի ցավերին» (տես Մատթ. 24; Մարկ. 8:13; Դուկ. 21; Հո. 8: 22; 1 Տիմ. 4: 1):

Մեկնաբանների և աստվածաբանների միջև շատ քննարկումներ եղել են Տիրոջ գալուստյան ժամանակ մարդկային հասարակության վիճակի մասին: Ոմանց համար ավետարանի զորությունը և Հոգու գործը փոխում են մարդկային հասարակությունը դեպի լավը (հետհազարամյա/postmillennialism): Մյուսների համար Հին Կտակարանը և Նոր Կտակարանը կանխատեսում են մարդկային պատմության համար աղետալի եզրափակում (նախահազարամյա/premillennialism և ոչ հազարամյա/amillennialism):

2 Թեա. 2-ում Պողոսի քննարկումը «անօրինության մարդը», արտահայտում է տառապող չարիք և ապստամբություն, ինչպես 1 Տիմոթեոս 4 և 2 Տիմոթեոս 3: Հիսուսը կգա կարգ ու կանոն հաստատելու համար:

3: 2 «ինքնասեր» Ապստամբության մասին նմանատիպ ցանկ կարելի է տեսնել Հռ. 1: 28-32: Այս առանձնահատկությունը ապստամբ մարդու էությունն է: Սա բարդ տերմին է (հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ) կազմված սեր (*philos*) + ես, ինքնա (*auto* ավտո) բառերից (տես Փիլ. 2:21):

- **«արծաթասեր»** Տես ծանուցում 1 Տիմ. 3: 3 և 6: 10:
- **«ամբարտաւան»** Սա բնութագրում է մարդու պարծանքը կամ վստահությունը անձի հանդեպ (տես Հռ. 1:30; Հակ. 4: 16; 1 Հովհ. 2:16):
- **«հպարտ»** Սա նկարագրում է մեկին, ով կարծում է, թե գերազանց է և արտահայտում է այն խոսքերով և գործերով (տես Ղուկ. 1:51; Հռ. 1:30; Հակ. 4: 6; 1 Պետ. 5: 5): Հունական տերմինը *hyperēphanos* է: Տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Huper* բարդ բառը 1 Տիմ. 1:14.

Արևելահայերեն «հայեցիչ»
Արևմտահայերեն «հայեցիչ»

- NASB «չարախոս»**
- NKJV «հայեցող»**
- NRSV «վիրավորող»**
- TEV «անպատվող»**
- NJB «կռպիտ, անտաշ»**

Սա բառացիորեն նշանակում է «հայեցողներ»: Անորոշ է՝ արդյոք նրանք դեմ են արտահայտվել

1. Աստված / Քրիստոսի դեմ (տես 1 Տիմ. 1: 13,20; 6: 1; Հայտ. 16: 11; 21)
2. հրեշտակների դեմ (տես 2 Պետ. 2:10-12)
3. ուրիշ մարդկանց դեմ (տես 1 Տիմ. 6: 4; Տիտոս 3: 2; 1 Պետ.4: 4)

▪ **«ծնողների անհնազանդ»** Սա կարող է կապվել Տասը Պատվիրանների հետ (տես Ելից 20:12): Հրեաների համար ուժեղ ընտանիք նշանակում էր կայուն հասարակություն («Ձեր օրերը երկար լինեն երկրի վրա»): Ինքնավստահությունը միշտ վնասում է միջանձնային հարաբերությունները տանը, եկեղեցում, աշխատանքի վայրում և այլն:

▪ **«ապերախոս»** Սա «շնորհք» տերմինի բացասական ձևն է: Այս ցանկում մի քանի բառեր ունեն բացասական ԱԼՖԱ ՄԱՍՆԻԿ: Մրանք անշնորհակալ, ինքնակենտրոն, կործանիչ մարդիկ են:

▪ **«անսուրբ»** Սա *hosios* տերմինի բացասական ձևն է, որը վերաբերում էր մեկին, ով պահում էր Աստծո բոլոր օրենքները և, հետևաբար, մտածում էր, որ ինքը բարեպաշտ կամ անկեղծ է (տես Տիտոս 1: 8) և մաքուր, սուրբ (տես 1 Տիմ. 2: 8): *Hosios* օգտագործվում էր նկարագրելու Հիսուսին Գործք 2:27; 13:35 (մեջբերում Սաղ.16): Եբր. 7:26 դա Հիսուսի՝ մեր Քահանայապետի բնութագիրն է: Պողոսը օգտագործում է այն նկարագրելու իր իսկ գործողությունները Թեսաղոնիկեի հավատացյալների հանդեպ (տես 1 Թես. 2:10):

3:3
Արևելահայերեն «Անգութ»
Արևմտահայերեն «Անգութ»

NASB, NKJV «չսիրող»
NRSV «անմարդկային»
TEV «նրանք կլինեն անբարիացակամ»
NJB «անսիրտ»

Սա հունարեն բացասական տերմին է, որը նշանակում է բնական կապվածություն (տես Հո. 1:31): Այն վերաբերվում է մարդկային կամ ընտանեկան սիրո բացակայությանը:

Արևելահայերեն «անհաշտ»
Արևմտահայերեն «անհաշտ»

NASB «անհաշտ»
NKJV «չներող»
NRSV «անզուրթ»
TEV «անողորմ»
NJB «անհնազանդ»

Սա հունարեն տերմինի բացասական ձևն է, որը նշանակում է միություն կամ համաձայնություն (տես Հո. 1:31): Սա վերաբերվում է այն մարդկանց, ովքեր չեն պատրաստվում փոխել կամ վերականգնել հարաբերությունները:

- **«բանսարկու»** Սա հունարեն բառ է «զրպարտողների» համար (*diabolo*), որը նաև սատանայի (եբրայերեն) կամ Դևի/Սատանայի (հունարեն) տերմինն է: Տես ծանուցում 1 Տիմ. 3:11.

Արևելահայերեն «անժուժկալ»
Արևմտահայերեն «անժուժկալ»

NASB, NKJV «առանց ինքնակառավարման»
NRSV, NJB «անբարոյական, սանձարձակ»
TEV «բռնի, դաժան»

Սա հունարեն *kratos* տերմինն է, որը նշանակում է «զորություն, ուժ, հզորություն» բացասական իմաստով: Այն հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ: Այս մարդիկ ինքնատիրապետում չունեն (տես Մատթ. 23:25; 1 Կոր. 7:5):

- **«դաժան»** Սա հունարեն «մեղմ, հեզ» տերմինն է բացասական իմաստով: NJB թարգմանության մեջ կա «կոպիտ, անտաշ» բառը: Այն հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ:

- **«անբարեսեր»** Սա հունարեն *philos + agathos* բարդ բառն է (այսինքն, լավը սիրողը, տես Տիտոս 1: 8) բացասական իմաստով: Այն հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ: Այս մարդիկ թշնամի են այն ամենին ինչն բարի է և առաքինի:

3: 4 «Մատնիչ» Սա «հանձնել» հունարեն բարդ բառն է, որը որպես իդիոմա օգտագործվել է «դավաճան» բառի համար (տես Դուկ. 6:16; Գործք 7:52):

- **«յանդուզն»** Այս հունարեն տերմինը *pros + pipto* բարդ միացություն ունի, որը որպես իդիոմա օգտագործվում է՝ չմտածել այլ անտրամաբանորեն գործողություն կատարել (տես Գործք 19:36):

Արևելահայերեն «գոռոզ»
Արևմտահայերեն «գոռոզ»

NASB «ինքնահավան»
NKJV «ամբարտավան, մեծամիտ»
NRSV «փքված ինքնահավանությամբ»
TEV «փքված հպարտությամբ»
NJB «հպարտությամբ բռնված»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է արտաքին օբյեկտի կողմից բերված վիճակ, այստեղ՝ չարի: Դա իդիոմա է, որը նշանակում է խաբեությամբ կուրացած լինել (տես 1 Տիմ. 3:6; 6: 4):

- **«աւելի ցանկասէր քան թէ աստուածասէր»** Պողոսը մի քանի բարդ կապակացություններ է օգտագործել *philos* բառի հետ.

1. ինքնահավաններ (2 Տիմ. 2: 2)
2. փռոզ սիրողներ (2 Տիմ. 2: 2)
3. բարին չսիրողներ (2 Տիմ. 3: 3)
4. հաճույք սիրողներ (2 Տիմ. 3: 4)
5. Աստծուն սիրողներ (2 Տիմ. 3: 4)

Փոխարենը կենտրոնանալու Աստծո և Նրա կամքի վրա, այդ մարդիկ կենտրոնանում են իրենց և իրենց կամքի վրա (տես Փիլ. 3:19):

3: 5 «աստուածպաշտութեան կերպարանքն ունին, բայց նորա զօրութիւնն ուրացած են» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է (տես Ես. 29:13; Հռ. 2:20; Տիտոս 1:16): Սա կամային ինքնորոշման հաստատված վիճակ է: Համակարգված կրոնը կարող է լինել դաժան տիրակալ: «Աստվածպաշտություն» տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 4: 7:

- **«նորանցից էլ ետ քաշուիր»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է(տես 2 Թեմ. 3: 6): Տիմոթեոսը պետք է կամավոր և շարունակաբար խուսափի այդպիսի մարդուց: Սա ակնհայտ վերաբերվում է կեղծ ուսուցիչներին և նրանց հետևորդներին (տես 2 Տիմ. 2:19,20):

3: 6 «տորանցից են որ տունէ տուն են մտնում» Բառացիորեն սա «զրպարտիչ, բամբասանք» է (տես Մատթ. 7:15; Հուդա 1: 4): Տերմինը հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ: Այս կեղծ ուսուցիչները օգտվում էին այդ տնային տնտեսուհիների անտեղյակությունից և անզգոնությունից:

- **«գերի անում»** Սա ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅ է: Սա բառացիորեն նշանակում է «բռնել նիզակի միջոցով» (տես Եփ. 4: 8; Հայտ. 13:10): Կեղծ մարգարեներ շարունակում են օգտագործել այս ռազմավարությունը՝ գայթակղել ընտանիքներին կնոջ միջոցով, որն օրվա ընթացքում մնում և աշխատում էր տանը ժամերով:

Արևելահայերեն «տկարամիտ կնիկներին»
Արևմտահայերեն «տկարամիտ կիները»

NASB, TEV,

NET «թույլ կանայք»

NKJV «ղյուրահավատ կանայք»

NRSV, NJB «հիմար կանայք»

Սա *gunaikaria* է, որը *gunē* (կին) բառի փոքրիկ ձևն է: Ճիշտ ինչպես պետք է դա հասկանալ, կասկածելի է, բայց կարծես թե բացասական նշանակություն ունի (տես BAGD 168): Մնացած 2 Տիմ. 3: 6 և 2 Տիմ. 3: 7-ը «փոքրիկ կանանց» նկարագրություններն են: Դա Նոր Կտակարանում հանդիպում է միայն այստեղ:

Անորոշ է, թե արդյոք դրանք եկեղեցու կանայք են թե համայնքի կանայք (տես Տիտոս 3: 3 և 1 Տիմ. 5: 6):

▪ **«մեղքերով բեռնատրուած»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա կարծես կապված է չարի կողմից գայթակղված «երիտասարդ, փոքր» այրիների հետ (տես 1 Տիմ. 5: 6):

▪ **«կերպ կերպ ցանկութիւններով վարուած են»** Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա ենթադրում է, որ կանայք անընդհատ առաջնորդվում են չարի ազդակներով (տես Տիտոս 3:3):

3: 7 Անմիջական կոնտեստը և ՉԵԶՈՔ ՀՈԳՆԱԿԻ ԲԱՅԱԿԱՆԸ երկու անգամ ձևավորում է 2 Տիմ. 3: 6-ում և երկու անգամ՝ 2 Տիմ. 3: 7-ում, հաստատելով նախորդը, որպես 2 Տիմ. 3: 6 «տկար կանայք»: Ինչպիսի ողբերգական նկարագրություն մեղքի և մանիպուլյացիայի մասին:

Ընդհանրապես յուրաքանչյուր ժամանակաշրջանի կեղծ ուսուցիչները բնութագրվում են

1. սեռական շահագործում
2. ֆինանսական շահագործում
3. հայտնության շահագործում (Աստված խոսում է միայն ինձ հետ)

3: 8 «Յանկը և Յամբէը» Ավանդությունն ասում է, որ սրանք փարավոնի կախարդների անուններն են եղել Ելից 7: 11,22; 8: 7,18; 9:11: Նրանց անունները գալիս են ռաբիական հուդայականությունից, մասնավորապես, Հովնաթանի Թարգումից, բայց այդ անունները նշված չեն Հին Կտակարանում: Պողոսը հաճախ օգտագործում է ռաբիական ավանդույթները (տես 1 Կոր. 10:4):

▪ **«այնպէս էլ սորանք են հակառակ կենում ճշմարտութեանը»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս կեղծ ուսուցիչները իշխանության հետ խնդիրներ ունեն և շարունակում են հակառակվել Առաքելական ուսմունքներին: Տես Հատուկ Թեմա: Ճշմարտություն 1 Տիմ. 2: 4:

Արևելահայերեն «մարդիկ՝ մտքով ապականուած»

Արևմտահայերեն «մտքով ապականած մարդիկ»

NASB «անբարոյական մտքով մարդիկ»

NKJV «աղավաղված մտքերով մարդիկ»

NRSV «այդ մարդիկ, աղավաղված մտքով»

TEV «մարդիկ, որոնց մտքերը չի գործում»

NJB «նրանց մտքերը ապականված են»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է *kata + patheirō* բարդ կառուցվածքով, որը նշանակում է մարդ, ով դարձել է և գնալով շարունակում է փչանալ արտաքին գործոնի միջոցով

(այսինքն, Սատանայի կամ դիվայինի միջոցով), ինչի արդյունքում նրանք ինքնակամ մերժում են ճշմարտությունը (տես 1 Տիմ. 6:5; Տիտոս 1:15):

Արևելահայերեն «անպիտան՝ հաւատքի համար»
Արևմտահայերեն «հաւատքի մեջ անպիտաններ են»

- NASB «մերժեցին հավատքը»
- NKJV «անհարգի վերաբերմունք հավատքի հանդեպ»
- NRSV «խարդախություն հավատքի մեջ»
- TEV «ով հավատքի մեջ ձախողումներ ունի»
- NJB «նրանց հավատքը կեղծ է»

Սա *dokimazō* տերմինն է՝ փորձության մասին լրացուցիչ, սակայն բացասական իմաստով, հավանություն ստանալու ակնկալիքով: Դրանք ձախողել են հավատքի փորձությունը (տես Հռ. 1:28; 1 Կոր. 9:27; 2 Կոր. 13: 5-7; Տիտոս 1:16; Եբր. 6:8): Սա նավարկության ենթարկված հավատքի սարսափելի նկարագրություն է: Տես Հատուկ Թեմա: «Փորձել» բայի հունարեն տերմինները և դրանց լրացուցիչ իմաստները 1 Տիմ. 6: 9; ինչպես նաև [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒԽՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ \(APHISTĒMI\)](#) 1 Տիմ. 4: 1:

3: 9 «աւելի չեն յառաջանալ» Սա կարող է վերաբերել կեղծ ուսուցիչներին և նրանց հետևորդներին, քանի որ նույն ԲԱՅՆ է օգտագործվում 2 Տիմ. 2:16 և 3:13: Նրա արմատն իմաստն է՝ առաջանալ ինչ-որ բանի մեջ (այսինքն, 2:16, աստվածապաշտության մեջ և 3:13 խաբեությամբ և խաբվելով):

▪ **«սորանց անմտութիւնն ամենին յայտնի կ'լինի»** «Իրենց պտուղներից դուր կճանաչեք նրանց» (տես Մատթ. 7:20; 1 Տիմ. 5:24): Հավիտենական կյանքը տեսանելի հատկանիշներ ունի, ինչպես նաև կեղծ հավատքը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 3:10-17
¹⁰Բայց դու հետեւեցիր իմ վարդապետութեանը, վարմունքին, դիտաւորութեանը, հաւատքին, երկայնմտութեանը, սէրին, համբերութեանը, ¹¹Հալածմունքներին, չարչարանքներին. Ինչպէս որ եղան ինձ Անտիոքումը եւ Իկոնիոնումը եւ Լիւստրայումը. Ինչպիսի հալածանքների համբերեցի. եւ ամենիցն ինձ ազատեց Տէրը: ¹²Եւ ամենը որ կամենում են աստուածապաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսումը, հալածանք պիտի կրեն. ¹³Բայց չար եւ խաբեբայ մարդիկն յառաջ կ'գնան չարութեան մեջ, մոլորեցնելով եւ մոլորելով: ¹⁴Բայց դու հաստատ կաց նորանցում, որ սովորեցիր եւ հաւատացիր. Եւ գիտենալով թէ ումից սովորեցիր. ¹⁵Եւ որ մանկութիւնիցդ սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար այն հաւատքի ձեռովն որ Քրիստոս Յիսուսումն է: ¹⁶Ամեն Գիրք աստուածաշունչ են եւ օգտակար, վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ ուղղելու, եւ արդարութեան իրատելու համար. ¹⁷Որ Աստուծոյ մարդը կատարեալ լինի ամեն բարի գործերի համար պատրաստուած:

3: 10-11 Համար 10-ը հակասում է կեղծ ուսուցիչների կյանքին և նախապատվություններին: Պողոսը թվարկում է այն բաները, որոնք Տիմոթեոսը կհիտում է իր հետ ծառայության մեջ.

1. Պողոսի Առաքելական ուսմունքը (տես 1 Տիմ. 4:6)
2. Պողոսի կենսակերպը
3. Պողոսի նպատակը
4. Պողոսի հավատքը (տես 1 Տիմ. 6:11)

5. Պողոսի համբերությունը
6. Պողոսի սերը (տես 1 Տիմ. 6:11)
7. Պողոսի հաստատակամությունը (տես 1 Տիմ. 6:11)
8. Պողոսի հալածանքները
9. Պողոսի տառապանքները (տես 1 Կոր. 4: 10-13; 2 Կոր. 4: 7-11; 6: 3-10; 11: 23-28)

2 Տիմ. 3: 10-11 բոլոր ԲԱՅԵՐԸ ԱՕՐԻՍԵՆ: Պողոսը խորհում էր իր միսիոներական ճամփորդությունների մասին և թե ինչպես է Տերը նրան փրկել ամեն հանգամանքներում: Նա այս խրախուսանքը փոխանցում է Տիմոթեոսին հիշեցման միջոցով:

3:11 «Անտիոքումը եւ Բկոնիոնումը եւ Լիստրայումը» Գործք 13 և 14-ից մենք գիտենք, որ սա Տիմոթեոսի տան բնակավայրն էր:

3:12 Սա ցնցող համար է ժամանակակից արևմտյան հավատացյալների համար: Մեր մշակույթը պահպանվել է քրիստոնեության հետ կապված շատ հալածանքներից: Սակայն հալածանքի պակասի պատճառով էլ իշխանության և աստվածապաշտության պակաս է եղել: Հիսուսը կատարելագործվել էր Իր տառապանքի միջոցով (տես Եբր. 5: 8): Այն ամենը, ինչ Աստված օգտագործում է Իր զավակների մեջ Քրիստոսանմանություն զարգացնելու համար, ժամանակակից արևմուտքցիները փախչում են դրանցից: Առողջությունը, հարստությունը և բարգավաճման շարժումը բնութագրում է մեր փչացած, փշրված մշակույթը:

Ուշադրություն դարձրեք, որ տեքստում ասվում է «բոլորը»: Հալածանքը նորմալ երևույթ է Աստծո զավակների համար, ովքեր ձգտում են ապրել Նրա համար այս մեղավոր աշխարհում: այո, նորմալ երևույթ է (տես Մատթ. 5: 10-12; Հովհ. 15: 18-21; 16: 1-2; 17:14; Գործք 14:22; Հռ. 5: 3-4; 8:17; 2 Կոր. 4: 16-18; Փիլ. 1:29; 2 Տիմ. 1: 8; 2: 3; 3:12; 1 Թես. 3: 3; Հակ. 1: 2-4; 1 Պետ. 4:12-19):

Մենք չպետք է հալածանք փնտրենք, բայց մենք պետք է պատրաստ լինենք դրան: Եթե մենք ամեն օր մահանանք Քրիստոսի համար (տես 2 Կոր. 5: 14-15; Գաղ. 2:20; 1 Հովհ. 3:16), ապա ֆիզիկական մահը մեզ այլևս չի վախեցնի:

3:13 «չար եւ խաբեբայ մարդիկն» Այս կեղծ ուսուցիչները խաբեբաներ էին կեղծ կախարդներին նման (տես 2 Տիմ. 3:8):

- **«յառաջ կ'գնան»** Սա նույն ԲԱՅՆ է, ինչ որ 2 Տիմ. 2:16.
- **«մոլորեցնելով»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Նրանք ուրիշներին շեղում էին ճանապարհից, ինչպես որ իրենք էին չարի կողմից տարված:
- **«եւ մոլորելով»** Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Նրանք, ովքեր բռնված էին մեղքի, ես-ի և սատանայի կողմից, հակված են ուրիշներին ծուղակը գցել:

3:14 «հաստատ կաց նորանցում, որ սովորեցիր» Սա հակադրություն է 2 Տիմ. 3:13 և քաջալերանքի շարունակություն և 2 Տիմ. 3: 10-12: Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես 2 Տիմ. 2:13; Տիտոս 1:9):

3:15 «մանկութիւնիցդ» Սա ցույց է տալիս Տիմոթեոսի կրոնական կրթությունը իր ընտանիքում (տես 2 Տիմ. 1:5): Անորոշ է, թե դա վերաբերում է հուդայականությանը թե քրիստոնեությանը:

- **«սուրբ գրքերը»** Սա կարող է ընդգրկել ավելին, քան պարզապես միայն Հին Կտակարանը, բայց 16 համարը ցույց է տալիս, որ Հին Կտակարանը այն է, ինչ նկատի է առնված այստեղ:
- **«որ կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար»** Սա ցույց է տալիս Սուրբ Գրքի հիմնական նպատակը մարդկության փրկության մեջ: Այն նաև ցույց է տալիս մեզ փրկության մեխանիզմը, որը մարդկության հավատքն է Աստծո Մեսիայի հանդեպ: Սա առաքելական քարոզչության (*kerygma*) էությունն է: Սակայն 17 համարը ցույց է տալիս, որ Սուրբ Գիրքը (որը այս տեքստում պետք է վերաբերվի Հին Կտակարանին, քանի որ Նոր Կտակարանը դեռևս ամբողջական չէր կամ շրջանառության մեջ չէր) ունի ևս մեկ հաջորդական նպատակ՝ սպառազինել սուրբերին՝ Քրիստոսանման ապրելակերպի համար: Պողոսը հաճախ օգտագործեց Հին Կտակարանը՝ խրախուսելով հավատացյալներին ապրել աստվածահաճո կյանքով: Հին Կտակարանը չի գործում «արդարացման» համար (տես Գաղ. 3), սակայն այն գործում է «սրբագործման» համար: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 1: 8:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ KERYGMA

Քրիստոնեության մասին այնքան շատ տեսակետներ կան: Մեր օրերը կոչվում են կրոնական բազմակարծություն/պլուրալիզմ, ինչպես առաջին դարում: Անձամբ ես լիովին ներառում եմ և ընդունում բոլոր այն խմբերը, ովքեր պնդում են, որ ճանաչում և վստահում են Հիսուս Քրիստոսին: Մենք երբեմն չենք համաձայնվում այս կամ այն հարցի շուրջ, բայց հիմնականում քրիստոնեությունը ամբողջը Հիսուսի մասին է: Այնուամենայնիվ, կան խմբեր, որոնք պնդում են, որ քրիստոնյա են, որոնք թվացյալ են «կարծես թե» կամ «նորահավատ ակտիվիստ»: Ինչպե՞ս կարող եմ ասել տարբերությունը:

Լավ կան երկու եղանակներ.

Ա. օգտակար գիրք է *The Kingdom of the Cults* by Walter Martin իմանալու համար, թե արդի աղանդավորական խմբերն ինչի են հավատում (իրենց տեքստերից):

Բ. Վաղ եկեղեցու քարոզները, հատկապես Պետրոս և Պողոս առաքյալների, Գործքում, մեզ տալիս են հիմնական ուրվագիծ, թե ինչպես են առաջին դարի ներշնչված հեղինակները քրիստոնեությունը ներկայացրել տարբեր խմբերի: Այս վաղ «հոչակումը» կամ «քարոզելը» (որոնց ամփոփումն է Գործքը) հունարեն կոչվում են *kerygma*: Հիսուսի մասին ավետարանի հիմնական ճշմարտությունները Գործք Առաքելոց գրքից.

1. կատարում է շատ Հին Կտակարանյան մարգարեություններ - Գործք 2: 17-21,30-31,34; 3: 18-19,24; 10:43; 13: 17-23,27; 33: 33-37,40-41; 26: 6-7,22-23
2. ՅԱՀՎԵԻ կողմից ուղարկված, ինչպես որ խոստացել էր - Գործք 2:23; 3:26
3. կատարեց հրաշքներ, հաստատելու Իր ուղերձը և հայտնելու Աստծո գույթը - Գործք 2:22; 3:16; 10:38
4. հանձնվել, մերժվել - Գործք 3: 13-14; 4:11
5. խաչված - Գործք 2:23; 3: 14-15; 4:10; 10:39; 13:28; 26:23
6. հարություն առավ - Գործք 2: 24,31-32; 3: 15,26; 4:10; 10:40; 13:30; 17:31; 26; 23
7. բարձրացվեց Աստծու աջ կողմը նստեց - Գործք 2: 33-36; 3: 13,21
8. կրկին կգա - Գործք 3: 20-21
9. նշանակված Դատավոր - Գործք 10:42; 17:31
10. ուղարկեց Սուրբ Հոգին - Գործք 2: 17-18,33,38-39; 10: 44-47
11. Փրկիչ բոլոր նրանց համար, ովքեր հավատում են - Գործք 13: 38-39
12. ուրիշ Փրկիչ չկա - Գործք 4:12; 10: 34-36

Ահա ճշմարտության այս առաքելական այտուներին արձագանքելու մի քանի եղանակներ.

1. Ապաշխարել - Գործք 2:38; 3:19; 17:30; 26:20
2. Հավատալ - Գործք 2:21; 10:43; 13: 38-39
3. Սկրտվել - Գործք 2:38; 10: 47-48
4. Ստանալ Հոգին - Գործք 2:38; 10:47
5. Բոլորը կարող են գալ դեպի- Գործք 2:39; 3:25; 26:23

Այս սխեման ծառայեց որպես վաղ եկեղեցու կարևոր հոչակումը, թեև Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ կարող են մի մասը թողնել կամ ընդգծել իրենց գրվածքներում այլ մանրամասներ: Մարկոսի ամբողջ Ավետարանը սերտորեն հետևում է *kerygma* -ի Պետրինի տեսանկյունին: Մարկոսը ավանդաբար համարվում է որպես Պետրոսի քարոզները կառուցող, քարոզված Հռոմում, գրված Ավետարանում: Մատթեոսը և Դուկասը հետևում են Մարկոսի հիմնական կառուցվածքին:

3:16 «Ամեն Գիրք» ՀՈՂ չկա: Այն կարելի է թարգմանել «ամեն մի սուրբ գիրք» (NET Bible), բայց դա կարող է ենթադրել, որ նրանք մեկուսացված ճշմարտություններ են (առաջարկություններ): Աստվածաշնչի ժամանակակից ուսումնասիրության պատուհասը թարգմանության «ապացույց-տեքստ» մեթոդն է, որը ոչնչացնում է գրական կոնտեքստը և ներշնչված հեղինակի մտադրությունը:

▪ **«աստուածաշունչ են»** Սա բառացիորեն նշանակում է «Աստված արտաշնչեց»: Թե ինչպես չի նշվում, իսկ ով-ը և ինչու-ն շատ կոնկրետ է: 2 Պետ. 1:21 Սուրբ Հոգին ներշնչանքի կենտրոնն է, բայց այստեղ այն Հայրն է: Երկուսն էլ ակտիվ են այս ոլորտում:

Սա այնպիսի կարևոր ճշմարտություն է, որ ես կցանկանայի ավելացնել իմ մեկնաբանությունները 2 Պետ. 1: 20-21-ից (տես www.freebiblecommentary.org):

1:20 «Գրքերի» Սա Նոր Կտակարանի այն մի քանի համարներից մեկն է, որը խոսում է Աստծո ինքնաբացահայտման մասին Հին Կտակարանում և Նոր Կտակարանի գրվածքներում (այսինքն, Աստվածաշունչ):

1. Մատթ. 5:17-19
2. 1 Կոր. 2: 9-13
3. 1 Թես. 2: 13
4. 2 Տիմ. 3:16
5. 1 Պետ. 1: 23-25
6. 2 Պետ. 1: 20-21
7. 2 Պետ. 3:15-16

Այս ամենի էությունն այն է, որ Աստվածաշունչը Աստծուց է և Աստծո մասին է, ոչ թե մարդուց: Աստված ներշնչեց գրողներին (տես 2 Պետ. 1: 20-21) և նրանց գրվածքները (տես 2 Տիմ. 3:16):

▪ **«իր յատուկ մեկնությունը չ'ունի»** Այս արտահայտությունը, անկասկած, արտահայտում է եկեղեցիներում կեղծ ուսուցիչների կողմից ստեղծված լարվածությունը: Հնարավոր է, որ նրանք մեջբերում էին Սուրբ Գիրքը և այնուհետև իրենց մեկնությունները դնում դրա վրա (ինչը նույնպես տարածված է այսօր):

Կոնտեքստում դժվար է իմանալ, արդյոք այս արտահայտությունը վերաբերում է (1) Հին Կտակարանի գրողներին թե (2) ժամանակակից կեղծ ուսուցիչներին: Եթե առաջին տարբերակն է, ապա այն խոսում է ներշնչանքի աստվածաբանական գաղափարի մասին (տես 2 Տիմ. 3:16): Հետևյալ

համարը, կարծես, հաստատում է այս մեկնաբանությունը: Եթե երկրորդ տարբերակն է, ապա խոսում է լուսավորման աստվածաբանական գաղափարի մասին (այսինքն, Հոգին առաջնորդում է հավատացյալներին Աստվածաշնչի թարգմանության մեջ):

Պետք է նշել, որ «հավատացյալի քահանայություն» ավետարանական գաղափարը սովորաբար ընկալվում է որպես Հոգու կողմից մարդուն տրված կարողություն՝ Աստվածաշունչը մեկնաբանելու համար: Այնուամենայնիվ, աստվածաշնչորեն, այս արտահայտությունը վերաբերում է եկեղեցուն, որպես Մեծ Պատվիրանը իրականացնող, տես 1 Պետ. 2: 5,9; Հայտ. 1: 6: Ուշադրություն դարձրեք, որ Հին Կտակարանում (տես Ելից 19: 6) և Նոր Կտակարանում «հավատացյալներին քահանայություն» արտահայտությունը ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ է (այսինքն, հավաքական), ոչ թե անհատական:

1:21 «Սուրբ Հոգուը շարժուած խօսեցան Աստուծոյ մարդիկը» Այս բառացիորեն նշանակում է «կրել, տանել», որը ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Մա ավելացնում է ճշմարտության շեշտադրումը, այն որ Աստվածաշունչը Աստծո խոսքն է, այլ ոչ թե մարդկային ուղերձ: Ճիշտ է, որ Աստվածաշունչը մարդկային բառերով է, բայց մարդիկ միանշանակ առաջնորդվում են Հոգով: Աստվածաշունչը ուժասպառ անող ճշմարտություն չէ, քանի որ ոչ մի մարդ չի կարող հասկանալ իրականության այդ մակարդակը, այլ դա վստահելի, ճշմարիտ ճշմարտություն է Աստծու մասին, մեղքի մասին, փրկության մասին, աստվածապաշտության մասին և հավիտենականության մասին:

Ներշնչանքի ճշգրիտ մեթոդը տարբերվում է:

1. թեովանի
2. Ուրիմ և Թումին / վիճակ գցել
3. երազներ
4. տեսիլքներ
5. տրանսի մեջ ընկնել
6. հրեշտակներ
7. խորհրդանշական գործողություններ
8. հատուկ միջոցառումներ և մեկնաբանություններ

Հարցերը մնում են, արդյոք (1) Աստված տալիս է բովանդակությունը, իսկ մարդ հեղինակը՝ կառուցվածքը, թե՞ (2) Աստված տալիս է երկուսն էլ:

▪ **«օգտակար ...»** Աստծո խոսքը (Սուրբ Գիրքը) բնութագրվում է երկու տերմիններով.

1. Աստված շնչեց
2. օգտակար
 - ա. (*pros*) վարդապետության համար
(1) դրական, 2 Պետ. 3:10; 1 Տիմ. 5:17
(2) բացասական, 2 Պետ. 4: 3
 - բ. (*pros*) հանդիմանության
 - գ. (*pros*) ուղղելու համար
 - դ. արդարության մեջ խրատելու (*pros*) համար (երեխայի խրատը, տես Եբր. 12: 5, 7, 8, 11)
 - ե. որ (*hina*) Աստծո մարդը կատարյալ լինի, 2 Պետ. 3:17
 - զ. սպառազինված (*pros*) ամեն բարի գործերի համար, 2 Պետ. 3:17

Այս տերմինը «Սուրբ Գիրք» միշտ վերաբերվում է Հին Կտակարանին: Հին Կտակարանը գործում է «սրբագործման» մեջ, բայց ոչ «արդարացման» (տես Գաղ. 3): Փրկությունը (արդարացում) Քրիստոսի հավատքի միջոցով է (տես 2 Պետ. 1:14):

Այս երկու համարները Մեծ Պատվիրանի երկու կողմերն են:

1. աշակերտներ պատրաստել (Մատթ. 28:19)

2. սովորեցնել նրանց (Մատթ. 28:20)

Սրանք միասին պետք է նայել: Նպատակը հասունությունն է (Քրիստոսանմանություն):

- **«արդարութեան»** Տես Հատուկ Թեմա: Տիտոս 2:12:

3:17 «Որ» Սա ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ է (այսինքն, *hina*), որը պետք է թարգմանվի «որպեսզի»:

- **«կատարեալ լինի»** Այս տերմինը Նոր Կտակարանում հանդիպում է միայն այստեղ: Այն նշանակում է «լիարժեք, ունակ, հմուտ կամ ամբողջովին պիտանի»:

- **«պատրաստուած»** «Կատարյալ» (*artios*) և «սպառազինված» (*exartizo*) ՀԱՄԱՆՄԱՆ ԲԱՅԵՐ են, որն օգտագործվում է նշանակված գործի համար ինչ-որ բան սպառազինելու համար (տես Եփ. 4:12): Սա խոսում է շնորհալի, գործունակ հասունության մասին (այսինքն Քրիստոսանմանություն) մասին, որը բերվում է Հոգու կողմից Գրքի միջոցով (2 Տիմ. 3:16): Փրկությունը գալիս է Քրիստոսի կատարած գործի և հավատքի / վստահության մարդկային արձագանքի միջոցով (տես 2 Տիմ. 3:15):

- **«ամեն բարի գործերի համար»** Այն, ինչի համար Աստված կանչում է մեզ (տես Եփ. 2), Նա նաև սպառազինում է մեզ դրա համար (տես 2 Տիմ. 2:21):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ինչի՞ն է վերաբերվում «վերջին օրեր» արտահայտությունը:
2. Ինչպիսի կեղծ ուսուցիչների մասին է խոսում Պողոսը: Նկարագրեք, թե ինչին էին նրանք հավատում:
3. Նշեք 9 բաներ, որ Պողոսը խնդրում է Տիմոթեոսին հետամուտ լինել 10-11-րդ համարներում:
4. Ի՞նչ են ասում 15-17-րդ համարները ներշնչման մասին:
5. Ինչպե՞ս է Կենդանի Խոսքը՝ Հիսուսը կապված գրավոր Խոսքի՝ Աստվածաշնչի հետ:

2 ՏԻՄՈԹԵՈՍ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Վերջին պատվերը Տիմոթեոսին (3:10-4:8)	Խոսքը քարոզիր	Հովիվը և հոտը (2:14-4:5)	Վերջին հրահանգները (3:10-4:8)	Պաշտոնական պատվեր
		3:10-4:5	3:10-4:5	
4:1-5	4:1-5			4:1-5
	Պողոսի վարդապետությունը	Վերջնական հորդորներ		Պողոսը իր կյանքի մայրամուտին
4:6-8	4:6-8	4:6-8	4:6-8	4:6-8
Անձնական հրահանգներ	Լքված Առաքյալը		Անձնական խոսքեր	Վերջնական խորհուրդ
4:9-15	4:9-16	4:9-15	4:9-13 4:14-15	4:9-15
4:16-18		4:16-18	4:16-18	4:16-18
	Տերը հավատարիմ է			
	4:17-18			
Վերջնական ողջույններ	Արի նախքան ձմեռը		Վերջնական ողջույններ	Հրաժեշտ և վերջնական բարեմաղթանքներ
4:19-22	4:19-21	4:19-21	4:19-21ա	4:19-21ա
	Հրաժեշտ		4:21բ	4:21բ
	4:22	4:22	4:22ա	4:22
			4:22բ	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ *(«Աստվածաշնչյան ընթերցանության լավ ուղեցույց»)*

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք գլուխը: Գտեք ենթակաները/թեմաները: Համեմատեք ձեր ենթակաները վերը նշված հինգ թարգմանությունների բաժանումների հետ: Պարբերությունը ներշնչված չէ, բայց այն բանալին է հասկանալու և հետևելու հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ առարկա/թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 4:1-5

¹Արդ այս վկայութիւնը դնում եմ Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի առաջին որ դատելու է կենդանիներին եւ մեռելներին իր յայտնութիւնումը ու թագաւորութիւնումը. ²Խօսքը քարոզիր. Վերայ հասիր թէ ժամանակին լինի թէ ժամանակից դուրս, յանդիմանիր, սաստիր, յորդորիր ամեն երկայնատութիւնով եւ վարդապետութիւնով: ³Որովհետեւ ժամանակ կ'գայ որ ողջամիտ վարդապետութեանը չեն համբերիլ. այլ իրանց յատուկ ցանկութիւնների համեմատ վարդապետներ կ'դիզեն իրանց վերայ, իրանց լսելիքների մարմաջելու պէս: ⁴Եւ իրանց լսելիքը ճշմարտութիւնիցը ետ կ'դարձնեն եւ առասպելների ետեւից կ'մոլորին: ⁵Բայց դու արթուն կաց ամեն բանի մէջ նեղութիւններ կրելով. աւետարանչի գործը գործիր. Քո պաշտօնը կատարիր:

4: 1 «այս վկայութիւնը դնում եմ» Պողոսը շարունակում է հանձնարարել Տիմոթեոսին առաջադրանք և նրան հորդորում է գործել (տես 1 Տիմ. 5:21; 6:13; 2 Տիմ. 2:14; 4:1): Հիշեք սա Պողոսի վերջին նամակն է, նախքան նահատակվելը (67թ. վերջին կամ 68թ. սկզբին):

- **«Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի առաջին»** Հայրը և Որդին կապված են իրար հետ այնպիսի քերականական ձևով, որն ընդգծում է նրանց հավասարությունը (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՂՈՒԹՅՈՒՆ](#) Տիմոս 3: 6): Եկեղեցու առաջնորդները ապրում և ծառայում են Աստծո և Նրա Քրիստոսի ներկայության մեջ:
- **«որ դատելու է»** Սա ՅԱՀՎԵԻ Հին Կտակարանյան անունն ու ֆունկցիան է, որն այստեղ օգտագործվում է Հիսուսի համար: Սա ցույց է տալիս Նրա լիակատար աստվածությունը (տես Մատթ. 25:31; Գործք 10:42; 17:31; Հռ. 2:16; 1 Պետ. 4: 5); ինչպես որ Քրիստոսն էր Հոր գործընկերը ստեղծագործության մեջ (տես Հովհ. 1: 3; 1 Կոր. 8: 6; Կող. 1: 16; Եբր. 1: 2), այնպես էլ Նա կլինի Հոր գործընկերը դատաստանի ժամանակ:
- **«կենդանիներին եւ մեռելներին»** Սա վերաբերում է Հիսուսի դատաստանին, որով պիտի դատվի ամբողջ գիտակից ստեղծագործությունը (տես Փիլ. 2:10): Նույն արտահայտությունը հանդիպում է Գործք 10: 42 և 1 Պետ. 4: 5: Ոմանք կենդանի կլինեն Երկրորդ Գալստյան ժամանակ (տես 1 Թես. 4: 13-18; ոմանք Տիրոջ հետ կլինեն (տես 2 Կոր. 5: 8), իսկ ոմանք էլ (ամբարիշտները) դժոխքում (տես Հայտ. 20:13; Մատթ. 11:23; Ղուկ. 16: 23):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՊՏՆՎՈՒՄ ՄԱՀԱՑԱՍՆԵՐԸ (*SHEOL/HADES, GEHENNA, TARTARUS*)

I. Հին Կտակարան

Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (գերեզման, դժոխք) (չկան համանման արմատներ և ստուգաբանությունն անորոշ է, BDB 982, KB 1368), որը ձև է վկայակոչելու մահը կամ գերեզմանը, հիմնականում Իմաստուն Գրականության և Եսայի մարգարեության մեջ: Հին Կտակարանում դա եղել է սովերոս, գիտակից, բայց տրտում վայր (տես Հոբ 10:21-22; 38:17):

Բ. *Sheol* -ը բնութագրվում է

1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ), 2 Օր. 32:22
2. դարպասներով բանտ, Հոբ 38:17; Սաղ. 9:13; 107: 18
3. չկա վերադարձ, Հոբ 7:9 (մահվան աքքադերեն անունը)
4. խավարի երկիր, Հոբ 10:21-22; 17:13; 18:18
5. լռության վայր, Սաղ. 28: 1; 31:17; 94:17; 115:17; Ես. 47: 5
6. կապված պատժի հետ, նույնիսկ մինչև Դատաստանի Օրը, Սաղ. 18: 4-5
7. կապված *abaddon* (կործանում, տես Հատուկ Թեմա: *Abaddon*. . . *Apollyon*), որի մեջ Աստված նույնպես ներկա է, Հոբ 26: 6; Սաղ. 139: 8; Ամովս 9: 2
8. կապված «Pit»-ի հետ (գերեզման), Սաղ.16:10; 88:3-4; Ես. 14:15; Եզ. 31:15-17
9. ամբարիշտը ողջ-ողջ իջնում է *Sheol*, Թվ. 16: 30,33; Հոբ 7:9; Սաղ. 55:15
10. հաճախ անձնավորվում է որպես մեծ բերանով կենդանի, Թվ. 16:30; Առ.1:12; Ես. 5:14; Ամբ. 2: 5
11. այնտեղ մարդիկ կոչվում են *Repha'im*, (այսինքն, «մեռածների հոգիները»), Հոբ 26:5; Առ. 2:18; 21:16; 26:14; Ես. 14: 9-11)
12. Սակայն ՅԱՀՎԵՆ ներկա է նույնիսկ այստեղ, Հոբ 26: 6; Սաղ. 139: 8; Առ. 15:11

II. Նոր Կտակարան

Ա. Եբրայերեն *Sheol* թարգմանվում է հունարեն *Hades* (անտեսանելի աշխարհ)

Բ. *Hades* բնութագրվում է (շատ նման է *Sheol*)

1. վերաբերում է մահվանը, Մաթ. 16:18
2. կապված է մահվան հետ, Հայտ. 1:18; 6: 8; 20: 13-14
3. հաճախ համանման է մշտական պատժի վայրին (*Gehenna* Գեհեն), Մատթ. 11:23 (Հին Կտակարանյան մեջբերում); Ղուկ.10:15; 16: 23-24
4. հաճախ համանման է գերեզմանին, Ղուկ. 16:23

Գ. Հնարավոր բաժանում (ռաբբիական)

1. արդարների մասը կոչվում է *Paradise*/դրախտ (իսկապես երկնքի մեկ այլ անուն, տես 2 Կոր. 12: 4; Հայտ. 2: 7), Ղուկ. 23:43
2. ամբարիշտների մասը կոչվում է *Tartarus*/տարտարոս, 2 Պետ. 2: 4, որտեղ պահվում են չար հրեշտակները (տես Ծննդոց 6; I Ենոք): Դա կապված է «Abyss/անդունդի» հետ, Ղուկ. 8:31; Հռ. 10:7; Հայտ. 9: 1-2,11; 11:7; 17:18; 20: 1,3

Դ. *Gehenna* Գեհեն

1. Արտացոլում է Հին Կտակարանյան արտահայտությունը «Հիննումի որդիների հովիտ», (Երուսաղեմից հարավ): Այն տեղը էր, որտեղ փյունիկիան կրակի աստծուն՝ Մոդոքին (*Molech* BDB 574) պաշտում էին երեխայի զոհաբերությամբ (տես 4 Թագ. 16: 3; 21: 6; 2 Մնաց. 28: 3; 33: 6), որն անթույլատրելի էր Ղն. 18:21; 20: 2-5.
2. Երեմիան այն փոխեց հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵ-ի

դատաստանի վայրի (տես Եր. 7:32; 19: 6-7): Այն դարձավ կրակի, հավիտենական դատաստանի վայր I Ենոք 90: 26-27 և Սիբ. 1: 103.

3. Հիսուսի օրերում հրեաներն այնքան էին ցնցված իրենց նախնիների երեխայի գոհաբերության հեթանոսական պաշտամունքից, որ նրանք այս տարածքը վերածեցին աղբանոցի Երուսաղեմի համար: Հիսուսի փոխաբերություններից շատերը հավիտենական դատաստանի մասին եկել է այս աղբանոցից (կրակ, ծուխ, որդեր, գարշահոտություն, տես Մարկ. 9: 44,46): Գեհեն տերմինը օգտագործվում է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ. 3: 6):

4. Հիսուսը օգտագործում է գեհենը

ա. կրակ, Մատթ. 5:22; 18: 9; Մարկ. 9:43

բ. մշտական, Մարկ. 9:48 (Մատթ. 25:46)

գ. կործանման, ոչնչացման վայր (և հոգին և մարմինը), Մատթ. 10:28

դ. զուգահեռ է *Sheol* -ին, Մատթ. 5: 29-30; 18: 9

ե. ամբարիշտները բնութագրվում են որպես «գեհենի որդիք», Մատթ. 23:15

զ. դատական մեղադրանքի արդյունք, Մատթ. 23:33; Ղուկ. 12: 5

է. Գեհենի գաղափարը զուգահեռ է երկրորդ մահվանը (տես Հայտ. 2:11; 20: 6,14) կամ կրակե լճին (տես Մատթ. 13: 42,50; Հայտ. 19:20; 20:10, 14-15, 21:8): Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց մշտական բնակության վայրը (*Sheol*) և չար հրեշտակների (*Tartarus*, 2 Պետ. 2: 4; Հուդա հ. 6 կամ անդունդին, տես Ղուկ. 8:31; Հայտ. 9 : 1-11; 20: 1,3):

ը. դա նախատեսված չէր մարդկանց համար, այլ սատանայի և նրա հրեշտակների, Մատթ. 25:41

Ե. Հնարավոր է, քանի որ համընկնում են *Sheol*, *Hades* և *Gehenna*, որ

1. իսկզբանե բոլոր մարդիկ գնում էին *Sheol/Hades*

2. նրանց փորձառությունը (լավ / վատ) խորանում է Դատաստանի Օրից հետո, սակայն ամբարիշտների տեղը մնում է նույնը (սա է պատճառը, որ KJV թարգմանված *hades* (գերեզման) որպես *gehenna* (դժոխք):

3. միակ Նոր Կտակարանյան տեքստը, որը նշում է տանջանքի մասին մինչև Դատաստանը, դա հետևյալ առակն է Ղուկ. 16:19-31 (Ղազարոսը և Հարուստը): *Sheol* նաև նկարագրվում է որպես պատժի վայր հիմա (տես 2 Օր. 32:22, Սաղ. 18: 1-5): Սակայն, չի կարելի հաստատել վարդապետություն առակի հիման վրա:

III. Միջանկյալ վիճակ մահվան և հարության միջև

Ա. Նոր Կտակարանը չի սովորեցնում «հոգու անմահություն», որը հանդիսանում է կյանքից հետո մի քանի հնագույն տեսակետներից մեկը:

1. մարդկային հոգիները գոյություն ունեն մինչև իրենց ֆիզիկական կյանքը

2. մարդկային հոգիները հավիտենական են ֆիզիկական մահից առաջ և հետո

3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտվում է որպես բանտ ու մահ, որը ազատ է արձակվում նախագոյության վիճակին

Բ. Նոր Կտակարանը ակնարկում է անմարմին վիճակը մահվան և հարության միջև

1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանության մասին, Մատթ. 10:28

2. Աբրահամը կարող է ունենալ մարմին հիմա, Մարկ. 12: 26-27; Ղուկ. 16:23

3. Մովսեսն ու Եղիան ունեն ֆիզիկական մարմին այլակերպության ժամանակ,

Մաթ. 17

4. Պողոսը պնդում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսին միացող հոգիները նախ կատանան իրենց նոր մարմինները, 1 Թեա. 4: 13-18
5. Պողոսը պնդում է, որ հավատացյալները կատանան իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, 1 Կոր. 15: 23,52
6. Պողոսը պնդում է, որ հավատացյալները չեն գնա *Hades*, բայց մահվան ժամանակ կլինեն Հիսուսի հետ, 2 Կոր. 5:6,8; Փիլ. 1:23: Հիսուսը հաղթել է մահին և արդարներին Իր հետ երկինք տարել, 1 Պետ. 3: 18-22.

IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում օգտագործվում է երեք իմաստներով,

1. երկրից վեր մթնոլորտը, Ծննդ. 1: 1,8; Ես. 42: 5; 45:18
2. աստղազարդ երկինքը, Ծննդ. 1:14; 2 Օր. 10:14; Մաղ. 148: 4; Եբ. 4:14; 7:26
3. Աստծո գահի տեղը, 2 Օր. 10:14; 3 Թագ. 8:27; Մաղ. 148: 4; Եփ. 4:10; Եբր. 9:24 (երրորդ երկինքը, 2 Կոր. 12: 2)

Բ. Աստվածաշունչը շատ բան չի բացահայտում հանդերձյալ կյանքի մասին, հավանաբար այն պատճառով, որ մեղավոր մարդկությունը անկարող է դա հասկանալ (տես 1 Կոր. 2: 9):

Գ. Երկինքը թե վայր է (տես Հովհ. 14: 2-3) և թե անձ (տես 2 Կոր. 5: 6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդ. 1-2; Հայտ. 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես Գործք 3:21; Հռ. 8:21; 2 Պետ. 3:10): Աստծո պատկերը (Ծննդ. 1: 26-27) վերականգնվել է Քրիստոսով: Այժմ Եդեմի պարտեզում մտերմիկ հարաբերությունը նորից հնարավոր է դարձել:

Այնուամենայնիվ, դա կարող է լինել փոխաբերական (երկինքը որպես մեծ, քառակուսի քաղաք Հայտ. 21: 9-27) և ոչ բառացի: 1 Կոր. 15 նկարագրում է ֆիզիկական մարմնի և հոգևոր մարմնի տարբերությունը, ինչպես հասուն բույսի սերմ: Կրկին 1 Կոր. 2: 9 (մեջբերում Ես. 64: 4 և 65:17) մեծ խոստում է և հույս: Ես գիտեմ, որ երբ մենք տեսնենք Նրան, Նրա նման կլինենք (տես 1 Հովհ. 3: 2):

V. Օգտակար ռեսուրսներ

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter*

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door*

▪ **«իր յայտնութիւնումը»** Բառացիորեն սա *epiphany* է: Այն տալիս է «պայծառություն, շքեղություն կամ փառք» գաղափարը: Այն կարող է արտացոլել Աստծո ներկայության Հին Կտակարանյան գաղափարը *Shekinah* փառքի ամպի մեջ Ելիցից հետո Իսրայելի պատմության անապատում թափառելու ժամանակաշրջանում: Սա բնութագրող բառ է հովվական նամակներում Երկրորդ Գալուստի համար (տես 1 Տիմ. 6:14; 2 Տիմ. 1:10; 4: 1,8; Տիտոս 2:11,13; 3: 4; 2 Թեա. 2: 8): Տես Հատուկ Թեմա: Տիտոս 2:13

Պողոսը խրախուսում է Տիմոթեոսին որոշ բաներ անել Դատաստանի օրվա / Հարության օրվա իրականության լույսի ներքո: Երկրորդ Գալուստը կոչված է խրախուսելու հավատացյալներին բոլոր ժամանակներում, չնայած դա իրականություն կլինի միայն մեկ սերնդի համար: Հավատացյալները պետք է ամեն օր ապրեն, կարծես թե վերջինը լինի կամ կարող է լինել վերջինը:

▪ **«իր թագաւորութիւնումը»** Սա վերաբերում է Աստծո թագավորությանը հավատացյալների սրտերում հիմա, որը կիրականանա բոլոր ստեղծագործության վրա (տես Մատթ. 6:10): Այստեղ

կրկին Աստծու Թագավորությունը նշանակված է Որդուն: Հիսուս Քրիստոսը նկարագրված է երեք վախճանաբանական ֆունկցիաներով՝ (1) Դատավոր, 2) Եկող և (3) Թագավոր:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԱՍՏՈՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հին Կտակարանում ՅԱՀՎԵԻ մասին մտածում էին, որպես Իսրայելի Թագավոր (տես 1 Թագ. 8: 7; Սաղ. 10:16; 24: 7-9; 29:10; 44: 4; 89:18; 95: 3; Ես. 43:15; 44: 6) իսկ Մեսիան ներկայացվում է որպես իդեալական թագավոր (տես Սաղ. 2:6; Ես. 9: 6-7; 11: 1-5): Բեթլեհեմում Հիսուսի ծնունդով (6-4մ.թ.ա) Աստծո թագավորությունը մտավ մարդկության պատմության մեջ նոր ուժով և փրկությունով («նոր ուխտ», տես Եր. 31:31-34; Եզ. 36:27-36):

1. Հովհաննես Մկրտիչը հռչակեց արքայության մոտ լինելը (տես Մատթ. 3: 2; Մարկ. 1:15):
2. Հիսուսը հստակ սովորեցրեց, որ արքայությունը ներկա էր Իր մեջ և Իր ուսմունքների մեջ (տես Մատթ. 4: 17,23; 10: 7; 12:28; Ղուկ. 10: 9, 11; 11:20; 17:21; 21:31-32): Սակայն արքայությունը նաև ապագան է (տես Մատթ.16:28; 24:14; 26:29; Մարկ. 9:1; Ղուկ. 21:31; 22:16,18):

Մարկոս և Ղուկաս սինոպտիկ զուգահեռներում մենք գտնում ենք «Աստծո արքայություն» արտահայտությունը: Հիսուսը հաճախ սովորեցրեց ներկա պահին մարդկանց սրտերում Աստծո թագավորության մասին, որը մի օր կհաստատվի ամբողջ երկրի վրա: Սա արտացոլված է Հիսուսի աղոթքում Մատթ. 6:10: Մատթեոսի Ավետարանը, գրելով հրեաներին, նախընտրեց այն արտահայտությունը, որ չօգտագործի Աստծո անունը (այսինքն, Երկնքի Թագավորությունը), իսկ Մարկոսն ու Ղուկասը գրեցին հեթանոսներին, օգտագործեցին ընդհանուր նշանակությունը օգտագործելով աստվածության անունը:

Սա Սինոպտիկ Ավետարաններում նման կարևոր արտահայտություն է:

Հիսուսի առաջին և վերջին քարոզները, և իր առակներից շատերը առնչվում էին այս թեմային: Սա խոսում է Աստծո այն թագավորության մասին, որը հիմա մարդկանց սրտերում է: Ջարմանալի է, որ Հովհաննեսը այս արտահայտությունն օգտագործում է ընդամենը երկու անգամ (և ոչ մի անգամ Հիսուսի առակներում): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանք» տերմինը բանալի փոխաբերություն է:

Այս լարվածության պատճառը Քրիստոսի երկու գալուստներն են: Հին Կտակարանը կենտրոնացած էր միայն Աստծո Մեսիայի մեկ գալուստյան վրա, որպես ռազմավար, դատավոր, փառավոր մուտք, բայց Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես տառապող ծառա Ես. 53 և հեզ թագավոր Ջաք. 9: 9: Հրեական երկու ժամանակաշրջանները (տես Հատուկ Թեմա: Այս դարը ու գալիք դարը), ամբարշտության դարը և արդարության նոր դարը համընկնում են: Հիսուսը ներկայումս տիրում է հավատացյալների սրտերում, բայց մի օր Նա կթագավորի բոլոր ստեղծագործության վրա: Նա կգա ինչպես Հին Կտակարանն է կանխատեսել (տես Հայտ.19): Հավատացյալներն ապրում են արդեն, բայց դեռ ոչ կապված Աստծո արքայության հետ (տես Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth*, էջ 131-134):

4: 2 «Խօսքը քարոզիր» Սա առաջինն է ինը ԱՕՐԻՍՏ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ շարքից: Մեր պատգամը (*logos*) Հիսուսն է (տես Կող. 4: 3): Նա է ավետարանը: Նա է «Խոսքը» (տես Հովհ.1: 1):

▪ **«Վերայ հասիր թե ժամանակին լինի թե ժամանակից դուրս»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Բառացիորեն սա նշանակում է «իր ժամանակին» (*eukairōs*) և «ժամանակից

դուրս» (*akairōs*): Մա նկարագրում է քրիստոնեության «մեծ պատվիրանը» (տես Մատթ. 28:18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8): Երբ կասկած կա բաժնեկցեք ավետարանը:

- **«յանդիմանիր»** Մա բառացիորեն նշանակում է «կանգնել դատարանի առջև՝ ապացուցելու համար» (տես 1 Տիմ. 5:20; Տիտոս 1:13; 2:15):
- **«սաստիր»** Մա ևս մեկ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես Ղուկ. 17: 3; 23:40):
- **«յորդորիր»** Մա ևս մեկ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Մա նույն արմատն է ինչ «խրախուսել» բառը: Հանդիմանել կամ խրատել առանց քաջալերելու և համբերության քրիստոնեական չէ (տես 2 Տիմ. 3:10; 1 Տիմ. 1:16):
- **«ամեն երկայնմտությիւնով»** Տես ծանուցում 1 Տիմ. 1:16:

4: 3 «Որովհետև ժամանակ կ'գայ» Մա արտացոլում է Պողոսի օրը, ինչ-որ իմաստով ամեն օր, և բացառապես վերջին օրերը (տես 2 Տիմ. 3: 1; 1 Տիմ. 4: 1-2):

- **«որ ողջամիտ վարդապետութեանը չեն համբերիլ»** Հովվական նամակներում բառերից շատերը նաև հանդիպում է Ղուկասի գրվածքներում: Հնարավոր է, որ Պողոսն այս նամակները գրի առնելու համար Ղուկասին որպես գրագիր է օգտագործել:
«Ողջամիտ» տերմինը նշանակում է «առողջ» և հաճախ օգտագործվել է Ղուկասի կողմից (տես Ղուկ. 5:31; 7:10; 15:27 և այլն): Դա վարդապետության և հավատքի շատ տարածված նկարագրություն է հովվական նամակներում (տես 1 Տիմ. 4: 6; 6: 3; 2 Տիմ. 1:13; 4: 8; Տիտոս 1: 9,13; 2: 1, 2,8):
- **«իրանց լսելիքների մարմաջելու պես»** Այս արտահայտությունը վերաբերում է կեղծ ուսուցիչներին (տես 2 Տիմ. 4: 4) և նրանց հետևորդներին: Նրանք լսում են միայն այն, ինչ ուզում են լսել:
- **«վարդապետներ կ'դիզեն իրանց վերայ»** Նրանք պարզապես ուզում են լսել
 1. նրանք, ովքեր համաձայն են իրենց հետ (տես Եր. 5:31)
 2. նրանք, ովքեր սովորեցնում են նոր և մտահայեցողական բաներ
 3. բազմաթիվ տարբեր ուսուցիչներ (միշտ էլ մասնակցում են նոր սեմինարի)

4: 4 «ես կ'դարձնեն... ետեւից կ'մուրրին» Առաջին տերմինը օգտագործվում է Տիտոս 1:14, որպես ճշմարտությունից շեղվել (տես 2 Թես. 2:11) կամ փախչել ճշմարտությունից 2 Տիմ. 1:15:

Երկրորդ տերմինը հաճախ օգտագործվում է հովվական նամակներում (տես 1 Տիմ. 1: 6; 5:15; 6:20; 2 Տիմ. 4: 4):

Այս երկու տերմինները ներկայացնում են Հին Կտակարանի արդարության գաղափարը որպես քանոն/չափման միավոր (կամ ուղիղ գիծ), մեղքի բոլոր տերմինները նշանակում են ստանդարտից շեղում: Այս կեղծ ուսուցիչները հեռանում են ողջամիտ վարդապետությունից և դառնում դեպի առասպելները:

- **«ճշմարտութիւնիցը»** տես Հատուկ Թեմա: Ճշմարտություն 1 Տիմ. 2: 4:

- **«առասպելների»** Այս գաղափարը հաճախ օգտագործվում է հովվական նամակներում (տես 1 1: 4; 4: 7; Տիտոս 1:14; 3: 9; 2 Պետ. 1:16): Դա հնարավոր է վերաբերում է
 1. Գնոստիկ *aeons* (հրեշտակային մակարդակները բարձր բարի աստծու և ավելի փոքր հոգևոր էակների միջև, որոնք ստեղծել են նյութը)
 2. Հրեական Մեսիական ծագումնաբանություն
 3. որոշ անկանոն «ավետարաններ»
 «Առասպել» -ի տարբեր իմաստների և դրանց լրացուցիչ իմաստների համար լավ քննարկում կարելի է տեսնել G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, էջ 219-242:

4: 5 Սա ևս մեկ հակադրություն է Տիմոթեոսի և կեղծ ուսուցիչների գործողությունների միջև:

Արևելահայերեն «արթուն կաց ամեն բանի մեջ»
Արևմտահայերեն «ամեն բանի մեջ արթու և կեցիր»

- NASB «զգաստ լինել բոլոր բաներում»
- NKJV «զգոն եղեք բոլոր բաներում»
- NRSV «միշտ սթափ եղեք»
- TEV «վերահսկեք ձեզ բոլոր հանգամանքներում»
- NJB «պետք է հաստատուն լինել բոլոր ժամանակներում»

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա չի վերաբերվում զինուց հեռու մնալուն, բայց հավասարակշռված լինելուն: Տես ամբողջական ծանուցում 1 Տիմ. 3: 2

Արևելահայերեն «նեղութիւններ կրելով»
Արևմտահայերեն «նեղութիւններու համբերէ՛»

- NASB «համբերել դժվարություններին»
- NKJV «համբերել վիշտերի մեջ»
- NRSV, TEV «համբերել տառապանքի մեջ»

Այս պարբերության մեջ կա երեք ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ շարք: Այս տերմինը 2 Տիմոթեոսում օգտագործվում է երեք անգամ (տես 2 Տիմ. 1: 8; 2: 3,9; 4: 5): Այն վերաբերում է հալածանքներին և զրկանքներին, որոնք լինում են ավետարանի ծառայության մեջ:

- **«աւետարանչի գործը գործիր»** Այս պարբերության մեջ սա երկրորդ ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ է: «Ավետարանիչ» ԳՈՅԱԿԱՆԸ Նոր Կտակարանում օգտագործվում է ընդամենը երեք անգամ:
 1. Ֆիլիպոսի չորս աղջիկները (տես Գործք 21: 8)
 2. տեղական եկեղեցու առաջնորդի պարզև (տես Եփ. 4:11)
 3. և այստեղ
 «Ավետարան» (*euangelion*) տերմինը բառացիորեն նշանակում է «բարի լուր»; ավետարանիչը (*euangelistēs*) մեկն է, ով բաժնեկցում է ավետարանը:
 Ավետարանիչը հոգևոր պարզև է եկեղեցու համար (տես Եփ. 4:11) իսկ ավետարանչությունը յուրաքանչյուր հավատացյալի պատասխանատվությունն է (տես 1 Պետ. 3:15: Կող. 4:6): Հավատացյալները ոչ միայն պետք է հաստատեն Հիսուսից ստացած այդ հանձնարարությունը (տես Մատ. 28:18-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8), այլ ապրեն օրեցօր այդ կյանքով:

- **«Քո պաշտօնը կատարիր»** Սա երրորդ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ Է: Ավետարանի ծառայությունը առանց ավետարանչության լիարժեք ծառայություն չէ (տես Կող. 4:17): Ավետարանչությունը Աստծո սիրտն է, Քրիստոսի զոհաբերության նպատակը և Հոգու նախնական առաջադրանքը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 4:6-8

⁶Որովհետև ես արդեն նուիրվում եմ, եւ իմ բաժնուելու ժամանակը հասած է: ⁷Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի. ⁸Այսուհետև մնում է ինձ արդարութեան պսակը, որ Տէրը կ'տայ ինձ այն օրումը՝ արդար դատաւորը. Եւ ոչ միայն ինձ, այլ եւ ամենին, որ սիրեցին նորա յայտնութիւնը:

4: 6 «նուիրվում եմ» Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Այս արտահայտությունն օգտագործվում է Փիլ. 2:17 Հին Կտակարանում գինու զոհաբերության համար (տես Ելից 29:40; Թվոց 15: 4-7,9-10; 28: 7,10,14,15,24): Պողոսը տեսավ իր կյանքը որպես զոհ Քրիստոսի համար:

- **«իմ բաժնուելու ժամանակը հասած է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Այս տերմինը *analysis* (անգլերեն «վերլուծություն») հանդիպում է Նոր Կտակարանում միայն այստեղ, սակայն ԲԱՅԻ ձևը մի քանի անգամ օգտագործվում է իր նավահանգստից արձակված նավի համար (տես Ղուկ. 12:36): Փիլ. 1:23 սա օգտագործվում է փոխաբերականորեն մահվան համար: Սա Պողոսի վերջին նամակն է նախքան գլխատվելը 67-68թթ. միջև (Ներոնը ինքնասպան է եղել 68թ.):

4: 7 «Բարի պատերազմը պատերազմեցի» Սա երեք ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆՆԵՐԻՑ առաջինն է: Պողոսն օգտագործեց մարմնամարզական (1 Կոր. 9:27; Փիլ. 3:13-14) և ռազմական (տես Եփ. 6: 10-18) փոխաբերություններ՝ իր ծառայությունը նկարագրելու համար: Այն, ինչ նա քաջալերեց Տիմոթեոսին անել (տես 1 Տիմ. 1:18; 6:12), ինքը դա արել էր:

- **«ընթացքը կատարեցի»** Սա երկրորդ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆՆ Է: Պողոսը գիտեր, որ իր մահը մոտ է: Նա կատարել էր Անանիայի մարգարեությունը Գործք 9: 15-ում (տես Գործք 26:32): Նա քարոզել էր նշված բոլոր կատեգորիաներին, իսկ հիմա նաև Կայսրին:

- **«հաւատքը պահեցի»** Սա ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Դա վերաբերում է

1. վարդապետությանը
2. հավատարմությանը
3. կանոնների պահպանման համար նախատեսված մարմնամարզության փոխաբերություն (տես 1 Կոր. 9:27)

4: 8 «արդարութեան պսակը» Սա կամ 1) ոչ թե մեր, այլ Քրիստոսի տված արդարությունն է, և/կամ 2) հավատացյալների Քրիստոսանման ապրելակերպը: Այս տերմինը վերաբերում է հաղթանակած մարզիկ դափնեպսակին: Այս հունարեն բառից ստանում ենք անգլերեն «Ստեփան» անունը: Նոր Կտակարանում հավատացյալներին տրվելիք մի քանի պսակներ կան.

1. անապականելի պսակ/թագ (1 Կոր. 9:25)
2. արդարության պսակը (2 Տիմ. 4:8)
3. կյանքի պսակը/թագը (Հակ. 1:12; Հայտ. 2:10)
4. փառքի պսակը (1 Պետ. 5: 4)

5. ոսկե պսակը (Հայտ. 4: 4)

Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ](#) Տիտոս 2:12.

- **«որ Տէրը... արդար դատաւորը»** «Տեր» տերմինը կարող է կիրառվել ՅԱՀՎԵԻՆ, քանի որ Նա կոչվում է Դատավոր (տես Ծննդ. 18:25; Սաղ. 5:6; 94:2; Հովել 3:12; Եբր. 12:23; Հակ. 4:12) կամ Հիսուսին, քանի որ այս դատաստանը կապված է «Նրա հայտնվելու» հետ (տես 2 Տիմ. 1:10; 4: 1,8; 1 Տիմ. 6:14; Տիտոս 2:13): ՅԱՀՎԵՆ նշանակել է Հիսուսին որպես դատավոր (տես Սատթ. 25:31-46; Գործք 17:31; 2 Կոր. 5:10; տես ծանուցում 2 Տիմ. 4: 1):
- **«կ'տայ ինձ այն օրումը»** Սա ունի վերջին ժամանակի (վախճանաբանական) կողմնորոշում (տես 2 Տիմ. 1:18; 4: 1): Ակնհայտ է, որ Պողոսը հավատում էր, որ հավատացյալները մահանալուց հետո Տիրոջ հետ կլինեն (տես 2 Կոր. 5: 8), սակայն հատուցումներն ու լիակատար ընկերակցությունը սպասվում էր Հարության օրը (տես 1 Թես. 4: 13-18):
- **«այլ եւ ամենին, որ սիրեցին նորա յայտնութիւնը»** Սա վերաբերում է հավատացյալների Տիրոջ Երկրորդ Գալուստին անհամբերությամբ սպասելուն: Այլևս վախենալու չէ: Դա ուրախություն է: Դա ճշմարիտ քրիստոնեության նշանն է:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 4:9-15
 9Շտապիր որ շուտով ինձ մօտ գաս. Որովհետեւ Դեմասը թողեց ինձ եւ այս աշխարհքը սիրեց, եւ գնաց Թեսաղոնիկէ. 10Կրէսկէսը Գաղատիա. Տիտոսը՝ Դաղմատիա. Դուկասն է միայն ինձ հետ. 11Մարկոսին առնես հետդ բերես. Որ ինձ ծառայութեան համար պէտք է: 12Տիւֆիկոսին ուղարկեցի Եփեսոս: 13Վերարկուն, որ Տրովադայումն Կարպոսի մօտ թողեցի, գալիս բեր, գրքերն էլ, մանաւանդ մագաղաթները: 14Աղեքսանդրոս դարբինն ինձ շատ չարութիւն արաւ. Տէրը նորան հատուցում տայ իր գործերի պէս: 15Դու էլ նորանից զգուշացիր. Որ նա շատ հակառակ կեցաւ մեր խօսքերին:

4: 9 «Շտապիր որ շուտով ինձ մօտ գաս» Պողոսը միայնակ էր (տես 2 Տիմ. 4:21; Տիտոս 3:12) և, հավանաբար ուներ տեսողության խնդիրներ (տես 2 Կոր. 12:7), ինչը դժվարացնում էր միայնակ մնալը:

4:10 «Դեմասը թողեց ինձ» Պողոսի բանտարկության պատմական կոնտեքստը, սպասելով գլխաստվելու, կարող է բացատրել Դեմասի գործողությունները: Անորոշ է, թե ինչպես է նա հեռանում Պողոսից՝ Քրիստոսի հանդեպ իր ունեցած հավատքից:

- **«սիրեց»** Այստեղ ԲԱՅԸ (ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) *agapaō* է: *agapaō* և *phileō* բայերը Նոր Կտակարանում հոմանիշներ են (ծանուցում Հովհ. 3:35; 5:20; 11: 3,5):
- **«այս աշխարհքը»** Սա բառացիորեն նշանակում է «այս ներկա ժամանակը»: Տես Հատուկ Թեմա 1 Տիմ. 6:17. Դեմասը նախընտրեց ներկան հավիտենականից: Այս աշխարհի քաշող բաները շատ ուժեղ են, բայց դա միայն անցողիկ է (տես 1 Հովհ. 2: 15-17):
- **«գնաց Թեսաղոնիկէ»** Համեմատեք Փիլիմոն 24-ը Գործք 20: 4-ի հետ: Արիստարքոսը և, հնարավոր է, Դեմասը Թեսաղոնիկեից էին:

- **«Կրեակէտը Գաղատիա»** Կեսկենսի կղզին տեղադրեց հունական ձեռագրերի փոփոխություն:
 1. Փոքր Ասիա (արևմտյան Թուրքիա) Գաղատիայի հռոմեական գավառը (MSS A, D, F, G)
 2. հարավային Ֆրանսիա, այնուհետև կոչվեց Գալ (Galatia, MSS Խ, C)
 3. Գալիլեա Պաղեստինում (տես Վուլգատ, Ղպտի և հայերեն տարբերակները)
 Հունարեն Նոր Կտակարանի United Bible Societies՝ չորրորդ հրատարակությունը (UBS⁴) տալիս է «Գաղատիա» (# 1) «Բ» վարկանիշ, որը նշանակում է գրեթե որոշակի: Եթե # 2-ն է, ապա կպաշտպաներ այն փաստը, որ Պողոսը այցելել է Արևելյան Միջերկրական Օռվի տարածքը:

- **«Տիտոսը՝ Դաղմատիա»** Նա Պողոսի Առաքել հավատարիմ օգնականներից մեկն էր (տես Կորնթ. 3: 2; 7: 6; 13,14: 8: 6,16,23; 12:18; Գաղ. 2:1,3; Տիտոս 1: 4): Դաղմատիան Հռոմեական գավառ էր Լիուրիկիայի հարավային մասում (տես Հռ. 15:19, նախկին Հարավսլավիան): Պողոսը քարոզեց այնտեղ Գործք 20:1: Մակեդոնիայի հյուսիսն է: Տիտոսի այս հանձնարարությունը վերջինն է, որ մենք լսում ենք Նոր Կտակարանում:

4:11 «Ղուկասն» Նա հեթանոս բժիշկ էր (տես Կող. 4:14; Փիլիմոն 1:24 և «մենք» դերանվան մեջ Գործքում): Հնարավոր է, որ բժիշկ տերմինը կարող էր պարզապես նշանակել «կրթված»: Նոր Կտակարանում նա միակ ոչ հրեա հեղինակն է (այսինքն, Ղուկասի Ավետարանը, Գործքը, և, հավանաբար, հովվական նամակների դպիրը):

- **«Մարկոսին»** Մա Հովհաննես Մարկոս է, որի տանն է մատուցվել Վերջին Ընթրիքը (տես Գործք 12:12): Նա ուղեկցում էր Պողոսին և Բառնաբասին առաջին միսիոներական ճանապարհորդության ժամանակ, բայց ինչ-որ պատճառով դուրս եկավ թիմից (տես Գործք 15:38): Պողոսն ու Բառնաբասը վիճաբանություն էին ունեցել երկրորդ միսիոներական ճանապարհորդությանը Մարկոսին իրենց հետ վերցնելու կապակցությամբ, որի արդյունքում երկու առանձին միսիոներական թիմեր առաջացան (տես Գործք 15: 36-41): Պողոսն ու Հովհաննես Մարկոսը հետագայում հաշտվեցին (տես Կող. 4:10):

4:12 «Տիմոթեոսին» Եփեսոսը եկեղեցի և քաղաք էր, որտեղ Պողոսն անցկացրեց առավելագույն ժամանակ և ջանք: Տիմոթեոսը Եփեսոսում էր, երբ Պողոսը գրեց 1 Տիմոթեոսը: Տյուբիկոսը Պողոսի վստահելի պատգամաբերն էր (տես Գործք 20:4; Կող. 4: 7; Եփ. 6: 21; Տիտոս 3:12), որը հավանաբար 2 Տիմոթեոսը Տիմոթեոսին տանողն էր, և, հավանաբար, Տիմոթեոսին փոխարինողը:

4:13 «Վերարկուն» Մա մեծ, ծանր հագուստ էր, որն օգտագործվում էր որպես բաճկոն, վերարկու, ինչպես նաև ձմռանը՝ որպես քնապարակ:

- **«Տրովադայումն»** Մա ժամանակակից արևմտյան Թուրքիայի ափին գտնվող նավահանգիստ էր: Դա Պողոսի «Մակեդոնիայի տեսիլքի» տեղանքն էր, որն արձանագրված է Գործք 16: 6-10: Ըստ երևույթին, Պողոսը որոշ ժամանակ աշխատել է այնտեղ:

- **«գրքերն էլ, մանաւանդ մագաղաթները»** Նույնիսկ Պողոսը սերտելու և կարդալու կարիք էր զգում: «Մագաղաթները» կենդանու ծեծած կաշվից էին, որոնք օգտագործվել են գրվածքների համար: Նրանց անունը վերցված է Պերգամայից, որտեղ նրանք հորինվել են: Մա շատ թանկ, բայց ամուր գրելու նյութ էր: Այն, հավանաբար, վերաբերում է Հին Կտակարանի գրքերին: «Գրքերը» կարող են վերաբերել նամակներին կամ իրավական փաստաթղթերին: Մակայն այս բոլորը կարծիքներ են:

4:14 «Աղեքսանդրոս» Սա ընդհանուր անուն էր, ուստի մենք համոզված չենք, թե նա եղել է

1. նույն անձը, որը նշված է Գործք 19: 33-34
2. 1 Տիմոթեոս 1-ում հիշատակված կեղծ ուսուցիչը, Հիմենոսի հետ միասին
3. ևս մեկ անհայտ Աղեքսանդրոս

Նա ավետարանի ընդդիմության մեկ այլ օրինակ է, անկախ նրանից դրսում թե եկեղեցու ներսում:

▪ **«Տերը նորան հատուցում տայ իր գործերի պէս»** Սա հոգևոր սկզբունք է: Աստված էթիկական և բարոյական է և այդպիսին է նաև Իր ստեղծագործությունը: Մարդիկ խախտում են Աստծու չափանիշները: Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք: Սա ճշմարիտ է հավատացյալների (բայց չի ազդում փրկության վրա) և անհավատների համար (տես Հոր 34:11; Սաղ. 28:4; 62:12; Առ. 24:12; Ժող. 12:14; Եր. 17:10; 32:19; Մատթ. 16: 27; 25: 31-46; Հռ. 2: 6; 14:12; 1 Կոր. 3:8, Գաղ. 6: 7-10; 2 Տիմ. 4: 14; 1 Պետ. 1:17; Հայտ. 2:23; 20:12; 22:12):

▪ **«Դու էլ նորանից զգուշացիր»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Եղեք անընդհատ զգոնության մեջ: Չարը ներկա է և արատավոր: Նա հարձակվում է թե դրսից և թե ներսից:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 4:16-18
¹⁶Ատեանումն առաջին անգամ պատասխանելիս՝ ոչ ով չ'կանգնեց իմ կողմը, այլ ամենքը ինձ թողեցին. թող չ'համարուի նորանց: ¹⁷Իսկ Տէրն ինձ մօտ կանգնեց, եւ զօրացրեց ինձ որ ինձանով քարոզութիւնը հաստատուի, եւ բոլոր հեթանոսները լսեն. եւ ես ազատուեցայ առիւծի բերանիցը: ¹⁸Եւ կ'փրկէ ինձ Տէրն ամեն չար բանից եւ կ'ազատէ կ'հասցնէ իր երկնային արքայութեանը. որին լինի փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

4:16 «առաջին անգամ պատասխանելիս» Այս հունարեն *apologia* բառից, մենք ստանում ենք անգլերեն «պաշտպանություն» բառը: Այն օգտագործվել է իրավական պաշտպանության առումով (տես Գործք 19:33; 22: 1; 26: 1,2, 24): Պողոսը պաշտպանեց, բացատրեց և քարոզեց ավետարանը մի քանի իրավական միջավայրերում, ինչպես Պաղեստինում, այնպես էլ Հռոմում (Գործք 9:15):

▪ **«ոչ ով չ'կանգնեց իմ կողմը, այլ ամենքը ինձ թողեցին»** Սա կարող է բացատրել 2 Տիմ. 4:10: Ինչպես վախը հալեցրեց Հիսուսի հետևորդների սրտերը՝ Նրա ձերբակալությունից հետո, այնպես էլ Պողոսի օգնականները սկսեցին վախով լցվել և լքեցին նրան (օրինակ՝ Դեմասը):

Պողոսի օրերում հռոմեական դատարանի համակարգում ֆորմալ դատավարությունից առաջ տեղի էր ունենում մեղադրանքների նախաքննությունը: Ըստ երևույթին, այս դատական գործընթացում ոչ ոք չի վկայում Պողոսի օգտին:

Կա հունարեն տարբերակ կապված ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ հետ:

1. ԱՆԿԱՍԱՐ - MSS A, C, D^{2,3}, F, G, L
2. ԱՕՐԻՍ - MSS α, D * (UBS⁴ տեքստում)

Bruce Metzger- ի տեքստային մեկնաբանությունը (էջ 649) նշում է, որ այս նույն խառնաշփոթը կարելի է տեսնել 2 Տիմ. 4: 10,13 և 20:

▪ **«թող չ'համարուի նորանց»** Պողոսը արտացոլում է խաչի վրա Հիսուսի խոսքերը (տես Դուկ. 23:34) և Ստեփանոսի խոսքերը Գործք 7: 60, սակայն նկատեք նաև 2 Տիմ. 4:14 արտահայտությունը:

4:17 «Տէրն ինձ մօտ կանգնեց» Հիսուսը խոստացավ, որ մեզ հետ կլինի Մատթ. 28:20: Նույն ԲԱՅՈՒՄ օգտագործվում է Պողոսի համար, որ քաջալերվում է գերբնական ներկայությամբ Գործք 23:11 և 27:23 (նաև ծանուցում Գործք 18: 9):

▪ **«էւ զօրացրեց ինձ»** Պողոսը հաճախ խոսում է Քրիստոսի իրեն զորացնելու մասին (տես Եփ. 3:16; Փիլ. 4: 13; Կող. 1:11; 1 Տիմ. 1:12; 2 Տիմ. 2: 1):

▪ **«որ ինձանով քարոզութիւնը հաստատուի»** Պողոսը հեթանոսների Առաքյալ էր (տես Գործք 9:15; 22:21; 23:11; 26:17; Հռ. 1: 5; 11:13; 15: 16; Գաղ. 1:16; 2: 7; Եփ. 3: 1-8; 1 Տիմ. 2: 7):

▪ **«էս ազատուեցայ առիծի բերանիցը»** Քանի որ Պողոսը Հռոմի քաղաքացի էր, չէր կարող տրվել վայրի զազանների ձեռքը, դա կարող է լինել Հին Կտակարանյան իդիոմա 1) Աստված ազատում է հավատացյալներին իրենց թշնամիներից կամ 2) Աստված ազատում է նրանց մահից: Կարդացեք Մատթ. 7:2; 22:21 և 35:17: Հնարավոր է Պողոսի առաջին դատավարությունը վերջացավ առանց դատավճռի:

Նոր Կտակարանում մարդիկ մի քանի անգամ նկարագրվում են որպես կենդանիներ.

1. Մատթեոս 10:16

ա. հավատացյալները՝ ոչխարներ, օձեր և աղավնիներ

բ. անհավատները՝ գայլեր

2. Ղուկաս 13:32 - Հերովդեսը որպես աղվես

3. Մատթ. 15: 26-27; Փիլ. 3: 2; 2 Պետ. 2:22; Հայտ. 22:15 - շները, որոնք օգտագործվում են հեթանոսների, կեղծ ուսուցիչների, անհավատների համար

4:18 «Տէրն» Այս համարում (և 2 Տիմ. 4:14), դա կարող է վերաբերվել ՅԱՀՎԵԻՆՆ, սակայն 17-րդ համարում (և 2 Տիմ. 4: 1) այն վերաբերվում է Հիսուսին: Հիսուսը լավագույն տարբերակն է 4-րդ գլխում առկա բոլոր դեպքերի համար:

Արևելահայերեն «ամեն չար բանից էւ կ'ազատե՛»

Արևմտահայերեն «ամէն չար գործէ պիտի ազատե զիս»

NASB «փրկեց ինձ ամեն չար գործից»

NKJV «ազատեց ինձ ամեն չար գործից»

NRSV «փրկեց ինձ ամեն չար հարձակումից»

TEV «փրկեց ինձ բոլոր չարիքներից»

NJB «փրկեց ինձ բոլոր չար փորձերից»

Պողոսը գիտեր, որ Տերը իր հետ էր, իր կողմն էր և իր մեջ էր: Նա նաև հասկացավ, որ մարդկային ընդդիմությունը սատանայական կամ դիվային ծագում ուներ (տես Եփ. 6:10-19): Ավետարանի հռչակումը մշտապես ուղեկցվում է չար ընդդիմությամբ:

Այս արտահայտությունն ավելի զարմանալի ու պարադոքսալ է, երբ այն տեղի է ունենում այնքան մոտ Պողոսի մահվան ժամանակ:

▪ «ինձ բերելու է դեպի իր երկնային արքայությունը»: Տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՍ ԴԱՐՈՒ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐՈՒ](#) 2 Տիմ. 3: 1:

- **«որին լինի փառք յաիտեանս յաիտենից»** Պողոսը հաճախ բարձրացնում է փառաբանության խոսք (սհա երկու լավ օրինակ, Հռ. 11:36; Եփ. 3:14-21):
- **«Ամեն»** Տես Հատուկ Թեմա Տիտոս 2:12:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 4:19-21

¹⁹Բարեւ տուր Պրիսկելին եւ Ակիւղային, եւ Ոնեսիփորի տանը, ²⁰Երաստոսը մնաց Կորնթոսումը. Եւ Տրոփիմոսին հիւանդ թողեցի Մելիտոսումը: ²¹Շտապիր որ ձմեռիցն առաջ գաս: Բարեւ է տալիս քեզ Եւբուդոսը, եւ Պուղէար եւ Լինոսը, եւ Կլաւդիան եւ բոլոր եղբարքը:

4:19 «Պրիսկելին եւ Ակիւղային» Կինը (նաև կոչվում է Պրիսկիդա) առաջին անգամ նշվում է Գործք 18:18,26; Հռ.16: 3 և այստեղ; նրա ամուսինը նախ հիշատակվում է Գործք 18: 2-ում և 1 Կոր. 16:19: Հավանաբար, նրա անունն առաջինն է, որը շատ անսովոր էր, քանի որ նա եղել է հռոմեական ազնվատոհմից էր: Երևի նա ամուսնուց ավելի գորավոր էր: Նրանք Պողոսի պես վրանագործներ էին (կամ կաշվե գործ անողներ) և ավետարանի գործի մեջ նրա լավ ընկերներն ու համախոհները:

- **«Ոնեսիփորի»** Տես ծանուցում 2 Տիմ. 1: 16-18:

4:20 «Երաստոսը» Նույն անունը նաև նշված է Գործք 19:22-ում և Հռ.16:23-ում, բայց հավանաբար նույն անձը չէ:

- **«Տրոփիմոսին հիւանդ թողեցի»** Այս մարդը հիշատակվում է Գործք 20:4; 21:29 և հնարավոր է 2 Կոր. 8: 19-22:

Շատ հարցեր կան, որոնք մենք կցանկանայինք տալ Նոր Կտակարանի գրողներին: Բոլոր հավատացյալները մտածում են ֆիզիկական բուժման մասին: Գործք (տես Գործք 19:12; 28: 7-9) Պողոսը կարողանում է բժշկել, բայց այստեղ և 2 Կոր. 12: 7-10 և Փիլ. 2: 25-30, նա կարծես թե չի կարողանում: Ինչու՞ են ոմանք բժշկվում և ոչ բոլորը, և կա ժամանակի պատուհան, որը կապված է բուժման հետ, որը փակ է:

Անշուշտ, ես հավատում եմ գերբնական, կարեկից Հորը, ով ունի և ֆիզիկապես, ինչպես նաև հոգեպես բուժում է, բայց ինչու՞ բժշկության այս ասպեկտում կարծես ներկա է և ապա նկատելիորեն բացակայում է: Չեմ կարծում, որ դա կապված է մարդու հավատքի հետ, քանի որ Պողոսը հավատում էր (տես 2 Կոր. 12): Ես հավատում եմ, որ ապաքինող և հավատալիք հրաշքները հաստատել են ավետարանի ճշմարտացիությունն ու վավերությունը, որը դեռևս հանդիպում է աշխարհի այն հատվածներում, որտեղ այն առաջին անգամ է հռչակվում: Այնուամենայնիվ, ես կարծում եմ, որ Աստված ուզում է, որ մենք քայլենք հավատքով և ոչ թե աչքի երևույթով: Բացի այդ, ֆիզիկական հիվանդությունը հաճախ թույլատրվում է հավատացյալի կյանքում

1. որպես մեղքի համար ժամանակավոր պատիժ
2. որպես կյանքի հետևանք մեղավոր աշխարհում
3. օգնելու հավատացյալներին հոգևորապես հասունանալու համար

Իմ խնդիրն այն է, որ ես երբեք չեմ իմանա, թե որ մեկն է տվյալ պահին գործում: Իմ աղոթքն է, որ Աստծո կամքը կատարվի յուրաքանչյուր դեպքի համար, որը հավատքի պակաս չէ, այլ անկեղծ փորձ, թույլ տալով ողորմած, կարեկից Աստծուն գործադրել Իր կամքը յուրաքանչյուրի կյանքում:

- **«Մելիտոսումը»** Սա Եփեսոսի հարավում գտնվող արևմտյան Փոքր Ասիայի (Արևմտյան Թուրքիա) նավահանգիստ էր:

4:21 «Շտապիր որ ձմեռիցն առաջ գաս» Պողոսը միայնակ էր և հավանաբար աչքի խնդիրներ ուներ: Նավարկությունը ձմռանը դադարում էր, ուստի ոչ ոք չէր կարող գալ իր մոտ սեզոնային փոթորիկների սկսվելուց հետո (տես Տիտոս 3:21):

- Մենք այդ հավատացյալներից որևէ մեկին չգիտենք Նոր Կտակարանի այլ հատվածներից: Օ՛, բայց Աստված գիտի:

Կա վաղ եկեղեցական ավանդույթ (այսինքն, Իռենաուսից հռոմեական եպիսկոպոսների ցանկը), որ «Լինյուս» անունով մի մարդ Հռոմի եկեղեցու առաջնորդն էր 60-ականների վերջից մինչև 70-ական թվականների վերջը:

Արևելահայերեն Աստվածաշունչ: 2 Տիմոթեոս 4:22
22Տէր Յիսուս Քրիստոսը քո հոգու հետ լինի. Շնորհք ձեզ հետ: Ամէն:

4:22 Սա, հավանաբար, գրվել է Պողոսի կողմից, որպեսզի ցույց տա նամակի իրական լինելը (տես 2 Թեա. 2: 2; 3:17):

- **«Տէր»** NKJV ունի «Տեր Հիսուս Քրիստոսը», որը հետևում է MSS ռ², C, D, K, L, P, և փոքրատառ տեքստերի և տարբերակների մեծամասնությանը: Այս նույն լրիվ ձևը հայտնվում է KJV- ում, 2 Տիմ. 4: 1: UBS⁴- ը գնահատել է «Բ» կարճ տեքստը (գրեթե որոշակի), հետևելով MSS α *, F, G և Հին Լատիներեն և Ղպտի տարբերակները:

Այս անվան մեջ ակնհայտ է, որ ինչ-որ գրավոր շփոթություն կա: MS A- ն ունի «Տեր Հիսուս», որը նույնպես կարելի է տեսնել որոշ հին լատիներեն և Վուլգատ տարբերակներում: Որպես փաստ, վերջին նախադասությունն ունի ուրթ ձև հունարեն ձեռագրերում (Metzger's տեքստային մեկնաբանությունը, էջ 651):

- **«քո հոգու հետ լինի»** Այս ԴԵՐԱՆՈՒՆԸ «քո» ԵԶԱԿԻ է, որը վերաբերվում է Տիմոթեոսին (տես Փիլիմոն 1:25): Այստեղ «հոգի» տերմինը փոքրատառ «h» է, որը վերաբերվում է Տիմոթեոսին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈԳԻՆ (PNEUMA) ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Հունարեն «հոգի» տերմինը Նոր Կտակարանում օգտագործվում է մի քանի առումներով: Ահա մի քանի ներկայացուցչական դասակարգումներ ու օրինակներ.

Ա. Եռյակ Աստծո (տես Հատուկ Թեմա: Երրորդությունը)

1. Հոր (տես Հովհ. 4:24)
2. Որդու (տես Հռ. 8: 9-10; 2 Կոր. 3:17; Գաղ. 4: 6; 1 Պետ. 1:11)
3. Սուրբ Հոգու (տես Մարկ. 1:11; Մատթ. 3:16; 10:20; Հովհ. 3: 5,6,8; 7:39; 14:17; Գործք 2: 4, 5: 9; 8: 29,35; Հռ. 1: 4; 8: 11,16; 1 Կոր. 2: 4,10,11,13,14; 12: 7)

Բ. մարդկային կյանքի ուժի

1. Հիսուսի (տես Մարկ. 8:12; Հովհ. 11: 33,38; 13:21)
2. մարդու (տես Մատթ. 22:43; Գործք 7:59; 17:16; 20:22; Հռ. 1: 9; 8:16; 1 Կոր. 2:11; 5: 3-5; 7 : 34; 15:45; 16:18; 2 Կոր. 2:13; 7:13; Փիլ.4:23; Կող. 2: 5)
3. այն բաները, որոնք Հոգին առաջացնում է մարդկանց հոգիների մեջ և միջոցով
 - ա. ոչ թե ծառայության հոգի, այլ որդեգրության հոգի - Հռ. 8:15
 - բ. հեզության հոգի - 1 Կոր. 4:21

- գ. հավատքի հոգի - 2 Կոր. 4:13
 - դ. իմաստության և հայտնության հոգի՝ Իր գիտությունով - Եփ. 1:17
 - ե. ոչ թե երկչոտության, այլ գորության, սիրո և զգաստության հոգի- 2 Տիմ. 1: 7
 - զ. ճշմարտության հոգի և խաբեության հոգի - 1 Հովհ. 4: 6
- Գ. հոգևոր ոլորտում
1. հոգևոր էակներ
 - ա. բարի (այսինքն, հրեշտակները, տես Գործք 23: 8-9; Եբր. 1:14)
 - բ. չարը (այսինքն, դիվային, տես Մատթ. 8:16; 10: 1; 12: 43,45; Գործք 5:16; 8: 7; 16:16; 19: 12-21; Եփ. 6:12)
 - գ. ուրվականներ (տես Ղուկ. 24:37)
 2. հոգևոր զանազանություն (տես Մատթ. 5: 3; 26:41; Հովհ. 3: 6; 4:23; Գործք 18:25; 19:21; Հռ. 2:29; 7: 6; 8: 4,10; 12:11; 1 Կոր. 14:37)
 3. հոգևոր բաներ (տես Հովհ. 6:63; Հռ. 2:29; 8: 2,5,9,15; 15:27; 1 Կոր. 9:11; 14:12)
 4. հոգևոր պարզներ (տես 1 Կոր. 12: 1; 14: 1)
 5. Հոգու ներշնչանք (տես Մատթ. 22:43; Ղուկ. 2:27; Եփ. 1:17)
 6. հոգևոր մարմին (տես 1 Կոր. 15: 44-45)
- Դ. Բնութագրում է
1. աշխարհի վերաբերմունքը (տես Հռ. 8:15; 11: 8; 1 Կոր. 2:12)
 2. մարդկանց մտածողության գործընթացը (տես Գործք 6:10; Հռ. 8: 6; 1 Կոր. 4: 2)
- Ե. ֆիզիկական ոլորտում
1. քամին (տես Մատթ. 7: 25,27; Հովհ. 3: 8; Գործք 2: 2)
 2. շունչը (տես Գործք 17:25; 2 Թես. 2: 8)

Ակնհայտ է, որ այս տերմինը պետք է մեկնաբանվի իր անմիջական կոնտեքստի լույսի ներքո: Կան տարբեր ձևի իմաստներ, որը կարող է վերաբերել (1) ֆիզիկական աշխարհին; (2) անտեսանելի աշխարհին; (3) ինչպես նաև այս ֆիզիկական աշխարհի կամ հոգևոր ոլորտի անձանց:

Սուրբ Հոգին այդ Եռյակ Աստծո մասն է, որը գերազանց ակտիվ գործում է պատմության այս փուլում: Հոգու նոր դարը եկել է: Բոլորը, ինչ որ բարի է, սուրբ, ճիշտ և ճշմարիտ վերաբերվում է Նրան: Նրա ներկայությունը, պարզները և ծառայությունը չափազանց կարևոր է ավետարանի հետագայի և Աստծու թագավորության հաջողության համար (տես Հովհ. 14 և 16): Նա ուշադրությունը իրեն չի հրավիրում, այլ Քրիստոսին (տես Հովհ. 16:13-14): Նա դատապարտում է, հանդիմանում, համոզում, մկրտում և հասունացնում է բոլոր հավատացյալներին (տես Հովհ. 16: 8-11):

▪ **«Շնորհք ձեզ հետ»** «Ձեզ» ԴԵՐԱՆՈՒՆԸ ՀՈԳՆԱԿԻ է: Չնայած բոլոր հովվական նամակները հասցեագրված են անհատներին, դրանք պետք է կարդացվեր բարձրաձայն տնային եկեղեցիներում (տես 1 Տիմ. 6:21; Տիտոս 3:15):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուսումնասիրության ուղեցույցի մեկնաբանությունն է, ինչը նշանակում է, որ դուք պատասխանատու եք Աստվածաշնչի ձեր սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք գերակայությունը մեկնաբանության մեջ: Պետք չէ սա թողնել մեկնաբանի վրա:

Այս քննարկման հարցերը տրամադրվում են, որպեսզի օգնի ձեզ մտածել գրքի այս հատվածի հիմնական հարցերի շուրջ: Դրանք նախատեսված են մտածելու, ոչ թե վերջնական են:

1. Ի՞նչ է ավետարանիչը:
2. Արդյո՞ք յուրաքանչյուր քրիստոնյա պետք է բանավոր վկա լինի:
3. Արդյո՞ք 5-8 համարները նշանակում են, որ Պողոսը սպասում էր իր մահվանը:
4. Ի՞նչ պատահեց Դեմասին:
5. Ինչու՞ Պողոսը չկարողացավ բժշկել Տրոփիմոսին:
6. Ինչու՞ է գրքի վերջին նախադասությունը հոգնակի:

ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն Միջերկրականի ընդհանուր բարբառն էր՝ սկսած Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով (մ.թ.ա. 336 - 323 թթ.) ընդհուպ մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (մ.թ.ա. 300 - 500 մ.թ.): Դա ընդամենը պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի նոր ձևը, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրականի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը որոշ առումով եզակի էր, որովհետև այն օգտագործողների հիմնական լեզուն, բացառությամբ Դուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամեերենն էր: Ահա թե ինչու նրանց գրություններում առկա էին արամեերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում անում Սեպտուագինտայից կամ Յոթանասնից (Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել էին հրեա դպրագետները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա հիշեցնում է մեզ, որ մենք չենք կարող դիտարկել Նոր Կտակարանը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և նորկտակարանյան կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոց էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք կոնտեքստով: Բառերն իմաստ են ձեռք բերում միայն կոնտեքստում, այդ պատճառով քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) որոշակի հեղինակի ոճային առանձնահատկությունների լույսի ներքո, և (2) որոշակի կոնտեքստից: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայական լեզու է: Հաճախ մեկնության բանալին է՝ բայածանցյալների տեսակը և ձևը: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) կոնտեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՍԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. Կատարյալ ժամանակը կենտրոնանում է գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ գագաթնակետի մասին:
2. Անկատար ժամանակը կենտրոնանում է գործողության ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և աստկացող:

Բ. Ժամանակը կարող է դասակարգվել ըստ այն բանի, թե ինչպես է հեղինակը դիտարկում գործողության ընթացքը:

1. Այն տեղի ունեցավ = ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ

2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = ԿԱՏԱՐՅԱԼ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում, և հետևանքները շոշափելի էին, բայց ոչ հիմա = ԳԵՐԱԿԱՏԱՐ
4. Այն տեղի է ունենում = ՆԵՐԿԱ
5. Այն տեղի էր ունենում = ԱՆԿԱՏԱՐ
6. Այն տեղի կունենա = ԱՊԱՌՆԻ

Կոնկրետ օրինակը, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանելու՝ «փրկել» տերմինն է: Այն օգտագործվում էր մի քանի տարբեր ժամանակաձևերով՝ ցույց տալով, թե՛ դրա ընթացքը, թե՛ գազաթնակետը:

1. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված» (հմմտ. Հռ. 8:24)
2. ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (հմմտ. Եփ. 2:5, 8)
3. ՆԵՐԿԱ - «փրկվում են» (հմմտ. I Կոր. 1:18; 15:2)
4. ԱՊԱՌՆԻ - «կփրկվեն» (հմմտ. Հռ. 5:9, 10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով բայի ժամանակների վրա՝ մեկնիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել կոնկրետ ժամանակաձևը: Ստանդարտ «առանց ավելորդությունների» ժամանակաձևն՝ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» բայական ձև էր: Այն կարող է օգտագործվել տարբեր կերպերով՝ կախված կոնտեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Անցյալ ժամանակի կերպն ունեին միայն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ բայերը: Եթե որևէ այլ ժամանակ էր օգտագործվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ. Այն ցույց է տալիս կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Որոշ առումով դա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԻ և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ գույքություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփ. 2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակվում եք փրկվել»:
2. ԳԵՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այն նման էր ԿԱՏԱՐՅԱԼԻՆ, բայց շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դռան մոտ կանգնած էր» (Հովհ. 18:16):
3. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ամեն ով որ նրանում մնում է՝ չէ մեղանշում», «Ամեն ով որ Աստվածամից է ծնված, մեղք չէ անում» (I Հովհ. 3:6 և 9):
4. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այս ժամանակաձևի հարաբերությունը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ համեմատական է ԿԱՏԱՐՅԱԼԻ և ԳԵՐԱԿԱՏԱՐԻ միջև հարաբերությանը: ԱՆԿԱՏԱՐԸ ցույց է տալիս անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել էր ներկա պահին կամ էլ գործողության սկիզբին անցյալում: Օրինակ՝ «Այն ժամանակ դուրս էին գնում նրա մոտ Երուսաղեմը» (Մաթ. 3:5):
5. ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ. Այն ցույց է տալիս գործողություն, որը տեղի կունենա ապագայում: Այն շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք...» (Մաթ. 5:4-9):

II. ՍԵՌ-

Ա. Սեռը ցույց է տալիս հարաբերությունը բայի գործողության և դրա սուբյեկտի (ենթակայի) միջև:

Բ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԸ նորմալ, սպասված և ոչ շեշտադրված միջոցն է՝ ցույց տալու, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:

- Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ նշանակում է, որ ենթական կրում է բայի արտահայտած գործողությունը՝ կատարված արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ նախադրյալները և հոլովները հունարեն Նոր Կտակարանում:
1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (հմմտ. Մաթ. 1:22; Գործք 22:30):
 2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (հմմտ. Մաթ. 1:22):
 3. Անորոշ գործող անձ սովորաբար՝ *en* ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:
 4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:
- Դ. ՉԵԶՈՔ ՍԵՌԸ նշանակում է, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է բայի գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուբ հետաքրքրվածության սեռ: Այս քերականական կառույցն ուժեղացնում է ենթականի նշանակությունը նախադասության մեջ: Անգլերենում նման քերականական կառույց չկա: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի որոշ օրինակներն են.
1. ԱՆԴՐԱԴԱՐՁ - ենթականի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «...ինքնիրան խեղդեց» (Մաթ. 27:5):
 2. ԻՆՏԵՆՍԻՎ - ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ լույսի հրեշտակի կերպարանքն իրան վրա է առնում» (II Կորնթ. 11:14):
 3. ՓՈՒՆԱԴԱՐՁ - երկու սուբյեկտների փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մաթ. 26:4):

III. ԵՂԱՆԱԿ

- Ա. Կոյնե հունարենում կա չորս եղանակ: Դրանք ցույց են տալիս բայի հարաբերությունը իրականությանը, համեմայն դեպս հեղինակի սեփական տեսանկյունից: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (ՄԱՀՄԱՆԱԿԱՆ) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ԸՂՁԱԿԱՆ):
- Բ. ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց էր տալիս ստանդարտ եղանակ, որը ցույց էր տալիս գործողություն, որը տեղի էր ունեցել կամ տեղի էր ունենում առնվազն հեղինակի տեսանկյունից: Սա միակ հունարեն եղանակն էր, որն արտահայտում էր որոշակի ժամանակ, եթե նույնիսկ այդ ասպեկտը երկրորդական էր:
- Գ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր հնարավոր գործողություն ապագայում: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություն ունի ԱՊԱՌՆԻԻ ՄԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Տարբերությունն այն է, որ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆ արտահայտում է որոշակի աստիճանի կասկած: Անգլերենում սա հաճախ արտահայտվում է *could, would, may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):
- Դ. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր ցանկություն, որը թեորապես կարող էր ի կատար ածվել: Այն դիտարկվում էր մի բայլ առաջ իրական գործողությունից ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ համեմատ: ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր գործողության հնարավորությունը որոշ պարագաների ներքո: Նոր Կտակարանում

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հազվադեպ էր հանդիպում: Դա ամենից հաճախ օգտագործվում է Պողոսի հայտնի արտահայտությունում՝ «քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (հմմտ. Հռ. 3:4, 6, 31; 6:2, 15; 7:7, 13; 9:14; 11:1, 11; I Կոր. 6:15; Գաղ. 2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Թեա. 1:38, 20:16, Գործք 8:20, և I Թեա. 3:11:

Ե. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց էր տալիս հրաման, որի կատարումը հնարավոր էր, բայց շեշտը դրվում էր խոստովի մտադրության վրա: Այն հաստատում էր միայն կամային հնարավորությունը և պայմանավորված էր մեկ ուրիշ անձի ընտրությամբ: ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հատկապես օգտագործվում էր աղոթքներում և երրորդ անձի խնդրվածքներում: Նոր Կտակարանում այս հրամաններն ունեին միայն ՆԵՐԿԱ և ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակաձևեր:

Ձ. Որոշ քերականություններում ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն Նոր Կտակարանում և սովորաբար սահմանվում էին որպես բայածանցյալներ: Դրանք թարգմանվում են գլխավոր բայի հետ միասին, որի հետ առնչվում են: Ածական դերբայները թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Լավագույն տարբերակն է դիտարկել և հաշվի առնել Աստվածաշնչի մի քանի թարգմանությունները: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել «Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով» ձեռնարկը, Բեյքերի հրատարակության (*The Bible in Twenty Six Translations*, Baker):

Է. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ օգտագործվում էր որպես գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակն ունեին կոնկրետ նշանակություն մեկնության համար, որը հեղինակն ուզում էր հաղորդել:

IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, ովքեր չեն տիրապետում հունարենին.

Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, «Անալիտիկ Հունարեն Նոր Կտակարան» [Friberg, Barbara and Timothy. *Analytical Greek New Testament*. Grand Rapids: Baker], 1988 թ.:

Բ. Ալֆրեդ Մարշալ, «Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն» [Marshall, Alfred. *Interlinear Greek-English New Testament*. Grand Rapids: Zondervan], 1976 թ.:

Գ. Ուիլյամ Դ.Մաունս, «Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան» [Mounce, William D. *The Analytical Lexicon to the Greek New Testament*. Grand Rapids: Zondervan], 1993 թ.:

Դ. Ռեյ Սամերս, «Նորկտակարանյան Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները» [Summers, Ray. *Essentials of New Testament Greek*. Nashville: Broadman], 1950 թ.:

Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուդիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը գոյականի խոնարհվող ձևն էր, որը ցույց էր տալիս դրա հարաբերությունը բային և նախադասության մյուս անդամներին: Կոյնե հունարենում նախդիրները ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովական ձևը կարող էր վկայել մի քանի տարբեր տեսակի հարաբերությունների մասին, նախդիրներն օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով:

1. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր առարկաներն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ գոյականները և ածականները «լինել» կամ «դառնալ» օժանդակ բայերի հետ:
2. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բանի հատկանիշը կամ որակը, որի հետ այն առնչվում էր: Այն պատասխանում էր «ի՞նչ տեսակ» հարցին: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *of* նախդիրի օգնությամբ:
3. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ նույն խոնարհված ձևը, բայց այն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Սովորաբար այն նշանակում էր անջատում ըստ ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *from* նախդիրի օգնությամբ:
4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր անձնական հետաքրքրվածությունը նկարագրելու համար: Սա կարող էր նշանակել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ սա անուղղակի լրացումն էր: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *to* նախդիրի օգնությամբ:
5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆԻ նույն խոնարհված ձևը, բայց այն նկարագրում էր դիրք կամ տեղայնք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *in, on, at, among, during, by, upon* և *beside* նախդիրների օգնությամբ:
6. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆ և ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *by* և *with* նախդիրների օգնությամբ:
7. ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: Գոյականն այս հոլովում հիմնականում օգտագործվում էր որպես ուղիղ լրացում: Այն պատասխանում էր «որքա՞ն», «ի՞նչ աստիճան» հարցերին:
8. ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊՆԵՐ և ԿԱՊԱԿՑՈՂ ԲԱՌԵՐ

Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, որովհետև այն ունի շատ կապակցող բառեր: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը (անշաղկապությունը) հաճախ կարևոր է մեկնաբանության համար: Փաստացի, այս շաղկապները և կապակցող բառերը մատնանշում են հեղինակի մտքի ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու համար, թե ինչ է հեղինակը փորձում հաղորդել:

Բ. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բառերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Բ. Դանայի և Ջուլիուս Բ. Մենթեյի «Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Ձեռնարկ» գրքից [H. E. Dana and Julius K. Mantey's *A Manual Grammar of the Greek New Testament*]):

1. Ժամանակային կապակցող բառեր
- ա. *epei, epeidē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) - «երբ»
- բ. *heōs* - «մինչդեռ»
- գ. *hotan, epan* (ստորադասական եղ.) - «երբ էլ որ»
- դ. *heōs, achri, mechri* (ստորադասական եղ.) - «մինչև»
- ե. *priv* (ինֆին.) - «նախքան»
- զ. *hōs* - «այն ժամանակից ի վեր», «երբ», «այն ժամանակ երբ»
2. Տրամաբանական կապակցող բառեր
- ա. Նպատակ
1. *hina* (ստորադաս. եղ.), *hopōs* (ստորադասական եղ.), *hōs* - «որպեսզի»
2. *hōste* (ինֆինիտիվը հայցական հոլովով հոդի հետ) - «որպեսզի», «որ»
3. *pros* (ինֆինիտիվը հայցական հոլովով հոդի հետ) կամ *eis* (ինֆինիտիվը հայցական հոլովով հոդի հետ) - «որպեսզի», «որ»
- բ. Հետևանք (սերտ կապ կա նպատակի և հետևանքի քերականական ձևերի միջև)
1. *hōste* (ինֆինիտիվ, սա ամենատարածվածն է) - «որպեսզի», «սյսպիսով»
2. *hiva* (ստորադասական եղ.) - «այնպես որ»
3. *ara* - «այնպես»
- գ. Պատճառ
- (1) *gar* (պատճառ/հետևանք կամ պատճառ/եզրահանգում) - «քանզի», «որովհետև»
- (2) *dioti, hotiy* - «որովհետև»
- (3) *epei, epeidē, hōs* - «քանի որ»
- (4) *dia* (հայցական հոլովով) և (ինֆինիտիվով և հոդով) - «որովհետև»
- դ. Եզրակացություն
- (1) *ara, poinun, hōste* - «հետևաբար»
- (2) *dio* (ամենաուժեղ հետևանքային շաղկապը) - «ինչի կապակցությամբ», «ինչի համար», «հետևապես»
- (3) *oun* - «ուստի», «սյսպիսով», «այն ժամանակ», «որպես հետևանք»
- (4) *toinoun* - «համապատասխանաբար»
- ե. Ընդդիմական կամ հակադրություն
- (1) *alla* (ուժեղ ընդդիմական) - «բայց», «բացառությամբ»
- (2) *de* - «բայց», «սակայն», «բայց և այնպես», «մյուս կողմից»
- (3) *kai* - «բայց»
- (4) *mentoi, oun* - «սակայն»
- (5) *plēn* - «այնուամենայնիվ» (հիմնականում Ղուկասի Ավետարանում)
- (6) *oun* - «սակայն»
- զ. Համեմատություն
- (1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)
- (2) *kata* (քաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)
- (3) *hosos* (Եբրայեցիներին ուղղված թղթում)
- (4) *ē* - «քան»
- է. Շարունակական կամ հաջորդություն
- (1) *de* - «և», «այժմ»
- (2) *kai* - «և»
- (3) *tei* - «և»
- (4) *hina, oun* - «որ»
- (5) *oun* - «այն ժամանակ» (Հովհաննեսի Ավետարանում)

3. Էմֆատիկ (շեշտված) օգտագործում
 - ա. *alla* - «անշուշտ», «այո», «իրականում»
 - բ. *ara* - «իրապես», «անշուշտ», «իսկապես»
 - գ. *gar* - «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»
 - դ. *de* - «իսկապես»
 - ե. *ean* - «նույնիսկ»
 - զ. *kai* - «նույնիսկ», «իսկապես», «իրապես»
 - է. *mentoi* - «իսկապես»
 - ը. *oun* - «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ընդգրկում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառույցը օգնում է մեկնաբանությանը, քանի որ այն տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի է ունենում կամ տեղի չի ունենում: Կար պայմանական նախադասությունների չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահաղացման տեսանկյունից ընդհուպ մինչև ցանկալին:
 - Բ. ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտահաղացման տեսանկյունից, թեև այն արտահայտվում էր «եթե» շաղկապի միջոցով: Որոշ կոնտեքստներում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «ապա» (հմմտ. Մաթ. 4:3; Հռ. 8:31): Բայց սա չի նշանակում, որ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած իրադարձություններ: Դրանք հաճախ օգտագործվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (հմմտ. Մաթ. 12:27):
 - Գ. ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ որպես փաստ ընդունվել: Օրինակներ.
 1. «Սա եթե մի մարգարե էր, ապա կգիտենար՝ թե ով կամ ինչպիսի կին է նա, որ իրան մոտենում է, որովհետև մեղավոր է (իսկ նա չգիտի)» (Բուկ. 7:39):
 2. «Որովհետև եթե դուք Մովսեսին հավատայիք, ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում)» (Հովհ. 5:46):
 3. «Եթե տակավին մարդկանց հաճո լինեի (իսկ ես դա չեմ անում), Քրիստոսի ծառա չէի (Գաղ. 1:10):
 - Դ. ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ասում է հնարավոր գործողության մասին սպազայում: Այն հաճախ ենթադրում է այդ գործողության հավանականությունը և հիմնականում չնախատեսվածությունը: Հիմնական բայով արտահայտված գործողությունը պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ I Հովհ. 1:6-10; 2:4, 6, 9, 15, 20, 21, 24, 29; 3:21; 4:20; 5:14, 16:
 - Ե. ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ամենահեռուն է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում Նոր Կտակարանում: Փաստացի, չկա լիարժեք ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ

ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որում գլխավոր և ստորադասական նախադասությունները կհամապատասխանեին իրենց սահմանմանը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ օրինակ է՝ I Պետր. 3:14-ի բացող խոսքը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ մեկ այլ օրինակ է՝ Գործք Առ. 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

- Ա. ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ *ME* ՄԱՄՆԻԿԻ հետ հաճախ (բայց ոչ միմիայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են՝ «ձեզ համար գանձեր մի դիզեք երկրիս վրա...» (Մաթ. 6:19); «հոգս մի՛ անեք ձեր կյանքի համար...» (Մաթ. 6:25); «և ձեր անդամները անհրավության գործիք մի ներկայացնեք մեղքին...» (Հռ. 6:13); «և մի տրտմեցնեք Աստուծո Սուրբ Հոգին...» (Եփես. 4:30); և «մի արբենաք գինով...» (5:18):
- Բ. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ *ME* ՄԱՄՆԻԿԻ հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Որոշ օրինակներ են՝ «Մի կարծեք...» (Մաթ. 5:17); «հոգս մի անեք...» (Մաթ. 6:31); «ամոք մի համարիր...» (II Տիմ. 1:8):
- Գ. ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏՈՒՄԸ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ շատ ուժգին ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Որոշ օրինակներ են՝ «Նա մահ չի տեսնիլ հավիտյան» (Հովհ. 8:51); «ես հավիտյան միս չեմ ուտիլ» (I Կորնթ. 8:13):

IX. ՀՈՂ

- Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստն, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Նրա հիմնական ֆունկցիան էր որպես «ցուցիչ»՝ միջոց հանդիսանալ ուշադրությունը գրավելու բառին, անվանը կամ արտահայտությանը: Դրա օգտագործումը տարբեր է Նոր Կտակարանի տարբեր հեղինակների մոտ: Որոշիչ հոդը կարող էր նաև կատարել հետևյալ ֆունկցիան.
 - 1. որպես առանձնացում ըստ հակասության սկզբունքի, ինչպես ցուցական դերանունն
 - 2. որպես նշան՝ ավելի վաղ հիշատակված առարկայի կամ անձի
 - 3. որպես միջոց՝ նախադասության մեջ որոշելու ենթական կապող բայի հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ. 4:24; «Աստված լույս» I Հովհ. 1:5; «Աստված սեր է» 4:8,16:
- Բ. Կոյնե հունարենը չունի անորոշ հոդ՝ ի տարբերություն անգլերենի: Որոշիչ հոդի բացակայությունը կարող էր նշանակել.
 - 1. առարկայի առանձնահատկության կամ որակի շեշտադրում
 - 2. առարկայի դասակարգի շեշտադրում
- Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպ էին օգտագործում հոդը:

X. ՇԵՇՏԱԳՐՄԱՆ ԿԵՐՊԵՐԸ ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

- Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է Նոր Կտակարանի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ գրողներն էին Ղուկասը և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակը:
- Բ. Ավելի վաղ մենք նշել էինք, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ստանդարտ էր և չէր շեշտադրվում, մինչդեռ ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ իրենց նշանակությունն ունեին մեկնության համար: Սա անշուշտ չի նշանակում, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ հաճախ չէր օգտագործվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռ. 6:10 (կրկնակի):
- Գ. Բառային հաջորդականությունը կոյնե հունարենում
1. Կոյնե հունարենը թեքական (ֆլեկտիվ) լեզու էր, որն ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառային ստանդարտ հաջորդականությունը, որպեսզի ցույց տար:
 - ա. ինչ էր հեղինակն ուզում ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր, ըստ հեղինակի, զարմանալի լինել ընթերցողի համար
 - գ. այն, ինչը թանկ էր և կարևոր հեղինակի համար
 2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Այնուամենայնիվ, ենթադրվում է բառային ստանդարտ հաջորդականությունը հետևյալն է.
 - ա. կապող բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) լրացում
 - բ. անցողական բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) ուղիղ խնդիր
 - (4) անուղղակի խնդիր
 - (5) նախդրավոր արտահայտություն
 - գ. անվանական արտահայտությունների համար
 - (1) գոյական
 - (2) որոշիչ
 - (3) նախդիրավոր արտահայտություն
 3. Բառային հաջորդականությունը կարող է ծայրահեղ կարևոր լինել մեկնաբանության համար: Օրինակներ.
 - ա. «Ինձ և Բառնաբասին աջ ձեռը տվին հաղորդակցության համար» (Գաղ. 2:9): «Աջ ձեռը հաղորդակցության համար» արտահայտությունը դրված է սկզբում՝ ցույց տալով դրա կարևորությունը:
 - բ. «Քրիստոսի հետ» (Գաղ. 2:19) առջևում էր դրված *[հուն.]* Ես Քրիստոսի հետ խաչված եմ]: Նրա մահը կենտրոնական իրադարձություն էր:
 - գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր. 1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե՝ հայտնության փաստն ինքնին:
- Դ. Սովորաբար շեշտադրման համար նաև օգտագործվում էր
1. Դերանվան կրկնությունը, որն արդեն առկա էր բայի խոնարհված ձևում: Օրինակ՝ «Եվ ահա ես ձեզ հետ եմ...» (Մաթ. 28:20):
 2. Սպասված շաղկապի կամ մեկ ուրիշ կապակցող բառերի, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ շաղկապը պետք է լիներ, այդ

պատճառով դրա բացակայությունն ուշադրություն կհրավիրեր իր վրա: Օրինակներ.

ա. Երանելիները, Մաթ. 5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)

բ. Հովհ. 14:1 (նոր թեմա)

գ. Հռ. 9:1 (նոր բաժին)

դ. II Կորնթ. 12:20 (շեշտադրվում է հերթականությունը)

3. Տրված կոնտեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի զովասանքի համար» (Եփ. 1:6, 12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր՝ շեշտադրելու սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:

4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի օգտագործումը

ա. Մեղմատությունները տաբուի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել» մահ բառի փոխարեն (Հովհ. 11:11-14) կամ «ուտքեր» տղամարդու արնանդամի փոխարեն (Հռուք 3:7-8; I Թագ. 24:3):

բ. Շրջաբանություններն Աստծու անվան փոխարինող բառեր են, ինչպիսիք են՝ «երկնքի թագավորություն» (Մաթ. 3:21) կամ «ձայն երկնքից» (Մաթ. 3:17):

գ. Փոխաբերություններ

(1) անհավանական չափազանցություններ (Մաթ. 3:9; 5:29-30; 19:24)

(2) մեղմ չափազանցություններ (Մաթ. 3:5; Գործք Առ. 2:36)

(3) անձնավորում (I Կորնթ. 15:55)

(4) հեզմանք (Գաղ. 5:12)

(5) բանաստեղծական հատվածներ (Ֆիլ. 2:6-11)

(6) բառախաղ

(ա) «եկեղեցի»

(i) «եկեղեցի» (Եփես. 3:21)

(ii) «կոչում» (Եփես. 4:1, 4)

(iii) «կանչված» (Եփես. 4:1, 4)

(բ) «ազատ»

(i) «ազատ կին» (Գաղ. 4:31)

(ii) «ազատություն» (Գաղ. 5:1)

(iii) «ազատել» (Գաղ. 5:1)

դ. Բարբառային լեզուն որոշակի մշակույթին և լեզվին բնորոշ յուրահատուկ արտահայտություններն են:

(1) «Կերակուր» բառի փոխաբերական օգտագործումը (Հովհ. 4:31-34):

(2) «Տաճար» բառի փոխաբերական օգտագործումը (Հովհ. 2:19; Մաթ. 26:61):

(3) Կարեկցանքի երբայերեն բարբառն էր՝ «ատել» (Ծննդ. 29:31; II Օր. 21:15; Դուկ. 14:36; Հովհ. 12:25; Հռոմ. 9:13):

(4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայիա 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռ. 5:18 և 19:

(5) Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության օգտագործում: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»:

(6) *autos* բառի օգտագործումը

ա. Հողի հետ (որոշչի դիրք) այն թարգմանվում էր որպես

«նույն»:

բ. Առանց հողի (ստորոգյալի դիրք) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:

- Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ:
1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:
 2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հատկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դինամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Չեզ մաս մեծապես օգտակար կլինի «Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով», Բեյքերի հրատարակության գիրքը [*The Bible in Twenty-Six Translations*, Baker]:
 3. Օգտվելով Ջոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ «Հատուկ Շեշտադրումն Աստվածաշնչում» [*The Emphasized Bible*, Joseph Bryant Rotherham (Kregel)], 1994 թ.:
 4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.
 - ա. «Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ» [*The American Standard Version*], 1901 թ.:
 - բ. «Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Ըստ Յանգի» [*Young's Literal Translation of the Bible* (Guardian Press)], 1976 թ.:

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է օգտագործել դոգմատիկ և ոչ ճկուն կերպով, այլ որպես մի քայլ նորկտակարանյան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն մաս ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են՝ Նոր Կտակարանի հատուկ ուսումնասիրությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնաբանությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականության հասկացումը ծայրահեղ կարևոր է, բայց մեզ մաս օգնում են պատմական և գրական կոնտեքստները, ինչպես մաս բառերի ժամանակակից օգտագործման և գուգահեռ տեքստերի օգտագործման մասին իրազեկությունը:

ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:
- III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնսոնանտ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված բաբբի Ակուիբայի կողմից 100թ. Ք.Հ. Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր հայտնի էին որպես մագորեթներ: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Սիշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիթան և Վուլգատան:
2. Սեպտուագինդա (LXX) - Ավանդույթն ասում է, որ Սեպտուագինդան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (285-246թթ. Ք.Ա.): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն ուրիշ տեքստային ավանդության վրա, համեմատվելով բաբբի Ակուիբայի (MT) տեքստի հետ:
3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) - Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում Ք.Ա. (200թ. Ք.Ա. մինչև 70թ. Ք.Հ.) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեներ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարբեր հատվածներից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն ուրիշ տեքստային ընտանիքին, չտարբերվելով MT և LXX:
4. Ահա մի քանի հատակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու մեջ.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես. 52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆԲԱ վրա»
 - (2) MT, Ես. 52:14, « Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵԶ վրա»
 - (3) դատելով Ես. 52:15-ից ճիշտ տարբերակը LXX –ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր զարմանան Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգեր Նա բերում է զարմանքի»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես. 21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա են կանգնել Ես. . .»
 - (2) MT, Ես. 21:8, «Եւ առիծօրէն աղաղակեց. Ով Տէր, ես միշտ ցերեկը կանգնած եմ դիտանոցի վերայ. . .»
 - գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես. 53:11
 - (1) LXX և DSS, « Իր անձի աշխատութեունից հետո նա կստենի լույսը և կկշտանա»
 - (2) MT, «Իր անձի աշխատութեան պտուղը պիտի տեսնէ եւ կշտանայ»

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունիցիալներ): Ավելի ուշ, մոտավորապես 9-րդ դարում Ք.Հ., հայտնվեցին գրչագիր՝ ձեռագիրները (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Հաշվվում է մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակներ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:
2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով Նոր Կտակարանի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են Ք.Հ. 2-րդ դարին, բայց մեծամասնությունը 3-րդ և 4-րդ դարերին Ք.Հ.: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում Նոր Կտակարանն ամբողջությամբ: Եվ չնայած որ նրանք հանդիսանում են Նոր Կտակարանի ամենահին օրինակները, դա ավտոմատ կերպով չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ օրինակներից շատերը արվել են արագորեն՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդքան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:
3. Սինայական հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է եբրայերեն *α* (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիսեղոսի կողմից Սինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է Ք.Հ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե Հին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս:
5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է Ք.Հ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե Հին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
6. Եփեսոսի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
7. Բեզայի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա այսպես կոչված «արևմտյան» տեքստի գլխավոր ներկայացուցիչն է: Այն պարունակում է շատ լրացումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը՝ անգլերեն Հակոբոս թագավորի թարգմանության ժամանակ:
8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև, չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.
 - ա. ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P⁷⁵, P⁶⁶ (մոտ Ք. Հ. 200թ.), պարունակում են Ավետարանները
 - (2) P⁴⁶ (մոտ Ք. Հ. 225թ.), պարունակում են Պողոսի նամակները
 - (3) P⁷² (մոտ Ք. Հ. 225-250թթ.), պարունակում են Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ Ք. Հ. 325թ.), ամփոփում է Հին և Նոր Կտակարանը ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ ձեռագրեր, որոնցում ներկայացված է այս տեսակի տեքստը *α, C, L, W, 33*
 - բ. արևմտյան տեքստ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի մեջբերումները. Տերտուլիանոս, Կիպրիանոս և հին լատիներեն թարգմանություն
 - (2) Իրինիոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանություն
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բեզայի - այս տեսակի տեքստ
 - գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից

- (1) այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները, կապադովկիացիներ, Ոսկեբերան և Թեոդոսե
 - (3) հին ձեռագրերի ժողովածու A, միայն Ավետարաններում
 - (4) հին ձեռագրերի ժողովածու E (8-րդ դար) ամբողջ Նոր Կտակարանը
- դ. չորրորդ հնարավոր տեսակը «կեսարիան» Պաղեստինից
- (1) այն հիմնականում հանդիպում է միայն Մարկոսի Ավետարանում
 - (2) մասամբ հանդիպում են P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (մեծամասամբ, շատ դեպքերում)
 - ա. վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառեր) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը, (հոմեոտելետոն/homoioteleuton)
 - (1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա/haplography)
 - (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնողություն (դիտոգրաֆիա/dittography)
 - բ. լսողական վրիպում, տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի սխալ գրելաձև (իտացիզմ/itacism): Հաճախ գրվել է նույն ձևի հնչող հունարեն բառի ուրիշ բառ:
 - գ. Շատ հին հունարեն տեքստերում գլուխների և համարների բաժանումները չկան, համարյա բացակայում է կետադրությունը և բառերի միջև բաժանումներ չկան: Հնարավոր է բաժանել տեքստը տարբեր տեղերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:
2. դիտավորյալ
 - ա. փոփոխություններ են արվել արտագրված տեքստի քերականական ձևի բարելավման համար
 - բ. փոփոխություններ են արվել այն բանի համար, որ համաձայնեցվի տեքստը ուրիշ աստվածաշնչյան տեքստերի հետ (գուգահեռ տեքստերի համաձայնեցում)
 - գ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի կապակցեն ընթերցանության երկու կամ ավելի տարբերակների մեկ երկար կապակցված տեքստում(միաձուլում)
 - դ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի ուղղեն անհասկանալի թվացող տեքստը (հմմտ. I Կոր. 11:27 և I Հովհ. 5:7-8)
 - ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել լուսանցքներում պատմական կոնտեքստի վերաբերյալ կամ տեքստի ճիշտ մեկնաբանության մասին, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (հմմտ. Հովհ. 5:4)

Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)

1. ամենատարօրինակ կամ ոչ սովորական քերականական տեքստը, ավելի շուտ բնագիրն է
2. ամենակարճ տեքստը, ավելի շուտ բնագիրն է
3. ավելի հին տեքստին ավելի շատ կշիռ է տրված, նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, մնացած ամեն ինչում հավասար են

4. ձեռագրեր, որ աշխարհագրականորեն բաժանված են, սովորաբար մոտ են
5. վարդապետականորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես նրանք, որոնք վերաբերվում են մեծ աստվածաբանական քննարկումներին ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում, օրինակ Երրորդության թեման I Հովհ. 5:7-8,
6. գերադասելի է այն տեքստը, որը օգնում է բացատրել ուրիշ տարբերակների
7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալ հավասարակշռությունը այսպիսի մտահոգող տարբերակներում
- ա. Ի. Հարոլդ Գրինլի «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*) (էջ 68). «Ոչ մի քրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճաբանական տեքստի վրա և Նոր Կտակարանը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի օրթոդոքսային կամ վարդապետական չդարձնի, քան ներշնչված բնագիրն է»:
- բ. Ու. Է. Կրիստելը ասաց Գրեգ Գարիսոնին «*Բիրմինգհեմ Նյուզ*»-ից, որ նա (Կրիստելը) չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման քարգմանիչների բազմադարյան գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց, - «Ես հավատում եմ տեքստի քննադատությանը: Եվ, որպես դրան հավատացող, ես կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկն այն ավելացրել է...»:
- SBC ["Southern Baptist Convention"]-ի անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիան (այն է հեղինակին չպատկանող և տեքստը աղավաղող բառեր մտցնել ձեռագրի մեջ)» ակնհայտ է նաև Հովհ. 5-ում, Բեթեզդայի ավազանի մոտ Հիսուսի պատմությունը: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (հմմտ. Մաթ. 27 և Գործք 1), Կրիստելն ասաս, - «Սա պարզապես ինքնասպանությանը նայելու մի ուրիշ հայացք է: Եթե դա կա Աստվածաշնչում, ապա այն ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելն ավելացրեց, - «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ չէ, և այն անհեթեթ չէ: Այն դիմամիկ է և շատ կարևոր...»:

III. Ձեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Գրքեր հետագա ընթերցանության համար

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R.H. Harrison [Ռ. Հ. Հարիսոն, «Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային»]:
2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger [Բրյուս Մ. Մեցգեր, «Նոր Կտակարանի տեքստաբանությունը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրում և բնագրի վերականգնում»]:
3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H Greenlee [Չ. Հ. Գրինլի, «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը»]:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Ալեքսանդրիայում, Եգիպտոս 2-րդ դարում Բ.Ն.: Այնտեղ օգտագործվում է Փիլոյի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Այն հաճախ կոչվում է այլաբանական մեթոդ: Եկեղեցին մինչև բարեփոխությունը ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենակարող կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տես Սիլվա Մայիսեյի «Եկեղեցին ճիշտ չի՞ կարդացել Աստվածաշունչը» գիրքը (See Moises Silva, *Has The Church Misread The Bible?* (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. Սա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը ներառում է Հին Կտակարանը, Անկանոն գրքերը և Նոր Կտակարանից շատ գրքեր: Սա ամբողջ հունարեն Նոր Կտակարանի գլխավոր օրինակներից մեկն է (բացի որոշ մասեր Մաթևոսից, Հովհաննոս ավետարանից և II Կորնթացիսից): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է «B» (Վատիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. Սա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Փիլոնոս Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Սուրբ Գիրքը համապատասխանեցնել որևէ մեկի մշակութային կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական կոնտեքստը: Նրա մեջ փնտրում են թաքնված հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մաթ. 13-ում, և Պողոսը, Գաղ. 4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Դ-ա, ինչևէ, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. Սրանք ընկերական տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերվում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, իսկ «աշխարհայացք»-ը թե «ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են Ծննդ. 1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է , նախ և առաջ, այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և ոչ թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացվել է Անտիոքում, Սիրիայում 3-րդ դարում Բ.Ն. որպես ռեակցիա Ալեքսանդրիայի, Եգիպտոս այլաբանական մեթոդին: Նրա հիմնական իմաստը՝ ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այն թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այս դպրոցը ներգրավվեց բանավեճի մեջ, արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն) թե մեկ բնություն (ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին այն հերետիկոսություն հռչակեց և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, բայց ունեին քիչ ազդեցություն: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. Առավելապես, գուցե նույնիսկ բացառապես հրեական ժանր էր: Սա գրվածքի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից նվաճումների և գրավումների ժամանակ: Ենթադրվում էր, որ անձ հանդիսացող Փրկիչ Աստվածը ստեղծեց և կառավարում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և խնամք է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ:

Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ շատ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուալիզմ չարի և բարու միջև:

Այս ժանրի մի քանի օրինակներ (1) Հին Կտակարանում, Եզեկիել (գլուխներ 36-48), Դանիել (գլուխներ 7-12), Չաբարիա; և (2) Նոր Կտակարանում, Մաթ. 24; Մարկ. 13; II Թես. 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա/հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Սա հատուկ դիսցիպլինա է աստվածաբանության մեջ, որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիոսականություն. Արիոսը Ալեքսանդրիայի, Եգիպտոս, եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ աստվածային (Հոր նույն էությունը չուներ), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, և վեճը սկսվում է (Ք.Հ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիոսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Ք.Հ. 325 Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիոսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության ամբողջական հավասարությունը:

Արիստոտել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչ այսօր զգացվում է ժամանակակից ուսումնասիրություններից շատերի մեջ: Որովհետև նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված իմաստով: Այն սահմանվում է որպես հասկացողություն, թե ինչ է ասել բնօրինակի հեղինակը իր օրերում և այդ ճշմարտության կիրառությունը մեր օրերում: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշնչին նայելու ձև, որպես մեր միակ հեղինակային ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում ունեցող, սխալ մեկնաբանությունների լույսի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնաբանության գործածություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնօրինակի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերվում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին/գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա եբրայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բեզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի Ք.Հ. հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D»: Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, և նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են գրիչների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերեն Հակոբոս թագավորի Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնաբանության ընթացակարգ, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա ուսումնասիրության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը դրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը,

ինչպես նաև վերլուծական բառարանը տալիս է մեզ Աստվածաշնչի հին եբրայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենևտիկական պատմական և կենտրոնացած տեքստի մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդուն Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Սրա մեջ մտնում է բնության երևույթների հաջորդականությունը (Հռ. 1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հռ. 2:14-15): Այդ մասին խոսվում է Սաղ. 19:1-6 և Հռ. 1-2: Այն տարբերվում է հատուկ հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և կարևորագույնը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր., Հյու Ռոսի գրվածքները (Hugh Ross): Նրանք օգտագործում են այս կատեգորիան պնդելու համար, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է ծագում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար, այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչը): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետազոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիմնալի հնարավորություն է վկայելու Աստծու մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնոստիցիզմ. Այս հերետիկոսության մասին ունեցած մեր իմացության մեծամասնությունը գալիս է 2-րդ դարի գնոստիկ գրվածքներից: Բայց համապատասխան գաղափարները գոյություն են ունեցել դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնոստիկներ Վալենտինյանի և Կերինթիանի որոշ հաստատված հավատամքներ այսպիսիներն են; (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենական են (օնթոլոգիական դուալիզմ): Նյութը չար է, հոգին բարի: Աստված, որ Հոգի, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում; (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (*eons* կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը կամ ամենացածրը Հին Կտակարանի Եհովան էր, ով ստեղծեց տիեզերքը (*kosmos*); (3) Հիսուսը էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (հմմտ. Հովհ. 1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (հմմտ. 1 Հովհ. 1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային մարմինների միջոցով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ կեղծ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (*eons*); կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որ ասկետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակություններին, ինչպես օրինակ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերվում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերվում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավարար տեքստ է կենտրոնական թեմայով:

Դեղուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրառությունները: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որը ցույց է տալիս գիտական մեթոդը, որը փոխվում է առանձին դեպքերի դիտարկումներից դեպի ընդհանուր եզրակացությունները (տեսություններ):

Դիալեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ ամբողջական որոշում կայացնելու ժամանակ, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Շատ աստվածաշնչյան վարդապետություններ ունեն դիալեկտիկական գույգեր, նախասահմանություն—ազատ կամք; ապահովություն—երկայնմտություն; հավատք—գործեր; Աստծուն ընդունելու որոշում—աշակերտություն; քրիստոնեական ազատություն—քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես կոնստիտուցիոն, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագոր»-ի տեսությունը, որը լրջությամբ է մոտենում բնօրինակի տեքստին, բայց թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և իդիոմներ: Իրական լավ քննարկում թարգմանության տարբեր տեսությունների մասին գտնվում է Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ ճոխությամբ» (*Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth*), էջ 35 և Ռոբերտ Բրեյտչերի «Ժամանակակից անգլերեն Աստվածաշնչի թարգմանության ներածությունը» գրքում (Robert Bratcher's Introduction to the TEV):

ԵՀՌՎԱ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14: Այն եբրայերեն «լինել» բայի ՊԱՏՃԱՌ-ԱԿԱՆ ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ զուր տեղը չլիներ, ուստի դա փոխարինեցին եբրայերեն *Adonai*, «Տեր» բառով: Ահա թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկինաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կամ ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ, կամ երբ երկու կամ ավելի բաներ առկա են միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկինաստ արտահայտություններ:

Չուզահեռ հատվածներ. Մրանք այն գաղափարի մասն են, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է ամենալավը օգնում մեզ մեկնաբանել իրեն և հավասարեցնել պարադոքսային ճշմարտությունները: Սա նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել ամենահստակ հատվածները տվյալ թեմայի, և ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էյզեզետիկա. Էյզեզետիկայի հակադարձը: Եթե էյզեզետիկան հիմնվում է հեղինակի միտումների փնտրման վրա, ապա էյզեզետիկան ենթադրում է մուտքագրում տեքստի մեջ այնպիսի միտք կամ կարծիք, որը խորթ է հեղինակին:

Էկզեզետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի - այդ հատվածի իրական մտքի՝ ասելիքի դուրսբերում, այսինքն հասկանալ հեղինակի միտումները պատմական իրավիճակի, գրական կոնտեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի օգտագործումը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ բերվի այն տեքստը որը որ ավելի մոտ կգտնվի

բնօրինակին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն մի խումբ ունի մեկ բնօրինակ:

Էտիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման բնագավառ, որտեղ ի հայտ է բերվում բառի սկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էտիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և օգտագործումը որոշակի դարաշրջանի մեջ:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Մինա լեռան վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունեն Թալմուդի երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը, թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմապետություն/Parochialism. Սա վերաբերվում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական/մշակութային կոնտեքստին: Սրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջմշակութային բնությունը:

Թորա. Եբրայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրվածքները (Ծննդոցից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա եբրայական կանոնի ամենահեղինակավոր մասն է:

Ժանր. Ֆրանսերեն տերմին, որը նշանակում է գրական ստեղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ: պատմական արձակ, պոեզիա, առակներ, ապոկալիպտիկ/վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա. Արտահայտություն, որը տվյալ մշակութային համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վրեցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ. «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերվում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք իմաստի տարբեր երանգներն են, որն ունի բառը տարբեր կոնտեքստներում:

Իմաստուն գրականություն. Գրական ժանր, տարածված էին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղիվ է առանձին անհատների, քան խմբակային համայնքին: Այն հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշնչում, Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ԵՀՈՎԱՅԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, բայց կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտություններ: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ամեն մի կոնկրետ իրավիճակում: Սրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի մասին: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոբ և Ժողովողի): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուրը: Սա ժամանակակից գիտության էմպիրիկական/փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Աստծո ղիմելը մարդկությանը: Այս հասկացության ամբողջ նշանակությունը ամփոփվում է երեք տերմինների համախմբվածությամբ. 1. հայտնություն - Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք –Նա տվեց է Իր գործերի ու դրանց նշանակությունների ճշգրիտ մեկնությունը ընտրված մարդկանց, որպեսզի նրանք գրանցեին այն մարդկության համար; և 3. լուսավորում- Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի Նա օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Սուրբ Գրքին անդրադառնալը: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես թեքվածություն, պնդում, իսկ priori-ը նախօրոք ձևավորված կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե Հին և թե Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Սա երեք բնութագրող տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս երբայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Սա պոեզիայի տողերին է վերաբերվում, որոնք իմաստով հակադիր են միմյանց (հմմտ. Առ. 10:1, 15:1):

Համաքարքառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Այստեղ բերվում են գործնականում յուրաքանչյուր բառ Հին և Նոր Կտակարաններից: Սա օգնում է մեզ (1) սահմանել երբայերեն կամ հունարեն բառը, որը ընկած է հատուկ բառի թարգմանության ետևում; (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում էր նույն երբայերեն կամ հունարեն բառը; (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր երբայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով; (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ; (5) Աստվածաշունչում գտնել որոշակի հատվածը (հմմտ. Վալտեր Կլարկի «Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը» (Walter Clark's *How to Use New Testament Greek Study Aids*), էջ 54-55):

Հայտնություն. Աստծո ղիմելը մարդկությանը: Այս հասկացության ամբողջ նշանակությունը ամփոփվում է երեք տերմինների համախմբվածությամբ. 1. հայտնություն - Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք – Նա տվեց է Իր գործերի և դրանց նշանակությունների ճշգրիտ մեկնությունը ընտրված մարդկանց, որպեսզի նրանք գրանցեին այն մարդկության համար; և 3. լուսավորում- Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի Նա օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե արվեստ/պարզ: Աստվածաշնչյան, կամ սուրբ հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների; ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Նրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տարբեր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հոմանիշ. Սա վերբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ առանց իմաստը կորցնելու: Այս տերմինը նաև օգտագործվում է հին երբայերեն բանաստեղծական գույակաբանության երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու բանաստեղծական տողեր, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (հմմտ. Սաղ. 103:3):

Ճեռագիր. Այս տերմինը վերաբերվում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար նրանք բաժանվում են տարբեր տեսակների (1) նյութ, ինչի վրա, որ գրվել են (պապիրոս, կաշի), կամ (2) գրվածքի ձև (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Կրճատ կոչվում է «MS» (եզակի) կամ «MSS» (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և ուրիշ տեքստային նշումներ: Նրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հատկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Մեռյալ ծովի գլանաձև մագաղաթներ: Կրճատ կոչվում է «MT»:

Մարդակերպություն. Ունի առանձնահատկություններ, որոնք կապված են մարդու հետ: Այս տերմինը օգտագործվում է նկարագրելու համար մեր կրոնական լեզուն, որով մենք խոսում ենք Աստծո մասին: Տերմինը առաջացել է հունարեն բառից, որը նշանակում էր մարդկություն: Սա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին այնպես, կարծես Նա մարդ է եղել: Աստված նկարագրվում է, որպես ֆիզիկական, սոցիոլոգիական և հոգեբանական տերմիններով, որոնք վերաբերվում են մարդկանց և հասկանալի են մարդուն (հմմտ. Ծմնդ. 3:8; 3 Թագ. 22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է : Ինչևէ, մարդիկ ունակ են օգտվել միայն մարդկային տերմիններով կամ հասկացողություններով: Ուստի, Աստծո մասին ունեցած մեր գիտությունը, չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ տեսակի գիրք: Այն տալիս է աստվածաշնչյան գրքի ընդհանուր կոնտեքստը: Հետո բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառության վրա, ուրիշներն էլ տեքստին նայում են տարբեր հատուկ հարցերի տեսանկյունից: Այս գրքերը օգտակար են, բայց պետք է օգտագործվեն միայն ինքնուրույն մոտավոր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Սովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնաբանություններ, որոնց հեղինակները ունեն տարբեր աստվածաբանական տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Սա վերաբերվում է մի շարք եբրայերեն և արամերեն հին տեքստերին, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ.: Դրանք պատկանում էին 1-ին դարի հուդայական աղանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկորեն տեղավորեին գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեին քարանձավներում և հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու 1-ին դարի պատմական իրավիճակը Պաղեստինում, և հաստատել են Մագորեթիկ ձեռագիրը, որպես շատ ստույգ, համեմայնդեպս, համեմատած մեր դարի սկզբի հետ: Կրճատ կոչվում է «DSS»:

Մուրատորիան հատվածներ. Սա Նոր Կտակարանի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև 200թ. Ք.Հ.: Այն պարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բողոքական Նոր Կտակարանում: Սա պարզ ցույց է տալիս, որ հռոմեական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները «փորձնականում» կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև: Սովորաբար այն ներգրավում է նորկտակարանյան ճշմարտություն, որը գտնվում է հինկտակարանյան հատվածներում նույնանման սիմվոլի տեսքով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը ակնբասանդայան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա օգտագործումը կոնկրետ օրինակներով՝ արձանագրված Նոր Կտակարանում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Սիրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ ամբողջությամբ մարդ և

ամբողջությամբ Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր Կլեոսանդրիան դպրոցի, միայն մեկ բնություն, օրթոդոքս/ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը «Աստվածամայր» տիտղոսն էր՝ տրված Մարիամին: Նեստորի ուսմունքը հակասում էր Կլեոսանդրիացի Կիրիլին և, ըստ իմաստի, իր իսկ սեփական անտիոքիան դպրոցի ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Կլեոսանդրիան մեկնաբանության քառասպատիկ (այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագրվելու է և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հստակ և ճշգրտորեն արձանագրել են Իր հայտնությունը: Սովորաբար ամբողջ զաղափարը արտահայտվում է երեք տերմիններով。(1) հայտնություն—Աստված գործել է մարդկային պատմության մեջ; (2) ներշնչանք—Նա տվել է հատուկ մեկնաբանություն Իր գործողություններին և նրանց նշանակությանը որոշակի ընտրված մարդկանց՝ արձանագրելու մարդկության համար; և (3) լուսավորում—Նա տվել է Սուրբ Հոգին օգնելու մարդուն հասկանալ Աստծո բացահայտումը Իր մասին:

Նկարագրող լեզու. Օգտագործվում է իդիոմաների հետ, որոնց օգնությամբ գրվել է Հին Կտակարանը: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես այն ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ, և չպետք է լինի էլ:

Շարահյուսություն/Syntax. Սա հունարեն տերմին է, որը վերաբերվում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են նախադասության տարբեր անդամները միացված իրար՝ ավարտված միտք ստանալու համար:

Շեղություն. Ուժեղ հակվածություն դեպի որոշակի կարծիքի կամ տեսակետի: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման նախապաշարումը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալ: Աստվածաշնչի այլաբանական մեկնաբանության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հատվածի պատմական և գրական կոնտեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է ուրիշ չափանիշների վրա:

Որդեգրություն. Սա վաղ կարծիքներից մեկն էր Աստծո հետ Հիսուսի ունեցած կապի մասին: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ կերպով որդեգրված Աստծո կողմից մկրտության պահին (հմմտ. Մաթ. 3:17; Մարկ. 1:11) կամ հարության ժամանակ (հմմտ. Հռ. 1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (հմմտ. Հռ. 1:4; Փիլ. 2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի փոքրամասնության կարծիքն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (Մարմնացում) այլ ընդհակառակը մարդը դարձավ Աստված:

Դժվար է ասել, որ Հիսուսը, Որդի Աստվածը, հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա ըմբռնել, Հայրը ինչ որ կերպով պատվեց Հիսուսին, այն ժամանակ երբ Հիսուսը կատարյալ կերպով կատարեց Հոր կամքը:

Պատկերաստ. Գրվող նյութի տեսակ, որը օգտագործվել է Եգիպտոսում: Այն պատրաստել են գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն Նոր Կտակարանի հնագույն օրինակները:

Պարադոքս. Սա վերաբերվում է այն ճշմարտություններին, որոնք թվում է թե իրար հակասող են, բայց և երկուսն էլ ճշմարտություն, չնայած իրար մեջ ունեն ներքին լարվածություն: Նրանք փոխանցում են ճշմարտություն՝ ներկայացնելով նրա երկու կողմերը: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են պարադոքսային (կամ դիալեկտիկական) զույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ՝ ձևավորած առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Այն ունի մեկ կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մենք մնանք դրա գլխավոր մտքին հենված, մենք չենք փորձացնի կամ մեծացնի կամ էլ բաց թողնի բնօրինակի հեղինակի մտադրությունը:

Պլատոն. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պլատոնը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Ավելի ուշ շրջանի աստվածաբանները Պլատոնի ձևերը/գաղափարները նմանեցրել են հոգևոր արքայության հետ:

A priori. Սա հիմնականում հոմանիշ է «կանխակարծիք» տերմինին: Այն ենթադրում է քննարկում նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա, որոնք ենթադրվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչը ընդունվում է առանց քննության կամ վերլուծության:

Սեպտուագիդը. Այսպես է կոչվում եբրայերեն Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը: Ավանդությունն ասում է, որ այն գրվել է 70 օրում 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի Ալեքսանդրիան գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը 250 Ք.Ա. (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, որովհետև (1) այն մեզ տալիս է հին տեքստ, որը կարող ենք համեմատել Մագորեթիկ եբրայերեն տեքստի հետ; (2) այն մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը 3-րդ և 2-րդ դարերում Ք.Ա. (3) այն մեզ տալիս է հրեական մեսիական հասկացողություն՝ մինչև Հիսուսին մերժելը: Կրճատ նշվում է «LXX»:

Մինայական հին ձեռագրերի ժողովածու. Ք.Հ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիսշենդորֆի կողմից Ջեբել Մուսա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկնում է Մինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի է եբրայերեն այբուբենի առաջին *α* (*aleph*) տառով: Այն պարունակում է թե Հին Կտակարանը և թե ամբողջ Նոր Կտակարանը: Սա ամենահին երկաթագիր ձեռագրերին:

Մինթեաիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերվում է պոեզիայի տողերին, որոնք կառուցվում են մեկը մյուսի վրա ընդհանուր իմաստով, երբեմն այս տեսակի պոեզիան անվանում են «կուլմինացիոն» (հմմտ. Սաղ. 19:7-9):

Միստեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության փուլ է, որը փորձում է կապել աստվածաշնչյան ճշմարտությունները ավելի կապակցված և ռացիոնալ ձևերով: Սա ավելի տրամաբանական բնույթ ունի, քան պատմական՝ ներկայացնելով քրիստոնեական աստվածաբանությունն ըստ կատեգորիաների (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Սուրբ Գրքի համանմանությունը. Արտահայտություն, որը նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում իրար, այլ լրացնում են միմյանց: Այս նախապայմանը հիմք է օգտագործելու զուգահեռ հատվածներ՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար:

Միյուրթ/Diaspora. Հատուկ հունարեն տերմին, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները, այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Vaticanus). Ք.Հ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ Հին Կտակարանը, անկանոն գրքերը և Նոր Կտակարանը: Բայց, որոշ մասեր կորել են (Ծննդոց, Մաղմուսներ, Եբրայեցիս, հովվական թղթեր, Փիլեմոն և Հայտնություն): Սա շատ օգտակար ձեռագիր է՝ հեղինակային բնագրերը իմանալու համար: Այն նշվում է մեծատառ «B»-ով:

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսությունն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես կոնսերվացիոն, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դիմամիկ համագործակցություն»-ի տեսությունը, որը լրջությամբ է մոտենում բնօրինակի տեքստին, բայց թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և իդիոմաներ: Իրական լավ քննարկում թարգմանության տարբեր տեսությունների մասին գտնվում է Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ ճոխությամբ» (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ 35:

Վերլուծական բառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել բոլոր հունարեն ձևերը Նոր Կտակարանում: Սա հիմնական սահմանումների ժողովածու է, հունարեն այբենական կարգով գրված: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն լեզուն չիմացող հավատացյալին, վերլուծել Նոր Կտակարանի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Սա Հերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Սա Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունն է: Այն արվել է 380 ականներին Ք.Հ.:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու մոտենալ (որքան հնարավոր է մոտ) Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «ցածր քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն Նոր Կտակարանի հրատարակչությունից 1633թ. Ք. Հ.: Հիմնականում հունարեն Նոր Կտակարանի այս տարբերակը հիմնված է մի քանի ուշ հունարեն ձեռագրերի վրա և Երասմոսի(1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերտսոնը (Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը) [A. T. Robertson, *An Introduction to the Textual Criticism of the New Testament*], էջ 27), ասում է, որ «բյուզանդական տեքստը գործնականորեն Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հին հունարեն ձեռագրերի երեք խմբերից ամենաարժեքավորն է (աբևտյան, ալեքսանդրիան և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Ինչևէ, Ա. Թ. Ռոբերտսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեսքով» (էջ 21): Սա հունարեն ձեռագրային ավանդույթ է (հատկապես Էրասմոսի երրորդ հրատարակությունը, 1522) հիմք է հանդիսանում Հակոբոս թագավորի Թարգմանության համար 1611թ.:

Բաբբիական հուդայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ժամանակ (586-538թթ. Ք.Ա.): Երբ քահանաների և տաճարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց կառուցվել տեղական սինագոգի (ժողովարան) շուրջ: Այդ հրեական մշակույթի տեղական կենտրոնները, հաղորդակցությունները, երկրպագությունները և Աստվածաշնչի ուսուցումները դարձան հրեական կյանքի կենտրոնները: Հիսուսի օրերում այս «դպիրների կրոն» զուգահեռ էր քահանաների կրոնի հետ: Ք.Հ 70թ. Երուսաղեմի անկումից հետո դպիրների կրոնը, որում գերիշխում էի փարիսեցիները, սկսվեց կառավարվել հուդայական կրոնական կյանքով: Այն բնութագրվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ ինչպես բացատրվում է բանավոր ավանդության մեջ (Թալմուդ):

Ցածր քննադատություն. Տես «տեքստային քննադատություն».

Փոխանություն/մետոնիմիա. Սա պատկերավոր լեզու է, երբ մի բանի անունը օգտագործվում է մի ուրիշ բան ներկայացնելու համար: Օր. «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում, և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն օգտագործում եմ, կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: Հին Կտակարանը մատնանշում է Նրան; Նա է կատարողն ու նպատակը Հին Կտակարանի (հմմտ. Մաթ. 5:17-48):

Օրինականություն. Դիրք, որին բնորոշ է ծայրաստիճան ուշադրություն կանոններին կամ ծեսերին հետևելը: Շեշտը դրվում է մարդու կողմից կատարված որոշակի օրենքների վրա, որով ուզում են Աստծուն հաճելի գտնվել: Հարաբերությունների նշանակությունը որևէ մեկի կամ ինչ որ մեկի հետ, սրտի վիճակը, շարժառիթները փոքրանում են և ավելանում է դրանց նշանակության կատարումը, այն ժամանակ երբ, երկուսն էլ կարևոր ասպեկտներ են ուխտի հարաբերության համար՝ սուրբ Աստծու և մեղավոր մարդկության միջև:

ԲՈՒԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ես հատուկ ուշադրություն չեմ դարձնում հավատքի խորհրդանիշերի վրա, այլ գերադասում եմ հաստատել Աստվածաշունչը ինքն իրենով: Ինչևէ, ես գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի սկզբունքները մարդկանց թույլ կտան, նրանք, ովքեր ծանոթ չեն ինձ, գնահատել իմ վարդապետական հայացքները: Մեր ժամանակներում այնքան շատ աստվածաբանական սխալներ ու շփոթություններ կան, որ ես կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը, թե չին և թե Նոր Կտակարանները, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնա-հայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից Իր գերբնական առաջնորդության ներքո (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԵՐՇՆՉԱՆՔ](#)): Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՅԱՀՎԵԻ ՀՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ](#)): Այն նաև մեր միակ հավատքի աղբյուրն է և Իր Եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ հավիտենական Աստված, Աբրահիչ և Փրկիչ (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՆՈՒԹԵԻՉՍ](#)): Նա է ամեն բաների ստեղծիչը, տեսանելի և թե անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթացող, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է երեք տարբեր անձերով: Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր Անձեր են, բայց միևնույն էությանը (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ](#)):
3. Աստված ներգործուն կերպով կառավարում է Իր աշխարհը: Նրա արարչագործության համար գոյություն ունի հավիտենական ծրագիր, որը անփոփոխ է և անհատապես կենտրոնացած է այնպես, որ թույլ է տալիս մարդու ազատ կամքը: Ոչինչ տեղի չի ունենում առանց Աստծո գիտության և թույլտվության, բայց Նա թույլ է տալիս թե հրեշտակներին և թե մարդկանց իրականացնելու իրենց անձնական ընտրությունը: Հիսուսը՝ Աստծո Ընտրյալը, և մենք բոլորս, ըստ հնարավորին, ընտրված ենք Նրանում: Դեպքերի մասին Աստծո կանխատեսությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԱԽԱՍԱՀՍԱՆՈՒԹՅՈՒՆ \(Կալվինիզմ\) ՍԱՐԴՈՒ ԱՉԱՏ ԿԱՄՔ \(Արմինիանիզմ\)](#)):
4. Մարդկությունը, չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց գերբնական արարածը (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՉՆԱԿԱՆ ՉԱՐԸ](#)), նրանք պատասխանատու էին իրենց գիտացաբար եսակենտրոնության համար: Նրանց ըմբոստությունը ազդեց մարդկության և արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենք, թե աղամական մեղքի հետ համագործակցելու և թե մեր անձնական կամավոր ըմբոստության համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Քրիստոսը, Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և քաղաքար վճարեց բոլոր մարդկանց մեղքի փոխարեն: Նա է միակ ճանապարհը Աստծու հետ վերահաստատվելու և հաղորդակցվելու համար: Չկա ուրիշ փրկության միջոց բացի Նրա ավարտած գործի վրա ունեցած հավատքի միջոցով:
6. Մեզանից յուրաքանչյուրը անձնապես պետք է ընդունի Աստծո առաջարկված ներումն ու վերածնունդը Հիսուս Քրիստոսում: Սա իրականանում է գիտակցաբար վստահելով Աստծո խոստումներին Հիսուսի միջոցով և ինքնակամ հրաժարվում է մեղքից: տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: Ի՞նչ է նշանակում «ընդունել», «հավատալ», «խոստովանել/դավանել» և «կանչել»:](#)
7. Մենք բոլորս ստանում ենք ամբողջական ներում և վերածնունդ Քրիստոսի վրա ունեցած մեր հավատքի հիման վրա (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «Հավատալ» ՆԿ-ում](#)) և մեղքի ապաշխարություն (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԿ](#)): Ինչևէ, այս նոր հարաբերության ապացույցը հանդիսանում է փոխված և փոփոխվող կյանքը: Աստծո նպատակը մարդկության համար ոչ միայն երկինքն է ապագայում սպասվող, այլ նաև քրիստոսանմանությունը հիմա ներկայում: Նրանք, ովքեր իրապես փրկված են, երբեմն

ընդունակ են մեղանշելու, բայց նրանք կշարունակեն հավատքով և ապաշխարությամբ ամբողջ իրենց կյանքի ընթացքում:

8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն է» (տես [ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀՈԳԻՆ](#)): Նա ներկա է աշխարհում, կորածին դեպի Քրիստոսն առաջնորդելու և զարգացնելու քրիստոսանմանություն փրկվածի մեջ: Հոգու պարզկները տրվում են փրկության ժամանակ: Պարզկները Քրիստոսի կյանքի և ծառայության իմաստն է, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում: Պարզկները, որոնք հիմնականում Հիսուսի վերաբերմունքներն ու շարժառիթներն են, պետք է գործի դրվեն Հոգու պտուղներով: Հոգին գործուն է մեր ժամանակներում, ինչպես գործուն էր աստվածաշնչյան ժամանակաշրջանում:

9. Հայրը հարուցյալ Հիսուս Քրիստոսին դարձրել է ամեն բաների Դատավորը: Նա վերադառնալու է երկիր՝ դատելու ամբողջ մարդկությանը: Նրանք, ովքեր վստահել են Հիսուսին և որոնց անունները գրված են Գառան կյանքի գրքում, կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները Նրա գալստյան ժամանակ: Նրանք Նրա հետ կլինեն հավիտյան: Ինչևէ, նրանք ովքեր մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը հավիտյան պիտի բաժանված լինեն Եռյակ Աստծո ջերմ հաղորդակցությունից: Նրանք կդատապարտվեն սատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ այսքանը ամբողջը չէ, բայց հույսով եմ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական ուղղությունը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:

«Գլխավորը—միաբանություն, երկրորդականը—ազատություն, ամեն ինչում—սեր»: